




Հ Ո Մ Ե Ր Ո Ս Ի

Ե Ղ Ի Ը Կ Ը Ն







Handwritten text in a cursive script, likely a signature or a reference. The text is written in a dark ink and is positioned below the engraving. The text is arranged in three lines, with the first line starting with a large, decorative initial 'P'. The second line continues the text, and the third line ends with 'Ep. 310'.

ՀՈՄԵՐՈՍԻ

առժամանակ  
հ.ա.

266



Եր. 31.

և և և և և և  
Ի Առթիւ Զագար

— 1843 —





Գրքի համարը և գրքի տեսակը

88  
Z-78

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

# Հ Ո Մ Ե Ր Ո Ս Ի Ե Ղ Ի Ա Կ Ա Ն

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ՀԵԼԼԵՆԱԿԱՆԷ

## Հ. ԵՂԻԱ Վ. ԹՈՄԱՃԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

### ՀԱՏՈՐ Ա.



### Ի ՎՆԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՄՂԲ

— H. H. P. H. H. P. —

D. P. P. P.

Handwritten text, possibly a signature or name.

Handwritten text, possibly a date or location.

Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a name or title.



Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a name or title.

ԱՌ

ՎՍԵՄԱՓԱՌ ԵՒ ՔԱԶԱՓԱՅԼ

ԻՇԽԱՆ

Պ Օ Գ Ն Ո Ս Պ Է Յ

ԵՌԻՍՈՒՓԵԱՆ



## ՈՒՂԵՐՁ

Եթէ արդեօք 'ի վայելչագունից ինչ  
ոք իզձ լինիցի խորհել և առնել, թուի  
թէ զառաջին տեղին ունել մեզ գեղե-  
ցիկ յանդգնութեամբ պարտ համարես-  
ցուք այժմիկ յընտրութեան մերում 'ի  
պատուասիրել նախագահ Մատենա-  
գրան զպանծալի Իշխան Ազգիս: Այն-  
չափ ինչ վստահացեալք 'ի քաջիկ ըն-  
տրութեանս, որպէս զի ինքնին և մեծն  
այն Հոմերոս յետ երից հազարաց ա-  
մաց տեսեալ հայաբարբառ զիւր քեր-  
թուածսն և ժպիտ հանեալ ինդութեան,  
միանգամայն և զուսալիւր աչսն շուրջ 'ի  
հայկազունս յածեցուցեալ, զաչսն՝ որ

զքնութիւնս առ հասարակ ճշգրտիւ զըն-  
նեաց, 'ի Քեզ արգոյ պայազատ, 'ի  
Քեզ իբրև 'ի սերճ իւր քաղաքակից և  
իմաստասէր անշուշտ ակնկառոյց կացցէ .  
և զքերթուածսն 'ի ձեռն առեալ, զՔեզ  
մատնանիշ մեզ առնելով, առ Քեզ ինքն  
կարկառեցէ ասելով . « Ա՛ռ զմա-  
տեանդ » :

Որով և մէք աւագիկ հոմերեան ակն-  
արկութեանն շքով պատկառ կացեալ,  
Քեզ արգոյ պայազատ, քաջ անուամբ  
և բարգաւաճ քաղաքագէտ հանճարով  
հռչակեալ 'ի մերազնեայս և առաւել 'ի  
Թագաւորեալ ազինա, զԱյրն մեծ ըզ-  
Քոյին քաղաքակից, որ առաջին վարժա-  
պետ 'ի քաղաքականին եկաց յայս քեր-  
թուած, վերընծայեմք ամենայորդոր  
սրտիւ :

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

ՕՂՈՄԵՐՈՍԷ հարցեալ ուրուք,  
Թուի յուշ ինձ ածել ոչ այլ ինչ՝ քան  
Թէ զարփի և զոսկի: Արչափ յերևա-  
նի անցեալ կայ մին, այնչափ և ան-  
մատոյց է. և որչափ արդոյ և սլա-  
տուական է միւսն, այնչափ և յա-  
զուրդ տալ փափաքանացն ոչ ունի:  
Շատ է ապա ՚ի միոյն լուսաւորիլ,  
Թէպէտ և չհասանել, և միւսոյն հա-  
րրստանալ, Թէպէտ և տակաւին ծա-  
րաւեալ: Այսպիսի ինչ արդեօք ճշ-  
գրրտեսցէ որք չոմերոս զարփիացեալն  
զայն և զոսկեղինիկն: Արպէս զի և  
այս արփի յերից հազարաց ամաց շըր-  
ջանակեալ ընդ տիեզերս համասփիո-  
լուսարձակութեամբ, ոչ յարազու-

թենէն կասեաց, ոչ 'ի թափոյն յոգնեցաւ, ոչ 'ի լուսոյն նուազեաց: Աւայս ոսկի յայնչափ դարուց ձեռաց 'ի ձեռս անցեալ և անբաւուր թեամբ զանձեալ, երբէք ոչ 'ի յարդէն պակասեաց, ոչ 'ի գունոյն շլացաւ, ոչ յանապականութենէն խրթնացաւ:

Արդ եթէ ոք զհողոյն հարցցէ զհոմերի, յերևանի անցեալ կայ աւազիկ իւրովք մատենիւքն իբրև արփի. ապա եթէ զծննդենէն և զկենացն, անմատոյց է իբրև զնա, որպէս ասացի. և վայելչապէս 'ի հոմեր երգեսցէ ոք զՎիրգիլեայն տող զհամբաւոյն, « Մեղ գետին շրջի, և 'ի մէջ ամպոց զլուխ իւր ծածկի »: Աւստի և 'ի մասին յայսմիկ ոչ ունելով ինչ ճշգրտել զհոմերէ, զառ 'ի յայլոցն սակաւութք քաղեսցուք:

## ՎԱՐՔ ՀՈՄԵՐԻ

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ արանց հոյակապից և հրաշալէաց՝ որ 'ի դարս բացաձիգս, խառն է 'ի հրաշապատում ճառից, չասացից և առասպէլայօդ : Ոչինչ ապա զարմանք իցեն էթէ և հոմերոսին որորան, զի այսպէս ասացից, 'ի նորանշան վիպից շուրջ պատեալ իցէ : Կուագածուին դիւցազանց պարտ էր վիճակակից լինել դիւցազանց :

Եգիպտացիք և Յոյնք ժողովուրդ հրաշադէտ, որոց ոչինչ երևէր գեղեցիկ որ ոչ ըստ սահման բնութեան զանցանէր, զմիմեամբք ելին հրաշացուցանել զճնունդ հոմերի : Աղէքսանդրոս Պափեան, « հոմերոս, ասէ, էր եգիպտացի . հօրն ա նուն էր Դամասագոր, և մօրն Եկրագայեակ նորա դուստր Որոսիքրմին Իսիդեայ՝ էր Սիբիլայ . 'ի ստեանց նորա ստէպ ստէպ կաթիլք մեղու կաթէին 'ի բերան մանկան, և առաջին ճիչ մանկանն էին դայլայլիկք ինունց ազգաց թըուչ

նոց ”, այլովքն հանդերձ : Թողցուք զառասպելսդ :

Յոյնք ոչինչ վերջացեալք 'ի փառս քերթողահօրն իւրեանց, պատուասիրեն անգասին 'ի Ղինոսէ յառաջին դիցաբանէ և յՈրփէոսէ առնուլ ձգել զազգահամարն Հոմերի . և հուսկ ուրեմն՝ որպէս Հոմերոս զիւլցազունսն իւր 'ի դիւցական գետոց ծնուցանէ, նոյնպէս և նոքա զնա 'ի դիւցազնացեալ Մեղեսայ գետոյն Զմիւռնիոյ, մայր նմա կարգելով առ հասարակ անուն Նրիթիգէ . և այնպէս դիւցազնացուցանելով զնա, ծածկեն զհայրն . և անուն յորջորջեն նմա Մեղեսիգինէս, այս է Մեղեսածին : Բայց այլաբանութիւնդ ակներև կայ, զի յանուանէ գետոյն զայն յայտ առնեն՝ եթէ Զմիւռնացի ուրեմն եկաց Հոմերոս : Թէպէտ և քաղաքք բազումք, զորս մինչև ցիննևտասն թուէ Սուխտաս՝ որպէս ասէ Փոփ, պատուասիրեցին երկիր հայրենեաց լինել Հոմերի, բայց նախադաս գտաւ Զմիւռնիա . և զԱրձանագրութիւն իմն ըզվազնջուց գտեալ յԱթէնս առ ոտս արձանին Պիսիտրատոսի յառաջ եբեր, որ ասէր . « Աթենացի պարտ է ասել զՀոմերոս, իբրու ծնեալ 'ի Զմիւռնիա 'ի գաղթականն Աթենայ » :

Անդասին յառաջին տիոցն տեսանէր  
 'ի մանկան սքանչելի իմն մտավարժու-  
 թիւն : Ի զարգանալ նորա՝ ըստ Հերո-  
 դոտեայ սլատմութեանն՝ ժառանգ եկաց  
 վարժարանին Փեմիոսի առն ականաւորի  
 և քերթողի զմիւսնացւոյ . և բնածին հան-  
 ճարութիւն և քերթողական ոգւովն սքան-  
 չելի եղև Մեղեսիգինէս ոչ միայն Չմիւս-  
 նացւոց , այլ և ամենայն եկաց՝ որ խուռն  
 ընթանային 'ի քաղաք անդր վաճառա-  
 շահ : Դէպ եղև և Մենտեայ ուրումն նա-  
 ւասպետի առն բանասիրինաւել 'ի Չմիւս-  
 նիա , և լուեալ զՀոմերոսէ և մեծա-  
 սէս հրաշացեալ ցանկացաւ ուղեկից ու-  
 նել զնա 'ի ճանասլարհորդութիւնս իւր :  
 Մտադիւր յանձն էառ Հոմեր զքաջադի-  
 սութիւն զայն ուղևորութեանն՝ զոր  
 արդէն իսկ խնդրէր առ 'ի քաջասէս 'ի  
 գլուխ հանել զքերթածս զԵղիակա-  
 նին և զՈգիսականին՝ զոր 'ի միտս հաս-  
 տատեալ իսկ էր 'ի քերթել :

Կաւեալ ընդ Մենտեայ մինչև յԵտալիա  
 և 'ի Սիկիլիա և 'ի Սպանիա , շրջեցաւ առ  
 հասարակ . և դարձ արարեալ շրջեցաւ  
 ողջոյն և ընդ Յունաց աշխարհն . իսկ 'ի  
 կղզւոջն Իթակա հիւրընկալութիւն մեծ  
 գտեալ 'ի Մենտորէ իթակացւոյ՝ այր ի-  
 մաստուն , բազմահարուստ և հիւրասէր ,

քաղեաց 'ի նմանէ շատ ինչ հմտութիւնս  
 յաղագս բաղմապատիկ անցլոց և արկածից  
 Ողիւսեայ արքային Իթակայ: Նաւեաց և  
 'ի Փիւնիկէ և յԵգիպտոս զննողական տե-  
 սութեամբն, և գանձեալ ամենայն ուս-  
 տեք հարստութիւնս խմաստից, դարձ ա-  
 րար 'ի հայրենիս. և անդ 'ի Չմիւռնիա  
 նստաւ 'ի գրեւ զհրաշալին իւր քերթած  
 զԵՂԻԱԿԱՆԻՆ, և անմահացոյց զհայրե-  
 նիսն:

Շրջեցաւ ասպընդ Վիւմա և 'ի Փոկէա,  
 և սքանչացեալ էր առ հասարակ քերթա-  
 ծովքն. անց ասպա և բնակեցաւ 'ի Քիոս.  
 Եբաց անդ վարժարան, և յաշխարհաժո-  
 ղով հրասարակի վերծանեալ զքերթու-  
 թիւնս իւր, հռչակ համբաւոյ նորա  
 ընթացաւ ընդ բոլոր աշխարհն Յունաց.  
 անդանօր նա ած իւր կին, և եղէն նմա  
 դստերք երկու:

Անդ 'ի Քիոս գրեաց նա զմիւս զայն  
 իւր հրաշալի քերթուած զՈԳԻՒՍԱԿԱՆԻՆ,  
 և երախտագէտ խորհրդով սպտուասի-  
 րեալ յեռ 'ի քերթուածի անդ զանուանս  
 զերախտաւորաց իւրոց և զբարեկամացն.  
 զՓեմիոսի՝ որոյ վարժարանին ժառանգ-  
 էկաց 'ի Չմիւռնիա, զՄենտեայ նաւա-  
 սկետի զուղեկցին իւրոյ և զՄենտորի ի-  
 մաստնոյ՝ որ հիւրընկալեաց զնա յԻթա-

կա: Կամէր ուղևորել Հոմեր և յԱթէնս,  
 ուստի ելեալ 'ի Քիոյ, նաւեաց 'ի Սամոս  
 փառս մեծապէս գտեալ անդ 'ի հրաշա-  
 կերտ քերթուածեանցն :

Իբրև աւուրք գարնայնոյն հասանէին,  
 անց 'ի Սամոսայ 'ի Յով անդուստ անցա-  
 նել յԱթէնս. այլ անկեալ հիւանդացաւ  
 անդ, որով և մեռաւ իսկ: Յովացիք  
 շքով յուղարկաւորուածիւն տուեալ նմա,  
 թաղեցին առ ամին ծովուն. ըստ որում  
 էր իսկ սովորուածիւն զշիրիմս արանց հոյ-  
 ակասլից կանգնել յերևանի անցաւո-  
 րաց :

### ԺԱՄԱՆԱԿ ՀՈՄԵՐԻ

ՅԱՂԱԳՍ Ժամանակին՝ յորում եկաց  
 Հոմեր, ըստ հմտագունիցն հաւաստա-  
 գոյն կարծիք այն են կարգել զնա երիւք  
 գարուք յետոյ քան զաւերն Տրոյիոյ, ըզ-  
 հետ երթալով վաւերական արձանա-  
 գրուածեանցն Առուստելայ :

Իսկ կուրուածիւն Հոմերի համբաւեալն  
 առ հասարակ, կամ մտացածին է՝ որպէս  
 ասեն քննիչք, կամ թէ կուրացաւ նա յոյժ  
 անադան ուրեմն 'ի ծերուածեան հասակի

յետ զննողական ճանապարհորդութեց  
 իւրոց: Պլնձի դրամք հինք գտեալք քան  
 դակաւ յանուն Հոմերի, աջք բացօք ունին  
 զնա: Այլ դրամք առաւել վաւերականք  
 են մատենագրութիւնք նորա: Շատ է  
 առնուլ վերծանել զմի 'ի հագներգու-  
 թեանց նորա առ 'ի ասել զայն ինչ, զոր  
 վէլէյոսն ասաց Պատերկուղոս. «Որ ոք  
 կոյր յառաջին տիոցն համարի զՀոմերոս,  
 այնպիսին ամենայն զգայարանօք արդեօք  
 կոյր է և զաչացու»: Քաջիկ ևս Կիկերոն  
 մեծն 'ի Տուսկուղ. Ե. քան զոր ոչ ոք ա-  
 ռաւել գեղեցիկս խօսեցաւ. «Աւանդու-  
 թիւն է, ասէ, եթէ կոյր լեալ իցէ Հո-  
 մերոս. սակայն մեք զնկարագիրս նո-  
 րա տեսանեմք: Ո՞ր գաւառ իցէ, ո՞ր  
 սահման, ո՞ր վայր Յունաց աշխարհին,  
 ո՞ր գեղ դիմաց, ո՞ր սպտերազմ, ո՞ր ճա-  
 կատամարտ, ո՞ր թիավարութիւն, ո՞ր  
 շարժումն ոգւոց իցէ, և ո՞ր գազանացն,  
 զոր ոչ նկարեաց նա այնչափ ճշգրտիւ,  
 մինչ զի և ականատես գլխովին առնել  
 զմեզ այն ինչ իրաց, զոր ինքն տեսեալ  
 չիցէ (ըստ աւանդութեանդ այդո-  
 ղիկ)»:

Բայց Հոմերոս, որ յառաջն Մեղեսի-  
 գինէս, յետ յօրինելոյ զքերթութիւնսն և  
 հռչակելոյ և նուագելոյ, ըստ զննու-

Թեան Քլարբայ՝ կոչեցաւ յայս անունն, որ նշանակէ Երգիչ կամ Երգակից. բխեալ ՚ի բուն հելէնական բայէն Օ՛միթէօ, կամ Օ՛միթէս, Չայնակցիլ, Երգակցիլ. և յայս նշանակութիւնն անվթար ՚ի վար առնու զայս բառ հետիոգոս ՚ի սկզբան անդ ծնընդաբանութեան դից, ՚ի խօսելն յաղագս Մուսայից՝ որք ձայնակիցք և Երգակիցք են միմեանց: Այլ ՚ի հելէն բարբառ Օ-միթոս ոչ նշանակէ Կոյր. միայն կիւմացիք ընդհարեալք ընդ Հոմեր Երգիչ, յարանուանեցին այնպէս՝ Թարգմանեալ ըստ նշանակութեան բարբառոյն իւրեանց. քանզի Օ՛միթոս միայն ՚ի կիւմացւոց բարբառն նշանակէ Կոյր:

## ՀՄՏՈՒԹԻՒՆՔ ՀՈՄԵՐԻ

ԵՒ

ՆԱԽԱՏԻՊ ՔԵՐԹՈՂՈՒԹԻՒՆՆՈՐԱ

ՉԲԱՉՄԱԴԻՄ հմտութեանցն և զգիտութեանցն Հոմերի աւելորդ թուի ՚ի ճառել. զի որ ՚ի քերթածսն նորա յակն միանգամ արկանիցէ, անդէն ՚ի գեղեցիկ դպրութիւնսն վեհագոյն ծանիցէ զնա,

միանգամայն և բազմավէպ այր և բազմահմուտ և բազմագէտ յամենայն իսկ 'ի մասունս գիտութեանց, որչափ ինչ առ իւրովքն ժամանակօք զոր մէք սակաւօք 'ի ծանօթութիւնս անդր ըստ սլատեհի առաջիկայ իրացն յուշ արասցուք ընթերցանելեացն :

Բայց 'ի նախնուսն այնչափ իմն հրաշացեալ էր նա, մինչև ծայրայեղ կարծիքն համարեցաւ զՀոմերոս այնպիսի ոք, որ զհամաշխարհական վարդապետութիւնն բոլորից ուսմանց միանգամայն ամփոփեալ ունիցի 'ի կրկին քերթածսն իւր յԵղիականին և յՈգիւսականին, ըստ որում և տիեզերք ամենայն 'ի խորհրդաւոր յայն Ձուն եգիպտացւոց : Յայս թերակատար տեսութիւն և առ վերջնովքս բերան ոմանք 'ի մատենագրաց զորս միանգամայն թողեալ 'ի բաց, մէք անաչառ տեսութեամբ զայն՝ որ անժխտելին է առ հասարակ ամենայն քննչաց, տեսցուք զարդիս :

Արդ ասէն առ հասարակ, եթէ թէսպէտ և բոլոր մատենագրութիւնք Հոմերի հրաշալիք՝ անդրիք են արգոյք և արձանք յիշատակաց վաւերականք սլատմութեան առաջին դարուց՝ լի և զեղուն բազմագէտ հմտութեամբ, « Ի վերայ այսր՝ մեր յակ-

Ճիւս կալ առ նա հիացմամբ, ասէ Չեղա-  
 րոթթի, (որ ՚ի վերջնումնս ՚ի լոյս էած ըզ-  
 Հոմերոս ամենայն սարօքն իւրովք և բանա-  
 խօսուածեամբք), է վասն լինելոյն Հոմերի  
 սքանչելապէս անդրանիկ քերթող նա-  
 խատիս: Այս է նորա վէհագոյն մակ-  
 դիր փառաց իրաւանց՝ որ զնա յարանուա-  
 նեցին Մեծ: Ամենայն հինք և նորք  
 միանգամայն երկրպագութեամբ ճանա-  
 չեն ՚ի նմա զայս արգասիս բարետոհմու-  
 թեան): Եւ քաջայայտ ասացոյց է, ասէ  
 Փոփ, զի և փառաւոր անունդ Ποιητής,  
 Պուետիկոս, պուետէս, այն է՝ բանա-  
 ստեղծ, չէր ընծայեալ ումք առ Յոյնս  
 յառաջ քան զՀոմեր. և ինքն առաջին  
 այնպէս պատուասիրեցաւ կոչմամբն.  
 ուր այլք՝ որ յառաջ քան զնա՝ կոչէին մի-  
 այն Αΐοιδός. այս է՝ Երգակ:

Եւ իրաւամբք զանուն զայս փառաց  
 սեպհականեաց անձին Հոմերոս. քանզի  
 անզուգակչիւ այլոց քերթողաց, որպէս  
 ասէ Պիգոպէ, յարգարեաց զնանոյն ինքն  
 եղանակ տարազուն, որով զիւր զգեղեցիկ  
 հմտութիսն գանձեաց Հոմերոս, անձամբ  
 անձին իւրովք իսկ աչօք և ոչ յօտարին  
 գրոց կամ ՚ի լրոց հետախոյզ եղեալ ման-  
 րազնին և խորհրդածու յամ իսկ յիրս  
 միանգամայն, ՚ի բնականս, յարհեստա-

կանս, 'ի բարոյականս, որ մի անգամ ընդ առաջ ելանէին նմա յինչ և իցէ յառիթս . քաջիկ զննելով յամենայնի, որպէս ոչ ոք առաւել քան զնա, զբնութիւնն ինքնին գլխովին՝ զվարժապետն զայն վեհագոյն, յոր նախ քան զամենայն սարտէ վարժիլ և հրահանգիլ առն քերթողի : Եւ թէ պէտ հատուկտիր ևս քերթածք՝ որպէս ասեն՝ Լինոսի, Որփէոսի, Մուսէոսի և այլոց, կացեալ իցեն յառաջ քան զՀոմեր, այլ որպէս քաջիկ արտայայտեաց Սեքստոս Եմպիրիկոս, «Առաջի լուսոյն որա 'ի չիք դարձան այնոքիկ» : Ուստի և միշտ իրաւունս անյեղլի կալաւ Հոմեր սեպհականել անձին միայնոյ զմակդիրս չքնաղս, Քերթողահայր, Ոգի և Սկրզբնատիպ : Զոր և յառաջ քան զԼերոյ գրեալսդ, մերս քաշուջիմն քերթող խորենեան յայտնի ծացոյց, յասելն, եթէ «Յառաջելով բարգաւաճեալն և մեծն Հոմերոս, այնքան կարաց գերազանցել զամենեքումք, ծայրացուցանելով զինքեան հմտութիւն, մինչ զի և խոստովանեալ իսկ եղև՝ Հայր ամենեցուն զնա ասելքերթողաց» : Պիտ : Ուստի և հայ լեզուն առանձին այնչափ իմն սատուասիրեաց զնա՝ մինչև լոկ Հոմերական ասելով, իմանալ՝ Քերթողական :

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻ ՀՈՄԵՐԻ

ԲԱԶՄԱՊԱՏԻԿ մատենագրութիւնք քերթողականք ընծայեցան Հոմերի . կէսք երկայնաձիգք և կէսք կարճառօտք , կէսք հարազատք ամենևին , և կէսք անհարազատք կամ ընդ երկբայութեամբ անկեալք : Տացուք սակաւուք տեղեկութեամբ զհամար նոցուն :

Ա . Եղիականն և Ուրի-սականն , ողջոյն հազներգութիւնք դիւցազնականք քառասուն և ութ . բուն և հարազատ քերթածք մեծին Հոմերի , վկայեալք յամենայն 'ի դարս յամենայն գիտնաւորաց նախնեաց և արդեաց : ԶՆղիականն ասեն գրեալ Հոմերի յերիտասարդական տիս . որչափ եռանդուն է և բոցալառ 'ի կիրս և յաշխոյժս նմանաբերութեանց , այնչափ և համեստացեալ և օտար ամենևին յերիտասարդական խակութեանց : Փայլէ առաւել 'ի քաղաքականին գիտութեան և 'ի զինուորականին , հանդերձ գունակ գունակ բարոյական հրահանգօք :

ԶՈղիւսականն ասեն գրեալ Հոմերի 'ի

կատարելահասակ տիս . որչափ հանդարտեալ է յեռանդան , այնչափ և առաւելագոյնական 'ի սիրտ , 'ի պատճառս որդեշարժ կրիցն և դիմակ դիմակ կենդանատիպ տեսարանացն փոփոխու թէ : Փայլէ մեծապէս 'ի տնտեսականին դիտու թէ . և է 'ի նմա բարոյականն առաւել խիտ և հոծ և առաւել մեկին : Երկոքեանն ևս՝ անզուգականք յիւրաքանչիւր կարգի , մի զմիով 'ի վէգ ելանեն իբրև անպարտելիք : Այլ թէ չխաբիմ ընդ այլոց բազմաց որ առ մեօք , քան զԵղիականն գերազանցէ Ողիւսականն յիւրում կարգի :

Բ . Երգ\* և Ն\*ագ\* , զհամբաւի հարեալք յանուն Հոմերի . այլ առ անհարազատս դասին 'ի բազմագոյն քննչաց նախնեաց և արդեաց . 'ի բաց առեալ զառ Ապոլոնն նուագն , զոր Թուկիդիդէս յայանապէս Հոմերի ընծայէ . բայց և Աթենէոս և այլք ընծայեն Կենեդոսի քիացոյ :

Յաւուրս մեր , ասէ Չէզարոթթի , 'ի գրատան 'ի Մոսկուա եգիտ Քրիստիանոս Մաթթէի և նուագ մի այլ առ Դեմետր դիցուհի յանուն Հոմերի . և քաջայայտ է , ասէ , եթէ նուագ 'ի պատիւ դիցուհւոյն գրեաց Հոմեր : Եւ քանզի շնորհ զնախնեացն և զյստակութիւն բու-

րէ նուազդ այդ նորագիւտ , և զի և կրի-  
տիսք չունին ասպացոյցս 'ի հակառակն ,  
մարթիւնք զգեղեցիկդ զայդ քերթած ըն-  
ծայել Հոմերի ըստ մակագրութեան :

Գ. Համբաւեալն այն Քերթած յանուն  
Հոմերի գոգցես յամենայն տպագրութիս  
հոմերեան . այն է Βατραχομομαχία .  
Գորպնամինամարգոմիան . Պատերազմ մեծ  
գրգռեալ ընդ գորտունս և ընդ մկունս ,  
նմանողութեամբ Եղիականին քերթեալ  
'ի վաղ ժամանակաց , ընդ անհարազատս  
դասեալ է . և չունի ինչ ամենևին սեպ-  
հական հոմերեան ոճոյն : Պլուտարքոս  
հաստատէ առ 'ի բազմաց՝ Պիգրեստայ  
կարիացւոյ լինել քերթուածոյդ : Ունի  
և այս դիւցազնակատակերգակ քեր-  
թուած ծիծաղաշարժ և ճարտար՝ ար-  
քայս և դիւցազունս իբրու զԵղիականն  
և Աքիլլէս մի մկանց , արքային նոցա ա-  
նուն Ռուբաբրիկիողէս , իսկ գորտանցն՝  
Գոնփիագոտէս . ունի Արամազդ և Աթե-  
նաս և ատեան դից և կռիւ . ձայն մարտի  
երկուց ճակատուց մկանց և գորտանց  
տան մժեղք փողմն իւրեանց . և յոր-  
ժամ Աքիլլէսն մկանց նախաճիրս անհնա-  
րինս գործէ 'ի գորտունան , Արամազդ զօր  
և բանակ առաքէ նոցա 'ի թիկունս զխա-  
չափառաց և զխեցգետնից , զորս և ծաղ-

րաշարժ յոյժ և այլանդակ բարդութիւնք ստորագրէ քերթողն յասելն, եթէ, « Եկն եհաս յայնժամ ազգդ այդ ոսկրուտ, սալաթիկունքն, կորաբազուկն, շլակնեայն, մկրատաբերանն, խեցեմորթն, կրնկախաղացն, լայնաքամակն, ծամածուսրունքն, ձեռնաբացն, ողնակնեայն, լանջահայեացն, ութոտանին, երկգլխին, անձեռնամերձն » : Այսպիսի ինչ է այս կատակաբան գորտնամկնամարտութեանն քերթած :

Այլ սակայն բաց ՚ի քերթուածոց աստի որ կան ՚ի միջի, են և այլ ևս քերթութիւնք ընծայեալք Հոմերի առ ՚ի նախնեաց՝ որ չերևին այժմ, կէս մի դիւցազնաբանք, և կէս մի կատակերգակք : Որպիսի ինչ են ,

Դ . Ա՛յազոնսիանն . այն է՝ Պատերազմ Ամազոնից :

Ե . Թեբայեանն . այն է՝ Արշաւանքն Ամիիարեայ ՚ի Թեբէ : Զայս քերթուած վեհագոյն դասէ Պաւսանիաս քան զայլ ամենայն քերթուածս յետ Եղիականին և Ոգիւսականին : Բայց և զայն ասէ՝ եթէ բազումք Վաղինոսի ումեմն ճարտարի ընծայեցին զայս :

Զ . Եպիֆոնեայս . որ է՝ Մարտ սլաուրազմի ընդդէմ Թեբայ :

Ե. Եղիականն կրտեր. Այսպէս կոչեցաւ  
ոչ 'ի պատճառս քանակութեանն, զի ա-  
ռաւելընդարձակ ասէն զայս քան զբուն  
Եղիականն, այլ 'ի պատճառս նուազեալ  
յարդիքերթուածոյն: Չայս քերթուած  
ընծայէ Հոմերի Հերոդոտոս 'ի վարս նո-  
րա. այլ չընդունի Արիստոտէլ:

Ը. Ասպրիկեան. Յերկրորդ գրոց Հե-  
րոդոտեայ իմանամք եթէ հեղինակ քեր-  
թուածոյդ ճառեալ իցէ յազագս յափըչ-  
տակութեանն հեղինեայ: Եղիանոս յա-  
ռաջ բերէ 'ի Պինդարոսէ, իբրու յօրի-  
նեալ Հոմերի զայս քերթուած յօժիտ  
դատերն իւրոյ: Հերոդոտոս զանայ Հո-  
մերի զքերթուածդ, և Արիստոտէլ ևս  
այլումընծայէ:

Թ. Քերթածն անուանեալ Ասպրի-  
կեան քաղաքին զոր քանդեաց Հերակ-  
լէս: Չգերազանց զայս քերթած, որպէս  
վկայէ Ստրաբոն, բազումք ընծայեցին Հո-  
մերի, և կէսք Վրէովիղեայ քերթողի.  
Քանզի և ունի իսկ Վրէովիղոս հանճար-  
իմաստ իմն վերտառութիւն այսպիսի 'ի  
գիմաց քերթուածոյս այսոսիկ:

« Վրէովիղեայ եմ ես: Չայն համբա-  
ւոյն զիս Հոմերոսին տայ.

Եւ ես քան 'ի Ճմարիտն՝ յայս գեղե-  
ցիկ սուտ առաւել պանծամ:»:



Ժ . Քերթածն հենգնաբան և կատակերգակ ընդդէմ խեռից և խաբեբայից , անուանեալ Քերթի : Զայսքերթած ճարտարահիւս աներկբայաբար նախնիք ընծայեն Հոմերի :

ԺԱ . Քերթածն մտկադրեալ Մարշէրի , հեգնական և կատակերգակ ընդդէմ ասուշ և անդգայ արանց : Եւ զայս գարձեալ յայտնասէս Պղատոն և Արիստոաէլ ընծայեն Հոմերի մեծապէս գովութեամբ : Չունիմք այլ , բայց մի միայն տող 'ի հռչակաւոր քերթուածոյս առ Պղատոնի , որ է այսպիսի .

« Բազում ինչ գիտէ այր անաւագ ,  
այլ զամենայն չարաչար գիտէ » :

Վասն երկուց վերջնոցս անհետացելոց աւանդ կարգան մատենագիրք , և մանաւանդ քաջ քերթողն Անգղիոյ Փոփ : Սակայն և զպակասութիւն զկորուսելոցն մեծապէս չափով ընուն մնացեալքն որ առաւել խնամով հրաշակերտեցան 'ի Հոմերէ՝ Եղիականն և Ոգիւսականն , որոց և ցանկացեալ ամենայն ազգք ծաղկեալք կրկին և երեքկին և չորեքկին թարգմանեցին յիւրեանց լեզու եթէ յարձակն և եթէ 'ի չափաբերեալն . և այնուհետև ելեալ շրջեցաւ Հոմեր ընդ ամենայն Եւրոպէ և բարբառէր զլեզուս այլ և այլ ազգաց :

Այլ բայ 'ի բազմագէմ' թարգմանու-  
թեանց, նա և մեկնիչս յոքնաթիւս կա-  
լաւ անձին հոմեր, որչափ ոչ ոք այլ 'ի  
մատենագրաց արտաքնոց : Փաբրիկիոս  
'ի նախնեաց անտի հաշուէ մեկնիչս հո-  
մերի թուով հարիւր և երեսուն : Այս  
մատեննք համակոյտ ընդ մատենագրու-  
թիւնս արդեաց 'ի հոմեր որ կան առ  
մեօք, եթէ կասկեցին՝ ասէ Չեզարոթթի՝  
'ի բեռինս, անշուշտ ըստ հին առաձին  
ուղտք երեսուն թուով բեռնաբարձք  
հեծեացեն ընդ նոքօք :

Քանզի և հետ զհետէ Անդղիացիք,  
Գերմանացիք, Գաղղիացիք, Իտալացիք,  
Դիմամրցանակաւ ընդ միմեանս 'ի լոյս ա-  
ծին զհոմեր նորանոր աշխատասիրու-  
թեամբք : Զնոյն և Սպանիացիք և հոլան-  
դացիք և Ռուսք : Նոյնպէս և առ Ասիա-  
ցիս, գիտեմք՝ ասէ Չեզարոթթի՝ զթարգ-  
մանութիւն մի հոմերի 'ի լեզու ասորի  
'ի վաղ ժամանակաց : Իսկ ըստ վկայելոյ  
Եղիանոսի և Դիոնիսի՝ նաև Պարսիկք և  
Հնդիկք ստացեալ ունէին զԵղիականն  
հոմերի յիւրեանց լեզու :

ՅԱՐԳ ԵՒ ՎԱՐԿ ՀՈՄԵՐԻ ԱՌ  
ՅՈՅՆՍ

ՈՐ մի անգամ հետախոյզ կամեցաւ լինել 'ի շուքն և 'ի վարկն Հոմերի առ 'ի գրեւ, հիացամաք զայս կնիքեաց 'ի վերջէ. եթէ՝ Յանհնարից ուրեմն է առն մահ կանացուի հռչակ համբաւոյ ժառանգել անձին առաւել աշխարհաքարոզ և առաւել հաստարմատ քան զՀոմերոսին : Տարապայման կարծի կնիքն . այլ որ զվասն նորա գրեալն ընթերցցի, արդարացուցէ :

Յոյնք 'ի վաղնջուց դարսն անսահմանք երևեցան 'ի մասին յայսմիկ . իբրու այն որ յակճիռս կային առ Հոմեր, ոչ իբրև առ մարդ, այլ իբրև առ աստուած ոմն և սլաշտօն : Վերտառութիւն մի առ Յոյնս 'ի բերանոյ Հոմերի ունի այսպէս . « Դու որ զհայրենիս իմ խնդրես և զնախնիս, 'ի զուր խնդրես .

Մայր է իմ Վալլիոպէ և հայրենիք իմ երկինք » :

Զմիւռնիա համբաւատենչ քաղաք՝ տաճար ևս կառուցեալ յանուն Հոմերի,

այնպէս պատուեաց զնա : Արդոս զո-  
հիւք և ողջակիզօք շուք եդ նմա և 'ի միա-  
սին ընդ Ասողոնի կարդայր յօգնակա-  
նութիւն զՀոմեր , իբրև երկրորդ աս-  
տուած : Չեն ինչ արդեօք հիանալիք  
այսոքիկ 'ի նախնի յայն դարսն :

Սակայն և 'ի ծաղկել ևս տակաւ Յու-  
նաց յիմաստասէրս և 'ի քերթողս , այն  
մեծապէս էր , զի և առ նոքօք դարձեալ  
հրաշացաւ Հոմեր : Եւ զմի 'ի հազարաց  
անտի քաղելով աստանօր , Սողոն մեծ օ-  
րէնսդիր 'ի դպրութեանց մասին նա և  
օրէնս մի սահմանեաց առ հասարակ վար-  
ժել տքնաբար 'ի տառսն հոմերեան իբ-  
րև 'ի գանձարան հնութեանց և իմաստից :  
Եդ և օրէնս երկրորդ վերձանել աշխար-  
հաւ զքերթուած նորա 'ի տօնախմբու-  
թիւնս Աթենասայ : Եւ չեն ինչ զար-  
մանք ազգային օրինադրութեանս 'ի  
փառսն Հոմերի , զի մատեան նորա իբ-  
րու պատգամ ճշմարտութեան յածէր  
առ Յոյնս : Քուրմք նոցա զարարողու-  
թիւնս իւրեանց գտանէին 'ի Հոմերոս ,  
ժողովուրդք զաւանդութիւնս իւրեանց ,  
ճոխք և ազնուականք զազգաբանութիւնս  
իւրեանց , և ազգն նոցա առ հասարակ  
զփառս իւր : Հոմերոս վճիռ հատանէր  
խնդրոց , իրաւասութեանց տոհմից , վի-  
ճից քաղաքաց :

Այլ գալով 'ի քերթողական փառան  
 Հոմերի , 'ի հնագունիցն քերթողաց իշ-  
 խեաց և ոչ ոք դիւցազներգակ լինել յեա  
 նորա , զի մի աղօտասցին առաջի լուսոյ  
 նորա . իսկ գործնական անուանեալ քեր-  
 թածք 'ի նմին իսկ յարգանդէ Նղիակա-  
 նին և Ոգիւսականին 'ի վեր երևեցան :  
 Եսքիւղոս քերթող առաջին ողբերգակ  
 խոստովան եղև , եթէ ողբերգութիւնք  
 իւր փշրանք են մեծահաց ընթրեացն Հո-  
 մերի : Այլ և Սոփոկղէս և Եւրիպիդէս  
 մեծք և անուանիք՝ պատուասիրեցին ան-  
 դրատին 'ի Հոմերէ առնուլ զառաջարկու-  
 թիւնս ողբերգութեանց իւրեանց :

Իսկ որ առաւել է 'ի բանիս Սոկրատէս  
 մեծն հարցեալ զՀոմերոսէ , ասաց զան-  
 կարծելին . « Մեծամեծքն յիմաստու-  
 թեան միշտ 'ի պատուի կալան զՀոմերոս ,  
 իսկ սակաւագէտքն ոչ այլ ուստէք դիւ-  
 րագոյն ընկալան զանուն իմաստութեան ,  
 բայց դաւանելով զանձինս մշակիչս լինել  
 Հոմերոսի » : Բայց որ հաստարմատ ևս  
 գործեաց զվարկն Հոմերի՝ խորիմացն Ա-  
 ըրիստոտէլ քերթողական արուեստին  
 վարդապետ վարժեալ 'ի Հոմերէ , պատ-  
 գամեա , եթէ՝ դիւցազնաբան քերթողու-  
 թիւնն միանգամայն և ծնաւ և կատարե-  
 լահասակ ծնաւ 'ի հանճարոյն Հոմերի ,

ըստ որում Աթենաս 'ի մտացն Արամազ-  
 դայ : Ոյր աղագաւ և սանն իմաստասէր  
 աշխարհակալն յականակուռ տուփն Դա-  
 րեհի ամփոփէր իբրու զյոյժ գեղեցիկն  
 'ի ծնունդս մտաց, զքերթածսն Հո-  
 մերի : Ասան որոյ իրաւասպէս և Դիոփն  
 իմաստասէր յարանուանեալն Բերան ոս-  
 կի, գրեալ ճառ մի 'ի հրահանգ մտացի  
 ուրումն սլատանւոյ և 'ի ներքս բերեալ  
 ընտրութեամբ զբազումս 'ի մատենա-  
 գրաց, « Ի վեր քան զամենայն Հոմերոս  
 լիցի, ասէ, սկիզբն և միջոց և վախճան  
 քոյին դարութեանց : Նա քաջիկ յարմա-  
 րեալ կայ միանգամայն և սլատանեկաց և  
 արանց և ծերունեաց . այր այր իւրաքան-  
 չիւր գտանէ 'ի նմա զայն ամենայն՝ որ  
 մի անգամ անկ իցէ անձին իւրում » : Եւ  
 Լոնգինոս երևելին՝ վարժապետ վսե-  
 մական ոճոյն, գառնայր հայէր 'ի վսե-  
 մաբանն Հոմերոս իբրև 'ի նոյն ինքն յԱ-  
 րամազդ . « Առ որով, ասէ, միանգամայն  
 իսկ ամենայն ոճ ոչ այլ ինչ է, բայց լե-  
 զու առն մահկանացուի » :

Համաշունչք մատենագրացս գտան և  
 արքայք իմաստասէրք . ըստ որում Աղէք  
 սանդր շրջեալ 'ի Տրոյիա 'ի տեսարան  
 քերթութեանցն Հոմերի, երանէր զգիւ-  
 ցազունս նորա, զի գիսկեցան այնպիսի

քարոզի . և ըղձալի իւր ասէր՝ 'ի Հոմերի  
քերթածսն լինել Թերսիտէս , քան յայ-  
լոցն՝ Աքիլլէս : Զնոյն մեծապէս յար-  
գեալ զՀոմեր և Պտղոմէոս Փիղագեղփոս , 'ի  
մահ խաչի դատապարտէր յԵգիպտոս զԵ-  
զուագար հայհոյիչն Հոմերի զԶոյիլոս :

Բայց ընդ քերթողական անկշիռ ու-  
գւոյն և վսեմաբանութեանն անզուգա-  
կան էր վարկն Հոմերի և յիմաստութեան  
մասին և 'ի գիտութեան մարդկային ու-  
գւոյ և 'ի գեղեցիկ բարոյականին , ա-  
ռանց որոց չլք ասել զոք քերթող գիւց-  
ագնական : Քանզի որ ուշիւ քննեաց  
զտառնն ողջոյն զՀոմերի՝ նրբագնին այն  
Արիստոտէլ , զայս կնքեաց . « Հոմերոս  
հանճարովն 'ի վերոյ էանց ամենեցուն » :  
Եւ միտք և առաջարկութիւն Հոմերի՝ ա-  
սէր Անաքսագորաս իմաստասէր՝ ողջոյն  
յԵղիականին և յՈգիւսականին ոչ այլ  
ինչ էր , բայց ճշմարտութիւն և արդա-  
րութիւն : Քաջիկ խելամուտ այսմ և խո-  
րազգացն այն Մաքսիմոս սղատոնեան ,  
զՀոմերոս , ասէ , ոչ միայն իբրու ամենա-  
ճարտար նկարիչ գիտեմ գոյիցս , այլ և  
իբրու նրբատես ոմն խելամուտ բնու-  
թեան . « Կամին իմն , ասէ , ոմանք արտա-  
քոյ առնուլ զՀոմերոս յիմաստասիրացն  
դասուէ . զՀոմերոս՝ որ իմաստասիրացն է

սետ և իշխան: Կա աւանիկ յորմէ հետէ  
 յորդեալ ծովացաւ Յունաստան իմաս-  
 տակուծեանց անտի Կիլիկիոյ և Թրա-  
 կիոյ, և 'ի դուրս Թափեցան հիւղէքն Ե-  
 սկիկուրոսի և հուրն հերակլիտեայ և  
 ջուրն Թաղեսի և օդն Անաքսիմենեայ,  
 նա և կարասն Դիոգլինեայ, և սայքա-  
 րեալ խեթկեցին նոքա ընդ միմեանս, այ-  
 նուհետ լի եղև ամենայնն զրուցաբանու-  
 թեամբք, և ճշմարիտ տիպար առաքինու-  
 թեան և արդիւնք գործոց սակասեաց  
 'ի միջոյ: Ընդ ամենայն Յունաստան վի-  
 ճաբանութիւն է վասն բարւոյն, և բա-  
 րին չէ 'ի միջի: Ուր նախնին այն իմաս-  
 տութիւն՝ յորում՝ նախաթուռ եկաց հո-  
 մերոս, բարգաւաճեցոյց 'ի դարս առա-  
 ջինս բոյսս զճշգրիտ և զգործունեայ ի-  
 մաստասիրութեան: Ոյր աղագաւ և  
 աշակերտեալքն երկրորդ դարոցին սղա-  
 տոնեան զմիմեամբք ելին յերևան բերել  
 ընդաբոյս լուսովն իւրով զգաղտնի զի-  
 մաստութիւնն հոմերի ծածկեալ յՈգիւ-  
 սականին նորա և յԵղիականին: Եւ Ա-  
 րիստոկղէս Մեսսենիոս իմաստասէր խըն-  
 դիր 'ի մէջ արկեալ, « Ոյր բարոյականն  
 իցէ առաւել ճշգրիտ, Պղատոնի՞ն ար-  
 դեօքեթէ հոմերոսին», իմաստասիրաբար  
 քննեալ զբանն՝ կնքեաց 'ի կողմն քեր-

Թողին : Զսոյն մանր զննեալ 'ի տառսն  
 Հոմերի և իմաստասէր կայսր օրէնսդիրն  
 Յուսափնիանոս՝ ոչինչ յերկուացաւ 'ի  
 մատենին օրինաց իբրև սլաոգամաւ կո-  
 չել զՀոմերոս, Հայր ամենայն առաքինո-  
 ւեանց : Քանզի և որ յառաջքան զնա իբ-  
 րև մատենհար եղ ամենայն վերոյգրե-  
 լոցդ իւրովն յարգիւ ներհմտացեալն և  
 յարտաքինսն մեծն Բասիլիոս 'ի հանճա-  
 րաւոր ճառի անդ իւրում մակագրեալ,  
 Զիւրդ պարտ իցե օգտիւ առ 'ի Հելլենացոց  
 հասկեից, բազում ինչ իմաստնաբանեալ  
 վասն առաջարկութեանն, զայր ոմն քա-  
 ջահմուտ 'ի մէջ անցուցեալ, 'ի բերանոյ  
 նորա վկայէ, եթէ « Բովանդակքերթա-  
 ծըն Հոմերի ոչ այլ ինչ է, բայց գովու-  
 թիւն առաքինութեան և սլարսաւ մոլու-  
 թեան » :

Այսոքիկ 'ի Յունաց . իսկ և 'իմերազ  
 նեայց՝ զբաջուչիմն Խորենացւոյն զան-  
 զուգական վարկն վասն նսլատակին Հո-  
 մերի տեսցուք ըստ սլատեհին յառաջնում  
 անդ ծանօթութեան :

ՎԱՄԿԵՆ ՀՈՄԵՐԻ ԱՌԻ ԼԱՏԻՆՍ  
ՅԱՌԱՋԻՆ ԳԱՐՈՒՅ ՄԻՆՉԵՒ Ի  
ՎԵՐՋԻՆՍ :

Եթէ որպէս 'ի համազգեաց' նոյնպէս  
և յօտարաց նովին չափով համբաւեսցի  
այր, անյերկուանալի իցէ հռչակ համ-  
բաւոյն, քանի՛օն ապա կարծեսցես լինել  
յորժամ յօտարաց անտի առաւելագոյն  
չափով գտցէ նա անձին բարեբանս :

Ի վարկն հոմերի և 'ի յարգն Լատինք  
և Անգղիացիք և Գաղղիացիք և Գերմա-  
նացիք գողցես գերազանցեալ քան ըզ-  
Յոյնս, յոյժ սանձացուցին զնա, զի ճըշ-  
գըրտագոյն ևս վերլուծութեամբ բովան-  
դակ յերևանի կացուցին սքանչելապէս  
զանկչուելի քերթածսն նորա, մանաւանդ  
'ի վերջնումս : Առ այս՝ զի և ոչ վայրա-  
պարք ոմանք զնոյն գործեցին, այլ արք  
հոյակապք իմաստութեամբ և մատենա-  
գրութեամբք : Յորոց 'ի բիւրուց անտի  
յիշատակ սակաւուց առնելով, Ովիդիոս  
մեծն Յուստինիանոս աշխի-ր Կերիոզոս  
կոչեր զհոմեր : Եւ զյորդաբուղն գետն  
զհոմերոսի՝ ասէր Մանլիոս՝ զկնի եկեալ

քերթողքդ առեալ բաշխեցին իւրաքան-  
չիւր 'ի խաղս և 'ի ջրադարձս : Ու վրատիոս  
մեծն՝ քերթողականին վարդապետ և  
կրիտիս ճշգրիտ՝ վեհագոյն վարժապետ  
դաւանեաց զՀոմեր յարուեստին յայնմիկ  
և յոճն և 'ի ճարտար դասաւորութեանն  
և 'ի տիպարս բուսոյ բարուց մարդկան ,  
և 'ի քաջահրահանգ բարոյականին , այ-  
լովքն հանդերձ : Իսկ անզուգականն այն  
'ի հռովմայեցի քերթողս Ալիդիլիոս ար-  
դեամբք մեծացուցանէր զվարկն հո-  
մերի՝ միշտ անմեկնելի առ 'ի նմանէն ըն-  
թանալով , և ողջոյն 'ի տիպար գեղեցիկ  
Ենէականին իւրոյ ցանգ ցուացուցանե-  
լով զճաճանչս զԵղիականին և զՈղիւսա-  
կանին :

Վուինտիլիանոս իշխան հռետորաց 'ի  
գեղեցիկ ախորժակին՝ խորագոյնս զըն-  
նեալ բովանդակ որչափ ոչ դք այլ՝ զխորի-  
մաստն հոմեր 'ի զրոյցսն , յատենաբանու-  
թիւնսն , 'ի նկարսն , 'ի կիրսն , յառածսն ,  
'ի վէպսն , յարտայայտութեանն , յարուես-  
տին՝ առանց ցուցանելոյ զարուեստն , և  
ողջոյն յոճն , զայս կնքեաց , « Զոր օրի-  
նակ յՈվկիանոսէ՝ ըստ առասացութեան  
նորուն հոմերի յառաջ խաղան միանգա-  
մայն ամենայն գետք և ամենայն աղբիւրք ,  
նոյնպէս 'ի նմանէ ամենայն մասունք ճար-

տարախօսութեանն առին ծագումն և զգաղափար : Չիք որ որ 'ի մեծամեծսն գերազանցեցէ քան զնա վսեմութեամբ, կամ 'ի փանաքիսն՝ ճշգրտութեամբ . պերճ է՝ միանգամայն և ճշգեալ ըստ ժամունն . անմատոյց է՝ միանգամայն և հեշտ և բաղձալի . սքանչելի է հաւասար կշռութեամբ եթէ 'ի ճոխաբանութեան իւրում և եթէ 'ի փոքրաբանութեանն . որպէս զի և փառք առն մատենագրի ոչ այնինչ է՝ նախանձաւորութեամբ զուգահաւասար գտանիլ առաքինութեանց նորա , քանզի այս յանհնարիցն թուի , այլ միայն խուզողական հանճարովն խելամուտ լինել այնոցիկ ” : Աստուծոյ Առին տիլիանոս փոխանակ այլոց հնոցն հռովմայեցւոց 'ի մասին յայսմիկ :

Իսկ փոխան վերջնոցն ամենեցունց զմի որ առցուք 'ի Գաղղիոյ . և զմի որ յԱնգղիոյ : Որ 'ի Գաղղիացիս առ վերջնովքս խորամուխ եղև 'ի հետազօտութե բովանդակ արժանեացն հոմերի գերահամբաւն այն Պարթըլմի , զայս օրինակ սկսանի հարցանելով . « Ո՞ր որ արդեօք իցէ այրն , որ դասս զքաղաքականին գիտութե տայ օրէնսդրաց . որ տրամաբանել ուսուցանէ իմաստասիրաց , հրահանգել բերկրութեամբ՝ քերթողաց , շարժել համո-

զէլ՝ հռետորաց . որ տայ փթթեւ բնածին  
հանճարոյն՝ ամենայն մարդոյ . և որ յայն  
պիսի իմն վսեմական բարձրութեան ան-  
ցեալ կայ , զի և ոք ՚ի մարդկանէ մի ժը-  
տեսցի ՚ի վէգ ընդ նմա ելանել՝ որպէս  
ընդ արեգականս որ լուսաւորէն զմեզ =  
Ո՞րք արդեօք իցէ այրն , աղէ ասա . նա  
ինքն է հոմերոս . . :

Եւ որ առաւելքան զամենայն՝ անզու-  
գակչիւ այլոց ամենեցուն գործեաց զնա,  
այն եռանդուն ոգին է զոր մասնաւորէ  
նա ամենայն իրաց , այն բորբոքումն՝ որ ՚ի  
սիրոս մեր ընդմտանէ . այն գեղեցիկ  
կարգաւորութեամբ հսպառակէն զամե-  
նայն ՚ի ներքոյ գլխաւոր կրիցն . այն առ-  
նուլ տանէն զայն կիրան մինչև յամպս ՚ի  
վեր , և թողուն զնա անկանել միւս ան-  
գամ ըստ ժամուն ՚ի բռնութենէ սագրե-  
լոյ խելացն և առաքինութեան , այն վսե-  
մական բոյսք բարուցն ճշգրիտ նկարա-  
գրեալք կորովի գրչաւ քերթողականաւ՝  
ըստ գունակ գունակ չափու արիութեան ,  
կորովութեան , և այլոց ևս ձրից իւրոց  
գիւցազանցն . . :

Ելանեմ ընդ նմա յերկինս ՚ի վեր , յակն  
արկանեմ զԱստղիկն համբուն որպէս և  
էն՝ ՚ի կամարի գօտւոյն . ճանաչեմ զՊալ-  
լաս զԱթենաս , տեսանեմ զգոռալ նորա

Եգեան ասպարաւն, զորով շուրջ պատեն  
Ահն, Հոյն, Հեռն, և Գորգոնեան գը-  
լուինն անընկէց: Արամազդ և Պոսիգոն  
առաւել հսկայազօրքն են ՚ի դիս, այլ Պոսի-  
գոնինն պէտք են երեքարձենին ՚ի սասա-  
նել զերկիր. Արամազդայ շատ է ակնար-  
կել միայն յօնիցն ՚ի սարսել զՈղիմպոս:

Իջանեմ յերկիր ՚ի խոնարհ, Աքիլլէս,  
Այաս և Դիոմեդէս՝ անէղք և սոսկալէք.  
այլ Դիոմեդէս է զի ընկրկի, Այաս ան-  
վանելի կայ նա և ընդդէմ ողջոյն բանա-  
կի, Աքիլլէս արձանանայ, և յանգոյու-  
թիւն դառնան Տքովացիք: Այս չքնաղ  
տիպարք, ոչ ՚ի միում անդ վայրի խըռ-  
նեալք կան, այլ բաշխեաց և բաժանեաց  
ճարտար և իմաստուն քերթոյն ըստ ժա-  
մունն պիտոյից զտիպան և զգաղափարս  
իւր”:

Ապա և զստգիւտան ամենայն ՚ի քնին  
առեալ՝ որով ստգտանէին ոմանք զհոմեր,  
ասէ. « Անշուշտ է զի և նիրհէ հոմերոս,  
այլ նիրհ նորա զուգատիպ է նիրհելոյն  
Արամազդայ, որ ըստ հոմերեան առ-  
ասացութեանն՝ զարթնու կրկին, զի կորո-  
վագոյն ևս թափ տացէ շանթից կայծա-  
կանց իւրոց”:

Իսկ յԱնգղիացւոց անտի մատենագրաց  
ոչ ոք այնչափ, ասէ Չեսարոթթի, մեծա-

սէս բարձրացոյց զփառան Հոմերի փաս-  
 տաբանութեամբ հանդերձ՝ իբրու զքեր-  
 թողն զայն զբաշագոյնն՝ ի քերթողս Ան-  
 գղիացւոց, այն է՝ Փոփ, այր լի գեղեցիկ  
 ախորժակաւ և հանճարիմաստ կրիտիս  
 անաչառատես: Սա նկատէ ՚ի Հոմեր իբ-  
 րև կնիք նորա առանձին զձիր հնարիմաց  
 գիւտոյն, զոյր և զբեղմնաւորութիւն և  
 զգերազանցութիւն ճոխ և առատ ՚ի դէմս  
 բերէ. « Հոմերոս, ասէ, առ հասարակ  
 դաւանեալ է իբրու առաւել ոմն հնարա-  
 գիւտ քան զամենայն հեղինակս: Ախրգի-  
 լիոսի հնար է մրցիլ ընդ նմա ՚ի սլատճառս  
 մտաւորութեանն: Թերևս այլք ոմանք  
 հաւասարեցին Հոմերի յայլում մասին ի  
 միք, այլ տակաւին չգտաւ ոք հաւասար  
 որդ նմա յոգին քերթողական, և քան-  
 զի այս ձիր է էական հիմն և խարիսխ քեր-  
 թողութեան, ասպա ուրեմն առանց հա-  
 կառակութեան սա է գերագոյնն քեր-  
 թողաց. յոյր առատ սերմնարանէն ասպա  
 այլ քերթողք այր այր ընտրեցին առին  
 ըստ հաճոյս իւրաքանչիւր տունկս և ծա-  
 ղիկս ՚ի մշակելինչ ՚ի նոցանէ առաւելա-  
 գոյն ևս դարմանով »:

Եւ զայս հնարագիւտ ոգի հոմերեան  
 որոշէ Փոփ ՚ի հասնական, յայլաբանական և  
 ՚ի հրաշակներսն. դարձեալ ՚ի բոյսս բարուց,

յորս երևեցոյց՝ ասէ դիմակս դիմակս  
 գիրգս և նազելիս . և նրբութի իմն անհա-  
 մեմատ ՚ի խեղամուտ լինել տարբերութեցն  
 և խառնուածոց իւրաքանչիւր . դարձեալ՝  
 և ՚ի զրոյցսն և յատենաբանութիւնսն՝ որ  
 հայելի են բուսոյ բարուցն . հուսկ ու-  
 բեմն ՚ի վսեմականութեան սլատկերացն  
 ճշգրտութեան և ՚ի նկարչական ճարտար-  
 սլատութեանն , որք առ հասարակ , ասէ ,  
 յոյժ վեհագոյն առազրեն զհոմեր քան  
 զՎիրգիլիոս : « Քանզի ամենայն դիւցա-  
 զունք հոմերի են , ասէ , կորովիք . այս կո-  
 րովութիւն աղբիւր էնոցուն դիւցազնու-  
 թեան . այլ սակայն քանի՛ բազմագունակ  
 է բացատրութիւն դիւցազնութեանդ այ-  
 գորիկ : Աքիլլեայ կորովութիւնն սան-  
 ձակոտոր է և մոլեգին . Դիոմեդեայն ան-  
 զարհուրելի , թէպէտ և համբոյր և հեշտ-  
 ընկալ հրամանի . Այասայ արիութիւնն  
 խիզախ է և անվանելի . Հեկտորայն ար-  
 թուն և ժիրաժիր . Ագամեմնոն փառախըն-  
 դիր է և գոռոզ . Մենեղաւոս մարդասէր  
 և գորովական : Իսկ քերթողական կնիքք  
 Վիրգիլեայ առ համեմատութեամբ հոմե-  
 րեանցն ուրուատիպք են : Աորովութիւն  
 վիրգիլեան դիւցազանց առ հասարակ՝ է  
 միշտ մի և նոյն : Դիւցազունք Ստատիոսի  
 քերթողին ամենեքին զնոյն ունին դո-

ուութիւն : Այր այր գեղեցիկ ասորժա-  
կան յընթեռնուլ անդ գբերթողս , հեշ-  
տեալ խելամուտ լինի , քանի՛օն դոքա խո-  
նարհագոյն իցեն քան զՀոմերոս 'ի հնար-  
խմացութեան գիւտոյն » :

Բայց և այլովք մասամբք յանաչառա-  
տես կշիռն իւր ընդ Հոմեր և ընդ Ա իրգիլ  
հանճարիմաստն Փոփ պանծացուցանէ  
և զհրաշացեալն Ա իրգիլիոս : Եւ արժա-  
նալուր յոյժ է ճշգրտութիւնն , որ ունի  
այսպէս . « Հոմերոս չունի , ասէ , հաւա-  
սար իւր յոգին քերթողական . Ա իրգիլիոս  
չունի զոք հաւասար 'ի մտաւորութիւն  
քերթողական : Ոչ կամիմ ասել , եթէ մը  
տաւորութիւն չգուցէ 'ի Հոմերոս , կամ  
ոգին 'ի Ա իրգիլիոս : Երկաքանչիւրքն ևս  
առեալք առանձինն՝ են առաւել հնարա-  
գիւտք և առաւել մտաւորք քան զամե-  
նայն մատենագիրս աշխարհի : Այլ աս-  
տէն կամիմ 'ի կշիռ ընդ միմեանս ձգել  
ղնոսա : Հոմերոս առաւել ունի զոգին .  
Ա իրգիլիոս առաւել ունի զարուեստն :  
Ի միումն ես հիացմամբ նկատեմ զմարդ ,  
'ի միւսումն զարուեստաւոր : Հոմերոս  
տիրանայ ինձ և առեալ ձգէ զիս իշխա-  
նասպանծ իմն զօրութեամբ , Ա իրգիլիոս ա-  
ծէ զիս առ ինքն շքով իմն՝ որ լի է յան-  
կուցմամբ : Հոմերոս սփռէ զգանձս իւր

ազատական իմն առատաձեռնութեամբ,  
 Վերգիլիոս պարգևէ զիւրսն մտաւոր իմն  
 մեծագործութեամբ: Հոմերոս իբրև ըզ-  
 Նեղոս ծաւալէ հարստութիւնս անսահ-  
 մանս արագապէս հեղեղմամբ, Վերգի-  
 լիոս բարձեալ բերէ զիւրսն իբրու գետ  
 առատացեալ և կանոնաւոր յընթացս իւր:

Այր այր 'ի կրկին քերթողացդ զնմա-  
 նութիւն բերէ զիւրոյ դիւցազին: Հոմե-  
 րոս անվանելի է իբրու զԱքիլլէս, ամե-  
 նայն 'ի փախուստ դառնայ յառաջոյ  
 նորա, ամենայնն տեղի տայ. քանի՜ ա-  
 ռաւել սաստկանայ գոռն, այնչափ առա-  
 լել փայլակնանայ, և չիք ինչոր կառեալ  
 կապեսցէ զնա. Վերգիլիոս իբրու զԵնէաս  
 հանգարտական արութեամբ տիրանայ  
 միշտ անձին իւրում. 'ի նմին իսկ 'ի գոր-  
 ծելն զամենայն տեսանէ, զամենայն 'ի  
 կարգի դնէ, մարտ եդեալ կռուի ան-  
 խռով և յաղթանակէ անվրդով: Իքերթո-  
 ղական մեքենայսն Հոմերոս նման իւրումն  
 Արամազդայ երբ կամի զարհուրեցուցա-  
 նել զաշխարհ, գորդէ զՈղիմպոս, հրա-  
 կիզու զերկինս, արձակէ փայլատակունս  
 և ճայթէ շանթիւն: Վերգիլիոս իբրու  
 զաստուած ոմն բարերար խորհի ընդ աս-  
 տուածոց՝ զիարդ հաստեւարքայութիւնս.  
 Դնէ՝ զհիմունս նոցա, և գործէ զամենայն  
 մեծաւ իմաստութեամբ 33:

Ապա 'ի կնքել իւրում զզննութիւն իւր  
'ի հոմեր, հոմերանայ անշուշտ և ինքնին  
Փոփ յասելն . « Ճշգրիտ իմն դասաւորու-  
թիւն, անյեղլի հաստատութիւն, քաջա-  
դէպ յարմարութիւն և ներդաշնակութիւն,  
է գտանել և առ բազումս 'ի մատենա-  
գրաց . սակայն այդ եռանդն ուժգին, այդ  
բոցավառ ոյժ հրաբորբոք ոգւոյն, այդ գե-  
ղանի հուր վսեմական հնարիմացութեան,  
այս ամենայն իբրու այն թէ գիւթեալ  
զմեղ ըղձակերտս առնեն զհոմեր . և գոյն  
այդ ճոխաբար առեալ նուաճէ ընդ իւրև  
զկրիտիսութիւնն գլխովին . և բռնացեալ  
հարկաւորէ զնա հիացմամբ հայել յինքն,  
նաև 'ի ժամու անդ դատակնիք կապելոյ  
'ի վերայ նորա :

Յորժամ այս հուր մի անգամ ցոլացեալ  
երևեցուցանէ զինքն, թէպէտ և 'ի շատ  
անտեղութեանց ևս շուրջ սլատեալ իցէ,  
նազնոսս յաճիւն լուծանէ և զամենեսեան  
ակնկառոյցս առ ինքն դարձուցանէ :  
Այս հուր 'ի Ախրգիլիոս հայելի իմն է հը-  
րոյն հոմերեան . ունի նա առաւել շողիւն  
քան ուժգնութիւն . սակայն հաստա-  
տուն է և միօրինակ . 'ի թասսոյ և 'ի Նու-  
կանոս ցայտէ կայծակունս կենդանիս և  
կարճատևս . 'ի Միլդոն է հնոց, յորում  
սաստիկ ջերմութիւնն սրահսանի ուժ-

գնուլթեամբարուեստին, ՚ի Շէքսպիրու թը-  
ւի ՚ի յերկնից թափիլ, և հարուածս գոր-  
ծէ անկարծելիս. ՚ի Հոմերոս, միայն ՚ի  
Հոմերոս է նա հանապազ նոյն և ճաճան-  
չէ անդադարելի և դամբան զգամբոցա-  
վառի ։ Այսպէս կնքէ զբանսն իմաստ-  
նախոհն Փոփի ։

Բայց և մեք մինչ չև կնքեալ զճառս,  
բանզի ՚ի թշնամեացն զօրաւորագոյն է  
կարծիք գովուլթեանն, ոչ կարեմք անյի-  
շատակ թողուլ և զերկտող մի զնորուն իսկ  
զգառն կրիտիսին Հոմերի, այն է երևելին  
Սքալիճէր, որ թուի թէ հուսկ ուրեմն  
խտողեալ ՚ի ճաճանչիցն Հոմերի, զոր  
Փոփն ասաց, անհամեմատ ամենեցուն  
հարկաւորի երգել ՚ի բերանոյ Հոմերի,  
այսպէս .

« Զիս ոչ մարդիկ, զիս ոչ Մուսայք ՚ի  
լոյս ածին ,

Այլ ՚ի հօրէս յինէն Մուսայք ծագումն  
առին ։ »

Արդ զհայր զայս զՄուսայից փափա-  
քեալ ընծայել Մերազնեայց, զամենայն  
ջան ըստ կարի ՚ի գործ արկաք դժուարա-  
բիրտն տաժանմամբ եթէ ՚ի չափաբերու-  
լթեան, եթէ ՚ի ծանօթութիւնս, և եթէ  
առաւել ևս ՚ի թարգմանութեան ՚ի բուն  
և ՚ի ստոյգ օրինակացն Հոմերի, հետա-

զօտելով և զթարգմանիչս նորա, և զմեկ  
 նիչս զարգիս, և զհին լուծմունսն հոմե-  
 րեան, ընծայաբեր իբրու յաղքատ կա-  
 րասեաց լինել սրտուական Ազգիս, գի-  
 տելով զնորայն շահ օգտի՝ որ և զինչ իցէ,  
 միանգամայն կրթիլ ՚ի փառս Աստուծոյ:





1791  
1792  
1793

# ԵՂՒԼԱԿԱՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ա.

## Ն Ա Ն Ա Դ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Յամին տասներորդի տրոյական սլառերազմին աւար հարեալ Յունաց քաղաքս 'ի սահմանակցաց անտի Տրոյիոյ, գերեցին և երկուս չքնաղս յօրիորդաց զյորիւսանոյշ՝ դուստր քրմին խրիւսեսի, զոր ետուն Յոյնք 'ի պարպե Ագամեմնոնի արքայի, և զԲրիսանոյշ՝ զոր ետուն 'ի մրցանակ Աքիլլեսի գիւցազին: Խրիւսես քուրմն Ապողոնի հնարի փրկանաւորել զդուստրն . բայց ըմբոստացեալ Ագամեմնոնի և անպատուեալ զքուրմն , սա աղօթիւք գիմէ առ Ապողոն , և առաքէ նա սրածուծիւն 'ի բանակն Յունաց: Ատեան խմբէ Աքիլլես: Կալքաս Գուշակն խրախուսեալ յԱքիլլեսայ 'ի վեր հանէ զպատճառս ցասմանն Ապողոնի: Բանակուուածիւնք ընդ Ագամեմնոն և ընդ Աքիլլես: Խաղաղէ Նեստոր ծերունին: Խրիւսանոյշ առաքի առ հայրիւր . բայց զԲրիսանոյշ հանէ Ագամեմնոն յԱքիլլեսայ: Աքիլլես սաստիկ խեթահարեալ ընդ զրկանսն, ոչ ևս կուուի ընդդէմ՝ Տրոյացւոց: Բողոք բառնայ առ մայրիւր Թետիս , և սա առ Արամազդ : Կադ յատենի աստուածոց ընդ Արամազդ և ընդ Հերա :

Հագներգուծիւնս ունի չափ աւուրց քսան և երկուց :



## ԵՂՒԼԱԿԱՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա .

Մ' Թ Դիցանոյշ երգ զոխութեան զԱ. քիւ  
լեսին Պեղոսեան 1 ,  
Որ ցաւ գուժեաց մահահրաւէր Աքայե  
ցւոց անպայման .  
Նա յանդընդոց սանդարամետս առոյգ  
հոգւոց դիւցազանց  
Ճեպ տարաժամ ետ գահալէժ , շատից  
եղեալ մարդախանձ .  
Շանց կերակուր եդ ըզնոսա և գէշ  
թրուչնոց օգապար ,  
Եւ անպատիրն Արամազդայ խորհուրդն  
յանգէր 'ի կատար ,

Երբ զառաջին խեթահարեալք 'ի վեդ  
հերձան 'ի պէսպէս

Ագամեմնոն մեծ թագաւորն և քաջ մաղ  
դեղն Աբիլէս :

Այլ ըզդոսա ո՞ յաստուածոց մարտիւ  
դրդեաց 'ի պայքար .

Որդի արւոյն Արամագդայ և Ղետովնին  
բարեփառ :

Չի սա ցասունն յուղեալ յարքայն, ախտ  
խանձեցոյց մահաբեր ,

Եւ ժողովուրդ 'ի բանակէ անդ դիտա  
պաստ անկանէր :

Քանզի խրիւսեայ շուք չեդ քրմին , զը  
ղեաց դուռոզն Ատրիդէս ,

Երբ յարագ նաւս Աքայեցւոց հաս ծե  
րունին փութապէս .

Եհաս լինել նա անձկայրեաց դըստերն  
իւրում գերեհան ,

Եւ գին ամբաւ ըզփրկանացն առեալ  
դընէր յանդիման :

ՉԱպողոնին 'ի ձեռն էառ ըզվարսակալ  
գեղասպանծ ,

Եւ ընդ բարամուռնս ընդ ոսկեղէն շուր  
ջանակի բոլորեաց .

Այնպէս ողջոյն Աքայեցւոց յողոք ան  
կաւ ծերունին ,

Եւ առաջին Ատրէոսեանց կրկին պետաց  
բանակին ,

« Քաջք Ատրեսեանք , և ամրաբարձ Ա-  
քայեցիք ունկըն դիք ,

Չեզ բնակաւորք տանց Ողիւմսկեայ ձեզ  
վերնաճեմ տացեն դիք ,

Տացեն զոստանն ըզՊրիամուն քանդել  
ձեզ գամ քան ըզգամ ,

Եւ 'ի տուն ձեր 'ի հայրենին դառնալ  
անդրէն ողջանգամ :

Առէք փրկանս և դարձուցէք ըզնազե-  
լին զիմ մանուկ ,

Եւ քաջաղեղն Ապողոնի որդւոյն Դիայ  
հարէք շուք » :

Աքայեցիք հաճք և հաւանք յողոք ծե-  
րոյն գորովն ,

Անուշ փրկանս ըզգեղեցիկ , շուք երե-  
սաց տալ քրմին :

Ըմբոստացաւ Ագամեմոնն , ամբոխեցան  
և ոգիք ,

Ընդ վայր գոռոզն եհար ըզծերն և որո-  
տաց բան սաստիկ .

« Մի , ծերունիդ , քեզ ընդհարայց 'ի գո-  
գաւոր 'ի լաստէն ,

Թէ տակաւին աստ դեգերիս կամ [Թէ  
դառնաս գու այսրէն .

Գուցէ ումսկտ քեզ լինիցի այդ քո սս-  
կի գաւազան ,

Գուցէ չիցէ քեզ բարեխօս և վարսակալդ  
աստուածեան :

Քաւ չարձակեմ, մինչ չլեցեալ դա յա-  
լևոյթ ծերուծեան,

Ընդ մարդակաւս նըստցի յԱրգոս 'ի հայ-  
րենեաց բացական .

Նըստցի նա ժիր հենուլ զոստայնն, հար-  
ցէ մահճին իմ ըսպաս ,

Ե'րթ, ծերունիդ, մի կար ինձ խոչ, դառ-  
նալ ողջամբ թէ ըղձաս ։

Օ, ահի մեծի հարեալ ծերոյն , սաստին  
անսաց վըշտմբեր ,

Գնացեալ մընջիկ առ բազմագոչ ծովուն  
ափամբըն ճեմէր :

Շատ ինչ այնպէս անդ մենացեալ, ուխ-  
տիւք մաղթէր ծերունին ,

Զոր վարսագեղ ծընաւ Ղետոն, Ապողոնի  
արբային .

« Արծաթաղեղն ինձ լո՛ւր, արբայ, պաշտ-  
պան խրիւսայ մեծազօր .

Արգոյն Կիլայ և Տենեդեայ դու ես հը-  
զօր թագաւոր .

Ո՛վ դու Սմինթեւ 2 , թէ զքոյդ տաճար  
սըսակեցի նազելի ,

Կամ թէ երբէք սարարտու թիւն քեզ սա-  
տարագ յազեցի ,

Ըզոյր ըզթամբս այծից , զանդեայց ,  
ճենճերեցի քեզ նըւէր ,

Զարդիս և դու զայս զիմ անձուկ կատա-  
րեսցես ինձ , ո՛վ տէր .

Դանայեցիք զիմ արտասուս 'ի բոց լուծ-  
ցեն 'ի փրբնաց" .

Զայս նա մաղթէր , և Ապողոն լուաւ ծե-  
րոյն մաղթանաց :

Եւ յՈղիմպեայ յարուանէն , էջ բոցա-  
վառ իբրև հուր ,

Առեալ զաղէղն արկեալ զուսոյն և ըզ-  
կապարճն ամրակուռ .

Փրբինքն 'ի յուս սրտամբտելոյն շաչին  
շառաջ արձակէր ,

Երբ մեծաբայլ շարժէր հրսկայն խաղայր  
իբրև ըզգիշեր :

Արձանացաւ հանդէպ նաւաց , ետ գըր-  
կալիր փրբին մի ,

Ճայթեաց ասէղ հարաւ ընդ օդ , շկահեաց  
աղէղն արծաթի :

Նախ 'ի գրաստուց արկած փրբնոյն դա-  
սակն հարաւ և ջորեաց ,

Հարաւ 'ի շունս արագավազս 3 , ապա  
մարդկան մահ գուժեաց :

Այնպէս գուժիւ 'ի մէջ նոցա նեան ըն-  
թանայր մահաբեր ,

Եւ դիականց անդ խիտ առ խիտ խարոյկն  
անշէջ բորբոքէր :

Զինն օր այնպէս 'ի մէջ զօրուն գնային  
փրբինքն աստուածեան ,

Յօր տասներորդ . քաջն Ա. քիլէս խըմբեաց  
ըզգօրն 'ի յատեան :

Մըմա 'ի սիրտն ազգեաց հերա լուսածը  
ղին գիցանոյշ,

Գորովեցաւ յաղէտն Յունաց յորահասին  
մահագոյժ :

Իբրև ակումբ մեծ ատենին բողբոցաւ  
'ի հանդէս,

Յարեաւ 'ի մէջ, բարբառեցաւ դիւցազն  
արագ Աքիլէս .

« Մէք, Ատրիդէս, Թափառականք 'ի  
չու անկեալ միւս անգամ,

Անշուշտ կարծեմ թէ նըշխարեալքս 'ի  
տուն դարձցուք ողջանգամ,

Եթէ զարդիս յորահասէն լիցուք միայն  
անձնապուր,

Զի սրածուծիւն համայն և մարտ ըզ  
Յոյնս ունի առ աթուր :

Այլ աղէ մէք հարցցուք ընդ կիւս, կամ  
որ իցէ քահանայ,

Կամ թէ իցէ երազահան, զի և երազն  
է Դիայ .

Նա սլատմեցէ, զի՞ մեզ այդչափ ցասումն  
յուզէ Ապոլոն,

Յանցեալք արդեօք հարիւրեզինն և կամ  
յուխտին 'ի պաշտօն .

Թերևս գառանց նա և զայծից անարա-  
տից խանձ ճենճեր

Խնդրէ առնուլ, և առ 'ի մէնջ զախտըն  
կարճել մահաբեր » :

Օ՛յս Աքիլէս խօսեալ յայնժամ և  
բազմեցաւ 'ի յատեան ,

Յարեաւ անդէն հաւահարցից քաջն  
Կալքաս Թեստորեան .

էր սա ահահ որոց եղէնն և որ լինին և  
լիցին ,

Եւ առաջնորդ էր յԵղիոն Յունաց հա-  
ւաց հանդիսին .

Սըմա Փեբոսըն Ապողոն գուշակութեան  
էտ զոգի ,

Որով և բան զայս հանճարեղ բարբառե-  
ցաւ յատենի .

« Հրաման կարդաս ինձ , Աքիլէս , Ա-  
րամազդայ սիրելի ,

ԶԱպողոնին պատմել ցասումն ըզքաջա-  
ղէղն արքայի :

Արդ էս պատմեմ , այլ դու յառաջ դաշ-  
նաւորեալ ինձ երդուիր ,

Լիցի՞ս բանիւք լիցի՞ս բազկաւ ինձ զօրա-  
վիգ ժիրաժիր .

Քանզի խիթամ , զայր ոք աստէն ցասումն  
առցէ բոցալառ ,

Այր որ բնաւից իշխէ Յունաց և ում  
նոքա կան պատկառ :

Յորժամ հըզօր այր թագաւոր ընդ մարդ-  
ցանու անաւագ ,

Այո ըզմաղձըն դառնութեան սանձէ առ  
մի ժամանակ ,

Այլ քինանայ, մինչև յամբոկ հանել սրբա-  
տին զոխն անջինջ .

Արդ դու, ո՛վ քաջ, ասա մեկին, լիցի՞ս  
արդեօք ինձ փրկիչ” :

“ Քաջ լեր, կալքաս, անդէն բարբառ  
կրկնեաց նրմա Աքիլէս ,

Քաջ լեր դուշակդ, և զաստուածեան  
սլատգամն ասա զոր գիտես :

Քեզ օ՛ն և օն, քեզ յԱստուծոն մազգեզանց  
քաջն, ո՛վ կալքաս ,

Ում վասն Յունաց արթաւոր դու արդ  
սլատգամ մեզ կարգաս ,

Յոյն այր ոչ ոք, ցորչափ էս կեամ և տե-  
սանեմ զայս աշխարհ ,

Ի յայս նաւաց ծանրը ձեռամբ քեզ ցաւ  
ածցէ և աշխար .

Ոչ ոք անշուշտ, և ոչ զաւագն Ագամեմ-  
նոն թէ ասես ,

Որ բարձրագահ ՚ի մեր զօրուն փառօք  
պանծայ մեծապէս” :

Օ այս քաջալեր առեալ գուշակն ասաց  
արգոյն յատենին ,

“ Քաւ, ոչ ՚ի սակս հարիւրեզին նա սրբու  
մըտէ, կամ ուխտին .

Այլ ՚ի սլատճառս քրմին ծերոյ, զոր Ատ-  
րիդէսըն զըզուեաց ,

Ոչ արձակուրդ շնորհեաց գըստերն և ոչ  
էառ ըզփրկանս :

Վասն այնորիկ ցաւ մահագոյժ ետ Քաջ  
 աղեղն և տացէ ,  
 Եւ ծանրացեալ ըզձեռն 'ի ժանտ ախտէն  
 երբէք չամփոփէ ,  
 Մինչ չև ձօնեալ ազատութիւն աչագե-  
 ղոյ այն կուսին ,  
 Սիրուն ծնողին աւանդեսցէ և անփրկանք  
 և անգին :  
 Նա և 'ի Խրիւս զհարիւրեղնեանն 'ի ձօն  
 տարցի նըմա շուք ,  
 Թերևս յայնժամ ըզսըրտմըտեալն հաշտ և  
 համբոյր գործեսցուք " :  
 Պատգամ զայս ինչ տըւեալ Վալքաս ,  
 անդրէն էառ բազմական ,  
 Յարեաւ դիւցազն Ատրէոսեան Ագա-  
 մեմնոն մեծ արքայն .  
 Էր ալէտանջ , և ծով մաղձին պատեաց  
 ըզսիրան 'ի խաւար ,  
 Վէտ վէտ ծըփայր , աչքըն հրաձև փայ-  
 լակնացայտ բոցանայր .  
 Տիգօք աչաց նախ ընդ Վալքաս խաղաց և  
 բան որոտաց ,  
 « Գուժկան չարի , բան դու երբէք ինձ  
 չասացեր բարեզգեաց .  
 Հըմայս դիւթել , կիւս չարաշուք , ցանդ  
 'ի սիրտ քո հեշտացար ,  
 Իսկ քաջ և լաւ ոչ բան ոչ գործ չածեր  
 երբէք 'ի կատար :

Եւ արդ 'ի Յոյնս աստուածախօսս դու մեզ  
պատգամ վերբերես ,

Թէ Քաջաղեղն յուզեալ ցամամբ ցաւ  
մեզ գուժեաց դառնապէս :

Իբրու այն թէ ես ըզխրիւսեան զօրիորդին  
քաջափառ ,

Ըզփրկանաց յանձրն չառի գինն ընդու  
նեւ ըզպայծառ :

Քանզի ըզգա ունեւ 'ի տան իլծք վառե  
ցան իմ հոգւոյն ,

Ձի և կուսինն Կղիւտեմնեստրայ է ամուս  
նոյս վեհագոյն .

Չէ քան ըզնա մասամբք բարեաց չէ դա  
խոնարհ 'ի մարմին ,

Ոչ 'ի դիտակն ոչ 'ի հանճար և ոչ յար  
գիւնս 'ի ձեռին :

Համայն այնպէս թէ այդ լաւ է , կրկին  
ըզգա աւանդեմ ,

Ձի քան զօրհաս , ըզփրկուծիւն ժողո  
վըրդեանըս խնդրեմ :

Այլ դուք արագ ինձ պատարագ աստ  
կահեցէք յանդիման ,

Ձի չէ արդար , եթէ 'ի Յոյնս անձիւր  
գըտայց ես միայն .

Տեսէք իսկ քաջ , զի մրցանակս արդ տա  
րագնաց է յինէն » :

Ասաց , անդէն քաջն Աքիլէս ձայն զայս  
կըրկնեաց յատենէն .

66 Քեզ, Ատրիդէս, այր մեծափառ, այր  
 ընչաքաղց դու աւագ,  
 Քեզ դիւցազունքն Աքայեցիք զիւրդ  
 հանցեն մրցանակ :  
 Բա ոչ դիտեմք, թէ շատ մըթերք հասա-  
 րակաց կուտեալ կան,  
 Այլ քաղաքաց սպուռն աւարն արդէն  
 ողջոյն բաշխեցան .  
 Դըժընդակ է, ըզբաշխ զօրուն աունու-  
 կուտել միւս անգամ .  
 Բայց դու աղէ այժմէն յաստուած յըլեա  
 ըզկոյսդ ողջանգամ :  
 Մէք երեքկին և չորեքկին քեզ հատու-  
 ցուք փոխարէն,  
 Թէ մեզ Դիոս տացէ քանդել Տրոյեանց  
 զոստան բարեշէն » :  
 Չայն ետ Ատրիդ, « Բաւ զիս, մազդեղն  
 Աքիլէս քաջ, ոչ սպտորես,  
 Ոչ և բանիւքդ համոզակեր, թէ մըտա-  
 խաբ կարթեսցես :  
 Կամիս ունել դու յանդորրու ըզքոյին  
 ձիրն և ըզբաժ,  
 Եւ ես յիմոյն մրցանակէ մնացից ան-  
 մասն և անբաժ :  
 Դու ինձ ըզկոյսն յըլել անդրէն հրաման  
 կարդաս ճոխաբար,  
 Հասկա ինձ քաջքն Աքայեցիք 'ի ձօն տա-  
 ցեն ձիր սայծառ .

Ձեր զայն ասեմ զուգակըշիւ ձեր փա-  
րեւի իմ սրտին ,

Ապա թէ ոչ՝ զայն տիրաբար գնացեալ  
առնում ես ինքնին .

Կամ ձեր ըզքոյդ , կամ զԱյասայն , կամ  
թէ ըզձիր զՈգիւսեայն ,

Եւ զուր ինձ այր սրբամըտեսցի , զորոյ յու-  
ղեմն ըզնորան :

Այլ զայդոցիկ մեք քաջուշիմ խորհուրդ  
կալեալ միւս անգամ ,

Օ՛ն առեալ արդ ըզսեաւն ըզնաւ ՚ի ծովն  
հանցուք դիւցազնեան :

Ընդ քաջափորձ թիալարաց զհարիւր-  
եզնեանն յաշտ դիցուք ,

Եւ ըզգեղայտն ըզխրիւսանոյշ անդ զօ-  
րիորդն ամբարձցուք .

Մի ոմն իշխան խորհրդական տարցի  
չըւոյն ըզհանդէս ,

Կամ Իգոմէն կամ քաջն Այաս և կամ  
դիւցազն Ոգիւսէս .

Կամ թէ ինքնին , դու Պեղոսեան , բնաւից  
ասեղ գերազանց ,

Ձի զՔաջաղեզն հաշտ արասցես ՚ի զոհ  
քոյին նըւիրաց ” :

Ընդ խեթ ահամբ խաղաց ՚ի նա , ձայն ետ  
քաջոտն Աքիլէս .

“ Ո՛վ որ զգեցեալ ես լըբութիւն օգտա-  
ծարաւ դու աղուէս ,

Քեզ այլ յոյն մարդ ո՞ր անասացէ գիմա-  
գրաւել յարշաւան ,

Կամ ընդ արանց նահատակաց 'ի մարտ  
մըխիլ գոռութեան :

Չեմ ես եկեալ Տրոյեանց քաջաց շըշուկ  
յուզել ըզմարտին ,

Նոքա անյանցք անպարտակիրք զիս ոչ եր-  
բէք զըրկեցին .

Ոչ վարեցին , ոչ ըզձիոցն իմ զերամակ ,  
ոչ զանդեայս ,

Ոչ մարդաշատ բերրին Փիթեայ աղարտե-  
ցին զարտորայս .

Զի սարք բազումք հովանաւորք են 'ի  
միջի խուժ և խոչ ,

Եւ անջըրպետ մեզ և նոցա կայ ծովն  
'ի մէջ ալէգոչ :

Այլ քեզ 'ի շնորհս , ամենալիրբդ , ընդ  
Տրոյացւոց գալ 'ի վէգ ,

Ի վրէժ սլատուոյն Մենեղաւեայ , այր շա-  
նացուկ , եկաք մեք .

Դու մեր քրրտանց երես չառնես լեալ  
աննըւէր 'ի սրտի ,

Նա և սպառնաս յառնել քեզէն , զիմ  
ձիրն առնուլ յաւարի :

Ոյր վասն եկի ընդ ապաւառ ընդ ապա-  
ժոյժ ես անհուն .

Եւ զայն որդիքն Աքայեցւոց 'ի մրցանակ  
ինձ ետուն :

Արդեօք քոյոյդ չէ զուգական երբ ձիր  
հանեն ինձ 'ի զատ ,

Յորժամ հելենք ըզՏրոյացւոց զոստանն  
հարցեն մարդաշատ :

Ի մարտ ահեղ բազում մասամբք պաշտէ  
բազուկն իմ և աջ ,

Բայց երբ զաւարն 'ի բաշխ առնուն , քեզ  
ձիր հանեն բարգաւաճ .

Իսկ ես առեալ ինձ փոխարէն խուն և  
սիրուն մրցանակ ,

Այնպէս 'ի նաւս ընդ քիրտն հարեալ ,  
դարձ առնեմ խոնջ և վաստակ :

Այլարդ առեալ ըզծայրաթեք հանցուք  
ըզնաւս 'ի կարգի ,

Շատ լաւ է ինձ անդրէն ողջամբ 'ի տուն  
դառնալ հայրենի :

Այլ քեզ ասեմ , դու աստ անշուք զը-  
զեալ իբրև վատ արանց ,

Ոչ բաւեսցես ոչ , մի կարծեր , քեզ հաս  
կուտել բազմագանձ " :

“ Եւ դու փախիր , կրկնեաց իսկոյն  
Ագամեմոն մեծ արքայն ,

Մի այլ կացես , փախիր Աքիլ , թէ  
իղձք ոգւոյդ վառեցան :

Քեզ ոչ մաղթեմ ողորբաւոր ես յիմ պատ-  
ճառս կալ աստէն ,

Են են առ իս 'ի քաջազանց և այլք 'ի  
յայս ակրմբէն :

Գիտեն նոքա ինձ արքայիս շուք հարկա-  
նել զարժանին ,

Եւ 'ի նոսա հանճարիմաստն է Արա-  
մազդն առաջին :

Սակայն յարքայս 'ի դիւցազունս ինձ  
դըժպըհի ես դու յոյժ ,

Ձի քեզ գողմունք ցանդ քաղցրացան  
հեռ և արեանց ասպաժոյժ :

Իսկ արդ թէ դու հաստահարուստ ես  
կորովի սոսկապէս ,

Ձայդ քեզ անշուշտ ոչ ինքն աստուած  
ձիր պարգևեաց , Աքիլէս :

Դարձիր 'ի տուն և տարադէմ նաւացդ  
հանդէս դու արա ,

Առ և ըզքո նիզակակիցս էրթ Միւրմի-  
դեանց թագ կապեա :

Ըզքո ցասումն յընչաց քերեմ և քեզ ե-  
րես ոչ առնեմ ,

Նա ճոխաբար և սպառնալեաց քեզ ա-  
ւադիկ բան կապեմ :

Քանզի յինէն ըզխրիւսանոյչն առնու  
Փեքոս Ապողոն ,

Ես իմ նաւաւս , նիզակակցօքս յըղեմ ըզ-  
դա առ 'ի ձօն .

Իսկ ըզքնաղն ըզԲրիսանոյչ ինձէն տա-  
րեալ յիմ խորան ,

Բառնամ 'ի քէն ըզմրցանակդ , հասեալ  
քոյին 'ի վերան .

Ձի քաջ տեսցես , վեհ քանի՞օն եմ քան  
ըզքեզ և աւագ ,

Եւ այր ոք այլ պատկառ կացցէ , մի ինձ  
կըքրել ընդդիմակ ,

Մի ինձ բանիւք գալ 'ի կըշիւ և մի 'ի վէգ  
առանձին » .

Ասաց և հուր բոց յԱքիլլէս բորբոքեցաւ  
ահագին :

Օ՞րով խորհրդոյն 'ի թաւամազ 'ի լանջ  
նորա քաջալանջ

Անդ 'ի կրկին 'ի տարակոյս հերձոյր ծը-  
փայր ալէտանջ .

Արդեօք ըզսուր վաղակաւորն ձրգեալ  
թափով յազդերէն ,

Պուղեալ զորեարն , և Ատրիդեայ օրհան  
մահու տալ անդէն ,

Եթէ տակաւ առկայծելով ըզհուր վա-  
տել բազմաբոց ,

Եւ հեզ համբոյր սիւգ մի առեալ շնչել  
'ի սիրան ալէկոծ :

Մինչ դեռ այսպէս ծըփայր դիւցազն  
ընդ տեսուծիւն խոհական ,

Ծըփայր դարձեալ ընդ հրաբորբոք ընդ  
բոց սրտին 'ի ցաման ,

Եւ մինչ մերկէր 'ի պատենից վաղակա-  
ւորն ըզսուսեր ,

Անդէն յարփւոյն և Աթենաս իբրև փայ-  
լակն իջանէր :

Ըզսա յայնժամ առեալ յըղեաց լուսա-  
ծրղի Դիցուհին ,

Որ ըզկըրկին զայն դիւցազունս սիրէր  
գըրգէր 'ի յողին :

Կաց 'ի թիկանց , և ըզդեղձան կալաւ վար-  
սից զԱքիլեայ ,

Նրմա միայն եկն յերևան , յայլոց անտես  
եկաց նա :

Պակեալ գողմամբ և յետս ընդդէմ դար-  
ձաւ անդէն Աքիլեաս .

Բա՛ սա Պալլասն է Աթենաս , ծանեալ  
ըզնա փութապէս :

Աւքն ահրնկէցք փայլակնաձեք տեսան  
նրմա լուսավառ 4 ,

Դիւցազն անդէն ձայր զայս նրմա զարա-  
գաթենն ետ բարբառ :

66 Մը ինչ եկիր , ծընունդ անմահ աս-  
պարազէնն Որմըզայ 5 ,

Ձըննէ՛լ թերևս ըզխեռութիւն զԱգամեմ-  
նեայն Ատրիդեայ :

Այլ քեզ ասեմ , զոր և անշուշտ 'ի բան  
տարայց անարգել ,

Դա գոռութեամբն արագ այժմէն լիցի  
յողոց իւր պարզել " :

67 Ես ըզքո թափն , անդէն խաժակն ետ  
անդրադարձ Աթենաս ,

Ես ըզքո թափն , իջի յերկնից սանձա-  
հարել , թէ անպաս :

Լուսածըղին զիս աւագիկ յըլեաց առ  
քեզ Դիցուհի ,

Որ զերկոսինդ միանգամայն սիրէ գրգէ  
'ի յոգի :

Այլ աղէ դու սանձ դիր թափոյդ , մի  
ձեռն 'ի սուր արկաներ ,

Այլ բանիւք չափ , որպէս դէսք տան , 'ի  
վէզ խաղա անվէհեր .

Քեզ աւագիկ պատգամ ձայնեմ , անշուշտ  
հասցէ 'ի կատար ,

Օր եկեսցէ , երիցս այդչափ ձօնք ձօնես  
ցին քեզ պայծառ .

Չօնք հոյակապք քեզ փոխարէն այդ  
մորմոքիչ զրկանաց .

Միայն դու , քաջ , սանձեա ըզքեզ և  
մեզ այժմիկ հնազանդեաց ” :

“ Պարտ և արժան , ուշիմ դիւցազն ետ  
փոխադարձ ըզձայնին ,

Պարտ և արժան , աստուածուհիդ , է  
ինձ լսել ձեր բանին .

Այս ինձ լաւ է , թէպէտ անչէջ է տա  
կաւին բոց սրտի .

Աստուած յաւէտ լըսէ մարդոյն , որ աս  
տուծոյ հնազանդի ” :

Ասաց , աղիւեաց ըզյաղթ ըզձեռն յերա  
խակալն արծաթին ,

Եւ զահագին վաղակաւորն անդրէն յան  
ձեաց պատենին .

Չայնին լուաւ Աթենասայ, որ եւ յՈ-  
ղիւմսդ համբարձաւ,

Արփաթևեալ 'ի տուն Դիայ ընդ անմա-  
հից խառնեցաւ :

Բայց Աքիլէս հրակէզ ողջոյն, գոռայր  
լուտայր անդ կրկին,

Թափ խոյացաւ յԱգամեմոնն, ջև էր շի-  
ջեալ բոց սրտին .

« Այ գինեճան, աչք քո են շանց, և  
սիրտ ունիս զեղջերուաց,

Դու ոչ ժրտիս 'ի զէն 'ի զարդ մըխիլ 'ի  
մարտ ընդ քաջաց .

Ոչ և լինիս դարանամուտ ընդ աւադաց  
որերոյն,

Զի այդ մրցանք թըւին անխաբ քեզ օրա-  
հաս գոլ մահուն :

Լաւ է արդեօք քեզ ընդ անդոյր գընալ  
բանակն հելլենաց,

Գընալ շոպել ըզձիր մարդոյն, որ քեզ  
ընդդէմ պայքարեաց :

Այ մարդախանձ, ծախիչ արքայ, դու  
ուամպէտից թագ կապես .

Անշուշտ, Ատրիդ, քոց խեռութեանց  
այս արդ վերջին էր հանդէս :

Այլ քեզ ասեմ և ահագին զերդումն  
անսուտ երգնում արդ

Յայս գաւազան, որ այժմ ամուլ ոչ ոստ  
բերէ ոչ սաղարթ ,

Ոչ այլ ըստեղն, յորմէ հետէ ըզբունն ե-  
թող 'ի լերին,

Եւ կեղևեաց և վարսաքանց արար եր-  
կաթն 'ի սայրին.

Զոր արդ որդեքն Աքայեցւոց 'ի յաջն  
առնուն և բառնան,

Իրաւագէտքն արբ դատաւորք օրինա-  
պահքն Որմըզդեան:

Յայս գաւազան քեզ աւադիկ երգումն  
անխաբ ասագին,

Օր եկեսցէ, Յոյնք անձկայրեաց իղձք  
Աքիլեայ լինիցին:

Եղճկ քեզ այր, ոչ բաւեսցես նեղչին  
նոցա գընել սանձ,

Երբ շեղջաշեղջ տապաստ ըզՅոյնս հեկ-  
տորն արկցէ մարդախանձ:

Մըղձկեալ զոգիդ դու կըտտեսցես քեզ  
այդ ասեղ 'ի տրիտուր,

Զի հելլենաց մեծի քաջին շուք երեսաց  
դու չեսուր ":

Օյս Աքիլէս և զոսկեխայտ պալա-  
րակապ գաւազանն,

Առեալ անդէն արկ 'ի գետին, և ինքն  
առնոյր բաղմական:

Գոուայր անդուստ և Ատրիդէս, մինչև  
յարեալ անդ Նեստոր,

Նեստոր Պիւղեանց ատենախօս էր ա-  
ղուաբան և հըզօր.

Քաղցր և անոյշ և քան ըզմեղը 'ի բերա-  
նոյն բըխէր բան ,

Եւ զազգ կրկին ետես ծանեաւ նա յօ-  
գախօս ըզմարդկան ,

Ազգք որ յառաջ 'ի մեծըն Պիւղ ծընան  
սընան ընդ նըմին .

Եւ անդ յայնժամ երրորդ ազգին թագ  
նա կասկեր զարքունին :

Արդ սա յարեաւ , խօսէր նոցա բան սա-  
տարուն 'ի հանճար ,

« Բաբէ , ասէր , գոյժ քանի՛օն յԱքայիա  
և աշխար .

Հըրճուանք քանի՛ և Պրիամուն , քանի՛  
խայտան և որդիք ,

Նա քանի՛օն 'ի Տրոյիա խընդան որչափ էն  
մարդիկ .

Խընդան , լըւեալք զի զայդախեսաց դուք  
կագ յուզէք և սայքար ,

Դուք որ 'ի Յոյնս վեհք խորհըրդով , վեհք  
և մարտից 'ի գուսար :

Օ՛ն անսացէք , զի և քան զիս կըրսեր էք  
դուք երկոքեան ,

Քանզի տեսի ես 'ի քաջաց , քաջք քան  
ըզձեզ աննըման .

Նոցուն եղէ ես կենակից , զիս ոչ յըն-  
չաց քերեցին .

Ոչ տեսի քաջս և ոչ տեսից հանդունա-  
տիպ ես նոցին :

Ո՞ւր Պիրիթոս և Դրիւանտոս հովիւ  
ազգին բարեփառ ,

Ո՞ւր Կենէոս , Եքսադիոս և Պողիւփէմ  
դիւցախառն ,

Ո՞ւր Թեսէոս Եգէացին զոյգ անմահից  
քաջազանց .

Սոքա ե՛ն խօչք 'ի յերկրածինս կորովու  
թեամբ գերազանց :

Քաջք կորովիք , և ընդ Պարկաց ընդ կո  
րովեաց մարտ եղին ,

Պարիկք էին լեռնախըշտիք , և սոսկալի  
գէշ արկին :

Կենաց կըցորդ էի նոցա , սահման թո  
ղեալ ըզՊիւլեայ ,

Քանդի հրաւէր ինձ կարդային , տարա  
գիմեալ 'ի յԱպեայ :

Մարտ մըղէի և ես ինքնին , որչափ բա  
զուկն իմ բաւէր .

Բայց 'ի յարդեացս այր երկրածին 'ի վէդ  
նոցա ոչ ժրտէր :

Արդ ինձ նոքա 'ի լուր կային , խորհուրդ  
առեալք յիմ լեզուէ ,

Աղէ և դուք անսացէք քաջք , զի հնա  
զանդեւ բարի է :

Մի դու ըզկինդ առ 'ի նմանէն , թէպէտ  
աւագ , մի հաներ ,

Այլ թո՛ղ 'ի դա , զոր Յոյնք յառաջ ե  
տուն նըմա 'ի նըւէր :

Եւ դու ինքնին, ո՛ր Աքիլէս, կագ մի յու-  
զեր ընդ արքայն,

Այն որ 'ի յաջն ասա բարձեալ զարգոյն  
ունի գաւազան:

Ձի այր արքայ զոք զուգակիր պատուոյն  
իւրում բարեբաստ

Բա՛ չառնու յանձն, ում շուք զարքեանն  
ես պարգևեաց Արամազդ:

Թէ դու քաջ ես, ծընունդ գոլով 'ի  
դիցանոյ՛ ի մօրէ,

Այլ դա ճոխ է, զի բազմամբոխ ժողովըր-  
դոց թագ կապէ:

Արդ հեզացեալ դու, Ատրիդէս, ըզքո  
ցասումնդ անուշեա,

Եւ ես այժմէն սանձել ըզքոցն արգա-  
հատեմ Աքիլէայ.

Աքիլէս դա, որ հեղենաց բազմաջը-  
շուկ 'ի մարտին,

Արձանանայ առ հասարակ իբրև պատ-  
նէշ ասագին»:

«Քաջ են քո բանք, կրկնեաց անդ-  
րէն Ագամեմոն մեծ արքայն,

Քաջ ես 'ի բանսդ, ո՛վ ծերունիդ, ար-  
դար խօսիս զամենայն.

Այլ այրըդ այդ վերոյ բնաւից ըզգահ  
ունել գերաբուն,

Հնարի ժրտի բնաւից լինել տէր և իշ-  
խան վեհագոյն.

Բնակից արքայ, բնակից խնդրէ դա հրա-  
մայեւ խիտ առ խիտ,

Այլ ոչ արդեօք բաւեսցէ նա լինել 'ի  
նոյն գամագիտ :

Եւ թէ ըզդա աստուածքն յաւերժք  
մարտիկ եղին քաջազէն,

Մի թէ և թոյլ ետուն դրմա ժայթքել  
լուտանս 'ի լեզուէն :

Վարձեաց ըզբանն, և ձայն անդէն ետ  
Աքիլէս քաջ արանց .

« Ես սինըբոր և այր ումպէտ եղէց 'ի  
կարգըս վատաց,

Թէ յամենայն, զոր դու ասես, քեզ տե-  
ղի տաց հիքաբար .

Դու օն պատուէր տուր որերոյդ, և ինձ  
հրաման մի կարդար :

Չեմ ես զարդիս 'ի հանդիսիքոց հնազան-  
դից չեմ անցեալ .

Ես այլ ինչ քեզ ասեմ այժմէն, և դու  
'ի միտս անջինջ կալ .

Բազուկ 'ի մարտ ոչ շարժեցից, ոչ ընդ  
այլում, ոչ ընդ քեզ

Վասըն կընոջ, զոր ինձ ետուք և արդ  
հանէք ուժգնապէս :

Այլ իմ 'ի սեաւ յարագ 'ի նաւն որչափ  
ինչ են կարասի,

Ոչ բաւեսցես, երբ զըլանամ, բառնալ  
անտի և խուն մի :

Արդ աղէ դու փորձ մի փորձեա , տես-  
ցէ և այժմ այդ խուժան ,  
Գնասցէ արիւն քո ապաժոյժ վազեալ  
յիմում գեղարդան » :

Այսպէս նոքա այր ընդ ընկեր 'ի վէգ  
խաղան և կագեն ,

Մինչև յարեան և առ նաւուք արձակե-  
ցան յատենէն :

Յարեաւ խաղայր 'ի կոյս նաւացն և խո-  
րանացն Աքիլէս ,

Յարեան ըզհետ նիզակակիցքն և քաջ  
արին Պատրոկլէս :

Բայց Ատրիդէս զարագ ըզնաւ 'ի ծով  
հանեալ ալէբեր ,

Եդ ընդ քրսան թիաւարաց զհարիւրեզ-  
նեան դից նըւեր :

Աժ ըզգեղայտն ըզխրիւսանոյշ անցոյց  
չբով 'ի հանդէս ,

Եւ ամբարձաւ արշաւանին իշխան ուշիմն  
Ոգիւսէս :

Նոքա ելեալք և նաւարշաւք գնային ընդ  
լոյծ ընդ ուղին ,

Բայց մաքրութեան Ագամեմոնն հրաման  
կարդայր բանակին :

Սրբեալք այնպէս , ժահ և ըզնեխ 'ի ծովս  
առնուն և աման ,

Յազեալք և ողջ հարիւրեզնեան Ապողո-  
նին 'ի ձօն տան :

Յըլուց , զայժից յազեն ըզգոհն ան-  
բոյս ծովուն առ եզեր ,

Եւ խանձահոտն յերկին գընայր բար-  
դեալ 'ի ծուխ 'ի ճենճեր :

Այս քաւութիւնք 'ի բանակի անդ պաշ-  
տեցան առ նոսա .

Բայց Աորիդէս ոչ դըլացաւ 'ի խէթն  
ընդդէմ Աքիլէայ :

Եւրիւբադեայ և Տալթիւբեայ ձայն ճո-  
խաբար արձակեաց ,

Էին սոքա քարոզք նորա և պաշտօնեայք  
քաջընթաց .

«Արիք գնացէք 'ի Պեղոսեան Աքիլէսին  
'ի խորան ,

Առէք ածէք ըզԲրիսանոյշ ըզգեղաւորն  
աննրման :

Թէ նա պընդի և զըլանայ , ես աւադիկ  
ես ինքնին

Որեան սաստիկ կուտեմ և գամ , և կարե-  
վէր ցաւք լիցին » :

Ասաց յըլեաց , բան ապառուամ 'ի նոյն  
կապեաց սաստկութեամբ ,

Գնային նոքա դըժկամակեալք անբոյս ծո-  
վուն առ ափամբ :

Միւրմիդոնեանց գան 'ի վըրանս , և ուր  
նաւացն էր կայեան ,

Գըտին ըզնա առ սեաւ նաւուն 'ի բազ-  
մոցին յիւր խորան :

Տես ըզնոսա, ոչ ցնծացաւ 'ի միտրս իւր  
Աքիլէս,

Շրտեան նոքա, և արքային շուք հարկա  
նեն մեծապէս.

Արձանացան, ոչ բան յօդեն, ոչ 'ի հար  
ցումն ինչ ժրտին,

Ծանեաւ դիւցազն և ձայն կարդաց, էր  
խելամուտ 'ի սրտին.

«Ողջ էք. քարոզք, հրեշտակք Դիայ, նոյն  
և բանբեր դայք առ մեզ,

Մատիք առ իս, չիք ձեր յանցանք, յան  
ցեաւ միայն Ատրիդէս:

Նա ինքն առ իս յըղեաց ըզձեզ վասըն կը  
նոջ Բրիսիդեայ,

Ո՛վ Պատրոկղէ, արի՛ դիւցազն, ըզկինն  
հանեալ տուր դոցա:

Առեալ տարցին, բայց անպատիր լիջիք  
դուք ինձ 'ի վըկայք,

Վըկայք յանմահ գիցն երախան, ուր  
երջանկացն են կայեանք.

Վըկայք կայցէք և առ մարդիկ ազգ մա  
հացու երկրածին,

Վըկայք դարձեալ և առաջի այդ աղա  
ջուր արքային.

Թէ ինձ երբէք իղձք լինիցին փրկել 'ի  
դառն օրհասէն,

Իղձք լինիցին . . . անշուշտ դորա խոր  
հուրդքն 'ի մահ դանդաչէն:

Քաւ ոչ զառաջն և ոչ ըզվերջ բաւէ  
գիտել զա անգամ,

Եւ ոչ, զիւրդ Յոյնք առ նաւուք մարտ  
մըղեսցեն ողջանգամ» :

Բայց սիրայնոյ նիզակակցին լուաւ ձայն  
նին Պատրովղէս,

Եւ աժ արտաքս 'ի խորանէն ըզԲրիսի  
գէն գեղերես .

Յանձնեաց 'ի ձեռս, յարեան նոքա 'ի  
նաւս Յունաց դարձ առնել,

Դարձ դըժկամակ առնէր և կինն և տաղտ  
կանայր 'ի քայլէ :

ԼՅԼ Աքիլլէս յարտօսը հարեալ զատեալ  
նստաւ միայնակ,

Եւ 'ի սպիտակ յափրն ծովուն յալուցն  
յառէր կապուտակ :

Այնպէս ուրոյն 'ի համհարզից, մօր նա  
զելուոյն աղերսէր,

Կայր պաղատէր և ըզմատունան 'ի նոյն  
առեալ տատանէր .

« Բաբէ, մայր իմ, զի ծընար զիս վաղա  
մեռիկ յաշխարհի,

Գէթ Ողիւմպեանըն Արամազդ շուք ձօ  
նեսցէ արժանի :

Բայց ինձ այն մեծն Ամպրոպային և ոչ  
չըքոյն՝ ետ նըշխար,

Ահա գոռոզն Ագամեմնոն զիս անար  
դեաց ճոխաբար :

Կալեալ ահա զիմ մրցանակն, անձին ա-  
րար իւր կապուտ ։

Զայս Աքիլէս, և արտասուէր, շարժէր  
ըզմայրն իւր 'ի գուժ ։

Ի ըսաւ ըզձայնն յանդընդոց, ոչ ան-  
տեսեաց մայրն արգոյ,

Որ 'ի ծովուն յալուցս 'ի խոր նստէր առ  
հօր ծերունւոյ ։

Ճեպ յալէտանջ խաղաց ծովէն, իբրև ըզ-  
մէք ել 'ի վեր,

Արտասուագոչ որդւոյն 'ի գուժ մայրն  
նստաւ առ ընթեր .

Առեալ ձեռամբն և փայփայէր, ձայն յա-  
նուանէն ետ կարգաց,

« Զի լաս, որդեակ, որ սուգ, որ ցաւ  
ըզսիրտն քո պարանեաց ։

Խօսեաց, պատմեա դու ինձ մեկին, և մի  
ծածկեր 'ի սրտի,

Զի իրազգած մէք երկոքեան լիցուք և  
մայր և որդի ։

Խոր 'ի յոգւոց հանեալ յայնժամ, ասէր  
արագն Աքիլէս,

« Գիտես իսկ. քաջ, զի է կրրկնեւ զիրացն  
ողջոյն ըզհանդէս ։

Գնացաք 'ի մարտ 'ի սուրբ ոստանն Ե-  
տիոմլին 'ի Թեբէ,

Քանդեալ ըզնա, զառ և զապուռն ա-  
ծաք մէք աստ յաւարէ ։

Բաշխ հաւասար Աքայեցիք զաւարն հա-  
 նին զոստանին ,  
 Եւ ըզջքնաղն ըզխրիւսանոյշ ձիր Ատրի-  
 դեայ ձօնեցին :  
 Բայց հաստաղէղն Ապողոնի քուրմըն  
 խրիւսէս իրազգած ,  
 Վազեայ և եկն յարագ 'ի նաւս պրղընձա-  
 վառ հելէնաց :  
 Փրկանք դըստերն ածեալ ամբաւ 'ի բռին  
 կալաւ վարսակալ  
 ԶԱպողոնին , որ յոսկեղէնն էր գաւազան  
 բոլորեալ :  
 Նոքօք հանդերձ Աքայեցւոց յողոք ան-  
 կաւ ծերունին ,  
 Եւ առաջին Ատրէոսեանց նահապետացն  
 այն կրկին :  
 Աքայեցիք միահամուռ հաճք և հա-  
 ւանք 'ի բանին ,  
 Առնուլ ըզգինն ըզգեղեցիկ և հարկանել  
 շուք.բըրմին :  
 Այլ Ատրիդէսն Ագամեմնոն ջեռեալ յո-  
 գւոյն իւր 'ի խանձ ,  
 Ըզծերն ընդ վայր գոռոզն եհար , վիշա-  
 պաձայն որոտաց :  
 Դարձաւ գընաց հէգ ծերունին և զայ-  
 րացեալ էր համբուն ,  
 Այլ Ապողոն լըւաւ ձայնին , զի էր նո-  
 րա սիրասուն :

Լարեաց, 'ի Յոյնս օրհասաբեր փրքնաւ  
լինէր դամագիտ,

Եւ ժողովուրդ անդ դիտապաստ անկա  
նէին խիտ առ խիտ :

Նետքն աստուծոյ շըռինդն հարեալ  
գնային ընդ զօրն ընդ անհուն,

Մինչև պատգամ զԱպողոնին մեզ վերբե  
րեաց իղձ ներհուն :

Ես նախ յայնժամ յորդոր ետու համբոյր  
գործել մեզ զաստուած,

Այլ զԱտրիդէսն ըզվըզանեալ մաղձ դառ  
նութեան պաշարեաց .

Ի վեր վազեալ ապարթանէր, և ինձ բոհ  
մունս որոտայր,

Զոր և ողջիկ վայր մի յետոյ 'ի գլուխ ե  
հան ճոխաբար :

Քանզի ըզմին Յոյնք թըխակնեայք յա  
րագ 'ի նաւ վերբերեն,

Առեալ տանին անդ 'ի Խրիւսէ, և Արքայ  
ին ձօն ածեն :

Ըզմիւսն առեալ այն ինչ քարողքն յիմ  
խորանէն կապտեցին,

Ըզկոյսն ասեմ ըզԲրիսագուխտ, զոր ինձ  
հէլէնք բաշխ հանին :

Արդ դու զարդիս, զի կարող ես, օգնեա  
որդւոյդ չարաբաստ,

Արփայագնաց լեր յՈղիւմպոս, և ամո  
քեա զԱրամազդ .

Եթէ երբէք յիր և 'ի բան ըստաւ հարեր  
դու նրմա,

Որպէս ընդ հօրն ընդ մարդակօք բազում  
անգամ ես լուայ.

Լուայ զխայտալդ, եթէ միայն դու յան  
մահից 'ի դասէն

Չամպրօպայինն ըզՉըրուանեան զեր  
ծեր 'ի դառն արկածէն.

Երբ Ողիւմպեանքն Ճեպէին պրկել ըզ  
նա 'ի շղթայս,

Հերա դշխոյն, և Պոսիդոն, 'ի նոյն Պալ  
լան Աթենաս:

Հասեր դու անդ և 'ի սարեաց լուծեր  
ըզնա, դիցուհի,

Ի մեծն Ողիւմպ ձայնեալ ըզխօջն հարիւր  
ձեռնեան վիթխարի.

Դիք Բրիարոն կոչէն ըզնա, իսկ Էդէոն  
ազգ մարդկան 6,

Չի քան ըզհայրն էր նա հուժկու սոսկա  
վիթխար աննրման:

Եկն և նստաւ առ Որմզդայ խայտայր  
փառօք բարձակից,

Դասք անմահիցն ասիւ սրակեան, այլ ոչ  
պնդէն 'ի սարխս:

Չայս դու նմա յուշ անձ և նիստ մօտ  
ըզծնգովքն փարեաց,

Տեսցես զհարդ նիւթեսցէ նա տալ Տրոյա  
ցւոց ուժ քաջաց.

Վանել ըզՅոյնս մինչև 'ի ծով, տապաստ  
'ի մահ վերաւոր,

Զի խնդացեալք վայելեացեն նոքա յիւ-  
րեանց թագաւոր :

Ուշիմ և ճոխն Ատրիգ լիցի, քանի՛ յան-  
ցեաւ 'ի յողին,

Երբ վիսացաւ և շուք չեհար Աքայեցոց  
մեծ քաջին ր :

Չայն ետ թետիս, և արտասուք յաչացն  
հոսէր առուաբար,

«Վայ ինձ որդեակ, Էր սընուցի ծընեալ  
ըզքեզ հիքաբար .

Ո՛վ, թէ 'ի նաւս էր քեզ նստել արդ ան-  
արտօսր և անցաւ,

Օրհասդ ահա չէ բացաձիգ, քեզ մօտա-  
լուտ մերձեցաւ :

Ահա դու ինձ վաղամեռիկ, այլ և բնաւից  
դոս թշուառ,

Աւա՛ղ, յորժամ վատաբախտիկ ծընայ ըզ-  
քեզ յիմ տաճար .

Համայն այնպէս ես քեզ հրեշտակ առ-  
չան թընկէցըն Դիոս

Համողակեր վերաթևեմ ձիւնախաղաղն  
յՈղիւմսոս :

Բայց դու այժմիկ յարագ 'ի նաւսդ ան-  
գործ բնաւին նիտո բազմեաց,

Յասիր Յուժաց, և 'ի մարտին լեր անձնա-  
պահ 'ի գոռմանց :

Ձի յԵթովպեանցն յազգ անարատ յՈվ  
կիանոսն Արամազգ 7

Երեկ չոքաւ 'ի խրախուծիւն, առ զան  
մահիցն և երաստ:

Երկոտասան լցեալ աւուրց, երբ յՈղիմ  
պոս առնէ դարձ,

Պղնձահիմն 'ի տան Ղիայ 'ի փորձ մտից  
և 'ի հարց:

Ես ըզնորա փարեալ ծընգովքն, յու  
սամ ածեւ 'ի հաւան 77.

Ձայս Աքիլլեայ ասաց թետիս, և մեկնե  
ցաւ նոյնհետայն:

Եթող ըզնա 'ի հուր ցասմանն, յոր նա  
տապէր 'ի սրտին,

Վասն կուսին գեղազօտոյն, զոր բռնա  
բար կապտեցին:

Բայց Ողիւսէս հաս 'ի Խրիւսէ, ածեալ  
հարիւր ձօն եզանց,

Եմուտ 'ի ծոցն 'ի բազմախոր, ուր և դա  
դարք էր նաւաց:

Ամփոփեցին անդ զառագաստն եգին  
'ի սեաւն 'ի նաւին,

Ձերծեալք ըզկայմն ընդ կառանաց 'ի  
կայմարանն հանգուցին:

Առնուն ըզնաւն, 'ի նաւակայս յափըն  
վարեն թիակօք,

Արկեալ խարխիսս, և ըզնաւուն ըզնեւ  
պնդեն պարանօք:

Հապա 'ի գուրս ելեալ նոքա ըզվայրն ու-  
նին ծովեզեր,

Չօն քաջաղեղն Ապողոնի զհարիւրե-  
զեան տան նըւէր :

Եւ 'ի նաւէն ծովայածուկ և խրիւսանոյշ  
գեղանին ,

Ըզնա ուշիմն առ Ոգիւսէս , ած և կացոյց  
առ բազնին :

Աւանդ 'ի ձեռս հօր սիրայնոյն ետ և կար-  
դաց ձայն առ նա ,

« Զիս , ո՛վ խրիւսէ , հրեշտակ յղեաց Ա  
գամեմնոն մեծ արքայ

Տաւ քեզ ըզկոյսդ , և Փեբոսին հարիւր-  
եզեան ձօն յազել ,

Չօն քաւջարար Դանայեցւոց , և հաշտ  
զԱրքայն մեզ ունել ,

Զարքայն , որ ցաւ բազմակահան Յունաց  
գուժեաց բանակին » .

Ասաց , ետ հօր սիրուն ըզկոյսն , առ և  
խայտայր ծերունին :

Յայնժամ նոքա զհարիւրեզեան զար-  
մանազան յօրինեն ,

Եւ գեղեցիկ դընեն կարգաւ հանդէպ  
բազնին գեղաշէն :

Լուացին ըզձեռս ջինջ և մաքուր , առին  
աղեալ և ձաւար ,

Անդուստ խրիւսէ բազկատարած մեծա-  
սպաղատ ձայն կարդայր .

- « Արծաթազէղն ինձ լուր արքայ, խրիւ-  
 սայ սլաշտսական մեծազօր,  
 Արգոյն Կիլայ և Տենեդեայ դու ես հը-  
 ղօր թագաւոր :  
 Դու ինձ յառաջ կամակատար լուար ծե-  
 րոյս աղօթկեր,  
 Ինձ շուք եղիր, յոյն բանակին զեան մե-  
 ծապէս հասուցեր :  
 Դու և զարգիս զուխան իմ ընկալ, լուր  
 տէր և լից զիմ անձուկ,  
 Յաճո՛ւ այժմէն յԱքայեցւոց զահեղ մա-  
 հուն ըզըզուկ » :
- Նա զայս մաղթեաց, և Ապողոն ձայնին  
 լինէր ունկնդիր,  
 Մինչ աղօթեալք արկին նոքա զաղեալ ձա-  
 ւար ցան և ցիր :
- Եւ իս գօտէսպինդք զուլս սպանդից յեա-  
 կոյս ողնեալ փողոտեն,  
 Մորթեալք ողջոյն, զազգրն և զիստ յօ-  
 շեալք ՚ի նոյն կոտորեն :
- Առեալ զնոսա և պարուրեն կրկնապատ  
 կեալ ՚ի ճարսոյն,  
 Եւ ՚ի վերայ զանդամաթիւս դընեն ըզ-  
 հուան յօշուածոյն :
- Զայն շերտակոյտ փայտից վերայ խան-  
 ձեր այրէր ծերունին,  
 Եւ ըզնոքօք ցօլեալ ցանէր նա ըզհրաշէկ  
 ըզգինին :

Անդ հնգարձէնս 'ի ձեռս առեալ շուրջ  
կան դասակք պատանեաց,

Մինչև քաջիկ զխտքն այրեցան, ճաշակս  
առին զընդերաց:

Մանրախորտիկ յօշեալ և զայն, և հար-  
կանեն 'ի շամփուր,

Քաջ խորովեալ հասուցանեն, բառնան  
զամէն կերակուր:

Յամբող գործոյն կարգեալ սեղան, առին  
'ի ճաշ բազմական,

Եւ համաբաշխ 'ի կերակրոյն ողջ ախմբին  
իղձք լըցան:

Երբ ըզճաշոյն և զըմպելլոյն հարին նոքա  
ըզփափաք,

Մանկունք գինւոյն ըզխառնելիս բոլորե-  
ցին 'ի սրակ:

Մատուռակեն բազմականին, դաշխու-  
րանօք տան նըւէր,

Ըզտիւն ողջոյն անդ հաշտ զաստուած  
առնեն 'ի տաղ և 'ի շէր:

Պէյան 7 անոյշ Քաջաղեղան երգեն Յու-  
նաց պատանիք,

Նըւագ Քաջին առնուն նոքա, նորա գըր  
գին լսելք:

Արեգն եմուտ, և գիշերոյն մութըն պա-  
տեաց և խաւար,

Ի քուն մըտին ուր սրարաւանդքն ետուն  
նաւուն ըզգագար:

Գայր վարդամատրն առաւօտ , գայր  
այգածինն երևակ ,

Եւ հանդերձեալք դառնաննորքայ Աքայ  
եցւոցն 'ի բանակ :

Սիւգ Քաջաղեղն յղեաց նոցա ուղւոյն  
այնմիկ բարեբաստ ,

Կանգնեն ըզկայմն և ձիւնափայլ պարզեն  
նորքա զառագաստ :

Հողմրն շնչեաց , լից զառագաստն և գոգ  
գործեաց ուռուցիկ ,

'նաւըն սրանայր , քաջ քաջ ընդ գոգն ա  
լիքն հնչեն ծիրանիք :

Սրացեալ գընայր հերձոյր զալիսն յառա  
ջադէմ 'ի յուղին ,

Մինչև եկին հասիննորքա 'ի զօրն Յունաց  
բանակին :

Անդ 'ի ցամաք ըզլաստափայտ ձգեն ըզ  
սեաւն 'ի դադար ,

Գադար նաւուն բաղմակուտակ էր աւա  
զոյն մեծ կարկառ :

Առեալ ածեն և ընդ նաւաւ մոյթըս եր  
կայնս և գերան ,

Ապա 'ի նաւս և 'ի խորանս այր այր գնա  
ցեալ սրփուեցան :

Լալ յերագունս նստեալ 'ի նաւս մըղձ  
կէր ջեռնոյր բոցավառ :

Դիւցազն արագ քաջն Աքիլէս Պեղեայ  
որդին բարեփառ :

Ոչ երևէր նա 'ի յատեան փառաց մար-  
դոյ ճեմարան,

Ոչ ևս 'ի մարտ հանդիսանայր երեսաւորն  
աննըման:

Անդ կայր մընայր հեղձամղձուկ, զոգին  
կրտսէր սիրասուն,

Խօշիւն տենչայր, ահէղ մարտից անձուկ  
բերէր 'ի ժամուն:

Լուռըք ընուն երկոտասան, գալով գայր  
այգն ետ ընդ ետ,

Եւ դարձ յՈղիւմս առնեն անմահք,  
Զեւս էր նոցուն կարապետ:

Ոչ մոռացօնք եղեն Թեոտայ աղերս որ-  
դւոյն զոր խնդրեաց,

Սլացաւ 'ի վեր իբրև փայլակն, եւ 'ի ծո-  
վուն կոհակաց:

Արիաթևեալ ընդ առաւօտն եւ յՈղիւմ  
սոս, 'ի յերկին,

Գիտ զԱրամազդն ամենատես, 'ի զատ  
բազմեալ առանձին.

Բազմագագաթն Ողիւմսոսին նըստէր  
վերջին յարտեան,

Մօտ բազմեցաւ, և ըզծնգովք փարէր  
ձեռամբն ահեկան:

Առեալ և զաջն իւր հըպեցոյց 'ի շուք  
նորայ ծընօտին,

Յողոք անկաւ և պաղատէր Արամազդայ  
արբային.

« Հայր Արամազդ, եթէ երբէք ես յանմահիցն 'ի գումար

Յիր կամ 'ի բանքեզ օգտեցի, զուխտն իմ հասո՞ 'ի կատար .

Շուք հայր որդւոյս վաղամեռիկ, զի շոյտ փոխի նա յաստեաց,

Ահ, Ատրիգէս գոռոզութեամբ զիմն Աբիլէս անսպասուեաց :

Նա զմրցանակն որդւոյս կաստեալ, անձին սրահեաց սեպհական,

Այլ գու ուշիմդ, հայր նրմա շուք, վէհդ Արամազդ ողիւմպեան .

Դու Տրոյացոց, ծն առեալ, տէր, ոյժ և կորով տուր ողջոյն,

Մինչև որդւոյս շուք գիցեն Յոյնք, և շուքն իցէ աճեցուն » :

Բայց, իսկ անդ սատասխանի չետ Արամազդ շանթառաք .

Այնպէս լռիկ Ամարոսայինն եկաց հարուստ ժամանակ :

Բայց ըզճնգովքն որպէս յառաջ փարեաց Թեոխս մի անգամ,

Փարեալ կալաւ զայն սնդագոյնս, յողոք անկաւ միւս անգամ .

« Խոստումն անշուշտ տուր ինձ ո՛վ հայր, և ինձ արա ակնարկի .

Կամ զըլացիր, քանզի չեք ինչ կրուուան 'ի քեզ երկիւղի .

Ձի քաջ ծանեայց, իցեմ արդեօք ես սին  
լըքոր դիցուհեաց ։

Ի խոր յայնժամ Ամբրոսայինն յոգւոց  
հանեալ ձայն կրկնեաց .

« Դժընդանկ է . զիս ընդ Հերայ դու ոխե  
րիմ յարդարես ,

Յորժամ նորայն յիս խէթն հարեալ , բան  
լուտասցի ինձ պէսպէս .

Դա ցանկ արդէն 'ի վէգ ընդ իս դայ  
յանմահիցն երախան ,

Կայ ամբաստան , թէ ես մարտին եմ  
Տրոյացւոց օգնական :

Բայց դու արագ մեկնեաց աստի , մի լեցի  
դա իրազգած ,

Ինձ թող ըզհոգդ , ես քոյ խնդրոյն տամ  
գեղեցիկ կատարած :

Իսկ թէ անշուշտ , ես քեզ ահա գըլխովս  
առնեմ ակնարկի ,

Ձի այս յինէն նշան անխաբ է յանմահիցն  
'ի կարգի :

Ձոր միանգամ գըլխովս հաւան ես ակն  
արկեմ յիմ գահէ ,

Ոչ նահանջի , ոչ խարդախէ , ոչ 'ի դերև  
եղանէ ։

Ասաց , յօնիւքըն կասուտակ Ամարո  
սայինն ակնարկեաց ,

Տատանեցան յանմահ գըլխոյն վարսք  
արքային դեղապանծ ,

Եւ զՈղիւմուս մեծամարմին գղղորդէ-  
ցոյց 'ի հիմանց \* :

Անքեալք այսպէս, յարեաւ Թեախա, յՈ-  
ղիւմուսէն լուսավառ

Պարսեաց 'ի ծովն անդրնդախոր, Դիոս  
չոքաւ յիւր տաճար:

Ընդ առաջ հօրն յաթոռակաց յարեան  
անդէն դիքն 'ի բուն,

Մընաց ոչ ոք գալոյ նորա, այլ ընդ ա-  
ռաջ գան ողջոյն:

Անց բազմեցաւ նա 'ի գահոյսն, այլ իրազ  
գած էր հերա,

Ետես յառաջ զի գաղտ Թեախա մուտ 'ի  
խորհուրդ ընդ Դիայ,

Արծաթոտնեայն այն գիցանոյչ դուս-  
տրը ծերոյն ծովային.

Ուստի անդէն երգիծաբան բարբառե-  
ցաւ արքային :

« Իսկ ո՞վ 'ի դից, այ՛ նենգամիտ, մուտ 'ի  
խորհուրդ գաղտաբար,

Որ դու նիւթեւ 'ի զատ յինէն ցանգ 'ի  
սրբտիգ հեշտացար.

Մենքենայեալ խորհուրդս երկնես գաղ-  
տնաճածուկ ըստ քրմաց,

Եւ մերկանալ ինձ չախորժես ինչ մի 'ի  
քոց 'ի գաղտնեաց » :

« Ս'ի դու, հերա, կրկնեաց անդէն հայրն  
աստուածոց և մարդկան,

Մի դու հերա, մի յուսասցիս բան զիմ  
գիտեւ զամենայն :

Արդեօք քեզ այդ դժընդակ է, թէպէտ  
և դու հարսն իցես,

Ո՞չ աւադիկ գիտես զամէն, զոր ինչ լը-  
սեւ անկ է քեզ .

Ձայն քաւ երբէք ոչ մարդ ոչ դիք նախ  
քան ըզքեզ գիտասցեն .

Բայց թէ երբէք 'ի զատ 'ի դից, խոր-  
հեւ ինձ ինչ կամք իցեն,

Ձայն ըզգոյշ լեր մի հետախոյզ մի քըն-  
նեսցես մանրագոյն ։

Կարձեաց անդէն, ձայն ետ աչեզ աշ-  
խոյժուհին գերյարգոյն .

«Այապառուս դու Չըրուանեան, զի՞նչ  
բան խօսիս յատենի,

Ես քեզ վաղուց զի՞նչ հարցփորձիւ, և  
զի՞նչ խուզիւ քննեցի :

Դու հեշտաբար և անարգել 'ի բան տա-  
նիս, զոր կամիս .

Այլ 'ի ժամուս ինձ մեծապէս խէթ և  
երկիւղ է թետիս :

Արդեօք ինչ մի դաւեանց ըզքեզ դուստրը  
ծերոյն ծովական,

Որ եւ ընդ այգն առ ըզճնգացդ և մօտ  
կալաւ բազմական :

Խիթամ անշուշտ, դու ակնարկի լուեալ  
նորայն մաղթանաց,

Շուք յԱբիլլեայ շատ զոք Յունաց արկ-  
ցես տապաստ մերձ նաւաց ʔ:

“ ԲՅ հիքացեալ, ձայն որոտաց Ամպրո-  
պայինն ետ ընդ ետ ,

ԱՅ հիքացեալ, դու ցանգ խիթաս, չեմ  
ես զանխուլ յականէդ :

ԱՅԼ դու ոչինչ ատիկեսցես, նա և յա-  
ւէտ դրժպըհի

Լիցիս ոդւոյս, և հէգ թշուառ կայցես  
դու ցանգ ՚ի վըշտի :

Եւ թէ այդպէս անշուշտ է բանդ, իղճք  
իմ ՚ի գլուխ յանգեսցին ,

Դու նիստ կարկեաց , այնպէս լըռիկ  
հնազանդ իմում պատգամին :

Քեզ , ուշիմ լեր , ոչ օգնեսցեն որք յՈ-  
ղիւմպոս դումարք դից ,

Երբ ես հասեալ զանվանելի ձեռն իմ ՚ի  
քեզ մըխեսցից ʔ :

Լըւաւ ըզսաստն աջեղ դշխոյն , զահի  
հարաւ ՚ի ժամունն ,

Այնպէս թախծեալ նստէր մնջիկ, զոգին  
կըտտէր սիրասունն :

Ղիքն երկնաւորք ՚ի տան Դիայ եղեն  
համակ տըրումազգեաց ,

Մինչ հեփեստէս ճարտարապետն ատե-  
նաբան ձայն կարդաց .

Մօր սիրայնոյն լուսածըղին հերայ ըզ-  
սիրտն անուշէր ,

« Բա՛ դժընդակ իցեն , ասէր , այս բանք  
և կիրք անըմբեր ,

Թէ՛ դուք 'ի սակս կանացածնաց այդպէս  
վսիք 'ի պայքար ,

Եւ յանմահից 'ի մէջ դասուն աղմուկ յու-  
ղէք վայրասար :

Նա բերկրարար մեզ գեղեցիկ կոչունքս  
երբէք ոչ լիցին ,

Երբ անբարիք խանգար առնեն մասին  
բարեաց վիճակին :

Ես մօրդ իմում տամ յորդորակ , թէպէտ  
ինքնին է ուշիմ ,

Հօր մեր Դիայ գող ամոքիչ , և մի՛ յառ-  
նել ոխերիմ :

Ձի մի կրկին նա պայքարեալ 'ի վէգ սաս-  
տիկ խաղասցէ ,

Եւ գեղեցիկ ըզմեր խնճոյս 'ի վեր 'ի վայր  
գործեսցէ :

Ձի թէ կամի այս շանթընկէց ահեղա-  
հրաշ Ողիւմպեան ,

Ի մեր գահից դըրդուէ ըզմեզ , զի է  
հըզօր աննրման :

Արդ դու , մայր իմ , գրգեա ըզնա , ամոք  
բանիւք և անդոյր ,

Անդէն կրկին մեզ Ողիւմպեանս հաշտ լի-  
նիցի և համբոյր » .

Բայց , յարեաւ , և զերկունկնեանն էառ  
'ի ձեռս դաշխուրան ,

Մօր սիրայնոյ եդ զայն 'ի ձեռս, և ձայն  
կարգայր աղուական:

« Ժուժեա՛ մայր իմ համբերատար, ծը-  
փեալդ յալիս դու ցաւոց,

Մի՛ զքեզ տեսից զիմ նազելիդ իմովս ա-  
չօք գանակոծ:

Ոչ բաւեցից ցաւով քրքուեալս քեզ զօ-  
րավիդ թեկն ածել:

Դըժոխըմբեր կիրք են ընդդէմ՝ Ողիւմ-  
պեանին մաքառել:

Քանզի խնդրեալ և զայլ նըւագ քեզ  
թիկնածու գոլ ինձէն,

Նա զոտանէս բռնահարեալ արկ 'ի սե-  
մոցս երկնաճեմ:

Օր մի ողջոյն գըլեալ ընդ օդ, ընդ մուսս  
արփւոյն բոցավառ:

Վայրհոսեցայ ես 'ի Լեմնոս, գոգցես ե-  
ղեալ շնչասստառ:

Զիս գահավէժս արք Սինտացիք ժողովե-  
ցին 'ի ժամունն »:

Ասաց, ժըպիտ ծընաւ 'ի գէմս լուսա-  
ծըղի դիցուհւոյն:

Այնպէս ժըմտեալ, ըղգաշխուրանն առ-  
նոյր յորդւոյն 'ի ձեռաց,

Որ շուրջ ելեալ մատուռակէր դիցն ըս-  
կըսեալ 'ի յաջեայց:

Ըսպաս հարեալ խառնարանէն զանոյշն  
հեղոյր ըզնեկտար,

Եւ անդ քրքիջ հատաւ անշէջ գիցն եր-  
ջանկացն 'ի գումար .

Քրքջան տեսեալ ըզհեփեստէս ըսպաս-  
արկու տաճարին ,

Մինչ դեռ նոքա ըզտիւն ողջոյն ցումուտս  
արփւոյն ճաշէին :

Իզճք անմահից լնուն ախորժ 'ի համա-  
բաշխն 'ի խորտկաց ,

Մինչ դեռ անդուստ և Փեբոսին քընարն  
հնչէր գեղապանծ :

Երաժշտեն անդ և Մուսայք փոփոխ յա-  
նոյշ եղանակ ,

Մինչ խոնարհեալ մնւտ համասփիւ լու-  
սոյ աղբիւրն արևակ :

**Ս** անք են անդէն գործ հեփեստեայ  
այն կրկնակաղ ճարտարին ,

Զոր արուեստիւ զարմանապքանչ կառոյց  
նա գից առանձին :

Յարեան նոքա 'ի յերեկօթս անձնիւր յիւ-  
րեանց օթեվան .

Յարեաւ Շանթողըն ողիւմսեան գընայր  
'ի յիւր սըրսկասան .

Ուր միշտ հանգչէր , յորժամ ըզնա նինջ  
քաղցրութեան ըմբըռնէր ,

Անդ ել քուռեւ , և ոսկեգահն հերա նը-  
մին առընթեր :

The first part of the document is a list of names and titles, including  
 the names of the members of the committee and their respective  
 offices. The list is followed by a detailed account of the  
 proceedings of the meeting, including the names of the  
 speakers and the topics discussed. The document concludes  
 with a summary of the resolutions passed and a list of  
 the names of the members who voted in favor of each  
 resolution.

# ԵՂԻՆԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Բ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Արամազդ 'ի լրումն խոստմանն առ  
Թեոփս, երազ առաքէ առ Ագամեմոնն  
սպառուիրեալ նմա զմարտն, իբրու թէ  
ստուգիւ յալթեսցէ: Ագամեմոնն հնարի  
փորձել զյօժարութիւն Յունաց 'ի կռուել  
առանց Աքիլլեայ. միանգամայն և 'ի ծա-  
ծուկ սպառուիրէ զօրավարացն արգելու  
զզօրն, եթէ երբէք կամեսցին յետս կալ  
'ի կռուոյն և դառնալ 'ի հայրենիս: Ատեան:  
Խռովել բանակին յունաց: Խեռութիւն  
Թերսիտեայ: Սանձահարի և դանակոծի  
յ Ողիւսեայ: Նեստորի և Ողիւսեայ ա-  
տենախօսութիւնք: Խաղաղի զօրն և սաս-  
րաստի 'ի սպատերազմ: Յուցակ երկուց  
բանակացն Յունաց և Տրոյացոց:

Հագներգութիւնս ունի զչափ միոյ  
աւուր:



## ԵՂՒԱԿԱՆ

ՀԱԳՆ ԵՐԳՈՒԹԻՒՆ Բ.

ԱՅՍՊԷՍ աստուածքն և քաջ որեարն ող  
ջոյն ննջեն ըզգիշեր ,  
Այլ Դիոսին յարտևանանց քուն քաղ-  
ցրութեան հատեալ էր :  
Շուք Աքիլէայ զխորդ հարցէ , նիւթէր  
խորհէր նա իմաստ ,  
Զխորդ և շատ որեան Յունաց առ նաւս  
արկցէ դիտապատ :  
Ի միտս ապա համարեցաւ խորհուրդ զայն  
լաւ և քաջուշ ,  
Առ Աորիդէսն Ագամեմնոն երազ յըղել  
մահադոյժ :

Չայնեաց զԵրազն և պատգամաւ արա-  
գաթև բան ասաց .

“ Արի՛ Երազ օրհասաբեր , երթ յարագ  
նաւս Հելլենաց .

Գընա և մոտո դու ճոխաբար յԱտրիդե-  
սին՝ ՚ի խորան ,

Ողջ զոր ասեմ պատգամանւոյն լեր ճըշ  
գլրտիւ դու թարգման .

Ասա՛ ՚ի զէն վառել զՅոռնաց գիսաւորացն  
ըզբանակ ,

Զի նա Տրոյեանց կալցի զարդիս լայնա-  
փողոցն ըզքաղաք :

Չեն արդ անմահքն արփիաբնակք հեր-  
ձեալ ՚ի վէգ ՚ի պայքար ,

Քանզի զնոսա ողոքն հերայ յիւր կողմն  
յանկոյց հեշտաբար :

Արդ կոծ աշխար կայ Տրոյացւոց առ  
դուրս հասեալ մահաբեր ” :

Կարդաց պատգամ , լըւաւ Երազն , յա-  
րեաւ յուղի անկանէր :

Սլացաւ թըռեաւ , էջ նա արագ Յոռնաց  
նաւացն ՚ի հանդէս ,

Եկն և եմուտ , ուր օթանայր Ագամեմնոն  
Ատրիդէս .

Եգիտ ըզնա ՚ի յանդորրու ընկողմանեալ  
յիւր խորան ,

Բակ ըզնովաւ հովանանայր քուն մի ա-  
նոյշ աստուածեան :

Կաց 'ի սնարիցն և ըզնեղեան առ Նէս-  
 տորին ըզպատկեր ,  
 Ում և շուք մեծ 'ի ծերունիս Ագամեմոն  
 հարկանէր :  
 Տիպ ճշգրտեալ ըղծերունւոյն , ձայն  
 տայր Երազ տէրունին ,  
 « Ննջէս զաւակ Ատրէոսի գոռ ասպազէն  
 այն քաջին .  
 Չէ սարա ննջել ողջոյն գիշեր խորհր-  
 դական իշխանի ,  
 Ում Ժողովուրդք յանձն են նմա , և որ  
 այնչափ հոգ ունի :  
 Ես քեզ բանբեր , միտ դիր քաջիկ , յԱրա-  
 մազդայ դամ դեսպան ,  
 Որ հոգ և գութ ածէ քեզ մեծ , թէպէտ  
 'ի քէն բացական .  
 Նա քեզ ձայն տայ զգիսաւորացն Յունաց  
 վառել ըզբանակ ,  
 Չի դու Տրոյեանց կալցես զարդիս լայ-  
 նափողոցն ըզբաղաք :  
 Չեն արդ անմահքն արփիաբնակք , հեր-  
 ձեալ 'ի վէգ 'ի սլայքար  
 Քանզի զնոսա ողոքն հերայ յանկոյց ող-  
 ջոյն հեշտաբար :  
 Արդ 'ի Դիայ կոծ Տրոյացւոց առ դուրս  
 հասեալ կայ աղգին ,  
 Եւ այս նորա սլատգամանի մի մոռացօնք  
 քեզ լիցին .

Յուշի կապեա, երբ թողանաս յանուշա-  
րարն 'ի քընոյն ».

Ասաց 'ի նոյն անյայտացաւ, եթող 'ի ծուփ  
խորհըրդոյն :

Խորհուրդ յայնժամ յուզէր Ատրիդ յիր  
որ չունէր ըզլախճան ,

Զի նա զայն օր կարծէր վանել ըզՊրիա-  
մուն մեծ ոստան :

Այ յետսամիտ , որ ոչ բաւեաց լինել բա-  
նին խելամուտ ,

Զինչ Արամազդ մենքենայէր , դընէր նո-  
ցա խոչ և խութ :

Քանզի ունէր ածել նոցա շատ դերար-  
տօսր և թառանչ ,

Տրոյեանց , Յունաց սաստիկ մարտիւ գոռ-  
մամբ 'ի ծուփս ալէտանջ :

Ըթափեցաւ , և դեռ զունկամբ սօսիւնն  
հրծծէր աստուածեան ,

Նստաւ ուղղորդ , ըզգեղաշուք , ըզգիրգն  
արկաւ պատմուճան .

Էր պատմուճանն այն նորագործ . արկաւ  
ըզմեծն և լօղիկ ,

Կապեաց 'ի յոտսըն քաջամուր ըզգեղե-  
ցիկն ըզկօշիկ .

Կախեաց յուսոյն և ըզսուսեր պալարա-  
կապն 'ի յարծաթ ,

Զանեղծ , յաւերժ , առ զգաւազանն ըզ-  
հայրենին իւր աւանդ :

Շքքով այնպէս 'ի խորանէն յայն գաւազան Ատրիդէս

Պղընձավառ Աքայեցւոց գընայր նաւացն 'ի հանդէս :

Պալով անդուստ գայր Այգն աստուած 'ի վէհն Ողիւմպ բարձրանայր ,

Արփեան լուսոյն Արամազդայ և անմահից ազդարար :

Յայնժամ Ատրիդ իւր Քարողեց քաջաձայնից տայ հրաման ,

Ըզգիսաւոր զԱքայեցիս համախմբել 'ի յատեան :

Քարողք ձայնէն , նոքա խմբին արագ արագ ճեպընթաց ,

Բայց նա կանխեալ խմբէր ըզգասն ըզհանճարեղ ծերունեաց :

Խմբեալք 'ի նաւըն Նեստորի պիւղիսացի արքային ,

Բոլորեցան . նա հնարիմաց խորհուրդ նիւթեաց յակըմբին :

« Լուարո՛ւք ո՛վ քաջք , մինչ քունէի յանդորրաւէան 'ի գիշեր ,

Երազ եհաս երկնահրաման յԱրամազդայ ինձ բանբեր .

Նա զինքն 'ի տիպ այս Նեստորի մեր դիւցազին ճշգրտեաց ,

Ճշգրիտ ողջոյն 'ի գընացիցն , 'ի հասակէն , 'ի դիմաց :

Արձանացաւ, և 'ի սնարիցս ետ ձայն Ե-  
րազ տէրունին,

Ննջէ՞ս զաւակ Ատրէոսի գոռ ասպազէն  
այն քաջին :

Ըզցայգն 'ի բուն չէ պարտ ննջել խոր-  
հրդական իշխանի,

Ում ժողովուրդք յանձն են նմա, և որ  
այնչափ հոգ ունի :

Միտ դիր քաջիկ, ես քեզ բանբեր յԱ-  
րամազդայ դամ դեսպան,

Որ քեզ գուժ մեծ և հոգ ածէ, թէպէտ  
'ի քէն բացական .

Հրաման տայ քեզ վառել զՅունաց գի-  
սաւորացն ըզբանակ,

Դու Տրոյացւոց կալցես զարդիս լայնա-  
փողոցն ըզբաղաք :

Չեն արդ անմահքն արփիաբնակք հեր-  
ձեալ 'ի վէգ 'ի պայքար,

Ձի ողոքեաց Հերայն ողջոյն յանկոյց  
յիւր կողմն հեշտաբար :

Արդ Տրոյացւոց յԱրամազդայ գայ օրա-  
հաս փուլթապէս,

Այլ դու զայս իմ հրեշտակուլ թիւն յու-  
շիդ կապեա սնդապէս ʔ :

Այն ինչ ասաց, և թևածեալ սրացաւ  
յինէն նա 'ի բաց,

Ձիս քաղցրութեան քունն իմ եթող,  
հատաւ յիմոց 'ի յաջաց :

Արդ աղէ մեզ զհանրդ վառել ըզՅոյնս 'ի  
զարդ և 'ի զէն ,

Բայց ես այժմէն նախ բանիւք չափ ըստ  
արժանւոյն փորձ փորձեմ :

Չայն տամ 'ի նաւս 'ի բազմանիստ թիկ  
նադարձոյց փախըստեան ,

Դուք կէսք աստի և կէսք անտի կուռ  
սանձեցէք ըզխուժանն ) :

Ասաց արքայն , նիւթեաց խորհուրդ և  
բազմեցաւ յակրմբի ,

Յարեաւ Նեստոր , աւազակոյտ Պիւղեայ  
արքայն ծերունի :

Եկաց 'ի մէջ ատենաբան , և հանճարեղ  
ձայն կարգաց .

« Ո՛ր բարեկամք Արդոսացիք , իշխանք և  
պետք հելլենաց ,

Թէ այր ոք այր յԱ. քայեցւոց մեզ զայս  
երազ վերբերէր ,

Այր այր 'ի մէնջ դաւ կարծէր զայն , նա  
և յընչաց իւր քերէր .

Բայց զայն ետես մարդ գահերէց մեծ և  
աւագ 'ի զօրուէն ,

Առէք խորհուրդ , ի՞նչ վառեսցուք ըզՅոյնս  
'ի զարդ և 'ի զէն ) :

Ասաց , 'ի նոյն և յատենէն ել ծերունին  
կարապետ ,

Յարեան անդէն աւագորեարն , ըզհետ  
ելին հետ ընդ հետ :

Հնազանդք հովուին ելին արքայք 'ի ձեռս  
իւրեանց դաւազան ,

Մինչ դեռ անդուստ և զօր ամբաւ խոռնէր  
կուտէր 'ի յատեան :

Որպէս մեղուաց պարք ամբաւից 'ի վա-  
պարեալ 'ի վիմէն ,

Կուռ և անհատ, ցանգ նորանորք 'ի դուրս  
խաղան և խուժեն .

Անդ խուռներամ 'ի դարնայնոյն ծաղ-  
կանց վերայ սաւառնին ,

Ողկուզօրէն կէսք աստ կէսք անդ թուռ-  
ցեալք բզզան և գնդին ,

Նոյն 'ի նաւաց և 'ի վրանաց սաստիկ  
խուժան և որեար ,

Ի խոր ծովափն անդ կարգ առեալ գնայ-  
ին յատեան տարմաբար :

Հուր բոց յորդէր 'ի մէջ նոցա Համբաւն  
հրեշտակ Որմզդեան ,

Հորդէր ուղի վառէր 'ի չուն, մինչև նոքա  
խրմբեցան :

Հողն 'ի ներքոյ երկնէր հեծէր յառնուլ  
բազմոց խուժանին ,

Յուզէր ծրփայր և հրապարակ , գոչին  
հնչէր ահագին :

Ինքն Քարոզք անդ բարձրագոցք տային  
գոռմանց ճեմ և սանձ ,

Կալ անշըշունջ և ականջէլ ձայն զարբայից  
դիւցազանց :

Հաղիւ սանձեալք առին բազմոց, խօշիւն  
լուեաց խառնաձայն ,

Յարեաւ 'ի մէջ Ագամեմոնն 'ի ձեռս ա-  
ռեալ գաւազան :

Եր գաւազանն այն հրաշակերտ գործ  
Հեփեսոսեայ ճարտարին ,

Եւ Հեփեսոսէս ետ Ջըրուանեան Արա-  
մազգայ արքային .

Արգոսասպան Նըւիրակին զայն Արա-  
մազգ յանձն արար 8 ,

Հերմէս արքայն ետ Պեղոսեայ , էր սա  
ներհուն կառավար .

Տայր զայն Պեղոսս Ատրէոսի Ժողովըր-  
դոց մեծ հովուին ,

Իսկ 'ի մահուն եթող Ատրէս խաշնահա-  
րուստ թիւէստին :

Բայց թիւէստէս յԱգամեմոնն ետ զայն  
տանել գաւազան ,

Ձի շատ կրղղեաց և Արգոսի թագ կապեա-  
ցէ արքունեան :

Յայս գաւազան յեցեալ յայնժամ Ատ-  
րիդ արեկ ձայն կարգայր .

« Ո՛ր բարեկամք Յոյնք դիւցազունք գոռ  
Արեսին քաջորեար ,

Ձիս Արամազգ թակարդապատ յաղէտ  
կարթեաց ահագին ,

Անգութ , որ ինձ նախ խոստացաւ , ետ  
և նշան զակնարկին .

Զամրապարիսպն ինձ զԵղիոն քանդել  
դառնալ անշըշուկ ,

Եւ արդ. նենդ չար մենքենայեալ հրաման  
կարդայ ինձ անշուք .

Դառնալ յԱրդոս անփառուհակ , երբ  
չատք արկան դիտասլաստ ,

Եւ արգէօք զայս խնդրէ ուրեմն անվա-  
նելին Արամազդ .

Այն որ շատից ըզքաղաքաց քանդեաց  
կատարս 'ի հիմանց ,

Եւ քանդեսցէ բազուկ նորա անկուուելին  
և անսանձ :

Մեզ այս մրցանքս լիցին նա և յետնոցն  
'ի լուր նըշաւակ ,

Լուեալք եթէ մարտ զայս միւեաց Աքայե-  
ցոց մեծ բանակ .

Մարտ անկատար կուուեալ 'ի զուր ընդ  
ապաժոյժ մեծ արեանց ,

Շատ քաջորեար ընդ նըւազուհանն , և չիք  
ուրեք կատարած :

Զի թէ արդ Յոյնքս և Տրոյացիք լեալբա-  
նագնացք 'ի զօրուն ,

Եւ երդմնակուռ դաշնաւորեալք առցուք  
զհամար զերկոցուն ,

Ճշգրտեսցուք , թիւ քանի՛օն 'ի Տրովա-  
դա են բընակք ,

Եւ մէք աստէն Աքայեցիք ջոկեալք ող-  
ջոյն 'ի տասնեակ ,

Մատուցեալ մի առ մի տասնեակ առցուք  
տրոյեան յոստանէն ,

Բա՛ շատ տասնեակք մատուցեալի անդ  
կարօտեալ մընասցեն :

Այնչափ ասեմ ըզթիւն Յունաց գերա-  
զանցեալ 'ի համար ,

Բան Տրոյացւոցն բնակաւորաց 'ի քաղա-  
քին ըզգումար :

Այլ շատ որեար նիզակակիցք եկին 'ի  
շատ քաղաքաց ,

Արք տէգընկէցք նիզակաճօճք , նոքա են  
ինձ խուծ և սանձ :

Նահատակեալք զիս խափանեն , ընդդէմ  
կբրին հակառակ ,

Ղեղիօ՞ւնն ոչ տան վանել բազմաժողովն  
ըքքաղաք :

Ամք բոլորեալք մեծին Դիայ արդ թիւ  
յիննեակ ժողովն ,

Արդ լաստափայտքն են մեցամեցք , արդ  
և կառանք կոչկոճին :

Իսկ սիրասուն մեր ամուսինք , մատաղե-  
րամ մանկըաին

Անդ 'ի տաճարըս անձկայրեացք մերոյն  
դարձի ակն ունին :

Գործ , յոր եկաք , կայ անկատար . զուր  
է մեզ այս արշաւան .

Աղէ ո՞վ քաջք , ինչ զոր ասեմ , մեք հաճ  
լիցուք և հաւան :

Հատցուք ըզծով, անկցուք 'ի չույերկիր  
սիրուն հայրենի ,

Չիք մեզ այլ չիք վանել քանդել ըզ  
Տրոյիայն լայնուղի ” :

Լսաց , անդէն մըրիկ յուզեաց 'ի լանջ 'ի  
սիրա խուժանին ,

Որ միանգամ ակահ չէին գաղտնախոր  
հուրդ ակըմբին :

Շարժէր ծըփայր անդ հրապարակն հան  
գոյն 'ի ծով ալէկոծ ,

Որչափ կոհակք յաղթ ամեհիք, որ յԻկա  
րեանն են 'ի ծոց 9 .

Երբ ըզնոսա Եւրոս Նոտոս կուտեն դի  
զան դար 'ի դար ,

Յամբոց վերին Արամաղդայ շնչեալք թա  
փով 'ի խոնարհ :

Եւ որպէս այս Ձեփիւռոսին անկեալ 'ի  
թաւ անգաստան 10

Խուով հարկանէ , 'ի վեր 'ի վայր հասկք  
տատանին և ծըփան ,

Այսպէս յայնժամ այն հրապարակ դը  
ղըրդեցաւ խուժանին ,

Աստի գոչիւն անտի գոռիւն , նաւացն 'ի  
կոյս խուճապին :

Հողն 'ի ներքոյ փոթորկեցաւ, մըրիկ փոշ  
ւոյն ամպանայր ,

Հապա 'ի նաւ, խրախոյս գոչմամբ այր ըն  
կերին իւր բառնայր :

Չայն տան միմեանց առնուլ ըզնաւան 'ի  
 ծով վարել աստուածեան 11 ,  
 Եւ անդ 'ի շտապ առհասարակ փոսք և  
 խըրամք մաքրեցան :  
 Խուճապելոցն 'ի տուն գանգիւն տայր 'ի  
 յերկին արձագանդ ,  
 Մոյթք 'ի ներքուստ առնուն ըաստից , և  
 զերծանին հաստարանք :  
 Անշուշտ յայնժամ կանխէր ճեպէր Յու  
 նաց դարձին օրահաս ,  
 Թէ ոչ հերա արագ արագ ձայն արձակէր  
 յԱթենաս ,  
 « Բա՛րէ Ծընունդ ասպարազէնն Արա-  
 մազդայ քաջարի ,  
 Այսպէս ուրեմն Յոյնք անձկայրեացք  
 յերկիր դարձցին հայրենի .  
 Յաղթ մըկանանց հերձեալք զալին , 'ի  
 ծով սրասցին 'ի ծովէ ,  
 Շուք Պրիամեանց թողեալ անդէն զար-  
 գոսուհին հեղինէ .  
 Ոյր աղագաւ 'ի Տրովադա շտաք 'ի Յու  
 նաց բանակէն  
 Անկան տասպաստ տարաշխարհիկք բնա-  
 կասընունդ յաշխարհէն :  
 Արի ո՛վ քաջ , արի 'ի զօր Յունաց վա-  
 ուեալ բանակին ,  
 Ե՛րթ և աղու քոյին բանիւք զայր այր  
 տանձեա առանձին .

Ի ծով ըզնաւս թիավարել կարճեա զնո-  
ցուն դու զաշխոյժ ” .

Ասաց դշխոյն , և Աթենաս խաժակն ան-  
սաց դիցանոյշ :

Եւ շտ խոյացաւ յարուանէն , էջ յՈ-  
ղիւմսեայն 'ի բարձանց ,

Եհաս անդէն արձանացաւ յարագ 'ի  
նաւս չեւէնաց .

Եգետ զՈգիւս , զի կայր անդէն մազգեզն  
ուշիմ 'ի կանգուն ,

Կայր խոճոճէր , և էր անհուպ սեաւ  
քաջանխտ իւր նաւուն .

Էր դառնապէս հարեալ յոգին , 'ի սիրտ  
խոցեալ կարեւէր ,

Առ սա մատեաւ Պալլաս խաժակն , և զայս  
խրախոյս բարբառէր .

“ Քաջ լայերտեան դիւցազն Ոգիւս բազ-  
մահընար և արի ,

Այսպէս ուրեմն 'ի տուն դարձլիք յերկիր  
սիրուն հայրենի .

Թիկնադարձոյց առջիք փախուստ այդ  
բազմանխտ ձեր նաւուք ,

Ըզհեղինէն թողեալ Տրոյեանց , և Պրիա-  
մուն փառք և շուք .

Ոյր աղագաւ 'ի Տրովագա շատք 'ի Յու-  
նաց բանակէն

Անկան տառատ , տարասահմանք բնա-  
կասընունդ յաշխարհէն :

Հայա ա ո՛վ քաջ, մի դանդաղիր, ձայն  
տուր Յուճայ բանակին ,

Ե՛րթ և աղու քոյին բանիւք զայր այր  
սանձես առանձին .

Թոյլ մի տացես նաւաց դոցա թիաւարել  
ի ծովուն » .

Ասաց, և նա ծանեաւ ըզձայն բարբառե  
լոյ դիցուհւոյն :

Խուճապեցաւ, ճեպ ետ քայլիցն ընկէց  
յանձնէն ըզլօգիկ ,

Բարձ զայն անդէն Եւրիբատէս ի թակա  
ցին մուճետիկ :

Իսկ Ոգիւտէս ընդառաջեալ Ագամեմոնոն  
արքային ,

Առ ՚ի ձեռացն ըզգաւազան զանեղծ, յա  
ւերժն , հայրենին :

Նա պերճ այնուէս ՚ի քաջադէն Յուճայցն  
ի նաւս ընթանայր ,

Մինչև արքայ զոք գըտանէր և կամ իշխան  
զորավար .

Մերձ գայր նմա , աղու բանիւք քաջին  
այնմիկ գընէր սանձ ,

«Քա՛ւ ՚ի քէն , քաջ , ահ ՚ի սրտիդ ունել  
իբրև վատ արանց :

Նիստ դու անդորր , և խուժանիդ հան  
դարտութեան ձայն կարդա ,

Դու դեռ քաջիկ ոչ գիտացեր , զինչ միտք  
իցեն Ատրիդեայ :

Նա փորձ փորձէ, և նոյնհետայն զըմբաղ  
ածցէ Հեղինաց .

Ոչ լուաք ողջ, զինչ էն նորա խորք խոր-  
հըրդոյն , զոր ասաց :

Քաւ , մի սրանեալ նա Արդոսեանց օր-  
հաս ածցէ տագնապի ,

Քանզի ցասումն ասեղ և մեծ է դիւցա-  
զին արքայի :

Ձի և անդուստ յԱմարոսայնոյն է շուք  
նորայն բարեբաստ ,

Սիրեաց ըզնա , բարձ ետ նըմա լիահան-  
ճարն Արամազդ » :

Իսկ թէ գրուեա՛հ զոք տեսանէր , խրա-  
խոյս կարդալ ընկերին ,

Կոփէր ըզնա դաւազանաւ , ձայնիւ սաս-  
տէր ասագին ,

« Հէգ և թըշուառ , դու սինըքոր , լուռ  
լէր և նիստ և կարկեաց ,

Դու ունին այլոց մատո լ և կայ ձայնին  
սրատկառ աւագաց :

Դու վատ արանց , այր անաւագ , այր  
սրահասեալ 'ի յուժոյ ,

Դու ոչ 'ի մարտ ես սիտեան , և ոչ յա-  
տեան խորհըրդոյ :

Ոչ Յոյնքս ամէն ունիմք աստէն մէք թագ  
կապէլ արքունեան ,

Ոչ է բարւոք բազմիշխան դու , լիցի միայն  
մի իշխան ,

Մի թագաւոր , որում շնորհեաց մեծ  
հանճարեղն Արամազդ ,

Ետ գաւազան , ետ իրաւունա , ետ տէր  
րութիւն մեծասաստ ։

Այսպէս շքով զհանդէս զօրուն տանէր  
բերէր նա յայնժամ ,

Նոքա բարձեալ ձայն խառնագոչ , խու  
ճապեցան ՚ի յատեան ։

Շքունդն հարաւ , որպէս կոհակք ՚ի բազ  
մագոչ ՚ի ծովուն ,

Գոռան բախեն զափն ահագին , անգուստ  
պոնտոս տայ բոմբիւն ։

Այր այր լուիկ առին բազմոց , բողորե  
ցան ՚ի հանդէս ,

Միայն շողփաղփն այն լեպեշտին բանգա  
գուշէր Թերսիտէս .

Լի էր սորայն խեղապատակ խակախոր  
հուրդ ՚ի բանից ,

Եւ տարաժամ լեզուագարեալ ընդդէմ  
վիժէր արքայից ։

Քրքիջ ածել հնարէր Յունաց բան ծաղ  
րածու նըշաւակ ,

Այր քան ըզնա չեւ յԵղիոն այր անգե  
ղեայ և ծանակ ։

Էր բըշակնեալ և խեղ և կաղ , խոշտայր  
՚ի մի յոտանէն ,

Եւ կորովի սասատք ողանցն ըզլանջ նո  
րա կարկամեն .

Էր և առակ, սրածայր գոլով 'ի վերջ  
գլխոյն գադաթան,

Եւ մազ ցանցառ 'ի կնտակին ունէր աստ  
անդ ցիր և ցան :

Էր Աքելէայ և Ողիւսէայ սա ոխերիմ  
թշնամի,

Ընդդէմ նոցա շաղակրատեալ բանիւք  
լուտայր լրբենի :

Իսկ և յայնժամ վազեալ յերես նա Ատ-  
րիդէայ դիւցազին,

Եւ ըզճըչի հարեալ սաստիկ պարսաքա-  
րէր յատենին :

Ընդդէմ սորա էր սրտառուչ յոյժ ցա-  
սուցեալ Հելենաց,

Նա բարձրագոչ զայս յԱտրիդէս բան  
լուտանօք բոհբոխեաց :

՝ իմ, Ատրիդէս, զանձնըդ կոծես, քեզ  
զինչ յիրաց պակասի .

Քո սլղընձով զեղուն խորանք, են են և  
շատ կանանի :

Ձընտիր ընտիրս 'ի դոցանէ մէք քեզ ձօ-  
նեմք առաջին,

Մէք Աքեցիքս երբ քաղաք մի վանեմք  
առնումք 'ի բըռին :

Կամ թէ դարձեալ դու ընչաքաղց ոս-  
կւոյն տենչա՞ս քանքարաց,

Ձոր քեզ ածցէ յԵղիոնէն ոք յասպազէն  
'ի քաջաց .

- Ածցէ փրկանք իւր զաւակին, զոր էս կա-  
լեալքաջաբար ,
- Արեւմ առ քեզ կապեալ գերի , կամ  
էս և կամ յոյն ոք այր :
- Կամ թէ խնդրես 'ի խանդ հարեալ առ-  
կանգել մանկամարդ 12 ,
- Զոր և ուրոյն կալցես անձին , քեզ առ  
'ի շուք և 'ի զարդ :
- Օ'ն անդր 'ի բաց , չէ 'ի ճահ առն այն որ  
տէր է և իշխան ,
- Զորդիս մեր զայս զԱքայեցւոց գրձձել  
այդպէս անպայման :
- Ո'վ վատք արանց Աքայուհիք , Աքայե-  
ցիս ոչ կարդամ ,
- Այ կնամարդիք , Օ'ն հաւագնացք 'ի տուն  
դարձցուք ողջանդամ :
- Թողցուք աստ զայրդ ուտել հալել զիւ-  
րն փարթամ կարասի ,
- Զի գիտասցէ , իցեմք դրմա ումպէտ է-  
թէ պիտանի :
- Դա և զարդիս վեհ շատ քան զինքն զԱ-  
քիլէսքաջ արանց ,
- Զըզուեաց շուք չեդ , անձին կապուտ  
ըզձիրն եհան 'ի ձեռաց :
- Այլ Աքիլէս այր է անցաւ , մաղձ չիք  
հորա 'ի ծոցին .
- Թէ ոչ , Ատրիդ , առանց կարծեաց այդ  
խեռութեանցդ էր վերջին " :

Լյաց, լուտաց զհովիւն աղգին զԱգա-  
մեմնոն Թերսիտէս,

Այլ ըչտապաւ խեռին ընդդէմ յարեաւ  
դիւցազն Ողիւսէս:

Եկաց խոժոռ ակնակառոյց, բան որոտաց  
դոռուժեան.

«Թերսիտ սրանդոյր, զի՞ քեզ ձայնել իբրև  
ճոռոմ՝ ճարտասան.

Լուռ լերկարկեաց, ընդ արքայից մի գար  
'ի վէզ միայնակ,

Գիտեա այր դու, չեք քան ըզքեզ այր  
սինըքոր անաւագ.

Չեք, որչափ ինչ աստ յԵզիոն ընդ Ատրի-  
դեանց են որեար,

Ուստի զարքայս լեզուագարեալ մի յա-  
տենի ճոխանար:

Դու սանձ և ճեմ դիր բերանոյդ, մի՞ բան  
յուզեր ըզգարձին,

Չի և ողջոյն դեռ չեմք ակահ, յինչ ար-  
չաւանքս յանգեսցին:

Դարձցի՞ն հելենք բարեբաստիկք, եթէ  
արդեօք չարաչար.

Չի՞ դու այժմէն յԱդամեմնոն կաս և ձը-  
դես սարսաքար:

Առ ի՞նչ խեռաս, թէ արքային շատ տան  
հելենք կարասի,

Որով դու արդ, լիրք լեպեշտի, իբրու-  
խանչես յատենի:

Այլքեզասեմ, զոր և ասա 'ի գործ տա  
 րայց ես հաստաս,  
 Եթէ դարձեալ, որպէս զարդիս, տեսից  
 ըզքեզ շողակրատ,  
 Մի այլ գըլուխս իմ Ողիւսեայ յուսոյն  
 վերայ մի կացցէ,  
 Մի ևս ինձ հայր Տէլեմաքեայ այր ոք ա  
 նուն կարդասցէ,  
 Թէ ոչ ես բուռն արկեալ 'ի քեզ ձորձ  
 հոլանեմ և շապիկ,  
 Մերկեմ զօթոցդ, և զոր քոյին առակա  
 նաց քօղաձիգ.  
 Այնպէս լալեօք ըզքեզ 'ի նաւս ես ար  
 կանեմ իայտառակ,  
 Եւ տամ ըմպել քեզ յայս ատեան գան  
 չարագան նըշաւակ :  
 Լսաց, և զուս գաւազաննաւն հար և զո  
 ղանցն ըզսասպատ,  
 Խծպէր Թերսիտ, և շիլ յաչացն անկան  
 կայլակք յորդառատ :  
 Իսկ 'ի հարուած հաստահարուստ գաւա  
 ղանին ոսկեղէն,  
 Այտուց կապոյտ և արիւնոտ պալարա  
 ցաւ քամակէն :  
 Քասքանեցաւ անդ անգեղեայն, խուճա  
 պեցաւ և նստէր,  
 Տանջեալ ցաւովն հայէր խեթի, առեալ  
 զարտօսըն և ջնջէր :

Թախծեալ Հելենիքն 'ի մեծ քրքիլ ընդ  
Թերսիտէս հատանին ,

Եւ այր ոք այր շուրջ ակնարկեալ բան  
զայս ասէր ընկերին :

« Բաբէ բաբէ , այս Ողիւսէս բիւրուց  
գործեաց 'ի բարեաց ,

խորհուրդըս ետ նա քաջուշիմ , մարտ գե-  
ղեցիկ յարգարեաց :

Իսկ և զարդիս 'ի մէջ Յունաց գործ մի  
եցոյց աննրման ,

Զաղեղնաբան լեզուագարիս ճմլեաց կը-  
զակն յերասան :

Անշուշտ գորա ոչ ժլուեսցի ոգին իւր  
խեռ և անսանձ ,

Ի վեգ դարձեալ գալ արքայից , և բան  
սարսեւ կրճանաց » :

Օ այս ասէին , բայց Ողիւսէս գաւա-  
զանաւն 'ի ձեռին

Յարեաւ քանդիչն քաղաքաց , կայր Ա  
Թենաս մերձ նրմին .

Տիպ քարողի խաժակն առեալ ձայն տայր  
լուել սրերոյն ,

Զի և վերջինքն և առաջինքն 'ի լուր կայ-  
ցեն բարբառոյն .

Լիցին բանիցն Աքայեցիք խորհրդագէտք  
քաջուշեղ ,

Մինչև ձայն զայս ատենաբան այրն կար-  
դաց հանճարեղ ,

«Ըզքեզ, արքայ սվ Ատրիդէս, խնդրեն  
 գրձձեւ Յոյնք այժմիկ,  
 Ըզքեզ առակ կարգեւ ողջոյն 'ի յօդա-  
 խօս 'ի մարդիկ :  
 Բա՛ մոռացօնք եղև նոցա, զոր կըռեցին  
 բան խոսաման,  
 Երբ ձիաւէտն 'ի յԱրգոսէ ետուն նոքա  
 աստ հորդան .  
 Նախ զԵղիօն քանդեալ զամուրն, յեր-  
 կիր դառնալ հայրենի,  
 Արդ լան իբրև այրի կանայս և քան զմա-  
 տաղ մանկըտի :  
 Ի տուն դարձին են անձկացեալք, այր  
 կականէ ընդ ընկեր,  
 Եւ արդեօք խիստ է կալ յամբոյր և դարձ  
 առնել վշտումբեր :  
 Զի և ամսով չափ մի միայն անձուկ բե-  
 րեալ ամուսնոյն,  
 Դառն է մարդոյ կալ բացական և տըւայ  
 տիլ 'ի նաւուն .  
 Յորժամ ըզնա այս ձմերայնոյն շնչէ ան-  
 դուլ և ունի,  
 Անդուստ և սանձ արկեալ կասէ ծովն  
 ալէտանջ ամեհի :  
 Իսկ մեզ աստէն ամն հոլովեալ, ամ իննե-  
 ըրորդ է ահա,  
 Քա՛ւ թէ ցասնուամ, թէ այր ոք յոյն 'ի  
 ցուկանաւս դառնանայ :

Բայց և կորանք են աստ յամէլ և դարձ  
առնել ձեռնուհայն,

Տարայք վայր մի ո՞ բարեկամք, մնացէք  
ողուլ զօրութեան.

Քաջ գիտասցուք, եկանց կաշքաս գուշակ  
անխաբ, թէ խաբեաց,

Ձի և քաջիկ խորհրդազգած մէք եմք  
նորուն սատգամաց:

Նորուն բանիցն և դուք ինքնին վեկայք  
անխաբ էք ողջոյն,

Ձորս օրհասին ոչ ծախեցին անգութ ժա  
նիքն ՚ի մահուն:

Յորժամ երէկ և կամ յեռանդն յԱւլիդ  
նաւք մեր խմբեցան,

Օր Պրիամուն և Տրոյացոց օր դուժե  
լով դառնութեան,

Մէք բակ առեալ անդ շուրջ զաղբերբ  
նուիրական մերձ բագնեաց,

Ձօն անմահիցն ողջ յազէսք հարիւրեզ  
նեան նըւիրաց:

Այն ինչ կայաք ընդ հովանեաւ չքնաղ  
սօսւոյն ՚ի սաշաման,

Ոյր ՚ի ներքուստ ականակիտ ջուր ծա  
լալէր սրբութեան.

Յանկարծ արուեստ մեզ յայտնեցաւ  
հրէշանըշան երևակ,

Վիշապ ահեղ արեհանիշ խայտակարմիր  
՚ի քամակ:

Չայն Ողևամտեանն ած յերևան, որ 'ի  
ներքուստ սուրբ բազնին

Եւ կամակոր քնթըռնոցաւ ճաղպատե-  
ցաւ 'ի սօսին :

Լշին բունեալք 'ի ծայր ոստոցն անդ ձագք  
մատաղք ճնճըղկան,

Քօղածածուկք սաղարթապատք ղօղեալ  
կային 'ի դողման :

Ութ էին ձագքն, և իններորդ մայրն որ  
ծընաւ ըզնօսին,

Ի վիշապին անկեալ ժանիս, ողորմելի  
ճըճուէցին .

Մայրն ըզձագուքըն թըրթըռայր գըր-  
գայր գուժայր ողբալի,

Պարսեաց վիշապն առ ըզթևոյն, ճըջիւնն  
ընդ օգ հարկանի :

Իբրև այսպէս ձագքըն և մայրն 'ի վիշա-  
պէն ծախեցան,

Ապա աստուածն որ ցոյց ըզնա, նոյն նո-  
րասքանչ ետ նըշան .

Չի զնոյն վիշապ նա հնարիմաց յարձան  
փոխեաց վիմեղէն,

Իսկ մէք յասուշ հարեալ կայաք, զլինչ  
մեզ յայնժամ դէպք եղէն :

Արդ յայն 'ի ձօնն այս բան 'ի դից ասէլ  
հրաշից էր գունակ,

Եւ ավիշէլոցս յարեաւ կալքաս ատենա-  
բան մեզ գուշակ .

Հիմ գուք ասշեալք համրացարուք, Ա.  
 քայեցիք գիսաւոր,  
 Զայս մեզ ուշիմ վեհն Արամազդ նշան է  
 ցոյց ահաւոր.  
 Նշանս յամեալ է յամր ելից, բայց շուքն  
 անջինջ է փառաց,  
 Որպէս ճնճղուկք ծախեալք ընդ մօրն  
 'ի վիշապին 'ի ժանեաց:  
 Ութ էին ձագքն և իններորդ մայրն որ  
 ծընաւ ըզնոսա,  
 Այսպէս և մեզ չափ նոյն ամաց մերոյ  
 մարտին չափեալ կայ:  
 Ի տասներորդ յամին վանեալ զոստանն  
 առցուք լայնուղին,  
 Նա զայս ասաց, և բանքն այժմիկ արդիւ  
 նացեալ յանգ ելին:  
 Հապա աստէն մնացէք վայր մի, Աքայե-  
 ցիք քաջազունք,  
 Մնացէք մինչև ըզՊրիամուն զոստանն  
 առեալ վանեսցուք”:  
 Ասաց, և Յոյնք մեծաբարբառ հնչեցու-  
 ցին խրախուսանք,  
 Եւ նաւքն անդուստ բացուստ 'ի բաց ա-  
 հեղ ետուն արձագանդ:  
 Գունակ գունակ 'ի գով առին բան զՈ-  
 դիւսեայ գիւցազին,  
 Մինչ գերեհեանն յարեաւ Նեստոր, խօ-  
 սէր ասպետ ծերունին.

- « Վաչ յայ կարդամ, որ ձեր բարբառք  
մանրիկ մանկանց են նրման, »
- Ոյ ըզմարտից փոյթ չէ նոցա, ոչ հանդի-  
սից քաջութեան :
- Ո՞ւր արդ աղէ, ո՞ւր մեզ գնասցեն ուխտք  
և դաշինք երդմնակուռ ,
- Եւ խորհուրդք մեր աճիւնասցին 'ի բոց  
ծախեալ և 'ի հուր :
- Ի չիք դարձցի քերտըն քաջաց, ձօն և նը-  
ւէրն սնասպակ ,
- Ի չիք դարձեալ և աջքն անխաբք, յոր ան-  
վէհեր յուսացաք :
- Ձուր պայքարիմք ժամավաճառք 'ի կազ  
ելեալք և 'ի վէգ ,
- Մէք բազմամեայ աստ դեգերիմք, և եչք  
հնարից չիք ուրեք :
- Արդ դու, Արիդ, որպէս յառաջ կալ  
ըզխորհուրդ անսասան ,
- Արի ո՞վ քաջ, և 'ի դու մունս Արգոսա-  
ցուց լեր իշխան :
- Թո՞ղ այն սատանք, մին և երկուք, յոգիս  
ծընդեալք ծիւրեացին ,
- Որք դարձ Յունաց օձտեալք նիւթեն ,  
այլ գամագիտ ոչ լիցին .
- Իբրու չուեղ մեզ 'ի յԱրգոս, մինչ չե-  
կղեալ իրազգած ,
- Արդեօք անխաբ վէհն Արամազդ խոս-  
տումն արար, թէ խաբեաց :

Քանզի յաւուր յորում հեւեհք յարագ  
 'ի նաւս ամբարձան ,  
 Գուժկանք արեան լեալ Տրոյացւոց և  
 օրհասին դառնութեան ,  
 Ասեմ , յայնժամ մեզ ակնարկի մեծն  
 Արամազդ վառ 'ի վառ  
 Փայլակն յաջ կոյս փայլատակեալ , նըշան  
 եցոյց հաշտարար :  
 Մի ոք ապա մի ճեպեացէ 'ի տուն դառ  
 նալ հայրենին ,  
 Մինչ չե նա հարան 'ի Տրոյացւոց ածցէ  
 անձին ամուսին .  
 Ածցէ 'ի վրէժ տարասահման առևան  
 գեալն Հեղինեայ ,  
 Առցէ և վրէժ նա զարտասուաց և ըզջայ  
 լիցն ըզնորա :  
 Իսկ եթէ ոք ըստամբակեալ ընդդէմ  
 դարձցի 'ի զօրուն ,  
 Եւ բռնաբար 'ի չու անկեալ ժտի դառ  
 նալ նա 'ի տուն ,  
 Թող 'ի լաստ իւր սեաւ քաջամուր  
 ձեռնն նորա մըխեսցի ,  
 Նա ետ ընդ ետ աստ դիտասպաստ նա  
 խավխաճան մահացի :  
 Այլ դու , արքայ , լեր խեղամուտ , նա  
 և այլում լեր հաւան ,  
 Զի զոր զարդիս ես քեզ ասեմս , ար  
 դեօք բան մի չէ խոտան :

Ջոկեա զորեարդ , Ագամեմնոն , Ջոկ ըստ  
տոհմից ըստ ցեղից ,

Ձի ցեղք թիկունք լիցին ցեղից և տոհմք  
տացեն ոյժ տոհմից :

Թէ զայդ առնես , և քեզ հնազանդ լի-  
ցին որդիք հեւենաց ,

Գիտուն լիցիս , ո՞ր զօրավար ո՞ր է զինուոր  
վատարանց .

Դու և գիտուն լիցիս յայնժամ ո՞յք  
մարտ մըղեն գեղեցիկ ,

Ձի անդ այր այր իւր տոհմակցին ճգնի  
լինել զօրավիդ .

Գիտուն դարձեալ , դիքն են արդեօք  
խափան առման քաղաքի ,

Թէ վատութիւն զօրականին , կամ խա-  
մուժիւնն 'ի մարտի " :

“ Ա՛յ ծերունիդ , ձայն զայս Աորիդ  
գոչեաց 'ի գով 'Նեստորի ,

Վ՛յ ծերունիդ , որ յաղթական ես դու  
Յունաց յատենի :

Ո՛վ թէ 'ի Յոյնս , հայր Արամազդ և  
Աթենաս , Ապողոն ,

Տասն այսպիսիք խորհրդականք հարկա-  
նէին ինձ պաշտօն ,

Արագ արագ ոստանն յայնժամ Պրիա-  
մոսի արքային

Վանէր առնոյր , յաղթողական 'ի մեր  
քանդէր 'ի բըռին :

- Բայց Արամազդն ասուարազէն ինձ ցաւ  
առթեաց և աղէտ ,
- Եւ զիս առեալ խարդաւանեաց 'ի կադ  
զրաջան և 'ի խէթ :
- Վասըն կուսին սլայքարք ընդ իս ընդ Ա.  
քիլէս շատք անցին ,
- Այր ընդ ընկեր մաքառեցաք , ես խեռե-  
ցի առաջին :
- Որ թէ երբէք մէք համաշունչք հաշո  
լինիցիմք երկոքեան ,
- Եւ ոչ վայրիկ մի Տրոյացւոց աղէտն հաս-  
ցէ անագան :
- Արէք 'ի ճաշ , մարտին հանդէս մէք ա-  
րասցուք քաջաբար ,
- Քաջիկ այր այր տէգ սրբեսցէ , քաջ  
կազմեսցէ և զասսար ,
- Քաջ և ձիոցն արագոտանց արկցէ ճա-  
րակ 'ի դաշտին ,
- Քաջ և ըզկառս այր զննեսցէ , սլատկառ  
կացցէ 'ի գոռին :
- Ըզտիւն ողջոյն փորձ փորձեսցուք զա-  
հեղազօրն Արեսի ,
- Ժիրք և անխոնջ նահատակեալք ոչ գու-  
տացուք ոչ վայր մի .
- Մինչև ըզմեզ մոռթ և խաւար սաշա-  
րեսցէ գիշերոյն ,
- Եւ անջրպետ հարուստ բազկաց արկցէ  
անդ քաջ որերոյն :

Ընդ քիրտն հարցի 'ի լանջ քաջին փոկ  
անձնապահ վահանին ,

Եւ գեղարդանն 'ի տիգաբուն բաղուկք  
քաջին յոգնեացին .

Շահատակեալ ընդ պերճ կառօք և կա-  
ռաձիգն երիվար ,

Քրտնակայլակն անդուլու թեամբ թուու-  
ցեալ տարցի քաջաբար :

Իսկ թէ երբէք զոք ակնարկեմ ես 'ի  
մարտին 'ի գոռմանց

Խոյս տալ , 'ի զատ անձնանախատ նստել  
իբրև վատ արանց ,

Դա օն և օն 'ի բուռն եկեալ , կուր արկ-  
ցի շանց , գէշ թըռչնոց " .

Ասաց , և Յոյնք մեծ գոչեցին իբրև ըզ-  
ծով ալէկոծ :

Որպէս յորժամ առ դարափամբ կո-  
հակք ծըփան ահագին ,

Այն ինչ հարաւ բուռնն շնչեալ սարա-  
ւանդեալն 'ի ժայռին ,

Ըզնա անդուլ գան վէտ 'ի վէտ ալիք բա-  
խեն ամեհի ,

Քանզի հողմունք գիմակ գիմակ աստի  
խուժեն և անտի :

Յարեաննորա խուճապեցան սփռեալք  
'ի նաւա և 'ի կուր ,

Ծուխ ամբարձին ըստ վըրանացն և առ-  
նուին կերակուր :

Անդ ոմն այս դից զոհէր ըզզոհն, և ոմն  
այն դից յաշտ առնէր,

Յօրահասէն և յաղէտից ասլրել մարտին  
պաղատէր :

Այլ եզըն մի Ագամեմնոն առնոյր 'ի  
զոհ, մեծ արքայ,

Եզն հնգամեայ էր պարարակ, ասէղա-  
զօրն Որմզգայ :

Չայն ետ կոչեաց ըզծերակոյտ զաւագ-  
որեարն հելլենաց,

Եւ 'ի նոսա նախ ըզնէստոր և զԵդոմէն  
քաջ արանց .

Ապա զամուսըն զԱյասից և ըզՏիւդեայն  
քաջ զաւակ,

Եւ վեցերորդն էր Ոդիւսէս մտօք Դիայն  
հանգունակ :

Եկն ինքնակոչ Մենեղաւոսըն քաջա-  
տէգն 'ի մարտի,

Զի էր ջանիցն հարազատին քաջ խելա-  
մուտ 'ի սրտի :

Պար միաբան զեղամբն առեալ զաղին  
առին ըզձաւար,

Եւ 'ի նոսա Ագամեմնոն մաղթողական  
ձայն կարգայր .

“Մրամնոց վէհ ամպրոտային, շքեղ  
բնակեալդ 'ի յեթեր,

Մի մեզ կանուխ մտցէ արուն և մի հաս-  
ցէ մեզ գիշեր,

Մինչ չև խանձեալ արկից տասպալ ըզ-  
 Պրիամուռն ըզտաճար,  
 Եւ խանձողեալ աճիւնասցին դրանդիքն  
 'ի հուր բոցավառ :  
 Իսկ զԵկտորին մեր ռիւերիմ՝ քաջին լան-  
 ջաց պահպանակ,  
 Բուռնն խղեալ և փշրեսցէ երկաթա-  
 գամն իմ նիզակ :  
 Շատ համահարզքն ատամնաւաղք հո-  
 ղեալք անկցին դիտասպաստ Դ .  
 Զայս աղօթեաց, այլ մաղթանացն երես  
 չարար Արամաղդ :  
 Ըզզոհն էառ, այլ հանդերձէր աղէտ նը-  
 մին անպայման .  
 Մինչ աղօթեալք արկին նոքա զաղին ձա-  
 ւար ցիր և ցան :  
 Սախ գօտէպիւնդք զուռն ըսպանդին յետ-  
 կոյս ողնեալ փողոտեն,  
 Մորթեալք համբուն զազդրրն և զիստ  
 յօշեալք 'ի նոյն կոտորեն .  
 Առեալ զնոսա և պարուրեն կրկնա-  
 պատկեալն 'ի ճարպոյն,  
 Եւ 'ի վերայ զանգամաթիւս գընեն ըզ-  
 հումս յօշուածոյն :  
 Խարոյկ արկեալ, չոր յանսաղարթ այ-  
 րեն շերտից 'ի վերայ,  
 Շամփրեալ զընդերսն ունին այնպէս  
 անդ 'ի վերայ հեփեստեայ :

Իբրև քաջիկ տակաւ տակաւ զիսոք այ-  
րեցան բովանդակ,

Եւ յընդերաց նըւիրական այր այր առ-  
նոյր ըզճաշակ :

Մանրախորտիկ յօշէն և զայն, և հար-  
կանենն 'ի շամփուր,

Քաջ խորովեալք հասուցանենն բառնան  
զամէն կերակուր :

Յամբոկ գործոյն կարգեալ սեղան առին  
'ի ճաշ բազմական,

Եւ համաչափ 'ի կերակրոյն ողջ կշտա-  
սլինդ յագեցան :

Երբ ըզճաշոյն և զըմբելլոյն փափաքն  
հարին և ըզսկէտ,

Չայն ետ Նեստոր բազմականին մեծ գե-  
րենեանն այն ասպետ :

“Մորիդ շքեղ, դու քաջարանց Ագա-  
մեմնոն թագաւոր,

Մի՛ այլ զըուցեալք ժամաւլաճառ նըստ-  
ցուք մէք այժմ աստանօր :

Հանգրիճեսցուք վառեալք 'ի գործ, զոր  
հանդերձէ մեզ աստուած,

Օ՛ն առեալ այժմ ելցեն Քարողք, ձայն  
կարդասցեն հելլենաց :

Խումբ արասցենն սլատենազէն զօրուն  
նաւացն 'ի հանդէս,

Եւ մէք համուռ ընդ բանակին 'ի չու-  
անկցուք փուլթասկէս :

Չայն կարգասցուք խրախուսական 'ի  
յԱրեսեան յահ և հոյն » :

Չայս ծերունին , և Ատրիդէս լուեալ  
անսաց խորհրդոյն :

Ղեպ Քարոզից քաջաձայնից հրաման  
կարդաց ազգարար ,

Գնդէլ 'ի խումբ զազգ գիսաւոր զԱ  
քայեցւոցն 'ի գուպար .

Նոքա ձայնեն , սոքա հապճեալ խումբ  
գործեցին բանակաց ,

Եւ քաջ արքայքն առ Ատրիդէաւ ժրա  
ցեալք տային կարգ զօրաց :

Խառն ընդ նոսա և Աթենաս խաժակըն  
գայր և գընայր ,

Կալեալ զԵգեան , զանեղծ , չքնաղ , զան  
մահականն իւր զասպար .

Յոր փողփողեալ համակ ոսկի հարիւրք  
կախին թեզանաց ,

Ողջ քաջ հիւսկէնք , միոյ միոյ կըշիռն  
հարիւր էր եզանց :

Սովաւ զօրուն , ճեմ ըզճեմի գընայր շո  
ղայր , տայր հորդան ,

Կորով 'ի սիրտ հաստեաց զօրուն , 'ի  
մարտ գրդեաց քաջութեան :

Խօշիւնք անդէն գրդին նոցա և արհա  
ւիրք գոռ մարտին ,

Քան նաւագնացք յերկիր դառնալ  
բնակասընունդ հայրենին :

Որպէս հուր մեծ զթանձրամայրին վա-  
 ուէ լերին յարտեան ,  
 Եւ բացարձակ ցոլմունք հրեղէնք շողան  
 'ի մեծ հեռաստան ,  
 Այսպէս 'ի չուն ամբաւ զօրուն փայլակ  
 նացայտ պրզնձեաց ,  
 Ճաճանչ հրաշէկ հատաւ ընդ օդ , յեր-  
 կին 'ի վեր ել գրնաց :  
 Նա և որպէս երամ երամ սեռք թևաւոր  
 մեծ հաւուց ,  
 Խորդից թանձունց և կարապաց , եր-  
 կայնավիզն և սագուց  
 Ի մարգն Ասեան թևապարեալ մերձ առ  
 Կաստրեան վըտակաց ,  
 Յայսկոյս յայնկոյս խայտան ճախրեն և  
 սաւառնեն 'ի բարձանց ,  
 Անդ յելլեւս արօրացեալք տան մեծա-  
 պէս կարկաչանք ,  
 Անդուստ և մեծ հնչէ ողջոյն մարգագե-  
 տինն արձագանդ ,  
 Այսպէս նոցուն ազգ յոգներամ անդ 'ի  
 նաւուց 'ի վըանաց  
 Դիմեալք արտաքս , 'ի Սկամանգրեան  
 սըփուն 'ի դիւրըս դաշտաց :  
 Հողն 'ի ներքոյ յոտից քաջաց տրոփեր  
 թընդայր ահաւոր ,  
 Եւ 'ի դոփեւ յաղթ ամբակաց երիվարաց  
 քաջազօր :

Հասին կացին 'ի Սկամանգրեան 'ի  
 դաշտ 'ի մարգ ծաղկազարդ,  
 Բիւրբ էն բիւրուց՝ որչափ ծաղիկք էն  
 դարնայնոյն և սաղարթ :  
 Որպէս ճիւղաղ ճանճք շառաչեն խըռ-  
 նեալք հովուացն 'ի դագար,  
 Յօր գարնայնոյն երբ ըզկըթոց կաթըն  
 թանայ յորդաբար,  
 'Նոյնչափ Յունաց կային փաղանգք գի-  
 սաւորաց 'ի դաշտին,  
 Կան և դուժան, և Տրոյացոց յարբումն  
 արեանց ծարաւին :  
 Սակայն որպէս ըզմեծ հօրանս զայծից  
 հովիւքն այծարած  
 Հեշտին ջոկեն, յորժամ նոքա յարօտ  
 խառնին ճարակաց,  
 Սապէս ըզզօրն աստ անդ 'ի մէջ քաջ զօ-  
 րավարքն աննրման  
 Լաստեն քաջիկ 'ի մարտ ճակատ, և տան  
 դըռոյթ և հորդան :  
 Արբայն կացեալ 'ի միջակին Ագամեմոնն  
 ասընկէց,  
 Աչօք, գլխոյն, հանգունատիպ Արա-  
 մազդայ շանթընկէց .  
 Տիպ զԱրեսին ասեղ բերէր նա 'ի գօ-  
 տոյն 'ի կամար,  
 Եւ քաջակուռ լանջըն նորա Պոսիդոնին  
 ըզտիպար :

Եւ որպէս ցուլ հաստահարուստ շքքով  
 յանդեայս ճոխանայ,  
 Եւ տաւաղեալ երամակին իբրև աւագ 'ի  
 վեր կայ,  
 Նոյն Արամազդ հրաշագործեաց յաւուր  
 յայնմիկ զԱտրիդէս,  
 Յորդեաց ըզուքն, եղ աննըման 'ի գիւ-  
 ցազանցն 'ի հանդէս :  
 Ինձ արդ, Մուսայք, դուք սլատմեցէք  
 տան բնակաւորք Ողիւմպեան,  
 Դուք Դիցանոյք ընթերակայք ճարտար  
 գիտէք զամենայն :  
 Մէք չեմք ահահք, միայն համբաւն 'ի  
 լուր հնչեաց մեր ունկան,  
 Դուք սլատմեցէք, ոյք զօրավարք կացին  
 Յունաց և իշխան :  
 Ըզխուժանէն չէ մարթ ճառել, ոչ ա-  
 նուանել յականէ,  
 Թէպէտ և ինձ լեզուք տասնեակ, թէ  
 և բերան տասն իցէ,  
 Թէպէտ և ձայն ինձ անըսպառ, թէ և  
 ինձ լանջ սրղընձի,  
 Զի զայն միայն արփիաճեմքն ունին Մու-  
 սայք 'ի յուշի :  
 Գիտեն նոքա կոյսք մազգեզունք, քանիք  
 յեղինն չըւեցին,  
 Ես զիշխանացն երգեմ միայն և ըզնաւաց  
 հանդիսին :

ՀԱՄԱՐ ՆԱԻՈՒՑ, ԿԱՄ ԲԻՈՎՏԻԱ

Ի խոլտացւոց իշխանք էին Պենեղէոս և  
Ղետոն,

Արքեսիղոս և Պրոթենոր և ընդ նոսա  
Կղոնիոն :

Եւ որք զԻւրէն, որք զապառաժ մըշա  
կէին զԱւղիդէ,

Եւ զԱսքինոն և զԱսկողոն, ըզբազմա  
սարն Ետուիւնէ .

Ըզմեծանիստն ըզՄիւկաղսոն և ըզԳրէ  
այն, ըզԹեասպեա,

Որք շուրջ յԱրմա էին բնակեալք և յԻ  
ղեսոն, յԵրիւթրա :

Որք զԵղէոն էին կալեալ և ըզՊետոն և  
զԻւղէն,

ԶՈվքալէաս, և ըզքաղաք Մեդէոնին  
բարեշէն .

Եւ ըզԿոսպա և զԵւտրէսէ, զաղաւնա  
շատն ըզԹիսբոն,

ԸզԿորոիւնեա, ՚ի նոյն դարձեալ ըզխո  
տաւէտն Ազարտոն :

Եւ որք յայնժամ ըզՊատէա, ըզԳղե  
սանտոն ունէին,

Որք յԻւպոթբոն բնակեալ էին ՚ի բարե  
շէն աւանին :

Դարձեալ և որք են բնականորք նըւի-  
րականն յՈրքեստոն ,

Անտառ չքնաղ , զոր և ձօնեալ ունէր ին-  
քեան Պոսիդոն :

Որք յայգաւէտն յԱրնէն բնակեալք , և  
որք դարձեալ 'ի Միդին ,

Եւ բնականորքն 'ի վեհնիսսա և յԱնթե-  
դոնն 'ի վերջին :

Էին սոցա նաւք թիւ յիսուն , և 'ի մէն մի  
'ի նաւաց

Շահատակէն հարիւր քըսանք Բիովտա-  
ցի պատանեաց :

Իսկ որք յԱսպղէդ էին բնակեալք և  
մինիեանն յՈրքոմէն ,

Սոցա իշխանք քաջն Արեսին որդիքն  
Ասքղափ և Յաղմէն .

Չսոսա Աստիւք կոյս ծընգասէր ծընաւ  
հուժկուն Արեսի ,

Եւանէլով 'ի վերնատունն 'ի տան Ազիդ  
Ակտորի .

Քանզի Արէսն եկեալ առ նա և մերձե-  
ցաւ գողաբար ,

Եւ սոցա նաւք թիւ երեսուն գնային  
ըզհետ կարգաբար :

Եւ Փոկացոց Եպիստրոփոս և Ասքե-  
դոս իշխէին ,

Որդիք Իփտեայ Նաւբողիդեան առըն քա-  
ջի մեծանձին :

- Որք 'ի Պիւթոն յապառաժին, 'ի Կիւ-  
պարիս օթացան,  
Ի վեհ Կրիսսա, 'ի Դաւղիդէ, 'ի Պանո-  
պին 'ի սահման:
- Որք յԱնեմովր և 'ի Յամպող շուրջանա-  
կի մըշակեն,  
Որք առ Կեփիս դիւցաղնական գետովն  
անկեալ բընակեն:
- Որք 'ի Լիլեա, և Կեփիսեայ նստին նոքա  
մերձ աղբեր,  
Սոցա դարձեալ սեաւ լաստափայտ թիւ-  
քառասուն հետեւէր:
- Իշխանքն 'ի շուրջ ըզփոկացոց ճակատ  
զօրուն յարդարեն,  
Եւ Բիովտեանց յահեակ թւոյն 'ի զարդ  
վառեն և 'ի զէն:
- Բայց Լոկրացոց պետն Ոիլեան արագ  
Այասն էր արի,  
Նըկուն մարմնով, չէր զերթ Այաս Տե-  
ղամոնեան վիթխարի.
- Նա մեծապէս փոքրկութեամբ խոնար-  
հագոյն համանուան,  
Եւ լանջապան զրահի նորա 'ի կրտաւոյ  
էր ճօշան 13.
- Բայց 'ի հեղենս և յԱքայեանս նորա  
նախճիրք մեծամեծ,  
Զի սա նոցուն առ հասարակ էր աննը-  
ման տէգընկէց:

Բնակեալ էին անդ 'ի Կիւնոս , և յՈւ  
պենտէ , 'ի Քաղեար ,

Եւ 'ի Սկարփէս և 'ի բեսսան և յԱւ  
գեայ վայր բերկրարար ,

Ի Թրոնիոն էին սոքա և 'ի քաղաքն 'ի  
Տարբէս ,

Շուրջ բնակէին 'ի հեղեղատն , անուն  
նորա Բոագրէս :

Թիւ քառասուն նաւք սևաթոյրք սորա  
գնային ըզհետոց ,

Յայնկոյս Եւբեայն նըւիրական 'ի բնա  
կաւոր Լոկրացւոց :

Իսկ որք զԵւբէ կալեալ էին Աբանսք  
շնչողք գոռութեան ,

ԸզՔաղկիդէս , զԵրետրիաս , և զայգա  
ւէտն Իստիեան .

Ծովահայեացն ըզԿերինթոս ըզգիցա  
ւան բարձրաշէն ,

Որք 'ի Կարիստ կան բնակաւորք և որք  
զԼատիւր մըշակեն .

Էր զօրավարն Եղեփեսովը այն շառա  
ւիղն Արեսեան ,

Քաղկոդոնեան մեծանձն և քաջ Աբան  
տացւոց մեծ իշխան :

Աբանսքն արագք ըզհետ խաղան գիսա  
ւորեալքն 'ի ծոծրակ ,

Արք քաջմարտիկք գիպողք շամփրել 'ի  
տէգ հացեան ըզնիզակ .

Հզօրք խզել ըզթշնամեացն ըզքաջամուր  
լանջապան .

Սորա ըզհետ նաւք սևագոյնք թիւ քա  
ռասուն կարգեցան :

Եւ որ զքաղաքն ըզհոյակապ կալեալ  
ունին զԱթենայ ,

Են ժողովուրդք այն քաջալանջ և մեծ  
անձին Երեքթեայ .

Ծընոյց երկիրն իւր կենսատու , և Աթե  
նաս գրգաբար

Սընոյց մազգեզն ըզսա նստոյց յԱթէնս  
'ի յոյրն իւր տաճար :

Անդ հաշտ առնեն ըզնա ցըլուք նոյն և  
գառամբք 'ի զոհին

Աթենացւոց որդիքն , յամաց 'ի բոլորել  
չըջանին :

Իշխան սոցա Մենեսթէոս որդի Պե  
տեայն քաջալաւ ,

Որ զուգատիպ նըմա երբէք այր երկրա  
ծին ոչ գըտաւ .

Յարուեստ քաջիկ դասել ըզխումբ երի  
վարաց 'ի մարտի ,

Զասպարաւոր արանց ճակատ հանել  
դընել 'ի կարգի :

Միայն Նեստոր գայր 'ի կըշիւ ալեօք  
ծաղկեալ ծերունին .

Սըմա ըզհետ յիսուն թըլով սեաւ լաս  
տափայլօք խաղային :

Ածէր Այաս Սաղամինոյ նաւաց հան  
դէս երկտասան ,

Եբէր կացոյց յոր վայր փաղանդք Աթե  
նացւոց խրմբեցան :

Իսկ որ զԱրգոս կալեալ էին , և զպա  
րըսպեալ Տիւրինթա ,

Ըզճերմիոն և զԱսինէ առ խոր ծոցովք  
ծովափնեայ .

Եւ ըզՏրիզէն և զԼոնաս , զԵպիդաւրոն  
զայգաւէտ ,

Եւ պատանիք Աքայեցւոց , որք են յԷ  
գին , 'ի Մասետ .

Էր զօրավար քաջամարտիկ Դիոմեդէս  
այս գնդին ,

Եւ Սթենեղոս որդի սիրուն այն գերա  
պանծ կապանին .

Սոցա երրորդ Եւրիաղոս այր քաջարանց  
դիւցանման ,

Արքայորդին Մեքիստոսին 'ի սերընդոցն  
'ի Տաղեան :

Այլ բոլորիցն Դիոմեդէսն էր քաջն իշ  
խան 'ի զօրուն ,

Սոցա դարձեալ գնային ըզճետ նաւք  
սևաթոյրք թիւ ութսուն :

Որք 'ի յոստանն յայն գեղաչէն 'ի Միւ  
կենաս բնակեալ են ,

Եւ յընչաւէտն 'ի կորընթոս , 'ի կղէով  
նաս բարեչէն .

Եւ բնակաւորքն 'ի յՈրնիաս, յԱրեթիւ  
րէն ցանկալին,

Ի Սիկիոյն, ուր Ադրեստոս թագաւո-  
րեաց զառաջին.

Եւ որք դարձեալ յԻւպերեսին, և 'ի  
բարձուն Գոնեսաս,

Եւ ըզՊեղէն կալեալ էին և շուրջ բնա-  
կեալք յԵգիաս.

Եւ յնդարձակն 'ի յԵղեբէն, և ծովափ-  
նեայս յամենայն,

Իշխէր սոցա հարիւր նաւուք Ագամեմ-  
նոն մեծ արքայն:

Սքմա ամբոխ շատ այրընտիր ըզհետ չո-  
քաւ 'ի քաջաց,

Եւ ինքն ունէր արկեալ զիւրև յակնա-  
խրտիլ պղղընձեաց.

Նազէր չըքով, իբրև վեհ էր ողջ գիւցա-  
զանցն յերախան,

Յաղթ և հարուստ, և զի սաստիկ ածէր  
բերէր նա խուժան:

Որք յահագին լեռնահողով Աակեգեմոն  
բնականան,

Եւ 'ի Փարէն և 'ի Սպարտա, յաղանա-  
չան 'ի Մեսսան.

Եւ որք դարձեալ 'ի վիարելին 'ի յԱւգի-  
աս, 'ի Պրիւսա,

Որք զԱմիւկլաս կալեալ էին, զԵղոս քա-  
ղաք ծովափնեայ.

Որք յԽորհրդոս շուրջանակի , նստեալ  
կային 'ի Նայան ,

Արին 'ի մարտ Մենեղաւոս այն հարա-  
զասն էր իշխան .

Վաթսուն նաւուք , որ վառեցան 'ի զարդ  
'ի զէն առանձին ,

Խաղայր և ինքն 'ի մէջ նոցա յառաջա-  
դէմ 'ի յողին :

Փողէր 'ի մարտ , զի էր նորա անձուկ  
սրտին 'ի վառման ,

Զառևանգեալն հեղինեայ խնդրել ըզ-  
վրէժ հեծութեան :

Եւ որք 'ի Պիւղ էին ընտկեալ 'ի փա-  
րելին Արենա ,

Ի բարեշէնն յայն 'ի յԵպին , և 'ի Թրի-  
ոն հուն Ալփեայ .

Գաղարեւոցն կիւսարսինստեայ 'ւ Ամ-  
փիգենեայ 'ի սահման ,

Եւ որք դարձեալ 'ի Պիտեղսն և 'ի յԵ-  
ղոս , 'ի Տովրայն .

Անդ ուր երբեմն ելին կացին դասք  
Մուսայից վեհագոյն ,

Հանգէպ կրչիւ Թամիւրեսի ընդառա-  
ջեալք թրակացոյն .

Մինչ յԵփաղեայ գայր 'ի տանէն իբա-  
ղացի Եւրիւտին ,

Ի նըլագաց երգոյն իւրոյ առեալ ըզնա  
կաստեցին .

Սա թևակուռ պանծայր տանել ըզյաղ-  
 թու թեան մրցանակ,  
 Թէպէտ Մուսայք կոյսք մազդեղունք,  
 ասէր, առցեն ըզնըւագ:  
 Ցասեան նորա, և զլոյս աչացն և զերգ  
 նորա զարփենին  
 Կապտեն յառնէն, մոռացուցին և զա-  
 ղէբախս կիթառին:  
 Առաջնորդէր սոցա ողջոյն Նեստոր աս-  
 պետ Գերենեան,  
 Եւ զհետ նորա թիւ իննըսուն նաւք գո-  
 դաւորք կարգեցան:  
 Իսկ որք յԱրկադն էին ներքոյ լերին  
 բարձու Կիւղենին,  
 Մերձ ՚ի դամբանըն Եպիւդայ, ուր նա-  
 հատակք նըստէին.  
 Որք և ՚ի Փէնն և յՈրքոմէն խաշնայոլովն  
 ՚ի դադար,  
 Եւ ՚ի Ռիբէն և ՚ի Ստրատին և ՚ի յԵ-  
 նիսպն հողմահար.  
 Եւ ըզՏեգէն կալեալ էին և զփարեւլին  
 Մանտինաս,  
 Եւ որք յայնժամ ՚ի Ստիւմփեղոս բնա-  
 կեալ էին, ՚ի Պարրաս.  
 Իշխէր նոցա Ագապենոր արքայն Ան-  
 կեայ քաջորդին,  
 Որում և նաւք ՚ի թիւ վաթսուն ըզհետ  
 չոքան արքային:

Ի մէն մի նաւ Արկադացւոց ժողովըր-  
 դեան շատ որեար,  
 Անդ ամբարձան վարժք յասպարէս և 'ի  
 մարտին 'ի պայքար .  
 Քանզի նա ինքն Ագամեմոնն արքայն  
 Ատրիդ քաջ արանց,  
 Ածեալ խընամ նոցա զհանդէս տայր քա-  
 ջանխատ շատ նաւաց .  
 Չի քաջասէս հատցեն զուղին զերեք-  
 ալեան ծիրանին,  
 Չի բան վարժից ըզծովայնոյն նոքա յըն-  
 չաց քերէին :  
 Որք 'ի Բուպրաս բնականային և յԵղի-  
 տէն գերուհակ,  
 Եւ որչափ վայր փակեն յիւրեանց 'ի մի-  
 ջոցին լայնարձակ,  
 Հիւրմին, Աղիս, Պետրէ, Ողէն և Միւր-  
 սինոսն այն վերջին,  
 Սոցա ողջոյն քառեակք թըւով պէտք  
 զօրավարք իշխէին :  
 Անձնիւր նոցա 'ի թիւ տասնեակ նաւք  
 արագուհք հետ չոքան,  
 Եւ շատ որեան Եպէացիք 'ի լաստա-  
 փայտան ամբարձան :  
 Ամիխմաքոս և Թաղալիոս ըզխումբ վա-  
 րեն ըզսոցա,  
 Մին էր որդի Ախաատոսին և մին Եւրիւդ  
 Ակտորայ .

Իսկ և այլոց կացեալ 'ի գլուխ Ամարին,  
կեայ քաջորդին,

Ածէր բերէր իշխանութեամբ Տովրէս  
անուն կորովին.

Պողիւքսենոս աստուածանման իշխան  
չորրորդն էր խումբի,

Որդին հօր Ագասթենեայ Աւգիատեան  
արքայի:

Բայց Դուղիքեանց, 'ւ որք յԵփնեան  
նըւիրական 'ի կղզեաց,

Որք հանդիպոյ Եղիզոսին յայնկոյս ծո-  
վուն բընակաց,

Սոցա իշխան էր Փիւղիդեան Մեգաս  
զուգորդն Արեսի,

Ծընաւ ըզսա Փիւղէս ասպեան Արա-  
մազգայ սիրելի.

Փիւղէս հօրէն զըզուեալ երբեմն ել 'ի  
Դուղիք և չըւեաց,

Իսկ անդ Մեգաս թիւ քառասուն 'ի  
սեաւ ածէր 'ի նաւաց:

Եւ Ողիւքսէս ած կեփաղեանց 'ի փա-  
ռաւոր 'ի յազգէն,

Որ ըզներիտ թանձրամայրին և զԽթա-  
կաս մըշակեն.

Եւ որք բնակեալք 'ի Կրոկիւղոն և յա-  
ռապարն յԵգիլպոս,

Եւ որք էին 'ի Զակիւնթէ, և շուրջ սա-  
տեն ըզՍամոս,

Ի նոյն դարձեալ և որք յայնժամ վայրըս կալեալ ցամաքաց,

Եւ բնակաւորք էին տիրեալք 'ի հանդիսոյ սահմանաց :

Իշխէր սոցա Ոգիւսէոս մտօք Ղիայն զուգակիր ,

Բերէր ըզհետ լաստ երկտասան , այտքըն նաւթիւ 'ի կարմիր :

Իսկ Ետողեանց Անդրեմոնեայ որդին իշխան էր թոաս ,

Որք 'ի Պլեւրոն բնականային , և 'ի Պիւղէն , յՈղէնաս .

'Նոյն յապառաժ Վաղիւդոնայն 'ի Քաղկիդաս ծովափնեայ ,

Քանզ' 'ի կենաց զրաւեալ էին որդիք քաջին Ինէեայ :

Առ այս դարձեալ , և սոցուն հայր չէր կենդանի Ինէեաս ,

Եւ վախճանեալ էր ընդ նոսա Պեղէագրոսն այն խարտեաչ .

Ուստի ողջոյն յանձնեալ սրմա , ինքն Ետովքեանց տիրացաւ ,

Եւ արքայիս թիւ քառասուն սեաւ նաւ ըզհետ կարգեցաւ :

Ի՛ր Վրետացոց Իգոմենէս զօրավար քաջն 'ի նիզակ ,

Որք 'ի Վնովսոս և 'ի Գորտիւն յամրապարիսպն են բընակ .

Եւ 'ի Ղիւկաստ սպիտակափառն , և 'ի  
 Լիւկտոն , 'ի Միղատ ,  
 'Նոյն 'ի Փեստոն , 'ի Հրիւտիոն , են այս  
 քաղաքք մարդաշատ :

Եւ որք դարձեալ հարիւրքաղաքն յայն 'ի  
 Կրեատէ նըստէին ,  
 Քաջ արգենընկէցն Իդոմենէս իշխէր նո-  
 ցա առանձին .

'Նոյն Մերիոն , մարդախոշոշն այն Ա-  
 րեսին հաւասար ,  
 Սոցա երկուց միանգամայն սեաւ նաւ  
 ուլթսուն զհետ խաղայր :

'Սա և ինքնին Տլեպողեմոս հրզօրն և մեծ  
 հերակլեան ,  
 Նաւս ինն ածէր 'ի Հոողոսէ սէգ որե-  
 րոյն հոողոսեան :

Որք 'ի Հոողոս բնականային դասք եր-  
 րակի են նոքա ,  
 Ի Լինդն , ասեմ , և յԵղիւստոն և 'ի սպի-  
 տակ Կամերա :

Եւ այս դասուց Տլեպողեմոս այն քա-  
 ջատէզն էր իշխան ,  
 Զոր և ծընաւ Աստիոքէ կորովուլթեանն  
 հերակլեան .

Ըզսա հերակլ ած յԵփիւուայ և 'ի գե-  
 տոյն Սեղինեանց ,  
 Բազում քաղաք աւար հարեալ ըզսա-  
 տանեաց դիւցազանց :

Այլ Տլեպողէմ սընեալ աճեալ 'ի քա-  
ջամուրն 'ի յարկին ,

Յեղակարծումն ըզհօր իւրոյ ըսպան սի-  
րուն ըզքեռին .

Անուն նորա էր Ղիկիւմնոս հինաւուրց  
զարմ Արեսեան ,

Բայց Տլեպողէմ անդէն հասլճեպ նաւս  
իւր կազմեաց ասպատան :

Իբրև խուժան մեծ 'ի նոսա ժողովըր-  
դեան ամբարձաւ ,

Նա ծովագնաց եհատ զանդունդս ել  
տարադէմ և փախեաւ .

Զի սպառնալեաց այլք 'ի յորդուցն էին  
կապեալ բան նրմա ,

Միաբանեալ նա և թուռնք կորովու-  
թեանն հերակլեայ :

Նա թափառեալ հաս 'ի Ռոդոս շատ  
վշտատես 'ի յոգին ,

Ուր և յերրեակ ցեղ բաժանեալ տուն  
բնակութեան արարին .

Եւ սիրեցան յԱրամազդայ , որ դիցն  
իշխէ և մարդկան ,

Եւ անդ ամբաւ ընչեղութիւն տեղաց նո-  
ցա Զըրուանեան :

Սիրևս ինքնին ած նաւս երիս և միա-  
ջափս 'ի Սիմայ ,

Նիրևս որդի Աղլայիսայ և արքային Քա-  
րուպայ .

Սա այս Ներևա եւ յԵղիոն ընդ այլ քա-  
ջացն 'ի հանդէս ,

Յոյժ գեղաւոր քան զամէն Յոյն , թող  
զանարատն Ա.քիլէս .

Այլ ապիկար վատեալ յուժոյ չէր ինչ  
'ի մարտ պիտեան ,

Եւ դուզնաքեայ թըւով որեան ըզհետ  
նորա խմբեցան :

Իսկ բնակեւոցն 'ի Նիւսիրոս , 'ի Կրասաւ  
թոն , 'ի Կասա ,

Ի Կով քաղաքն Եւրիւպիւղեայ եւ 'ի կըղ-  
զիս Կաղիւղեայ ,

Գնդին սոցա քաջն Անտիփոս եւ Փիղիպ-  
պոս են իշխան ,

Ամուք որդւոց թեասաղոսին արքայոր-  
դւոյն հերակլեան :

Դարձեալ եւ այսց երկուց քաջաց հա-  
րազատաց սիրասուն ,

Նաւք դոգաւոր կարգաւ ըզհետ թիւ  
խմբեցան երեսուն :

Ի այց դու բէր ինձ 14 , որ միանգամ են  
Պեղասգեանն 'ի յԱրգոս ,

Եւ որք զԱղոս մըշակէին եւ ըզՏրեքէն եւ  
զԱղոս .

Որք ըզՓիթեա եւ զԵլլադա , ուր գեղա-  
ւորք օթանան ,

Եւ Միւրմիդոնք , հելլենացիք , Ա.քայե-  
ցիք կոչեցան :

Յիսուսն նաւուք էր զօրավար իշխանն նո-  
ցուն Աբիլէս ,

Այլ անդ նոքա զահեղագոչ չառնեն  
մարտին ըզհանդէս .

Զի չէր 'ի մէջ որ ըզնոսա 'ի կարգ ածէր  
ճակատուն .

Քանզի նըստէր քաջ արագոտն վեհն Ա-  
բիլէս 'ի նաւուն :

Յասնոյր քուքայր վասըն Բրիսեան վար-  
սագեղոյ այն կուսին ,

Զոր շատ քրտամբք 'ի Վիւրնեսոսայ ա-  
ւետալ էր նա ձօն անձին ,

Աւար հարեալ ըզՎիւրնեսսէ և ըզպա-  
տուար Թեբայի ,

Վանեալ զՄիւնէտ և զԵպիստորոփ զա-  
հեղատէգսն 'ի գոռի ,

Որք Եւենեայ էին որդիք Սեղեպիդեան  
արքային .

Արդ սա վասն այն նըստէր ցասնոյր , այլ  
փոյթ ունէր կալ յոտին :

Որք ունէին ըզՓիւղակէ , ըզՓիւրասոն  
ծաղկաւէտ ,

ԸզԴեմետրեայ ձօնեալ ածուն , և զԻ-  
տոյնէ խաշնաւէտ .

ԸզՊետեղոսն ըզխոտաշատ , և զԱնտրո-  
նին ծովափնեայ ,

Յորչափ ապրէր Պրովտեսիլաս , արին հո-  
վուէր ըզնոսա .

Սակայն յայնժամ սեաւ հողն ըզնա էր  
պարագրեալ 'ի ծոցին ,

Եւ 'ի փիւղակ ցըտեալ այտիւք հեծէր  
նորա ամուսին .

Տունըն մընաց թերակատար , սպանեալ  
յառնէն Դարդանեան ,

Երբ 'ի նաւէն վաղեաց կանուխ քան զըն-  
կերացն ըզխուժան :

Այլ անիշխան չէին սոքա , սակայն նախ-  
նոյն տենչային ,

Եւ էր նոցա հովիւն յայնժամ Պոարկ  
զուգորդն Արեսին :

Էր սա որդի խաշնահարուստ փիւղակի-  
դեան Իսկիղեայ ,

Բուն հարազատ կրսեր տիօք Պրովտեսի-  
լին մեծանձնեայ :

Էր Պրովտեսիլ աւագ դիւցազն երեսա-  
ւոր 'ի զօրուն ,

Սակայն յիշխան զօրավարէ չէր զօրն ան-  
բաժ 'ի ժամուն .

Բայց անձկայրեացք զլւրեանց նախնի  
ըզկորովին խնդրէին ,

Սըմա դարձեալ սեաւ նաւք ըզհետ թիւ-  
քառասուն խաղային :

Իսկ որ բընակքն են 'ի Փերաս Բիբեան  
լըճին առընթեր ,

'նոյն 'ի Բիբէ , 'ի քաջաչէնն 'ի Յավուղոն ,  
'ի Քլաբեր .

Իշխէր սոցա , ածեալ ընդ իւր նաւաց  
հանդէս մետասան ,

Քաջ զօրավարն այն Եւմեղոս սիրուն որ  
գին Ագմեոեան :

ՅԱգմեոոսէն ծընաւ ըզսա վէհ կանա  
նւոյն Աղկեսոսի ,

Որ 'ի դատերս ունէր Պեղեայ տիպ վե  
հագոյն սլատկերի :

Որք 'ի Մեդոն նատեալ էին , և 'ի սահման  
Թաւմակեայ ,

Եւ զՄեղիբէ կալեալ էին և զառապարս  
Ողղոմնեայ ,

Իշխէր սոցա Փիլոկոտեոէս քաջ կորովին  
աղեղանց ,

Առեալ ընդ իւր յայն արշաւան բերէր  
նաւաց թիւ եօթանց :

Ի մէն մի նաւս քաջ թիալարք յիսուն  
թըւով ամբարձան ,

Քաջաղեղունք , գիպողաձիգք , 'ի մարտ  
կրուուել գոուութեան :

Այլ նա անկեալ կայր և տասպէր 'ի ցաւ  
ջերեալ 'ի կղզին ,

Լեմնոս 'ի մեծն , ուր Աքայեանք լըքին  
ըզնա առանձին :

Քանզի նեխեալ տանջէր խայթիւ զոր  
օձն եհար մահաբեր ,

Անկեալ նըստէր անդ ցաւագին և յԱ  
ղիոն փափաքէր :

Այլ Փիլոկտէտ ունէր փուլթով յուշ  
գալ 'ի նաւս Հելլենաց ,

Այս իշխանին տենչայր զօր իւր թէպէտ  
զուրկ չէր 'ի պետաց .

Զի աղջկորդին Ուղեայ Մեդոն ըզջօրն  
'ի մարտ յարդարէր ,

Այն զոր Ռենէ ծընաւ յՈւղեայ , որ քա  
ղաքաց քանդիչն էր :

Բայց բնակաւորքն յառապարուան յայն  
Իթովմէն , 'ի Տրիկաս ,

Եւ որք 'ի շէնն Եւրիտոսի իբաղացւոյն  
յիբաղաս .

Ամուք որդիք Ասկղեպիսին նոցա կացին  
զօրավար

Պոգաղիրոս և Մաքսոն բըժիշիք մար  
թունք և ճարտար :

Այս իշխանաց նաւք գոգաւորք թիւ ե  
րեսուն 'ի կարգին ,

Ըզճէտ ելեալ յայն արշաւան 'ի չու ան  
կեալ խաղային :

Եւ զորք կալեալ են զՈրմենոն և որք  
զաղբիւրն Հիւպերեան ,

Եւ որք զԱստէր , և զՏիտանայն սպիտա  
կափառ զարտեան ,

Եւրիւպիւղոս Եւեմոնեայ իշխէր որդին  
քաջաբուն ,

Որում ըզճէտ միանգամայն նաւք սեւաւք  
գնային քառասուն :

Որք ՚ի Գիւրտոնն բնակեալ էին , և ունէին զԱրգիսաս ,

Յոստան սպիտակ Ողովտոնի և ՚ի յՈրմէս , յԻզովնաս .

Գոռն այն մարտիկ Պողիւպիտէս այս խուժանինն էր արքայ ,

էր սա որդի Պիրիթոսի ծնեւոյն յանմահն ՚ի Դիայ :

Ի Պիրիթոսեայ ծընաւ ըզսա Հիպպոդամէն նազելի ,

Յորում աւուր հան նա ըզվրէժ յուշկասարկաց Թաւարծի .

Եհան վարեաց յերկրէն Պեղեայ , և սահմանեաց յԵթիկէս ,

Չէր միայնակ , էր ընդ նմա զարմն Արեսին Ղէոնտէս :

Սա կենիդեան եկաց զաւակ կորոնոսի դիւցազինն .

Սոցա ըզհետ յարշաւանին նաւք քառասուն խաղային :

Եւ զԳոռնէոս նաւս ՚ի կիւփեայ քսան և երկու առ եբեր ,

Որում Ենեանց և Պերեբեանց ազգն մարտիկ հետուէր :

Որք գաւառին կարածըմեռն այն Գուղոնեայ բընակքն են ,

Եւ որք զերկիր առ բերկրարար Տիտարիսոնն արօրենն .

Որ 'ի Պենոնն խաղայ ձգէ զիւր գեղահոսն  
ըզվըտակ ,

Եւ Պենոնին յարծաթ յորձանան յանձըն  
չառնու գոլ խառնակ .

Այլ իբրև ձէթ յերես նորա անդ ծա-  
ծանեալ կայ 'ի վեր 15 ,

Զի է Ստիւգեան ջրոյն վըտակ , ահեղ  
երգման դառնաբեր 16 :

Այլ Մագնետեանց Պրոթոս որդի Տեն-  
դրիդոնին էր իշխան ,

Որ բնակէին Պենեայ , Պեղեայ տերևա-  
խիտն 'ի սահման .

Սոցա արագն այն Պրոթոս ըզգունդ վա-  
րէր ըզզօրուն ,

Եւ զհետ սորա նաւ սևաթոյր 'ի թիւ  
խաղայր քառասուն :

Սոքա իշխանք պետք զօրավարք էին քա-  
ջացն հելէնաց ,

Օն արդ և զայն ինձ գու , Մուսա , 'ի քոց  
ասա նըւագաց :

Ո՞րք յարանց և նըժուգաց էր ուժաւոր  
աննրման ,

Որք Ատրիդեանց յարեան յայնժամ գնա-  
ցին ըզհետ միաբան :

Նըժոյգք մատակքն են Փերետեան ա-  
րագոտինք հաստաբուն ,

Զորս Եւմեղոս ածէր 'ի մարտ , օդապա-  
րիկք զետ թըուչուն ,

Ընտիրք առոյգք 'ի նոյն բաշեց , 'ի նոյն  
դարձեալ հասակաց ,

Իբրու հիւսանց չափեալ լարիւ 'ի նոյն  
ճըշգրիտ գաւակաց .

Ձորս Աստղոն արծաթաղեղն եբոյծ Պե-  
րայ 'ի վայրին ,

Մատակք ամուլք , ահեղք բերուլք զահ և  
խօշիւն ըզմարտին :

Իսկ քաջ յարանց էր Տեղամոն Այաս  
հուժկուն սոսկապէս ,

Յորչափ յիւրում քուքայր ցասման դիւ-  
ցազանց քաջն Աքիլէս .

Ձի սա հուժկու անզուգական գոռայր  
յայնժամ և սիգայր ,

Նոյն և բարձողքն այն քաջաղին զոյգ  
նրժուգաց օդապար :

Այլ նա 'ի նաւս իւր ծովագնաց յողայր  
անգործ և անգոյր ,

Եւ մեծ հովուին Ագամեմնեայ ոխայր  
ընդդէմ և ցասնոյր :

Նա և նորա զափամբ ծովուն զբօսնոյր  
խուժանն 'ի սահրիճ ,

Եւ սփոփութիւն նոցա մականն 'ւ աղե-  
ղն տայր լայնալիճ :

Անդ և մէն մի քաջ երիվարք կառաց ըն-  
թեր կան նոցուն ,

Եւ դափր հատեալ , ներքիւն , նեխուր  
բոյս ուտէին ճախնասուն :

Այլ քաջամուր կառք գեղեցիկ պե-  
տաց նոցայն զօրավար ,  
Կարգեալ կային ամրածածուկք 'ի խո-  
րանացն 'ի դադար :

Նոքա իւրեանց քաջ դիւցազին յանձուկ  
հարեալք և 'ի խանդ ,

Այնպէս անմարտք, թափառականք գնայ-  
ին ընդ զօրն աստ և անդ :

Եւ խաղայր զօրն իբրու եթէ զերկիրն  
ողջոյն հուր լափէր ,

հեծէր և հողն , իբրու այն թէ ցասեալ  
Դիոս շանթաբեր .

Երբ ըզՏիւփեալ գանէ զերկիր նա յԱ-  
րիմեանց սահմանին ,

Ուր օթանալ ըզՏիւփովեայ 17 ասէն մահ-  
ճաց զանկողին .

Հանգոյն և զօր խաղայր դոփէր , և հողն  
հեծէր մեծապէս ,

Երբ ըզգաշտին արշաւասոյր հատանէին  
զասպարէս :

Այլ Տրոյացոց հրեշտակն հիրիկ ար-  
փայագնացն հասանէր ,

Յասպարազէնն Արամազդայ համբաւ ա-  
ծեալ գուժաբեր :

Նոքա յատեան Պրիամոսին կային առ-  
սեամբս գաւթաց ,

Ողջ համախումբ պարք պատանեաց ,  
դայք ալևոր ծերունեաց :

Թըռեալ Հիրիկ և մերձ կացեալ ձայն  
բարբառէր առ նոսա ,

Ըզձայնն 'ի ձայն ճշգրտեցոյց Պրիամո-  
սեան Պողիտեայ 18 .

Սա Տրոյացւոց դէտ կայր արթուն յա-  
րագ 'ի յոտն ապաստան ,

Եսիւա ծերոյն 'ի դամբանին նսաէր 'ի  
բունն արտեան 19 .

Կայր և դիտէր, զի խումբս առեալ խու-  
ժեն Հելլենք 'ի նաւաց ,

Այս Պողիտեայ զուգաձայնեալ եկաց  
Հիրիկ և կարգաց :

“Ո՛վ ծերունիդ , քեզ անպայման զը-  
րոյց անգուլ հեշտանայ ,

Չես յանդորրու , այլ անհրաժեշտ քեզ  
մարտ առ դուրս հասեալ կայ :

Բա՛ շատ նըւագ 'ի շատ մրցանս ես խառ-  
նեցայ ախոյեան ,

Այլ ոչ այսպէս և ոչ այսչափ տեսի եր-  
բէք ես խուժան .

Ձի աւազոց համբուն գունակ կամ սա-  
ղարթոց անհամար ,

Դիմեալք 'ի մարտ գան աւագիկ , գունդ  
գունդ խաղան տարմաբար :

Մարտ ընդ ոստանըդ յարդարել քաջք  
են քաջաց զերալիդ ,

Այլ քեզ , հեկոոր , խորհուրդ ազդեմ  
գործ մի գործել գեղեցիկ .

Ո՛չ ահա շատք գոն Պրիամնն նիզակա-  
կիցք քաղաքի ,

Այլալէզուք , այլաբարբառք , յազանց  
խմբեալ բիւրազքի ,

Թո՛ղ այր ուրոյն տացէ հրաման , որոց  
ինքնին իշխանն է ,

Եւ իւրայոց կացեալ 'ի գլուխ քաղաքա-  
ցեաց կարգ տացէ " :

**Լ**ըւաւ Հեկտոր ըզՆիցուհւոյն ուշիմ  
ծանեաւ ըզպատգամ ,

Լոյծ նա զատեանն , խրախոյս զօրուն  
ձայն ետ , 'ի զէն փոխեցան :

Բացան քաջ քաջ գրունք ամենայն , ճեպ  
ետ 'ի դուրս ազգ ամբաւ ,

Խաղան հետիք և այրուձի , խօշիւն բոմ-  
բիւն մեծ հատաւ :

Բըլուր անդէն գոյ բարձրաբերձ 'ի հան-  
դիսոյ քաղաքի ,

Ազատ 'ի դիւրն , և դիւրահուպ է նա  
աստի և անտի 20 .

Բըրոյն այնմիկ կանացածինք անուն կար-  
դան Բատիա ,

Դասք անմահից շիրիմ կոչէն զայն արա-  
գուն Միւրինեայ 21 :

Անդ լաստեցաւ Տրոյեանց ճակատ և  
համհարզիցըն ճամբար ,

Եւ էր Հեկտոր մեծն և ահեղ Տրուադա-  
ցոց զօրավար .

Ճեա Պրիամուն , որում ըզհետ և շատ  
որեան կորովեաց

Ի զէն 'ի զարդ քաջ վառեցան , 'ի տէգ  
նէրհունք նիզակաց :

Իսկ զորավար հրամանատար իշխան ազ  
գին Դարդանայ ,

Արձանացաւ քաջն Ենէաս մեծին զա  
ւակ Անքիսեայ .

Զայս բառացին 'ի յԱնքիսեայ Ասողիկ  
ծընաւ դիցուհին ,

Ընդ մահացուին 'ի յափափայսն Իգեայ  
անկեալ անմահին :

Ընդ Ենէայ որդիքն ամուք Անտենորայ  
խմբեցան ,

Արքիղոբոս և Ակամաս վարժք 'ի մրցմունա  
ամենայն :

Իայց որք առ ոտն վերջին Իգեայ են  
բնակաւորք 'ի Զելաս ,

Ճոխք Տրոյացիք ըզսևորակ ջուր ըմբէին  
զԵսիսպաս .

Սոցա իշխան էր Պանդարոս քաջազն որ  
գին Լիւկոնեայ ,

Ում և ինքնին զաղեղն ըզհաստ ետ Ապո  
ղոն ձօն նըմա :

Որք յԱդրեստէ են բնակաւորք և զԱ  
սեսեայ շէնն ունին ,

Եւ զՊիտէաս և ըզբարձունս ունին Տե  
րեայ ըզլերին ,

Սոցա Ամբոս կտաւապատեանն և Ագ-  
րեստոս էր իշխան ,

Սոքա որդիք խորհրդազգացն են Մե-  
րոպայ Պերկոսեան :

Զի սա բնաւից էր վեհ ներկուռ գուշա-  
կութեան արուեստին ,

Եւ ոչ թողոյր միտլ որդւոցն 'ի մարդա-  
խանձ 'ի մարտին .

Բայց անաստեալ նոքա ծնողին 'ի վեգ-  
ելին ընդ քաջաց ,

Զի օրահասն ած ըզնոսա մատնել մա-  
հուն սևազգեաց :

ՄԵՆՈՐԷ բնակեն 'ի Պերկովտէս և 'ի սահ-  
ման 'ի Պրակտին ,

Եւ վեհ զԱրիսբն , և զԱբիւղէ , ըզՍեստ  
կալեալ ունէին ,

Սոցա որդին Հիւրտակեսի արձանացաւ  
զօրավար ,

Որում անուն էր Ասիոս իշխան արանց  
քաջափառ .

Ի յԱրիսբայ բարձեալ բերեն զայս Ա-  
սիոս Հիւրտակեան

Հրաշունչ նրժոյգք սոսկավիթիաբք առ  
'ի գետոյն Սեղդենեան :

Հիպպոթոոս զահեղատէգ զազգըն փո-  
ղէր Պեղասոգեայ ,

Այն որք երկրին են բնակաւորք արգա-  
սաւոր Լարիսսայ .

Սոցա իշխան էր Հիպսոթոս և Պիւղոս  
ճեան Արեսեան ,

Որդէք կրկին Լեթէոսի Պեղասպոսին  
Տեւտամեան :

Բզթրակացիսն ած Ակամաս և քաջ  
դիւցազն այն Պիրոս ,

Որչափ որեար փակէ յինքեան սրավար  
Հեղեան այն Պոնտոս :

Իսկ Եւփեմոս էր զօրավար Կիկոն ազգին  
սլաքաւոր ,

Քաջին Կեդեան Տերիզենեայ թուրն  
դիւցազն և հրգօր :

Օ ազգ Պէոնեանց կորովաղէզն ածէր  
բերէր Պիւրեքմոս ,

Ի տար երկրէն Ասիւդոնի յԱքսիոսէն  
յորդահոս .

Է Աքսիոս միանգամայն գետ վըտակօք  
գեղանի ,

Յորմէ ՚ի դաշտ ականակիտ ջուր բարե-  
համ ծաւալի :

ԲզՊափղագոնս ածեալ բերէր լանջ  
թաւամազ Պիւղեմին ,

Ի յԵնեատեանց, ուստի ջորեացըն վայրե-  
նեաց ազգք սերին :

Որք ՚ի Կիւտոր բնականային , նոյն և  
յերկիր Սեսամայ ,

Եւ հոյակապ նստին ՚ի տունս շուրջ ըզ-  
գետով Պարթենեայ :

Եւ որք դարձեալ 'ի Քրոմնիա և յԵ-  
գեաղին 'ի սահման ,

Ի նոյն կալեալ ունին նոքա և ըզբար-  
ձունս Երիւթնեան :

Ղըղզոնեանց իշխեն Ոգոս և Եսիատրոփ  
'ի կարգի ,

Լեալ տարագնացք 'ի յԱղիւբեայ , ուս-  
տի արծաթ կրղկրղի :

Միւսեանց Քրոմիս , և հաւահմայն Եւ-  
նոմիոս էր իշխան ,

Այլ հրմայիւբն ոչ ապրեցաւ նա յօրհա-  
սէն դառնութեան :

Յարագոտին 'ի բուռն անկաւ Աբիլլե-  
սին առ գետով ,

Ուր ըզՏրոյեանս ընդ համհարզից տա-  
պաստ ձըգէր յարեանց ծով :

Ղզփուիւգացիս ածէր Փորկիւս և Ասքա-  
նոս գիւցանման ,

Ի յԱսքանեայ 'ի զէն վառեալք , 'ի մարտ  
գոռալ քաջութեան :

Այլ Մէոնեանց Մեսթղէս , Անտիփ իշ-  
խանք 'ի գլուխ կարգեցան ,

Որդեք Պիւզմեայ , ոյց վերբերիչ ծընող  
ճահիճն էր Գիւգեան :

Սոքա իշխանք ածեալ բերեն և զազգ այ-  
լոց Մէոնեանց ,

Որ առ ոտամբն հրմողեայ անդ սերե-  
ցան յազգ իւրեանց :

Եւ ամբարձաւ Նաստէս Կարեանց կոր-  
ճալեղուաց սկեռ ազգին ,  
Կան 'ի Միղէդ , և Փըթիրեանց բազմա-  
սաղարթն 'ի լերին .

Յառուս Մանդրեայ , և Միւկաղեայ  
կան բարձրաբերձն 'ի կատար ,  
Ոյց և Նաստէս և Ամփիմաք կացին յայն-  
ժամ զօրավար :

Եւ այս ամոլք եղբարք Նաստէս , և ընդ  
նրմին Ամփիմաք ,  
Նոմիոնին են հոյակապ ծընունդք կայ-  
տառք և աւագ :

Այլ Ամփիմաք խաղայր 'ի մարտ ոսկե-  
զարդեալ աղջկօրէն ,  
Անմիտ , նրմա ոսկին պահպան չեղև 'ի  
դառն օրհասէն .

Նա առ գետովն 'ի բուռն եկեալ արագ-  
ոտինն Աքիլէայ ,

Անկաւ տասպաստ , և գոռն Աքիլլ զոս-  
կին կապտեաց ըզնորա :

Իսկ Սարպեգոն Նիւկեանց արքայ , 'ի  
նոյն Գլաւկոս քաջարին

Ի յորձանուտն 'ի Քսանթոսէ , 'ի Նիւկիոյ  
խաղացին :

# ԵՂՒԼԱԿԱՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Գ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի խառնեւ անդ բանակացն Պարիս ձայն կարգայ մենամարտութեան, տեսեալ ախոյեան զՄենեղաւոս, խոյս տայ. կըշտամբի 'ի Հեկտորայ, և յանձն առնու մենամարտիլ: Հեղինէ ազգեալ 'ի Հիրիկէ հրեշտակէ, ելանէ 'ի բուրգն Տրոյիոյ կալ 'ի զնին մարտի: Կենակից խօսք նորա ընդ Պրիամու: Պատրաստին 'ի մենամարտութիւն Պարիս և Մենեղաւոս, հանդերձ երգմնակուռ դաշամբ: Նկարագիր մենամարտի: ԶՊարիս յափշտակէ Աստղիկ, և թափէ 'ի վտանդէ մահուն, և ածէ առ Հեղինէ: Խօսք Հեղինեայ և Պարիսի: Ագամեմնոն իբրև յաղթող 'ի մենամարտի հրատարակէ զՄենեղաւոս, և պահանջէ զկատարումն դաշին:

Տեսարանն է կէս մի հանդէս պատուարին Տրոյիոյ, և կէս մի 'ի ներքս 'ի քաղաքին:



## ԵՂՒԼԱԿԱՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Գ .

ԿԱՐԳԼ ճակատ կրկին զօրաց ետուն սա-  
ղարբ բանակին,

Եւ Տրոյացիք հանգոյն հաւուց կարկաչե-  
լով խաղային .

Որպէս ընդ օդ ամբաւ կանչին հարեալ  
խորդից փաղանդաց,

Յորժամ փախչին 'ի ձմերայնոյն տեղատա-  
րափ անձրևաց .

Կառաջ բարձեալ թևեն շողան ջուրց 'ի  
վերայ Ովկեանուն,

Եւ պատուհաս աղղին թղկաց 22 զեր-  
կունս ածեն ըզմահուն .

- Քանզի նոքա երամ երամ բանակ հա-  
րեալք ընդ եթեր,  
Ճակատ 'ի ճախր արանց թղկաց ձայնեն  
գուժան մահաբեր:
- Բայց անշըշունջք ասպարիսեն Յոյնք փո-  
րատողք գոռութեանց,  
Անձուկ բերեալ իբր համհարզից վիգ զօ-  
րավիգ տալ միմեանց:
- Որպէս հարաւ մէգ մառախուղ սրփուէ  
լերին յարտեան,  
Տիրին հովիւք, իբրև յանլոյս խաւար պա-  
տի ամենայն.
- Այլ գաղտաշուրջ գողքըն խնդան քան  
'ի խաւար գիշերոյն,  
Զի չափ միայն քարընկէցիւ է անդ աչաց  
տեսութիւն:
- Նոյն ընդ ոտիւք մրրիկ փոշոյն 'ի բալա-  
ձիգս ամպանայր,  
Երբ գունդագունդ արշաւակի ընդ գաշտ  
խաղան լայնատարր:
- Եւ ինչ ճակատք միմեանց հանդէպ կա-  
ցին կըշիւ նըպատակ,  
Անգուստ Պարիս ել գեղասպանձն 'ի Տրոյ.  
ացւոց նահատակ.
- Նա զընձենին արկեալ զուսովն և ըղկո-  
րովս աղեղանց,  
Շողայր 'ի սուր, ճօճէր կրկին տէգ սայ-  
րասուր նիզակաց:

Քաջաց քաջաց Արդոսացւոց ձայն արձա-  
 կէր յասպարէս,  
 Հապա 'ի վէգ գալ անվէհեր մենամար-  
 տիկն 'ի հանդէս:  
 Իբրև անդուստ գէտակն 'ի վեր Մենե-  
 ղաւոսն ետես քաջ,  
 Զի մեծաբայլ այրն 'ի զօրուէն գայր դի-  
 մագրաւ քաջալանջ,  
 Զետ սովատանջ խայտաց առիւծ, որս  
 մի գըտեալ յաղթ մարմին,  
 Կամ զեղջերուին եղջերաւոր, և կամ զայ-  
 ծուն վայրենին.  
 Գօշէ գազանն, ոչ ակնածէ թէպէտ բա-  
 րակք քաջոտինք  
 Ըզհետ վագեալ վանեն ըղնա, թէպէտ  
 առոյգ պատանիք.  
 Այսպէս խնգաց Մենեղաւոս տեսեալ  
 զՊարիս գեղանին,  
 Եւ անպատիր ասէր առնուլ ըզվրէժ մե-  
 ղաց պագշոտին:  
 Հա՛ ճեպ ընգ ճեպ զինու զարդու պար-  
 սեաց 'ի վայր 'ի կառաց,  
 Եւ գեղասպանծն ախոյենին վայլակնա-  
 ցաւ նա աչաց:  
 Ետես Պարիս զայն նահատակ, սիրտըն  
 վազեաց և դողայր,  
 Յօրահասէն խոյս տայր, զօղէր նիզակակ-  
 ցացն 'ի լաշկար:

Որպէս յորժամ՝ի լեռնավայրս ՚ի Թանձ  
րախիտ յանտառին

Խուճապի մարդ, փախուստ խնդրէ, վի  
շապ տեսեալ ահագին .

Գառնայ ընդ կրուկ, բայց ՚ի ներքոյ ան  
դամք սարսեն և դողան ,

Եւ այտք և դէմք սրկուցելոյն գոյն հա  
տանին ՚ի դալկան ,

Կման յայնժամ Աղէքսանդրոս այն դե  
ղաւոր նըշաւակ ,

Յարւոյն դիմաց սրկեաւ, ղողէր գոռոզ  
ճրոյեանցն ՚ի բանակ :

Նեկտոր ՚ի նա յառեալ խեթի սարսեաց  
սաստիկ և լուտաց .

« Աւաղ Պարիս, հէգ դաւաճան, կնամուլ,  
դիմօք գեղապանծ ,

Յանկարծ մեռեալ էր.քո անկին և կամ  
բընաւ լեալ անծին .

Այդ էր իմ իղձն, և քեզ ինքնին այդ էր  
լաւաց ՚ի մասին :

Գու արդ խաղանք և մատընցոյց քրքանք  
ընդ զօրն ամենայն ,

Ահա զխորդ խընծղան հեւէնք , քանի  
անդուլ քրքընջան :

Եղին ըզքեզ ախոյեան քաջ, տեսեալըզ  
քեզ գեղանի ,

Այլ չիք ՚ի բուն, չիք քեզ կորով, չիք  
սնդութիւն ՚ի սրաի :

Հիմ այդպիսիդ նաւ լաստեցեր ծովայա-  
ծեալ ընդ ալիս,

Հիմ քեզ զովոյս հոլոնեցեր ընկերչակել  
'ի չարիս :

Մտեալ դու խառն ընդ այլազգիս, ըզ-  
կինն հաներ գեղապանծ,

Յերկրէն Ապեայ առևանգեալ ըզնուն ա-  
րանց քաջազանց .

Հօր քում զըմբաղ, և քաղաքին, և քում  
ազգին հասարակ,

Երգ և քընար քոց թշնամեաց, և քում  
անձին նըշաւակ :

Ձի դու վայր մի ո՛չ ժուժացեր Մենե-  
ղաւեայ դու մարտկին,

Գիտել քաջիկ, զո՞յր դու կապտեալ կա-  
լար զառոյգն ամուսին :

Ձինչ քեզ կիթառդ օգտէ այր դու,  
զինչ Աստղիկան ձիր և բաստ,

Ձինչ խոսուպիքդ և զինչ քո գեղդ, երբ  
փոշոտիս գիտասպաստ :

Այլ Տրոյացիք վատք են արդեօք . թէ ոչ,  
անշուշտ քեզ այժմէն

Ընդ այդ մեղացդ 'ի սլատմուճան 23 ձորձ  
մի տային քարեղէն » :

Օ իս դու, Հեկտոր, արդար սար-  
սես, անդէն Պարիս ձայն կրկնեաց,

Այլ սիրտ է քո ցանդ աննըկուն իբրու  
երկաթ տասպարաց .

Երբ 'ի հեծան ուժէ զտապարն յաղթա-  
բազուկ այր ճարտար,

Եւ պատառէ ըզնաւափայտն, և ոյժն ա-  
ճէ յորդաբար.

Հանգոյն և քեզ կուռ աննըկուն 'ի լանջ-  
ողիք հաստեցան,

Այլ մի պարսեր ըզձօն սիրուն զոսկեղէ-  
նիկն Աստղկան.

Չեն անաւագ տուրք աստուածոց, ձիր-  
քըն և ձօնքն են արգոյք,

Տան ճոխաբար, երբ և կամին, ոչ երբ  
մարդկան են հաճոյք:

Բայց թէ կամիս կալ 'ի զընին իմ մենա-  
մարտ արուժեան,

Աղէ Տրոյեանք, աղէ և Յոյնք առցեն աս-  
տէն բազմական.

Չիս մենամարտ տուք 'ի ճակատ Մենե-  
ղաւեայ քաջաղին,

Վասն հեղինեայ և ողջ գանձուց մարտ  
ոգորել առանձին:

Ո՛րք 'ի մէնջ անաւարտելի կոթողեսցէ ա-  
խոյան,

Ըզկինն առեալ տարցի 'ի տուն, լիցի գան-  
ձուն գանձապան:

Այլք բարեկամք կացցեն, կուեալք յան-  
սուտ յաշտից 'ի յերգմանց,

Տրոյեանք յիւրեանց հողն յարգաւանդ,  
Յոյնք յԱրգոս վայր նըժուգաց.

Դարձցին ողջամբ յԱքայիա, ուր գեղա-  
ւորքն օթանան ։

Նա զայս ասաց, լըւաւ ըզբանն խնդաց  
Հեկտոր անպայման ։

Արձանացաւ, խաղաց յառաջ, կալաւ ըզ-  
մէջ նիզակին,

Նահանջ Տրոյեանց արկ փաղանգաց, և  
համագունդ լըռեցին ։

Բայց կորովքն հաստ աղէղանց Աքայե-  
ցիք նետահար,

Նըպատակեալ ձգեն քաջն փըքին և քար  
սպարսաքար ։

Մինչև անդուստ Ագամեմնոն արքայն  
ձայնեաց բարձրագոչ,

« Դուլ արարէք, քաջք հեռաձիգք, մի  
լըք, հելլէնք, խուժ և խոչ ։

Բան բարբառել խնդրէ անշուշտ մեզ այս  
Հեկտոր քաջազէն ։

Ասաց արքայն, արագ արագ տեղի ետուն  
ի մարտէն ։

Հեկտոր ՚ի մէջ արձանացաւ, ձայն ետ,  
ասէ, « Ո՛ւնկըն դիք

Առ հասարակ Տրոյեանց փաղանգք, և  
դուք վառեալքդ Աքեցիք ։

Չայն մեզ կարգայ Աղէքսանդրոս, յոյր  
սակս է վէգ սայքարին,

Զէն և ըզգարդ, Տրոյեանց Յունաց ող-  
ջոյն դընել ՚ի գետին ։

Իսկ նահատակ մենամարտիկ Մենեղա-  
ւեայ ընդ քաջին,

Վասն Հեղինեայ և ողջ գանձուն ինքըն  
ելցէ առանձին.

Ո՛ր նահատակ յաղթեալ մարտին կոթո-  
ղեսցէ ախոյեան,

Առցէ ըզկին տարցի ՚ի տուն, գանձուն  
լիցի գանձապան:

Այլք բարեկամք կացցեն, կուեալք ան-  
խաբ յաշտիւ ՚ի յերդմանց”.

Ասաց Հեկտոր, բայց լռուութիւն տիրեաց  
ողջոյն բանակաց:

Եւ ոչ և քաջն եկաց լռիկ Մենեղաւոս  
գոռ մարտիկ,

Այլ սրրտառուչ ձայն զայս կարգաց,  
“ Զարդիս և ինձ ո՛ւնկըն դէք.

Զիմ առաջին, ո՛հ, այս արկածք առեալ  
զոգիս իմ կըտտեն,

Համայն այնպէս կրկին ազանց հաշտ գոլ  
անձուկ մեծ բերեմ:

Արդէն ո՛վ քաջք վասն իմ բանին կրեցէք  
տաժանս անսահման,

Բայց առաջին Աղէքսանդրոս եկաց բա-  
նին դաւաճան:

Արդ ում յերկուցս արդ դարանի օրհաս  
մահուն և ժանիք,

Նա դիտապաստ, գուք հաշտք մեկնեալք  
յանդորր ելէք քաջողջիկ:

Ածէք գառինս, մին լուսակիզն և մին իցէ  
սևագոյն,

Ըզմին 'ի յաշտ հանէք Երկրի, ըզմեան 'ի  
զոհ տոէք Արփւոյն.

Իսկ մէք ինքնին Արամազդայ զերրորդն  
յազեմք 'ի գառանց,

Բայց և զոհին կացցէ ընթեր Պրիամոսին  
շուք փառաց.

Նա երդմնակուռ յանդամաթիւս լիցի  
սպանդիցն 'ի զոհիս,

Ձի ուխտանենդ հաւատադրուժ գիտեմք  
նորա մէք զորդիս :

Մի յաւակնեալ ոք քակեսցէ զԱրամազ  
դայ զուխտ դաշին,

Ձի սպտանեաց միոք յեղյեղուկ ցանդ  
հողմավար տատանին.

Իսկ ուր ծեր կայ, երկուց կողմանցն ելք  
գեղեցիկ ընթանան,

Ձի ծերունիք տեսին զանցեալն և տեսա  
նեն զապագայն " :

Նա զայս ասաց, խնդան Տրոյեանք, խըն  
դան և ողջ Աքեցիք,

Գուլ լինելոյ արեանց մարտին յոյս մի  
կալան գեղեցիկ :

Նահանջ կառաց, երիվարաց, տըւեալ  
կարգեն շար 'ի շար,

Աշտանակեալքն իջին 'ի վայր, և փոխե  
ցան 'ի դադար :

Չերծուն ըզզէնս և մօտ 'ի մօտ եղին յեր  
կիր կարգապէս,

Եւ դուզնաբեայ էր ճակատուցն 'ի մէջ  
երկուց ասպարէս:

Յայնժամ հեկտոր յօստանըն մեծ ճեպ  
Քարողիցն ետ կրկին

Ածել գառինս, և Պրիամուն գոլ հրաւի-  
րակ արքային:

Անդուստ և ձայն Ագամեմնոն տայր Տաւ  
Թիւբեայ փութապէս,

Ուլոյ լինել ցուկանաւուցն Աքայեցւոց  
'ի հանդէս.

Հրտման կարգաց, զի անդանդաղ ածցէ  
ըզգառն յազէլին,

Փութաց չըքով Տաւթիւբիոս 'ի ձայն դից-  
ազն արքային:

Թուուցեալ հիրիկ առ հեղինէ լուսա-  
ծրղին գայր բանբեր,

Ըզգքնաղին Լաւոդիկեայ տալին բերեալ  
ըզպատկեր.

Ըզսա որդին Անտենորայ մեծն Եղիկոն  
կին էած,

էր հրաշագեղ Լաւոդիկէ 'ի Պրիամուն  
դստերաց:

Եգիտ հիրիկ ըզհեղինէ, ոստայն նիտայր  
յիւր տաճար,

Ոստայնն էր մեծ և ձիւնափայլ և կրկնա-  
վերտ լայնատարր.

Հենոյր յոստայնն անկեալ կիտուած դի-  
 մակ դիմակ մրցանաց  
 Տրովադացւոց քաջաձիոց և զրահավառ  
 Հեւեհնաց .  
 Ձոր մրցէին վասն նորա նոքա յարեանց  
 ճապաղիս ,  
 Որում և մերձ կացեալ ձայն ետ արփա-  
 թևեալն իրիս :  
 « Արի եկ հարսն , եկ նազելիդ անկարծ  
 հրաշից 'ի զընին ,  
 Գոռ Տրոյացւոց , քաջաց Յուհաց յան-  
 կարծադէս հանգիսին .  
 Որք ահ յառաջ տային միմեանց բազմա-  
 կական 'ի գոռմանց ,  
 Ի դաշտ արեան այր ընդ ընկեր 'ի մարտ  
 ելեալ մարդախանձ .  
 Ձարդիս նոքա նստին լռութիւք , շըշուկ  
 մարտին չիք ուրեք ,  
 Յեց կան 'ի կոր յասպարս իւրեանց , և  
 մօտ վարսեալք երկայն տէգք :  
 Իսկ նահատակք Աղեքսանդրոս Մենե-  
 դաւոս քաջազէն  
 Մենամարտեալք 'ի տէգ երկայն , կըշիռ  
 միմեանց ձրգեսցեն .  
 Ի քո սլատճառս արձանասցին մարտ ո-  
 գորել յառանձին ,  
 Յաղթականին լիցիս դու հարսն և սիրա-  
 բուն ամուսին » :

Ձայս Դիցանոյն, և 'ի յոգին խանդ կա-  
թեցոյց անձկայրեաց

Ձառըն նախնոյն և ըզճնողացն, և խանդ  
զիւրոց հայրենեաց:

Յարեաւ անդէն, ըզձիւնափայլն արկ  
քօղ անձին ըզսընդուս,

Գայր ելանէր սրսկապանէն, ցօղէր անոյշ  
արտասուս.

Չէր միայնակ, նաժիշտք կրկին յարեան  
գնային ըզկընի,

Մին էր աչեղն այն Վլիւմենէ, մին դուսար  
հեթրէ Պիտթոսի:

Եկին հասին մինչև 'ի բուրգն, ուր և դրան-  
դիքն են Իսկեան,

Անդ Պրիամոս և Պանթոոս առեալ էին  
բազմական.

Անդ և Թիւմիդ, Ղամսուս, Վլիւդոն, Ի-  
կետոն ճեան Արեսին,

Ուկաղեգոն և Անտենոր ամուլքն ուշիմք  
երկոքին:

Առ դրունս Իսկեան նստեալ էին այս  
ճոխք աւագ ծերակոյտ,

Եւ 'ի մարտէն դուլ տայր նոցա արբունք  
տիոցն ալևոյթ.

Այլ քաջախօսք և ձայնարկուք նրման  
ճպռանց են 'ի բուն,

Որք 'ի մայրին յոստ մի կըռուեալք յերգ  
սրահնչակ զօդ լընուն.

Այսպէս յայնժամ այն ծերունիքն անդ  
 'ի բարձուն յաշտարակ  
 Բաղմեալ, և ձայն տային միմեանց դու-  
 նակ բանիւք և դունակ :

Եւ յինչ դիմեալ յաշտարակ կոյս ըզ-  
 չեղինէն յակն արկին,  
 Յակճիւս կացեալ այն ալեղարդքն այր  
 ընդ ընկեր հրճճէին .

«Բա՛ չեն բասրանք, Թէ Յոյնք, Տրոյեանք  
 տանջեալք 'ի վայր և 'ի վեր,  
 Կան 'ի սլատճառս այդ նազելւոյդ ձիգ  
 ժամանակ վշտմբեր :

Յանմահ 'ի դիս . դա՛ Դիցանոյչ է 'ի գեղ  
 իւր դիտակի,  
 Համայն այնպէս այդ հրաշագեղդ 'ի ծով  
 մտցէ և դարձցի .

Մի՛ մեզ յապոյս աղէտ ածցէ, զըմբաղ և  
 մեր զաւակաց) .

Զայս ասացին, բայց Պրիամոս ձայն Հե-  
 ղինեայ զայս կարդաց .

«Արի՛ մատիր, դուստրը սիրուն, եկ նա-  
 ղելիդ, նիստ առ իս,  
 Զնախնի փեսայդ և զբարեկամս տեսցես  
 և քո զընտանիս :

Չեք քո առ իս չլիք մեղուցեալ, աստուածք  
 ինքնին են սլատճառ ,

Որք ըզՅունացն ինձ յուզեցին բազմակա-  
 կան զայս դուստար :

Բայց դու աղէ զայդ աւագ առն յայտ-  
նեա զանուանն ինձ աստուատ,

Ո՞ է այդ այր Աքայեցի, այր առոյգանձն  
և հարուատ.

Քան զայդ աւագ ուսով գըլխով այլք 'ի  
վեր կան 'ի կարգին,

Սակայն այդչափ շուք փառացի աչք իմ  
երբէք ոչ տեսին.

Չեք իմ տեսեալ չեք զուգատիպ այր  
մեծաշուք գերափառ

Դա զարբայի անշուշտ, ասեմ, յանձին  
բերէ ըզտիպար” :

Արկնեաց առ նա, 'ի դաս կանանց դիւց-  
աղնացեալն հեղինէ,

“Քո շուքն, արդոյդ իմ ըսկեսրայր, ահ  
և սլատկառ ինձ ազդէ.

Ո՞վ թէ, ո՞ հայր, էր իմ յայնժամ մահուն  
դիպեալ դառնաղէտ,

Յորժամ լքեալ զիմ զառագաստ չոքայ  
որդւոյն քո ըզհետ.

Լքեալ զեղբարս և սիրուհիս և ըզդուսոր  
իմ միածին,

Ո՞վ զի՞ չէառ զիս օրահասն, որ արդ աչք  
իմ կականին :

Բայց լուր զիս, հայր, զոր ինձ այժմիկ  
խոյզ և խնդիր արարեր,

Դա է Ատրիդն Ագամեմոնն, շատ գաւա-  
ռաց դա է տէր,

Է թագաւոր նա քաջալաւ, նոյն և մարտիկ քաջարի,

Դա տագր երբեմն անամօթիս, բայց ես չեղէ արժանի” :

Նա զայս ասաց, և հիացմամբ արքայն գոչեաց ծերունին,

Երջանկածին դու դիւցաբաղդ, քեզ տամ Ատրիդ, զերանին .

Քեզ շատ հելէնք կան լըծաբարձք, և հնազանդեն քեզ յաւէտ,

Էր զի երբեմն ես յայց ելի ՚ի Փռիւզիա գինեւէտ,

Անդ Փռիւզացիս տեսի անթիւ, արք քաջաձիք կորովի,

Խուժան սաստիկ Ոտրէոսին և քաջազին Միւզդոնի .

Դաս դաս ճակատք անդ կարգ առեալ կային յափրն Սանգարեայ,

Ես համահարզ նիզակակից ՚ի թիւ նոցուն խմբեցայ .

Յաւուր յորում ճակատ ետուն այն այլ րասիրտն Ամազունք .

Այլ չէր Փռիւզեանց խուժան սաստիկ, որչափ աստ Յոյնք սևակունք” :

Տեսեալ երկրորդ և զՈղիւսէս, անդ ծերունին հարցանէ .

“Ինձ և ըզդա, դուստր իմ սիրուն, աղէ ասա, ո՞վ իցէ .

Խոնարհ գըլխով քան զԱտրիդէս է քան  
զարքայն մեծապանչ,

Այլ քան ըզնա այր թիկնաւէտ, և այր է  
դա քաջալանջ.

Զէնքն առ երկրաւ քերէն դորա հո-  
ղեալք ընդ դիւրս դաշտաց,

Եւ ինքն անցեալ իբրև ըզքօշ շուրջ կայ  
ընդ վաշտս քաջաց.

Ակն իմ ըզդա 'ի թաւագէս 'ի տիպ խոյ-  
ին ճշգրտէ,

Որ զուսակիզն օդեաց հօտ մեծ շքով  
տանի և բերէ ʔ :

Պա բազմիմաստն է Ոդիւսէս, քաջ  
ազն է դա Լայերտեան,

Զայս հեղինէ դիւցազնուհին ետ ան-  
դրադարձ պատասխան.

Ծընունդ սընունդ է Իթակայ 'ի սահմա-  
նին առապար,

Այլ բազմարուեստ է խորհրդով խիտ  
և հոծ է 'ի հանձար ʔ :

Ղնշուշտ, կին դու, բազմահանձարըն  
Անտենոր ձայն կըցեաց,

Անշուշտ դու բան մեզ ասացեր 'ի ճշմա-  
րիտ զըրուցաց :

Զի էր երբեմն 'ի քո պատճառս հրեշ-  
տակք եկին աստ առ մեզ,

Արին մարտիկ Մենեղաւոս և այդ դիւց-  
ազն Ոդիւսէս.

Հիւրամեծար եղէ նոցա և ժողովեալ  
յիմ տաճար ,

Ըզքոյս բարուց ծանեայ զերկուցն , և  
ըզնոցուն ըզհանճար :

Եկին մրտին ուր Տրոյացուոց ահումբն յա-  
տեան գումարէր ,

Յոտընկէլիս Մենեղաւոս քաջ ուսով  
չափ կայր 'ի վեր .

Երբ բազմեցան , էր Ոգիւսեան նազանքն  
իբրու աւադի ,

Մինչև առին նիւթել նոքա բան և խոր-  
հուրդ յատենի :

Բան սուղ հակիրճ Մենեղաւոս տայր  
ատենին յանդիման ,

Բանք դուղնաբեայք , այլ հեշտալուրք ,  
զի և չէր իսկ բազմաբան .

Չէր վայրախօս , թէպէտ և էր կրտսեր  
'ի տիս հասակին ,

Մինչև յարեաւ և Ոգիւսէսըն բազմիմաստ  
կաց յոտին .

Կայր խորագէտն և զակն ունէր յա-  
ռեալ յերկիր անբըթիթ ,

Ըզգաւազանն ոչ աստ ոչ անդ տանէր  
չարժէր խիտ առ խիտ ,

Անչարժ ունէր . բա՛ս ասէիր , դա այր  
գուէհիկ է ախմար ,

Կամ սրբոմըտեալ վայրագամիտ , կամ թէ  
համբուն խեղագար :

Այլ իբրև նա 'ի կուռ լանջացն ըզձայնն  
աւագ արձակէր ,

Եւ բանն անդուստ տեղայր իբրև ձըմե-  
րայնոյն ձիւնաբեր ,

Ո՞րք յայնժամ մարդ մահացու ընդ Ո-  
ղիւսեայ 'ի վէդ գայր ,

Եւ մեզ յայնժամ չէր դժպըհի տեսեալ  
ըզնա յայն տիպար ” :

Երրորդ , զԱյաս տես ծերունին , “ Ո՞ր  
է այն յաղթն , հարցանէր ,

Գըլնով 'ի Յոյնս և լայն թիկամբք այդ  
վիթխարիդ կայ 'ի վեր ” :

“ Գա է Այասն հըսկայալօր , պատուարն  
Յունաց ահագին ,

Չայն , դիցանոյն 'ի կանանին տեռազար  
դեալն , ետ ձայնին :

Կայ 'ի միւս թէն արձանացեալ մազդեզն  
արին Իդոմէն ,

Եւ Կրետացուոց շուրջ ըզնովաւ պետք  
զօրավարք բակ գործէն :

Ըստէպ զարքայդ , Մենեղաւոս քաջա-  
մարտին և սրտեայ

Ընդ մարդակաւ մեր ժողովէր , երբ նա  
դառնայր 'ի Կրետայ :

Այլ արդ ողջոյն զԱքայեցիս աչք իմ  
զարդիս տեսանէ ,

Ծանօթք իմ էն , և ըզնոսա ես քեզ կար  
դամ յանուանէ .

Միայն երկուքն անտեսք են ինձ պետք  
զօրավարք բանակի ,

Մին է Կաստորն այն ասպազէն և քաջա-  
ձին 'ի մարտի ,

Պողիւղեւկէս միւսն է արին 'ի գօտէմարտ  
հանդիսին ,

Իմ հարազատք . մայր նոյն , ո՛վ հայր ,  
ըզմեզ ծընաւ զերեսին :

Արդեօք չեկին 'ի Սպարտիոյ համբաւա-  
տենչ սահմանաց ,

Կամ թէ եկին տարադիմեալք ծովայա-  
ծուկն ընդ նաւաց ,

Այլ չըկամին մրցել նոքա 'ի մարտ քա-  
ջաց միջամուխ ,

Խոյս տան լըսել բասրանք լուտանք , որ  
յիս բարդին իբրև ծուխ » :

Նա զայս ասաց , սակայն նոքա յարգանդ  
հողոյն կենսածին

Անդ 'ի Սպարտա ամփոփեցան յաշխարհ  
իւրեանց հայրենին :

Մինչ այս մինչ այն , յաշտ զաստուա-  
ծոց նըւիրաձիր յերգմանէն ,

Գառինս երկուս նըւիրապետքն առեալ  
ածեն յոստանէն :

Պըտուղ երկրի զանոյշ գինին բերեն 'ի  
տիկ այծենի ,

Քարողն Իգոս սուրբ խառնարան և դաշ-  
խուրանս ած ոսկի :

Սա մատուցեալ առ Պրիամոս , տայր  
 ծերունւոյն քաջալեր ,  
 « Օն արի դու լաւմեղոնեանդ , ես  
 յարքայից գամ բանբեր :  
 Աւագք Տրոյեանց քաջաձիոց և Հելէ-  
 նաց վառելոց ,  
 Հրակէր քեզ տան գալ 'ի բանակ , կըռել  
 զերդուսն յօշելոց :  
 Քանզի ահա Աղէքսանդրոս և Մենեղաւ  
 քաջազէն  
 վասն Հեղինեայ մենազինեալք միմեանց  
 նիզակ կշռեսցեն .  
 Յաղթականին լիցի բամբիշն և ողջ նո-  
 րուն կարասի ,  
 Այլք բարեկամք դաշնաւորեալք ան-  
 խաբ լիցին երդմնի .  
 Մէք բնակեսցուք 'ի Տրոյիա , նոքա դարձ-  
 ցին ողջանդամ ,  
 Դարձցին յԱրգոս , յԱքայիա , ուր չք-  
 նաղացն է կայան » :  
 | Ըլաւ արքայն , և տյլ յայլմէ ձայն ետ  
 մանկանց ծերունին ,  
 Գօտէպնդեալք և զերիվարս 'ի կառս ա-  
 ուեալ լըծեցին :  
 Աշտանակեալ անդ ծերունւոյն յետկոյս  
 ձգեաց զերասան ,  
 Եւ մերձ նըմին և Անտենոր նըստաւ 'ի  
 կառսն աննըման :

Ի դրանց խսկեան սրացան 'ի դաշտ արագ-  
ոտինքն երիվար ,

Մինչև եկին ուր Տրոյացւոց և ուր Յու-  
նացն էր ճամբար .

Հանդերձեցան և 'ի կառացն իջին նոքա  
'ի գետին ,

Եւ ընդ կրկին բանակ զօրուն չըքով յա-  
ռաջ խաղային :

Յարեաւ արքայն Ագամեմնոն և ընդ ա-  
ռաջ ել 'ի շտապ ,

Յարեաւ ուշիմն և Ոգիւսէս , յարեան  
Քարոզքն հոյակապ .

Կազմ և սլաորաստք յուխտ դից անխաբ  
ըզխառնարան մատուցին ,

Խառնեն գինի , և արքայից ձեռաց չը-  
քով ջուր արկին :

Կտրոց յայնժամ , ըզձեռն ածեալ , հա-  
նէր Ատրիդ մեծ արքայն ,

Կտրոցն էր ցանգ ընթեր սըրոյն կախեալ  
ընդ մեծն ընդ սատեան .

Առեալ կրարեաց փունջ մի մազից գլխոց  
գառանց գիսակին ,

Եւ զայն Քարոզքն Յունաց , Տրոյեանց  
քաջորերոյն բաշխեցին :

Ագամեմնոն բազկատարած ձայն բար-  
ձրագոչ աղօթէր .

« Արամազդ հայր , վեստ , մեծափառ , և  
գերապանծ Իդեայ տէր ,

Դու ո՞վ Արփի ամենատես , ամենալուր  
արևակ ,

Դուք Գեոք , դու Հող , և որ 'ի խորս  
Դեք դժոխոց դարասանք .

Գանիչք մարդկան մահացելոց , որ ոք ե-  
կաց ուխտազանց ,

Դուք լիք վճկայք և ոստիկանք մեր ան-  
սլասիր այս երգմանց .

Եթէ Պարիս զՄենեղաւոս տիգեալ հար-  
ցէ 'ի յողի ,

Տարցի անձին և զՀեղինէն և զամենայն  
կարասի .

Մէք ուխտասպահք վերելակեալք 'ի մեր  
նաւաց հանդիսին ,

Հատեալք ըզծով առ հասարակ յերկիր  
դարձցուք հայրենին :

Իսկ թէ զՊարիս արկցէ տապաստ Մե-  
նեղաւոս մեր խարտեաշ ,

Տացեն Տրոյեանք ըզՀեղինէն , ողջ կարա-  
սւոյն և ըզբաժ .

Նա և զարժանն աստ հատուցեն Արգո-  
սացւոցն ըզվըզեան ,

Զի և մարդկան այս յիշատակ յաւեր-  
ժասցի առ յասպայն :

Իսկ թէ Պարիս լեալ դիտասլաստ , դասք  
զաւակաց Պրիամին

Ողնդըժնեայք ընդ հօր իւրեանց վըճար  
չառնեն վըզենին ,

Յայնժամ 'ի սակ փոխարինի , ես զէն ա-  
ռեալ 'ի գուպար

Կամ և կռուիմ մինչև մարտին գուլ լի-  
նիցի և վըճար ։

Ասաց , զուլունս առեալ գառանց 'ի սայր  
կըտրեաց պըղընձի ,

Գառինքն անդէն յոգւոց սլարզել տա-  
պալ տրոփան 'ի գեանի .

Կան շնչասսպառք , յանգուծ սըրոյն զրա-  
ւեալ ողջոյն 'ի կենաց ,

Մինչ դեռ գինի խառնարանէն 'ի բաշխ  
հեղուն բաժակաց :

Յայնժամ կրկին զօրուն բանակք ուխ-  
տիւք մաղթեն գիցն յաւէժ ,

Խնդրեն հելէնք , խնդրեն Տրոյեանք ուխ-  
տանենգիցն ըզվըրէժ .

« Արամազդ մեծ , վեստ , դերափառ , և  
գուք կաճառք անմահից ,

Ոյք առաջին յերկուց ազգաց դրուժանք  
լիցին այս ուխտից ,

Նոցուն ուղեղք , որպէս գինիս ծորեալ  
յերկիր , շըճեսցին ,

Նոյն և որդւոցն . և ամուսինքն ընդ օտա-  
րաց խառնեսցին ։

Զայս մաղթեցին , այլ դեռ երես չարար  
Դիոս այս երգմանց ,

Մինչ Բարդանեանն ել Պրիամոս , ձայն  
ճակատուց զայս կարգաց .

«**Դ**նձ ղանկընդիք Տրովադացիք, և դուք  
 Հելլենիք զինավառ,  
 Դարձ յԵղիոն ես աւագիկ առնեմ յու-  
 տանն հողմահար.  
 Քանզի որդւոյս իմսիրայնոյ մըցել'ի մարտ  
 գոռութեան  
 Ընդ քաջարւոյն Մենեղաւեայ, հայել  
 աչք իմ ոչ ժուժան:  
 Գիտուն ինքնին է Արամազդ, գիտուն  
 և այլք յանմահից,  
 Ո' դք յերկուցն անդարձ բաշխել հարցի  
 մահուն յարկածից»:  
 Ասաց, զըստանդան առեալ 'ի կառս եդ  
 ծերունին դիւցազնեան,  
 Ատանակեաց և բազմեցաւ յինքնն ձը-  
 գեաց զերասան.  
 Ի վեր 'ի կառան 'ի գեղեցիկ եւ Անտենոր  
 մերձ նըմին,  
 Սրացեալք այնպէս 'ի յԵղիոն նոքա ըզ-  
 դարձն արարին:  
**Յ**արեաւ Հեկտոր Պրիամոսեան, յա-  
 րեաւ դիւցազն Ոգիւսէս,  
 Մատեան և նախ սահմանաւոր վայր գը-  
 ծեցին աստարէս:  
 Արկեալապա 'ի սաղաւարտ, տարբերէին  
 ըզվիճակ,  
 Ո'ր նահատակ լեալ արդնընկէց նախ շէշ  
 տեսցէ ըզնիզակ:

Անդ ժողովուրդք կան և մաղթեն, դից  
ըզմատունս տատանեն,

Եւ ձայն այսգոյն էր լըսելի կրկին ազգաց  
'ի զօրուէն.

« Արամազդ հայր, Իդեայ իշխան, դու  
մեծ և վեստ, գերափառ,

Ո 'ի սոցուն յազգըս կրկին այս աղէտիցս  
է պատճառ,

Ըզնա 'ի տուն Բարապանին արկ դըժո-  
խոց գահավէժ,

Մէք հաշտք սիրունք այր ընդ ընկեր հա-  
րըստեսցուք ուխտ յաւէժ » :

Զայս մաղթեցին, և ըզվիճական հեկտոր  
շարժէր քաջարին,

Դէմք իւր յետկոյս շարժէր անդուլ, և  
եւ վիճակ Պարիսին:

Ժամ առին ազգք, և դաս 'ի դաս նստան  
զօրաց երախանք,

Նըժոյգքն անդէն գափր հոտանեն, շո-  
ղան և զէնք երփներանգ:

Ընոյր յայնժամ պատէր զուսովք ըզ-  
գեղեցիկ զարդ զինուն

Վարսագեղոյն այն հեղինեայ փեսայն  
Պարիս բարեբուն.

Յառաջ ըզսրունս ամրածածուկ սրո-  
նասպանացն ետ յաւանդ,

Եւ սնդապէս աղխեաց ըզնոյն 'ի յարծա-  
թին 'ի ճարմանդ.

Երկրորդ զըրահ զԼիւկայոնին հարազատին լանջապան

Անձին քաջիկ ճահաւորեալ, արկաւ կրրծոցն 'ի պատեան.

Կախեաց զուսոյն պողովատիկ պալարակապ 'ի յարծաթ,

Արկաւ 'ի նոյն և անձնասպահ հարուստ վահան անվրկանդ.

Ի գլուխն 'ի յաղթ բաշխւք ձիոց եդ սաղաւարտ հրաշազան,

Վերջքն 'ի վերուստ ասեղակերպ կան երերուն և տատան.

Առ 'ի ձեռին տէգ բռնալիր հաստահարուստն ըզգեղարդ,

Վառէր արին և Մենեղաւ 'ի նոյն 'ի զէն և 'ի զարդ:

Իբրև այնպէս պատենազէնք քաջքն զրահեալք վառեցան,

Եկին 'ի մէջ 'ի ճակատուց, կացին, խեթի հայեցան.

Տեսին ըզքաջսն ասաբեկք Տրովադացիք ասպազէնք,

Տեսին անդուստ և արհաւրօք լըցան 'ի նոյն և հելէնք:

Մօտ ախոյեանքն եկին կացին 'ի սահմանեալն ասպարէս,

Ճօճեն նիզակ, աս արկանեն մենամարտին 'ի հանդէս

Յառաջ Պարիս նահատակեալ ըզտէգն  
 ըզյաղթ արձակեաց,  
 Եւ յԱտրիգեայն բոլորածիրն հար 'ի վա-  
 հանն և շամփրեաց.  
 Խոցել խոցեաց, այլ ոչ խըզեաց կուռ  
 զանվըկանդ պըղընձին,  
 Սայրըն կրկնեալ և բըթացաւ հաստահա-  
 րուստ յասպարին:  
 Երկրորդ ապա Մենեղաւոս մենամար-  
 տեալ 'ի պայքար  
 Տէգ շողացոյց. բայց աղօթիւք Արամազ-  
 դայ ձայն կարգայր.  
 « Արամազդ հայր, զայս վէհ Պարիս, որ  
 զիս զրկեաց առաջին,  
 Տուր ինձ գըձձէլ տիգահարեալ, և են-  
 թադրեա իմ բազկին.  
 Զի և այսպէս կանացածինք քըստմընէս-  
 ցին որ յետ մեր,  
 Մի մեղանչել յայր վանատուր, մի զայր  
 դաւել հիւրասէր»:  
 Ասաց, ճօճեաց, փայլակնացոյց ըզյաղթ  
 գեղարդն և զերկայն,  
 Զըգեաց և հար յԱղէքսանդրին բոլորա-  
 ծիրն 'ի վահան.  
 Տէգ նիզակին շէշտ կշռակի մուտ ընդ  
 հրափայլն ընդ ասպար,  
 Եւ վարսեցաւ 'ի լանջապան, գործ հրա-  
 շակերտ և ճարտար.

Հանդէս սրաքն 'ի սընակուշոն հաս և  
խրդեաց սրամուճան.

Սակայն գեւեալ, դառն յորհասէն զեր-  
ծաւ Պարիս ողջանդամ :

Ճեպ ըզճեպի ձրգեաց Ատրիդ պալարա-  
կապն ըզսուսեր,

Գահեաց ուժգին և շեշտ 'ի վերջ սաղա-  
ւարտին հարկանէր.

Յերիս, 'ի չորս, շերտակոտոր սուսերն  
անկաւ 'ի ձեռաց,

Խոր 'ի յոգւոց հան Ատրիդէս, աչք 'ի  
յերկինս ձայն կարդաց :

« Արամաղդ հայր, անկարեկիր չեք ոք 'ի  
դիցքան ըզքեզ.

Ես ասէի, զայդ վերագիդ առնուլ չա-  
րեացն ըզվըրէժ.

Արդ յիմ ձեռին սուր փշրեցաւ, և իմ 'նի  
ղակ ոչ ուժեաց,

Զուր 'ի ձեռաց սրացաւ ընդ օդ, և զայդ  
վերագ ոչ խոցեաց » :

Լսաց, վազեաց, ըզգիսապանծ դլխանո-  
ցէն բուռն եհար,

Քարշէր յորսայս ըզհիքացեալն յԱքայե-  
ցւոցն 'ի ճամբար.

Խեղդէր ըզնա ընդ գիրգ փողով փոկն  
ասղնէգործ ճարտարին,

Որ զեռավերջն սնդապէս կապէր ընդ  
յաղժ կըղակին :

Անշուշտ յայնժամ ածէր 'ի քարչ, տանէր  
զանբաւ շուք փառաց,

Թէ չէր Աստղիկ Արամազդայ դուստրը  
սրակնեայն իրազգած:

Հասնա արագ խրդեաց ըզփոկն ըզբու-  
նամահ զարջառին,

Եւ գայր այնպէս սին սաղաւարտն 'ի քարչ  
ըզհետ յաղթ ձեռին:

Առ զայն դիւցազն և արկ գըլեաց յԱ-  
քայեցւոցն 'ի խրուան,

Եւ զայն կասուտ նիզակակիցք խնդամը-  
տեալք ընկալան:

Վազեաց անդրէն գոռայր շամփրեւ ըզնա  
'ի տէգ նիզակին,

Ճեպ ետ Աստղիկ, յափշտակեաց ըզնա 'ի  
շտապ տագնապին:

Ձետ դիցանոյչ քօղ արկ նմա ծածկեաց  
'ի յօդ թանձրութեան,

Առ և տարաւ ըզնա յանոյչ բազմաբու-  
րեան սրակապան:

Չոքաւ ապա, գայր Դիցուհին գոլ հե-  
ղնեայ հրաւիրակ,

Եգիտ ըզնա 'ի բազմոցին 'ի բարձրաբերձն  
աշտարակ.

Պար ըզնուլաւ Տրովադացւոց կային բամ-  
բիչքն առ 'ի սպաս,

Ձեռն ած Աստղիկ, ցընցեաց հեզիկ զե-  
րևելին ըզըզաշ.

Չայն ետ նմա բարբառեցաւ, ըզտիպ ա-  
ռեալ զաւսարդին,

էր հեղինեայ սա հինաւուրց կին ասրա-  
գործ 'ի յարկին.

Մինչ բնակէին 'ի Սպարտիա, ասուիս  
գործէր գեղաշարդ,

Նիւթէր ճարտար, և մեծապէս էր սիրե-  
լի այս աւսարդ:

Սորայն 'ի տիպ ձայն ճըշգրտեալ Աստ-  
ղիկ բարբառ արձակէր,

«Արի, բամբիշ, ահա Պարիս կարդայ 'ի  
տուն քեզ հրաւեր.

Նա 'ի գահոյս բազմաքանդակ կայ 'ի բու-  
րեան սրսկապան,

Չորձք իւր պայծառ և լուսափայլ, գե-  
ղըն դորա աննրման.

Բա՛ չասէիր, թէ դարձ արար մենամար-  
տիկ 'ի մարտէ,

Այլ թէ խնծղեալ 'ի պար գընայ կամ  
յետ պարուն բազմեալ է»:

Ասաց Աստղիկ, և նորահրատ արծարծ  
նորա զիղձ ոգւոյն,

Մինչ նա ուշիւ յառեալ ծանեաւ զուլ  
գեղափայլ Գիցուհւոյն.

Ծանեաւ ըզլանջըն նազելի, ծանեաւ ըզ-  
փառսն և զաչաց,

Յապուշ հարեալ բարբառեցաւ, ձայն  
յանուանէն զայս կարդայ.

« Առ ինչ դու , Քաջ , հնարիս այդպէս  
 գողինձ աստէն դաւաճան ,  
 Թերևս խնդրէս յայլ մարդաշատ զիս վը-  
 տարել 'ի յոստան ,  
 Կամ Փռիւղիոյ կամ Մէոնեայ , վայր մար-  
 դաւէտ բարեբուն ,  
 Իցէ՞ Թերևս քեզ և անդ ոք կանացածնաց  
 սիրասուն :

Արդ զի մարտիւ Մենեղաւոս սարտեալ  
 ըզվէստն ըզՊարիս ,  
 Խնդրէ այժմէն ըզնըշաւակս 'ի տուն կրը-  
 կին ածել զիս ,

Զի դու դաւել եկիր այժմիկ , դու երթ  
 առ նա և բազմեաց ,

Անդ Թարթափեալ մոռս ըզհետս երկ-  
 նաճեմիցըն շաւղաց .

Մի ոտընփոխ մի այլ դարձցիս յՈղիւմ-  
 սլոսին 'ի սահման ,

Ցանգ առ նրմա կաց գեգերեալ , անքուն  
 նըմին սահասան .

Մինչև ըզքեզ կամ ամուսին և կամ ածցէ  
 ազախին ,

Զի անդ անշուշտ ես այլ չերթամ 'ի  
 սսրասարկու իւր մահճին :

Անարգ է բանդ , յիս Տրոյուհիք քրքիջ  
 հատցեն 'ի Թիկանց ,

Արդէն իմ սիրտն է վերաւոր 'ի շատ ցա-  
 ւոց և վշտաց » :

Ի մեծ զայրուց հատաւ Աստղիկ, ձայն  
մի կրկնեաց ահագին,

« Մի՛ յիս, հէգ դու, մի՛ ընդհարցիս, մի՛  
դքեզ լըքից զայրագին .

Մի՛, որչափ շատ դու սիրեցար դոյնչափ  
լիցիս դժսլահի,

Եւ յոյժ անկած վատթարեացիս կրկին ա-  
զանց առաջի .

Ձի աւագիկ դառն ոխութիւն ես նիւ-  
թեցից ընդդէմ քեզ,

Մինչև երթեալ չար օրհասիւ մահու մեռ-  
ցիս դառնապէս » :

Ձայս դիւցաբար և ահարկու բարբառե-  
ցաւ անդ Աստղիկ,

Եւ հեղինէն դիւցազնուհի ըմբռնեցաւ  
յահ սաստիկ :

Եւ թաքթաքուր 'ի բամբրչացն, առ դձիւ-  
նափայլն իւր ըզշար,

Քօղ արկ լըւիկ, Քաջն յառաջոյ հորդէր  
նրմին ճանապարհ :

Իբրև հասին յԱղէքսանդրին 'ի հրաշա-  
կերտն յայն 'ի տուն,

Նաժիշտքն անդէն պատաղեցան ժիրք զա-  
րարովք կանանւոյն :

Եւ բարձրագահն 'ի սրսկասլան զարմա-  
նուհի կինն աւագ,

Յայնժամ Աստղիկ ծիծաղասէրն էառ 'ի  
ձեռն աթոռակ .

Եբարձ ինքնին և Պարխինն 'ի հանդիպոյ  
զայն դընէ ,

Յորում նազեալ եկըն նստաւ որմըզ-  
անոյնն հեղինէ :

Աքք իւր յետկոյս , և ըզփեսայն բանիւք  
գըձձէր մեծասաստ .

« Ի մարտէ՞ գաս , յանկարծ Պարխաքո անդ-  
լեալ էր դիտապաստ .

Տապաստ նըկունն 'ի տէգ. քաջինն իմոյ նախ-  
նի փեսային ,

Այն զի հըզօր գոլ սպանծայիր քան զՄե-  
նեղաւ քաջարին .

Յոյժ և 'ի սուր յաւակնէիր գոլ վէհա-  
գոյն և յաշտեայ ,

Աղէ կըրկին , այն քաջարւոյն մենամար-  
տի ձայն կարդա :

Բայց դու հանդարտ լեր առ յասպայ , ես  
զայս խըրատ տամ քեզ արդ ,

Մի՛ ընդ խարտեաչգ այդ ախոյեան մարտ  
յարդարել մենամարտ .

Մի՛ ասպարէս կարդար դըմա , մի՛ մարտ  
մըղեր անհանձար ,

Զի մի՛ ընդ յաղթ տիգաւ նորա օրհաս  
առցես չարաչար » :

« Մի՛ զիս կինն դու այդ լուտանօք , մի՛  
այլ զոգիս իմ կըտտեր ,

Անդէն Պարխա սաստինն նորա զայս անդ-  
րադարձ բարբառէր .

Ինձ Մենեղաւ արդ Պալասաւ յաղթեաց  
մարտին 'ի հանդէս,

Ես ևս ըզնա գիտեմ պարտել, են են աս  
տուածք և ընդ մեզ.

Բայց աղէ մէք յողջոյն դարձեալ և 'ի  
հանգիստ փոխեսցուք,

Զի և երբէք զիմ սիրտ այդչափ ոչ սէր  
գերեաց ոչ անձուկ.

Եւ ոչ յորժամ անդ առաջին 'ի Սպար  
տիոյ սահմանաց,

Առեալ ըզքեզ անցի 'նդ ալիս ծովահեր  
ձիկն ընդ նաւաց,

Յողջոյն 'ի սէր մօտևորեալ անդ 'ի կղզին  
'ի Կրանէ,

Որչափ այժմիկ 'ի տաճարիս իղձ մի անոյշ  
պաշարէ":

Ասաց, քայլեաց, 'ի միասին առին նոքա  
սրսկասպան,

Եւ 'ի գահոյսըն յանկուածոյս անդ 'ի  
հանգիստ փոխեցան:

ՄԵՆ ԵՆԵՂԱՎ շրջէր խնդրէր իբրև ա  
ռիւծ զայրագին,

Թէ յակն ուրեք արկցէ ընդ զօր զիւրն ա  
խոյեան գեղանին.

ԱՂ ԶԿԱՐԱԿ ղՔ ՏՐՈՅԱԿՆՈՅ ԿԱՄ ՀԱՄ  
ՀԱՐՂԵՆ 'ի նոցունց,

ԶՅՂԵՔՍԱՆԳՐՈՍ ՄԵՆԵՂԱՎԵԱՅ ԱՌՆԵԼ  
ՔԱՂԻՆ մատընցոյց.

Առ գուժ սիրոյն ծածկէր ոչ ոք, թէ  
ոք գիտէր 'ի զօրուն,

Զի էր բնաւից նա արհաւիրք իբրև դան,  
դիւ ըզմահուն :

Յարեաւ յայնժամ արձանացաւ Ագա-  
մեմնոն քաջարանց,

« Լուարո՛ւք ինձ արդ, գոչեաց արքայն,  
վաշտք Տրոյացւոց փաղանդաց .

Աղէ և գուք ո՛ր Դարդանեանք և հա-  
մահարզք քաջարիք,

Արդ ակն յայտնի այս յաղթուժիւն Մե-  
նեղաւեայ է ողջիկ :

Տուք մեզ ապա ըզհեղինէն, նոյն և զող-  
ջոյն կարասին,

Եւ տուգանաց մեր ըզվըգէան մեզ հա-  
տուցէք զարժանին .

Զի և մարդկան այս յիշատակ յաւերժաս-  
ցի առ յապայն » .

Ասաց արքայն, և Յոյնք 'ի բուն կից գո-  
չեցին միաբան :



# ԵՊԻԿԵՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Դ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ատեան աստուածոց: Արամազդ յետ սակաւ մի պայքարելոյ ընդ Հերայ դշտոյնն, համակամ ՚ի մի խորհուրդ գան նոքա, զի կարգ առեալ մարտ պատերազմին յաւերժացի ընդ Յոյնս և ընդ Տրոյացիս: Աթենաս իջեալ յերկիր Թելադիր լինի քաջի աղեղնաւորին Պանդարոսի ՚ի կողմանէ Տրոյացւոց ընդդէմ դաշինն իւր ուովել զզինագադարումնն, նետ մի չարաչար ՚ի լայնալիճ՝ աղեղանէն շեշտակի արձակելով ընդդէմ Մենեղաւոսի: Մենեղաւոս գիւցազն խոցեալ ՚ի նետէն, և դառնապէս ողբացեալ յԱգամեմնոնէ, միւսանգամ բուժի ՚ի ճարտար բժշկէն Մաքառոյնէ: Ճակատք երկոքին գրգռին միւս անգամ: Ագամեմնոն շուրջ գայ և դնայ ընդ բանակն Յունաց քաջալերել զզօրն. և բարբառի է զի գովուածեամբ, և է զի կշտամբուածեամբ ընդ զօրավարաց բանակին: Չայն տան, և սկսանի մարտ պատերազմին. զառաջինն Տրոյացիք տեղի տան, ապա սրտասնդեալք յԱպոլոնէ՝ դառնան միւս անգամ ՚ի մարտ. քաջ քաջի պատահեալ երկոքին կողմանքն՝ պարտեն և պարտին: Գիովը զօրավար մեծ Եպեանց, և Պիւոս նահապետ Թրակացւոց անկանին գիտապաստ ՚ի դաշտի պատերազմին: Տեսարանն կայ մնայ ՚ի նմին դաշտի հանդէպ Տրոյիոյ:



## ԵՂԻԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Դ.

**Պ**ԱՐԲ անմահից յոսկէյատակն յԱրամազդայ 'ի տաճար

Բազմին յատեան , և վէհն հերէ 24 մատուրակէր ըզնեկտար .

Յոսկի նըւագս անդ 'ի յարբուամն հրաւէր միմեանց կարդային ,

Ի նոյն և զակն 'ի Տրոյացւոց յոստանն յառեալ դիտէին :

Փորձ մի յայնժամ կըծեւ զԵրայն մենքե , նայեաց Արամազդ ,

Եւ կշուռթիւն երգիծանող 'ի մէջ ձրգէր իբրև սաստ :

- « Կրկին, ասէր, աստ Դիցանոյչք կան  
 թևարկուք Ատրիդեայ,  
 Մին Աթենաս Աղակմացին 25, միւսն  
 Արդուհին է Հերա 26 .
- Այլ 'ի զընին դոքա անգործք զըւարձա-  
 ցեալք կան միայն,  
 Իսկ Պարիսայ ծիծաղասէրն Աստղիկ ան-  
 դուլ կայ պաշտպան .
- Սա 'ի նմանէն հեռի առնէ ըզգոյժ մա-  
 հուն և ըզկոծ ,
- Սա և զարդիս զերծոյց ըզնա , մինչ նա  
 պարզէր 'ի յոգւոց :
- Արդ յաղթութիւնն է անվըթար Մենե-  
 ղաւեայ քաջաղին ,
- Բայց աղէ մէք խորհուրդ կալցուք, այս  
 իրք զիւրդ վըճարին :
- Արդեօք դարձեալ մնորտ գրրգըուել, գոու-  
 մունք ասեղ գուժաբեր ,
- Եթէ արդեօք կրկին ազանց հաստեւ զող-  
 ջոյն և ըզսէր :
- Թէ այդ խորհուրդ և իղձ անշուշտ է ձեր  
 ախորժ ահրմբին ,
- Կանգուն ապա կացցէ ոստան Պրիամոսի  
 արքային .
- Առեալ յԱրգոս ըզհեղինէն տարցի Ատ-  
 ըրիդ ողջանդամ » .
- Ասաց , Հերա և Աթենաս կային անգ-  
 ափ 'ի բերան :

Մերձ նստէին, և Տրոյացւոց չարիս ՚ի սիրտ նիւթէին,

Այլ Աթենաս չեբաց բերան, այնպէս մղձկեալ կայր լըռին.

Անձայն սրտնէր ընդ Արամազդ յուզեալ ՚ի հեռ և ՚ի խէթ,

Իսկ մաղձն ՚ի ծոց եռայր Հերայ, ոչ հանդուրժեաց, և ձայն ետ.

“Օ, ինչ քո այդ բանք, անգուժ աստուած, զի՞ դու զըաջան զիս գործես.

Զո՞ւր վշտահան քերտն իմ լիցի, զոր քըրտնեցայ դառնապէս.

Ո՞չ և նրժոյգքս ընդ քերտն հարան խուժան կուտել յաշխարհաց,

Զըմբաղ ածել Պրիամոսին, զըմբաղ նորուն զաւակաց:

Բան ՚ի գործ տար, այլ չանսասցեն պարբանմահիցն որ են աստ”.

Ասաց, և յոյժ սրտմըտեցոյց զամպրոպայինն Արամազդ:

“Բեզ Պրիամոս զո՞ր տոյժ, ասէր, հասոյց քեզ, հէգ և չըւառ,

Կամ Պրիամուն ո՞ղք յորդւոցն երբէք քեզ չար ինչ արար.

Զի դու այդչափ լեալ ոխերիմ ոչ հեզանաս միանգամ,

Մինչև տեսցես հողաթաւալ ըղհրաշակերտ զայն ոստան:

Եւ մինչև դու մտեալ 'ի դուրս, մտեալ 'ի  
 բարձրն 'ի պատուար,  
 Ողջ չըլափես ըզՊրիամոս 27, նա և զոր  
 դուոցն իւր ըզպար,  
 Եւ շողափէր մըռըզգայլեալ և յայլ խու  
 ժան քաղաքին,  
 Քաւ թէ երբէք 'ի քո ծոցոյն մաղձք դառ  
 նու թեան թափեացին:  
 Չոր և կամիս, տար դու 'ի դործ, զի այս  
 մեր վէգ և սլայքար  
 Մի ոխերիմ 'ի հեռ 'ի խէթ յաւերժասցի  
 մեզ 'ի սպառ:  
 Բայց ես այլ բան ասեմ զարդիս, և դու  
 կալցիս անմուաց,  
 Գուցէ և ես իղձ լինիցիմ քանդել ըզմի  
 քաղաքաց:  
 Արդ յայն քաղաք եթէ երբէք կայցեն սի  
 րուն քեզ որեան,  
 Մի խոչընդ ոտն ինձ լինիցիս, մի զգեմ  
 կալցես իմ ցատման:  
 Քանզի և իմ քեզ յայդ խնդիր կամք յա  
 կամայս զիջանին,  
 Որ քեզ զարդիս ձօնեմ զարգոյն զիմ Եղիոն  
 խնկելին:  
 Չի ընդ արփուով և որչափ ինչ աստեղա  
 զարդն ընդ երկնաւ  
 Կանացածնաց յարկածածուկ գոն դաս  
 տակերոք, շէնք ամբաւ,

Ինձ 'ի նոսա յոյժ փարեւին է սրբազանդ  
այդ ոստան ,

Նոյն Պրիամոս , և քաջատէգ այդ արքայ-  
իդ մեծ խուժան :

Այն զի երբէք յիմոյն բազնէ ոչ յեանե-  
ցան դահամունք ,

Զոր մէք անմահքս առնումք 'ի ձօն , և ոչ  
նրէկըք և բուրմունք ։

Ի ըլաւ , անդէն աշխոյժուհին հերա  
հանդարտ ձայն կրկնէ .

« Են ինձ քաղաքք թըւով երրեակ , սի-  
րունք 'ի սերա 'ի սրտէ .

Այս է Արդոսն և Սպարաիա և Միւկե-  
նէն լայնուղի ,

Քանդեա զդոսա , թէ քում սրտի իցեն  
դոքա դըժպըհի .

Ես թեարկու լինել դոցա ոչ գամընդ քեզ  
'ի սայքար ,

Զի թէ զչարեալ քեզ խոչ լինիմ , ես զօդ  
կոծեմ վայրապար .

Անշուշտ քան զիս դոս մեծազօր յաղթա-  
հարուստ աննրման ,

Բայց 'ի դերես և զիմ տաժանքն հանել  
այժմիկ չէ արժան :

Ճեան իմ անդուստ , ուստի է քոյդ , ես  
իսկ ինքնին եմ աստուած ,

Զի Զըրուանայ խորագիտին ծընունդ  
եմ ես խնկազգեաց :

Փառք են ծընունդս, փառք են և այն,  
 զի ամուսին կոչիմք քեզ,

Քեզ որ բնաւից երկնաճեմիցն և անմա-  
 հից թագ կապես:

Եւ արդ աղէ, ես քեզ, դու ինձ, զիջցուք  
 մէք այր ընդ ընկեր,

Ապա և այլքն անմահից դասք հեշտի գայ-  
 ցեն ըզհետ մեր:

Այլ դու ճեպով տո՛ւր պատգամաւ Ա  
 թենասայ արձակուրդ,

Եւ դա սրասցի ուր բանակացն ասեղմար-  
 տին է խառնուրդ:

Գուն գործեսցէ, զի Տրոյացիք Յունաց  
 դըրժեալ քաջազանց,

Յաւակնեսցին երդմնահարեւ և նախ լի-  
 ցին ուխտազանց”:

Ասաց հերա, և հաճեցաւ հայրն աս-  
 տուածոց և մարդկան,

Չայնեաց անդէն Աթենասայ արագաթև  
 զայս պատգամ.

“Արի՛ դու էջ, ուր Դարդանեանք, ուր  
 Յոյնք բանակ հարեալ են,

Գուն գործեսցես զի Տրոյացիք փառացն  
 Յունաց դըրժեսցեն.

Յաւակնեսցին երդմնահարեւ, և նախ լի-  
 ցին ուխտազանց”.

Ասաց, և անդ զարդէն վառեալուն զԱթե-  
 նաս բորբոքեաց:

Սաւառնեցաւ իբրև փայլակն յարուա-  
նէն Ողիմպեայ,

Ըզտիս բերեալ լուսաճաճանչ հատեալ  
աստեղն Որմըզայ 28.

Ձայն նաւազիցն յըդէ 'ի հրէշ, յըդէ ամ-  
բաւ բանակաց,

Յորմէ և շատ և բացարձակ շանթք թօ-  
թափին կայծականց.

Սըմին հանգոյն մեծն Աթենաս ճախ-  
րեաց յերկիր լուսարձակ,

Էջ և եկաց 'ի միջակին, և ահ գուժեաց  
'ի բանակ:

Բանակ Տրոյեանց ետես ամիշեալ, տեսին  
հեղենք սարսեցին,

Տագնապեցան, և զայն նըշանն այր թարգ-  
մանէր ընկերին.

«Անշուշտ դարձեալ մարտ յապաժոյժ  
գոռմուճք յուղին գուժաբեր,

Կամ թէ Դիոս կրկին ազանց զողջոյն հաս-  
տէ և ըզսէր.

Ձի նա ինքն է սահմանադիր մարտից  
մարդկան մրցանաց».

Ձայս ինչ յայնժամ այր բարբառէր 'ի  
Տրոյացւոց և Յունաց:

Սուտ 'ի ճամբար Տրովադացւոց, ըզտիս  
բերեալ պատկերի

ՁԱնտենորեան Լաւոդոկեայ 29, սա էր  
մարտիկ կորովի:

Շրջեր խնդրէր ըզՊանդարոս 30 Լիւկայ  
ոնեան զայր արդոյն ,

Եգիտ զարին ըզհաստաղէղն , որ կայր ան  
դէն 'ի կանդուս :

Բակ ըզնովաւ կարգ կարգ առեալ աս  
պարափակ կորովեաց ,

Որ Պանդարեայ չոքան ըզհետ 'ի յԵսէ  
պեան վըտակաց :

Մատեաւ առ սա մեծն Աթենաս բար  
բառեցաւ ճեպ ընդ ճեպ ,

« Լիւկայոնեանդ անսաս ով քաջ , իմ  
խորհըրդոյս քաջադէպ .

Ո՛վ ձըգէիր Մենեղաւեայ զերեքթևեանն  
ըզփըքին ,

Եւ տանէիր 'ի Տրոյացւոց շուք մրցանակ  
քում բազկին .

Իսկ և բնաւից գեր 'ի վերոյ յԱղէքսանդ  
րոս արքայէ ,

Որ բարձերէց քեզ շուք փառաց ձօն հոյա  
կապ ձօնեացէ .

Յորժամ տապաստ 'ի քոյն փըքնէ զՄե  
նեղաւոս քաջառոյդ .

Տեսցէ տարած հանեալ 'ի վեր 'ի հրաբոր  
բոքն 'ի խարոյկ :

Արի՛ գոռոյդ Մենեղաւեայ լեր նետա  
ձիգ , օն արի ,

Եւ ուխտ ուխտեա քաջաղէղանն Ապողո  
նին լուսածնի 31 ,

Յաշտ յանդրանկաց յազել գառանց հա-  
րիւրեզնեան գերաբուն,

Երբ 'ի Ձեւի նըւիրականն յոստան գառ-  
նաս գու 'ի տուն»:

Լսաց Պալլաս, և հեշտաբար ըզմիտն յան-  
գոյց զանմրտին,

Հան նա ճեպով ըզլայնալիճ, գործ քաջ-  
ողորկ ճարտարին.

Էր լայնալիճս այս կողոպուտ որսոյն վա-  
լաշ այծեման,

Ձոր Պանդարոս ինքնին որսաց մտեալ ծա-  
ծուկ 'ի դարան.

Մինչ 'ի սարեխ գայր 'ի վիմաց 'ի գուրս  
անքոյթ կենդանին,

Խոցեաց ըզլանջն 'ի դարանէն և արկ տա-  
պաստ 'ի ժայռին:

Եղջիւրբ հարուստք թիզ վեշտասան 32  
բուսեալք 'ի յաղթ 'ի գըլխոյն,

Ձորս հանդերձեաց եղջերագործ այր ոք  
ճարտար և մարթուն.

Սրբեաց քաջքաջ և ողորկեալ հարթեաց  
համբուն և յըղկեաց,

Եւ քաջարուեստ օղ և մանեակ 'ի ծայրս  
ոսկիս բողորեաց:

Ձայս լայնալիճ առ Պանդարոս, լարեաց,  
հանգոյց 'ի գեալին,

Եւ ըղնովաւ համհարզբն քաջք ասպա-  
րափակ գործէին.

Պահ ունէին, գուցէ փրքին Յոյնք կան  
 խեսցեն կորովիք,  
 Մինչ չև յարին 'ի Մենեղաւ լեալ Պան  
 դարոս նետաձիգ:  
 Ըզկապարձին եբաց բերան, ընտրեաց և  
 առ ըզփրքին,  
 Փրքին անձիգ, երեքթևան, ցաւոց հաս  
 տիչ խաւարին:  
 Նետ զայն առեալ, գուժկան մահու, եդ  
 յարմարեաց 'ի լարի,  
 Եւ ուխտ ուխտեաց քաջաղեղան Ապողո  
 նին լուսածնի.  
 Յաշտ յանդրանկաց յազէլ գառանց հա  
 ըիւրեղնեան գերաբուն,  
 Երբ 'ի Ձելն նըւիրական յոստան դարձ  
 ցի նա 'ի տուն:  
 Ձարջառաջիկան և ըզգրղզուկ առ գրկա  
 լիր սինդ քարշեաց,  
 Ձերկաթն յաղեղն մերձեցոյց, ձրգեաց  
 ըզլարն հուպ ըստեանց:  
 Իբրև այսպէս ըզլայնալիճն յահեղ գո  
 գեաց 'ի կամար,  
 Կոփեաց աղեղն հաստաձիգ, ճայթիւն  
 սաստիկ ետ և լար.  
 Ոստեաւ փրքին երեքսայրեան, անձկայր  
 մխիլ 'ի խըռան,  
 Այլ ոչ ըզքեղ, Մենեղաւէ, աստուածքն  
 անմահք մոռացան.

Եւ առաջին Դուստորն մազդեզն աւար-  
առուն քաջարի 33

Կաց քո հանդէս, զօրհասաբեր ըզնեան  
արար զարտուղի.

Վանեաց 'ի քէն, որսէս և մայրն 'ի ման-  
կանէն ըզճանճիկ

Քըչէ, յորժամ առնու զտըղայն քուն մի  
անոյշ և քաղցրիկ:

Ըզնեան ուղղեաց անդ ուր ճարմանդքն  
ոսկեկուռք ըզգօտին

Աղխեալ պնդեն, և ուր կրկնակ էր սրահ-  
պանակն 'ի լանջին.

Անկաւ փըքինըն դառնութեան 'ի քա-  
ջակուռն յայն գօտի,

Եւ ընդ գօտին հրաշակերտեալ թափ  
սայրն էանց շեշտակի.

Ընդ բազմարուեստըն լանջապան մուտ  
վարսեցաւ 'ի կամար,

Զոր անձնապահ ընդդէմ նետից տանէր  
իբրև ըզպատուար.

Հարըստութիւն կուռ կամարին քաջ  
պաշտպանեաց 'ի ժամուն,

Բայց և 'ի նա անվանելի մուտ թափան-  
ցանց սայր՝ փըքնոյն.

Խաղեալ ցրտեաց զառըն քաջի ըզմորթ  
մարմնոյն երեսաց,

Եւ ընդ բացեալ վիրաբերանն անդէն ա-  
րիւն թուխ ցայտեաց:

Որպէս յորժամ Մէոնացի և կամ Կա-  
րեան կին ճարտար 34

Ժանիս փղաց յորդան կարմիր գունէ հրա-  
փայլ 'ի նըկար,

Չայն գեղեցիկ հրաշակ երտեալ սանձ ե-  
րախճան նըժուգին,

Եդ յառագաստն և շատ ասպետք տանել  
ընոյն փափաքին.

Բայց նա յաւանդ կայ արքայի պահեալ  
'ի ձօն գերաբուն,

Չարդ սիգապանձ երիվարին, և շուք փա-  
ռաց հեծելոյն 35.

Սապէս քո բարձք, Մենեղաւէ, արեամբ  
ներկան ծայր 'ի ծայր,

Բարձք ամրակոռք, սրունք քաջաբունք  
մինչև յոտին գարշասար:

Օ, ահի հարաւ, քրստմընեցաւ Ագամեմ-  
նոն քաջ արանց,

Այն ինչ ըզթուխ ետես զարիւնն աղբե-  
րացեալ 'ի վիրաց.

Չահի 'ի նոյն հարաւ անդէն և Մենե-  
ղաւ քաջարին,

Բայց և դարձաւ զըննեաց զի չէր թափ  
միջամուխ կարթ նետին.

Ոգին 'ի լանջն արծարծեցաւ, 'ի նոյն  
էառ քաջալէր,

Մինչդեռ անդուստ Ագամեմնոն խոր 'ի  
յոգւոց իւր հանէր:

Մալա զաջոյն Մենեղաւեայ, անդ և  
ընկերքն հեծէին .

« Ի մահ ուրեմն հարազատիս կուեցի, ա-  
սէր, զուխտ դաշին .

Պատուար Յունաց եդի ըզքեզ ընդ Տրոյ-  
ացւոց մենամարտ ,

Տրոյեանք ըզքեզ նետահարեալ զուխտն  
առ աթուր հարին ադդ .

Ի զո՛ւր արդեօք ելցէ երգումն, 'ի զո՛ւր  
գառանցն և արիւն ,

Ի զո՛ւր նըւէրք անապակին, զո՛ւր և աջք  
մեր հաստատուն :

Թէ ըզլշիուն ոչ չափեսցէ Ամարոսայինն  
այժմ արագ ,

Բայց չափեսցէ . լուծցեն դոքա 'ի մեծ  
կըշիւ և 'ի սակ .

Լուծցեն գլխովք, լուծցեն կանամբք,  
լուծցեն դասուք զաւակաց ,

Զի եմ բանիդ ես խելամոտ յուշի կա-  
պեալ անմոռաց .

Օր եկեսցէ, վանեալ հարցի այդ Եղիոն  
չահաստան ,

Եւ Պրիամոս, և քաջատէգ Պրիամոսին  
մեծ խուժան .

Գերակըշիուն արփիաբնակ մեծ Զըրուա-  
նեանն Արամազդ 36

Զասպարն ահեղ շողացուցեալ արկցէ  
զնոսա դիտասպատ :

Սրտմըտեցաւ նա ընդ դըրժանան, առնէ  
վրիժուն ըզհանդէս :

Այլ վասըն քո, Մենեղաւէ, ցաւէ ինձ  
յոյժ դառնապէս :

Թէ դու մեռցիս և աստ քոյին սահման  
կենաց կնքեսցի,

Դարձն իմ յԱրգոս համբաւատենչ 37  
մեծ կորանօք լինիցի :

Ըզհայրենիսն հեւենք 'ի յուշ բերցեն  
արագ և արագ,

Եւ զհեղինէն մեք աստ թողցուք Պրիա-  
մոսեանց յաղթանակ :

Իսկ քո ոսկերք, ո՛վ եղբայր իմ, 'ի Տրոյ-  
իս տարաշխարհ

Աստ փրտեսցին աճիւնացեալ, մնալով  
մարտիս անկատար :

Նո՛ւ յաւակնեալ 'ի հենդն արկցէ և այր  
գոռոզ արոյացին,

Մենեղաւեայդ իմ հոյակապ ոտնհար ե-  
ղեալ դամբանին :

Ո՛վ, ասասցէ, ցանդ եւք ցասմանն Ագա-  
մեմնեայ այս լինէր,

Որպէս զարդիս ըզգօրն Յունաց 'ի զուր  
խմբեալ աստ եբեր :

Ունայն ապա և սին նաւուք յերկիր դի-  
մեալ հայրենին,

Դարձաւ 'ի տուն, թողեալ աստէն ըզՄե-  
նեղաւ կորովին :

Ձայս ասասցէ . Այլ ինձ ո՛վ թէ հողն  
ընդ ոտիւք պատառէր 38” .

Կարճեաց ըզբան , Մենեղաւոս խարտեա  
ընն տայր քաջալեր .

“ Բա՛ջ լեր , եղբայր , մի սրտաբեկ լիցի  
խուժան մեր զօրուն .

Կետ սայրասուր զիս ո՛չ ՚ի շէշտ խոցեաց  
՚ի վայր մահացուն .

Ձիս արտաքոյ պահեաց դօտիս բազմա  
քանդակն ՚ի տիպար ,

Կերբոյ՝ զոր ինձ պըղընձագործք կուեցին  
զըրահ և կամար ” :

“ Ո՛վ թէ այդպէս , յոգւոց եհան Ագա  
մեմունն ՚ի ժամուն ,

Իցէ թէ այդ լինէր անշուշտ ո՛վ Մենե  
ղաւ իմ սիրուն :

Բայց և բըժիշկ գայցէ ներհուն զըննել  
զվերդ և ըզխոց ,

Եւ սպեղանեօք ամոքեսցէ դուլ խաւարին  
քեզ ցաւոց ” :

Ասաց , ՚ի նոյն և ճոխաբար ձայն Քարո  
զին արձակէ ,

“ Արի՛ կոչեա ըզՄաքաոն , աճապարեա  
Տալթիւբէ ,

Դա է որդին Ասկղեպիդեայ բըժիշկ ներ  
հուն անվըթար ,

Գայցէ տեսցէ զՄենեղաւոս զարին Յու  
նաց զօրավար .

Ի սա Տրոյեանց և կամ Ղիւկեանց ոք քաջ-  
աղէղն հար փըքին ,

Փառք մեծապանծ է նետողին , այլ մեզ  
աշխար ցաւագին ” :

**Լ**սաց արքայն , և Տալթիւբոս 'ի լուր  
փութայր պատգամաց ,

Յարեաւ գընայր ընդ մէջ զօրուն պատե-  
նազէն հելէնաց :

ԸզՄաքաոն խնդրէր դիւցազն , եգիտ ըզ-  
նա 'ի կանգուն ,

Կարգ կարգ քաջաց պատէր ըզնա ասպա-  
րազէն որերոյն .

Սոքա 'նդ նրմա 'ի Տրիկիայ ձիադարման  
նահանգէ

Հորդան ետուն , ում և Քարոզն արագ  
հրաւէր զայս ձայնէ :

“ Արի փութա Ասկղէպիդեանդ , արքայն  
հրաւէր կարգայ քեզ ,

Վաղվաղակի մեր քաջարւոյն Մենեղա-  
ւեայ յայց ելցես :

Ի դա Տրոյեանց կամ 'ի Ղիւկեանց ոք քաջ-  
աղէղն հար փըքին ,

Փառք մեծապանծ նետահարին , այլ մեզ  
աշխար ցաւագին ” :

Չայն գուժարկու ըզՄաքաոն սասանե-  
ցոյց մեծապէս ,

Յարեան ճեպով , գնային Յունաց մեծ  
բանակին ընդ հանգէս :

Հասին 'ի վայրն , ուր Մենեղաւ խարտեաշըն կայր նետահար ,

Եւ ըզնովաւ շուրջ սլար առեալ աւագանւոյն քաջորեար :

Ի միջակին արձանացեալ այրըն եկաց դիւցազգեաց ,

Անդէն ըզնեոն 'ի քաջակուռ գօտւոյն էառ և կորզեաց :

Անդ 'ի կորզէն ոչ հանգուրժեաց կրրկնեցաւ կարժն 'ի սայրին ,

Այլ Մաքաոն էառ քակեաց և զերօինազարդն ըզգօտին .

Քակեաց և զոր պրլընձագործք կուեցին զըրահ և կամար ,

Քաջիկ ասլա զըննեաց ըզվէրն , ուր նեոն անկաւ չարաչար :

Ծըծեաց զարիւնըն զապաժոյժ արկ հըմ տաբար դեղ ալու 39 ,

Զոր հօր իւրում պատուասիրեալ Քիրոնն ուսոյց մակացու 40 :

Մինչ դեռ սոքա Մենեղաւեայ արւոյն կային 'ի պաշտման ,

Անդուստ Տրոյեանց վաշտքըն քաջաց ասլարակողք շարժեցան .

Անդ և հեւլէնք վառին կրրկին , խրախոյս կարգան քաջազօր ,

Քնէած յայնժամ դու չասէիր զԱգամեմնոն թագաւոր .

Ոչ սրտաբեկ, ոչ վատ արանց թիկնա-  
 դարձոյց 'ի մարտէ,  
 Նա՛ ժիրաժիր վառեալ 'ի խազմ, յորմէ քա-  
 ջաց փառք յորդէ:  
 Ըզկառան անեալ պրղընձակուռ զոյգ  
 փորատող նրժուգաց  
 Եթող 'ի զատ, և զայն 'ի ձեռս պաշտօ-  
 նէին իւր յանձնեաց.  
 Եւրիւմեդոն սա Պրտղոմեայ Պիրայիդեան  
 էր որդին,  
 Ում սնդապէս տայր ըզպատուէր գող 'ի  
 նմանէ անմեկին .  
 Ձի թէ խոնջի կարգ տալ զօրուն, գըացէ  
 ըզնա փուլթապէս.  
 Ասաց, և ինքն յարեաւ հետի, վաշտուց  
 վաշտուց տալ հանդէս:  
 Թէ՛ ժիրաժիր զոք տեսանէր յԱքայե-  
 ցւոց ասպազէն,  
 Արձաննացեալ տայր քաջալէր խրախու-  
 սական 'ի ձայնէն .  
 «Քա՛ջ լիք հեւենք, և ձեր բազուկք մի  
 թուլասցին կորովիք,  
 Հայրն Արամազդ չէ ինչ բնաւին ուխտա-  
 զանցից զօրավիգ .  
 Այլ որք նախկին ըստահակեալք ուխտին  
 երդման դըրժեցին,  
 Քնքուշ մարմինքն 'ի յանդեղաց սարկեա-  
 ւառից մադլեսցին :

Մէք զամուսինս նոցին սիրուն և զմանկրտին զաղարծի,

Քանդեալ զոստանն հիմնայատակ, տարցուք նաւուք մեզ գերի” :

Իսկ թէ դիտէր՝ի գոռ մարտին զոք վերջոտնեալ վատ որեար,

Կայր կշտամբէր և լուտանաց սաստիկ ձրդէր պարսաբար.

“ Առանկք հեղենք, դուք վատք արանց, սայրից փրքնաց նըշաւակք 41,

Հիմ սարսափեալ գողայք այդպէս որ թուց եղանց հանգունակ.

Որք պարտասեալք յոգիս իւրեանց ընդ դաշտ վագեալ լայնաձիգ,

Եւ հատկըլեալք կան և զոփան, ՚ի լանջ նոցա կորով չիք:

Նրման և դուք ահիւ սլակեայք, և վերջոտնիք ՚ի մարտէն,

Թերևս Տրոյեանց մընայք խօլաց, թէ մօտ ՚ի ձեզ խուժեացեն.

Մօտ խուժեացեն, ուր լաստք քարշեալ կան ՚ի ծովափն ալէտանջ,

Եւ ա՞նդ թերևս ձեզ հովանի Արամազդ դայն լիցի աջ” :

Սապէս արքայն անդ հետագնաց կարգտայր վաշտուց ճոխաբար,

Մինչև եհաս ՚ի Կրետացւոց մտեալ զօրուն ՚ի ճամբար:

Գոռն իդոմէն վառեալ ըզզօրն ունէր  
զիւրև հանապազ,

Եւ ինքն յառաջ նահատակէր իբրև հուժ-  
կու յաղթ վարազ :

Անդուստ խրախոյս և Մերիոն տայր վեր-  
ջապահ վաղանդաց .

Կաց ՚ի զընին և ցնծացաւ Ագամեմոնն քաջ  
արանց :

Չայն ետ անդէն իդոմէնեայ բան ա-  
զուական ՚ի լեզուէն ,

« Ես հելլենաց վերայ քաջաց քեզ իդո-  
մէն , շուք դընեմ .

Շուք ՚ի մարտի , շուք և յայլ ինչ , շուք ՚ի  
կոչնոց յակըմբի ,

Ուր Յոյնք աւագք ՚ի խառնարանս խառ-  
նեն հրաշէկ հին գինի 42 .

Ձի ուր Յունաց այլ քաջորեար չափով  
ըմպեն բաժին մի ,

Քոյին բաժակդ իմոյն զուգորդ կայ մշտ  
հանդէս լիուլի .

Ձի դու արբցես և քամեսցես ըստ չափ  
ախորժ տենչանաց 43 ,

Արդ զն ՚ի մարտ արի ո՛ քաջ , ըստ քում  
նախնին պարծանաց » :

« Ես քեզ Ատրիդ , համհարզ անխաբ ,  
Կրետաց իշխան կրօկնեաց ձայն ,

Եղէց անշուշտ , որպէս յառաջ կուեցի ընդ  
քեզ ուխտ երդման :

Այլ գու խրախոյս կարգա այլոց, քաջաց  
Յունաց տուր հրաման

Լաստիլ 'ի մարտ, զի Տրոյացիք ընդդէմ  
ուխտին աղուացան.

Անշուշտ գոցա արդ գուժեացէ վայ և  
աշխար օրհասին,

Զի առաջին հետեալ նոքա ուխտի դա-  
շին դըրժեցին”:

Կա զայս ասաց, և Ատրիդէս էանց յա-  
ռաջ և խնդայր,

Եկն և եմուտ քաջ Այասից 'ի խօլ մարտ-  
կացն 'ի լաշկար:

Վառին Այասք, և ընդ նոսա ամպրոպա-  
նայր գունդ հետեաց,

Որպէս հովիւն ամբուռք ահեղ ժայռին  
դիտէ 'ի բարձանց,

Երբ մառախուղ սլատէ ըզծով և քան  
ըզձիւթ մըթագին,

Եւ գալով գայ ընդ մըլանուան 'ի թափ  
շընչեալ զեփիւռին.

Մըրիկ գուժայ, վէտ վէտ գոչէն դիզան  
ալիքն և ծըփան,

Պակնու հովիւն, և ընդ անձաւ խաշին իւ-  
րում սայ հորդան 44.

Այսպէս յայնժամ խումբ արարեալ ընդ  
Այասից քաջազանց,

Եւ մըրրկեալք ասպարիսեն խօլքըն մար-  
տիկ սլատանեաց.

Մարտ յահաւոր դայր սևագունդ հո-  
ծեալ փաղանդն իբրու մէգ ,

Ահեղագոչք և թխացեալք յասպար , յաշ-  
տէն և 'ի տէգ :

Զահեղ տեսիլն Ադամեմնոն տեսեալ ար-  
քայն և ցընծայր ,

Եւ յանուանէն ձայնեալ նոցա , արագաթև  
եւ բարբառ .

« Ես ձեզ , Այսպք , պետք զօրավարք , ես  
ձեզ խրախոյս ոչ կարգամ :

Դուք ինքնաշարժք 'ի մարտ արեանց զօ-  
րուն ձերոյ տայք հորդան :

Հայր Արամազդ , և Աթենաս , և Ապո-  
ղոն բարեփառ ,

Ո՛վ , թէ կորով զոյգ հաւասար բնաւից 'ի  
լանջ տարրանայր .

Արագ յայնժամ Պրիամոսին մեծ շահաս-  
տանն ամրակուռ .

Ի մեր բազկաց հիմնայատակ մատնէր յա-  
ւար և յապուռ » :

Ասաց արքայն , անց ըզնոքօք , խաղաց յա-  
ռաջ յայլ խուժան ,

Անդ գըտանէր նա ըզնեստոր հռետոր  
Պիւղեանց քաջաբան 45 :

Լաստէր 'ի կարգ ըզգօրականն յորդէր 'ի  
մարտ ծերունին ,

Անդ մեծ համհարզըն Պեղագոն և Ալաս-  
տոր շուրջ կային .

Անդ աջակից և Քրոմիոս և Եմոնէս քաջ  
արքայն ,

Անդ և Բիաս նիզակակից հովիւն ազգաց  
և իշխան :

Նախ զայրուծին կարգէր ճակատ , զոյգ  
ընդ ձիոց և կառաց ,

Եւ վերջապահ էդ ըզճետեաց , գունդ  
գունդ ըստուար ըզքաջաց .

Պատուար մարտին եդ ըզսոսա , 'ի մէջն  
յորդեաց վատ որեար ,

Զի յոչ կամաց 'ի նեղ մտեալ , ժրասցի և  
վատն 'ի պայքար 46 :

Պատուէր ապա այրուծիոյն զայս նախ  
կարդայր 'ի ժամուն ,

Սանձ աշխուժից գընել ձիոց , և մի խրուով  
տալ զօրուն :

Մի՛ ոք դարձեալ 'ի ձիսն եղեալ և կամ  
յոյժ իւր ապաստան ,

Մարտ ընդ Տրոյեանց նախամարտիկ գի-  
ցէ միայն ընդ միայն :

Մի՛ և , ասէր , այր սարտուցեալ վերջոտ  
նեսցի վատաբար ,

Զի և գովին գուք սրբտաբեկ լիջիք ան-  
շուշտ և տրկար :

Իսկ թէ իջեալ ոք յիւր կառաց , գիմէ հան-  
դէպ թշնամւոյն ,

Նա արդնընկէց տիգահարցէ , եք յաջո-  
ղակ են կըռուոյն 47 .

Զե և նախնիք նահատակեալք ՚ի սոյն ա-  
րուեստ և հանճար,

Վանդեալ յերկիր կործանեցին բազում  
քաղաք և պատուար:

Այսպէս վաղուց ներհրմտացեալ յա-  
րուեստ զինուց ծերունին,

Դըռոյթ զօրուն տայր յանդիման Ադա-  
մեմնեայ արքային:

Արքայն ըզծերն ՚ի յակն արկեալ, և առ  
ինդին այլ յայլմէ,

Արադաթիւ բան բարբառեալ կարդաց ըզ-  
նա յանուանէ:

«Վա՛շ ծերունիդ, ո՛վ, ո՛րչափ են աշխոյժք  
սըրտիդ քաջարի,

Էին քո ծունկք և էր կորովն հաստահա-  
րուեստ քոյն բազկի,

Բայց ծերութիւնն հասարակաց ըզքեզ  
այժմիկ պաշարեաց:

Ո՛վ, թէ զայլ ոք, և դու ՚ի թիւ էիր ա-  
ռոյգ պատանեաց»:

«Դ՛ու այնպիսի, քաջ ծերունին անդէն  
կըրկնեաց փութապէս:

Առոյգ տիօք և ես ինքնին իղձ լինէի, Ա-  
տրիդէս,

Որպէս յորժամ զԵրեւթաղոս ես զայրն<sup>48</sup>  
հարի աննըման:

Այլ ոչ զամէն միանդամայն պարգևս ե-  
տուն դիք մարդկան:

Երբեմն էի ես սրատանի արդ զիս էառ  
ալևոյթ ,

Համայն այնպէս ես 'ի յասուէտս արձա  
նանամ փոյթ ընդ փոյթ :

Ի բան շրթանց և 'ի խորհուրդ վարիչնո  
ցուն ճոխանամ ,

Իբրև լինել խորհրդական է ծերունեաց  
շուք փալթամ :

Թող արդնընկէցք նիզակաճօճք մեր խա  
ղասցեն սրատանիք ,

Քան զիս 'ի մարտ նահատակեալքն և 'ի  
բազուկ կորովիք " :

**Լ**ըլաւ արքայն, անց ըզնոքօք, էր ցընծա  
ցեալ 'ի սրտի ,

Եկն և եգիտ զորդին Պետեայ Մենես  
թէոս քաջաձի :

Աթենացիք կան ըզնովաւ քաջքն 'ի մար  
տին 'ի հանդէս ,

Արձանացեալ կայր առընթեր և խորա  
գէտն Ոգիւսէս :

Վաշաք առ նովաւ 'ի զէն 'ի զարդ Վեփա  
ղացւոցըն քաջաց ,

Որոց չև էր խօշիւն լուեալ զահեղ մար  
տին ըզգոումանց .

Քանզի փաղանգք այն ինչ առին խաղալ  
շարժիլ առ 'ի մարտ ,

Յունաց, Տրոյեանց ասպազինաց 'ի զէն  
վառեալ և 'ի զարդ :

Մնային նոքա զ' ՚ի Հեւեհնաց գունդ մի  
գիմեալ ճակատէն,

Տրոյեանց ընդդէմ նահատակեալ մարտին  
ըսկիզբն արասցեն:

Իբրև այնպէս Ագամեմոնոն յակն ըզնոսա  
արկանէր,

Բարբառ տըւեալ արագաթև պարսաքա-  
րեաց անվէհեր:

« Բա՛րէ, մազդեզըն արքային Պետեայ  
որդի հօրամոյն,

Եւ դու յողիդ աղուէսացեալ, և այր 49  
նենգաւ պատարուն.

Հիմպակուցեալ մընայք այլոց դուք զերթ  
որեար անաւագ,

Եւ ՚ի մարտէն կայք տարադէմ և վէհե-  
րեալ յուլանայք:

Ձեզ գիմագրաւ ընդ նահատակս արձա-  
նանալ էր արժան,

Եւ խառնամուխ ընդ ապաժոյժ գօտէ-  
կըռուէլ ՚ի մըրցման:

Ո՛չ և յընթրիս ձեզ առ յինէն գայ հրա-  
ւիրակ առաջին,

Յորժամ խնճոյս քաջորերոյն կահեն Հեւ-  
լենք ակըմբին.

Անդ հեշտացեալք ըզխորովոյսն ուտէք  
ըստ ձեր ախորժակ,

Եւ ըստ ըղձին զանուշարար գինւոյն քա-  
մէք ըզբաժակ.

Եւ արդ սիրէք կալ 'ի զընին, թէպէտ  
Յոճնաց գունդք տասնեակ

Ի կուռ յերկաթ կանուխ 'ի մարտ խրա-  
խուսեսցեն նահատակ”:

Տիգօք աչաց մեծ խորագէտն անդէն  
կըրկնեաց Ողիւսէս.

“Զինչ բան 'ի դրանց քոց ատամանց 50  
'ի դուրս վազեաց, Ատրիդէս.

Զի՞ դու ըզմեզ 'ի մարտ քաջաց սպարսես  
իբրև վատք արանց.

Այլ աղէ դու տեսցես յայնժամ, երբ  
խառնուրդ է ճակատաց.

Յորժամ Հելենքս տացուք զահեղն ընդ-  
դէմ Տրոյեանց ըզըռուոյթ,

Եւ դու յայնժամ կայ 'ի զընին, թէ քեզ  
կամք են և կամ փոյթ:

Տէլեմաքեայ հայրըս խառնեալ 'ի յայն  
չըչուկ և հանդէս,

Կամ նահատակ. բայց դու զարդիս վայ-  
րաբանեալ զօդ կոծես”:

Ճանեաւ Ատրիդ, թէ յՈղիւսէս խէթ  
բորբոքեաց և ըզհեռ,

Ժըպիտ 'ի դէմս հատանելով, շըրջեալ ըզ-  
բանն անուշէր.

“Աղէ, մազդեզըն Լայերտեան դու 51  
Ողիւսէս բազմիմաստ,

Ես աստ անճահ ոչ ինչ կարդամ. քեզ ոչ  
հրաման, և ոչ սաստ:

Գիտեմ ճարտար, միտ ողջախոհ յաճես  
յոգիդ բարեբուն,

Եւ խելամուտ և համամիտ խմայն դու ես  
խորհրդայն :

Թէ բան մի խամ լուար զարդիս, գար-  
ման տարցուք մէք յապայն

Արի՛ ով քաջ, երգուեալ 'ի դիս, մեզ  
մուտացօնք լիցի այն 52 ր :

Մասց, եթող անդ ըզնոսա, և անց յա-  
ռաջ յայլ դասակ,

ԸզԴոմեդէս եգիտ Տիւգեայ զահեղազօրն  
ըզաւակ :

Նըժոյգքն 'ի լուծ, կայր նա կանգուն 'ի  
վեր 'ի կառս անվէհեր,

Էր Սթենեղոս քաջ Կապանեանն և այր  
արգոյն առ ընթեր .

Տեսեալ այնպէս, սարսէր արքայն Ագա-  
մեմնոն քաջ արանց,

Եւ 'ի Դոմեդ գարձեալ 'ի կողմն արա-  
գաթև ձայն կարգաց 53 .

« Բաբէ, Տիւգեայ ասպազինին գոռոյն  
զաւակ դու արի,

Զի՛ քեզ սլակնուլ, և աստ և անդ կամուրջ  
խնդրել ըզմարտի 54 :

Այդ արհաւիրք մեծին Տիւգեայ երբէք  
'ի սիրտ ոչ անկաւ,

Նա ցանդ 'ի մարտ քան ըզհամհարզան էր  
նահատակ դիմագրաւ .

Ես չեղէ անդ, և չեմ տեսեալ, պատմեն  
Ճըշգրիտ մեզ ուղջոյն .

Որք յակն արկին զարւոյն մրցանան, բնա-  
ւից ասեն վեհագոյն :

Սա հիւր երբեմն ընդ Պողնիկեայ քաջին  
անզարդ և անզէն ,

Զօրաժողով խմբել խուժան եկն և եհաս  
'ի Սիււկէն :

Քանզի յայնժամ ընդդէմ՝ Թեբայ վեհ  
պատուարին մարտ գուժայր ,

Եւ շատ յողոք անկան նոքա տալ այրըն-  
տիր 'ի սատար :

Քաջ յանձն առին, և գեղեցիկ խնդիրն  
'ի գլուխ ելանէր ,

Այլ Արամազդ յետ ընթադրեաց նշան  
ցուցեալ գուժաբեր :

Մեկնեցան քաջքն և տարադէմ զուղւոյն  
հատեալ պողոտայն ,

Եկին յԱսոպ 'ի խոտաւէտ կրնիւնաբերն  
'ի սահման :

Բայց 'ի Թեբէ Յոյնք ըզՏիւղէս հրեշտակ  
բանբեր առաքեն .

Նա ել չոքաւ և անդ շատ զոք եգիտ կագ-  
մեանց 'ի զարմէն :

Ճաշ առնուին նոքա քաջին ընդ Ետոկ-  
ղեայ մարդակաւ ,

Տիւղէս ասպեան անդ հիւր օտար 'ի մէջ  
խօլացն ոչ պակեաւ :

- Էր միայնիկ կաղմեանց քաջաց նա յող-  
նախուժքն ՚ի հանդէս ,
- Սակայն և անդ բըռնամարտիկ ձայն ետ  
մըցմանց յասպարէս :
- Յաղթեաց հեշտի , և ընթադրէր մի ըզ-  
միով դասադաս ,
- Այսչափ նմա անդ զօրավիգն հովանա-  
ցաւ Աթենաս :
- Յասեան կաղմեանք խօլքն ասպաղէիք  
լինեւ ՚ի նա դամագիտ ,
- Եւ մինչ դառնայր եգին նըմա դարան նո-  
քա խիտ առ խիտ .
- Յիսուն թըլով դարանակալք կային ան-  
դէն սրատանիք ,
- Եւ պարագլուխք նոցուն իշխանք կացին  
կրկին կորովիք .
- Մին էր Մէոն Եմոնիդեան դիցն անմա-  
հից համազօր ,
- Միւսն էր զաւակ Աւտոփոնեայ Լիւկո-  
փոնտէս քաջն ՚ի գոռ :
- Բնակից սոցա արին Տիւդէս օրհաս ա-  
ծեալ դառնութեան ,
- Արկ դիտասպաստ . ըզմին միայն դարձոյց  
՚ի տուն ողջանդամ .
- ՉՄէոն պահեաց անդրթեւի , դից հնա-  
զանդեալ սրատգամին .
- Այսպիսի ոք եկաց Տիւդէս այն Ետողեան  
քաջարին :

Սակայն զաւակ 'ի լոյս եբեր սա այս ծը-  
նող քաջամոյն ,

Ջաւակ խոնարհ քան զինքն 'ի մարտ , և  
'ի լեզուն վեհագոյն ” :

Նա զայս ասաց , այլ Գոմեդէս լուռ և  
եթ կայր կորովին 55 .

Նա սարսաւեաց , սա ակն առեալ շուք  
եդ դիմաց արքային 56 :

Բայց քաջազինըն կասականեայ որդին ձայն  
ետ անվեհեր .

“ Իբրու ահահ էս ճշմարտին , ո՛վ Ատրի-  
դէս , մի սրտեր :

Քաջ իսկ սարծիմք , եթէ մեր փառք քան  
ըզհարանցն 'ի վեր կայ .

Մեք քաջաբար զեօթնադռնեանն ըզգահ  
կալաք ըզթեբայ .

Ընդ Արեսեանըն պատուարօք զօր խումբե-  
ցաք սակաւութք ,

Վըստահք 'ի դիցն ըսքանչեւիս և Գիոսին  
'ի բազուկ :

Իսկ մեր նախնիքն անկան տապաստ խա-  
կախորհուրդք և ժըպիրհ 57 ,

Մի դու ուրեմն ըզհարս ընդ մեզ ձըգեր  
պատուոյն 'ի կըշիռ ” :

Խեթիւ 'ի նա անդ կորովին յառեալ Գո-  
մեդ և ասէր .

“ Վայր մի իմոյն , ո՛վ բարեկամ , անսա  
բանին և լուռ լեր .

Ես ընդ Ատրիդ ոչ քանքարտամ հովիւն  
 ազգին և արքայ ,  
 Թէ դա Յունաց 'ի մարտ քաջաց խրախու  
 սական ձայն կարդայ .  
 Քանզի անշուշտ շուք մեծապէս , հա  
 րումն նրմա և սրաշուն ,  
 Թէ Յոյնք Տրոյեանց հարուած ածեալ  
 հարցեն ըզմեծն Եղիոն .  
 Դարձեալ թէ Յոյնք նըկաւն լիցին , յոր  
 դէն նմա մեծ լալիք .  
 Արդ մէք այժմէն փորձ ըզբազկին տա  
 ցուք իբրև քաջարիք " :  
 Ասաց , անդէն փայլակնացաւ նա 'ի կա  
 ռացն 'ի գետին ,  
 Դոփեաց զինուէքն , հնչեաց ահեղ սրըղնձն  
 'ի լանջ արքային .  
 Ահեղ այնպէս և սոսկալի դիմեաց արին  
 անլէհեր ,  
 Զի և սրտեայ այր ոք տեսեալ ահիւ մե  
 ծաւ սասանէր :  
 Որպէս զափամբն բազմագոչ ալիք ծո  
 վուն հողմավար ,  
 Ի զեփիւռէն կուռ վէտ 'ի վէտ կոծին  
 ծրփան վեր 'ի վայր .  
 Կոհակ կոհակ նախ դիզանան 'ի դաշտ  
 կապոյտ Պոնտոսի ,  
 Եւ առ ափամբ դան խորտակին , դոչէն  
 ահեղ սոսկալի .

Շանթեն ժայռից , գեղուն կանգնին վե-  
րոյ նոցուն քաջալանջ ,

Եւ մըռննչեալք 'ի յեռանդան փրփուր  
ժայթքեն ալէտանջ :

Սապէս Յունաց կարգ փաղանգացն ան-  
դուլ ըզհետ կուռ խաղայր ,

Խաղայր 'ի մարտ . գնդաց գնդաց 'ի գլուխ  
անցեալ զօրավար :

Իսկ զօրն ամբաւ լուռ անշըշունջ շարժէր  
'ի մարտ ահաւոր ,

Բա՛ չասէիր թէ այն խուժանն իցեն մար-  
դիկ ձայնաւոր :

Խաղան կարգաւ , և լըռութիւնն էր շուք  
պետաց մեծասքանչ ,

Եւ 'ի զինուց բազմագունեան փայլ հա-  
տանէր և ճաճանչ :

Իսկ Տրոյացիք , որպէս հովուին բազմա-  
հարուստ հօտք խաշանց

Կան 'ի դաւթին , յորժամ կըթեն կաթն  
ըսպիտակ 'ի սլտկանց ,

Կան և մայեն , բառաջ անհատ 'ի ձայն  
գառանցն արձակեն ,

Նըման Տրոյեանց ձայն խառնագոջ հնչէր  
'ի մեծ բանակէն :

Չէր բարբառ մի ամենեցուն , ոչ նոյն ա-  
ւաջ բողբոջ ,

Այլ խառնախօսք խառնալէզուք , խու-  
ժան 'ի շատ 'ի մարզից :

Սոցա Արէս, նոցա Պալլաս խաժակն հոր  
դան տայր մարտի,

Հոյն սոսկալին, և Արհաւիրքն, և Հեռ  
շամբուշն ամեհի 58 .

Սա հարազատ քոյր և համհարզ մարդա-  
խոշոշն Արեսին,

Սա Հեռ ասեղ, նրկուն մարմնով գայ յե-  
րևան զառաջինն .

Աճէ ապա, և վերամբարձ գըլուխ յեր-  
կին հարըստէ,

Եւ դարչապարն 'ի ճեմս ոտից զերկիր  
խոնարհ զայս կոխէ 59 :

Սա և յայնժամ խօշ մահաբեր լեալ միջա-  
մուխ երկուստեք,

Գընայր ընդ զօրն, յորդէր մարդկան շը-  
շուկ ասեղ և ըզվէգ :

Իբրև այնպէս կրկին ճակատք հասին 'ի  
մի 'ի սահման,

Անդ վահանակք առ վահանակս և տէգ  
առ տէգ բախեցան .

Թափ ընդ իրեարս պատենաղէն խօլք  
խառնեցան ասաւոր,

Եւ ընդ ասպարս ասեղ կոփիւն ասպարք  
հնչեն կմբաւոր .

Թնդայր Թըմբէր ձայն բացարձակ արձա-  
գանդաց և բոմբիւն,

Աստուտ հեծել, անդուստ քաջաց էր  
խիզախել և դուրն :

Մ'նչէն անկեալքն և վարողացն 'ի մահ  
 գոչիւն բարձրանայր,  
 Եւ ընդ երկիր յորդահոսանք արեանց խա-  
 ղան առուաբար 60 :  
 Չօրէն հոսանք խոխոջացեալք ձրմերայ-  
 նոյն հեղեղաց  
 Յուզեալ գրդանս, և մեծ հորդան տան  
 'ի լերանց գագաթանց .  
 Ջուրք մըմըռուեալք խառնին բախին 'ի  
 ձիգ խոխոմ խորածոր,  
 Անդուստ 'ի լայն 'ի սահանաց գահավի-  
 ժէն 'ի վնհ խոր .  
 Բացուստ 'ի բաց հովիւն յանտառս լըսէ  
 զբոմբիւնն ահագին,  
 Այսպէս բանակք լեալ խառնամուխք  
 ձայնս արհաւրաց գոչէին :  
 Սախ Անտիղոք զայր նահատակ 61 զԵ-  
 քեպողոն քաջարի  
 Արկ գիտասպաստ 'ի Տրոյացւոց, էր Թա-  
 ղիւսեայ սա որդի .  
 Շէշտեաց նախկին, եհար 'ի վերջ սաղա-  
 ւարտին գիսասպանծ,  
 Սայրն 'ի ճակատըն վարսեցաւ, յոսկրըն  
 եմուտ թափանցանց .  
 Հիքացելոյն աչք լուսալիբք յանլոյս խա-  
 ւար սպտեցան,  
 Հոսեալ թըմբեաց իբրև ըզբուրդ, ան-  
 կաւ 'ի մարտ գոռութեան :

Անդ յանկանեւ ըն Եղեփնոր էառ զոտիցն  
էտ ընդ էտ,

Էր սա հըզոր Քաղկոդոնեան քաջ Աբա-  
սեանց նահապետ .

Քարշէլ քարշէր հանել 'ի դուրս քան ըզ-  
նեաից ասպարէս ,

Կապուտ զինուցն առնել փուլթայր , ել 'ի  
դերևս հիքապէս :

Յակն Ագենոր ըզդիաքարն արկեալ և  
ճեպ էտ անդէն ,

Եհար 'ի կողն որ ընդ քարշէլն 'ի բաց թո-  
ղաւ յասպարէն .

Կշիռ այնպէս 'ի կողնորա ըզսայր շէշ  
տեաց նիզակին ,

Ելոյծ զանդամս , և շնչասպառ տապաստ  
անկաւ կորովին :

Աղէտ ամբաւ Տրոյեանց Յուճաց յոր-  
դեաց քաջիս 'ի մահուն ,

Իբրև գայլոց դիմեն վոհմակք , միմեանց  
գուժան մահ , արիւն :

Դիմեաց Այաս Տեղամոնեան զԱնթե-  
մոնեայ հար զորդին ,

Սիմոնիսիս մատաղատունկն էր սա առոյգ  
պատանին .

Մայրն էջ յիգեայ , ծընաւ ըզսա առ Սի-  
մոնին դետեզեր ,

Մինչ նա եկեալ հետ ծընողացն յայց իւր  
խաշին ելանէր .

Վասն այնորիկ Սիմոնիսիս անուն նրմա  
կարդացին ,

Այլ ծընողացն ըզսընընդեան չէտ փո-  
խարէն նա սակին .

Արագամահ , չեհաս յարբունս այս պա-  
տանիս չարաբաստ ,

Ահեղագող մեծն Այասայ 'ի տէգն ան-  
կաւ դիտապաստ .

Նախ շէշտ եհար , խոցեաց 'ի լանջն ըզ-  
նա յըստինսըն աջոյ ,

Եւ թափ հրափայլ ընդ մէջ թիկանց ե-  
մուտ և ել տէգն ազգոյ .

Հողաթաւալ նա դիտապաստ անկաւ իբ-  
րև կաղամախ ,

Այն որ մատաղ բուսաւ առոյգ ջրասուն  
ճահճին անդ 'ի խաղ .

Փթթեալ բողբոջ ետուն 'ի ծայրն ոստք  
և ուղէչք քաջաբոյն ,

Հիւսըն կառաց կտրեաց ըզնա 'ի սայր 62  
փայլուն երկաթոյն .

Անիւ գործեւ չքնաղ կառաց կտրեաց ըզ-  
փայտն յարուեստի ,

Եւ նա յափունս անկեալ գետոյն թօշնի  
տակաւ ցամաքի :

Սապէս տապաստ ըզՍիմոնիս ըզքաջա-  
մոյն պատանին

Դիւցազն Այաս եթող կապուտ և կողո-  
պուտ 'ի դաշտին 63 :

- Այլ շէշտ 'ի սա Պրիամոսեան պատենա-  
 զարդն Անտիփէ,  
 Տէգ սայրասուր անդ 'ի խրուան 'ի Թափ  
 կշուեալ արձակէ :  
 Վրիպեաց կշուոյն, հար ըզլեւկոն ըզքաջ  
 համհարզն Ոգիւսին,  
 Հար ընդ երանան, երբ զանկեւոյն քար-  
 շէր ուրեք ըզմարմին :  
 Ինքն ըզնովաւ անկաւ տապաստ և ել  
 դիակն 'ի ձեռաց,  
 Այլ յՈգիւսէս հրավառ զայրուց գութ  
 համհարզին բորբոքեաց .  
 Եւ նահատակ զինու զարդու վառեալ  
 պըղինձ 'ի հրաշէկ,  
 Եկաց մօտ յոյժ, շուրջ ակնարկեաց, և  
 շողացոյց Թափ ըզտէգ .  
 Ի յարդնընկէց կշուել արւոյն շրտեան  
 Տրոյեանք 'ի քաջէն,  
 Այլ ոչ ունայն 'ի կշուութեան ճօճեաց  
 ձրգեաց նա զաշտէն :  
 ԸզԴեմեկոն Պրիամոսեանն հար զաղջկոր  
 դին և խոցեաց,  
 Որ յԱբիւդեայ գայր արագոտն 'ի նուս  
 ձիոց մատակաց :  
 Հար տէգ 'ի քունն, և համհարզին փո-  
 խարինէր դարձ վրիժուն,  
 Եւ զերկաթոյն սայր դառնութեան ան-  
 ցուցանէր քուն ընդ քուն :

Բըլձակնեցան ականողիքն , օրհաս պա-  
տեաց խաւարին ,

Անկաւ դոփեաց , զէնքն իւր և զարդ շը-  
ռինդն հարեալ հնչեցին :

Ընկրօկեցան անդ նահատակք , և քաջն  
հեկտոր նայապէս ,

Գոչեն հելէնիք քարշեն ըզգիս դիմա-  
գրաւեն յասպարէս :

Դէտ 'ի բարձանց կայր Ապողոն , սըրա-  
նէր 'ի ծագ Պերգամայ 64 ,

Գոչեաց սաստիկ , անդուստ Տրոյեանց  
խրախոյս հորդան զայս կարդայ :

« Արիք , աեղի մի տայք Յունաց , Տրո-  
վադացիք ասպաղէն ,

Չէ երկաթի մարմին դոցա , չէ և մարմին  
քարեղէն .

Երբ մարմնախանձն հարու երկաթ 65 ,  
խոցին դոքա հիքասպէս .

Նա զի Թեոեայ վարսագեղոյն որդին չէ  
աստ Աքիլէս 66 .

Դա ոչ գոռայ , դա անդ 'ի նաւս ծընգի  
'ի մաղձ ոխութեան » .

Զայս ինչ գոչեաց ահեղն աստուած 'ի  
դըղեկէն Պերգամեան :

Բայց հելէնաց դուստրըն մաղգեզն այն  
Տրիտոնեան գեղասպանձ 67

Շուրջ գայր ընդ զօր , խրախոյս կարդայր  
ուր և դիտէր վատ արանց :

ԶԴիոր յայնժամ զԱմարիւնկեանն օր-  
հաս պատեաց մահակիր ,

Զի յաջ 'ի սրունսն 'ի կոյս կրքնկան հա-  
րաւ քար մի բռնալիր .

Քար սայրասուր , զոր Թրահացւոց հար  
զօրավարն և իշխան ,

Պիւռուն էր սա Իմբրասիդեան , գիմեալ  
յերկրէն Ննոսեան :

Նեարդ ըզկրկին և զոսկր ողջոյն ջախեաց  
դըժնեայն գայլախազ ,

Նա Թաւալգլոր և անյարիր անկաւ յեր-  
կիր 'ի յորսայս .

Յողւոց պարզէր , դաստակս երկուս ամ-  
բարձ 'ի գութ ընկերաց ,

Այլ հաս Պիւռոս որ հարն ըզնա , հաս 'ի  
վերայ և տիրեաց .

Շամիրեաց 'ի փորն , և ախոնդիքն ողջ  
Թափեցան 'ի գետին ,

Եւ պատեցաւ զաջօքնորա խոր աղձամուղջ  
խաւարին :

Բայց զայն վերագն յըստինսն 'ի լանջ  
Թոաս խոցեաց Ետողեան ,

Մըկընդահար 'ի Թոքառաջն ըզսայր վար-  
սեաց գեղարդան .

Վազեաց Թոաս , և յաղթ ըզտէգն ա-  
ռեալ քարչէր 'ի լանջաց ,

Աճապարեալ և սայրասուր 'ի պատենէն  
սուր ձրգեաց :

Քաղեաց զողին , մսեալ 'ի մէջն 'ի գան-  
ձակին ըզսուսեր 68 ,

Զէն ոչ կապտեաց , զի խումբ ըզնա նի-  
զակակցաց շուրջ պատէր :

Թրակացիք քաջք , գաղաթնագէսք 69 ,  
մըկընդաւորք 'ի ձեռին

Ի տիտանեանն երեսաւոր երկայն տիգօք  
գոռային .

Թևակոխեն տարամերժել ըզկորովին քա-  
ջաբուն ,

Մինչև արւոյն անհընարեալ ընկըրկեցաւ  
'ի ժամուն :

Այսպէս տասլաստ միմեանց հանդէս  
կան պետք Թրակաց և Եպեանց ,

Անդ ըզնոքօք անկեալ կային և բազմա-  
կոյտ դիականց 70 :

Ըրդ եթէ մարդ շրջէր ընդ զօրն , անխոց  
'ի տէգ և անվէր ,

Բայց ձեռն 'ի ձեռն ըզնա Պալաս 'ի  
դաշտն առեալ մուծանէր ,

Նոյն 'ի նմանէն ըզտարափել վանէր փըք-  
նաց դիւցաբար ,

Անշուշտյայն ժամ ընդ մեծ մրցանսն մարդ  
հիացեալ զարմանայր 71 :

Զի քաջորեար շատ Տրոյացւոց , շատ և  
Յունաց բանակին ,

Զայն օր յորսայս խիտ առ միմեամբք տա-  
պաստ անկան 'ի դաշտին :



# ԵՂԻՆԿԱՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ե.

Ն Ա Խ Ա Դ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մեծամեծ նահատակութիւնք Դիոմեդեայ, հովանացեալ յԱթենասայ: Նետահարի 'ի Պանդարոսէ, և աւաքի յԱթենասայ: Ենէաս ընդ Պանդարոսի դիմագրաւինմա. Պանդարոս մեռանի. և Ենէաս վտանգի. Ասողիկ թափէ զԵնէաս, բայց 'ի ձեռն վիրաւորի 'ի Դիոմեդեայ: Արէս խրախուսէ զՏրոյացիս, և հովանի կայ Հեկտորայ: Սարպեդոն սպանանէ զՏղէպողեմ: Քաջանան Հեկտոր և Արէս, տեղի տայ Դիոմեդէս: Նկարագրութիւն կառացն Հերայ և զինավառութեանն Աթենասայ. երկոքին սոքա իջանեն յՈղիւմպեայ 'ի զօրավիգ յունաց: Դիոմեդէս խըրախոյս առեալ յԱթենասայ, խոցէ զԱրէս: Ահեղագոչ լեալ Արէս փախչի յՈղիւմպոս, և կշտամբի յԱրամազդայ, և բուժի 'ի Պէոնէ:

Տեսարանն կայ 'ի նմին վայրի:



## ԵՂՒԼԱԼՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե .

ՊԱԼԼՅՍ յայնժամ հովանացեալ Տիւ-  
դեայ որդւոյն հօրամոյն ,  
Խրախոյս անչէջ 'ի սիրտ քաջին և ոյժ  
չնչեաց գերաբուն .

Զի նա բնաւից կայցէ Յունաց ականա-  
ւոր նահատակ ,

Եւ մեծաշուք արփիափայլ տարցի անձին  
մրցանակ :

Սաղաւարտէն և յասպարէն հուր բոց ան-  
չէջ հիասքանչ ,

Նրման աստեղ աշնանայնոյն շանթ թօ-  
թափեր և ճաճանչ .

Այն որ 'ի մեծ լողարանէն ջինջ ողողեալ  
յովկիանուն ,

Գայ յերևան և փայլակէ 'ի բուն յաւէտ  
շողղողուն .

Բոց զայս քաջին յուսըն վառեաց , նոյն  
և 'ի ծայր դագաթան ,

Առ և դրդեաց ըզնա 'ի մէջ ուր էր շըշուկն  
և խուժան :

Պարէս անուն էր 'ի Տրոյեանս այր ճոխ  
և այր բարեզգեաց ,

Քուրմ հեփեստեայ և հայր քաջաց էր  
սա կրկին զաւակաց .

Փիգէս , Իգոս , զաւակք ներհունք յազգ  
ամենայն 'ի մարտի

Չատեան հօրէն , և Գոմեդեայ եկին հա-  
րան 'ի դիմի :

Սա 'ի դեանի կրուուէր հետի , նոքա 'ի  
կառս գոռային ,

Եինչև դիմեալ մօտ ախոյեանք միմեանց  
եկին և կացին :

Փիգէս յառաջ կշռեաց ըզտէգ զերկայ-  
նաստուեր և ձրդեաց ,

Եհար ըզսայրն ընդ ուսն աջոյ , այլ ըզ-  
Գոմեդ ոչ խոցեաց :

Տիգեաց երկրորդ և Գոմեդէս , և կշռու-  
թիւն չեւ ունայն ,

Ընդ մէջ ըստեանց վարսեաց 'ի լանջն ,  
արկ 'ի կառացն 'ի կործան .

Չքնաղ ըզկառան ելիք Իդոս , յահ խու-  
ճապեալ և 'ի հոյն ,

Լքքաւ և ինքն հարազատին կալ'ի պաշտ-  
պան անկելոյն :

Բա՛ յօրհասէն չապրէր և նա , բայց ապ-  
րեցոյց Հեփեսոէս ,

Յամբ քօղարկեաց , մի սուգ 'ի սպառ առ-  
ցէ ըզծերն ըզՆարէս :

Գիմեաց յայնժամ , առ ըզնըժոյգս Գիո-  
մեդէս կորովին ,

Ետ համհարզից տանել 'ի նաւս իւր մրցա-  
նակ առանձին .

Տեսին Տրոյեանք ըզՆարեսին որդւոց զա-  
ղէտ դառնութեան ,

Մին դիտասպատ և մին փախչէր , յոգիս  
հարեալ խոցեցան :

Յայնժամ Պալլաս խաժակն առեալ գոռ-  
զԱրեսին ըզձեռաց ,

Բարբառեցաւ ընդ ամեհին , խորհուրդ-  
քաջիկ զայս նիւթեաց .

« Արէս , ասէր , քաղաքաւեր , արենա-  
խանձ լո՛ւր Արէս .

Ա՛յ մարդածախ , ո՛չ թողցուք մէք դոցա  
զկրուուոյն զասպարէս :

Թո՛ղ ում ումէք կրկին ազանց շուք տայ  
Գիոս 'ի արխտուր ,

Եւ մէք ո՛ն անդր , 'ի ցասմանէն լիցուք  
մեր հօրն անձնասպուր » :

- Ըսաց Պալասս, հան 'ի մարտէն ըղխօլն  
 արեանց գուժաբեր,  
 Եւ առ ըզնա և բազմեցոյց 'ի Սկամանդ-  
 րեայն գետեզեր :  
 Յոյնք գոռացին, Տրոյեանք բեկան և վերջ  
 ոտնեալ ընկրկին,  
 Այր զօրավար հար զախոյեանն, 'ւ Ագա-  
 մեմնոն առաջին .  
 Ըզմեծն Ոդոն պետ զԱղզոնեանց արկնա  
 կործան 'ի կառաց,  
 Սանախ փախչէր, և Ատրիդէս ընդ թիկ-  
 նամէջ տէգ վարսեաց .  
 Հար 'ի քամակն և շեշտ ընդ լանջն ել  
 սայրն 'ի թափ աշտէին,  
 Հողեալ դոփեաց և զէնն և զարդ շառաց  
 հարեալ հնչեցին :  
 Հար Իդոմէն ըզՄէոնեան Փեստոս զոր-  
 դին ըզԲորեայ,  
 Այն որ դիմեալ գայր յարգաւանդ 'ի  
 սահմանացն Տարնեայ :  
 Շեշտեալ 'ի սա Իդոմէնէս հրզօրն 'ի տէգ  
 և արգոյ,  
 Մինչ ամբառնայր Փեստոս 'ի կառս, ընդ  
 ուսն էհար ընդ աջոյ .  
 Թաւալադլոր նա 'ի կառաց, խաւար մա-  
 ծաւ յահագին,  
 Եւ պաշտօնեայքն Իդոմէնեայ մերկեալ  
 ըզնա կասրտեցին :

Ա՛նտ զԽստրոփեայ զԻսկամանդրոս 'ի  
 յորս ըզվարժն աննրման ,  
 Մեհեղաւոս զայն քաջ որսորդն եհար 'ի  
 սուր գեղարդան .  
 Ըզսա 'ի յորս կշիռ հարուլ վարժեաց ին  
 քնին Արտեմիա ,  
 Որչափ գազանս վայրք բուծանեն թան  
 ճրամայրիք 'ի լերինս .  
 Այլ ոչ նետող քաջն Արտեմիանրմայայն  
 ժամ ինչ օգնեաց ,  
 Ոչ որսորդին վարժ հինօրեայ դիպողա  
 ձիգն աղեղանց .  
 Աճապարեաց Մեհեղաւոս քաջն արդն  
 ընկէց նահատակ ,  
 Թափ յառաջոյ իւր փախչողին ընդ թիկ  
 նամէջն հար նիզակ  
 Հեշտ 'ի քամակ և տապալեաց , ընդ լանջն  
 ել սայրն աշտէին ,  
 Անկաւ յորսայս և զէնքն անդուստ շա  
 ջիւն հատեալ հնչեցին :  
 Տար Մերինն ըզփերեկղոս ճետ զԱրմո  
 նին ըզհիւսան ,  
 Որ զամենայն հիւսնէր գործէր գործ  
 ճարտարաց աննրման .  
 Սա այս ճարտար Աթենասայ էր մեծա  
 պէս փարելի ,  
 Սա և քաջիկ տաշեաց կերտեաց նաւս հա  
 ւասարս Պարիսի .

Ո՛վ նաւք , չարեաց ըսկըզբնաչարք և  
Տրոյացւոց և անձին ,

Քանզի չեկաց Փերեկղիոս դից խելամուտ  
պատգամին .

Հետապնդեալ եհաս 'ի սա քաջ Մերիոնն  
ախոյեան ,

Հար սաստկուլթեամբ և դիպեցոյց խո-  
ցեաց զաջոյ երաստան .

Անդ թափ յոսկերն առ 'ի ներքուստ ել  
սայրն 'ի կոյս փամփրջաին ,

Անկաւ 'ի գուճս , ոռնայր սաստիկ և  
ստուերք մահուն պատեցին :

Իսկ զաղջկորդին Անդենորեայ ըզՊետե-  
ոս հար Մեգէ ,

Զոր 'ի սէր առնն իբրև զաւակ սընոյց  
գըթով թէանէ .

Եհաս 'ի նա Փիւղեան Մեգէսն այն քա-  
ջատէգն հար նիզակ ,

Զըգեաց կըշիռ և սուր տիգաւն հար 'ի գը-  
լուխն ընդ ծոծրակ .

Անց յատամունսն և ըզլեզուն կըտրեաց  
անդէն սայր տիգին ,

Անկաւ յորսայս և առամամբքն աղխեաց  
ըզցուրտ պըղընձին :

Իսկ Եւրիւպիւղ Եւեմոնեան զԻւպսե-  
նորէս քաջաբուն

ԸզԻողոպեայ քաջին զորդի մատնեաց  
ժանիս 'ի մահուն .

Այս Իւպսենոր ողորբաւոր քուրմ էր գե-  
տոյն Սկամանդրեան ,  
Եւ յամբոխէն ըսպասարկեալ շուք սա ու-  
նէր դիւցական :  
Հասեալ 'ի նա Եւեմոնեայ եհար որդին  
հոյակապ ,  
Մինչ յառաջոյ փախչէր թասէր նա տա-  
գնապեալ 'ի խուճասպ .  
Սուսեր 'ի յուսն իջոյց կըտրեաց ըզյաղթ  
բազուկն ըզքրմին ,  
Եւ կոճոպեալ արիւն թաթաւ անկաւ բա-  
զուկն 'ի գետին .  
Ձաջօք նորա դառն օրահաս և ծիրանին  
մահ սպտեաց ,  
Այսպէս յայնժամ այս նահատակք մարտ  
կըուուէին ըզքաջաց :  
Ի այց ըզԴոմեդ , թէ ո՞ւր արդեօք էր 'ի  
կողմանցն կրկին ,  
Չէիր գիտել , արդեօք Տրոյեանց եթէ  
Յունաց բանակին .  
Գոռայր հուժկուն ձըմերայնոյն նըման  
ուղխին երբ յորդէ ,  
Եւ փըրփրադէզ ամեհացեալ ըզթումքս  
ափանց տասլալէ .  
Ոչ ամբարտակք հաստահարուսոք ժու-  
ժան թափոյն ընդդիմակ ,  
Եւ ոչ անդոց դալարախիտք , ոչ ցանգք  
հոծեալք ամրափակ .

Յորժամ հորդան տայ նա յանկարծ յԱ  
րամազդայն սահանաց ,

Եւ դաստակերոք շտոք գեղեցիկք , քան  
դին հարուստ սլատանեաց :

Նրման Դոմեդ պուղէր զՏրոյեանց փա  
ղանդս հրզօր և ըստուար ,

Ոչ ժուժային , թէպէտ ըզմին գունդք վա  
նէին անհամար :

Դէտակն 'ի նա լիւկայոնեայ որդին քաջ  
ազն ակնարկեաց ,

Զի նա ընդ դաշտ հրոսէր ահեղ , վանէր  
ըզգունդրս քաջաց •

Շէշտ 'ի Դոմեդ սլինդ գրկալեր քարշեաց  
զաղեղն լայնալիճ ,

Մինչ նա կըռուէր , նետեաց յաջ ուսն ընդ  
գոգ զրահին խոցոտիչ •

Նետ գառնու թեանն յայնկոյս թափանց  
յարիւն շողեաց ըզպատեան ,

Ի նոյն և ձայն զայս բարձրագոչ տայր  
Պանդարոսն աննրման •

“Մըք գուք քաջք Տրովագացիք մտրակ  
'ի կուշտ նրժուգաց ,

ԱՏ' ախոյեան նետահարեալ կայ նահա  
տակն հեղենաց •

Ոչինչ կարծեմ , 'ի թափ նետիս եթէյեր  
կար դա ժուժայ ,

Թէ զիս անշուշտ մազգեղն Արքայն դըր  
դեաց շարժեաց 'ի լիւկեայ ” •

Գոչեաց պարծանս , այլ 'ի սրաւար փռք  
նոյն Գոմեդ աննըկուն ,

Յեաոյ կառացն և նըժուգաց տեղի եա  
քաջն 'ի ժամուն :

Անդուստ բարբառ նա Սթենեղեայ 'նի  
ղակակցին արձակեաց ,

« Արի իմ քաջ , իմ կապանեան , փուլթա  
և էջ 'ի կառաց .

Ա՛ռ և կորզեա յուսոյն խմմէ զայս դառ  
նուլթեան ըզփըքին » .

Ասաց , անդէն թափ 'ի կառաց վազեաց  
համհարզն 'ի գետին .

Մատեաւ քարչեաց զերեքթևեանն ըզ  
թափանցանց նետն յուսոյն ,

Բխեաց արիւն և ընդ զրահին ընդ վերս  
խաղայր յորդագոյն :

Յայնժամ Գոմեդ ահեղագոուն յողոք  
անկաւ կորովին ,

« Ինձ ճ՛ւնկըն գիր Գուսար աննըկուն աս  
պարազէն Գիոսին .

Թէ ինձ և հօրս յարեանց գոռմունս ե  
ղեր երբէք հովանի

Մարդասիրեալ , քեզ Աթենաս եղէց և  
արդ փարելի .

Տ՛ուր զայդ վերագն 'ի թափ տիգիս , որ  
զիս խոցեաց և սանձայ ,

Ապարթանէ , թ' ես լոյս այլ ոչ զարփւոյն  
տեսից ոսկեկայ » :

Օյս աղօթեաց, և Աթենաս խնդրոյն  
վըճար ետ 'ի բուն,

Ձերան քաջին զոտս և ըզձեռս հաստեաց  
թեթև և զարգուն:

Մատեաւ առ նա, և բան անդէն արա-  
գաթև խօսեցաւ.

«Քաջալերեաց, Դիոմեդէս, միտեաց 'ի  
մարտ դիմագրաւ.

Չոյժն անվըկանդ ըզհայրենին ահա 'ի  
լանջգ հեղի ես,

Չոր քաջ ասպետն ասպարակող ունէր  
արին քոյն Տիւդէս.

Չաչաց մըթարսըդ փարատեմ, որ նախ  
ածէր ըստուերած,

Չի յըստակեալ դու ընտրեսցես քաջիկ  
ըզմարդ և զաստուած.

Արդ թէ 'ի դից հասեալ ոք աստ և գո-  
ւասցի 'ի մարտիս,

Մի դիմագրաւ ընդ անմահից 'ի վէգ խա-  
ղար դու ընդ դիս.

Իսկ թէ Աստղիկ դուստրըն մազգեզն ել-  
ցէ 'ի մարտ և 'ի վէգ 73,

Շահատակեալ խոցեա՛ ըզնա 'ի սայրասուր  
քո 'ի տէգ »:

Օյս Աթենաս ասաց խաժակն, և 'ի  
նմանէն մեկնեցաւ,

Եւ Դիոմեդէս ընդ նահատակս եկեալ կըր-  
կին խառնեցաւ:

Թէպէտ յառաջ բոցավառեալ էր նա  
 Տրոյեանց 'ի մարտի ,  
 Սակայն կորով երիցս յայնժամ յորդեաց  
 արւոյն 'ի ծոցի :  
 Որպէս առիւծըն սովատանջ ամեհացեալ  
 'ի դաշտին  
 Դիմեալ գոչէ նա 'ի վերայ ստեազիսակըն  
 խաշին .  
 Հովիւն ասիւ սէգ զառիւծուն միայն ըզ-  
 մորթըն գըծեաց ,  
 Չեհար 'ի մահ , նա ուժգնակի զոյժ գա-  
 զանին բորբոքեաց .  
 Ընդդէմ կբրել այնուհետև ճիգն է ող-  
 ջոյն վայրապար ,  
 Խաշնըն լքեալ գողայ զովայ , մըխի գա-  
 զանն 'ի դադար .  
 Մի ըզմիով գան ջոլորին , խոնի օդեացըն  
 դասակ ,  
 'Նա բոցավառ և բաշապանծ ոստնու 'ի  
 խորն 'ի պառակ .  
 Այսպէս Դոմեդ ասեղակերպ 'ի գունդ  
 մըխեալ Դարդանեանց ,  
 Անդէն զԱստին և զԻւպենոր զարքայսն  
 'ի մահ տարածեաց .  
 Ի մին նոցա նա շէշտ յըստինս պըղընձա-  
 սայր հար նիզակ ,  
 Միւսոյն 'ի յուս յաղթ սուսերաւ եհար  
 զողին ըզթիակ .

Հատաւ 'ի բաց ուսն 'ի փողոյն, նոյն և  
դարձեալ յողանէ .

Թող ըզնոսա, դիմեալ զԱբաս և ըզՊողիւզ  
ըմբռնէ :

**Ե**րազահանն այն Եւրիւզամ հայր ծե-  
րունին զաւակաց,

Ի չուն որդւոց երազագէտ լինել նոցա  
ոչ կարաց .

Հար ըզսոսա և կողոպուտ եթող Դո-  
մեդ քաջարին,

Եւ 'ի Քսանթոս և 'ի Թոոն դիմեաց յոր-  
դիս Փենոսլին :

**Մ**եծ յալևոյթ հասեալ Փենոսլ խոր ծե-  
րութեամբ արւայտէր ,

Գողով անբաժ յայլ զաւակէ, ժառանգ  
անձին ոչ ունէր .

Զամոլս որդւոցն հար Դոմեդէս, քաղեաց  
զոգին փարելի,

Եւ սուգ աշխար բազմակական հայրն  
ջայէր ծերունի .

Ոչ ցնծացաւ նա կենդանեօք 'ի դարձ  
որդւոցն 'ի մարտէն,

Եւ թայրաթոտքն օտարախորթք ըզ-  
կեանս ծերոյն բաժանեն :

**Յ**որդիան ապա Պրիամոսին, որ ամբար-  
ձան կառս 'ի մի,

Ի Քրոմիոս և յԵքեմոն դիմեաց Դոմեդ  
կորովի :

Որպէս առիւծ հրօսեալ յանդեայս ա-  
 րօտականն 'ի մայրին ,  
 Իշխանաբար դայ բեկանէ անդ զուլն որ-  
 թուն կամ զեզին ,  
 Նոյն սա զամուլնն հոսեալ 'ի վայր մեծ  
 կորանօք կողոպտեաց ,  
 Եւ ըզնըժոյգսն վարել 'ի նաւս ապրսպա-  
 րէր ընկերաց :  
 Ըզկարգ զօրուն տես Ենէաս յայն վերա-  
 գէն վեր 'ի վայր ,  
 Վազեաց 'ի մէջ ուր էր շըշուկ տիգաց  
 'ի սուր և 'ի սայր .  
 Պանդարոսին ել 'ի խնդիր , եթէ գըտցէ  
 'ի խըւան ,  
 Գիտ զայն քաջազն ըզլիւկոնեան ըզ-  
 հաստաղէղն աննըման :  
 Արձանացաւ հանդէս նորա , բարբառե-  
 ցաւ և ասէ ,  
 « Ո՞ւր քո աղէղն , և սրավարեալ նետք  
 քո ո՞ւր են , Պանդարէ ,  
 Ո՞ւր և քոյ փառքն , որ աստ չէր ոք առ-  
 նել ըզքև ելևել ,  
 Եւ 'ի Լիւկէ ոք ոչ պանծայր քեզ վե-  
 հագոյն գըտանել .  
 Աղէ դու աջ ամբարձ Դիայ , հա՛ր նետ  
 'ի դա գիմագրաւ ,  
 Ո՞ր ոք է դա , որ Տրոյացւոց զաղէտ առ-  
 թեաց զայս ամբաւ .

Դա ճոխապանծ կըթոյց ըզծունգս և  
չատ քաջաց ըստուեր ած ,

Արդեօք ցասկոտ դա Տրոյացւոց է սրտ  
մտեալ ոմն աստուած .

Չայրագին է , և ո՞ գիտէ խնդրէ թերև  
ըզնըւէր ,

Եւ արդեօք դից սըրտմըտու թիւն է օրհա  
սի դուժաբեր ” .

“ Ենէաս վեհ , ձայն ետ անդուստ քաջ  
ազն որդին Լիւկոնեան ,

Դու վեհագոյն Տրոյեանց քաջաց խոր  
հըրգականդ 'ի յատեան .

Ես Դոմեդեայ ըզգա 'ի բուն քաջ ճըշգըր  
տեմ 'ի տիպար ,

Չընեալ ըզձիսն և զեռավերջն ըզսա  
ղաւարտ և զասպար .

Բայց և այնպէս ճշգրտագոյնս ասել  
չունիմ 'ի ժամուն ,

Արդեօք աստուած , արդեօք Դոմեդն է  
այրըդ այդ գերարգոյն .

Բայց և առանց դա աստուծոյ անշուշտ  
այդչափ չատակէ ,

Այլ անմահ զոք ունի ընթեր , որ զուսն  
'ի յամբ քօղարկէ .

Սա 'ի նմանէն զարագ փըքինսն առնու  
տանի 'ի բացեայ .

Չի այն ինչ ես նետ արձակեալ հարի  
զաջոյ զուս նորա ,

Հարի կըշիւ գիպեցուցի 'ի թափ ընդ գոգ  
պատենին ,

Բա՛ ասէի, էջ դա 'ի գեհ Անդընդեհպետ  
իշխանին .

Դա գեռ ապրի , անշուշտ ընդ մեզ գայ  
ոմն 'ի դից 'ի պայքար ,

Եւ իմ՝ չիք կառք աշտանակեւ, չիք իմ՝ և  
աստ երիւար :

Բայց յապարանս իմ՝ Լիւկովնին են են  
իմ կառք մետասան ,

Հաստակառոյցք և նորակերտք և գեղե-  
ցիկք աննըման .

Շուրջ պաստեռունք պատեն ըզկառս ,  
մէն մի կառաց ձիք կրկին ,

Ամուք նըթոյգք ուտեն զոչեուն և զըսպի-  
տակ ըզգարին .

Աւա՛ղ, շատ ինչ իմ՝ Լիւկայոն հայր ծե-  
րունին քաջմարտիկ

Ի չու որդւոյս ինձ պատուիրեաց նըս-  
տեալ 'ի տան գեղեցիկ .

Ի ձիս 'ի կառս , տայր ինձ պատուէր ,  
աշտանակեւ ճոխաբար ,

Այնպէս 'ի մարտ ինձ միջամուխ կալ  
Տրոյացւոց զօրավար :

Ո՛վ, լաւ էր բանն , այլ չանսացի իննայ-  
եալ 'ի ձիս շատակեր ,

Գուցէ նըքթեալք 'ի պաշարման , խար և  
ճարակ պակասէր .

Թողի զնոսա , և յԵղիոն չոքայ կըռուէլ  
ես հետի

Աստատանեալ յայս աղեղունս , որ ինձ  
չեղեն պիտանի .

Ձի ես զարդիս յերկուս քաջաց փռքին  
հարի գամագիս ,

Եւ յԱտրիդեայ և Գոմեդեայ արիւն հա-  
նի ճշմարիտ .

Ի զուր է ինձ , բոց 'ի նոսա բորբոքեցի  
յորդագոյն ,

Ձիմ լայնալիճն 'ի չար ժամու առի զեր-  
ծի 'ի սեպոյն ,

Յաւուր յորում հետևեցայ համբաւա-  
տենչն յԵղիոն ,

Կալ Տրոյացւոց 'ի զօրավար , կալ Հեկ-  
տորայ 'ի պաշտօն :

Բայց թէ դարձեալ տեսից զաշխարհս ,  
ըզկին և զիմ զարբունիս ,

Քաջ անդանոր արագ արագ այր ընդ  
կառավին հարցէ զիս ,

Թէ ոչ յիմ ձեռն ես ջախջախեալ 'ի  
հուր արկից բոցավառ

Ձայս լայնալիճս , որ ինձ ետուն զօգ  
հարկանել հողմավար " .

“Քալ մի այգսէս , կարճեաց ըզբանն  
Տրոյեանց իշխանն Ենէաս ,

Ձարդիս ո՛վ քաջ , այլ գամք հնարից չեք  
մտալուտ յայս օրհաս .

Բայց թէ կառօք երկվարօք մէք 'ի դիմի  
նահատակ

Հարեալ դմա 'ի փորձ զինուց , տարցուք  
անձանց մրցանակ .

Արի յիմ կառու աշտանակեա , և զարմաս-  
ցիս դու համբուն ,

Ձինչ այն Տրովեայ նըժոյգքն իցեն , նը-  
ժոյգք հըզօրք աննըկուն .

Ձիւրդ աստ անդ վազեն վանեն , և տան  
տեղի յոյժ արագ ,

Որք և ըզմեզ զերծք ողջանդամք թուու-  
ցեալք տարցին 'ի քաղաք ,

Տարցին անշուշտ , թէ Դոմեդեայ դար-  
ձեալ շուք տայ Ձրուանեանն .

Այլ դու ջքնաղ զայս երասան կալցես և  
զայդ խարազան .

Ըզձիսն 'ի քեզ ասլրսպարեալ , ես կը-  
ուուեցայց 'ի մարտին ,

Կամ դու ինքնին հար 'ի դիմի , ես նը-  
ժուգացն հոգ ունիմ » :

Քոց նըժուգաց , ձայն բառացին կըր-  
կնեաց որդին Ղիկոնեան ,

Քոց նըժուգաց դու լեր վարիչ , կալեալ  
ինքնին զերասան .

Նըժոյգք ընտելք կառավարին քաջ կա-  
ռաձիգք հանդիպին ,

Երբ միւս անգամ յորդուոյն Տիւդեայ խու-  
ճապեսցուք 'ի խազմին .

- Գուցէ դոքա յահ շրտուցեալք դեղևես,  
ցին 'ի դաշտի ,
- Եւ 'ի գոռոյն չելցեն արտաքս , անձուկ  
բերեալ քում ձայնի :
- Դիմեալ յայնժամ հարցէ ըզմեզ մեծին  
Տիւղեայ քաջ զաւակ ,
- Եւ ըզնրժոյգս սալասըմբակ տարցի ան-  
ձին մրցանակ :
- Գու կառարշաւ , որպէս յառաջն , առ  
ըզնրժոյգս և վարեա ,
- Ես 'ի վիրագդ յայդ սուր նիզակ շէշ  
արձակեմ , [թէ գոռայ ] :
- Զայս խօսեցան , և ամբարձան նոքա  
չքնաղ յայն 'ի կառս ,
- Եւ 'ի Դոմեդ զարագոտինս հանդէպ ճե-  
պեն զերիվարս :
- Վէտակն ամբարձ վէհ կապանեանն  
Իսթենեղոս և Էտես ,
- Դարձաւ անդէն և ահ ընդ ահ ցքաջն ա-  
սէր Դոմեդէս .
- « Դիոմեդէ Տիւղեան քաջազն , ոգւոյս  
սիրով սիրելի ,
- Ամուք ահա դիմեալ քաջաց , քեզ հար-  
կանին 'ի դիմի .
- Խօլք ուժաւորք , մին քաջաղէղն ոչ վը-  
րիպէ 'ի մազէ ,
- Լիւկայոնեայ պանծայ զաւակ , անունն  
նորա Պանդարէ :

Միւսն Ենէաս խնդայ յԱնքիս 'ի քաջա-  
լանջն 'ի մարտիկ ,

Ձի է ծընունդ այն դիւցազին , և մայր  
ունի իւր զԱստղիկ :

Աղէ 'ի կառս աշտանակեալ տեղի տա-  
ցուք մէք զարդիս ,

Քաւ , թէ 'ի մարտ դիմագրաւեալ քաղցր  
յարևէդ դու անկցիս " :

Խեթիւ ընդ նա Դիոմեդէս դարձաւ ա-  
րին կրկնեաց բան ,

"Մի' ինձ , ո՛վ դու , զիս չամոքես , մի բան  
խօսիր փախըստեան :

Իմ բոյս բարուց , քաւ , չէ առնուլ ինձ  
'ի մարտէ ըզփախուստ ,

Չիք իմ երկիւղ , դեռ իմ ոգւոյս կորու՞ն է  
յաղթ և հարուստ :

Ես ոչ 'ի կառս աշտանակեմ , այսպէս  
կըռուիմ ես հետի ,

Դողալ վայր մի ինձ ոչ ներէ իմս Աթե-  
նաս դիցուհի :

Բամ ըզգոսս սրավար նըժոյգք մեր չա-  
զատեն 'ի ձեռաց ,

Բայց թէ գուցէ մին մազասուր լիցի  
յերկուցդ 'ի քաջաց :

Այլ քեզ ասեմ , և բանք իմ այս մի մո-  
ռացօնք լիցին քեզ ,

Երբ Աթենաս բազմախորհուրդն ինձ  
չուք տացէ յայս հանդէս .

Թէ կենախուզ լինիմ դոցա , դու մեր  
ձիոց զերասան

Ձըգեալ , ըզձիսն առկայացո պրկեալ 'ի  
յայդ կասարան .

Ճեպ տուր ապա դու 'ի վերայ Ենէ  
ասեան նըժուգաց ,

Հան 'ի Տրոյեանց , տարցիս 'ի կոյս պա  
տենազէն հելէնաց .

Ճեռք են ձիոց , զոր ետ Տրովեայ մեծն  
Արամազդ քաջատես ,

Ի փոխադարձ Գանիւմեգեայ վարձ զա  
լակին մեծապէս 74 .

Դոքա նըժոյգք անճառելք , երիվարաց  
քաջընտիր ,

Որչափ երբէք տես արշալոյս , տես և ար  
փին լուսալիր .

Ի յայն ճեռէն առ գողացաւ Անքիս ար  
քայն այն ճարտար ,

Ձիս 'ի ներքոյ եդեալ մատակս 'ի Լաւմե  
դէն գաղտաբար .

Յայն սերընդոց 'ի Թիւ վեցեակ յիւրում  
ծընան տաճարի ,

Յաղթըս և յոյրս քառեակ Թըւով նա  
բուծանէ յախուի .

Իսկ և զամուս ետ Ենէայ , մեծ փորա  
տողք գոռութեանց ,

Չայն Թէ առնումք , յայդ մրցանակ մեզ  
չուք տարցուք գերապանծ .

Լայն ինչ բարբառքն 'ի ճեպ ժամուն էին  
քաջացն 'ի բերան ,

Անդուատ նըժոյգքն արշաւասոյրք վերե-  
լակօք մերձեցան :

Չայն առաջին Լիւկայոնեայ կարդաց  
որդին բարեբուն ,

« Վեհին Տիւղեայ դու գոռ զաւակ ,  
սիրտ քո հըլօր առիւծուն .

Ըզքեզ սրավար նետ ոչ սլարտեաց , չազ-  
դեաց փըքին դառնու[թեան ,

Օ'ն առեալ այժմ՝ ըզփորձ տիգին ընկալ  
քեզ սայր գեղարդան » :

Ասաց , ճօճեաց զերկայնաստուեր ձը-  
գեաց զաշտէն և եհար ,

Խոցեաց կըշիւ ըզԴոմեգեայ հաստահա-  
րուստըն զասպար .

Սայր պըղընձին սրացաւ հանդէս , [Թափ-  
անց դըծեաց լանջապան ,

Եւ զոյգ նըմին սէգ Լիւկոնեանն անդէն  
գոչէր մեծաձայն .

« Չես ապրանաց , ահա վերագդ 'ի կողդ-  
հարար [Թափանցանց ,

Անկցիս տապաստ , և ինձ յաւէժ անուն  
[Թողցես մեծապանծ » :

Վարձեաց ըզբանն արին Դոմեգ , ձայն  
զայս կըկնեաց անվեհեր .

« Վահ , վըխեցար ո՛վ Պանդարէ , զիս  
մահացու ոչ հարեր .

Բայց ուշիմ լեր, չեք դուռ մինչ ոչ  
 մինդ առ 'ի ձէնջ գիտապատ  
 Արեամբ իւրով յագեցուցէ ըզգունն Ա  
 րէս և զանսաստ 3 :  
 Ասաց, ձրգեաց, և Աթենաս ըզտէգն  
 ուղղեաց սայրասուր,  
 Յունգունս ընդ ակն և ատամանցն ընդ  
 շարն անցոյց ամրակուռ .  
 Սերտ պրղընձին քաջ ըզլեզուն կտրեաց 'ի  
 բաց կարճովին 75,  
 Եւ սայրասուրըն թափանցանց եւ 'ի ներ  
 քուստ կըզակին .  
 Սասանեցաւ Լիւկայոնեանն հոսեալան  
 կաւ 'ի կառաց,  
 Եւ զէն և զարդն իւր երփնափայլ շա  
 չիւն եհար և հնչեաց .  
 Շքրտեան նըժոյգքն արագոտինք և ըզ  
 գողի հարկանին ,  
 Օրհաս պատեաց ըզՊանդարոս, եղծաւ  
 կորովն և ոգին :  
 Ա՛եպ Ենէաս ետ և վաղեաց յասպար,  
 յերկայն 'ի նիզակ ,  
 Խուճապեցաւ մի ըզգիակն Հեւլէնք տար  
 ցին մրցանակ .  
 Հովանացաւ յանձնապատան իբրև զա  
 ուիւծ անվէհեր ,  
 Տէգ և ասպար բոլորածիր կարկառ,  
 մարմնոյն պահ ունէր .

- կազմ և սլատրաստ ախոյենին նա ան-  
հրաժեշտ մահ կարգայր ,  
Ի նոյն ձայնիւ քաջահընչող գոչէր դիւց-  
ազն և գոռայր :
- Աճապարեաց Դիոմեդէս , առ և կալաւ  
'ի բըռին
- Վէմ 'ի դաշտէն անկըռուելի մեծամար-  
մին ահագին .
- Երկուք յարդեաց կանացածնաց ոչ տա-  
նէին զայն խարակ ,
- Այլ նա հեշտի բարձեալ բերէր , շարժէր  
պարսէր միայնակ .
- Նովաւ հուժկուն հար զոսկր Իսքեան  
զենէասայ յայն մասնէն ,
- Յոր վայր և բարձք կարթին 'ի նա , և զայն  
Բաժակ անուանեն .
- Կրկին ըզնեարդս հար և խըզեաց և ջախ-  
ջախեաց ըզԲաժակ ,
- Ըզմորթն 'ի բուն ապականեաց քարն ա-  
հագին դրժնդակ :
- Դիւցազն 'ի գուճս անկաւ և յաղթ ձե-  
ռամբ զիրանն հաստատէր ,
- Այնպէս յորսայս , մածաւ զաջօքն աղջա-  
մըղջեան խոր գիշեր :
- Թէ փոյթ Աստղիկ չէր իրազգած , մահն  
Ենէայ էր անշուշտ ,
- Զոր յԱնքիսեայ եղնարածէն այս մայր  
ծընաւ դիցանոյշ .

Հաս, և բազուկ զիւր ձիւնափայլ հեղոր  
'ի բակ դիրդ որդւոյն ,

Եւ ըզդրօշակ քօղ արկ նրմա ըզլուսաւիր  
ըզտեռոյն .

Պատնէշ ընդդէմ եդ զայն փըքնաց , զի մի  
Յոյն դք քաջածի

Սայր առ 'ի լանջ շէշտեալ նորա և քա  
ղեսցէ ըզհոգի :

**Ս**'ինչ դեռ Ասողիկ 'ի յայն խուճապ զոր  
գին թափէր նազելին ,

Անդուստ և քաջըն Կապանեան ըզբան  
յիշեաց հրամանին ,

Զայն զոր յառաջ Դիոմեդէս ազդեաց  
արին նահատակ ,

Եւ նա յայնժամ առ զերիվարս , կացոյց  
'ի վայր մի արձակ .

Զըգեալ ապա և զերասանսն 'ի կապա  
րանըն պնդեաց ,

Ինքն 'ի վերայ Ենէասեան դիմեաց ճքնաղ  
նրժուգաց .

Հան 'ի Տրոյեանց վարեաց 'ի կոյս Աքայ  
եցւոց բանակին ,

Եւ Դեպիւղէայ տանել 'ի նաւս 'ի ձեռս  
յանձնեաց համհարզին .

Էր սա համհարզ յոյժ փարելի համա  
տիոցն 'ի հանդէս ,

Զի էր համբուն իւր համամիտ , ում և  
չուք տայր մեծապէս :

Ի կառան ապա աշտանակեալ գիւցազն  
որդին Կապանեան ,

Եւ առ կալաւ նա 'ի բըռին ըզհրաշա-  
կերտն երասան .

Առ Դոմեգէս անդ ճեպ ընդ ճեպ սրա-  
նայր թեթև քան ըզբոց

Սալասըմբակ ձիոցն 'ի վազ իբրև 'ի թևըս  
հողմոց :

Սինչ գեռ զԱստղիկ 'ի սուր յերկաթ վա-  
նէր Դոմեգէն այն աշխոյժ ,

Քանզի գիտէր զի էր բնաւին նա ապի-  
կար գիցանոյչ ,

Չէր նա 'ի դից , որ տեարք մարտից մարդ-  
կան առնուն 'ի պաշտօն ,

Չէր Աթենաս , չէր և դարձեալ քաղաք-  
աւերն Ենիւոն .

Հասեալ 'ի խռան Դոմեգէն յԱստղիկ  
կարկառ տիգին իւր ըզսայր ,

Մըխեաց երկաթ , խոցեաց նորա քընքուչ  
ձեռին գիրգ ըզծայր

Ընդ տեռն անեղծ , զոր Ղիցուհւոյն  
Շընորհքն ինքնին նիտացին ,

Թափ անց երկաթն , և նազէլւոյն ըզմորթ  
ծակեաց սայր տիգին .

Եւ Ղիցուհւոյն յափոյն 'ի ծայր արիւն  
անմահ և ցայտեաց ,

Այն է իբորն 76 . աւիչ այսգոյն հոսէ 'ի  
գիցն երջանկաց .

Քանզի ցորեան չուտեն նոքա , չբնակեն  
հրաշէկ ըզգինին ,

Ուստի ողջոյն են անարիւնք , նոյն և ան-  
մահք անուանին :

Ճիչ մեծ յայնժամ եբարձ Աստղիկ , ելլք  
զորդին 'ի ձեռաց ,

Անդուստ բազկօքն իւր Ապողոն բակ ըզ-  
նովաւ սրաշտսանեաց .

Յամբ միգամած ծածկեաց ըզնա , զի մի  
Յոյն ոք քաջածի ,

Սայր առ 'ի լանջ շէշտեալ նորա և քա-  
ղեսցէ ըզհոգի :

Յայնժամ յԱստղիկ արին Գոմեդ ձայն  
մի հնչեաց քաջամուր ,

« Տեղի , ո՛ր դուստր Արամազդայ , գոռ-  
մանց մարտից տեղի տուր .

Ո՞չ շատ է քեզ , զի զսպիկար կանամբք  
հարսիս և դաւես 77 ,

Աստ զի՛ է քեզ կալ թարթափել , աստ 'ի  
յարեանց ասպարէս .

Թէ՛ զայդ գործես , նա և լոկ ձայնք մար-  
տից ըզքեզ սարսեցեն » .

Լըւաւ Աստղիկ , մղձկեալ յոգին ել զայ-  
րագին 'ի մարտէն :

Առ ըզձեռացն հողմոան հիրիկ , եգ ար-  
տաքոյ խուժանին .

Տանջէր Աստղիկ , և թուխ 'ի գոյն մորթ  
իւր դարձաւ գեղանին :

Յահեակ մարտին եգիտ զԱրէս , նստէր  
մոլին անդ 'ի զատ ,

Գեղարդն և ձիքն արագոտինք 'ի յօդ  
ծածկեալք միգապատ .

Անդ սիրայնոյ զեղբօր ծընգովք Աստղիկ  
փարեալ գրգաբար ,

Յողոք անկաւ բազմապաղատ խնդրէր ըզ-  
ձիսն ոսկեսար .

« Ինձ , հարազատ , տուր զերիվարսդ և  
գուժ խընամ ած ինձ գու ,

Ես յանմահիցն 'ի բուն 'ի գահն յՈղիւմսդ  
լինիմ երկնաչու .

Զիս մահացուն հար Դոմեդէս , տան-  
ջիմ ուժգին 'ի վերէ ,

Դա և ընդ հօրն Արամազդայ զարդիս 'ի  
վէդ ելանէ » :

Ասաց Աստղիկ , նմա Արէս ետ զերի-  
վարսն ոսկեսար .

Եւ գիցանոյ՞ն 'ի վեր 'ի կառս , ոգին ցաս-  
մամբ վառ 'ի վառ .

Եւ առ ընթեր նստաւ Հիրիկ , 'ի բունն  
էառ զերասան ,

Ճայթեաց մարակ , նրժոյգքն անդէն սա-  
ւառնացեալք սըլանան :

Իբրև յՈղիւմսն հասին 'ի վեր լուսերա-  
միցն 'ի դադար ,

Անդ զերիվարսն առկայացոյց արագն Հի-  
րիկ օգապար .

Լոյծ 'ի կառաց , զանմահական արկ ըզ-  
ճարակն առաջի ,

Ապա զժընգովքըն Դիովնեայ Աստղիկն  
անկաւ գիցուհի .

Սա մայր նորա , և գիրկընդխառն բա-  
զուկ փարեաց իւր դստեր ,

Գրգուեաց ձեռամբն , և յանուանէն բար-  
բառ նրմա արձակէր .

« Յերկնաւորաց , իմ նազելի , ըզքեզ  
այդպէս ո՞ գրձձեաց ,

Իբրու եթէ աշխարհագոյժ ինչ մի յան-  
ցեար 'ի չարեաց » :

Հարցմանն անդէն ծիծաղախիտն Աստ-  
ղիկ արար սպտասխան ,

« Յիս վէր դնել յաւակնեցաւ Դոմեդ  
գոռոզն այն Տիւղեան .

Զի ես զորդեակս առ 'ի մարտէն արա-  
գահաս թափէի ,

Որդեակ բնաւից գեր 'ի վերոյ , զիմն Ենէ-  
աս փարելի .

Արդ ոչ Տրոյեանց և ոչ Յունաց է այս  
հանդէս գոռ մարտիս ,

Նա աւանիկ և ընդ անմահս 'ի վէր հեւ-  
լէնք գան զարդիս » :

Դիցանուշիցըն վեհափառ կրկնեաց առ  
նա Դիովնէ .

« Երբեք , որդեակ , համբերատար , թէ  
պէտ ըզքեզ ցաւ տանջէ .

Շատք յՈղիմսկեանց փոփոխ տանջեալք  
 'ի մարդկանէ ցաւս առին ,

Որպէս զԱրէս էր զի Ոտոս և քաջն Ե-  
 փաղտ պատժեցին ,

Յորժամ ըզնա յամուր սարիս պրկեալ  
 որդիքն Ալովի ,

Եւ նա ամիս երեքտասան 'ի բանդ եկաց  
 պրղընձի .

Անշուշտ անդէն ապականէր արենա-  
 խանձըն Արէս ,

Թէ ոչ մօրուն չքնաղն Երբէ գոյժ ար-  
 կանէր առ Հերմէս .

Նա գողաբար Թափեաց զԱրէս զարդէն  
 ծիւրեալն 'ի բանտին ,

Զի դըժընդակ սարիքն ըզնա յայն կապա-  
 րան մաշեցին :

Հարաւ Հերայն յըստինսն աջոյ , 'ի նետ  
 խոցեալ եռսայրի

Տանջէր սաստիկ , հար զայն որդին Ամ-  
 փիտրոնին կորովի :

Նետ մի սրավար տարաւ և քաջ Անդըն-  
 դեհպետ տիտանեան ,

Յորժամ նոյն այր մազդեզն որդին խա-  
 ղաց 'ի նա դիւցանման .

Ըզնա առ դուրս հար դըժոխոց , երկանց  
 նըկուն եգ ցաւոց .

Խոցեալն 'ի տուն Արամազդայ ել յեր-  
 կնաճեմն յՈղիմսկոս .

Էր զայրագին և ցաւալից 'ի ժամ հա-  
 սեալ չարաբաղդ,  
 Էր ոգետանջ, զի խորամուխ վարսեալ  
 կայր նետն յուս իւր յաղթ .  
 Այլ անդ Պէոն ըսպեղանիս ախտահա-  
 լածս առ սրփուեաց .  
 Բուժեաց ըզնա, զի չէր ծընեալ նա 'ի  
 զարմէ մահացուաց .  
 Հէգ, ամբարիշտ, որ ոչ սարսեաց յո-  
 ճիր ժըպրհէլ անպայման,  
 Մինչ ժըտեցաւ աղեղնահար լինել 'ի դիս  
 Ողիւմպեան :  
 Արդ և ըզգա դըրդեաց Պալլաս առնել  
 ըզքե ելևել,  
 Ծանծաղամիտ Տիւդեայ որդին ոչ քա-  
 ջացաւ 'ի խորհէլ .  
 Չեղև անմիտն այն խելամուտ, թէ մարդ  
 չապրի հինօրեայ,  
 Որ մի անգամ ընդ անմահից ըմպահկե-  
 լով 'ի վէդ գայ .  
 Եւ ոչ մանկտին, հայր, պապաչէ վա-  
 րեալ զծընդովքն հայրական,  
 Բազմաչըչուկ առ 'ի մարտէն դարձեալ  
 'ի տուն ողջանգամ :  
 Ուստի և այդ Դիոմեդէս, թէպէտ հուժ-  
 կու և սաստիկ,  
 Դա զգոյշ լիցի գացէ թերևս զոք քան  
 ըզքեզ քաջ մարտիկ .

Եւ Եգաղէ Ատրեստեսին այն օրիորդ  
քաջուշիմ

Մեծ ասպետին Դիոմեդեայ գիրդ ծըն-  
դասէրն ամուսին ,

Կահան բարձեալ և զընտանիս իւր զար-  
թուսցէ գիշերի ,

Քաջին Յունաց անձուկ բերեալ առոյգ  
իւրոյն փեսայի ” :

Ասաց, ափովն իւր կրկնակի ջնջեաց զԻ-  
քորն ըզձեռին .

Բուժեաց ըզնա, և Աստղիկան ցաւք դառ-  
նութեան լըռեցին :

Յայնժամ յԱստղիկ ակնակառոյցք լեալ  
Աթենաս և Հերա ,

Ի հենգն արկեալ, առին կրծել ամբո-  
սայնոյն Որմզդայ :

Խաժակն ըսկիզբն արար խօսել մեծն Ա  
թենաս գիցանոյչ ,

« Արամազդ հայր , արդեօք թէ բան մի  
բարբառիմ, ինձ ցասնո՞ւս .

Ահա չքնաղ յԱքայուհեաց զոք հրա-  
սուրեաց այդ Աստղիկ ,

Ըզհետ իւր դալ առ Տրոյացիս , զորս և  
սիրէ նա սաստիկ .

Չայդ տեռազարդ զԱքայուհիդ մինչ  
դեռ գրդէր իւր բազկաւ ,

Ձեռըն քնքուշ կիտեալ դորա յոսկին  
ճարմանդ կարթեցաւ ” :

Զայս Աթենաս, և ժպտեցաւ Հայրն  
 աստուածոց և մարդկան,  
 Կոչեաց առ ինքն և բարբառէր ոսկեղէ-  
 նիկ Աստղկան :  
 « Քեզ, որդեակ իմ, քեզ չեն տըւեալ  
 նախճիրք մարտի մրցանաց,  
 Այլ դու բերկրեալ հեշտ և ամոք գոր-  
 ծոց միտ դիր հարսանեաց :  
 Թո՛ղ, ըզմարտից հոգ Աթենաս կալցի և  
 գոռդ այդ Արէս » .  
 Այսպէս յայնժամ բանք զրուցէին յերկ-  
 նաւորացն 'ի հանդէս :  
 Բայց Ենէայ ընդդէմ հրաշունչ Գոմեդ  
 դիմեաց կորովին,  
 Գիտէր զի նա ընդ հովանեաւ Ապոլլոնի  
 էր բազկին .  
 Ոչ և այնպէս սպտկառ եկաց այն Ար-  
 քային քաջափառ,  
 Տէգ յԵնէաս գոռայր շեշտել, կապտել  
 զինուցն 'ի պայծառ :  
 Երկցս արին սլացաւ 'ի նա օրհաս ածել  
 մահաբեր,  
 Երկցս ընդդէմ և Ապոլլոն ասպար հրա-  
 փայլ շողշողէր :  
 Երբ նա նըւագ և ըզչորրորդ դիւցազնա-  
 բար խիզախեաց,  
 Զայն քաջաղէղն ետ Ապոլլոն ահեղա-  
 կերպ որոտաց .

« Տեղի , Տիւղեան , տեղի տուր դից , մի  
 ժըտեսցիս 'ի կըշիւ ,  
 Ճետք անմահից նոյն չեն մարդկան գետ  
 նաքարշիցն 'ի յերկիր » :  
 Ի ձայնն ասեղ Դիոմեդէս վերջոտնեցաւ  
 առ վայր մի ,  
 Խնդրէր ապրել 'ի ցասմանէն քաջաղէ  
 զանն Արքայի :  
 Բայց Ապողոն առ զԵնէաս , ած արտա  
 քոյ խուժանին ,  
 Եդ 'ի Պերգամ նըւիրական 'ի վայր իւրոյ  
 տաճարին :  
 Անդ Արտեմիսն աղէղնասէր 'ի միասին և  
 Ղէտոն ,  
 Բուժեալք 'ի ներքս 'ի մեծ Դաբիրն ե  
 տուն նրմա շուք 'ի ձօն :  
 Դրօշեաց յայնժամ Արծաթաղէղն ար  
 ձան եցոյց ուրուական ,  
 Տիպ ուրուականն էր Ենէայ , տիպն և զի  
 նուցն էր նրման .  
 Զուրուականաւն Յոյնք և Տրոյեանք մըր  
 ցին յասպար բոլորակ ,  
 Եւ լանջ առ լանջ յասեղ կոփիւն հա  
 րեալ բախեն վահանակ :  
 Անդուտ ապա 'ի գոռն Արէս բար  
 բառ Փեբոս արձակեաց ,  
 « Արէս Արէս , այ մարդածախ Արէս  
 քանդիչ սլատուարաց ,

Արենախա՞նձ, մըխեալ 'ի մարտ չառնո՞ւս  
'ի բաց զայդ վերագ ,

Որ և 'ի հայր մեր Արամազդ խիղախեսցէ  
դա արագ :

Դա նախ զԱսողիկ խոցեաց 'ի պտուղ  
ձեռին իւրոյ տիգահար ,

Ապա ընդդէմ շահատակեալ դիմեաց և  
յիս դիւցաբար” :

Ասաց, և ինքն անց և չոքաւ, 'ի ծայր նըս  
տաւ Պերգամին ,

Մուտ Մարդածախն, և Տրոյացւոց բոց  
բորբոքեաց 'ի յոգին :

ԶՅկամանտեայ քաջ իշխանին առ Թրա-  
կացւոց ըզպատկեր ,

Այնպէս խրախոյս դիւցազն որդւոց  
տայր Պրիամուն քաջալեր .

“ Բա՛րէ մազդեզըն Դարդանեան մեծին  
զաւակք արքային ,

Յերբ ըզխուժանդ , ներէք Յունաց, տա-  
պաստ ձգել 'ի դաշտին .

Մինչև առ դո՞ւրս գոռասցին Յոյնք ,  
մինչ գեղաշէ՞նն 'ի քաղաք .

Ո՛հ, տապաստ կայ, զոր մէք մեծին զոյդ  
Հեկտորայ պատուէաք .

Սա Ենէասն է մեծանձին Անքիսեսի  
քաջ զաւակ ,

Օ՛ն արիք քաջք , զայդ մեր համհարզն  
ապրեցուցուք նահատակ :

Լսաց , կորով ազգեաց նոցա , և բոց 'ի  
 բուն բորբոքեաց ,  
 Բայց Սարպեդոն զԵկտոր դիւցազն յայն-  
 ժամ քաջիկ կշտամբեաց .  
 «Ո՞ր նախնական քո ոյժ , Հեկտոր , և ո՞ր  
 կորովդ աննրման ,  
 Որ ասէիր առանց դնդի պահել ըզմեծ  
 զայդ ոստան .  
 Ոչ համհարզուք , միայն եղբարբք սա-  
 հել միայն համազգեօք ,  
 Իսկ ես զարդիս ոչ տեսանեմ 'ի դոցանէն  
 և ոչ զոք :  
 Դոքա իբրև շունք ահաբեկք զովան հան-  
 դէպ առիւծուն ,  
 Եւ միայնակնիզակակիցքս ահա կըռուիմք  
 աստ անբուն .  
 Եւ ես ինքնին քեզ աջակից յոյժ տարա-  
 դէմ 'ի ծագաց ,  
 Գամ 'ի Լիւկեայ 'ի յորձանուտ 'ի Քսան-  
 թոսին գետափանց .  
 Մատաղ զորդին զիմ անդ թողի , և զա-  
 մուսինն անարատ ,  
 Թողի և շատ ես կարասի , որոց տենչայ  
 այր անբատ :  
 Համայն այնպէս ձայն տամ Լիւկեանց ,  
 կըռուիմ ընդ այդ վերագին ,  
 Թէպէտ չունիմ զոր Յոյնք յիմոցս առ-  
 ցեն կապուտ և տարցին .

Իսկ դու անգործ, և ոչ այլոց ձայն բար-  
բառիս հրամանի,

Մարտ յարդարել, ամրապահեստ գու-  
կանանւոյն հովանի :

Տես, մի գուցէ շողեալ յոստայն աշխար-  
համած իբր 'ի ցանց,

Լիջեք ողջոյն դուք կողոպուտ կապուտ  
արանց թշնամեաց :

Գոքա արագ ձեր մարդաշատ զոստանն  
հարցեն հիմն 'ի վեր,

Արդ զայս իրաց չիցե՞ն քեզ պէտք հո-  
գալ ըզտիւ և զգիշեր .

Մաղթել պետաց բացահրաւէր քեզ ե-  
կելոցն 'ի սատար

Կալ և կռուել, և կշտամբանքն առցեն  
դառինք ըզդադար ː

Օ այս Սարպէգոն, և զԵկտորայ եհար  
զոգին և խոցեաց,

Նա փայլակեալ զինու զարդու ոստեալ  
հապճեպ 'ի կառաց :

Շուրջ գայր վազէր ողջոյն ընդ զօր, տէ-  
գըս ճօճէր սայրասուր,

Մարտ բորբոքեաց, խօշիւն սասաիկ զար-  
թոյց ասեղ իբրև հուր :

Գարձան Տրոյեանք ընդդէմ Յունաց  
տէգ ամբարձին և մրկունդ,

Յոյնք զոտս 'ի բոյս հարեալք անահք ար-  
ձանացան գունդ սու գունդ :

Որպէս ըզյարդն արանց հոսչաց հողմըն  
տանի յերերի

Յորժամ ընդ կալ նըւիրական խարտեաչ  
Դեմետրն երևի ,

Շնչեն հողմունք , և հեծանոց մեկնէ ըզ-  
յարդն և զցորեան ,

Եւ հողմահոս յարդին դիզանք գոգ 'ի  
սալիտակ գոյն դառնան ,

Այսպէս հելլենք մոյն 'ի սալիտակ հա-  
մակեցան 'ի փոշին ,

Որ 'ի ձիոցն 'ի սրմբակաց յուզեալ բար-  
դէր 'ի յերկին :

Զի կառապետք հորդան կրկին ետուն  
ձիոցն 'ի դաշտի ,

Եւ յորդեցին կորովք ձեռաց արդնընկե-  
ցից շեշտակի :

Անգուստ և գոռ շուրջ գայր Արէսն  
յայնժամ Տրոյեանց զօրավիգ ,

Վազս ընդ բանակն առ , և ըզմարտն 'ի  
մուժ պատեաց բալաձիգ :

Նա զոսկեսուրն Ապողոնի պատգամանին  
կատարէր ,

Այն որ յառաջ ազդեաց նմա , Տրոյեանց  
յորդեւ քաջալեր :

Բանզի ետես , զի 'ի մարտէն եւ մեկնե-  
ցաւ Աթենաս ,

Որ հովանի Դանայեցւոց ամրածածուկ  
յօգն եհաս :

Փեքոս 'ի յոյր 'ի Դաբիրէն ած զԵնէաս  
յերևան ,

Եւ գիւցազին յողին 'ւ 'ի լանջն եհեղ կո-  
րով քաջութեան :

Եկն Ենէաս և ընկերացն 'ի կարգ էանց  
համազոյգ ,

Յոյժ խնդացին , զի կենդանի տեսին ըզ-  
նա և առոյգ .

Յակճիւուս կային զի Ենէաս ըզնոյն ունէր  
քաջալեր ,

Այլ ըզհրաշից նորա յայնժամ ինչ մի ոք  
ոչ հարցանէր :

Մարտն էր անդուշ, զոր Քաջաղէզն յայն-  
ժամ նոցա եբեր յուշ ,

Զոր մարդածախն Արէս յուղեաց և հեռ-  
մոլին և շամբուշ :

Բայց և Ոգիւս և Դոմեդէս անդ և Այ-  
ասքըն կրկին ,

Ի մարտ քաջիկ նահատակել խրախոյս  
Յունաց կարդային .

Չէին սարսեալք ոչ 'ի խօշիւն ոչ 'ի հրո-  
սակ Դարդանեանց ,

Նա մեծամուրք կային անշարժք ամպոց  
նրման ամպրոպաց ,

Զոր Զըրուանեանն 'ի ծայր լերանց կա-  
խէ 'ի յօդ հանդարտիկ ,

Յորժամ յուժգին կայ 'ի շնչմանց հիւ-  
սինն 'ի քուն խաղաղիկ .

Քունեն և այլ հողմք դիւաշունչք , որ  
 թանձրամած զամբ վանեն ,

Եւ տագնապեալք ուժգնահնչակք յայս  
 կոյս յայնկոյս փարատեն .

Նման անահք Յոյնք Տրոյացւոց 'ի պահ  
 կային անվէհեր ,

Եւ Ատրիդէս ողջոյն ընդ զօրն աղգէր շատ  
 ինչ քաջալեր .

«Քաջք լերուք արք ո՛ր բարեկամք , քաջք  
 զօրու թեամբ անվր թար ,

Եւ 'ի մարտիս յայս գոռու թեան մի  
 մեանց կացէք դուք պատկառ .

Են յակնածու նիզակակցաց շատք կեն  
 դանիք քան տապաստ ,

Իսկ փախըստեայցն ոչ քաջու թիւն , ոչ  
 շուք մընայ բարեբաստ » :

Ասաց , անդէն զայր մի աւագ 'ի տէգ  
 շամիրեաց նիզակին ,

Էր սա Դեկոսըն Պերգոսեան ընկեր Ե-  
 նեայ մեծանձին .

Սըմա որդւոց զոյգ Պրիամոն էին Տրոյ-  
 եանք շքադիր ,

Զի այս Դեկոս ընդ նահատակս անցեալ  
 կըռուէր ժիրաժիր .

Ի սա հըզօրն Ագամեմնոն եհար զաշտէն  
 ընդ ասպար ,

Ասպարն ուժոյն ոչ հանդուրժեալ , տէ-  
 գըն թափանց սըրանայր .

Մ ուտ ընդ կամար վարսեալ գօտւոյն ,  
մըխէր 'ի խոր գանձակին ,

Անկաւ գոփմամբ , և շըռընչեալ զէնքն ըզ-  
նովաւ հնչեցին :

Տ ար Ենէաս զՈրսիղոքոս և ըզկրեթոն  
Դիոկղեանս ,

Բնակէր 'ի Փեր 'ի բարեշէնն հայրն ա-  
մոլից այս քաջաց :

Ճ ոս կըր գոյիւք , ճետ իւր և զարմ Ալ-  
փեայ գետոյն վըտակին ,

Ո յր և հոսանքն յորդախաղացք 'ի դաշտ  
Պիւղեայ ծաւալին .

Ս ա զՈրսիղոք ծընաւ անդէն շատ ամբո-  
խից մեծ արքայ ,

Ի սկ Որսիղոք ծընաւ ըզքաջն ըզԴիոկղոս  
մեծանճնեայ .

Ի Դիոկղեայ ծընան որդիք այս կորովք  
երկուորեակք

Կրեթովնիոս , Որսիղոքոս հըմուտք մար-  
տից և տեղեակք :

Յ արբունս հասեալ , նաւագնացիկ ա-  
մուք քաջացս անվէհեր

Եկին ընդ Յոյնս 'ի յԵղիոն վայր նըժու-  
գաց քաջաբեր .

Մ ենեղաւեայ շուք հարկանեւ 'ւ Ագա-  
մեմնոն արքայի ,

Այլ անդ յորհաս գրաւեալք մահու ժա-  
մուն գիպան խաւարի :

Որպէս կրկին 'ի ծայր լերին սէգ առիւ-  
ծունք ամէհիք ,

Բուծեալք տածին առ 'ի մօրէ, ուր թաւ  
և խոր են մայրիք .

Կապտեն նոքա որչափ արջառ և յոյր  
խաշինք 'ի դաշտի ,

Եւ ըզփարախս ըզհէգ հովուաց կարգեն  
թափուր յամայի ,

Մինչև ինքեանք ընդ բռամբ քաջաց 'ի  
սուր մատնին սայրասուր ,

Նոյն Ենէայ այս կորովիք 'ի բուռն ան-  
կան քաջամուր :

Տապալեցան իբր եղևին ամբարձուղէչ  
'ի մայրին ,

Բայց Մենեղէայ յաղէտ նոցուն քաջին  
աղիք գալարին :

Եւ ախոյեան ընդ նահատակս հրաշէկ 'ի  
զարդ և 'ի զէն ,

Ճօճէր նիզակս , խրախոյս ոգւոյն յոր-  
գէր նմա յԱրեսէն .

Նիւթէր Արէս , զի այն խարտեաշն 'ի  
բուռն Ենէայ գրաւեսցի .

Ետես անդուստ Անտիղոբոս մեծին զա-  
լակ Նեստորի .

Եւ նահատակ արձանացաւ , զի վասն հո-  
վուին նա հոգայր ,

Դուցէ վնասի և մեծ ձեռնարկ լիցի գոր-  
ծոյն վեր 'ի վայր :

Մինչ ատոյեանք բազուկ ձրգեալ 'ի տէգ  
'ի սուր նիզակի

Կազմք և վառեալք այր ընդ ընկեր կըշիռ  
գործեն շէշտակի ,

Եկն Անտիղոք և Մենեղեայ եկաց քաջ  
քաջ առ ընթեր ,

Վայր մի տեղի ետ Ենէաս, թէպէտ մար  
տիկ անվէհեր .

Ընկրրկեցաւ, քանզի ամուս երկուս ետես  
նահատակ ,

Ապա նոքա զանկեալ ըզքաջան Յունաց  
քարչեն 'ի բանակ .

Խընամ ածեալ զարտասուէլինն 'ի ձեռս  
յանձնեն ընկերաց ,

Ինքեանք դարձեալ նահատակեն , մարտ  
յարդարել ըզքաջաց :

Պարին հուժկուն ըզՊիւղեմէն զայր Ա  
րեսին համանման ,

Ասպարազէն Պափղագոնեանց էր զօրա  
վար և իշխան .

Կայր սա կանգուն , և Մենեղաւն արին  
'ի տէգ շահատակ

Ձրգեաց նիզակ և դիպեցոյց կըշիռ ուսոյն  
ընդ թիակ :

Իսկ Անտիղոք հար ըզՄիգոն ըզկառա  
վարն ըզնորա ,

Երբ յաղթ ըզձինն ընդ կրուկ շըջեաց,  
ըզքաջորդին զԱտիւմեայ .

Քար ընդ արմուկն եհար ընդ մէջն , և 'ի  
ձեռաց զերծանին

Փրղոսկրէիւք պերճ երասանք 'ի վայր ան-  
կեալ 'ի փոշին :

Վաղեաց հապճեպ Անտիոզքոս , սուր  
հար 'ի քունն և խոցեաց ,

Նա հատկրլեալ անկաւ տապալ 'ի գեղե-  
ցիկն իւր կառաց .

Ընդուլնեցաւ հողաթաւալ մինչև 'ի  
յուսն և ծոծրակ ,

Վայր ցըմեծ ժամն այնպէս խրրեալ խոր  
աւազոյն 'ի կուտակ .

Մինչև ողջոյն թաղել 'ի հող սըմբակա-  
կոխ նըժուգաց ,

Զոր մարակեալ Անտիոզքոս 'ի զօր վարէր  
հէլէնաց :

Պէտական անդուստ ամբարձ հեկտոր , և  
գոռալով շնչէր բոց ,

Եւ Տրոյացւոցն կորովեաց խաղայր փա-  
ղանգն ըզհեոց .

Սօսն Ենիւոն 78 և սէգն Արէս անդ կա-  
րապետք խաղային ,

Իր զուգընթաց Ենիւոնին Աղմուկ շը-  
շուկն ահագին .

Բոց փորատէր Արէսն 'ի բուռն աշտէն  
հարուստ և շողայր ,

Եւ հեկտորայ մերթ նախընթաց , մերթ  
յետընթաց նա խաղայր .

Ահ արկանէր , մինչև ինքնին և քաջարին  
Դոմեդէս

Յահէղ տեսիլն ընկրրկեցաւ և քրսմնեցաւ  
մեծապէս .

Ձոր օրինակ այր ուղևոր հատեալ 'ի դաշտ  
ուահ յուով ,

Կայ վարանեալ յափրն սրավար գետոյն  
որ թափ տայ 'ի ծով ,

Գրգանս տեսեալ նա փրփրագէզ , խոր  
հուրդ ճեպէ ըզգարձին ,

Այսպէս արին անդ վերջոտնեալ ձայն  
զայս կարգայր խուժանին .

« Մեք աստ յակճիւս , ո՛ր բարեկամք , զի՞  
կամք դիւցազն ընդ Հեկտոր ,

Հիացեալք ողջոյն , զի փայլակէ դա մեր  
աչաց մարտիկ գոռ .

Մերձ կայ նմա ցանդ ոմն աստուած ըզ-  
ժամ վանէ մահաբեր ,

Եւ այժմ 'ի տիպ կանացածնի կայ անդ  
Արէսն առ ընթեր .

Աղէ դուք քաջք վերջոտնեցէք տակաւ  
Տրոյեանց դէմ առ դէմ ,

Քաւ ձեզ ընդդէմ զից յաւակնել , մարտ  
յարդարել ըզգժխեմ » :

Ասաց , և հրոս ետուն Տրոյեանք խրա-  
խոյս բարձեալ 'ի գիմաց ,

Դիմեաց Հեկտոր , 'ի մի 'ի կառս զեր-  
կուս եհար կորովեաց .

Մարտիկք ամուլք մին Մենեսթէս , միւ-  
սոյն անուռն Անքիղա .

Անկան տասպաստ , աղիք գելուռն Տեղա-  
մոնեանն Այասայ :

Գիմեաց մօտ յոյժ արձանացաւ հրափայլ  
զաշտէն արձակեաց ,

ԸզՍեղադեան բնակիչ Պեսեայ հար զԱմ-  
փիոս և խոցեաց .

Սա այր ընչէղ բազմահամբար , այլ յօր-  
հասէն դրդեցաւ

Գալ Պրիամուռն և զաւակաց նիզակակից  
դիմագրաւ .

Ի սա Այաս Տեղամոնեան տէգ շողացոյց  
ընդ գօտին ,

Շամփրեաց զերկայն սայր նիզակին մը-  
խեալ 'ի խորս գանձակին .

Անկաւ դոփեաց . կապտել ըզգէնս արին  
Այաս ետ ըզթափ ,

Տրոյեանք անդուստ հրափայլ և սուր աի-  
գաց տեղան ըզտարափ :

Շատ ինչ անդէն տէգ և սրլաք հարուստ  
վահանն առ քաջի ,

Երես չարար վազեաց 'ի դին , քարչեաց  
ըզտէգն աքացի .

Այլ 'ի թիկանց ըզգեղեցիկ ըզգէնան առ-  
նուլ ոչ բաւեաց ,

Անհրնարին տագնասպեցաւ 'ի տեղ նե-  
տից արձակմանց .

Խիթաց, եթէ անել սրափ Տրոյեանց խօ-  
լացն 'ի ճամբար ,

Զի էր քաջաց անդ տէգընկէց արձանա-  
ցեալ շատ որեար .

Կուռ վանէին զայր վիթխարին , զայրն  
անվրկանդ և հուժկուն ,

Մինչ յանհընարս մոռեալ արին վերջոտ-  
նեցաւ 'ի ժամուն :

Լյապէս սոքա մեծ գոռային բազմաշը-  
շուկն 'ի մարտի ,

Մինչ բուռն օրհաս ըզՏղեպողեմ զայրն  
դրդեաց անարի :

Սա հերակլեան , հարաւ ընդդէմ Սար-  
պեդոնին դիւցանման ,

Եկին 'ի մէջ միմեանց հանդէս արձանա-  
ցան ախոյեան .

Մին թոռն և միւսն ամպահարին որդի  
Դիայ էր մեծին ,

Բայց Տղեպողեմ յաւակնադոյնս ձայն  
արձակեաց առաջին ,

« Ո՞ր հարկ ըզքեզ , ո՞ Սարպեդոն լիւ-  
կեանց աւագ , դրդեաց արդ ,

Յառնել և գալ դողալ աստէն , այր դու ,  
անփորձ առ 'ի մարտ :

Սըտեն վիպողք , որ մազդեզանց կարգեն  
ըզքեզ 'ի հանդէս ,

Այլ դու անշուշտ 'ի յայն քաջաց հեռի  
կաս շատ ասպարէս :

Քաջք, որ երբեմն 'ի ծերունեաց դարուն  
 ծընան 'ի Դիայ ,  
 Որպիսի ինչ ըզհոյն և զոյժ զեմոյն ասեն  
 Հերակլեայ :

Հայր իմ էր նա առիւծասիրտ , և փորա-  
 տէր հուր և բոց ,

Եւ աստ, էր զի Ղաւմեդոնին եկն 'ի սլաւ-  
 ճառս 'ի ձիոց :

Վէց միայն նաւս և խուն որեար առեալ  
 ընդ իւր կորովիս ,

Հար զԵղիոն , և զոստանին այրիացոյց նա  
 զուղիս :

Այլ դու 'ի սիրտ վատեալ ողջոյն , և  
 քոյդ որեան ծախեսցին ,

Ոչ կարծեմքեզ գալով Ղիւկեայ սատար  
 Տրոյեանց գոլ ազգին :

Նա թէպէտ քո յաղթահարուստ իցէ կո-  
 րովդ խիտ և հոծ ,

Դու աստ յիմ ձեռն առ Բարապանն 'ի  
 դուռն իջես դըժոխոց ? :

Մնշուշտ Հերակլ , անդէն կրկնեաց  
 Ղիւկիացոց քաջ արքայն ,

Անշուշտ Հերակլ , ո՛վ Տղեպողեմ , հար  
 զԵղիոն սրբազան :

Այլ խակուծիւն Ղաւմեդոնին էր մըր-  
 ցանացդ այդ հանդէս ,

Որ չակնածեալ բարերարին բանիւք զը-  
 զուեաց դառնապէս .

Չես ըզնրժոյգան, ոյց աղադաւ եկն յաշ-  
խարհէն տարագնաց,

Բայց ես այժմիկ քեզ խաւարին օրհաս  
կարդամ մահազգեաց :

Դու փառք աստէն ինձ ձօնեսցես, յի-  
մում գրաւեալ նիզակին,

Ձոգիդ տացես ասպահապետ Անդրնդեհ  
պետ իշխանին » :

Օ այս Սարպեդոն. և Տղեպողեմ ըզ-  
տէգն ամբարձ ըզհացեան,

Յերկուց ձեռաց նիզակքն երկայնք շեշտ  
միահետք ձրգեցան .

Պարանոցին կրչիւ ընդ մէջ տէգ Սարպե-  
դոն հար վարսեաց,

Եւ քաջ 'ի կողմն 'ի կողմանէն սայր մա-  
հաբերն անց թափանց .

Ձաջօք նորա աղջամրղջեան անլոյս գի-  
շեր առ ըզբակ,

Իսկ հար ըզտէգն և Տղեպողեմ 'ի բարձ  
նորա 'ի յահեակ .

Արենախանձ սայրըն վարսէր մինչև 'ի  
յոսկր 'ի բարձին,

Այլ 'ի վերուստ հայրն 'ի յորդւոյն ըզ-  
ժամն արդեւ զօրհասին :

Ճեպով համհարզքն ըզՍարպեդոն գիւց-  
ազն հանեն 'ի մարտէն,

Մինչ դեռ ցաւոց երկունքն ըզնա տան-  
ջեր յերկայն նիզակէն .

Այլ ուշ չեղ ոք 'ի դիւր ոտին քարշէլ  
ըզսայրն ըզբարձին ,

Այնչափ նոցա 'ի շտապ տագնասւ էր  
փրկութիւն դիւցազին :

Բայց և անդուստ ըզՏղեպողեմ Յոյնք  
խրախուսեալք քաջապէս

Աւին 'ի դուրս , և յակն ըզնա դիւցազն  
էարկ Ոգիւսէս .

Ի լանջ քաջին համբերատար աղէտք սըւ  
տին խարշեցան ,

Եւ միտք արւոյն անդ 'ի կրկին 'ի տարա  
կոյս ծըփեցան .

Արդեօք զորդի զորոտընդոստն Արամազ  
դայ նախ վանեւ ,

Թէ միջամուխ 'ի զօր Լիւկեանց շատից  
զոգիսըն քաղէլ :

Բայց 'ի վերուստ մեծն Ոգիւսեայ չէր  
սահմանեալ 'ի վիճակ ,

Ըզկորովին զայն մազդեզանց 'ի սուր հա  
րուլ 'ի նիզակ :

Հասպա նորա շըջեաց ըզմիտս , դրդեաց  
զոգին Աթենաս ,

Ի զօր մըխիւ Լիւկեացւոց , շատից ածել  
օրահաս :

Հար զԱլաստոր , հար ըզՔրոմէս , տա  
պաստ էարկ ըզՎիտան ,

Հար զԱղկանտրոս , ըզՆոէմոն , ըզՊրի  
տանէս և զԱղան :

Արդեօք և շատ յայն խուժանէն հարոյր  
դիւցազն Ոգիւսէս ,

Թէ յակն հեկտորն ասէղազօր զայն չար  
կանէր փութապէս :

Ի զէն վառեալ հրաշէկ պըրղինձ , անցնա  
մարտին 'ի պաշտօն ,

Աճ արկ Յունաց , արձանացաւ , և ցըն  
ծացաւ Սարպեդոն :

Չայն բառացին աղիողորմ առնա ձայնէր  
վըշտահար ,

« Ձիս , Պրիամեանդ , զիս մի այդպէս Յու  
նաց թողցես որս աւար .

Յօգն հաս ինձ քաջ , ես շունչ շնչեմ 'ի  
ձեր քաղաք շունչ վերջին ,

Չիք ինձ չիք այլ 'ի սեպհականն 'ի տուն  
դառնալ վերըստին .

Ըզհայրենին աչք իմ այլ ոչ զերկիր տես  
ցեն զիմ խաղաղ ,

Ոչ զամուսին զիմ խրախ առնել , և ոչ  
զորդեակն իմ մատաղ » :

Լըւաւ հեկտոր ասէղադոուն և ոչ բար  
բառ ետ անգամ ,

Անց ըզնովաւ բոցավառեալ , ճեպէր կը  
ռուել նա յայնժամ .

Վանել պուղել գունդ զԱրգոսեանց , շա  
տից քաղել ըզհոգին ,

Մինչ քաջ համհարզքն ըզդիւցանմանն  
ըզՍարպեդոն պաշտէին .

Գեղասաղարթ ընդ թաւ կաղնեաւ Արա  
մազգայ սաշտսանեն ,

Անդ 'ի նոցունց ոմն ըզհացեան քարչեաց  
ըզսայրն 'ի բարձէն .

Էր Պեղագոնն այն կորովի սերտ մշտե  
րիմ արքային ,

Նա թալկացաւ և մառախուղք զաջօք նո  
րա սպտեցին :

Շնչեաց կրկին , քանզի առոյգ հիւսիսայ  
նոյն սիւք փրչեաց ,

Փչեաց 'ի նա և ըզմղձկեալ թմբիր ոգւոյն  
արծարծեաց :

Բայց Արգոսեանք 'ի յԱրեսէն և յԵկ  
տորէն քաջառեգ ,

Ոչ 'ի նաւացն իւրեանց հանդէս ընկրրկե  
ցան ահաբեկ .

Այլ ոչ այնպէս և գլմագրաւք 'ի մարտ  
խաղան բացաձիգ ,

Յանգ վերջոտնին , քանզի զԱրէս Տրոյ  
եանց ծանեան զօրավիգ :

Արդ զո՛ նախկին անգ գիտապատ ար  
կին և կամ զո՛ վերջին ,

Հեկտորն ահեղ Պրիամոսեան և խօշն Ա  
րէս պրղընձին .

Նախ ըզՏեւթրանտ զայր դիւցախառն և  
զքաջաձին զՈրէստոս ,

Ապա զԵնոմ և զԵտողեանըն զարդերն  
կէց ըզՏրեքոս :

Հարին զԵղէնըն զԵնոպեան , զԵրփնա-  
կամարն Որէսպի ,

Չայր Իւղացի բազմահարուստ զայր ըն-  
չաքաղցն 'ի յոգի .

Բնակէր յԻւղէ թւակոխեալ Կեփիսի-  
սեան մերձ լըճին ,

Անդ բնակէին և Բիովտեանք իշխանքն  
հարուստ խուժանին :

Յերկնից հերա լուսածըղին զահեղ ըզ-  
մարտն ակնարկեաց ,

Տես զամէհիսն որ ըզհեւէնս յօրհաս  
մատնեն մահազգեաց .

Չայն տայր անդէն ընդ Աթենաս արա-  
գաթև 'ի ժամուն ,

«Ասպարազէնն Արամազդայ , բաբէ ծը-  
նունդ աննըկուն .

Չո՛ւր մէք ուրեմն ուխտ կրուեցաք Մե-  
նեղաւոս արքայի ,

Թէ զԵղիօնն ամրասպարիսպ քանդեալ 'ի  
տուն իւր դարձցի :

Չի՞ մէք այդպէս ըզխօշն Արէս թողումք  
մոլէլ առանձին ,

Օ՛ն արի քաջ , փորձ ուժգնակի տացուք  
և մեր ըզբազկին » :

Ասաց Դշխոյն , Պալլաս ձայնին խաժակն  
անսաց սիրաբար ,

Չոքաւ հերա և հանդերձեալ կաղմեր ըղ-  
ձիսն ոսկեսար .

- Անդ Զըրուանեան գուտորըն պաշաէր  
վէ՛հ գիցանոյշըն հերա ,
- Անդուստ և հէքն 79 'ի կառս ըզկոր զա  
նիւս անցոյց պըղընձէայ .
- Անիւքն էին ութմատենիք զառանց սա  
տենն երկաթի ,
- Եւ բոլորին յանասականն նոքա ոսկւոյն 'ի  
ծիր թի :
- Այլ կուռ պըղինձք պատենն գօտիք . էր  
հիասքանչ այն դիմակ .
- Աստի անտի բոլորաձև գուշոք արծաթիք  
ենն համակ .
- Էր աթոռակ ձըգեալ վերայ ոսկի փոկոց  
'ւ արծաթի ,
- Եւ են անդէն սըսակաձև բոլորածիրք  
կրկնակի .
- Քեզին 'ի գուրս ձիգ երկայնէր յաթոռա  
կէն քաջամուր ,
- Քեզն 'ի բունն հաստահարուստ և էր հա  
մակ արծաթ կուռ .
- Ի ծայր քեղւոյն կասկեաց զոսկին ըզլու  
ծըն զայն գեղանի ,
- Եւ յօրինեալ նա ըզքնաղ ըզանջափոկս  
արկ զոսկի :
- Հերայն յայնժամ առեալ ընդ լուծն  
ըզձիս ձըգեաց օդասպար ,
- Եւ ինքն 'ի մարտ և 'ի խօշիւն յանձուկ  
սրտին բոցանայր :

Բայց Աթենաս Արամազդեան մեծն օ-  
 թիորդ գերունակ,  
 Տեռ զիւր փափուկ ծածանելով արկ 'ի  
 հօրն իւր 'ի յատակ .  
 Տեռ երփնազարդ, զոր նա ձեռօքն ին-  
 քնին նիտեալ ճարտարեաց,  
 Եւ զամպահարն Արամազդայ զրահից ար-  
 կաւ ըզպատեանս .  
 Չինու զարդու վառէր 'ի մարտ գերաչ-  
 խարան գոռութեան,  
 Եւ շուրջ զուսով թեզանափառ կախեաց  
 զԱսպարն աստուածեան  
 Ըզսոսկալին, Ահն ըզնովաւ բոլորս ունէր  
 պրսակաց,  
 Անդ օթանայր Հեռն և Կորոմն, անդ և  
 Հէնն էր արհաւրաց .  
 Անդ և գլուխն էր Գորգոնեան 80 հրէ-  
 շին այնմիկ սոսկալի,  
 Խոժոռ, ահեղ, հրէշանըշան ասպարա-  
 ղէն Գիոսի .  
 Ի գլուխն 'ի վեհ յաղթ սաղաւարտ ըզ-  
 քառավերջն եդ ոսկի,  
 Հարիւր շինից քաջ բաւական լինել զօ-  
 րաց հովանի .  
 Ի կառս վերել 'ի բոցեղէն, և տէգ աղ-  
 խեաց 'ի բըռին,  
 Ծանր 'ի կշռի, տէգ անարի, անվանելի,  
 ահագին .

Նովաւ ըզխօլս ըզգունդադունդ ճընչէ  
նըկուն ըզքաջաց ,

Երբ հօրամոյն այս Դուստր հըզօր ընդ-  
դէմ սրանի դիւցազանց :

Պանեաց հերա , անդէն նըժոյգքն օդա-  
սպարիկքըն թըռչին ,

Եւ դուրք ինքնին բացան երկնից , որոց  
և յամք սահ ունին .

Սոցա են յանձն երկինք անդորր և Ո-  
ղիւմսոս վերնաճեմ ,

Թէ 'ի բանալ թէ 'ի փակել ըզզարամուրս  
ամպեղէն 81 :

Չարագ նըժոյգան հլուս գանից ուղի ընդ  
այս վարեցին ,

Եւ զԱրամազդ ուրոյն 'ի դից գըտին բազ-  
մեալ առանձին .

Էր նա 'ի ծայր դերակատար բազմագա-  
հին Ողիւմսեայ ,

Անդ զերիվարսն առկայացոյց լուսածը-  
ղի վեհն հերա :

Խնդիր ապա ընդ Չըրուանեանն ընդ Ա-  
րամազդ հարցանէր ,

« Եւ ոչ դու հայր , խօշ Արեսիդ ընդ  
գործ ցասնուս մահաբեր :

Քանի՞ որեան և զի՞նչ որեան Յունաց ,  
մոլին մարդախանձ

Կորոյս ընդ վայր և անիրաւ , և ինձ ամ-  
բաւ ցաւ առթեաց :

Իսկ անդ Աստղիկ և քաջաղեղն այդ Ապո-  
ղոն կան հրրճուին

Դրդեք Մուլոյդ, որ ոչ օրէն ոչ կարդ  
գիտէ գլխովին :

Արամազդ հայր, արդեօք ինչ մի տեսից  
ցասումն առ 'ի քէն,

Թէ դառնապէս ես ինքն հարեալ զԱրէս  
վարեմ 'ի մարտէն » :

Պատգամ ձայնին ամպրոտածինն Ա-  
րամազդ զայս կարդայ,

« Օ'ն դու 'ի դա զաւարածուդ զայդ Ա-  
թենասս սու դրդեա :

Դա հանդերձել ճարտար գիտէ նրմա  
ցաւոց 'ի մեծաց » :

Լըւաւ զպատգամ զայն Դիցանոյնն ոս-  
կեծըղին և խնդաց :

Շըռինդն եհար մտրակ 'ի կուշա, սրա-  
ցեալ նրժոյգք թըռչէին

Ընդ վայրն ամբաւ, որ ընդ երկիր և ասա-  
ղազարդն ընդ երկին :

Եւ որչափ ինչ օդազընին այր ոք կացեալ  
'ի դիտէն

Մեծ ասպարէզ կշուէ աչօքն 'ի ծիրանին  
'ի ծովէն,

Նոյնչափ սահման վաղ միանգամ ա-  
ռեալ 'ի յաղթ սրմբակաց,

Օդապարիկ սաւառնելով ձկքն հատա-  
նէն Դիցուհեաց :

**Ի** Տրոյիա հասին 'ի վայրն 'ի յորդ գե-  
 տոց պարունակ,  
 Ուր Սիմոն և Սկամանդրոս զիւրեանց  
 խառնեն ըզվրտակ :  
 Անդ ըզնրժոյգան առկայացոյց լուսածը-  
 ղին Դիցուհի,  
 Լոյծ 'ի կառաց և ըզնուս հոծեալ պա-  
 տեաց 'ի միգի :  
 Զաննահականն ետ Սիմոն արօտ նո-  
 ցուն ճարակաց,  
 Քայլ Դիցանոյչքն առին քայլել նրման  
 աղու աղաւնեաց :  
 Անձուկ բերեն Արգոսացւոց կալ զօրա-  
 վիգ քաջաբար,  
 Մինչև եկին հասին 'ի վայրն, ուր կայր  
 քաջաց շատ որեար :  
 Խումք արարեալ բակ ունէին ըզԴոմե-  
 դէս քաջարի,  
 Կային նրման գիշախանձից գոռ առիւ-  
 ծուց ամեհի,  
 Կամ վարազուց անվանելի կրնճից նրման  
 վայրենեաց :  
 Ուր և Դշխոյն լուսածըղի կաց դիցանոյչն  
 և գոչեաց,  
 Նրման իբրու մեծն ըստենտոր սլղղնձա-  
 լանջ ձայնարկուն 82,  
 Որ ձայն բարձեալ գոչէր այնչափ, որչափ  
 գոչեն արք յիսուն :

"Կորանք, առանկք և մատընցոյցք, Ար-  
 գոսացիք նըշաւակք,  
 Դուք վատք արանց և դագաշեալք, հը-  
 ջօրք միայն 'ի դիտակ .  
 Յորչափ Դիւցազըն Աքիլէս ճակատ մը-  
 ղէր 'ի մարտին ,  
 Ոչ քան ըզդուրսըն Դարգանեան Տրոյ-  
 եանք երբէք կըռուէին .  
 Զանգիտէին նոքա քաջին յաղթ նիզակին  
 յերեսաց ,  
 Իսկ արդ ձգեալք 'ի քաղաքէն շահատա-  
 կեն մերձ նաւաց " :  
 Եւսաց , յայր այր բոցավառեալ կորով  
 ղընչեաց և աշխոյժ ,  
 Յայնժամ խաժակն առ Դոմեդէս մա-  
 տեաւ Պալլաս դիցանոյշ .  
 Եգիտ զարքայն , կայր առ ընթեր երիվա-  
 րաց և կառաց ,  
 Դարման վերին տայր , զոր փըքնաւն հար  
 Պանդարոս և խոցեաց .  
 Նա քըրտնահոծ ընդ քեմըխտաւ տանջէր  
 իւր յաղթ ասպարին ,  
 Նովաւ ծանրեալ խոնջ և վաստակ բա-  
 ջուկք քաջին յոգնէին .  
 Ըզլայն ըզիոկն 'ի վեր առեալ ջնջէր  
 զարեանն ասպաժոյժ ,  
 Մինչ Դիցուհին 'ի լուծ ձիոցն հըպեալ  
 նմա ազգեաց ոյժ :

Քանքէ, ասէր, ծընաւ Տիւղէս զաւակ  
անձին խուն նրման,

էր նրկնաձև 'ի հասակին, բայց էր մար-  
տիկ աննրման .

Մրցել նմա ես թոյլ չետու, կամ գոռ  
յառնել նահատակ,

Երբ 'ի Թեբէ նա միայնակ յԱքայեցւոց  
գայր հրեշտակ .

Խուսիք կայր անդէն խօշաց Կադմեանց,  
խիկ էր նա անդ միայնիկ,

Հրաման ետու յայն գարապաս ճաշել  
նրմա հանդարտիկ :

Այլ ցանդ արին, նա և յայնժամ յաշ-  
խոյժ ոգւոյն մեծապէս

Չայն պատանեաց Կադմէացւոց տայր  
մրցանաց յասպարէս :

Մրցեցաւ քաջ, և հեշտաբար բնաւից  
գրտաւ յաղթական,

Այնչափ ինչ ես արւոյդ յայնժամ եղէ  
ինքնին օգնական :

Զարդիս և քեզ կամ առ ընթեր, և եմ  
գըլխոյդ հովանի,

Ես քեզ հրաման տամ ընդ Տրոյեանց  
ոգւով կըռուել քաջարի :

Բայց քո անդամք արդ վատեցին, յոգ-  
նեալդ 'ի սուր և 'ի տէգ,

Կամ պաշարեալ ըզքեզ թերևս ահ-մի  
կալաւ սրտաբեկ :

Չես դու անշուշտ Ենեան Տիւղեայ քա-  
ջամարտիկին չես զաւակ ” :

Լըւաւ Դոմեդ զայս կորովին , կրկնեաց  
անդէն ձայն արագ .

“ Բզքեզ , ո՞ դուստր Արամազդայ , ըզքեզ  
գիտեմ Դիցուհի ,

Ոչ պատ 'ի պատ ձայն համարձակ բար-  
բառեցայց էս բան մի :

Ոչ վատուծիւն գրաւեալ երբէք կամ  
արհաւիրք զիս ունին ,

Այլ էս անջինջ , զոր ինձ ետուր , պատ  
գամ յիշեմ ըզքոյին .

Թոյլ ինձ չետուր ընդ այլ վեհից գից  
պայքարել յանդիման ,

Բայց թէ Ասողիկ դուստրն մազդեզն 'ի  
մարտ գայցէ յերևան :

Արդ զայդ Ասողիկ էս ինքն հարեալ 'ի  
սուր պըղինձ խոցեցի ,

Բայց և զարգիս էս 'ի մարտէն նահանջ  
ոտիցն իմ արկի ,

Նա և այլոցն ետու մարտեաց աստէն 'ի  
մի կալ գումար ,

Քանզի ծանեայ եթէ Արէս ինքն է մար-  
տին կառավար ” :

“ Իմ քաջարի Դիոմեդէս , խաժակն ա-  
սէր Դիցուհի ,

Տիւղեայ զաւակ դու սիրային , ոգւոյս  
խմոյ փարելի :

Գու յԱրեսէդ մի պակնուցուս, և մի  
 յայլոց անմահից,  
 Այսչափ ասա ես Աթենաս քեզ եմ աս-  
 տէն մարտակից .  
 Օհ դու նախկին շէշտ 'ի յԱրէս կըուեա  
 զձիոցդ ըզսըմբակ,  
 Գրոհեա 'ի դա մի ակն ածցես, առ քեզ  
 ըզգա նըպատակ .  
 Դա մոլէգին, դա չարարուեստ և յա-  
 րափոխ յոյժ է դա 83,  
 Որ և այն ինչ կըուեաց խոստումն ինձ  
 գլխովին և հերայ .  
 Ասաց . Յունաց կալ զօրավիպ, Տրոյեանց  
 ընդդէմ նահատակ,  
 Զարդիս խառնեալ ընդ Տրոյացւոց Յու-  
 նաց չառնէ յիշատակ ։  
 Ասաց, միղօն 'ի Աթենեղոս ետ անդ ա-  
 փոփն և վարեաց,  
 Նա խուճապեալ և 'ի գեաին վազեաց  
 անդէն 'ի կառաց .  
 Վերել 'ի կառու մերձ Գոմեդեայ բոցա-  
 վառեալ Դիցուհին,  
 Եւ շատ ծանրեալ առանցք կաղնին, և  
 ճըռընչեաց ասագին .  
 Զի վերելեակ դիք մի ասէղ և մարդ-  
 հուժկու ամբարձաւ,  
 Ըզխարազանն և զերասանն առ Աթե-  
 նաս և կալաւ :

- Վարեաց ըզձիս սալասըմբակ նախ շէշտ  
ընդդէմ Արեսի ,
- Որ դիտասպաստ ըզՊերիփաս զայրն էր  
արկեալ վիթխարի .
- Էր Ետողեանց սա ուժաւոր , Ոքսեայ  
որդի վէհապանծ ,
- Զոր 'ի ժամու անդ 'ի զինուցնի Արէս  
կապտէր մարդախանծ :
- Բայց Աթենաս եդ սաղաւարտ զանդըն .  
դէհպեան իշխանի 84 ,
- Քողածածուկ լինէր յաչաց ասէղազօրն  
Արեսի :
- Այն ինչ Մողին այն մարդածախ տես ըզ-  
Դոմեդ նահատակ ,
- Աճասպարեաց , ոչ հայեցաւ Պերիփա-  
սայ 'ի դիակն .
- Ելիք տասպաստ անդ ըզհրակայն , զոր նախ  
էհար 'ի յողի ,
- Եւ ասպազէնըն Դոմեդեայ խաղաց ընդ-  
դէմ շէշտակի :
- Իբրև այնպէս միմեանց հանդէպ արձա-  
նացան ախոյեան ,
- Նախ մահ Արէս կարգաց , տիգեաց ձիոցն  
'ի լուծ 'ւ յերասան :
- Սրավար ըզտէզն հասլճեպ ձեռամբ խաժ-  
ակն առեալ Դիցուհին ,
- Վանեաց 'ի բաց և 'ի դերևս ըզթամին  
էհան զաշտէին :

Խաղաց երկրորդ և Դոմեդէս շողաց յաշ-  
տէն սլողընձի ,

Հար կորովի , և Աթենաս ըզսայրն ուղ-  
ղեաց կշռակի

Կշիռ 'ի փորն , ուր 'ի կամարն էր գօ-  
տևոր սնդապէս ,

Անդ նա 'ի խոր դիպեցուցեալ վար-  
սեաց զաշտէն , հար զԱրէս :

Ըզմորթն հերձեալ ըզդիւցական ըզ-  
տէգն 'ի բաց առ կրկին ,

Եւ մըռնչեալ ահեղաձայն գոչեաց Արէս  
սլողընձին .

Որչափ գոչեն արք ինն հազար կամ տասն  
հազար 'ի մարտկաց

Խօշք ահագինք , յորժամ խազմին խառ-  
նուրդք լինին բանակաց .

Պակեան Տրոյեանք , պակեան և Յոյնք  
'ի գող հարեալ սարսեցին ,

Այնչափ Արէսն արենասանձ գողին  
գոչեաց ահագին :

Օրր օրինակ այս տապախառն հողմոց  
չընչեալ ուժգնակի ,

Եւ յամպրոպացն 'ի գումարեւ զօդովք  
խաւար մուծ պատի ,

Այնպէս յայնժամ Դիոմեդեայ Արէս  
տեսաւ երկաթին ,

Որ վերառեալ ամբով միգով խաղայր  
գընայր 'ի յերկին .

ՅՈՒՂԻՄԱՆՆԻՆ 'ի վեր դահն յաստուածոց  
հաս 'ի քթթեւ նա ահան ,

Եւ բազմեցաւ մերձ Դիոսին , լի էր ու  
գւով թախծութեան :

Առ և եցոյց զանմահականն արիւն հո  
սեալ 'ի վիրէն ,

Բարբառեցաւ առ Չըրուանեան քանքար  
տալով 'ի ձայնէն .

Վրամազդ հայր , ցասնուս դու ո՞չ , գոր  
ծըս աեսեալ դրժընդակ ,

Տանջիմք աստուածքս 'ի վէգ միմեանց 'ի  
դիմամարտ մրցանակ .

Այր մեք զարամք ելեալ կըռուփիմք , կալ  
զօրավիգ երկրածնաց ,

Այլ պայքարին դու ես պատճառք բոլոր  
դասուն երջանկաց :

Չի խելայեղ և փնասակար Դուստոր ծը  
նար դու ինքնին ,

Որ ցանգ նստեալ դա դժպատեհ բանըս  
նիւթէ 'ի սրտին :

Ահա որչափ աստ յերկնածեմն 'ի յՈւ  
ղիմպոս աստուածք են ,

Հնազանդք հըլուք առ հասարակ և քեղ  
ինչ ոչ անաստեն .

Սակայն դրմա դու ոչ արդեամբք և ոչ բա  
նիւք համ դընես ,

Անտանձ այնպէս թողուս ըզդա , զի խեռ  
զաւակ ծընար քեղ :

Դա արդ ըզխրոխտն ըզԴոմեդէս դըր  
դեաց Տիւդեայ սէգ զորդին ,

Եւ անմահից դիցն հակառակ լըրբէլ դա  
սուն մոլեգին .

Սա առաջին յաւակնեցաւ գըձձէլ ըզ  
ձեռն Աստղկան .

Եւ տէգ ամբարձ հար 'ի պըտուղ քընքուշ  
ափոյն աստուածեան :

Ապա և յիմ դիմեաց վերայ շահատա  
կեալ դիւցաբար ,

Այլ քաջապէս զիս ասրեցոյց ոտիցս ա  
րագ գարշապար .

Թէ ոչ , յերկար մահուն կրէի ես զար  
հաւիրս և ըզճոյն ,

Կամ երկաթոյ ես 'ի ներքոյ գրաւեալ  
գանին կենդանւոյն ) :

Ս'ի դու ինձ զայդ , տիգօք աչաց Ամ  
պրոպայինըն սաստէր ,

Մի յարափոխդ ինձ մերձ բազմեալ , մի  
զայդոսիկ քըրթմընջեր .

Դու ինքն 'ի դիս արփիաբնակս ինձ ես  
կարի ատելի ,

Զի ցանդ խօշիւնք և հեռ և մարտք են  
քեզ սիրով փարելի :

Սիրտ է քո վէս սանձակոտոր մօր քոյն  
հերայ տընկակից ,

Զոր ես ինքնին հաղիւ բաւեմ պարտել  
յամոք 'ի բանից :

Եւ արդ նորուն համոզակեր լեալ հա-  
մախոհդ 'ի գաղանխս ,

Վասն այդորիկ դու ախտակիր այդպէս  
տանջիս տառապիս :

Այլ կամիմ ոչ, քեզ ընդ երկար ցաւովք  
այդչափ դու անկած ,

Զի իմ ես ճետ և յանդիման ինձ մայրն  
ըզքեզ 'ի լոյս ած .

Որ թէ յայլ դից սերեալ էր քո, զաւակդ  
այդչափ ըստամբակ ,

Քան Ուրանեանց 85 շատ հիգագոյն լի-  
նէր անշուշտ քոյդ վիճակ ր :

Լսաց, հրաման ետ Պէոյնի բուժեւ ըզ-  
նա փութապէս 86 ,

'Նա դեղ ամոք սրփուեաց բուժեաց, զի  
մահացու չէր Արէս :

Զոր օրինակ կաթն ըսպիտակ մածնու  
հարեալ 'ի խախաց ,

Եւ որ հեղուկ, խառնմամբ արագ մա-  
կարդանայ 'ի զանդուած ,

Այսպէս Պէոն անդ ետ ընդ ետ բուժեաց  
զԱրէս մահաբեր ,

Էառ հեբէն լուաց ըզնա, և ձորձ պայ-  
ծառ արկանէր :


Մերձ յԱրամազդ նստաւ Արէս, խայ-  
տայր 'ի շուք գերափառ ,

Մինչ Դիցանոյչքն անդրէն 'ի չու անկան  
Դիայն 'ի տաճար ,

Մեծն Աթենաս Աղալկմացին , դշտոյն  
 Հերա Արդուհին ,  
 Յորժամ զԱրէս 'ի մարդածախ սատակ  
 մանէն կարճեցին 87 :



172. 10. 1707. 10. 1707.  
172. 10. 1707. 10. 1707.  
172. 10. 1707. 10. 1707.  
172. 10. 1707. 10. 1707.



# ԵՂԻՆԵՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Զ .

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Վահատակութիւնք զօրավարացն յետ  
մեկնեւոյ դիցն 'ի մարտէն : Հեկտոր ըստ  
խորհրդոյն Եղենոսի դառնայ 'ի Տրոյիա,  
պատուիրէ մօրն շղաշատեալ մի նուիրել  
Աթենասայ, և յաղօթս կանխել : Պա-  
տահին միմեանց Դիոմեդէս և Գլաւ-  
կոս : Պատմութիւն Բեւերութիոնեայ :  
Թափօր բամբջացն Տրոյիոյ և աղերսք առ  
Աթենաս : Կշտամբի Պարիս 'ի Հեկտորէ  
և 'ի Հեղինեայ, և դառնայ անդրէն 'ի  
բանակն : Խանդաղատին առ միմեանս  
Հեկտոր և Անդրոմաքէ սքանչելապէս :

Տեսարան Հագներդութեանս ըստ կի-  
սոյն է 'ի դաշտի պատերազմին, և ըստ  
կիսոյն 'ի Տրոյիա :



## ԵՂՒԼԿԸՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Զ .

Մ արտն ահագին յայնժամ Յունաց և  
Տրոյացւոց մենացաւ ,  
Եւ յաղթութիւնն յայսկոյս յայնկոյս  
ծրփայր 'ի դաշտն 'ի յամբաւ .  
Ընդ մէջ դետոյն Սիմոնիսին և Քսանթո-  
սին վըտակաց ,  
Տէգ և մրկունդ պրղընձակուռ շէշտէն  
ընդդէմ քաջք քաջաց :  
Եւ նահառակ Տեղամոնեանն Այաս ,  
պատուարն Հեղէնաց ,  
Հար Տրոյացւոց նա ըզփաղանդս , նիղա-  
կակցաց լոյս ծագեաց :

Խոցեաց զաւագն ըզթրակացւոց զայր 'ի  
 բազուկ կորովն ,  
 ԶԱկամանտոսն Եւտրոսեան զայր քա-  
 ջալանջ վիթխարին :  
 Հար նախ ըզնա սաղաւարտին 'ի գիսա-  
 պանծ 'ի գագաթ ,  
 Մըկընդահար ըզսայրասուրն 'ի մուխ վար-  
 սեաց 'ի ճակատ .  
 Սայր դառնութեան մուտ շէշտակի թա-  
 փանց յոսկերն 'ի պատեան ,  
 Մէգ մառախուղ զաջօք նորա մածաւ  
 քթթեւ 'ի յական :  
 Մահատակեալ և Դոմեդէս զԱքսիւղ 'ի  
 մահ տարածէ  
 ԸզՏեւթրանեանն , որ բնակաւոր էր գե-  
 ղաշէնն յԱրխսբէ .  
 Սա բազմագանձ այր վանատուր հիւրա-  
 մեծար մարդասէր ,  
 Յուղւոյն վերայ ունէր նա վանս և եկ  
 բազում ժողովէր .  
 Աւանդ , նրմա ոչ ոք հիւրոցն ընդառա-  
 ջեալ յօգն եհաս ,  
 Եւ մարդասէր յայն վանատրէն վանեաց  
 ըզգառն օրահաս .  
 Այլ միահետ զերկուցն յայնժամ քա-  
 ղեաց Տիւղեանն առ զողին ,  
 Եւ զԱքսիւղեայ և ըզնորա ըզԿաղեսոս  
 ծառային .

Էր սանձակալ այս կաղեսոս և ըզկա-  
ռացն հոգ տանէր ,

Եւ գիտապատ անկաւ և նա տեառըն  
իւրում առ ընթեր :

Իսկ Եւրիւղոս զՈւփեղտիոս և ըզՏրիւսոս  
հար ըսպան ,

Ապա Եսբեայ և Պեդսոսին արձանացաւ  
ախոյեան .

Չամուլս ըզքաջ հարազատացս առ ըն լաւի  
Բուկղոնին

Յաւերժահարսն Աւարվարեան ծընաւ  
Նայեանն ըզսոսին :

Էր Բուկղոն զաւակ ընտիր Նաւմեդոնին  
բարեփառ ,

Էր անդրանիկ , այլ 'ի մօրէ ընծայեցաւ  
գողաբար .

Արդ յանկողին սա խառնելով , մինչ ա-  
րածէր ոչխարակ ,

Եւ 'ի Նայեան յաւերժահարսնէն որդիս  
ծընաւ երկուորեակ :

Սոցա ըզչունչն առ և քաղեաց 'ի քաջա-  
ռոյգ յանդամոց

Քաջն Եւրիւղոս Մեկիստեսեան , և բարձ  
ըզզէնսն 'ի յուսոց :

Իսկ զԱստիւղոս 'ի մահ խոցեաց քաջն 'ի  
մարտին Պողպիւդէս ,

Տէգ 'ի Պիդիառն Պերկոսեան հար և ըս-  
պան Ողիւսէս :

Անդուստ Տեւորոս յոգի եհար զԱրե-  
տանոսն աննրման .

Յաշտէն հրափայլ շամփրեաց զԱբղէր  
Անտիղոբոս Նեստորեան :

Իսկ քաջ արանցն Ագամեմոնն արկ դի-  
տապաստ զԵղատոս ,

Որ 'ի Պետաս բնակէր բարձուն զափամբ  
Սատնեայն գեղահոս :

ԸզՓիւղակոն ըզփախըստեայն Ղետոսն  
եհար քաջարանց ,

Իսկ Մեղանթեայ Եւրիւպիւղոս զօրհաս  
մահուն արագեաց :

Այլ քաջն 'ի մարտ Մենեղաւոս կալաւ  
զԱդրեստ կենդանի ,

Զի երիվարք իւր ահաբեկք սաստիկ շըր-  
տեան 'ի դաշտի .

Արշաւասոյրք 'ի խուճապէլն հարան  
յոստ յաղթ մոշային ,

Խորտակեցան կառք գոգաւորք 'ի ծայր  
վերջին 'ի քեղին .

Նոբա հանդէպ շեշտ 'ի քաղաք արագա-  
վազք ապրեցան ,

Ուր և խուժան 'ի շտապ տագնապ շտո  
լինէին ապաստան :

Իսկ Ադրեստէս ինքն 'ի կառաց 'ի մօտ  
գըթեալ առ անուին ,

Թաւալագլոր անկաւ կործան յորսայս  
գառեալ 'ի փոշին :

Արձանացաւ Մենեղաւոս տէգ 'ի ձե-  
ռին անարի ,

Ադրեատ յողոք անդ ըզճընգովք փարեալ  
քաջին պաղատի .

« Ձիս Մենեղաւ , Ատրէոսին արի զաւակ  
դիւցազին ,

Մաղթեմ կեցո , և ան ընկալ քեզ ձօն  
փրկանք զարժանին :

Լաւ կարասոյ առ ճոխ հօրն իմ են են  
մոթերք և ամբար ,

Պըղինձ , ոսկի և շատ երկաթ բազմաքան-  
դակ և պայծառ .

Յայնց մըթերից բա քեզ հայրն իմ փըր-  
կանք ձօնէ անսահման ,

Լըւեալ թէ ես 'ի նաւս Յոււսայ կամ  
կենդանի ողջանգամ » :

Ասաց , գոգցես Մենեղաւեայ ըզսիրտն  
յանկոյց մեծապէս ,

Թևակոխէր պաշտօնէին 'ի ձեռս յանձնել  
զԱդրեատէս :

Այն ինչ առնոյր զողոքաւորն 'ի նաւս ա-  
ծել Աբայեանց ,

հաս 'ի վերայ Ագամեմնոն և ձայն ահեղ  
զայս կարդաց .

« Օ ի անարիդ , զի գուժք արանցդ այդ-  
չափ 'ի քեզ տարրացան .

Քեզ 'ի Տրոյեանց , Մենեղաւէ , իրք առ  
տընին ճահեցան :

- Մի՛ ոք դոցունն դառն յօրհասէն երբէք  
լիցի անձնապուր ,  
Եւ մի՛ ելցէ ոք ողջանդամ 'ի մեր բազկաց  
քաջամուր .
- Դոցունն և ոչ տրղայն անգամ անպա-  
տուհաս մի՛ զերծցի ,  
Զոր մայր կրուէ մայրն աղէխարշ ծընըն-  
դական յարդանդի .
- Այլ հասարակ ընդ քաղաքիդ յառակ  
կարգեալք և 'ի խաղ ,  
Անկցին տապաստ միանդամայն անյիշա-  
տակք և անթաղ » :
- Լսաց արքայն , և գոռ բանիւք զեղբայրն  
յանկոյց փուլթապէս ,  
Շքեաց ըզմիտան , և Մենեղաւ մերժեաց  
ձեռամբ զԱդրեստէս :
- Առեալ ըզնա Ագամեմնոն հար 'ի սնա-  
կուշտն և խոցեաց ,  
Անկաւ անդէն չըւառականն տապալե-  
ցաւ 'ի յորսայս :
- Ատրիդ ընդ կուրծըն աքացեալ քար-  
շեաց ըզտէգն ըզհացի ,  
Մինչ անդ Նեստոր ձայն զայս գոչէր  
խրախոյս Յունաց բանակի :
- « Օ՛ն բարեկամք , ճեաք դիւցազանց ,  
մարտիկք հըզօրք և աւադ ,  
Մի՛ յետամնացք յաւար կապուտ յառել  
իբրև անաւադք .

Մի ապահել, իբրու մըթերս ածել 'ի նաւս յաւարաց ,

Այլ մեք զարդիս հա՛ ձեռն 'ի գործ մահունս ածցուք և հարուած ,

Ապա հեշտեալ ըզդիականցն աւար հարէք 'ի դաշտին » .

Ասաց , յայր այր խրախոյս և ոյժ քաջիկ ազդեաց ծերունին :

« Յայնժամ 'ի յոյն քաջորերոյն Տրոյեանց լննեալ միւս անգամ ,

Անշուշտ ընդ կրուկ սրտաբեկեալ խուճապէին 'ի յոստան ,

Թէ ոչ ներկուռ մեծն Եղէնոս Պրիամոս սեանն հաւահարց ,

Չայն 'ի Հեկտոր կայր արձակէր, ձայն և բառնայր յԵնէաս .

« Այս քիրան , այս մարտ Տրոյեանց, Լիւկեանց , քաջք Ենէաս և Հեկտոր ,

Ողջոյն 'ի ձեզ է ապաստան , 'ի ձեզ իշխանք մեծազոր .

Դուք թէ 'ի մարտ աւագացեալք և թէ յիմաստ և հանճար ,

Արիք ո՛վ քաջք , արձանացիք, սանձ դէք զօրուն տիրաբար .

Մինչ չև դոքա խուճապ 'ի տուն 'ի գիրկս անկեալ կանանւոյն ,

Այսպնակատակք 'ի թշնամեաց քրքրիջ առցեն դառնագոյն :

Դուք փաղանդաց արկէք ըզսանձ, և մեք  
 մըտեալ 'ի հանդէս  
 Կամք և կըռուիմք, թէպէտ յոգնեալք,  
 զի հարկ նեղէ մեծապէս:  
 Բայց դու, հեկոոր, արի՛ ո՛վ քաջ էրթ  
 փութապէս 'ի քաղաք,  
 Եւ ըստիսլաւ մօր քում և իմ՝ զայս դու  
 տացես ձայն արագ .  
 Տիկնայս խմբեալ նա 'ի խաժակն Աթե-  
 նասայ 'ի մեհեան,  
 Յակառն 'ի վեր բացցէ ըզդուրս սրբոյ  
 յարկին պալատան .  
 Շրղաշատեռ մեծ լայնատարր, յոյժ շնոր  
 հաշուք յանկուածի,  
 Քան որ 'ի տանն իցեն ողջոյն, սրտին իւ-  
 ըոյ փարելի,  
 Դիցէ զծընգովք զայն Աթենայ վարսա-  
 գեղոյն, հաշտարար,  
 Եւ ուխտ դիցէ զո՛հ զըւարակս յաղել նո-  
 ըայն 'ի տաճար .  
 Զո՛հ, տարևոր տըրմուղ կըրմուղ զըւա-  
 րակաց երկտասան,  
 Գըթալ յոստանն, 'ի կանանին և 'ի մանկ-  
 տին բազմերամ:  
 Նա վանեսցէ յԵղիօնէն ըզգոռ Դոմեգն  
 ահաւոր,  
 Որ ես զայդ խօշ բնաւից Յունաց ասեմ՝  
 լինել ուժաւոր .

Անշուշտ աս մեզ չետ հոյնն այնչափ քա-  
ջին արանց Ա. քիլեայ ,

Զոր և ասեն համբաւատենչ ճետ դիցու-  
հւոյն գոլ թետեայ :

Իսկ այդ Դոմեդ ասեղազօր վերագ վայ-  
րագ աննրման ,

Դորա ուժոյն բաւէ ոչ որ գալ 'ի կրչիո-  
'ի մրցման " :

Օ այս Եղենոս , և մեծն Հեկտոր հարա-  
զատին չանաստեաց ,

Զինու զարդու աճապարեալ 'ի վայր ոս-  
տեաւ 'ի կառաց .

Շրջան առեալ ընդ զօրն ողջոյն տեգըս  
ճօճէր սայրասուր ,

Մարտ բորբոքեաց , խօշիւն սաստիկ զար-  
թոյց ասեղ իբրև հուր :

Դարձան Տրոյեանք , յակաստանի ընդ-  
դէմ կացին Ա. քայեանց ,

Յոյնք կասեցին և դագարել էտուն սը-  
րոյն մարդախանձ :

Խիթան , էթէ ոմն յանմահից Տրոյեանց  
պաշտպան բանակին

Յաստեղաղարդն էջ 'ի յերկնից , խրա-  
խոյս ազդեաց վերըստին :

Իսկ ձայն 'ի բարձր անդուստ Հեկտոր 'ի  
քաջալեր զայս գոչեաց ,

“ Տրոյեանք և դուքնիզակակիցք խմբեալք  
'ի տար աշխարհաց .

Դուք բարեկամք , արևք ո՛վ քաջք , ար-  
ձանացիք քաջաբար ,

Մինչև արագ ես յԵղիօնն 'ի կոյս հորդեմ  
Ճանապարհ .

Անդ ես հրաման մեր կանանւոյն տաց և  
ուշիմ ծերունեաց ,

Կանխել առ դիս և ուխտ դընել հարիւր-  
եզնեան նըւիրաց ։

Ասաց Հեկոոր ահեղագոուն , և 'ի յուզին  
իւր ճեպէր ,

Ճեպէր խաղայր , և վերջք ահեղ սաղա-  
ւարտին փողփողէր .

Հարոյր ըստէս զուլն քաջին , հարոյր  
ըզյաղթ գարշապար

Քեմուխտըն սեաւ , որ շուրջ պնդէր ըզ-  
կըմբաւորն իւր զասպար ։

Ի այց անդ Կլաւքոս Իսպողոքեան և քաջ-  
արին Դոմեդէս

Ընդ մէջ երկուց գան ճակատուց մենա-  
մարտիկ 'ի հանդէս .

Արձանացան քաջ ընդ քաջի , և այր խե-  
թայր ընդ ընկեր ,

Եւ առաջին Դիոմեդէս զայս կորովին  
հարցանէր .

« Դու պերճ և վեհ կանացածնաց , դու  
աւագ այր , ո՞ր իցես ,

Որ ոչ յառաջ 'ի մարտ շըքեղ երբէք տե-  
սի ես ըզքեզ ։

Արդ դիմագրաւ շահատակեալ մընաս 'ի  
մո՞ւմ նիզակին .

Անշուշտ հեգք են կանացածինք , որ ինձ  
ընդդէմ կըբրեցին :

Իսկ թէ դու աստ ոմն յանմահից իջեր  
յերկնից արփաւոր ,

Բա չեն ինձ կամք 'ի վէդ ընդ դից գալ ե-  
րամոյն երկնաւոր :

Ձի և Գրիւսեանն հուժկուն Լիկուրդ  
զարև չետես ընդ երկար ,

Որ անմահիցն երկնաւորաց ել դիցն ընդ-  
դէմ 'ի պայքար .

Այն որ զմուլոյն Գիոմիլիւսեայ ըզխումք  
վանեալ դայեկաց ,

Եւ հետամուտ նա ըզբարձամբք ձօնեալ  
Նիւսեայ հալածեաց :

Անդ ըզձօնիսն առ հասարակ արկին նո-  
քա 'ի գետին ,

Իմարդածախ Լիկուրդոսէն մօրակահար  
գան առին :

Իսկ ահաբեկ 'ի սպառնալեաց 'ի դող հա-  
րեալ Գիոմիլիս ,

Յալուց ծովուն էջ զօղեցաւ , 'ի ծոցն ըզ-  
նա առ թետիս :

Յասեան ապա ընդ Լիկուրդոս դիքն Ո-  
ղիւմպեանք հեշտակեաց ,

Եւ Ձըրուանեանն ըզվիրագին եհատ զա-  
րեն 'ի յաջաց 88 :

Նա շատ չեկեաց, ողջ ակրմբին լեալ ոխե-  
րիմ անմահից,  
Քա՛ւ, թէ ժրտիմ և ես 'ի վէգ երկնաւո-  
րաց գալ ընդ գից:  
Իսկ թէ մարդ ես, և ըզպտուղ երկրիս  
մերոյ ճաշակես,  
Մերձեաց առ իս, և յօրհասիդ 'ի կէան  
հասցես փութապէս ʔ:  
66) Դոմեդ արի, կրկնեաց Գլաւկոս, զն'  
դու զիմ ճեան հարցանես.  
Զինչ սաղարթուց բնաւորեցաւ ծընունդ  
մարդկան է նոյնպէս:  
Են սաղարթունք, զոր հողմաւար օդք  
թօթափեն 'ի գետին,  
Են և սաղարթք զոր դալարեալ բուսու-  
ցանէ մեզ մայրին.  
Յըցուին նոքա և բողբոջեն յեղանակել 'ի  
գարնան,  
Նոյն ազգ մարդկան են որ փրթթին են  
որ թափին չորանան 89:  
Իսկ թէ անշուշտ և զայդ իրաց լըսել կա-  
միս դու այժմիկ,  
Զազգ մեր քաջիկ ցանկաս գիտել, զոր և  
գիտեն շատ մարդիկ,  
Քաղաք Եփիւռ 90 է յԱրգոսին 'ի խոր  
սահման ձիաւէտ,  
Անդ Սիսիւփոս ծընաւ ուշիմն յոյժ 'ի  
մարդիկ խորագէտ:

Զարին Գլաւկոս ծընաւ որդի այս Սիսիւ-  
 փոս Եղիգեան ,  
 Գլաւկոս ծընաւ զայրն անարատ Բեւելե-  
 րոփոն զաննըման :  
 Գեղ հրաշատիպ տան սըմա դիք , և ձիրս  
 ոգւոյ փարեւիս 91 ,  
 Բայց գամագիւտ 'ի սա Պրետոս մենքե-  
 նայեաց ըզչարիս :  
 Վարեաց 'ի տար , զի Արգոսեանց էր սա  
 հուժկու 'ի քաջաց ,  
 Զորս Արամազդ նրկուն գործեալ ընդ  
 բռամբ քաջին նըւաճեաց :  
 Կին Պրետոսին էր Անտիա , սա շամբշե-  
 ցաւ չարաչար ,  
 Եւ սէր համբոյր Բելըրոփոնեայ տալ նա  
 խնդրէր գաղտաբար :  
 Երբ ողջախոհն Բեւելերոփոն ոչ շրջեցաւ  
 'ի մըտաց ,  
 Վաւաշն յայնժամ առ Պրետոսի բարուր  
 քաջին կըցկըցեաց :  
 Կամ դու Պրետէ մեռցիս , ասէր , կամ  
 Բելըրոփոն ըսպանցի ,  
 Զի փորձ փորձեաց դա մոլեգին խառնել  
 ընդ իս սէր բըռնի " :  
 Զայս ասաց կինն , և արքային ցասումն  
 յորդեաց բոցավառ ,  
 Ոչ մըխեաց ձեռն օրհասաբեր , զի կայր  
 քաջին նա պատկառ :

Յըդեաց 'ի Լիւկ, և ետ նրմա նըշանագիծս  
գուժաբեր 92,

Գըրեաց 'ի պնակ, բան պարուրեաց շատ  
ինչ նըմին մահաբեր .

Տալ աներոյն զայն պատուիրեաց, գու  
կենախուզ անմեղին .

Նա ել 'ի Լիւկ, այլ քաջ նրմա գիբն հո  
վանի ունէին :

Հատեալ զուղին Բելլերոփոն, երբ 'ի  
Քսանթոս հասանէր,

Արքայն Լիւկեայ շուք եդ նրմա և ժողո  
վեաց հիւրասէր .

Ինն օր պաշտեաց, և ինն յազեաց նա  
զըւարակս 'ի պաշտման,

Մինչ տասներորդ գայր 'ի յաշխարհ այդ  
վարդամատն յերևան :

Յայնժամ հարցեալ նրմա արքայն, խըն  
դիր առնէր պընակին,

Զոր 'ի գիմաց նա Պրետոսի եբեր իւրոյ  
փեսային :

Երբ մահագոյժ նըշանագծացն հաս փե  
սային 'ի վերայ,

Նախ Վարդասայն ըզբաղն ահեղ հա  
րուլ նրմա հրաման տայ .

Էր այս գազան զարմ' աստուածեան և  
չէր նա ճետ մարդկային 93,

Ի գլուխն առիւծ, վիշապ 'ի տուտն, և  
էր այծքաղ 'ի սորտին .

Շունչ փորատէր ցօրնունք հրեղէնք և  
բոց ահեղ բորբոքման ,

Նա հար ըզսա դիցըն հրաշից լեալ 'ի հա-  
ւատն ապաստան :

Իսկ մարտ երկրորդ նա կրօուեցաւ ընդ  
փառաշուք Սողիւմեանց 94 ,

Եւ զայս մարտ իւր ասէր նա գոռ ահե-  
ղազօր մարտ քաջաց :

Վանեաց երրորդ և զԱմազոնս , ազգ են  
նոքա այրանման 95 ,

Բայց 'ի դարձին նրմա արքայն հաղբ այլ  
նիւթեաց նենգութեան .

Եդ 'ի դարան նա 'ի Լիւկեանց զընտիր ըն-  
տիրս 'ի քաջաց ,

Սակայն ոչ ոք 'ի տուն կրկին դարձաւ 'ի  
յայնց կորովեաց .

Ողջ ըզնոսա Բելեբրոփոնս այս անարատ  
հար ըսպան ,

Ծանեաւ յայնժամ Պրետոս արքայն թէ  
նա է ճէտ աստուածեան :

Կալաւ առ իւր և տայր նրմա ըզգուստ-  
րըն իւր նաղելի ,

Նա և ըզկէսն ողջոյն շքոյն ձօնեաց նրմա  
զարքունի :

Բաշխ և Լիւկեանք հատին նրմա զանդ  
արգաւանդ աննրման

Յայդիս յուռթի , յարօր բերրի 'ի մըշա-  
կէլ անդաստան :

Ձաւակս երիս կինըն ծընաւ Բեւրոփո-  
նեայ քաջազին ,

Ջիսանդրիոս , զԻսպողոքոս , Լաւդա-  
միա ըզվէրջին :

Ընդ Լաւդամեայ չոքաւ անկաւ ամարո-  
պային Ջըրուանեան ,

Եւ Սարսեդոն ծընաւ նրմա այն քաջա-  
րին գիւցանման :

Բայց Բեւրոփոն յաչաց անկեալ գիցն  
համախումբ աղըմբին 96 ,

Եւ տարաամեալ յայս կոյս յայն կոյսէր  
նա ողջոյն թախծագին :

Գընայր մընջիկ և միայնիկ ընդ դաշտն  
Աղեան թափառէր ,

հաշէր ըզսիրտն , և 'ի հետոց 'ի մարդկանէ  
խուսափէր :

Ձիւրն Իսանդրոս յօրհաս մահու Արէս  
մատնեաց մոլէգին ,

Մինչ նա կըռուէր ընդ Սողեւմեանց ընդ  
հոյսեալ այն ազգին 97 :

Ձլաւդամիա ցասեալ խոցեաց մեծն ոս-  
կեսանձ Արտեմիս 98 .

Ձիս Իսպողքեայ ասեմ՝ զաւակ , զի այն ա-  
րին ծընաւ զիս :

Նա զիս յըլեաց 'ի Տրոյիա , և ինձ խրա-  
խոյս շատ կարգաց ,

Յանդ քաջութեամբ նահատակել , բնա-  
ւից լինել գերազանց .

Մի ինձ զազգն իմ գըձձէլ անշուք, մի  
արատել զիմ նախնիս,

Որ փառաւորք ՚ի Նիւկիա, և քաջք գըտան  
յԵփիւռիս :

Այս է ազգն իմ, այս իմ արիւն, յոր  
ես պանծամ մեծապէս » .

Նա զայս ասաց, լըւեալ ողջոյն խնդայր  
արին Դոմեդէս :

Ր զտէգն հարեալ ըզնիզակին վարսեաց  
յերկիր բուսաբեր,

Եւ մեծ հովուին բարբառ զայս ինչ աղու  
բանիւք արձակէր .

« Բա՛բէ, դու ինձ հիւր վաղընջուց, դու  
ես իմ հիւր հայրենին ,

Քոյն Բելրոփոն արին եղև հիւր իմ Ե-  
նեայ դիւցազին .

Ըզնա ՚ի տուն հիւրամեծար պաշտեաց  
աւուրս թիւ քըսան ,

Նորքա միմեանց տան պատարագ, հիւ-  
րոյթս և ձօն պատուական .

Ենոս կամար ձիր հոյակապ ձօնեաց յոր-  
դան ՚ի կարմիր .

Բեւբերոփոն ետ դաշխուրան կրկնակ ու  
կի քաջընտիր :

Ուղւոյ եղէ, և ՚ի տունն իմ թողի ես  
զայդ դաշխուրան ,

Այլ յիշատակ Տիւգէոսի հօրն իմ չառ-  
նեմ ես անգամ .

Նա եւ չոքաւ, թող զիս 'ի տան մանուկ  
տըղայ ըստընդիաց,

Երբ 'ի Թեբէ ըզզօրն Յունաց օրհասն 'ի  
մահ տարածեաց :

Քեզ արդ եմ ես 'ի մերն Արգոս հիւր-  
ըն կալու բարեկամ,

Եւ դու ես ինձ 'ի Լիւկիա, եթէ երբէք  
առ ձեզ գամ :

Արդ և 'ի մարտ յայտ տէգընկէց միմեանց  
կացցուք մէք սլատկառ .

Շատ ինձ Տրոյեանք շատ և նոցուն գոն  
աջակիցք քաջափառ .

Հարից որչափ ոտք հասանեն և որչափ  
ինչ տայ աստուած,

Հարցես և դու որչափ բաւես, շատք  
գոն և քեզ 'ի Յունաց :

Օ'ն արդ միմեանց փոխանակաւ տացուք  
մէք զէնս յանդիման,

Տեսցէ և զօրդ, եթէ սրանծամք մէք հիւր  
լինել հայրական :

Օ՛յս խօսեցան, և 'ի կառացն իջին ան-  
դէն 'ի գետին,

Աջ ետուն յաջ, և դաշնաւորք սլատչի-  
անխաբ կըռեցին :

Իսկ 'ի Ժամուն անդ Արամազդ վեհ  
Չրրուանեան խորազգեաց,

Չուշ և զուրուշ յայն տուրեւառ 'ի Գլաւ  
կոսէն առ եբարձ .

Որ զէնս ոսկիս եդ Դոմեդեայ զինուց  
փոխան սրղընձեաց,

Իբրու որ տայր հարիւրեզնեան ինուանց  
փոխան ընդ եզանց :

Բայց մեծն Հեկտոր մերձ առ կաղնին  
հասեալ 'ի դուրս 'ի յխակեան,

Դստերք Տրոյեանց և կանանին բակ ըզ-  
նովաւ խոնեցան .

Զորդուց , զեղբարց , ըզբնակասուն բա-  
րեկամաց տոհմային

հարցփորձք անձկով և զփեսայից հե-  
տաքընինք լինէին :

Նա դաս կապել դից հրամայէր հայ-  
ցուած կարգել ջերմաբար ,

Իբրու շատից առ դուրս հասեալ կայր  
գերարտօսը և աշխար :

Հաս նա եմուտ 'ի Պրիամուն 'ի հրա-  
շակերտն 'ի սլալատ ,

Յարկ հոյակապ , ուր գեղաշէն դահլիճք  
պայծառք կան 'ի զատ :

Էին յիսուն անդ առագաստք և սրսկա-  
պանք գեղապանծ ,

Կարգ մի առ մի 'ի սրբատաշ գեղեցկա-  
շէնք 'ի քարանց .

Յայն սրսկապանս հոյք զաւակաց Դար-  
դանոսեան Պրիամուն ,

Ելեալք շքով ընդ պարկեշտից հարսնա-  
ցելոց կան 'ի քուն :

- Իսկ հանդիպոյ 'ի նոյն սարաս 'ի ներքս  
'ի խոր 'ի գաւթի ,  
Երկոտասան թիւ առագաստք կան դըս-  
տերացն 'ի կարգի .
- Պըշսակք բարձունք առագաստիցն 'ի  
սրբափայլ 'ի քարանց ,  
Եւ կառուցեալք գեղայօրէն կան առ ըն-  
թեր իրերաց :
- Անդ մըտանեն Պրիամոսին փեսայք հա-  
րուստք արքային ,  
Մըտեալք շքքով առ ծընգասէր հար-  
սունա իւրեանց ժողովին :
- Ըստ մայրն անոյշ մեծն Հեկտորայ նը-  
մա 'նդ առաջ ելանէ ,  
Որ առ չքնաղն 'ի դստերաց նազէր գը-  
նայր Լաւդիկէ :
- Առ զաջ որդւոյն և յանուանէն կար-  
դաց ըզնա և ասէր ,  
« Աւինչ , որդեակ , թողեալ ըզխազմ  
աստէն ճեպով դու հասեր .
- Ո՛հ , դառնարմատ որդիքդ Յունաց մարտ  
յարդարեն քաղաքիդ ,  
'Նեղեն պնդեն և աստ ըզքեզ ած կրօ-  
նասէր քո ոգիդ .
- Ձի դու սրաշտեալ ձեռս ամբարձցես  
Արամազդայ յայս դըղեակ ,  
Այլ կանց , որդեակ , քեզ մեղրահամ գի-  
նի բերեմ անուշակ .

Զայն դու նախ հօր Արամազդայ և ան-  
 մահից տուր 'ի ձօն ,  
 Արբցես և դու , և կորովի հարցես մար-  
 տիդ ըզպաշտօն .  
 Յոգնեալ մարդոյն անոյշ գինին նորէ  
 զաշխոյժս 'ի յոգիս ,  
 Որպէս և դու շատ յոգնեցար անխոնջ  
 յեղբարցն 'ի կարիս ) :  
 66) Գինի յարբումն , անգէն Հեկտորն ա-  
 հեղագոռ ետ բարբառ ,  
 Գինի յարբումն ինձ մեղրահամ , մայր նա-  
 զելի , ինձ մի տար .  
 Մի զիս թօշներ , և իմ ոգւոյս կորովս և  
 ոյժ ծըմրեսցի 99 ,  
 Իսկ ձօն Գիայ յանլըւայ ձեռս չքտամ  
 հրաշէկ ես գինի .  
 Ամպրոտայնոյն Արամազդայ , քաւ չէ  
 արժան և վայել  
 Արիւնաներկ և ապաժոյժ ձեռօք նըւերս  
 ընծայել :  
 Այլ դու , մայր իմ , երթ 'ի տաճար աւար-  
 ածուին Աթենայ ,  
 Առ բովիճայս և զարգոյից դաս բամբը-  
 շաց անդ խմբեա :  
 Շղաշատեռ մեծ լայնածիր յոյժ շնոր-  
 հաշուք յարուեստի ,  
 Քան որ 'ի տանն իցեն ողջոյն քոյին  
 սրտին փարելի ,

Ա՛ռ դի՛ր զծընգովք Աթենասայ վարսա  
գեղոյն, հաշտարար,

Եւ ուխտ դիցես զո՛հ զըւարակս յազել  
նորայն 'ի տաճար .

Զո՛հ, տարևոր տրմուղ կրմուղ զըւարա-  
կաց երկտասան,

Զընգալ յոստանն, 'ի կանանին և 'ի մանկ-  
տին բազմերամ :

Նա գու՛թ ածեալ ըզ՛Ռոմեդէս յԵղի՛ո-  
նէն վանեսցէ,

Ըզխօլ վերագն և ահընկէց յանվանելին  
'ի բազկէ :

Ար՛ի մայր իմ, յաւարածուին դու Աթե-  
նայ 'ի մեհեան,

Ես առ Պարիս գընամ հրաւէր նըմա  
կարգալ քաջութեան .

Արդեօք զմբրեայլն լըրջասցի՛ լըսել ձայ-  
նիս հեշտաբար,

Այլ Օ՛շ, այժմէն սուղել ըզգա հող սա-  
տառէր լայնատարր :

Ըզգա, աւա՛ղ, սընոյց Ռիոս մեզ գան  
հարուած դառնաղէտ,

Զազգ մեր ջնջել և մեծ զարքայն և ըզ-  
զաւակս և ըզճետ :

Այլ թէ տեսից, զի դա 'ի խոր թափի դը-  
ժոխոց իջանէ,

Սիրտ իմ անշուշտ այլ խոր յոգւոց հա-  
ռաչ թառաչ ոչ հանցէ ր :

Լսաց, և մայրն եմուտ 'ի յարկն, հրա-  
 ման ձայնէր աղախնեայց,  
 Ընդ շահաստանն վազեալ նոքա, հրաւէր  
 կարգան տիրուհեաց:  
 Իսկ ինք չոգաւ բազմաբուրեան 'ի յա-  
 ռադաստրն պայծառ,  
 Ուր ճամկաւոր կային գործածք Սիդով-  
 նուհեաց տեռք և շար.  
 Պարիս ըզխումբ զայս կանանւոյն ած 'ի  
 ծագաց Սիդովնէ 100,  
 Երբ ծովագնաց ըզհօրամոյնն առւան-  
 գեաց հեղինէ:  
 Շարիցն ըզմին ձօն Աթենայ 'ի ձեռն ա-  
 ռեալ հեկաբէ,  
 Շար լայնածիր և հրաշագործ, շար  
 երփնագեղ 'ի զարդուէ.  
 Ճաճանչ աստեղ շարն հատանէր, կայր  
 անդ շքքով ամփոփեալ.  
 Առ զայն գընայր, գնային ըզհետ և շատ  
 տիկնայք քաջնափայլ:  
 Երբ յԱթենայն բարձր 'ի դղեակն հա-  
 սին նոքա 'ի տաճար,  
 Ըզդուրսն եբաց գուստրըն Վիսեայ Թէ-  
 ան գեղայտն այն կայտառ.  
 Սա լըծակից էր քաջարւոյն Անդենորայ  
 ասպետին,  
 Եւ քրմանոյչ Աթենասայ Տրոյեանք ըզ-  
 սա կարգեցին:

Ձեռս յԱթենաս բարձին տիկնայք կող-  
կողագին 'ի ձայնէ,

Իսկ գեղեցկայտն ըզլարն ազնիւ առ 'ի  
ձեռին Թէանէ .

Աթենասայ վարսագեղոյն եդ զայն ծըն-  
գացն 'ի վերայ,

Յողոք անկաւ բազմասպաղատ Կուսին մե-  
ծի Որմըզայ .

« Դու Աթենաս քաղաքապահ , դու իս-  
կուհի գիցուհեաց ,

Դու Դոմեդեայ ըզնիզակին տէգ սայ-  
րասուր հար փշրեաց .

Ըզգա յորսայս արկ գիտապաստ հան-  
դէպ դըրաց մեր Իսկեան ,

Մէք փոյթ յազեմք զոհ տաճարիդ զը-  
լարակաց երկտասան ,

Տրմուղ կրմուղ տարևորաց 'ի յանդէոց  
զոհ չքնաղ .

Խնայեա 'ի շէնն , 'ի կանանին և 'ի մանկ-  
տին մեր մատաղ » :

Ձայս և տիկնայք ընդ Թէանայ , Կուսին  
մեծի մաղթէին 101 ,

Սակայն ձայնին աղօթկերաց անլուր գը-  
տաւ Դիցուհին :

Բայց մեծն Հեկտոր 'ի Պարիսին երթ  
յապարանս գեղապանծ ,

Ձոր նա անձին հրաշակերտեաց , ըզ-  
խումք առեալ ճարտարաց .

Ճարտարապետք յայնժամ մարթունք 'ի  
 Տրոյացւոց աշխարհին ,  
 Տուն և դաւիթ և առագաստ չքնաղա-  
 կերտ կանգնեցին ,  
 Մերձ Պրիամուն բարձր 'ի դղեակն և  
 դարսպսին Հեկտորայ .  
 Անդ եկն եմուտ դիւցազն Հեկտոր , էր  
 'ի ձեռին յաղթ աշտեայ .  
 Կանգուն աշտէն էր մետասան , ճա-  
 ճանչ 'ի ծայրն արձակէր  
 Սայր սրղընձոյն , և սուրբ յոսկւոյ օղա-  
 մանեակ զայն պատէր :  
 Յառագաստին գիտ ըզՊարիս , ուր զէնս  
 չքնաղ սուրբ և ջինջ ,  
 Զասպար , զըրահ և զաղեղունս իւր  
 յարդարէր լայնալիճ :  
 Ընդ նաժըշտաց նստեալ շքով անդ ար-  
 գուհին Հեղինէ ,  
 Գործ ձեռագործ իւր աղախնեայց նա  
 գեղեցիկ ճարտարէ :  
 Լայն ինչ Հեկտոր տես ըզՊարիս , գառըն  
 բանիւք կշտամբեաց .  
 « Այդպէս ցասմամբ քեզ քինանալ չէր  
 պարտ , ասէր , քեզ ո՛վ քաջ :  
 Ահա ըզբարձր ըզպատուարօք և շուրջ  
 ըզմեր քաղաքաւ  
 Շըշուկ ծըփայ արենայեղց , խուժան  
 տապաստ կայ ամբաւ .

Ի քո պատճառս զայս մեր ոստան մարտ  
բոցավառ բորբոքեաց ,

Դու իսկ սրտնեալ յայր ձեռքնթափ բան  
պարսէիր լուտանաց .

Քաջ ցանուիր տեսեալ յահեղ զոք  
վերջոտնեալ 'ի մարտէն ,

Արի , զի՞ կաս , ահա զոստանն բոցք հեւ  
լենաց լափլիզէն ” :

**Չայն կից նըմին կրկնեաց անդէն Աղէք-**  
**սանդրոս գեղաբուն**

“ Քաջ են , հեկոոր , քաջ կշտամբանքդ  
և բան պարսես իմաստուն :

Ահա զիրաւն ասեմ քաջիդ , և դու լեր  
ինձ լըսելի ,

Բա՛ ես Տրոյեանց չեմ ցասուցեալ , չեմ  
քինացեալ 'ի սրտի .

Այլ ես իմոյն դիւրեմ վշտի աստ յա-  
ռագատտ իմ պայծառ ,

Ուր և արդէն հարսն իմ 'ի մարտ զիս  
խրախուսեաց աղուաբար .

Խրախոյս բարի , որ այս և ինձ խորհուրդ  
քաջիկ երևի ,

Զի յաղթուածին մարտին քաջաց կարգ  
ըստ կարգէ փոփոխի .

Բայց աղէ դու վայր մի անաս , զէն զարդ  
անձին արկանեմ ,

Կամ արի դու , և ես ըզհետ գամ մեծա-  
քայլ ժամանեմ ” :

Լսաց Պարիս, այլ մեծն Հեկտոր ասէ,  
 զագոռ կաց լըռին,  
 Անդուստ աղու ձայն Հեղինէ զայս ար-  
 ձակէր նազելին:  
 «Բա՛բէ, որ տագր ըզքեզ ունիմ ես չար-  
 արուեստ լրբենիս .  
 Ո՛վ, թէ անդէն յորժամ մայրն իմ ձեզ  
 արհաւիրք ծընաւ զիս,  
 Այս դիւաշունչ զիս մըրըրկեալ բախէր  
 ընդ ժայռս, ընդ լերինս,  
 Կամ թէ առեալ ՚ի բազմագոչ ծովուն ա-  
 մայր զիս յալիս .  
 Անդ ՚ի յալուցըս անդնդոց ժողովէին զիս  
 կոհակք,  
 Մինչ չև չարին դիպեալ ժամուն այս մեր  
 բանին նըշաւակ:  
 Այլ զի այսպէս գիքն ՚ի վերուստ զա-  
 ղէտ մեր զայս կարգեցին,  
 Գէթ առն ուրուք լաւագունի եղեալ էր  
 իմ ամուսին .  
 Որ լուտանաց և ձաղանաց նա ակն ածցէ  
 յատենի .  
 Բայց արդ դորա չիք ուշ, չիք խեղք, և ոչ  
 յասպայս ինչ կալցի .  
 Դա և վասն այն, թէ ոչ խաբիմ, հանդի-  
 պեսցի տուգանաց,  
 Բայց դու, տագր իմ, արի եկ մօտ և  
 յայդ աթող անց բազմեաց:

Ըզքեզ ո՛վ քաջ, վաստակաբեկ երկունք  
քրտանց պատեցին,

Վասն իմ այսգոյն նըշաւակիս, և վասն  
յանցման Պարիսին:

Ո՛հ, չարաբաստ զայս Արամազդ ժա  
ռանգեցոյց մեզ վիճակ,

Զի և յասպայս մեք ծընելոցն յերգ կար  
գեսցուք և յառակ ʞ:

Նրաւէր քո զայդ, անդէն Հեկտորն  
ահեղագոռ ձայն կրկնէ,

Հրաւէր սիրոյ չառնում արդ յանձն, ո՛վ  
նազելիդ Հեղինէ.

Քա՛ւ ինձ աթոռ, Տրոյեանց օգնել ոգիս  
դրդէ զիս ուժգին,

Բացականիս ակնկալեալ անձուկ նոքա  
յոյժ ունին:

Այլ ձայն և դու կարդա դրմա, տացէ նա  
ճեպ իւր ոտին,

Ժաման լիցի մինչ դեռ աստէն ՚ի քաղա  
քիս գեգերիմ:

Զի գերդաստան զիմ տեսանել ՚ի տուն  
փոռթամ ես այժմիկ,

Տեսից ըզհարսն իմ փարելի, տեսից զոր  
դեակն իմ մանկիկ:

Զի ո՛ գիտէ, գիրկ տալ դոցա դարձայց  
արդեօք ես կրկին,

Աւա՛ղ, թերևս աստուածք սահման իմոյն  
ետուն օրհասին.

Անկայց տապաստ 'ի բուռն Յուանաց ես  
'ի մարտին 'ի հանդէս » .

Չայս մեծն Հեկտոր ասաց 'ի նոյն ուղւոյ  
լինէր փութապէս :

Եհաս 'ի տունն իւր գեղեցիկ 'ի ճեպ  
ոտին իւր արագ ,

Խնդրեաց , չեգիտ 'ի տաճարին լուսա-  
ծրղին զԱնդրոմաք .

Նա ըզմանկիկն առեալ ընդ իւր ընդ տե-  
ռազարդ նաժըշտին ,

Չոքաւ կոծէր աղիողորմ 'ի բուրգն ե-  
լեալ քաղաքին :

Իբրև 'ի տան չեգիտ Հեկտոր զիւրն ա-  
մուսին ծընդասէր ,

Եկաց առ սեամն , և աղախնեայց զայս  
ինչ պնդով հարցանէր .

« Ինձ դուք զիրաւն արագ արագ ինձ սրտ  
մեցէք , աղախնեայք ,

Ի մեր տանէն լուսածրղին ուր արդ չո-  
քաւ Անդրոմաք .

Արդեօք առ տաճս և կամ առ ոք 'ի քօ-  
ղազարդ ընտանեաց ,

Կամ յԱթենայ չոքաւ տաճարն , ուր կան  
և այլքն 'ի տիկնայց ,

Կան ողոքէն ըզվարսագեղն ըզմեծն ա-  
հեղ Դիցուհին » .

Ասաց , բարբառ անդէն ետ կինն հաղա-  
րապետ տաճարին .

« Քանզի սնդես դու ո՛վ Հեկտոր, զի  
րաւն ասել քեզ զարդիս,

Նա ոչ առ տալս ել 'ի տանէս, ոչ քօղա  
զարդն յընտանիս .

Ոչ յԱթենայն չոքաւ տաճարն, ուր կան  
և այլքն 'ի տիկնայց,

Կան և 'ի հաշտ ըզվարսագեղն ածեն զա  
հեղըն զաստուած .

Այլ 'ի բարձուն Եղիոնին դիմեաց ել  
նա 'ի դղեակ,

Գոյժ առ եթէ հարան Տրոյեանք, և  
Յոյնք յարեան նահատակ .

Խուճապեցաւ որպէս բախած հանդէպ  
վազեաց 'ի պատուար,

Դայեակն ըզհետ աճապարեալ բարձ ըզ  
տըղայն և դընայր » :

Պատմեաց զայս կինն հազարապետ, հեկ  
տոր վազեաց 'ի տանէն,

Կրկին զուղին զայն հատանէր ընդ սո  
ղոտայս բարեշէն .

Արագավազ ընդ մեծ ոստանն հաս նա 'ի  
դուրս 'ի յԻսկեան,

Ընդ այս ընդ դուրս ելք յոստանէն և  
բանակին յանդիման :

Եստ ընդ առաջ վազեաց նորա բազմա  
հարուստն ամուսին,

Անդրոմաքէ Ետիովնեայ դուստըր քաջի  
նազեղին .

Էր բնակաւոր այս Ետովնէս 'ի յանտա-  
ռուտն Իստպղաք,

Եւ 'ի Թեբէ Իստպղաքեան նա Կիլի-  
կեանց կապեաց Թագ .

Սա զօրիորդն իւր հոյակապ ետ քաջա-  
ղին հեկտորայ ,

Որ անդ նրմա ընդ առաջեաց , նաժիշտն  
ըզհետ գայր նորա .

Զառոյգ մանկիկն առեալ նաժիշտ գը-  
գուէր 'ի գիրկն և բերէր ,

Սա միաժինն էր հեկտորայ , աստեղ նը-  
ման ճաճանչէր .

Հայր իւր հեկտոր , Իսկամանդրոս ա-  
նուն կարդայր այս մանկան .

Այլք Աստիւնաք , զի մին հեկտոր կայր  
Տրոյացւոց ախոյեան 102 .

Յակն ըզմանկիկն արկեալ հեկտոր , լուռ  
և հեզիկ ժպտեցաւ ,

Անդրոմաքէ մատեաւ առ այրն արտօսը  
հեղոյր նա ամբաւ :

Սալաւ զաջոյն , բարբառեցաւ , կարդաց  
ըզնա յանուանէ .

“ Այդ գոռութիւնդ , ասէր , ո՛վ քաջ ,  
անշուշտ ըզքեզ եղծանէ .

Գու քո մանկան դեռաբուսիկ ո՞չ լինի-  
ցիս աղէխարչ ,

Եւ ինձ 'ի քէն այրացելոյս , որ վաղ ա-  
ծայց առ 'ի քարչ :

Ի քեզ հեղինք հրոսեալք ողջոյն զարևն  
 հատցեն քո փուլթով,  
 Իսկ 'ի մահուդ շատ լաւ է ինձ ծածկիլ  
 անհետ ընդ հողով:

Զի թէ այսօր դու դիտապաստ իմ տա-  
 րածիս յանդիման,  
 Ինձ յոյս ինձ կեանք զինչ այլ ուստեք,  
 բայց թէ աղէտ անվախճան:

Ո՛հ, չեք իմ հայր, ոչ աղեկէզ մայր փա-  
 րելի ունիմ ես,  
 Քանզի ըզհայրն իմ դիտապաստ դիւցազն  
 արկաւ Աքիլէս.

Նա մարդաշատն ըզՎիլիկեանց զոստան  
 եհար աւարեաց,  
 Ըզբարձրադուռն ասեմ թեբէ. զԵտովն  
 'ի մահ տարածեաց.

Չեբարձ ըզզէնս, կրօնից սլատկառ կա-  
 ցեալ քաջն այն և առոյգ,  
 Այլ հրաշակերտ զինուքն հանդերձ ամ-  
 բարձ ըզնա 'ի խարոյկ.

Ետ և դամբան, ուր Որետտեան յաւեր  
 ժականն այն հարսուիք

Առեալ կնճիս շուրջ անկեցին վեհին  
 Դիայ աղջրկունք 103:

Եօթն թըւով դաս մի եղբարց ինձ գե-  
 ղապար կայր 'ի տան,  
 Օր մի նոքա իջին համուռ առ դըժոխոց  
 Բարասլան.

Ողջ ըզնոսա արկ դիտապաստ քաջն Ա  
քիլլէս դիւցաղգեաց ,

Կճղակահէրձ 'ի մէջ անդւոց և լուսա-  
կիզըն օդեաց :

Իսկ ըզմայրն իմ թագապրսակ յանտա-  
ռախիտն Իպոպղաք ,

Աստ քաջն ըզնա վարեաց գոյիւքն իբրև  
գերի անաւագ :

Եթող ազատ , և 'ի փրկանս էառ ամբաւ  
կարասիս .

Ո՛հ , հար ըզնա 'ի հօրն 'ի վանս աղեղ-  
նասէրն Արտեմիս :

Ձարդիս , հեկտոր , դու ես ինձ հայր ,  
դու ինձ և մայր խնկելի .

Դու ինձ եղբայր , դու քաջառոյգ ինձ  
ամուսին փարելի :

Յիս տէր , ո՛վ քաջ , աստ դադարեաց  
յայս աշտարակ դըղէկին ,

Մի ըզմանկիկն որբ թողուցուս , մի և այ-  
րի զամուսին :

Ա՛ռ դու և մօտ ժանտ թըզենւոյդ կացո  
զօրուդ ըզճամբար ,

Ուր քաղաքս է դիւրամատոյց , ուր դիւր-  
առիկ և պատուար .

Ընդ այս երիցս հրոսակ դըռոյթ քաջքըն  
տըւեալ փորձեցին ,

Այասք , Ատրիդք և Իդոմէն և Դոմեդէս  
կորովին .

Չայս բան թերևս ազգեաց նոցա կամ  
 իղձ ներհուն ոք գուշակ ,

Կամ ինքնաշարժք խրախուսեցին ան  
 դուստ յառնել նահատակ ։

Եւ զիս , ով կին , ասէր Հեկտոր , հոգ  
 այդ իրաց տագնասէ ,

Բայց զիս քաջաց Տրովադացւոց ամօթ  
 սաստիկ սլաշարէ .

Շատ ինչ քրքիջ հարցեն 'ի յիս և կանա  
 նին տեռապանծ ,

Թէ 'ի բացեայ ես 'ի մարտէն խուսեմ  
 իբրև վատ արանց .

Սիրտ իմ ինձ զայս ոչ հրամայէ , ցանդ  
 ես ուսայ գոլ արի ,

Եւ նահատակ 'ի մէջ Տրոյեանց դիմա  
 գրաւել 'ի մարտի .

Շուք զիմոյ հօրն ողջիկ սլահել , և զիմ  
 դարձեալ շուք փառաց ,

Ձի եմ իսկ քաջ ահահ բանին յուշ իմ  
 կապեալ անմոռաց .

Օր եկեսցէ , հարցի արդոյդ այդ Եղևոն  
 հիմնովին ,

Նոյն և Պրիամն իմ քաջատէգ , և գուեղ  
 նորայն խուժանին .

Այլ ոչ այնչափ Տրոյեան ազգիս վիշտ  
 մտալուռն ինձ ցաւէ ,

Ոչ Պրիամուն վիշտ արքային , և ոչ մօրն  
 իմ Հեկաբէ .

Ոչ իմ եղբարցն, որք բազմաթիւք և արք  
հարուստք բարեբաստ,

Թաւալադէոր 'ի Թշնամեաց 'ի սուր անկ-  
ցին դիտապաստ,

Որչափ քո ցաւն . երբ քաջազէն որ 'ի  
Յունաց բանակէն

Ըզքեզ լալեօք քարշեալ, բառնայ զա-  
զատութեան օրն 'ի քէն .

Գնացեալ յԱրդոս, դու անդ յայլմէ  
գործ հրամայիս յոստայնին,

Եւ ջուր բերցես 'ի յազբերէն Մեսսեայ  
և կամ յԻւսպերին 104 .

Դու Թախանձեալ մորմոքեսցիս, այլ  
զանհրաժեշտ հարկ լընուս,

Եւ անդ ըզքեզ որ 'ի զընին տեսցէ հա-  
րեալ յարտասուս .

Դա, ասասցէ, դա այդ է կին նահատա-  
կին Հեկտորի,

Յորժամ Տրոյեանք զԵղիոմնիւ քաջք գո-  
ւային 'ի մարտի .

Չայս ասասցէ . իսկ նազեւոյդ ցաւք  
աղեկէզք յորդեսցեն ,

Յողոց հանցես առ այր փրկիչ ծա-  
ւայութեան 'ի յօրէն :

Այլ ո՛չ, կանուխ ես ծածկեցայց հողա-  
պատեան 'ի դամբան ,

Մինչ չև ըզքո լըւեալ գերւոյդ ըզքեր-  
արտօսը և կական :

**Օ** այս հրաշակերտն ասաց Հեկտոր,  
 խանդաղատեալ յամուսին,  
 Եւ ձեռք կարկառ իւրում մանկան, բա-  
 ցեալ ըզգիրկն հայրենին :  
 Ի հօրն յահեղ կերպարանէն տըղայն փա-  
 փուկ սոսկացաւ,  
 Եւ ճիչ բարձեալ նա դայեկին 'ի գոգն  
 ողջոյն ծածկեցաւ :  
**Ա**հ արկ մանկան զէն հօրն և զարդ,  
 վերջք գիսապանծք երփնահար,  
 Յըցունք ահեղ տատանէին սաղաւարաին  
 'ի կատար :  
 Ժպտեցաւ հայրն, և Ժպտեցաւ 'ի նոյն  
 և մայր իւր արգոյն,  
 Անդէն Հեկտոր բարձ նահատակն ըզսա-  
 ղաւարտն 'ի գլխոյն :  
 Փայլակնացայտ նա ճաճանչէր, եդ զայն  
 խոնարհ 'ի գետին,  
 Համբոյր որդւոյն ետ, և առեալ գըգուէր  
 թալթալ 'ի ձեռին :  
 Դարձաւ ասպա մաղթեաց Դիայ, մաղ-  
 թէր և դից բարեփառ .  
 «Տ՛ուր Արամազդ, և դուք անմահք տուք  
 զայս մանկիկն իմ կայտառ,  
 Լիցի և սա, որպէս և ես, փառք Տրոյա-  
 ցւոց շուք ազգի,  
 Եղիննին արքայասցի քաջարութեամբ  
 կորովի .

Կա և յապայս ոք յակն արկեալ ըզսա  
դառնալ 'ի մարտէ ,

Դա արդարև քան ըզհայր իւր դա շատ  
քաջ է , ասասցէ :

Տապաստ արկեալ , սա զարիւնոտ կա  
պուտ զիւրոյ վիրագին

Առեալ բերցէ , և զայն տեսեալ մայրն  
հըրճուեսցի 'ի սրտին " :

Ասաց հեկտոր , և առ զորդին 'ի գիր-  
կրս մօրն աւանդեաց .

Մայրն ժպտեալ արտասուախառն 'ի  
ծոց բուրեան ամփոփեաց :

Հեկտոր յայնժամ ակնակառոյց յիւրն  
ամուսին գորովէր ,

Եւ քնքրչեալ ըզնա ձեռամբ , կարդաց  
զանուան և ասէր .

« Մի նազելիդ , մի յոյժ վասն իմ տան-  
ջեր զոգիդ փարելի ,

Չիք ոք որ զիս նախ քան զօրհասն 'ի տուն  
ճեպէ խաւարի .

Մարդ ոչ բաւէ երբէք խուսել , երբ օր-  
հասին գայ հանդէս ,

Ոչ վատ արանց , ոչ քաջ արանց , յորմէ  
հետէ լոյս ետես :

Դարձիր 'ի տուն , պարապեցո անդ զա-  
ղախնեայցդ երախան ,

Եւ դու նստեալ տնւր ըզմատուճա 'ի յա-  
ղեկատ և յոստայն :

Մարտից գոռմանց թող արք 'ի բուն  
 ըսպաս հարցեն և սղաշուն ,  
 Եւ ես յաւէտ քան որչափ մարդ ծընու  
 երբէք յԵղիոն » :

Ըսաց և առ ըզսաղաւարոն . իսկ Ան  
 դրոմաք տրտմազգեաց

Գառնայր 'ի տուն , գառնայր հայէր , և  
 ջերմ հեղոյր յարտասուաց :

Եհաս արագ 'ի հրաշակերտ 'ի տուն մե  
 ծին հեկտորի ,

Եւ զաղախնեայցն ըզբազմութիւն եգիտ  
 խմբեալ 'ի յարկի .

Ջայլ և կական բազմահառաչ զարթոյց  
 նոցա ցաւազին ,

Նստեալք 'ի տան լային զԵկտոր ըզտա  
 կաւին կենդանին :

Ոչ ասէին գառնալ քաջին ողջամբ 'ի  
 տուն 'ի մարտէ ,

Ոչ անձնապուր յԱքայեցւոց յանվանե  
 լին 'ի բազկէ 105 :

Բայց և Պարիս ճեպ տայր 'ի տանն , և  
 զէն հրաշէկ պրղընձեաց

Արկեալ զանձամբ , վազէր յոստանն ո  
 տիւք ճախրեալ ճեպրնթաց .

Որպէս յորժամ ասպաստանիկն յազթ  
 գարեբոյժ 'ի մարէ

Սոս երիվար կապակոտոր սրացեալ 'ի  
 դաշտ ելանէ .

Գափր հատանէ, լուանալ անձկայ 'ի  
 գեղահոս ջուր գետոյն,  
 Եւ գեղապանձ ճախրէ խայտայ, բաշք  
 ծածանեալք զուսն հարուն.

Սէգ ըզգըլուին առեալ 'ի վեր, և  
 ծունկքն հարուստք անարգել  
 Թռուցեալք ըզնա յարօտ ձիոց, ածեն  
 հովիան յիւր ընդել <sup>106</sup>,

Հանգոյն Պարիս Պրիամոսեանն 'ի Պեր-  
 գամեան 'ի բարձանց,  
 Զինուց ճաճանչ հատեալ, խաղայր իր-  
 րու արփի լուսազգեաց.

Խաղայր խնդայր, և ընդ ոստանն 'ի ճեւ  
 ոտին խոյանայր,  
 Եւ առ հեկտոր հաս ետ ընդ ետ առ  
 հոյակապն իւր եղբայր.

Այն ինչ մեկնէր նա 'ի վայրէն, ուր ընդ  
 կրնոջն ըզկայ առ,  
 Անդէն Պարիս դիւցանլումն զայս քաջա-  
 զին ետ բարբառ:

“Արդեօք յամելս, ո՛վ իմ արգոյդ, եղև  
 փուլթոյդ ինչ խափան,  
 Չեկի թերևս 'ի կէտ ժամուն զոր դու  
 եգիր ինձ սահման” :

“Եւր ուղղատես, անդէն հեկտորն ա-  
 հեղազօր ձայն կրկնեաց,  
 Երբէք ըզքեզ յարհեստ զինուց իրր ա-  
 նաւագ ոչ գրձձեաց:

- Անսա, ո՛վ քաջ, բա կորովեաց անցեալ  
խակ է քո 'ի սլար ,
- Այլ միջամուխ գոլ 'ի նախճիրս դու  
յուլանաս կամակար :
- Ցաւէ սրտիս, յորժամ լուտանս 'ի Տրոյա  
ցւոց լսեմ ես ,
- Զոր քեզ պարսէն , և որք քո սակս ընդ  
քիրան հարուն սաստկապէս :
- Այլ ո՛ն գնասցուք , և զայդ բաներդ  
յայլ պահեսցուք ժամանակ ,
- Թէ մեզ ձօնել տայ Արամազդ 'ի մեր 'ի  
վանս ըզբաժակ .
- Բաժակ ասեմ ըզփրկութեան, դիցն յա  
ւերժից յերախան ,
- Ի Տրոյիոյ վանեալ զսօլաց Ա. քայեցւոցն  
ըզխուժան " :



# ԵՂՒՆԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Է .

## ՆԱԽԱԴՐ ՈՒԹԻՒՆ

Հեկտոր և Պարիս դարձ արարեալ 'ի բանակն , վանեն զՅոյնս : Եղենոս խորհուրդ տայ Հեկտորի ասպարէզ մենամարտի կարգալ Յունաց : Յոյնք զառաջինն զահի հարեալք , ասպա կշտամբեալք 'ի Նեստորէ , յառնեն ինն ախոյեանք 'ի մենամարտ : Վիճակընկէցութիւնն տայ Այասայ 'ի մենամարտիլ ընդ Հեկտորի : Նկարագրութիւն սքանչելի մենամարտին : Ախոյեանք 'ի գալ գիշերի բաժանին 'ի միմեանց : Ատեան աղմկալից Տրոյացւոց : Անտենոր խորհուրդ տայ դարձուցանել առ Յոյնս զՀեղինէ . ընդդէմ դառնայ Պարիս : Քարոզն Իդոս 'ի Տրոյացւոց գայ առ Յոյնս խնդրել զինադադարումն 'ի թաղել զմեռեալս : Նկարագրութի գիահանացն : Յոյնք ըստ խորհրդոյն Նեստորի սրտուար կանգնեն և փոս հասանեն յամբութիւն անձանց և բանակին : Նստին 'ի հացկերոյթ : Զայն գիշեր Արամազդ ասաբեկէ զՅոյնս յորոտս և 'ի ձախողակ ազդմունս :

Հագներգութիւնս ունի զաւուրս զերիս և զկէս :

Տեսարան մարտին է դարձեալ 'ի Տրոյական գաշախի :



# ԵՂՒԼԿԱՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Է .

ԼՍԱՅ Հեկտոր, սրացաւ 'ի դուրս, խաղայր 'ի նոյն և Պարիս .

Մարտ գոռութեան բորբոքեցաւ քաջ ամուլիցն 'ի յողիս :

Որպէս 'ի ծով վաստակաբեկ նաւաղ մարդկանն անձկայրեաց

Սիւգ յաջողակ անդ հուսկ ուրեմն յըլէ աստուած 'ի ծագաց ,

Յորժամ քաշտեօք զծով ալէտանջ հատեալ նոքա յողնեցան ,

Եւ քրանահար արդէն նոցա քաջ քաջ անդամքն հաշեցան ,

Ի նոյն տիպար գալուստ 'ի զօրն այս ա-  
մոլից քաջազանց,

Անձկայրեցիցըն Տրոյացւոց կենդանա-  
րար սիւգ փրչեաց :

Յառաջ Պարիս ըզքաջորդին զԱրեթո-  
սեայ արքային ,

ԸզՄենեսթոս զԱռնէացին արկ դիտա-  
պաստ 'ի գետին :

Ծընող քաջին էր Մենեսթեայ Արի-  
թոոս լախտաւոր ,

Եւ մայր նորա Փիլմեդուսա աչեղ տիկին  
փառաւոր :

Անդ և Հեկտոր տէգ սուր շեշտեաց ընդ  
պարանոց Ենոնին ,

Հար ընդ պըղինձ գլխանոցաւն և արկ տա-  
պաստ 'ի գաշտին :

Նոյն և Գլաւկոս Իպպողոբեան Աիւկեանց  
իշխան մեծաշուք .

ԶՍփինոոս Դեքսեանն 'ի տէգ հար 'ի  
մարտին 'ի շըշուկ

Մինչ նա յարագ ձիան ամբառնայր , 'ի  
յուսն հարաւ սայր տիգի ,

Եւ 'ի ձիոց վայրահոսեալ անդ դիտա-  
պաստ տարածի :

Յերկնից յայնժամ կալեալ դէտակն ե-  
տես խաժակն Աթենաս

Բազմատագնապ մարտիւ կանխեալ զԱ-  
քայեցւոցն օրահաս .

Արփայագնաց յՈղիւմպոսին էջ 'ի ծայ-  
րիցն Եղիոն ,

Ուր և հապճեպ Աթենասայ եկն ընդ ա-  
ռաջ Ապողոն :

Սա Պերգամեայ դէտ կայր բարձանց , և  
վիզ Տրոյեանց էր այս քաջ ,

Միմեանց սոքա մերձ առ կաղնին ելին ե-  
կին ընդ առաջ :

Չայն առաջին Փեբոս արքայ Արամազ-  
դայ ետ որդին ,

« Հիմ բոցավառ , դուստրը մաղքեզն , հա-  
սեալ եկիր աստ կրկին .

ՅՈղիւմպոսէն սրացոյց ըզքեզ ո՞ր իղձ վա-  
ռեալ արդ յանկարծ ,

Միթէ մարտին Դանայեցւոց տա՞լ յաղ-  
թութիւն կեղակարծ :

Արդեօք ընդ մահ Տրոյեանց քաջաց եր-  
բէք դու ո՞չ գորովիս ,

Բայց և անշուշտ լաւ լինիցի , եթէ ան-  
սաս իմ բանիս .

Մէք գոռութեանց խաղմից այսօր դու-  
արասցուք և դադար ,

Վաղիւ մարտիւ Եղիոնին օրհասս ածել  
չարաչար :

Իբրև անմահ աստուածուհիքդ անձկով  
խնդրէք միաբան ,

Զի հիմն 'ի վեր հողաթաւալ յատակեսցի  
այդ ոստան » :

- «**Լ**իցի այդպէս, ձայն Աթենաս կրկնեաց  
 անդէն դիցուհին ,  
 Լիցի .քո բանդ , ո՛վ Քաջաղեղն , ըզդոյն  
 խորհիմ ես ինքնին .  
 ՅՈղիւմսոսէն իջի աստէն կրկին աղանց  
 զայդ նաւթձեւ ,  
 Բայց աղէ դու զիմրդ հնարիս զայս մարտ  
 ասէզ հանդարտել » :  
 Բարբառ անդէն մաղդեղն որդին զայս  
 Ապողոն ետ արքայ ,  
 « Մեք զսաստիւն ըզքաջալանջ դրդեմք  
 զոգին Հեկտորայ .  
 Դա յասպարէզ քաջաց Յուսաց զայր  
 կարդասցէ նահատակ ,  
 Մենամարտեալ քաջ ընդ քաջի կըռուել  
 զօրուն փոխանակ .  
 Յայնժամ և Յոյնքըն քաջաղէնք յողիս  
 սաստիկ դրդեսցին ,  
 Մենամարտիկ յիւրեանց գնդէն ընդդէմ  
 հանցեն դիւցաղին » :  
**Լ**սաց Փեբոս, և Աթենաս ձեռն ետ խաժ-  
 ակն և անսաց ,  
 Բայց Եղենոս Պրիամոսեանն ոգւովն եղև  
 իրազգած .  
 Դից խորհրդոյն եղեալ ահահ , զոր կըն-  
 քեցին մի անգամ ,  
 Եկն առ Հեկտոր , արձանացաւ և զայս  
 քաջին տայր սլատում .

« Վեհ Պրիամեանդ Հեկտոր , ուշիմն Ա  
րամազդայն համեմատ ,  
Վայր մի արդեօք անասն ինձ , քաջ , որ  
քո իսկ եմ հարազատ .

Կրկին ազանց արագ արագ առկայացո  
րզխուժան ,

Եւ դու զհուժկուն կարդա Յունացքեզ  
մենամարտ ախոյեան :

Չէքո դեռ մահն առ դուրս հասեալ ,  
մի յահ գրաւիր օրհասին ,

Դիցն յաւերժից քաջիկ եղէ արդ իրա  
զգած էս ձայնին » :

Այն ինչ լուաւ և մեծապէս ինդաց  
Հեկտոր յայն բարբառ ,

Խաղաց 'ի մէջ , էտ Տրոյացւոց սանձ փա  
ղանդաց տիրաբար :

Առ զաշտէին կալաւ ըզմէջն և ողջ նրմա  
տան տեղի 107 .

Ըզնոյն Ատրիդ հանդարտութիւն հրամէր  
Յունաց բանակի .

Ըզնոյն և վեհ Արծաթաղեղն և դիցա  
նոյն Աթենաս ,

Հանդարտեցին և ամբարձան թռչնոց 'ի  
տիպ անգեղաց 108 .

Ելին նստան Արամազդեան բարձու կաղ  
նւոյն 'ի ծայրին ,

Դէտակն անդուստ կալեալ հային զմայ  
լեալք քաջացն 'ի զընին :

Վարդ կարգ անդէն նստէր զօրուն գունդ  
խիտ առ խիտ և ըստուար ,

Ահեղք 'ի տէգ և 'ի մըկունդ , 'ի սաղա-  
ւարտ և յասպար :

Որպէս հընչիւն ընդ ծով ահեղ Ձեփիւ-  
ռոսին գալով գայ ,

Եւ ընդ նովաւ կոհակաւէտ ծովն ամեհին  
Թըխանայ ,

Ըզնոյն փաղանդք Տրոյեանց , Յունաց 'ի  
դաշտ ծըփան ահագին ,

Մինչև երկուց ձայն ճակատուց զայս ետ  
Հեկտոր քաջարին .

« Աղէ Տրոյեանք , Հելէնք վառեալք  
տուք ինձ վայր մի լըսելիս ,

Բարբառեցայց , զոր 'ի լանջն իմ ազգէ  
ասել իմ հոգիս :

Բարձրածայրեալն այն Ձըրուանեան  
զերգումն ուխտին ոչ կնքեաց ,

Այլ դեռ աղէտ Թըւի անշուշտ նիւթել  
կրկին բանակաց .

Մինչ զԵղիոնն ամրապարիսպ կամ դուք  
վանէք քաջասէս ,

Կամ Թէ նըկունք ծովագնացիկ լիջլէք նա-  
ւացդ 'ի հանդէս :

Են են 'ի ձեզ յԱքայեցիս բազումք հուժ-  
կուք կորովք ,

Ի յայնց քաջաց ո՛ խրախուսէ 'ի վէգ ընդ  
իս միայնիկ ,

Օ՛ն ՚ի հանդէս ելցէ քաջիս նա ախոյեան  
հեկտորայ .

Եւ զոր ասեմս , ահա ինքնին մեզ Արա-  
մազդ է վըկայ :

Թէ նա տապաստ ՚ի տէգն ահեղ զիս  
արկանէ նըշաւակ ,

Կապտեալ ըզղէնս , իւր գոգաւոր նաւաց  
տարցի մըցանակ .

Բայց և ՚ի տուն իմ դարձուցեալ տացէ  
տանեւ զիմ մարմին ,

Եւ զիս Տրոյեանք և կանանին ՚ի բոց ած-  
ցեն խարուկին :

Ապ՛ եթէ ես հարից ըզնա , թէ ինձ շուք  
տայ Ապողոն ,

Ձաւար զինուցն առեալ նորա տարայց  
՚ի սուրբն Եղիոն .

Չօն կախեցից Ապողոնի քաջաղէղան ՚ի  
տաճար ,

Բայց ըզգիակն ողջ ՚ի նաւացն ես տաց  
տանեւ ՚ի ճամբար .

Յուզարկաւորք Յոյնք գիսաւորք տացեն  
նրմա գիահանս ,

Եւ կանգնեացեն շիրիմ յանդորր Ելէս-  
պոնտին ՚ի սահմանս :

Ձի և յապայս հասեալ անդէն ոք ծընե-  
լոցն ՚ի վերջին ,

Այր անցաւոր նաւաղօղակ ըզծով հա-  
տեալ ծիրանին ,

Յակն իւր արկեալ զայն գերեզմանն ,  
Այս է շիրիմ , ասասցէ ,

Շիրիմ քաջին , որ 'ի նախնուսն անկաւ  
Յունացն 'ի գընդէ ,

Անկաւ փառօք մենամարտեալ , հարեալ  
քաջէն յԵկտորայ .

'Նա զայս գողցէ , և փառքս անեղծ յա-  
ւերժացի առ յասպայ " :

Չայն զայս Հեկտոր . բայց Յոյնք ողջոյն  
կացին մնջիկ և լռին .

Հրաժեշտ թէ տան , գոն նըշաւակք . թէ  
յանձն առնուն , երկնչին :

Նապա խրախոյս Մենեղաւոս յարեաւ  
խօսէր յատենի ,

Եւ շատ լուտաց , երգիծեցոյց հեղձամըղ-  
ձուկ 'ի յոգի ,

« Յախուռնախօսք , Աքայուհիք , ոչ ևս  
ասեմ Աքեցիք .

Մեծ են կորանքս , թէ Հեկտորայ չեցէ  
ընդդէմ որ մարտիկ :

Յանկարծ այժմէն եր ձեր բնաւից 'ի հող  
լուծեալ և 'ի ջուր ,

Որ վառք արանց նստիք այդպէս , շիջե-  
լափառք թաքթաքուր .

Ես ինքն ընդդէմ զինու զարդու մենա-  
մարտիմ արդ անշուշտ ,

Բայց դիքն անմահք ըզյաղթութեանն  
ունին ծայրիցն 'ի վերուստ " :

Ասաց , և զէնան ըզգեղեցիկ զանձամբն  
առեալ արկանէր .

Այլ քեզ անշուշտ , Մենեղաւէ , Հեկ-  
տոր զօրհասըդ ճեպէր .

Նա քան ըզքեզ սաստիկ հըզօր ծախէր  
անդէն իբրև բոց ,

Թէ զքեզ արքայքն ընդ մէջ անցեալ անդ  
չառնէին սանձակոծ :

Յարեաւ անդէն և մեծ արքայն Ագա-  
մեմնոն Ատրիդէս ,

Եւ բարբառեալ կարգաց զանունն , կա-  
լաւ զաջն փութապէս .

« Մոլիս գիւցազն ո՛ր Մենեղաւ , գիր աշ-  
խուժից ճեմ և սանձ .

Ի զուր է քեզ . ուշիմ լեր քաջ , թէպէտ  
իցես ոգետանջ :

Քաջ քան ըզքեզ ընդ ախոյեան , քսւլ , մի  
խաղար դու 'ի վէգ ,

Դա այդ Հեկտոր Պրիամոսեան դա է բնա-  
ւից ահաբեկ :

Նոյն ինքն հուժկուն սէգն Ա. քիլլէս , որ  
քան ըզքեզ յոյժ քաջ է ,

Բայց ախոյեան 'ի մարտ փառաց յառնել  
դըմա խուսափէ :

Հանդարտ լեր , քաջ , 'ի համհարզիցդ  
երթ դու խառնեաց գումարտակ ,

Եւ Յոյնք ընդդէմ ախոյենիդ զայլ ոք  
հանցեն նահատակ :

Թէպէտ 'ի մարտ բոց փորատեալ խօլ և  
անահ դա իցէ ,

Միայն թէ ողջ ելեալ մարտէն , անշուշտ  
դա ծուռից կրկնեսցէ ʞ :

Ասաց , և քաջ ըզհարազատն յանկոյց խոր  
հուրդն յիմաստուն ,

Եւ հեշտաբար Մենեղաւոս հրպատակէր  
'ի ժամուն :

Խընծղիւք յայնժամ իւր պաշտօնեայքն  
ըզգէնան յուսոյն մերկեցին .

Մինչև յարեալ խրախոյս Յունաց Նես-  
տոր կարգայր ծերունին՝ .

“Բա՛բէ աշխար արդ մեծապէս գրաւէ  
զաշխարհն Աքեցւոց ,

Բա և Պեղոս անդ ծերունին ասպետն  
հանէ խոր յոգւոց .

Պեղոսն ասեմ խորհրդական Միւրմիդո-  
նեանց քաջաբան ,

Որ շատ խնդայր հարցեալ յինէն նստեալ  
'ի յիւրն օթեվան .

Հարցումն էր զի առնէր մէն մի Յու-  
նաց զազգէն և զարմէն ,

Եւ արդ լսէ թէ Հեկտորին պակեան ող  
ջոյն 'ի յահէն .

Յանմահս 'ի վեր ըզգողգոջուն ձեռս ամ  
բարձցէ ծերունին ,

Զի 'ի մարմնոյն լուծեա լհոգին 'ի տունն  
իջցէ խաւարին :

Ո՛վ թէ առոյգ էի, ո՛ ջեւս, ո՛ Աթենաս  
 Ապողոն ,  
 Որպէս 'ի մարտն որ 'ի սահման սրավար  
 գետոյն կեղադոն ,  
 Անդ գոռային Պիւղեանք արիք և Ար-  
 կադեանք տիգահար  
 Առ գետափամբ Յարդանիսին և մերձ  
 Փիայն 'ի պատուար .  
 Երեւթաղոս այր գիւցանման նահատա-  
 կէր խօշն 'ի մարտ ,  
 ՉԵրեթոսին արկեալ զուսով զէն զար-  
 քային և ըզլարդ ,  
 ՉԵրեթոսին զայն գիւցազին , զոր Լախ-  
 տաւոր մականունն  
 Արք ձայնէին , ըզնոյն և դաս գեղադօ-  
 տի կանանւոյն :  
 Չի մարտ մղէր ոչ 'ի յաղէղն , և ոչ 'ի  
 տէգ նիզակի ,  
 Այլ ըզփաղանգս պուղէր ջախէր հա-  
 րուստ լախտիւն երկաթի :  
 Բզնա դաւով և ոչ ուժով յանձուկ ու-  
 րէք փողոցաց  
 Հար Լիկուրդոս, ուր լախտն ըզնա դառն  
 յօրհասէն ոչ փրկեաց :  
 Չի թափ 'ի փորն աճապարեալ զաշտէն  
 վարսեաց Լիկուրդոս ,  
 Եւ գիտապաստ յորսայս յերկիր թաւալէ-  
 ցոյց զԱրեթոս :

Մերկեաց ըզզէնս զոր ձիր նրմա Արէս  
 ձօնեաց պըզընձին ,  
 Զայն զէն և զարդ տանէր զանձամբ սա  
 'ի հանգէս 'ի մարտին :  
 Երբ Լիկուրգոս շատ ծերացաւ վատեալ  
 յիւրում պալատան ,  
 Ժառանգ զինուց զԵրեւթաղոս արար  
 զիւր սերտ սաշտօնեայն .  
 Սա այս զինուք քաջաց քաջաց ձայն յաւ  
 պարէզ տայր մարտի ,  
 Այլ ահաբեկ ոչ ոք նրմա գայր ախոյեան  
 'ի դիմի :  
 Զիս ընդ քաջին 'ի վէգ խաղալ սիրա  
 խրախուսեաց անվէհեր ,  
 Մարտեայ քաջիկ ես մանկագոյն բնա  
 լից տիօք և կրսեր .  
 Շուք ետ Պալլաս , վանեալ հարի զայր կո  
 ըրովին վիթխարի ,  
 Անկաւ տապաստ , և շատ գետին գրաւէր  
 աստի և անտի :  
 Ո՛վ արդ իմ տիքս էր քաջառոյգ , կորով  
 բազկիս զօրաւոր ,  
 Փոյթ գրտանէր իւր ախոյեան այն ձայ  
 նատուն քաջն հեկտոր :  
 Իսկ այժմ և քաջք Յունաց աղբի 'ւ աւագ  
 որեար անուանի ,  
 'Նոքա դարձեալ ոչ խրախուսեն 'ի վէգ  
 ընդդէմ հեկտորի " :

Լսաց զայս ծերն , երգիծեցոյց . ինուռնք  
յարեան 'ի հանդէս .

Յարեաւ արքայն նախ առաջին Ագա-  
մեմնոն Աարիդէս .

Յարեաւ երկրորդ Գիոմեդէս գոռ կո-  
րովին այն Տիւդեան ,

Ըստ նրմանէն նահատակէն Այապք հուժ-  
կուք աննրման :

Յարեաւ ապա Իդոմենէս , նոյն և նորուն  
պաշտօնեայ ,

Մերիոնէս համանրման մարդածախին Ե-  
նիւղեայ :

Եւ հոյակապն ըզհետ սոցա Եւեմոնեանն  
Եւրիւպղէս ,

Ապա Թոոս Անդրեմոնեան , վերջին գիւց-  
ազն Ոգիւսէս :

Սոքա ինուռնք ձայն յասպարէզ տան ընդ  
գիւցազն ընդ հեկտոր ,

Բայց Գերենեանն արձանացեալ ասէր  
ասպետըն Նեստոր .

« Վիճակընկէց լիցի այր այր . և ում ելցէ  
այս վիճակ ,

Նա ասոյեան մենազինեալ լիցի Յունաց  
օժընդակ .

Նա և լիցի 'ի փրկանակ և օժընդակ իւր  
անձին ,

Ճողոպրելով ինքն ողջանդամ 'ի մենա-  
մարտ հանդիսին » :

- Լսաց, վիճակ նըշանաւոր ետ առանձին  
 մէն մի մարդ,  
 Եւ զայն առեալ արկանէին յԱգամեմ  
 նեայն սաղաւարտ :  
 Անդ ժողովուրդք աղօթելով ըզձեռս 'ի  
 վեր ամբարձին,  
 Եւ այր ոք այր ասէր այսպէս վերակնե-  
 լով 'ի յերկին .  
 « Ելցէ վիճակն, հայր Արամազդ, կամ  
 Տեղամոնն Այասայ,  
 Կամ Դոմեդեայ, կամ ոսկեգանձ մեծ ար-  
 քային Միւկենեայ » :  
 Զայս աղօթեն, իսկ վիճակաց ցունց տայր  
 Նեստոր ծերունին,  
 Եւ ել վիճակըն Այասայ, ում և տարփ-  
 մամբ ըզձային :  
 Քարողն յայնժամ շրջեալ յակումբն, ըս-  
 կիղբն առեալ 'ի յաջմէ,  
 Ըզնոյն վիճակ միոյ միոյ յաւագանւոյն  
 ցուցանէ .  
 Այր այր անգէն հրաժեշտ տըւեալ ոչ  
 ճանաչեն զայն վիճակ,  
 Մինչև որջոյն յածեալ յակումբն, 'ի  
 բունն եհաս նըպատակ :  
 Նըշանագրեալ, 'ի սաղաւարտն արկ զայն  
 Այաս հրաշալին,  
 Կարկառ ըզձեռն, և մատուցեալ Քարողն  
 եդ զայն 'ի ձեռին .

Տեսեալ ըզնիշ զիւր վիճակին ծանեալ  
Այաս և խնդայր ,

Եւ առ անդէն 'ի բարբառել , առ ոտս  
արկեալ զայն 'ի վայր :

«Սնդամ և ես , ո՛ր բարեկամք , իմ է ան-  
շուշտ այս վիճակ ,

Յուսամ կանգնել ես հեկտորայ ընդդէմ  
քաջին յաղթանակ .

Բայց աղէ դուք , մինչ ես զանձամբ զէն  
զարդ ձրդեմ ըզմարտին ,

Աստ աղօթիւք պաղատեցէք վէհ Չը-  
րուանեան արքային .

Սակայն լռիկ , զի մի՛ Տրոյեանց մրմունջք  
լիցին լռսելի .

Կամ թէ ձայնիւ , զի մեզ ուստեք չիք ահ  
մեծի երկիւղի :

Ոչ իբր անփորձ վանէ ոք զիս , և ոչ ընդ-  
դէմ իմ կամաց ,

Բա խամ այդչափ Սաղամինէ ոչ ծընաւ  
զիս , ոչ վարժեաց » :

Ասաց Այաս , նոքա պաշտմամբ Արա-  
մազդայ մաղթէին ,

Եւ այր ոք այր զայս աղօթէր վերակնե-  
լով 'ի յերկին .

«Արամազդ հայր , Իդայ իշխան , տէր վե-  
հափառ և շքեղ ,

Փառք գերաբուն տուր Այասայ , տուր  
յաղթութիւն դու ահեղ .

Իսկ թէ սիրեսս և ըզհեկտոր , և այն քա-  
ջին գուժ ածես ,

Ոյժ հաւասար երկուց քաջաց շուք հա-  
ւասար ձօնեսցես ։

Օ այս ասացին . անդուստ Այաս հրա-  
չէկ 'ի զէն սլըղընձին

Վառէր դիւցազն , և սպառազէն ճօշիւք  
ծածկէր վիժիարին ։

Խաղայր ապա քայլէր գոփմամբ իբրու  
Արէս անարի ,

Երբ նա 'ի մէջ արոփէ քաջաց , շըշուկ  
յուզէ ըզմարտի ,

Զոր Զըրուանեանն հեռիւ դրդէ , հեռ-  
ոգետանջ և անսանձ ,

Այսպէս Այասըն տիտանեան խաղայր ,  
պատուարն Աքայեանց .

Դէմքն անընկէց , ժըմտէր գընայր , քայլ  
մեծաքայլ հատանէր ,

Եւ հաստակուռ զերկայնաստուէր ըզնի-  
զակին տէգ ճօճէր ։

Խնդան հեղենք տեսեալ զիւրեանց զան-  
վանելին ախոյեան ,

Այլ Տրոյացւոց միոյ միոյ անդամքն 'ի  
գող սարսեցան .

Նոյն և քաջին սիրտ հեկտորայ թնդայր  
'ի լանջն և վազէր ,

Այլ վերջոտնեւ այնուհետև փառաց ար-  
ւոյն ոչ ճահէր .

Չէր և արժան լինել նրմա 'ի խռան զօրուն իւր զօղակ ,

Զի առաջին ինքն յասպարէզ կարգաց անձին նահատակ :

Սօտեր Այաս , բարձեալ վահան իբր աշտարակ ասագին ,

Անդրբժեղի եօթքեմըխտեայ էր կուռ գործած վահանին .

Չայս Տիւքիոս կրուեաց նմա ճարտարակի յարուեստէ

Ներհմտացեալ քեմըխտեգործն , որ էր բնակեալ 'ի Հիւղէ .

Չեօթընկաշեայն ըզյաղթ ցըլուց ըզդիւրագարձ զայն վահան

Գործեաց ճարտարն , և ութերորդ պատեաց թիթղամբ պըղընձեան :

Ըզսոյն վահան Տեղամոնեանն հանդէս բարձեալ իւր լանջաց ,

Արձանացաւ մօտ 'ի Հեկտոր , ձայն ասագին որոտաց :

« Դու արդ , Հեկտոր , դու 'ի մօտոյ տեսցես քաջ ակն յանդիման ,

Տեսցես ասիւ և գիտացես ճարտար միայն ընդ միայն ,

Յետ Աքիլէայ փաղանգաւեր առիւծասիրտ դիւցազին ,

Քանիք դարձեալ գոն կորովիք յԱքայեցւոց բանակին :

Այլ նա զարդիս նստեալ քուքայ 'ի ծո-  
վադնաց 'ի նաւէն ,

Քինայ յԱտրիդ հովիւն ազգին հեղ-  
ձամրղձուկ 'ի մաղձէն :

Մէք ախոյեանք քեզ անվէհեր արձանա-  
նամք 'ի դիմի ,

Եւ բազումք եմք . հապա դու քաջ , լեր  
նահատակ 'ի մարտի " :

« Պետ ամբոխից , հեկաորն անդուստ  
ահեղագոռ ձայն կրկնեաց ,

Պետ ամբոխից Տեղամոնեան Այաս , դու  
քաջ մազդեղանց ,

Ալէ մի փորձ փորձեր ընդ իս իբրև ան-  
փորձ ընդ մանկան ,

Կամ խակամիտ իբրև ընդ կին անգէտ  
մարտից գոռութեան :

Ես 'ի մարտի գիտեմ ճարտար 'ի վէգ  
յառնել քաջազանց ,

Նա և արեաց դիմագրաւից եմ իսկ ինքնին  
մարդախանձ :

Ճարպ յաջ յահեակ գիտեմ շարժել  
զարջառենին չոր ասպար ,

Եւ 'ի մարտի ոչ պարտասիմ , անխոնջ  
կրուովմ անգադար .

Քաջ հաստամուր ըզկայթս ոտին գիտեմ  
խօշիւնս յԱրեսին ,

Հապճեպ 'ի կառս ոստնուամ , ըզձիսն ա-  
րագ խառնեմ 'ի գոռին :

Զայր նրման քեզ բա ոչ խոցեմ, դարան  
գործեալ նըշաւակ,

Այլ ակն յայտնի, թէ այս նիզակ արդ  
զիւրն առցէ նըստատակ ։

Ասաց, ճօճեաց, և թափ յԱյաս արկ  
զերկայն տէգ զաշտէին,

Ըզյաղթ վահանն հար զեօթտակեան մօտ  
յուլթերորդ պըղընձին .

Ընդ վեցեակ տակս եմուտ թափանց եր  
կաթն եհերձ սայրասուր,

Եւ յեօթներորդն ըզկայ էառ 'ի յայն  
քեմուխտն հաստամուր ։

Սաղաց երկրորդ գիւցազն Այաս յեր  
կայն 'ի տէգ նիզակին,

Եւ կուռ զասպար բոլորածիր 'ի թափ  
խոցեաց զԵկտորին .

Շէշտ ընդ փայլուն մուտ ընդ ասպար տէ  
գըն թափանց սաստկուլթեան,

Եւ վարսեցաւ կըշիւ ընդ կուռ ճարտար  
արուեստ լանջապան .

Գընայր աշտէն առ սընակուշտն ըզստ  
մուճանն հերձանէր,

Հեկտոր կըքեալ խոյս ետ ողջիկ յօրահա  
սէն մահաբեր ։

Բռնահարեալ խօլքըն կրկին զաշտէան  
առնուն թափ 'ի բաց,

Միմեանց ընդգէմ հարան որպէս գոռ  
առիւծունք գիշախանձ .

Եւ կամ որպէս վարազք կըռուեալք ըզ-  
բաշ լարեն ամեհի ,  
Զի անվըկանդ է ոյժ նոցա և ոչ երբէք  
սպարտասի :

Տեկտոր անգրէն շէշտեալ 'ի կումբն ,  
հար ըզվահան սուր տիգաւ ,  
Այլ ոչ խըզեաց ըզկուռ սըզլինձն , և սայր  
տիգին կրկնեցաւ :

Սլացաւ յաշտէն և մեծն Այաս , զաս-  
սարն եհար և ծակեաց ,  
վարսեաց թափանց և զԵկտորին ըզթափ  
մուլոյն նըհանջեաց .

Կշուեաց և զուլ խոցեաց քաջին , արիւն  
ցայտեաց ապաժոյժ ,  
Այլ ոչ այնպէս գոռ Հեկտորայն կա-  
սեաց կըռուոյն թափն և ոյժ :

Աճապարեաց , դարձաւ ընդ կրուկ , առ-  
վէմ 'ի յաղթ 'ի բըռին  
վէմ 'ի դաշտէն , վէմն էր խըթնի և որ-  
ձաքար ահագին .

Բախեաց նովաւ ընդ Այասայն ընդ կուռ  
վահան կմբաւոր ,  
Կոփեաց սաստիկ եօթընկաշեայն , սը-  
զլինձն հնչեաց ահաւոր :

Ճեպ և Այաս ետ , վէմ մի բարձ ևս ան-  
արդիւ անարի ,  
Շըջանակեաց ձգեաց և հար սաստիկ 'ի  
թափ կորովի :

Եհար 'ի խոր իբրու բախեալ երկանա-  
քար ահագին ,

Ջախեաց զասպարն և զԵկտորայն կըթոյց  
ըզծուռնկարն քաջին :

Ասպարն ընդ լանջ այնպէս 'ի շեպ ան-  
կաւ հեկտոր հիքապէս ,

Այն ինչ անկաւ և Ապոլոնն կանգնեաց  
ըզնա փութապէս :

Ընչուչա յայնժամ սուր սուսերօք այր  
հարկանէր զախոյեան ,

Թէ ոչ Քարողքն երևէին հրեշտակք Դի-  
այ և մարդկան .

Մին Տրոյացւոց , մին քաջագէն էր հեւ-  
լենաց բանակին ,

Տալթիւբիոս և Իդէոս ամուք ըզգօնք և  
ուշիմ .

Հասին եղին 'ի մէջ քաջաց ըզպերճբարս-  
մոռնան հաշտարար ,

Եւ նախ Իդոս խորհրդական այրն հան-  
ճարեղ ետ բարբառ .

“ Մի այլ , որդեակք , դուք քաջամոյնք  
մի մենամարտք մըցիք աստ ,

Զերկուսդ ահա ամուրոպայինն ըզձեզ  
սիրեաց Արամազդ :

Նոյն զերկուսեանդ ահեղազօր մարտիկ գի-  
տեմք մէք ողջոյն ,

Գիշեր ահա առ դուրըս կայ , լաւ է ան-  
սալ գիշերոյն ” :

Ընդէն բարբառ գիւցազն Այաս Տեղա-  
մոնեան զայս կրկնեաց .

« Դու ո՛վ Իգոս , բան զայդ խօսել դու  
Հեկտորիդ պատուիրեաց .

Ո՞չ դա ինքնին քաջաց քաջաց մեզ նախ  
կարդաց ասսարէս ,

Դա կարապետ լիցի , ես գամ ըզհետ նո-  
րա փութապէս » :

Կարձեաց ըզբան , քաջազն Հեկտոր ձայն  
ետ ինքնին կամակար ,

« Քեզ , ո՛վ Այաս , բարձ ետ աստուած ,  
ետ և կորով և հանճար .

Դու 'ի Հելէնս 'ի ձիգս աշտեայց ան-  
հընարին կորովի ,

Աղէ կըռուոյս այս ոխերիմ տացուք այս  
օր մեք տեղի .

Դարձցուք կըռուել և զայլ նըլազ , մինչև  
օրհաս մեր ինքնին

Սահմանեսցէ , և յաղթութիւն կամ քո  
լիցի և կամ իմ :

Ահա գիշեր առ դուրըս կայ , լաւ է ան  
սալ գիշերոյն ,

Ե՛րթ դու 'ի նաւս , և Հելէնաց լեր խըն-  
դութիւն ժողովոյն :

Հրճուանք յաւէտ տո՛ւր մտերմացդ և  
համհարզիցդ յերախան ,

Որպէս և ես Պրիամոսին մեծ արքային  
'ի յոստան ,

Խնժիղք և կայթ տաց Տրոյացւոց և քօ-  
ղաղարդ մեր տիկնայց ,

Որք 'ի մեհեանս վասն իմ մարտին ձօն  
ձօնեսցեն մաղթանաց :

Բայց աղէ մէք ձիր հոյակապ տացուք  
տրիտուր այր ցընկեր ,

Ձի և Տրոյեանք և Յոյնք բան զայս բար-  
բառեսցին յունկըն մեր .

Դոքա թէպէտ վարազացեալք մարտ ո-  
խերիմ մրցեցան ,

Բայց և անդրէն յօդակապեալք 'ի սէր  
համբոյր մեկնեցան » :

Ասաց , և սուր արծաթակապ , պատեան  
և փոկ ետ պայծառ .

Իսկ և Այասնըմա հրափայլ յորդան կար  
միր ետ կամար :

Այսպէս մեկնեալք մին դարձ առնէր  
յԱքայեցւոց 'ի բանակ ,

Եւ մին անդրէն 'ի Տրոյացւոց խառնէր  
զօրուն գումարտակ :

Խնդան Տրոյեանք տեսեալ ողջամբ ըզ-  
հեկտորայն դարձ 'ի տուն ,

Քաջիկ պրծեալ գուն Այասայ առ 'ի  
բազկէն աննըկուն :

Առեալ ապա 'ի շահաստանն ածեն ըզ-  
նա խնդագին ,

Ձի ապրանաց քաջին այնմիկ ոչինչ այն-  
պէս յուսային :

Անդուսա և Յոյնքն ընդ յազթուլթիւնն  
 խնդամբուեալք մեծապէս,  
 Աւին զԱյաս սլատուասիրեալ բերեն  
 յարքայն Ատրիդէս :

Իբրև եկին միահամուռ մըտին նորա 'ի  
 խորան ,

Եզն յանդէոց յազէր նոցա Ագամեմոնն  
 մեծ արքայն .

Եզն հնգամեայ էր Ձըրուանեան ահե-  
 ղազօր ձօն քաջին ,

Ձենուն մորթեն , և կազմ և սուրբ ուլ  
 ջոյն ըզնա յօշեցին :

Մանրախորտիկ զարմանազան գործեալ  
 հարուն 'ի շամփուր ,

Քաջ խորովեալ հասուցանեն , բառնան  
 զամէն կերակուր :

Յամբոկ գործոյն կարգեալ սեղան առին  
 'ի ճաշ բազմական ,

Եւ համաչափ 'ի կերակրոցն ողջ աղբիւրին  
 իղճք լըցան :

Յայնժամ զողին ըզթամբն ողջոյն առեալ  
 Ատրիդ մեծ արքայ ,

Պատուասիրեալ շքով քաջին եդ զա-  
 ռաջեալ Այասայ :

Երբ զըմպելոյն և ըզճաշոյն ըզքաղցն  
 հարին անթերի ,

Խորհուրդ քաջիկ նախապատիւ Նեստոր  
 նիւթեաց ծերունի .

Էր իսկ անդուստ և ՚ի վերուստ նորա  
խորհուրդն իմաստուն :

Սա և զայն օր բան հանճարեղ զայս խօ-  
սեցաւ ՚ի ժամուն :

“**1** Դ՛ւր Ատրիդէս , լուարո՛ւք և դուք  
Յունաց ակումբ աւագաց ,  
Քանի՛ք աստէն կան դիտապաստ ՚ի բանա-  
կէս հեղենաց :

Նոցա յարեանցն ՚ի յապաժոյժ զԻսկա-  
մանդրոս գեղանին

Կարմիր գունեաց անդութն Արէս , ո-  
գիքն ՚ի թափ խոր իջին :

Պարտ առ վաղին է բանակիս դուլ տալ  
մարտին մրցանաց ,

Ըզգիակունսն անդրուվարօք կուտել է-  
զանց և ջորեաց :

Խարոյկ արկեալ և այրեսցուք վայր մի  
նաւաց ՚ի բացի ,

Զոսկերսն ՚ի տուն տարցուք որդւոց ,  
յաշխարհ դարձեալք հայրենի :

Իսկ և դամբան մի ամբարձցուք շուրջա-  
նակի խարուկին ,

Դամբան լիցի հասարակաց հողաբըլուր  
՚ի դաշտին :

Անդ և արագ բարձր բըրգամբք մէք պա-  
տեսցուք մահարձան ,

Մեզ և նաւացրս հանդիսին լիցի պատ-  
նէշ պահապան :

Բացցուք և դուրս 'ի մահարձանա , դուքք  
հաստամուրք լայնատարր ,

Ուղ արահետ անդրուվարաց և կուռ  
ձիոց ճանապարհ :

Անդ և սլարկէն մօտ արտաքոյ 'ի խոր  
հատցուք յատակէ ,

Որ շուրջ սլատեալ , սանձ հեծեւոց սանձ  
և հետեաց նա հարցէ .

Նահանջ լիցի , զի մի հրոսակք խօշ Տրոյա  
ցւոց խուժեցցին ” .

Ասաց Նեստոր , ըզքաջ խորհուրդն ար-  
քայքն ողջոյն կնքեցին :

Բայց և Տրոյեանց էր յԵղիոն ատեան 'ի  
բուրդն 'ի բարձուն ,

Ատեան խռովեալ և ահաբեկ առ դուրս  
խմբեալ Պրիամուն :

Յարեաւ ուշիմ մեծն Աստենոր ձայն ա-  
տենին արձակեաց ,

« Ինձ սենկըն դիք , Տրովադացիք , և Դար-  
դանեան դասք սկտաց ,

Լուարուք և դուք նիզակակիցք մեր ոս-  
տանին քաջազօր ,

Ինչ զոր ոգիս ինձ թելադրեաց , բարբա-  
ռեցայց ձեզ այսօր :

Օ՛ն մէք այժմէն առեալ կամաւ զայդ  
Հեղինէ զԱրգուհին ,

Տացուք քաջացըն Աարիդեանց , տացուք  
և զողջ կարասին :

Աստ մեք անխաբ երդմանց նենգեալ, կը-  
ռուիմք 'ի զուր մրցանաց .

Զայս թէ չառնեմք, այս մեզ անշուշտ ոչ  
լինչ լիցի 'ի լաւաց " :

Օ, այս Անտենոր ասաց ուշիմն , և առ  
դարձեալ բազմական ,

Յարեաւ Պարիս վարսագեղոյն ձայն հե-  
ղինեայ ետ փեսայն :

« Բան , Անտենոր , զոր ասացեր , չէ դէս  
ողուոյս փափաքման .

Բա՛ լաւագոյն և զայլ խորհուրդ էր քեզ  
նիւթեւ յայս ատեան :

Իսկ թէ իրաւ և բոլորեալ զայդ 'ի սրտէ  
խօսեցար ,

Անշուշտ աստուածքն , ո՛ր Անտենոր , բար-  
ձին 'ի քէն ըզհանճար :

Այլ ես Տրոյեանց քաջաձիոցն ասեմ արդ-  
բարձր 'ի ձայնէ ,

Ասեմ կնքեմ . քա՛ւ ես Յունաց , քա՛ւ , չը-  
տամ զիմն հեղինէ :

Իսկ ողջ ըզգոյս , զոր յԱրգոսէն առեալ  
բերի 'ի տուն մեր ,

Տամ մրտադիւր , նա և յիմոցս ես բարդե-  
ցից այլ մըթեր " :

Լսաց Պարիս , և բազմեցաւ . Պրիամ յա-  
րեաւ Դարդանեան ,

Խորհրդականըն դիւցազնեայ զայս հան-  
ճարեաց բան յայնժամ .

« Լուարո՞ւք Տրոյեանք, և Դարդանեանք,  
և մեր սատարք քաջազօր .

Ինչ զոր ոգին իմ թելադրեաց, բարբա-  
ռեցայց ձեզ այսօր :

Բանակ հարեալ, որպէս յառաջն, այր  
ընթրեացէ ընդ ընկեր,

Պարեկապանս հանէք, այր այր անքուն  
լիցի սահակեր :

Այգուն իգոս գնասցէ 'ի նաւս, ուր դա-  
դարեալ կան հելէնք,

Տալ Ատրիդեանց զբան Պարիսին, յոյր  
սակս յուղեաց ահեղ վէդ :

Հրեշտակու թեամբ և զայս խորհուրդ  
արկցէ Յունաց առաջի,

Արդեօք ցայրումնն դիականց շրշուկ սան-  
ձէն ըզմարտի :

Կրկին ասլա դարձցուք կըռուէլ, մինչև  
օրհաս վայր 'ի վեր

Սահմանեացէ, և յաղթու թիւն լիցի նո-  
ցա և կամ մեր » :

Ասաց Պրիամ, և մըտադիւր բանին ան-  
սան արքային,

Եւ երախանս կապեալ գունդ գունդ 'ի  
բանակի ընթրեցին :

Այգուն իգոս 'ի նաւախումբն յուղի ան-  
կաւ փութապէս,

Եւ ըզՅունաց քաջորերոյն եգիտ խըմ-  
բեալ ըզհանդէս :

Յատեան նստեալ, Ագամեմնեայ կային  
առ խելս 'ի նաւուն .

Ի մէջ եկաց, հրեշտակութեամբ Քա-  
րողն ազգէր ձայնարկուն .

« Քաջք Ատրեսեանք, և համախումբ ա-  
ւագորեար հելէնաց ,

Ես ձեզ բանբեր Կամ Պրիամեայ և Տրոյա-  
ցւոց յաւագաց .

Բան ձեզ ազգել, թէ արդեօք հեշտ և  
բաղձալի ձեր ունկան ,

Ըզբանն ասեմ զԱղէքսանդրին, յորմէ այս  
մարտք յուզեցան :

Որչափ ինչ գանձ նա յԵղիոն ծովայա-  
ծեալ աստ եբեր ,

( Այլ իցիւ, թէ նախաւախձան նըմա օր-  
հասն իւր կանխէր ) ,

Ձայն կարասի ողջ տալ անդրէն նա ձեռս  
յանձին հարեալ է .

Եւ ոչ այսչափ, նա և յիւրոցն և այլ մը-  
թեր բարդեացէ :

Բայց ըզլէհին Մենեղաւեայ կոյս հարան  
ածեալ 'ի տանէն ,

Օ'ն և օն ես չըտամ, ասէ, թէ և Տրոյ-  
եանք սագրեացեն :

Դարձեալ և այլ հրեշտակութիւն ինձ  
ձեզ ազգել յաւելին ,

Արդեօք ցայրումըն գիականց շրշուկ սան-  
ձէք ըզմարտին :

Կրկին ապա դարձցուք կրուուէլ, մինչև  
օրհաս վայր 'ի վեր

Սահմանեցէ, և յաղթուած իւրնն կամ ձեզ  
լիցի և կամ մեր » :

Ասաց, և լուռ առ հասարակ կացին ա-  
ւագք հեղինաց,

Մինչև Գոմեդ յարեաւ արին, ձայն ատե-  
նին արձակեաց .

« Վըճարեալ է . չիք մեզ արդ մասն յԱ-  
ղէքսանդրին 'ի տանէ ,

Չէ մեզ հաճոյ, ոչ նորայն դանձ, և ոչ  
դարձեալ հեղինէ .

Չի զայս անխաբ և ըստընդիաց տրղայն ան-  
գամ տեսանէ ,

Չի վայ աշխար մահահրաւէր Տրոյեանց  
առ դուրս հասեալ է » :

Ասաց Գոմեդ, և Յոյնք բանին ձեռըն  
ետուն միաբան ,

Եւ ընդ արւոյն ընդ ձայնն աւագ առ հա-  
սարակ զարմացան :

Յայնժամ Ատրիդ առ Իդէոս զայս ետ  
արքայն անդրադարձ ,

« Դու ո՛վ Իդոս, ինքնին լուար սլատաս-  
խանին ըզՅունաց .

Նոյն է և իմ, զոր ինչ գոքա սահմանեցին  
մի անգամ ,

Այլքա՛ւ, եթէ ըզդիականց զայրումն եր-  
բէք զըլանամ .

Ժըլատ ոչ ոք լիցի երբէք ընդ անկէլոց  
դիակոյտ .

Մեռան նորա . մէք խարուկաւ ըզչուքն  
հարցուք փոյթ ընդ փոյթ :

Երդմանց վրկայ լիցի հերայ որոտ ընդ  
ոսարն փեսայն ” .

Ասաց , անդէն և 'ի յերկին առ դիսն ամ  
բարձ գաւազան :

Պարձաւ Իդոս , և եկն եհաս 'ի նըւի-  
րեալ շահաստանն ,

Ուր Տրոյացւոց և Դարդանեանց էր հրա-  
սպարակ և ատեան :

Խմբեալ կային ակընկառոյցք , երբ եկես-  
ցէ Իդէոս .

Նա եկն 'ի մէջ և զիւրական հրեշտակու-  
թեան ետ քարոզ :

Հապա ճեպին անդ ձեռն 'ի գործ ժիր  
սպատանիք և առոյգք ,

Կէսք անդրուվարս տան դիականց , կէսք  
փայտակոյտ 'ի խարոյկ :

Ըզնոյն յայնժամ Յոյնք հանգրիճեալք  
ժիւք 'ի նաւաց հանդիսին ,

Կէսք սայլորդաց տան դիակունս , կէսք  
փայտահարք հանդերձին :

Յանդընդախոր Ովկիանուն խաղաղա-  
ւէտ յորձանաց ,

Այն ինչ արեգն ելեալ յերկին խոցէր  
ըզմարգըս գաշտաց ,

- Եկեալ յայնժամ Տրոյեանք և Յոյնք մի  
մեանց հանդէպ պատահեն ,
- Այլ տաղնապին 'ի ճանաչել զանճնիւր  
անկեալն 'ի զօրուէն .
- Մինչև զարեանցրն զապաժոյժ և զա  
պաւառն ամենայն
- Լուացեալք , հեղուն ջերմ արտասուա ,  
կուտեն 'ի սայլս և բառնան :
- Բայց Պրիամոս կոծ և ըզջայն արդել  
իւրում խուժանի ,
- Այնպէս ըզգիս տան 'ի խարոյկ և լուռք  
մըղձկին 'ի սրտի .
- Այրեալք 'ի հուր , և յԵղիոն դառնան  
անդրէն Թախժագին ,
- Նոյն էր անդուստ և գործ ողջոյն Աքայե  
ցոց բանակին :
- Ըզգիակունս տան խարուկաց , լան 'ի սրբ  
տի դառնապէս ,
- Այրեն 'ի հուր և դարձ կրկին առնեն  
նաւացն 'ի հանդէս :
- Չև առաւօտ ծագեալ յաշխարհ , այլ  
արշալոյսն էր յերկիր ,
- Եւ շուրջ յայնժամ ըզխարուկաւ խմբէր  
Յունաց այրընտիր :
- Գոտէպնդեալք շինեն դամբան շուրջա  
նակի խարուկին ,
- Դամբան ըզմի հասարակաց մեծ հողա  
բլուր 'ի դաշտին :

Իսկ բարձրաբերձ առ դամբանին բըր-  
 գունս կանգնեն մահարձան ,  
 Պատեն պատուար պատնէշ անձանց , նոյն  
 և նաւաց սրահապան :  
 Բացին ընդ մէջ մահարձանաց և դուրս  
 ամուր լայնատարր ,  
 Անցք արահետ անդրուվարաց և կուռ  
 ձիոց ճանհապարհ :  
 Իսկ արտաքոյ առ պատուարաւ պարկէն  
 հատին մեծ և խոր ,  
 Պարկէն փոսոյն էր լայնածիր , և ցից  
 վարսեն շերտաւոր :  
 Այսպէս հեւլէնք վաստակէին ժրացեալք  
 'ի գործն յայն 'ի մեծ ,  
 Եւ դիք վերուստ հային բազմեալք մերձ  
 յԱրամազդ շանթընկէց :  
 Մինչ դեռ այնպէս հիացեալք մեծի գոր-  
 ծոյն կային 'ի զընին ,  
 Չայն զայս անդէն երկրասասանն ետ  
 Պիսիգոն զայրագին .  
 66 Մարամազդ հայր , ո՞ դք այլ ևս յերկրա-  
 բնակաց 'ի զարմէ ,  
 Յողոք անկեալ դիցն անմահից , զխոր-  
 հուրդ մըտացն յայտնեսցէ :  
 Ո՞չ տեսանես , զխորդ հեւլէնք կրկին ե-  
 լեալք 'ի սայբար ,  
 Հանդէպ նաւաց խըրամ հատեալ շուրջ  
 պատեցին ըզպատուար :

Դոքա մեզ դիցս ըզհոյակապն հարիւր-  
եզնեանն ոչ զենին ,

Եւ փառք գործոյդ այդ սրփուեսցի , ուր  
լուսասփիռ է արփին :

Իսկ իմ գործոյն և Փեբոսին քաջ մոռա-  
ցոնք լինիցին ,

Որ քրտնաջանք պատուար ածաք Լաւմե-  
դոնի քաղաքին 109 ” :

“ Բա՛բէ հուժկուդ , ցասեալ Դիոս ,  
կրկնեաց արքայն շանթաբեր ,

Բա՛բէ հրղորդ երկրասասան , զի՛նչ բան  
երբէք ասացեր .

Ա՛յլ որ ՚ի դից յոյժ քան ըզքեզ և ՚ի բա-  
զուկ ասիկար ,

Թերևս ՚ի յայդ ՚ի խորհրդոյդ քաջ զան-  
դիտէր և խիթայր :

Ա՛յլ քոյդ փառաց սրփուի համբաւն , ուր  
և սրփուի լոյս արփուոյն ,

Համայն այնպէս մընա վայր մի , մինչև  
դարձցին Յոյնք ՚ի տուն .

Յորժամ կրկին դոքա ծովեալք զաշխարհ  
տեսցեն հայրենին ,

Ար՛ի յայնժամ , քանդեա զպատուարն ,  
ամա ՚ի ծովն ահագին :

Անդրէն ապա ՚ի մեծ ծովափն կարկառ  
կուտեա աւազի ,

Եւ մեծ պատուարդ Ա. քայեցւոց հետա-  
խաղաղ ծածկեսցի ” :

Լյսպէս նորա յայն բազմական տան ան  
 դրագարձ այր յընկեր ,  
 Եմուտ արեգն և գործն Յունաց 'ի գլուխ  
 ելեալ պըսակեր :  
 Զենին արջառս ըստ վըրանաց , և կերա-  
 կուր առնուին ,  
 Յայնժամ և շատ նաւք գինեբերք 'ի Լեմ-  
 նոսէ անդ հասին :  
 Զսոսա Եւնոս առ և յըղեաց մեծն Յա-  
 սոլի քաջորդի ,  
 Զոր Իւփսիպղէ մայրըն ծընաւ մեծի հո-  
 վուին Յասոլի :  
 Առ այս դարձեալ և Ատրիդէանց կրկին  
 պետաց գերափառ ,  
 Նոյն Յասոլեանն 'ի պատարագ յըղեաց  
 գինուոյ չափ հազար :  
 Յարեան յայնժամ տուրևառիկք լինին  
 հելենք այն գինուոյն ,  
 Կէսք ընդ պըղինձ և կէսք ընդ նիւթ գոր-  
 ծած փայլուն երկաթոյն ,  
 Կէսք և տային արջառենի , և կէսք փո-  
 խեն ընդ գերեաց ,  
 Կէսք և արջառս , և հանդերձեալք ընթ-  
 ըիս կահեն մեծահաց :  
 Ող ըզգիշերն Յոյնք վարսաւորք 'ի հաց-  
 կերոյթ բազմեցան ,  
 Ըզնոյն Տրոյեանքն և համահարզքն հաց  
 առնուին 'ի յոստան :

Այլ զողջ գիշերն արէտ նոցա Ռիոսնիւ  
Թէր խորիմաց ,

Որոտ ասէղ ճայթէր նոցա , յասէն դեղ  
նին գոյնք գիմաց :

Առեալ գինի հեղուն նոքա 'ի սկահակաց  
'ի գետին ,

Եւ ձօն մինչ ջւ հանեալ Ռիայ ըմպէր ոչ  
ոք ըզգինին :

Իբրև այնպէս 'ի հացկերոյթն ըզքաղցն  
հարին յերեկոյն ,

Ընկողմանեալք զպարգևական ճաշակն ա-  
ռին ըզքընոյն :



# ԵՂԵՆԵՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ը.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Արամազդ խմբեալ զաստուածս , պատուիրէ նոցա մի միջամուխ 'ի մարտն լինել Տրոյականն : Սկսանի մարտն , ընդ ժամանակ ինչ անասհմանն : Արամազդ 'ի կըշիւ արկեալ զօրհաս կրկին բանակացն , և վեհագոյն գտեալ զՏրոյացւոցն , միջբեկէ զՅոյնս երկնասաստ երևութիւ : ԱՏ և փախուստ Յունաց : Նեստոր տագնաւի , պաշտպանի 'ի Գիոմեդեայ : Շահատակութիւն Գիոմեդեայ . հազիւ տեղի տայ շանթիցն Արամազդայ : Նահատակութիւնք Հեկտորի : Նետաձգութիւք Տեւկրոսի և վիմահար լինել նորա 'ի Հեկտորէ : Հարուած Յունաց : Հերա և Աթենաս 'ի զէն վառին 'ի զօրավիգ Յունաց , և խափանին յԱրամազդայ : Ատեան աստուածոց . կշտամբէ Արամազդ զՀերա : Յոյնք փակին 'ի պաանէշս : Հեկտոր տիրացեալ , հրամայէ պահպանութիւն խարուկաւ 'ի քաղաքին և 'ի բանակին զգիշերն զայն :

Հագներգութիւնս լրումն տայ քսաներորդի եօթներորդի աւուր պաշարման Տրոյիոյ : Տեսարանն է 'ի դաշտին առ ծովափամբ :



## ԵՂՒԼԱԼՆ

ՀԱԳՆ ԵՐԳՈՒԹԻՒՆ Ը.

Ուշոցն յաշխարհ արփիասկիզքն այգ  
քըբմազդեաց ծաւալէր,

Եւ դից զատեանն 'ի մեծ խորհուրդ խըմ  
բեաց Դիոս շանթաբեր .

Բազմադագաթն յՈղիւմպոսին 'ի յար  
տեաննն վերջին

Խօսէր Դիոս, և ունկընդիր դիբն ամենայն  
լինէին .

“ Լուարո՛ւք, ասէր, դիք ամենայն և  
դուք ողջոյն դիցուհիք ,

Բան մի զարդիս ձեզ մերկանամ, կամացն  
խմոց ըզկընիք :

Մի ոք 'ի դից , և մի դարձեալ ոք 'ի կար  
դէ դիցուհեաց

Փորձ փորձեսցէ խանդար առնել իմ մե-  
ծասաստ սլափոգամաց :

Այլ համաշունչք պատգամանոյն կացէք  
իմոյն դուք պատկառ ,

Մինչև արագ ես զայդ բաներդ 'ի գլուխ  
հանից մինչ 'ի սպառ :

Ապ' եթէ ես ումէք 'ի դիցն յանկարծ լի-  
նիմ իրազգած ,

Թէ նա կամաւ կամ Տրոյացւոց կամ Ա-  
քայեանց յօգն եհաս ,

Դա նըշաւակ վերս ընկալեալ դարձցի  
անդրէն յՈղիմպոս ,

Կամ ես ըզնա բռնահարեալ 'ի մուծն ար-  
կից Տարտարոս .

Ուր տարադէմ անդընդախոր վիհ մեծ է  
յոյժ ընդերկրեայ ,

Ուր երկաթի են աղլսք և նիգք , սեամ և  
յատակ պղղընձեայ .

Խոր է վերասն այնչափ որչափ երկինք  
տար կան 'ի յերկրէ ,

Եւ նա յայնժամ , վէհ քանի՛օն եմ դիցն  
ողջոյն , գիտասցէ :

Բայց աղէ դուք , զի ծանիջլիք , փորձ մի  
ո՛վ դիք , փորձեսցէք .

Ոսկի չըղծայ կախեալ յերկնից , և դուք  
'ի նոյն բուռն հարէք .

Թափեցէք ճիգն համանգամայն դէք դէ  
ցանոյշք , որ էք աստ ,

Ոչ և այնպէս յերկնից յերկիր ձրգէք ըզ-  
մեծն Արամազդ :

Իսկ թէ զըլթայդ ես կամիցիմ ձրգել առ  
խ միայնակ ,

Ձրգեմ 'ի վեր , միանգամայն ձրգեմ ըզ-  
ծով ըզցամաք :

Իսկ շլթայիդ հանգոյց գործեմ Ողիւմ-  
պոսի 'ի ծայրին ,

Եւ ծով ցամաք առ հասարակ ընդ օդն  
ամբաւ կախեսցին :

Այնչափ ահա դիցն անմահից եմ գերա-  
գոյն և մարդկան » .

Ասաց , ողջոյն կացին լռուիկ ասշեալք ընդ  
բան սաստկութեան :

Մինչև ուրեմն անդ դիցանոյշ ծաւին  
Պալաս ձայն կարդայ ,

«Ո՛վ հայր , ասէր , մեր Ձըրուանեան , դու  
արքայից ես արքայ .

Եւ մէք ինքնին գիտեմք ըզքո զանվանե-  
լին ոյժ բազկաց ,

Այլ մէք Յունաց ախտակցաբար զաղէ-  
տըս լամք ըզքաջաց :

Դոքա տասլաստք 'ի գլուխ տարցին զօր-  
հաս մահուն գառնութեան .

Բայց թէ հրամես , մէք 'ի մարտէն վերջ-  
ոտնեսցուք միաբան :

Խորհուրդ միայն Աքայեցւոց մէք նիւ  
 թեսցուք 'ի նըստստ ,

Մի հասարակ 'ի քում ցատման արկցին  
 դոքա դիտասպատ » :

Ժպտեցաւ մեծն Ամսրոսպային և անդ  
 րադարձ ետ ձայնի ,

« Քաջալերեաց , ո՛վ Տրիտոնեան , դու իմ  
 ծընունդ փարելի ,

Ես յայսպիսեաց խօսել բանից չեմ ինչ  
 այնպէս անձնատուր ,

Սակայն ընդ քեզ , ո՛ Աթենաս , կամիմ լի  
 նեւ հեշտալուր » :

Լսաց , 'ի կառս իւր ըզնրժոյգս պըղընձ  
 ոտինս առ լըծեաց ,

Նրժոյգք թըռչունք ոսկեճաճանչ գիսովք  
 բաշիւք գեղասպանծ :

Չանձամբ ոսկի արկեալ համակ , ըզխա  
 րազանն առ զոսկին ,

Առ ըզքնաղն և ել 'ի կառս և բազմեցաւ  
 առանձին :

Գանեալ նրժոյգքն օդապարեալք սրա  
 նան անձկով տարագէմ ,

Հատեալք ըզլայրն որ ընդ երկիր և ընդ  
 երկին աստղաճեմ :

Եհաս յԻդա 'ի բիւրակնեայն , եհաս 'ի  
 մայր գազանաց ,

Եւ 'ի Գարգաուն 110 ուր էր անտառ իւր  
 և բագին իրնկազգեաց :

Անդ ըզնրժոյգան առկայացոյց հայրն  
աստուածոց և մարդկան ,

Լոյծ 'ի կառաց , բակ ըզնոքօք մէգ տա-  
րածեաց թանձրութեան :

Յարտեանին բաղմէր շքով , շուքն էր  
ահեղ և աւագ ,

Անդուստ 'ինաւս յառէր Յունաց , և Տրոյ-  
ացւոցն 'ի քաղաք :

Բայց 'ի վերանս Աքայեցիք հապճեալ  
կարգեալք ըզսեղան ,

Յարեան անդէն ժիրք և սրատրաստք 'ի  
զէն 'ի զարդ վառեցան :

Ձէն և յոստանն առնուն Տրոյեանիք , թէ  
և նուազուիք 'ի մարտկաց ,

Այլ անհրաժեշտ յառնեն կրռուել վա-  
սրն որդւոց և կանանց :

Բացան ողջոյն դրունք քաղաքին , գունդք  
հրոսակաց խուժեցին ,

Կէսք հետեակք , կէսք այրուծի , խօշուն  
գուժեաց ահագին :

Իբրև այնպէս կրկին բանակք ճակատե-  
տուն 'ի վայր մի ,

Անդ վահանակք առ վահանակս , տէգք  
բախէին ընդ աիգի .

Անդ թափ 'ի թափ Կօշիւք ծածկեալ  
խօք խառնեցան ահաւոր ,

Եւ ընդ ասպարս ահեղ կոփիւն ասպարք  
ճայթեն կմբաւոր ,

Թնդայր թըմբէր ձայն բացարձակ արձա-  
գանդաց և բովբիւն ,

Աստուատ հեծել, անդուստ քաջաց էր  
խիզախել և գոռիւն .

Մնչէն անկեալքն , և վարողացն 'ի մահ  
գոչիւն բարձրանայր ,

Եւ ընդ երկիր մեծ ասպաժոյժք գնային  
արեանց առուաբար :

Պահն էր այգուն , և լուսազգեաց օրըն  
խաղայր աճեցուն ,

Եւ երկուստեք նետից տարափք խոցեն  
զամբաւս 'ի զօրուն :

Իսկ մինչ արեգն 'ի մէջ երկնից ել և 'ի  
վեր բարձրացաւ ,

Յայնժամ և Հայրն զոսկի կըշիւան 'ի վեր  
էառ և կալաւ .

Քըւեայս կրկին զերկայնաքուն մահուն  
առ եդ 'ի նըժար ,

Մին Աքայեանցն էր սահմանիչ , մին  
Տրոյացւոց ազգարար :

Ըզկըշուորդին ձրդեաց միջոյն , կըշիւ գոր-  
ծեաց զուգական ,

Ամբարձ 'ի վեր , և մէտն Յունաց զօրհաս  
գուժէր դառնութեան :

Սոցայն 'ի մայրն հասարակաց յերկիր  
ծանրեալ էջ նստաւ ,

Տրոյեանց քըւեայն յերկին անդորր 'ի վեր  
ելեալ ամբարձաւ 111 :

Լ՛հեղ յայնժամ Ամարոպայինն յԻդեայ  
բարձանցն որոտաց ,

Եւ շանթ հրացան փայլատակեալ ճայ-  
թեաց 'ի զօրն Հելլենաց :

Տեսին պակեան և ողջ անդամքն 'ի դող  
հարեալ սարսեցին ,

Եւ կերպարանքն առ հասարակ գոյն շոր-  
ջեցան 'ի դեղին :

Անդ ոչ ըզկայ Ագամեմնոն էառ , և ոչ  
Իդոմէն ,

Ոչ և ամուք խօլ Այասիցն զոտրա 'ի բոյս  
հարկանեն :

Միայն՝ Նեստոր մեծ պահապանն Աքայ-  
եցւոց կաց մընաց ,

Ոչ կամովին , այլ երիվարն ըզճերունին  
անդ կապեաց :

Քանզի Պարիս փեսայն չքնաղըն Հելլե-  
նեայ նետ եհար ,

Կըշեալ 'ի կոյս 'ի գագաթան խոցեաց  
ծերոյն զերիվար .

Անդ ուր ձիոց 'ի կառափունս մաղք ա-  
ռաջինք բուսանին ,

Եւ ուր հարուածքն երիվարաց են գու-  
ժաբերք օրհասին :

Կանգուն 'ի վեր տանջէր նրժոյգն , նետն  
յուզղաբոյն վարսեալ էր ,

Նա ման առեալ շուրջ զերկաթով , ձիոց  
խըռով արկանէր :

Մինչ ծերնն՝ ի շտապ կտրոց հանէր խղզէլ  
ձիոյն զերասան,

Անդուստ հրաշունչք օդապարեալ սլա-  
նան նրժոյգքն հեկտորեան :

Գալով գային ըզծերունւոյն առնուլ  
կապուտն և զաւար,

Սէգ խիզախեն, քանզի զհեկտոր զահեղն  
ունին կառավար :

Անշուշտ յայնժամ մեծ ծերունին զօր-  
հասն առնոյր մահաբեր,

Թէ ոչ ի շտապ մեծ տազնապին Գիոմե-  
դէս խուճապէր :

Դէտակն ի վեր ամբարձ արին, զաղէտ  
ծերոյն զայն ետես,

Ի նոյն խրախոյս ահեղագոչ ձայն արձա-  
կէր յՈգիւսէս .

« Դու ո՛վ Ոգիւս բազմահընար Լայերտա-  
ծին մազդեզանց ,

Դու վերջոտնեալ ո՛ւր Թաքթաքուր փախ-  
չիս իբրև վատ արանց .

Յուշ արդ, ո՛վ քաջ, մի՛ ի Թիկանց ոք  
չեշտեսցէ քեզ նիզակ .

Անսա վայր մի, էկ վանեսցուք ի ծերուն-  
ւոյդ զայդ վերագ » :

Չայն խրախուսին ոչ կասեցոյց ըզխու-  
ճապեալն Ոգիւսէս ,

Ի շտապ տազնապ լուռ անց դիմեաց նա-  
ւացն Յունաց ի հանդէս :

Մընաց միայն Դիոմեդէս, այլ ոչ բեկաւ  
քաջարին,

Անց նահատակ, հանդէս ձիոց արձանա-  
ցաւ Նեստորին:

Չայն ետ. «Ո՛վ ծեր, տագնապ է քեզ  
կըռուել ընդդէմ պատանեաց.

Ոյժ քո վատեալ, և ալևոյթ դըժար ըզ-  
քեզ պաշարեաց.

Նըկունք նըժոյգքդ, և պաշտօնեայդ չէ  
ինչ այնպէս ժիրաժիր.

Ո՛վ ծերունի, արի՛ և էջ, ե՛լ դու յիմ  
կառս ամբարձիր:

Տեսցես զխորդ Տրովեան նըժոյգքդ են  
վարժք և փորձք ՚ի դաշտին,

Զխորդ արագք յայսկոյս յայնկոյս վա-  
զեն, վանեն, ընկըրկին:

Ես ըզդոսա այն ինչ հանի ՚ի յաղթ բազ-  
կացն Ենէայ,

Քոց նըժուգաց խընամ կալցեն այդ ար-  
բանեակք պաշտօնեայ:

Իսկ մէք սոքօք ընդդէմ Տրոյեանց հար-  
ցուք քաջաց ՚ի դիմի.

Տեսցէ Հեկտոր, գոռայ յիմ ձեռն և տէգ  
խմոյն նիզակի »:

Լսաց Դիոմեդ, և ծերունին արծարծե-  
ցաւ ՚ի ձայնէն,

Եւ ճայիկացըն Նեստորի քաջ կառա-  
վարքն հոգ ածեն.

Այս է Սթենեղ և Եւրիւմէդ, մարտիկք  
սոքա քաջալաւ .

Իսկ ծերունին ընդ Դոմեդեայ 'ի կառս  
ելեալ բազմեցաւ :

Նեստոր 'ի բուռն առ զերասան, էր այն  
գործած հրաշագան ,

Շքունդն եհատ մորակն 'ի կուշտ , նը-  
ժոյգքն յԵկտոր խոյացան :

Տէգ Դոմեդէս ձգեաց յԵկտոր , որ դայր  
խաղայր շէշտակի ,

Վրիպեալ կըշռոյն , ըզպաշտօնեայ հար  
կառավարն ըզքաջի .

Ենիոպոս անուռ սորա , զաւակ վեհին  
Թեբէայ .

Ունէր ձիոց զերասանաց , յըստինսն հա-  
րաւ լանջ նորա :

Ինքն 'ի կառաց տապալեցաւ , նըժոյգքն  
'ի վեր վազեցին ,

Լուծան անգամքըն Ենոպեայ և քաղե-  
ցաւ շունչ վերջին :

Ընդ մահ քաջի կառավարին Հեկտոր խո-  
ցեալ 'ի յոգին

Մորմոքեցաւ , այլ թող ըզնա տապաստ  
այնպէս 'ի գետին :

Եւ 'ի խնդիր , զայլ ոք սըրտեայ նստու-  
ցանեւ կառավար ,

Եւ ոչ անբաժ կառավարէն մնացին նը-  
ժոյգքն ընդ երկար .

Արագ արագ զԱրքեպոզեմ գիտ զԵփի-  
տեան ըզսրրտեայն ,

Հասցէս ըզնա ամբարձ 'ի կառս , ետ 'ի  
բռնին զերասան :

Լմբաւ յայնժամ լինէր նախճիր , խօշիւն  
յուզէր մարդախանձ ,

Եւ Տրոյացին յոստանն 'ի գոմ խոնէր  
իբրև հօտ խաշանց ,

Եթէ յիդեայ զԵղիոնին գիտեալ զօր-  
հաս դառնութեան ,

Արագ արագ խընամ չածէր հայրն աս-  
տուծոց և մարդկան :

Որոտ ընդ ոստ ամսահարեալ շանթ մի  
հրացան ասագին ,

Մեծ արհաւրօք արկ Դոմեդեան կառացն  
հանդէս 'ի գետին :

Անդէն ասեղ ցոլք ծրծրմբոյ փայլակնա-  
ցաւ բոցակէզ ,

'Նրժոյգբըն քաջք 'ի լուծս իւրեանց զա-  
հանդեցան սոսկապէս :

Անդ գեղեցիկ և երասանք ծերոյն զեր-  
ծան 'ի ձեռաց ,

Պակեալ Նեստոր և առ Դոմեդ արա-  
գաթև ձայն կարդաց .

«Արի Դոմեդ , առ զերիվարս ընդ կրուկ  
դարձիր , մի կար աստ .

Ո՞չ տեսանես , արդ զօրավիգ քեզ չա-  
ռաքէ Արամազդ :

Նա յայսմ աւուր ըզուք մարտի ընկերչա-  
կէ Հեկտորին ,

Իսկ զայլ նըւագ , որսէս կամի , և մեզ  
անշուշտ տայ ինքնին .

Կամացն ընդդէմ խաղալ նորա և այր  
հուժկու չատակէ ,

Զի մի միայն ահեղազոր և մեծայաղթ  
նա տէր է ։

“ Արշարիտ ասես , դիւցազն անդէն Ղիւ  
մեդէս կրկնեաց ձայն ,

Ճըրգրիտ անշուշտ զայդ յուշ ածեր , ո՛վ  
ծերունիդ քաջաբան ,

Այլ զիմ այժմիկ ցաւ դառնութեան  
ըզսիրա գրաւէ և զողի ,

Երբ սէգն Հեկտոր առ Տրոյացիս օր մի  
գոռամամբ պանծասցի :

Յինէն Դոմեդ թիկնադարձոյց փախեալ  
նաւացն յասրաստան .

Նա պանծասցի . այլ ո՛վ , ներքոյ հողպա-  
տառէր ինձ յայնժամ ։

“ Բա՛բէ դիւցազն , անդէն Նեստոր կը-  
ցեաց , յանկոյց հեշտաբար .

Տիւդեայ զաւակ դու քաջազին , բա՛բէ ,  
զի՛նչ բան խօսեցար :

Թող վատ արանց ըզքեզ Հեկտոր թող  
կոչեսցէ անարի ,

Այլ ոչ Տրոյեանք , ոչ Դարդանեանք ,  
երբէք լիցին լըսելի .

Նա և Տրոյեանց քաջաց հարսուճքն ունչս  
արասցեն այդ բանին,

Զորոց զառոյգ դու ըզփեսայսն արկեր  
տասպատ 'ի գետին ։

Լըւաւ Դոմեդ, առ զերիվարսն ընդ  
կրուկ վարէր 'ի փախուստ,

Գոռայր Հեկտոր, գոռան Տրոյեանք,  
նետ տեղային 'ի յետուստ ։

Գոչեաց յայնժամ Պրիամոսեան ձայն 'ի  
Դոմեդ բարձրաձայն .

« Քեզ, ո՛վ Տիւդեան, ցանգ 'ի Յունաց  
փառք մեծաշուք ձօնեցան .

Շուք 'ի բաղմոց, շուք և խահլից, շուք և  
զեղուն բաժակին .

Բայց արդ 'ի քեզ քրքրել չատցեն, իբրև  
դարձար եղեր կին ։

Ե՛րթ 'ի կորուստ, այ կնամարդի, ե՛րթ  
դու փախիր, վատ արանց,

Զիս ոչ վանես, և ոչ ելցես 'ի մահար-  
ձանս մեր բրբգանց .

Եւ դու մինչ չև գերեվարեալ մեր յոս-  
տանէն կանանի,

Ես նահատակ արձանացեալ ես քեզ կա-  
նուխ տաց դև մի ։

Լըւաւ Դոմեդ, կաց դեդևեալ 'ի սիրա  
խոցեալ իւր 'ի խոր,

Արդեօք ընդ կրուկ առեալ ըզձիսն 'ի  
վէգ խաղալ ընդ Հեկտոր .

Երիցս անգամ ընդ միտ ընդ կիրս աշխոյժ արին դեղևեաց ,

Երիցս անգամ և Արամազդ յԻդեայ սարէն մըռընչեաց :

Մըշան Տրոյեանց 'ի յաղթութիւն փոփոխ մարտին զայն ազդէր ,

Անդ և Հեկտոր խրախոյս զօրուն ձայն մեծագոչ արձակէր :

Տրոյեանք , Լիւկեանք և Գարդանեանք ընթերամարտք , օն արիք ,

Արք զօրութեան լիք , բարեկամք , տուք և մարտիս զօրավիգ .

Անշուշտ այսօր ինձ Չըրուանեանն աղդեաց նըշան յաղթական ,

Ինձ շուք փառաց , 'Է Աբայեցւոց աղէտ գուժեաց դառնութեան :

Անմիտք , որ արդ յարեան դոքա կանգնել զուժակտ զայդ պատուար ,

Այդ վաղափուլդ իմոյն զխորդ բերցէ թափոյն ընդ երկար :

Իսկ ընդ հատեալ պարկէն փոսոյն նըժոյգքն իմ այս օգապար

Սըմբակ հարեալ , 'ի մի ոստիւն վազեալք անցցեն հեշտաբար :

Բայց ես յորժամ 'ի նաւախումքն աս մեծ արկեալ մերձենամ ,

Հուր լափլիզօղ անդ արկանել յուշ ոք ամօցէ ինձ յայնժամ :

Ձի ես ըզնաւան յաճիւն փոխեալ, ըզ-  
 Յոյնս արկից դիթաւալ,  
 Մինչ հեղձամուղձք 'ի հրաբորբոք ծուխ  
 սպտեցին հիքացեալ " :  
 Ասաց , և ձայն ընդ նրժուգաց խրախոյս  
 բարձեալ , բարբառի .  
 « Քսանթէ , Պողարդ արլիք , Եթոն , դու  
 Ղամպ դիւցազն , օն արի 112 .  
 Ինձ ըզդարմանն արդ հատուցէք , զոր  
 ձեզ տանէր 'ի ճարակ ,  
 Ետիոփնի դուստրը քաջին իմ նազելիս  
 Անդրոմաք .  
 Նա հոգ ածեալ ձեզ անուշակ ձրդէր ցո-  
 րեան առաջի ,  
 Եւ էր ժրացեալ , քան ինձ ինքնին , կա-  
 նուխ խառնել ձեզ գինի :  
 Ձայս նա հոգայր , ում և պանծամ գոլ  
 ես փեսայ քաջառոյդ ,  
 Օն արդ թուուցեալք սաւառնեցէք , զա-  
 ւարըն ճոխ մեզ առցուք .  
 Ձասպարն ասեմ ըզՆեստորին , ոյր շուքն  
 էհաս մինչ յերկին ,  
 Ասպար է այդ համակ ոսկի , և զբառնա-  
 լիս ըզնորին :  
 Ըզվարասլանն առցուք յուսոյն քաջա-  
 ձիոյն Գոմեդեայ ,  
 Վարասլանակ է քաջարուեստ գործ ճար-  
 տարին հեփեսոեայ :

Թէ զայդոսիկ մէք աւարեմք, հեւլենք  
անշուշտ զայս գիշեր

Խուճապեսցին, և նաւագնացք ըզծով  
հատցեն ալեբեր” :

**Օ** այս մեծապանծ գոռաց հեկտոր,  
հերա դըշխոյն սրբանեցաւ .

Եւ շարժեցաւ ՚ի գահոյիցն և մեծն Ու  
ղիւմս սարսեցաւ :

Դարձաւ կարգաց ձայն դիցանոյշն առ  
մեծն ասէր Պոսիդոն ,

« Վա՛շ երկրաշարժդ , ո՛չ քոյ կորովդ ա  
ռեալ իսկ է ՚ի պաշտօն :

Տապաստ ահա Յոյնք տարածին , ո՛չ գա  
լարին քո աղիք ,

Որք քեզ յԵգա և յԵղիկէ ձօն շատ ա  
ծեն գեղեցիկ 113 :

Չայն սուր , ո՛վ քաջ , և յաղթուծիւն  
տարցին դոքա նոյն հետայն ,

Թէ մէք ողջոյն , Աքայեցւոց վիպ եղի  
ցուք և վահան .

Վանեմք անշուշտ ըզՏրոյացիս , և բուռն  
առնեմք Որմըզգայ ,

Եւ նա յայնժամ նստցի թախծեալ և  
միայնիկ ՚ի յԻգա ” :

**Ս**րբամբոտեցաւ Երկրասասանն և ձայն  
անդէն ետ արքայն ,

« Բա՛րէ , դու զի՛նչ ՚ի յունկըն մեր ժրախ ,  
հերա հենդնաբան .

Քաւ մեզ կրօուէլ ընդ Արամազդ, սաա  
տիկ հրջօր է և տէր ։

Այսպէս յայնժամ հեր, Պոսիդոն, այր  
խօսեցաւ ընդ ընկեր ։

Այլ որչափ վայր փակէր խրրամն առ 'ի  
նաւացն 'ի պատուար,

Զեղոյր ողջոյն 'ի կառամարոս և յայր-  
ուծի և յասպար ։

Ըզվայրն 'ի բուն պատէր հեկտոր իբրու  
Արէս մեծասաստ,

հեկտոր վիրագն, ում շուք փառաց ձօնէր  
անդուստ Արամազդ ։

Ի հուր յայնժամ դատէր ըզնաւս, թէ  
վէհն հերա Ատրիդին

Չազդէր յողին, յառնէլ խրախոյս կար-  
դալ Յունաց բանակին ։

Յարեաւ Ատրիդ, վրանաց նաւաց ձայն  
բարբառէր խրախուսի,

Ի յաղթ բըռին բարձեալ տանէր լողիկ  
պայծառ ծիրանի 114 .

Կաց 'ի վերայ ահագնակէտ լաստափայ-  
տին Ողիւսեան .

Ի միջակի գոլով լաստին, 'ի կրկին թեւ  
ազդէր ձայն .

Աստի 'ի թեւ մինչ 'ի խորան Տեղամո-  
նեանն Այսայ,

Անտի 'ի թեւ մինչ 'ի խորան ահեղաղօրն  
Աքիլէայ ։

Մոքա կրկին 'ի Թևս վերջինս զևրեանց  
հաւացն ըզհանդէս

Քարշեալք, կային 'ի յաղթ բազուկս  
յանձնասպաստանք մեծապէս :

Չայն մեծագոչ 'ի յայն լաստէն Ատրիդ  
առնէր լըսելի,

« Առահք հելէնք, այնըչաւակք, տես  
լեամբ միայն սանձալի :

Ո՞ւր արդ սարծանք, զոր սանձացաք  
Թէ եմք ըստոյդ 'ի քաջաց,

Երբ 'ի Լեմնոս անդ մեծաբանս բարբա  
ռելք սընոտեաց .

Մինչ կըշտապինդ զեղջերաւոր զեզանց  
ըզթամբս ուտելիք,

Եւ բաժակաց ծաղկասլրսակ զգինին ար  
բեալ քամելիք :

Ա՛յ սոռատողք, իբրու 'ի մարտ շատ ի  
ցէ մին 'ի ձերոց

Ընդդէմ հարիւր արձանանալ կամ եր  
կերիւր Տրոյացւոց :

Չարժեմք զարդիս և ոչ ընդդէմ միոյդ  
քաջին հեկտորի,

Որ արդ ըզնաւս արագ արագ ծախէ 'ի  
հուր սոսկալի :

Հայր Արամազդ, արդեօք և զայլ ոք յար  
քայից քաջազանց

Այսչափ առակ գըձձեցէ՞ր դու մերկեալ  
ողջոյն 'ի փառաց :

Այո, ո՛վ տէր, ես ինքն ըզմին 'ի քոյ  
բազնաց խընկելի

Աստ նաւագնաց հասեալ չարաւ, երբէք  
անտես չարարի :

Այլ 'ի բազինս ողջ այրեցի ես զխտ և  
ճարպըս զեզանց,

Իղձ լինէի քանդել զԵղիօն զամրապա-  
րիսպն 'ի հիմանց :

Լից տէր, զուխտն իմ, գէթ փախըստեամբ  
տո՛ւր ճողոսպրել մեզ աստի,

Այդչափ նըկու՛ն մի տար ըզՅոյնս Տրոյ-  
եանց լինել խուժանի ʔ :

Լսաց, և հայրն 'ի յարտասուս գորովե-  
ցաւ արքային,

Յոյց ակնարկի թէ ժողովուրդք չէն 'ի  
կորուստ, այլ փրկին :

Արծիւ յըղեաց թռչնոց զարքայն, որ  
ճախր առեալ գայր 'ի գիւլ,

Եւ որթ զեղին թեթևընթաց կալեալ ու-  
նէր 'ի մագիւլ :

Բաց ըզճապուուն և 'ի Դիայ արկ 'ի  
չքնաղն 'ի բազին,

Ուր Աքայեանք պատգամախօսն Արա-  
մազդայ յաղէին :

Իբրև 'ի յակն արկեալ տեսին, զի 'ի Դիայ  
գայր թռչուն,

Հրահոս թափով 'ի Տրոյացիս ահեղ խաղ-  
մի ձայն ետուն :

Բայց դիմագրաւ ժրտեաց ոչ որ, մինչև  
Դոմեդ կառարչաւ

Անց ընդ խրրամն, ելնահատակ և 'ի մար-  
տինն խառնեցաւ :

Ինքն առաջին արկ դիտասպաստ զայր 'ի  
Տրոյեանց 'ի զօրուէն ,

Փրադմոնիսեայ էր սա որդի Աբեղայոս  
քաջազէն :

Սա խուճասպեալ ճեպէր ըզձիսն առ 'ի  
փախուստ նըշաւակ

Թիկնադարձոյց, շէշտ 'ի քամակն եհար  
Դոմեդ ըզնիզակ .

Ընդ մէջ ուսոց վարսեալ ընդ լանջն  
էանց 'ի Թափ սայր տիգին ,

Տապալեցաւ նա 'ի կառացն, և զէնք ջը-  
ռինդն հընչեցին :

Յարեաւ ապա Ագամեմոնոն և Մենեղաւ  
նահատակ ,

Ապա Այասք հըզօրք հուժկուք դիմա-  
գրաւէն շահատակ .

Ըստ սոցանէն Իդոմենէս, և իւրն համ-  
հարզ քաջընտիր ,

Սա Մերիոնն էր Ենիւղեայ մարդախան-  
ձին զուգակիր :

Եւրիւպիւղոս ըզհետ որդին Եւեմոնեայ  
դիւցազնեան ,

Իսկ իններորդ Տեւկրոս լարող կորովա-  
ձիգ աղեղան :

Սա Այասայն Տեղամոնեան կաց 'ի ներ-  
քոյ վահանի ,

Այաս զվահան զիւր կարկառեալ ունէր  
նըմին հովանի .

Դիտէր Տեւկրոս շուրջ 'ի խրուան թէ  
զոք խոցէր մահաբեր ,

Եւ նա առեալ վէր զօրհասին տապաստ  
յերկիր տարածէր ,

Ինքն ընդ ճապուկ վազէր յԱյաս որպէս  
մանուկ առ մայր իւր ,

Եւ սա ըզնա ընդ հովանեաւ յաղթ վա-  
հանին իւր առնոյր :

Արդ 'ի Տրոյեանց զո՛ առաջին արին Տեւկ-  
րոս արկ տապաստ .

Նախ զՈրսիզոք և զՈրմինոս , խոցեաց ա-  
պա զՈփեղաստ .

Նոյն ըզԴետոր , ըզԲրոմիոս , ըզՂիւկո-  
փոնտ քաջարի ,

ԶՄեղանիսրպոս , զԱմոպանէս , սա Պո-  
ղեմնեայ էր որդի .

Ողջ ըզսոսա տապաստ յերկիր անդ խիտ  
առ խիտ արկանէր ,

Եւ կորովի յաղեղանէն Տրոյեանց փա-  
ղանգն եղծանէր :

Ետես ըզնա Ագամեմնոն , խնդայր ար-  
քայն քաջարանց ,

Չոքաւ առ նա կաց առ ընթեր , խրա-  
խուսական ճայն կարգաց .

«Տեղամոնեան պետ ամբոխից, Տեւկրէ  
գըլուխ փարեւի,

Հար մի գըլար, գու հեւլենաց լոյս ե-  
ղիցիս արփենի .

Շուք և հօր քում Տեղամոնին, որ զքեզ  
սընոյց ըստընդիաց,

Եւ հարձորդիդ գուլով նըմա, 'ի տուն գը-  
թով ժողովեաց :

Արդ գու 'ի փառս ան բարձրացո ըզ-  
հայրըդ քո բացական,

Եւ ես խոստումն, որ յապագայս ան-  
շուշտ լիցի, քեզ կարդամ :

Թէ ինձ Դիոսն ասպարափառ տացէ և  
մեծն Աթենաս,

Այդ գեղաշէն Եղիոնին աւեր ածել և  
օրհաս,

Քեզ նախ յետ իմ ես 'ի քո ձեռս տամ  
մրցանակ ըզփառաց,

Կամ պատուական եռոտանի, կամ զոյգ  
ձիոց ընդ կառաց,

Կամ օրիորդ քեզ վայելուչ ունեւ ընդ  
քեզ անկողին » .

Ասաց, անդէն այրն հոյակապ Տեւկրոս  
կրկնեաց արքային .

«Չիարդ գու զիս զայր ինքնագրաւ դըր-  
դես, Ատրիդ գերափառ,

Որ իմովսանն յաղեղն 'ի նետ չեմ դըլա-  
ցեալ վատաբար .

Այլ մինչ գոքա ընկրկեցան 'ի յԵղիոն  
տարագէմ,

Ես նետահար քաջորերոյն անդուլ տա-  
պաստ արկանեմ:

'Նեոք ութ թըւով երկայնասայրք յաղե-  
ղանէս կորովի,

'Նեոք գրկալիր քարշեալք ոստեան 'ի նը-  
պատակ կըռակի:

Ողջ 'ի մարմին քաջ պատանեաց թափ  
վարսեցան շէշտակի,

Այլ գեռ փըքինն իմ ոչ խոցեաց ըզ-  
շունըդ զայդ կատաղի ʞ:

Ասաց, և նետ այլ 'ի լարէն նա պինդ  
քարշեաց գրկալիր,

Շէշտ 'ի հեկտոր կըռեաց հանդէպ, խո-  
ցեւ ըղձայր 'ի նանիր:

Եւ 'ի դերևս, ըզԳորգիւթոն զայրըն խո-  
ցեաց բառացի,

Եհար 'ի լանջն, և Պրիամուն էր սա որդի  
փարեղի:

Մայրն իւր ըզսա այն արքային ծընաւ  
ածեալ յԵսիւմեայ,

Դիցանուշից նըման մարմնով չքնաղն 'ի  
գեղ Վաստնիրա:

Որպէս մեկոն 'ի պարտիղի ծանրեալ  
պտղովն ակաղձուն,

Թէքէ ըզգլուխ ծանրաբեռնեալ և տա-  
րափով գարնայնոյն,

- Նոյն օրինակ յուսոյն վերայ 'ի դառնու  
թեան օրհասին ,
- Ըզգլուի ծանրեալ սաղաւարտէն խոնար  
հեցոյց նազելին :
- Տեւկրոս կրկին նետեաց յԵկտոր, ըզձայր  
հարուլ 'ի յոգի ,
- Վ ըխպեաց դարձեալ, զի Ապողոն ըզնեան  
արար զարտուղի :
- ԶՅրբեպողեմ հար ըզնորա ըզկառավար  
քաջալանջ ,
- Կըշիւ փըքինն հարաւ թափանց խոցեաց  
զըստինան առ 'ի լանջ :
- Նա 'ի կառացն 'ի վայր հոսեալ, ձիքն ա  
րագունքըն շըրտեան ,
- Եւ դիտապաստ զաջօք նորա ըստուերք  
մահու պատեցան :
- Կառավարին օրհասն 'ի խոր ըզսիրտ խո  
ցեաց հեկտորին ,
- Թող անդ տապաստ , թէպէտ գեւոյր ա  
ղէքն ընդ մահ ընկերին .
- Եղբօրն որ կայր մերձ առ ընթեր , Կեբ  
րինին ետ հրաման ,
- Նա ետ ընդ ետ հնազանդ քաջին առ ըզ  
ձիոցն երասան :
- Փայլակնացայտ ճեպ 'ի կառաց վազեաց  
հեկտոր 'ի գետին ,
- Գոչէր ահեղ, և որձաքար առ և կալաւ  
'ի բըռին .

Խաղայր նովաւ վարաղաբար կըշիւ հան  
դէպ 'ի Տեւկրոս ,

Ջախել ըզնա սիրտըն քաջին վառէր իբրև  
բոց հրահոս :

Նետ դառնութեան այն ինչ Տեւկրոս 'ի  
կասարձէն իւր հանէր ,

Եւ հաստապինդ լարին վերայ անդ 'ի  
գըղզուկն յարմարէր ,

Անդուստ հեկտորն անհղազօր վէմն 'ի  
բըռին անարի ,

Եհաս առ նա , որ հանդիպոյ փըքին քար-  
շէր կորովի .

Հար ըզ Տեւկրոս ասառաժիւն 'ի վայր  
մահուն ոգետանջ ,

Ուր խաղալիքն անջրպետէն ըզսարանոցն  
և ըզլանջ .

Խզեաց ըզնեարդն , և 'ի սլտողան ձեռք  
Տեւկրոսին թօշնեցաւ ,

Անկաւ 'ի գուճս և 'ի ձեռաց լարեալ  
աղեղըն ղերծաւ :

Չեւիք Այաս զիւրն հարազատ , որ կայր  
տասաատ հիքաբար ,

Վազեաց անդէն և բակ գործէր յամրա-  
ծածուկն 'ի յասպար :

Ապա դիւցազն այն Ալաստոր և Եքիսեան  
Մեկիստոս ,

Ամուք այս սերտ նիզակակցաց բառնան  
ողամբ ըզՏեւկրոս .

Ի նաև առեալ ածին ըզնա , հեծէր  
Տեւկրոս խոր յողոց .

Յայնժամ Դիոս ըզՏրոյացիս վառեաց  
կրկին իբրև բոց :

Սինչ 'ի սարկէն փոսոյն վանեն Տրոյ-  
եանք ըզզօրն Հելլենաց ,

Հեկտոր յառաջ նահատակեալ շանթ թօ-  
թափէր 'ի յաչաց :

Եւ որպէս գամփռ յանձնապաստան 'ի  
կինքն ոտից ճեպընթաց ,

Ըզհետ մտեալ կամ զառիւծուն , և կամ  
կընճից վայրենեաց ,

Յետուստ նոցուն 'ի թամբ զըստին ժա-  
նիս հարուլ նըկըրտի ,

Եւ անքըթիթ կայ լտեսէ ըզդարձա-  
դարձ գազանի ,

Այսպէս Հեկտոր զԱքայեցիս հետա-  
պընդեալ հալածէր .

Նոքա փախչին , սա ըզնոցուն տապաստ  
ըզվերջն արկանէր :

Փախեան եկին մինչ 'ի սարկէն շերտա-  
փակացն 'ի պատնէշ ,

Եւ շառք թըւով 'ի սուր Տրոյեանց ան-  
կան Հելլենք գէշագէշ :

Խոնեալք 'ի նաև ձեռք 'ի յերկին խրա-  
խոյս միմեանց կարգային ,

Դից բոլորից անդ մեծամեծ ձօն մաղթա-  
նաց կարգեցին :

Յայս կոյս յայն կոյս Հեկտոր հրաշունչ  
 նըժոյգս յածէր գիսապանծ ,

Աչք ունեւոյլ ըզԳորգոնին կամ զԱրեսին  
 մարգախանձ :

Ետես Հերա գորովեցաւ լուսածըղին  
 դիցուհի ,

Եւ ճեպ ընդ ճեպ արագաթև բան յԱ-  
 թենաս բարբառի .

« Բա՛րէ բա՛րէ , մազդեզըն քաջ , գրա-  
 ւեաց ըզՅոյնս օրահաս .

Յողւոց պարզեն , դոքա մէք ո՛չ խընամ  
 կալցուք , Աթենաս :

Ահա դոքա առեալ զանձամբք զիւրեանց  
 վիճակ դառնութեան ,

Մոլեգնութեամբ միոյն մարդոյ զարգիս  
 ՚ի մահ կորանան :

Գըժոխըմբեր մոլեալ է դա , այրէ ծախէ  
 իբրև բոց ,

Դա է Հեկտոր Պրիամոսեան , այր մահ-  
 առիթ բիւր ցաւոց ” :

« Դա ընդ բըռամբ Աքայեցւոց , Պալլաս  
 կրկնեաց դիցուհի ,

Դա այժմէն իսկ փրչէր զոգին տապառու  
 յերկիր հայրենի .

Սակայն հայրն իմ յայլ խելս եղեալ խոր-  
 հուրդ նիւթէ դառնութեան .

Ո՛վ բռնութեանս , ցանդ դիմամարտ իմ  
 խոչ ընդ ոտն է ցասման .

- Դա ոչ յիշէ ես քանի՛օն քրանաւաստակ  
յանձն առի ,
- Զորդին նըկուն յԵւրիսթոսին բընու-  
թենէն թափեցի .
- Յորժամ որդին աչք 'ի յերկին շատ ինչ  
հեղոյր յարտասուաց ,
- Յայնժամ յերկնից սատար նըմա զիս Ա-  
րամազդ արձակեաց :
- Թէ նախիմաց ես այս իրաց էի 'ի միտս  
անըզբօս ,
- Երբ 'ի դըժոխս ահեղանիդս յըլեաց ըզ-  
նա Եւրիսթոս ,
- Ըզգամփռ ըղիսօլ Բարապանին առնուլ  
'ի մութ Երեբէն 115 .
- Անշուշտ չասրէր նա յորձանաց Ստիւ-  
գեան 'ի խոր վըտակէն 116 :
- Եւ արդ զինև զանց արարեալ զըզուէ  
զիս հայրս 'ի ժամուն ,
- Եւ պնդեալ է զիդձն հարկանել նա ըզ-  
թետեայ դիցուհւոյն .
- Այն որ ըզծնօտն առեալ Ղիայ , ծունկ  
համբուրեաց ըզնորա ,
- Եւ շատ մաղթեաց շուք հարկանել քա-  
ղաքաւերն Աքիլեայ :
- Օր եկեսցէ , կարդայ դարձեալ զիս խա-  
ժակն իւր փարելի ,
- Այլ դու արի՛ , և կազմեսցես ըզյաղթ  
նըժոյգան 'ի կարգի :

Ես միջամուխ յասպարազէն 'ի տուն մե-  
ծին Չըրուանեան ,

Ի զէն 'ի զարդ համակ վառեալ 'ի հան-  
դիսի մարտ խաղամ :

Տեսից թէ այդ Պրիամոսեանդ որ արդ-  
գոռայ սիգաբար ,

Խնդայ արդեօք, տեսեալ ըզմեզ յայս մի-  
ջամուխ 'ի պայքար :

Նա և առ նաև Աքայեցւոց ոք դիտա-  
պաստ 'ի Տրոյեանց

Ճարպով մարմնովք կուր գէշագէշ լեցի  
Թըռչնոց, նոյն և շանց » :

Լսաց Պալաս, և դիցանոյն անսաց հե-  
րա վեհափառ ,

Եւ Չըրուանեան լուսածըղին կազմեաց  
ըզձիսն ոսկեսար :

Բայց Աթենաս Արամազդեան մեծն օ-  
րիորդ գերունակ ,

Տեռ զիւր քնքուշ ըզծածանեալն արկանդ  
'ի հօրն 'ի յատակ ,

Տեռ երփնազարդ զոր ինքն իւրովք նի-  
տաց ձեռօքն և գործեաց ,

Եւ ամպրոտպեանն Արամազդայ զրահիւք  
անձին պաշտպանեաց :

Չինու զարդու վառէր 'ի մարտ գերաշ-  
խարան հանդիսի ,

Ի բոցեղէն ել նա 'ի կառս և տէգ կալա-  
անարի .

Տէր հաստաբեատ, յաղթ և հարուստ ըզ-  
խումբ ճնշել ըզքաջաց,

Երբ այս արի Դուստր հօրամոյն վառի  
ընդդէմ դիւցազանց :

**Ղ**եպ ետ հերա, խարազանեալ ձիքն օ-  
դաչուք սաւառնին,

Եւ դուրք ինքնին բացան երկնից, որոց  
և յամբ պահ ունին .

Սոցա են յանձն երկինք անդորր, և Ո-  
ղիւմպոս վերնաճեմ,

Թէ 'ի բանալ թէ 'ի փակել ըզդարամուրս  
ամպեղէն 117 :

Հըրուս գանին ձիս զօդապարսն ուղի ընդ-  
այս վարեցին,

ՅԻգեայ սարէն զայն յակն արկեալ ցա-  
սեաւ Դիոս ահագին .

Չայնեալ զԵրիս ոսկեթևեան հրեշտակ  
յրդեաց վաղագոյն,

« Սրացիր, Հիրիկ, դու ճեպ ընդ ճեպ  
դարձո զգոսա 'ի յուղոյն .

Արդէլ սանձեա, կըքրէն ընդ իս տագ-  
նապ վերջին է դոցա,

Պատգամահա կարգամահեղ, անշուշտ  
լցցի առ յապայ .

Ի լուծ կառաց ըզձիսն արագ շանթեալ  
առնեմ իեղանդամ,

Ջախեալ ըզկառան, յաթոռակէն 'ի վայր  
հոսեմ զերկոսեան .

Եւ վերք գոցա յիմոյն շանթէ ոչ տասն  
 ամեայք բուժեցին ,  
 Ուսցի խաժակն , 'ի վէգ ընդդէմ զինչ է  
 խաղալ ծընողին :  
 Բայց ընդ Հերա ոչ յոյժ սրբանեալ , չիք  
 իմ այնչափ ինչ զայրուց ,  
 Յանգ խոչ դնել իմ խորհրդոց , այն է  
 նորա բոյս բարուց ” :  
 Սարդաց պատգամ , և մըրըրկոտն հրեշ-  
 տակ բանբեր յարքայէն  
 Սաւառնեցաւ յիդեայ բարձանց , եւ յՈ-  
 ղիւմպոս երկնաձեմ .  
 Ընդառաջեաց հանդէպ սեմոց բազմա-  
 գագաթն Ողիւմպեայ ,  
 Սանձ եդ նոցա , տայր ըզպատգամն ա-  
 հագնալուր զՈրմըզայ .  
 “ Ո՞ր գիմեալ էք , և զի՞ այդչափ ծով  
 խորհրդոյն ձեր ծըփայ ,  
 Քա՛ւ ձեզ սատար յառնել Յունաց . չիք  
 ինչ ձեզ թոյլ 'ի Դիայ :  
 Գոյժ տամ անվրէպ . 'ի լուծ կառաց ըզ-  
 ձիսդ արագ խեղեցէ ,  
 Զախեալ ըզկառան , յաթոռակէն ըզձեզ  
 տապաստ արկանէ .  
 Եւ վերքըդ ձեր շանթահարեալք ո՛չ  
 տասն ամօք բուժեցին .  
 Ուսցիս խաժակն , 'ի վէգ ընդ քում զինչ  
 է խաղալ ծընողին :

Բայց ընդ Հերա ոչ յոյժ սրտանեալ, չու-  
նի այնչափ ինչ զայրուց ,

Զի ցանգ նըմին սատան յառնեւ այն է նու-  
րա բոյս բարուց :

Իսկ դու անսանձ անշուշտ արդեօք ժը-  
տիս ժըպիրհ քո ակամբ

ՅՍրամազդ Հայրն ամբառնալ տէգ հաս-  
տահարուստ գեղարդեամբ ʔ :

Բարբառեցաւ, սրացաւ ՚ի նոյն սաւառ-  
նաթևըն բանբեր ,

Անդուստ Հերա ձայն զայս կնքեալ ընդ  
Աթենաս բարբառէր .

«Ասպարազէնն Արամազդայ, բա՛րէ, ծը-  
նունդ գերափառ .

Օ՛ն անգր ՚ի մէնջ վասըն մարդկան մարտ  
ընդ Դիայ և սայքար :

Թող մին մեռցի, և մին կեցցէ ըստ սահ-  
մանի օրհասին ,

Ինքն ըստ կամի Տրոյեանց Յունաց վը-  
ճար տացէ զարժանին ʔ :

Ասաց, ըզձիս սալասըմբակ դարձոյց ընդ  
կրուկ ՚ի վայրէն ,

Ժամք սաշտօնեայքն ըզբաշասպանծ նը-  
ժոյգսն առնուն լուծանեն :

Ըսպաս հարեալք յանմահական մըսուրս  
ածեալ կապեցին ,

Ապա ըզկառսն առ լուսափայլ որմովքն  
առին յեցուցին :

Իսկ զիցանոյջքն 'ի յոսկեղէն եկին նըստան 'ի գահուն ,

Ակումբ ընդ զից առնուն թախծեալք 'ի սիրտ իւրեանց գրգասուն :

Բայց յՈղիւմպոս յԻդեայ ըզձիս գեղեցկանիւ ընդ կառաց

Վարեաց Դիոս , յարփիաբնակ հաս 'ի կայանն երջանկաց :

Վէհ Պիսիդոն լոյծ 'ի կառաց զանմահ նըժոյգան ըզնորա ,

Կրտաւ ածեալ քօղ արկ կառացն եդ խարսիացն 'ի վերայ :

Անց բազմեցաւ գահն յոսկեղէն արփիահրաշըն Դիոս ,

Եւ ընդ ոտիւք լայնասահման դըլըրդեցաւ Ողիւմպոս :

Միայն հերա և Աթենաս բազմեալ կային մեկուսի ,

Ոչ բարբառ ինչ և ոչ հարցումն առնեն մեծին արքայի :

Այլ խորագգեացնա 'ի յոգին , խորհուրդ՝ ծանեալ ըզնոցա ,

« Զի՞ կայք , ասէր , թախծեալք այդպէս դու Աթենաս և Հերա :

Բա՞ դուք ոչ շատ քրտնեցարուք շքեղ մարտին յասպարէս

Տրոյեանց յեղծումն , որոց անհաշտ դուք քինանայք դառնապէս .

Այո այնչափ է իմ կորովս, այնչափ բա-  
զուկս ուժաւոր,

Ձիս ոչ վանեն որչափ անմահք են յՈ-  
ղիւմսոս բնակաւոր :

Բայց ձեր անշուշտ փափուկ անդամքն  
աստէն դողմամբ սարսեցին,

Մինչ չե ըզմարտն՝ի յակն արկեալ և զար-  
հաւիրս ըզմարտին :

Այլ ձեզ կարդամ անդարձ վըճիւ, դուք  
չեշտ հարեալք յիմ շանթից,

Ոչ այլ կառօքդ՝ի յՈղիւմսոս դարձլիք՝ի  
գահն անմահից ʞ :

Ի ըւան Հերա և Աթենաս միմեանց նըս-  
տեալք առ ընթեր,

Լուռ և մընջիկ Տրովագացւոց այր այր չա-  
րիս խոճոճէր :

Մեծն Աթենաս կաց անմըռունչ, սան-  
ձեաց լեզուին ըզբարբառ,

Միայն մըղձկէր նա գառնապէս և ընդ  
Դիոս քրթթմընջայր .

Հերայն Թափոյն ոչ հանդուրժեալ ըզ-  
ծով մաղձոյն փլուզանէր,

«Ձինչ Չըրուանեանդ ահեղազօր, զինչ  
մեզ սպառգամ կարդացեր :

Չայդ քո բազկին գիտեմք և մեք զոյժ և  
կորովն անվըկանդ,

Այլ մեք Յունաց զաղէտըն լամք՝ի գուժ  
սրտի և ՚ի խանդ .

Դոքա տապաստ մահ դառնու թեան առ-  
 ցեն զանձամբք յօրհասէն .

Այլ թէ հրամես , մեք անձնապահք 'ի  
 բաց կացցուք 'ի մարտէն :

Բայց պիտեան Աքայեցոց խորհուրդ  
 տացուք և իմաստ ,

Զի մի ողջոյն արկցին դոքա քոյին ցաս-  
 մամբ դիտապաստ » :

Տեսցես , աչեղդ , եթէ կամիս , Ամու-  
 թուպայինն որոտաց ,

Գոյժ սաստկագոյն մեծ Զըրուանեանս  
 վաղիւ արկից հեղէնաց .

Քանզի հեկտոր ոչ դըլասցի քաջն 'ի մար-  
 տին 'ի հանդէս ,

Մինչև 'ի դուրս փայլակնացեալ չելցէ ա-  
 րագն Աքիլէս .

Յաւուր յորում միմեանց մարտի ձայն  
 կարգասցեն առ նաւուք ,

Ի վրէժ արեան քաջ Պատրոկղեայ շտա-  
 պեալք 'ի մեծ 'ի յանձուկ :

Անդարձական է դատակնիքն , ես փոյթ  
 չառնեմ քոյդ ցամանն ,

Թէպէտ ծովուն և ցամաքին գնասցես  
 յանհուն հեռաստան .

Անդ ուր Զըրուանն և Յապետոս կան  
 տարադէմ և նսաին ,

Ոչ յօդ բերկրին և ոչ 'ի լոյս , զոր եր-  
 կնաճեմ տայ արփին ,

Այլ Տարտարոս անդրնդախոր շուրջ  
ըզնոքօք ունի բակ .

Թէ մինչև անդր արտասահման լիցիս ,  
չեմ ինչ դժգամակ :

Խոժոռեաց դու , ակըն չածեմ . չեք լըր-  
բենի քեզ նրման » .

Ասաց , և Հեր լուսածըղին չիչևեաց բա-  
նալ ըզբերան :

Մնկաւ յայնժամ յՈվկիանոս լոյս գեր-  
արփի արևուն ,

Եւ աննըշոյլ մուժ գիշերին սրփուէր յեր-  
կիր բարեբուն :

Մուտն արեգին էր վտորմբեր Տրովադա-  
ցոց բանակի ,

Յունաց ախորժ և անձկացեալն եհաս  
խաւար գիշերի :

Խմբէր յայնժամ ըզՏրոյացիս Հեկտոր  
բացեայ 'ի նաւաց ,

Առ յորձանուտ գետոյն ափամբ , վայր  
զերծ 'ի գէշ դիականց .

Յերիվարաց իջեալք տային ունկընդրու-  
թիւն գիւցազին .

Խօսէր Հեկտոր , էր մետասան կանգուն  
նիզակ 'ի բըռին .

Ճաճանջ լուսոյ 'ի հանդիպոյ սայր սը-  
ղնձին հատանէր ,

Եւ ըզնովաւ ոսկի մանեակ շուրջանակի  
բողորէր :

- Ի յայս նիզակ յեցեալ հեկտոր , արա-  
գաթև տայր բարբառ ,  
« Լուարո՛ւք Տրոյեանք և Դարդանեանք  
և դուք համհարզք քաջափառ ,  
Դառնալ արագ ես ասէի 'ի յԵղիօնն  
հողմահար ,  
Քակեալ ըննաւս և ըզհէլլենս առեալ  
կապուտ և յաւար :  
Այլ մեծապէս սատար սոցա մուծըն  
կանխեալ գիշերոյն ,  
Զարդիս ըննաւս և ըզհէլլենս փրկեաց  
յափուռնս 'ի ծովուն :  
Այլ օն եկայք , ընծրիս առցուք պատ-  
կառ կացեալ գիշերի ,  
Լուծէք ըզձիսըն գիսապանծ , ճարակ ար-  
կէք առաջի .  
Ածէք արջառս 'ի քաղաքէն , ածէք և  
յոյրս 'ի խաշանց ,  
Քաղցրաճաշակ հանէք գինի և 'ի տա-  
նէն առէք հաց :  
Արագ արագ և փայտակոյտ շատ 'ի վայ-  
րաց կուտեսցին ,  
Խարոյկ արկցուք զողջոյն գիշեր մինչ յա-  
ռաւօտ լուսածին .  
Խիտ խարուկաց գնասցեն ցոլմուռնք մին-  
չև յերկին վերամբարձ ,  
Գուցէ ընդ մուծըն գիշերոյս սլարասլ  
գըտցէ գունդ Յունաց .

Գուցէ ընդ յաղթ ընդ մըկանունս 'ի ծով  
անկցին փախըստեայ ,

Բայց մի անքիրտն և խաղաղիկ ելցեն նա-  
ւացն 'ի վերայ .

Այլ շատք դոցուն նա և 'ի տուն տարցին  
ըզվերս և զհարուած ,

Կամ նետահարք յոսանուէն 'ի նաւ , և  
կամ խոցեալք 'ի տիգաց :

Զի մի և այլք յաւակնեսցին մեզ ձայն  
կարդալ յասպարէս ,

Եւ Տրոյացւոց ածեւլ քաջաց գերաշխա-  
րանըն զԱրէս :

Աղէ ելցեն Քարոզքն արդոյք ձայն 'ի  
յոստան տացեն արդ ,

Ձայն մեր արբուն պատանեկաց և ծե-  
րունեացն ալեզարդ .

Դէտք ոստանին կացցեն դոքա 'ի մեր բըր-  
գունս դիւցաշէն ,

Եւ ժըրագլուխ դաս կանանւոյն հուր  
մեծ 'ի տունս վառեսցեն :

Պահկերուծիւնք աննիրհեւիք յայս կոյս  
յայն կոյս կարգեսցին .

Չէ անդ խուժան գուցէ քըմինք դաւ  
գործեսցեն քաղաքին :

Աղէ բանքս իմ կացցեն , ո՛վ քաջք , ան-  
շուշտ լաւ է զոր խօսիմ .

Վաղիւ այլ բան քաջաց Տրոյեանց ատե-  
նախօս լինիցիմ :

Յարամազդայ և յանմահից մաղթեմ յու-  
սով մեծատենչ ,  
Ըզշանց վոհմակդ օրհասական տարամեր  
ժեւ առ 'ի մէնջ .  
Բն օրաչարն առ ըզդոսա և սեւաւ նա-  
ւուք աստ էաճ ,  
Բայց զայս գիշեր մէք տըքնաբար կալցուք  
մեզէն պահ անձանց :  
Վաղ քաջ ընդ այգն 'ի զէն 'ի զարդ զրա-  
հաւորեալք քաջապէս ,  
Հորդան 'ի նաւըս դրդեացուք զարենա-  
խանձրն զԱրէս :  
Տեսից եթէ զիս 'ի նաւաց թիկնադար-  
ձոյց 'ի պատուար ,  
Վանէ Դոմեզն այն կորովին , թէ ես վա-  
նեմ քաջաբար :  
Տապաստ արկից և զարիւնոտ կապուտն  
առից յաղթական .  
Վաղիւ ցուցցէ զկորով բազկին , ժուժայ  
խմում գեղարդան :  
Անկցի անշուշտ նա գիթաւալ նահատա-  
կաց 'ի դասուն ,  
Անկցին և շատք նորայն համհարզք վա-  
ղիւ 'ի յելս արևուն :  
Այսպէս ես ինքն անծերական անմահ  
եղէց մշտակայ ,  
Պատուեալ որպէս պատուի Պալլաս , և  
Ապողոն մեծ արքայ .

Իսկ Հեղինաց արագամահ օրհաս ածցէ  
օր վաղուին » .

Լուեաց Հեկտոր , և Տրոյացիք խնդամը-  
տեալք գոչեցին :

Մենուն ըզձիս քրտնահարեալս և 'ի լը-  
ծոյն արձակեն ,

Եւ առ կառօք իւրաքանչիւր ածեն ըզ-  
փոկս և կասեն .

Չոքան առին 'ի քաղաքէն արջառս և  
յոյրս ըզխաշանց ,

Քաղցրաճաշակ հանին գինի , բարձին 'ի  
տանց և ըզհաց .

Արագ արագ և փայտակոյտ շատ 'ի վայ-  
րաց կուտեցին ,

Եւ 'ի դաշտէն հողմունքն 'ի վեր ըզծուին  
յերկին տանէին :

Խրախոյս առեալ 'ի Թշնամիս լինել ան-  
շուշտ գամագիտ ,

Գիշերօթին և խարուկաց հուր վառե-  
ցին խիտ առ խիտ :

Որպէս պայծառ բակ ըզլուսնիւ աստեղք  
հատեալք իբրև բոց

Ճաճանչանան , յորժամ և օդք սուրբ են  
և զերծ 'ի հողմոց .

Անդուստ և դէտք , գըլուխք լերանց ,  
գան և մայրիք յերևան ,

Եւ ընդ երկինըս պատառեալ բանի ե-  
թերն անսահման .

Անդ ամենայն բոլբ աստեղաց ակնասլա  
րարք տեսանին ,

Եւ 'ի սիրտ իւր խնդամբտի կացեալ հո-  
վիւն 'ի զընին 118 .

Այնչափ ընդ մէջ նաւատորմին և Քսան  
Թոսին հոսանաց ,

Մերձ յԵղիոն 'ի Տրոյացւոց բոցք վառե-  
ցան խարուկաց :

Ի գաշտն ողջոյն արկան խարոյկք բոցա-  
ճաճանչք թիւ հազար ,

Եւ առ մէն մի յիսուն վառեալք նստին  
առ լոյս բոցավառ :

Իսկ երիվարք գարի , վարսակ , կան մերձ  
կառաց և ուտեն ,

Սպասեալք մինչև այդ ծագեսցէ 'ի գե-  
ղափայլ իւր գահէն :





# ԵՂՒԼԿԱՆ




Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Թ .

ՆԱԽԱԴՐ ՈՒԹԻՒՆ

Թախծութիւն և տագնապ բանակին  
 Յունաց : Ագամեմոնն ատեան խմբէ , և  
 առաջի առնէ լքանել զՏրոյիա : Ընդդէմ  
 դառնայ քաջութեամբ Դիոմեդէս ընդ  
 Նեստորայ : Նեստոր յառանձին ատենի  
 յորդոր տայ Ագամեմոնի յղել հրեշ-  
 տակս առ Աքիլլէս հաշտ առնել զնա ըն-  
 ծայաբեր աղերսիւ : Ոգիւսէս և Այաս  
 և Փիւնիկ ծերունի դաստիարակ Աքիլ-  
 լէայ ընտրին 'ի հրեշտակութիւն : Զար-  
 մացումն Աքիլլէայ և հիւրամեծարու-  
 թիւն նորա : Յորդորակ Ոգիւսէայ յա-  
 մոքել զԱքիլլէս , ճարտարախօս : Պա-  
 տասխանի Աքիլլէայ գիւցազին , խիստ և  
 անողոքելի : Փիւնիկ ծերունի 'ի զուր հը-  
 նարի ամոքել զԱքիլլէս : Այասայ կորո-  
 վաբանութիւնն : Դառնան հրեշտակք  
 ունայնաձեռն : Ոգիւսէս պատմէ Ագա-  
 մեմոնի զբան հրեշտակութեանն : Դիո-  
 մեդէս քաջալեր տայ Յունաց 'ի պատե-  
 րազմ 'ի դալաւուրն : Զօրն գնայ 'ի ննջել :

Այս հագներգութիւն և յաջորդդ ու-  
 նի զմի գիշեր զքսաներորդի եօթներոր-  
 դի աւուրն :

Տեսարանն է առ ծովափամբ 'ի նաւա-  
 կայս Յունաց :



## Ե Ղ Ի Ա Ն Ա Ն

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Թ .

ԼՅՍՊԷՍ Տրոյեանք սլահ արկանեն, այլ  
Յոյնք 'ի դից խուճապին,  
խուճապ ընկեր աստուածասասա ցրտա-  
սառոյց երկիւղին :

Ծուփ ահագին մըղձկեալ ցաւոյն զա-  
ւագորեարն համակեր,  
Զօրէն յորժամ հողմունք կրկին ըզծով  
յուզէն ձկնաբեր .

Հիւսիս, զեփիւռ մըրըկեալք յանկարծ 'ի  
Թրակիոյ գալով գան,  
Եւ խուճապեալք ահեղագոչ մըլժին կո-  
հակք դիզանան ,

Ծըփան և շատ մամուռ և լոռ ժայթքեն  
 'ի դուրս 'ի ծովէն,

Սապէս Յուդայ ամբաւ ծըփանք ըզսիրտն  
 ըզլանջ փեռեկէն :

Յոյժ դառնաղէտ Ագամեմոնն 'ի խոր  
 խոցեալ 'ի Թախիծ

Շըջէր երէր, հրաման կարդայր քաջա-  
 հընչող Քարոզից .

Ատեան բանալ, և յանուանէ զայր այր  
 կոչել առանձին ,

Մի բարձրաձայն . և ինքն արքայն քեր-  
 տըն քրտնէր առաջին :

Խմբեալք յատեան, նստան Թախսեալք .  
 յարեալ Ատրիդ, եկաց լուռ .

Կայր և հեղոյր ըզգերարուօսը իբրև աղ-  
 բիւր սևաջուր .

Աղբիւր, որ բարձր յանկոխ ժայռէն  
 ջուր իմն հոսէ խաւարին ,

Այսպէս արքայն խոր 'ի յոգւոց հանեալ  
 խօսէր յատենին .

« Ո՛ր բարեկամք Թագապըսակք, ո՛վ զօ-  
 րավարք հեղենաց ,

Զիս Արամազդ մեծ Զըրուանեանն 'ի  
 դառն աղէտ Թակարդեաց .

Անդուժ արքայն յառաջ խոստմամբ ինձ  
 ակնարկեաց զինքն հաւան ,

Զամրապարիսպըն զՆդիոն քանդել դառ-  
 նալ ողջանդամ .

Արդ նենդ նիւթեալ նա չարարուեստ  
հրամանն ձայնէ ինձ անշուք

Դառնալ յԱրդոս, երբ շտոք տապաստ  
անկան մահուն ՚ի շըշուկ :

Այս է արդեօք Արամազդայ մեծազօ-  
րին իղձ կամաց,

Որ բարձրաբերձ բազում քաղաքս հիւմ  
նայատակ տապալեաց :

Տապալեացէ նա տակաւին յանվանելին  
իւր բազուկ,

Այլ աղէ մէք, ինչ զոր ասեմ, հնազանդք  
բանին եղիցուք :

Չու փախըստեայք առցուք ընդ ծով ՚ի  
մեր յաշխարհն հայրենի,

Զի բաւական չեմք այլ վանեւ ըզՏրոյիա  
լայնուղի ” :

Ըսաց, և Յոյնք լուռ ժամըս ձիդ կացին  
Թախսեալք մեծապէս .

Վային այնպէս մինչ հուսկ ուրեմն եբաց  
բերան Դոմեդէս .

« Ատրիդ, ընդդէմ զառանցելոյդ ես  
կըքրեցայց առաջին ,

Եւ դու, արքայ, մի ցամուռցուս. այս են  
օրէնք ատենին :

Դու նախ ՚ի Յոյնս զոյժն իմ հեգնեալ  
ինձ ձըգեցեր պարսաքար ,

Եւ անարի զիս կարգացեր և ՚ի մարտի  
ապիկար :

Գիտեն Յուհայ զայս սլատանիք , գիտեն  
 և ծերք զայս ողջոյն ,  
 Բայց քեզ յերկուց ըզմին միայն ետ Ձը-  
 րուանեանն խմաստուն .

Վեհ քեզ բնաւից ետ դաւազան , ետ և  
 ըզուք ըզթագի ,  
 Չեա քեզ կորով , որ վեհագոյն է քան  
 զաթոռ իշխանի :

Հեգ և չրառ , զի՞ զԱքայեանց ձախող  
 կարծիս զայդ առեր ,  
 Իբր սպիկար այդչափ և վատ , որպէս  
 զարդիս ասացեր :

Այլ թէ ըզքեզ դրդէ ոգիդ դառնալ  
 անդրէն , ծն արի .

Նաւք քո ահա կան առ ծովուն , նա և  
 բաց է քեզ ուղի .

Նաւք բազմաթիւք , որ ըզհետքո՞ ՚ի Միւ-  
 կենեայ խաղացին .

Բայց այլք կացցեն , մինչ Տրոյիոյ հիմունքն  
 ՚ի սպառ քանդեսցին :

Իսկ թէ և այլք յայդ որերոյն ըզնոյն խոր-  
 հուրդ ախտանան ,  
 Հա՛ և դոքա փախուստ ընդ ծով առցեն  
 յերկիրն հայրենեան :

Բայց մեք աստէն , ես և Սթենեղ <sup>119</sup>  
 կացցուք անխոնջ մրցելով ,  
 Մինչ Տրոյիոյ հասցէ օրհաս , զի աստ է  
 կաք աստուծով <sup>120</sup> ։

Ասաց , և Յոյնք հիացեալք ընդ բանն և  
առ խնդին ձայն բարձին ,

Մինչև ասպետն յարեաւ Նեստոր բարբա-  
ռեցաւ յատենին :

« Արդարև դու , Դիոմեդէս , մարտըս մը-  
ղես կորովիս ,

Ողջ և 'ի մէջ համատիոց քաջախորհուրդ  
բարբառիս :

Քաւ , թէ յոյն ոք բան խոտեսցէ ըզքոյդ  
իբրև անաւագ .

Չիք դիմախօս . այլ ոչ հասեր մինչ 'ի բա-  
նիդ նըստատակ :

Դու սրտանի կրսեր արդեօք 'ի մէջ ի-  
մոց զաւակաց ,

Համայն և ձայն արձակեցեր 'ի հանձա-  
րեղ 'ի մըտաց .

Արժանալուր արքայից բան հրաշացու-  
ցեր յայս հանդէս ,

Բայց աղէ դու , ձայն մի և ես տաց հին-  
օրեայս քան ըզքեղ :

Անցից ողջոյն , և իմ բանիս ոչ ոք մոցէ  
'ի սայքար ,

Արդեօք և ոչ մեծ թագաւորս Ագամեմ-  
նոն մեծափառ :

Անտոհմ , անտուն և յօրինաց անբաժ է  
մարդ գլխովին ,

Որ ոխերիմ անհաշտելի ըզմարտ սիրէ  
զընտանին 121 :

Այլ գիշերոյս խաւարարգէլ հնազան-  
դեսցուք մէք զարդիս ,

Այր այր կալցի սահկերուծիւն և կա-  
հեսցուք մեզ ընծրիս :

Կացցեն սահնորդք 'ի խրամն հատեալ  
անդ արտաքոյ պատուարաց ,

Եւ զայդ հրամանն տամ 'ի ժամուս մերոց  
քաջաց սատանեաց :

Դու սկիզբն արա , Ագամեմնոն , դու ես  
բնաւից վէհ արքայ ,

Ակումբ յընծրիս տուր ծերունեաց , այդ  
քեզ քաջիկ 'ի դէս գայ :

Են քո խորանք զեղեալք գինեաւ , զոր  
Աքայեանց նաւք արագք

Քեզ օր աւուր 'ի Թրակիոյ ընդ ծովքե-  
րէն բացարձակ :

Քեզ ամենայնն է հեշտ և դիւր իբրև  
բազմաց իշխան ես ,

Խմբեա ատեան և զքաջ խորհուրդ դու  
մի անտես արասցես :

Ահա հելենք կենսահրաւէր քաջ խոր-  
հրդոյ կարօտին ,

Զի թշնամւոյն ահա մօտ մեզ խարոյկք  
բազումք բորբոքին :

Ո՞րք երբէք զայդ յակն արկեալ և 'ի սիրտ  
իւր դիւրանայ ,

Զի զայս գիշեր կամ փրկի զօրն և կամ ող-  
ջոյն կորանայ " :

**Լ**ըւան ըզբան ուշիմ ծերոյն , և մըտա-  
 դիւր հնազանդեն ,  
 Յարեան սլահնորդք արձանացան 'ի զարդ-  
 վառեալ և 'ի զէն :  
 Թրասիւմեդէս հովիւն ազգի էր Նեստո-  
 րեանն առաջին ,  
 Ապա Յաղմէն և Ասկաղափ որդիք հուժ-  
 կուք Արեսին .  
 Ըստ նոցանէն և Մերիոն և Դեփիււոս  
 'ւ Ափարէս ,  
 Եւ և դիւցազըն Վրէոնեան Վիւկոմե-  
 դէսն 'ի հանդէս .  
 Յարեան սոքա եօթանէքին , կացին 'ի  
 գլուխ սահկերաց ,  
 Եւ առ մէն մի տէգ յաղթ 'ի ձեռն հա-  
 րիւրք խաղան պատանեաց :  
 Եկին կարգեալք ընդ մէջ խրամոյն նըս-  
 տան ընդ մէջ պատուարին ,  
 Արկին խարոյկ և առանձին այր այր ընթ-  
 ըիս կազմեցին :  
**Ի**սկ Ատրիդէս ներքոյ վրանին ածեալ  
 ըզգաս ծերունեաց ,  
 Եւ կերակրովք համեղաճաշ սեղան դը-  
 նէր մեծահաց :  
 Բոլորեցան , 'ի համահամ խահիցն ա-  
 ռեալ ընթրէին ,  
 Սպասահարկեալք ըզբաժակին և կերա-  
 կրոյն զիղձն հարին :

Անդ նախ Նեստոր խորհուրդ նիւթեաց  
այրն հանճարեղ խոհական ,

Որոյ քաջիկ էր միշտ խորհուրդն , ուշի-  
մացաւ և յայնժամ .

« Ատրիդ , ասէր , Ագամեմոնն , դու վե-  
հափառ արքայից ,

Ի քէն , արքայ , արդ ըսկըսեալ 'ի քեզ դար-  
ձեալ յանկեցից .

Պետ ես բազմաց և դաւազան քեզ Ա-  
րամազդ յանձն արար ,

Քեզ իրաւունս ետ և օրէնս լինել նոցուն  
հոգատար .

Ուստի քեզ անկ է առաջին սպտգամ ա-  
սել և լըսել ,

Եւ զողջամիտ մարդոյ զխորհուրդն ար-  
ժան է քեզ կատարել .

Այսպէս ողջոյն քաջ խորհրդոց ար-  
դիւնքն 'ի քեզ յանդեսցի .

Արդ ես այժմէն բան մերկացայց , որ ինձ  
խորհուրդ քաջ թըլի .

Արդեօք և մարդ ոչ խորհեսցի բան մի  
քան զայս քաջալաւ ,

Զոր արդ խորհիմս և զոր դարձեալ բար-  
բառեցայ ես կանխաւ :

Յօրէ անտի , մազդեզն արքայ , երբ զօ-  
րիորդն ըզբրիսեայ

Դու 'ի վրանէն 'ի բաց հաներ սրտմտե-  
լոյն Աքիլէայ ,

Չէր մեր այդ բան, ես շատ նըւագ մըտի  
ընդ քեզ 'ի սլայքար •

Այլ դու անլուր, մեծանձնաբար ըզհետ  
կամացդ ընթացար :

Ձայր քաջարին, ոյր երեսաց և դիքն ան-  
մահք շուք եդին ,

Շատ գըրձձեցեր • հաներ ըզձիրն և քեզ  
ունիս տակաւին :

Բայց և այժմիկ առցուք խորհուրդ,  
զիմորդ ըզնա յանկուսցուք ,

Եւ հոյակապ ձիր ձօնելով համբոյր բա-  
նիւք գրգեսցուք ” :

Արկնեաց Ատրիդ, « Անսուտ ո՛վ ծեր,  
դու զիմ վընասն յուշ ածես •

Գիտեմ ինքնին, ես զառանցայ • քաւ, ոչ  
յուրաստ լինիմ ես •

Շատ ժողովուրդ արժէ այր մի, զոր  
սերտ սիրէ Արամազդ,

Որպէս ըզսա պատուեաց զարդիս և ըզ-  
հելլենս արկ տապաստ :

Եւ զի յանցեայ և անբարի շարժմանց ե-  
ղէ ես ծառայ ,

Ըզնա դարձեալ համբոյր գործեմ և ձօն  
ամբաւ տամ նըմա :

Արդ կարգ 'ի կարգ համարեցից ձեզ  
զիմ սլայծառ սլատարագ •

Եռոտանիս եօթնեակ անհուրս, ոսկոյ  
տաղանդըս տասնեակ ,

Կոնք ջինջ քրսան , երկոտասան քաջ է-  
րիվարք և առոյգ ,

Որք միշտ յաղժողք պսակահամբար 'ի  
կէտն հասին այս նըժոյգք .

Մարդ որ ունի որչափ ինձ քաջ նը-  
ժոյգքդ ածին մրցանակ ,

Ոսկուլ կարօտ նա ոչ լիցի , երբէք և ոչ  
անժոռակ :

Տաց եօթն աղջիկ յոյժ հրաշագեղ , ամ-  
բիժ , ճարտար լեսբուհիս ,

Ընտրեալք յինէն երբ նա վանեաց գեղեց-  
կաշէնն ըզլ էսբիս .

Տաց ընդ սոսա և զոր Բրիսեան ըզկոյսն  
հանի աննրման ,

Եւ էս երգումն ահաւասիկ երգուայց  
անխար յայս առեան .

Քաւ , էս առ նա , քաւ , ոչ մըտի . չեմ  
վերելեալ յանկողին ,

Որպէս մարդկան է սովորոյթ արանց կա-  
նանց ըստ կարգին :

Կազմ և պատրաստ լիցին այժմէն ողջոյն  
այս ձօնք նըւիրաց ,

Մինչև զոստան մեծ Պրիամուն քանդել  
տացէ մեզ աստուած :

Մըտեալ նա անդ , գեղցին նորա նաւքն 'ի  
պըղինձ և յոսկի ,

Յորժամ հելէնքս ըզկողոսուան այր  
բաշխեսցուք ընկերի :

Նա և ընտիրս 'ի Տրոյիոյ առցէ քրասն 'ի  
 կանանց ,  
 Որք Արգուհւոյն յետ հեղինեայ իցեն  
 գեղով գեղապանծ :  
 Նասեալք յԱրգոս մեր յարգաւանդ , նա  
 և փեսայ ինձ լիցի ,  
 Ովքեստեսիս պատուոյն զուգորդ իմ գըր-  
 գասուն միածնի :  
 Դատերք երեք կան իմ փափուկք 'ի յար-  
 քունիս գեղաշէն ,  
 Քրեսոթեմիս , Իփանասէ , և ընդ սոսա  
 Լաւդիկէն .  
 Զո՛ յերեցունց նա առաւել ընտրէ ան-  
 ձին կամակար ,  
 Զայն անվարձանք իւր սիրուհի տարցի  
 Պեղեայն 'ի տաճար :  
 Իսկ ես ամբաւ ձօնեմ 'նրմա պաշտատա-  
 կան մեծադանձ ,  
 Որչափ ոք ցարդ իւր սիրայնոյ օրիորդին  
 ոչ նաւթճեաց .  
 Օժտեալ ըզնա քաղաքըս տամ բազմա-  
 ժողովս թիւ եօթնեակ ,  
 Ըզկարդամիւղ , և խոտաւէտ զիբէն , զԵ-  
 նոպն ըզքաղաք ,  
 Փերաս ըզմեծն , և մարգաւէտ քաղաք  
 յուռթին զԱնթիա ,  
 Նոյն զայգաւէտըն Պեղասոն և զգեղե-  
 ցիկն Եփիա :

Ծովահայեացք կան յաւազուտն 'ի ծագ  
Պիւղեայ այս քաղաքք ,

Եւ քնակաւորք են 'ի նոսա բազմախա  
շինք , բազմանդեայք •

Նոքա ըզնա պատարագօք աստուածօրէն  
պատուեսցեն ,

Հարկըս նմա յոյր և առատ դաւաղանին  
իւր հարցեն :

Ես զայսոսիկ ձօնեմ նրմա թէ հեղա  
ցեալ հաշտեսցի ,

Անհաշտ միայն Իշխան մահուն է դիք  
մարդկան ատելի :

Նա ինձ վայր մի տեղի տացէ , իբրև մեծ  
է շուք թագիս ,

Եւ զի ծնընդեամբ ես քան ըզնա երիցա  
գոյն եմ 'ի տիս » :

« Դ » ու քաջ արանց , կրկնեաց Նեստոր ,  
Ատրիդ շքեղ մեծ արքայ ,

Զօնս արդարև մեծապայծառ տաս ար  
քային Աքիլէայ •

Հասպա , ո՛վ քաջք , պատգամաւորս ա  
ռաքեսցուք փութապէս ,

Գնասցեն բանբերք ճեպ 'ի խորանն ուր  
կայ Պեղեանն Աքիլէս :

Բայց այրընտիր ես կարգեցից և ան  
սասցեն ինձ ողջիկ ,

Նախաշաւիղ հրեշտակութեանս լիցի մազ  
դեղըն Փիւնիկ :

Ըստ նրմանէն Այասըն մեծ, ասպ դիւց-  
ազն Ոգիւսէս,

Իսկ Եւրիւբատ և Ոգիոս քարոզքն ել-  
ցեն յայն հանդէս :

Արիք, ըզջուր ածէք ձեռաց և օրհնու-  
թեան տուք հրաման :

Առ Զրրուանեան խնայել 'ի մեզ պա-  
ղատեսցուք միաբան ʔ :

Տեչո աղբմբին գրտաւ ողջոյն բան զոր  
ասաց ծերունին,

Յարեան Քարոզքն և սպասարկու փու-  
թով ձեռաց ջուր արկին :

Պսակեն մանկունք ըզխառնարանս, յայր  
այր լինին մատուրակ,

Նըւէր ձօնեն և ըստ ախորժ արբեալ քա-  
մեն ըզբաժակ :

Յարեան հրեչտակք ելին ճեպով 'ի խո-  
րանէն Ատրիդեայ,

Եւ անդ Նեստոր յուղարկաւոր շատ ինչ  
խրրատ տայր նոցա :

Յայր այր զաչս իւր, յաւէտ յՈգիւս, յա-  
ծեալ սագրէր ծերունին,

Հնարել հրնարս և զԱքիլէայ սիրտ ա-  
մոքել ըզբաջին :

Ղռ բազմագոչ ծովուն ափամբ նոքա ու-  
ղոյ լինէին,

Ի նոյն և շատ առ Պոսիդոն երկրապար-  
փակ պաղատին,

Հաշտ և համբոյր գործել դիւրեաւ գոռ-  
զաննըկունն Աքիլէս .

Մինչև հասին Միւրմիդոնեանց վրանաց  
նաւացն 'ի հանդէս :

Գըտին ըզնա , դիւրէր ոգւոյն 'ի ձայն  
գեղգեղ կիթառի ,

Կիթառ չքնաղ և հրաշակերտ մանեակս  
ունէր արծաթի .

Կա զայս կիթառ առ յաւարէն երբ զԵ-  
տոփնին շէն քանդեաց ,

Սովաւ երգէր 'ի դիւր ոգւոյն նա ըզմը-  
ցանս քաջազանց :

Լուռ Պատրոկղէս անդ միայնիկ նստէր  
նորա յանդիման ,

Սպասեալ մընայր մինչև դիւցազն երգոյն  
տացէ ըզվախճան :

Մըտին հրեշտակքն արձանացան , և յա-  
ռաջէր Ոգիւսէս .

Յապուշ հարաւ , 'ի վեր վազեաց կիթառն  
'ի ձեռն Աքիլէս .

Յարեաւ 'ի նոյն և Պատրոկղէս տեսեալ  
զորեար զայն աւագ ,

Ձայն Աքիլէս հիւրամեծար զայս ետ  
դիւցազն այն արագ .

« Ողջամբ եկիք , ո՛ր բարեկամք , անշուշտ  
հարկ մեծ ամ ըզձեզ .

Դուք 'ի հէլէնս ինձ սըրանելոյս էք փա-  
րելիք մեծապէս » :

Լսաց դիւցազն, և մեծարեալ մոյծ ներք-  
սագոյնն 'ի խորան ,

Եւ 'ի գորգոյ 'ի ծիրանեաց դընէր նոցա  
բազմական :

Առ Պատրովղէս, որ կայր ընթեր, դար-  
ձաւ ձայնեաց փութապէս ,

«Արի, ո՛վ քաջ, և առ ըզմեծ ըզխառնա-  
րանն ած առ մեզ .

Ա՛ռ և խառնեա դու զանապակն , յայր  
այր բաժակ պատրաստեա՛ց ,

Զի մըտերիմք արդ ընդ յարկաւ բնակեն  
խնոց մարդակաց » :

Ասաց դիւցազն, և Պատրովղէս բարեկա-  
մին իւր անսայ ,

Առեալ սան մեծ և 'ի բոցոյն առկայա-  
ցոյց 'ի վերայ .

Զողն ոչխարին արկ նա 'ի մէջ , 'ի նոյն  
ըզոյր և զայծին ,

Եւ զողնայար ըզպարարակ խողին սա-  
տեալ 'ի ճարպին :

Ունէր ըզմիսն Ատոմեդոն , վեհն Աքիւ-  
լէս յօշատէր ,

Մանրախորտիկ յօշեալ ապա շուրջ 'ի  
շամփուրս հարկանէր :

Իսկ Պատրովղէս այր դիւցաղգեաց հուր  
մեծ վառեալ բորբոքեաց ,

Մինչ կրակացաւ , եթող խարոյկ և բոց  
շիջաւ կայծականց .

Սըփռեաց ըզկրակն և ըզչամփուրսն եղ-  
'ի վերայ խարուկի ,

Յանեալ աղ սուրբ 'ի շամփրակալ մու-  
թիցն էառ մեկուսի :

Առեալ դընեն 'ի սեղանի ըզխորովեալն  
ըզխորաիկ ,

Եւ Պատրովղէս բաշխէր ըզհացն 'ի սա-  
կառիս գեղեցիկ :

Բազմականին ըզխորովոյսն հանէր բա-  
ժին Աքելլէս ,

Եւ ինքն ընդ որմն 'ի հանդիպոյ նստաւ  
ուր կայր Ոգիւսէս :

Չօն դից հանել, Պատրովղէսի նիզակակ-  
ցին իւր ազգէր ,

Յարեաւ փութով արկ նա 'ի հուր զերե-  
խայրիսն 'ի նըւէր :

Ապա խահիցն 'ի համահամ ձեռս կար-  
կառեալ առնուին ,

Մինչ ըմբոշնեալք ըզկերակրոյն և զըմ-  
պելլոյն զիղձն հարին :

Յայնժամ Այաս 'ի ծերունին Փիւնիկն  
առնէր ակնարկի ,

Ըզգաց Ոգիւս և Աքելլէայ կարկառ բա-  
ժակ գինեաւ լի .

« Խնդա՛ , ասէր , ո՛ր Աքելլէս , ցանդ մեզ  
խնջոյք լիացան ,

Թէ Ատրիդեայն ընդ վըրանաւ թէ աստ  
'ի քոյ 'ի խորան .

Հատ մեզ խորտիկք անուշարարք հան-  
 դերձեցան մեծապէս ,  
 Սահայն և ոչ մեծի կոչնոց զարդիս առ-  
 նեմք մէք երես :  
 Յաղէտս ամբաւ դողամք , դիւցազն , ար-  
 դեօք նաւք մեր վրրկեսցի՞ն  
 Թէ կորիցեն , եթէ անդրէն ոչ յարիցես  
 դու ինքնին :  
 Ձի մերձ նաւաց և սպտուարին բոլորե-  
 ցին մեծ բանակ ,  
 Գոռող Տրոյեանք և տարաշխարհ նիզա-  
 կակցաց դումարտակ .  
 Խիտ ընդ բանակն արկեալ խարոյկ , նըս-  
 տան վառեալք 'ի մրկունդ ,  
 Խրոխտան 'ի մեր նաւահանդէսն հրա-  
 հոս դիմել համագունդ :  
 Ամպահարեալ բարենըշանս եցոյց նոցա  
 Արամազդ ,  
 Վարազացեալ Հեկտոր տիգօք աչաց խա-  
 ղայ անդ և աստ .  
 Ահեղ մոլի նա ապաստան լեալ 'ի Դիայն  
 հաւաստիս ,  
 Այսահարեալ կատաղութեամք ոչ մարդ  
 կըշուէ , ոչ ըզդիս .  
 Ժամ 'ի Ժամէ անձուկ բերէ երբ այդ ծա-  
 գէ լուսազգեաց ,  
 Երդնու գոռայ , ինքնին ձեռօք ըզգուկ  
 ջախել ըզնաւաց .

Ըզաստափայտս 'ի բազմածախ բոցոյն  
մատնեւ 'ի բերան ,

ԸզՅոյնս հարոււ մինչ խուճապին նոքա  
'ի ծուխ թանձրութեան :

Գողամ սարսեմ , թէ սպառնալեաց նո-  
րա վախճան դիք տացեն ,

Եւ մէք անկցուք աստ տարադէմ 'ի ձիա-  
ւէտ Արգոսէն :

Եւ արդ թէսկէտ անագանեալ , արի՛ դը-  
թա դու աղէ ,

ԸզՅոյնս նըկունս առ և փրկեա յայս Տրոյ  
ական զըմբաղէ :

Յաղէան անբաւ քեզ գլխովին յոյժ ցա-  
ւեսցի մինչ 'ի սպառ ,

Այլ դարմանոյ դեղ գըտանեւ յամբող  
չարին չէք հընար :

Կամեսց կանուխ դու ո՛վ քաջազն , օրհաս  
մերժեւ ըզՅունաց ,

Յուշ ած զոր քեզ յուշիմ բանից հայր քո  
Պեղոս սպառուիրեսց ,

Յորժամ ըզքեզ առ Ատրիդէս ուղւոյ դը-  
նէր 'ի Փիթեայ .

« Որդեակ , ասէր , քեզ զօրութիւն տա-  
ցեն Պալլաս և Հերա .

Տացեն անշուշտ , թէ հաճեսցին . այլ  
դու զոգիդ աննըկուն

Սանձեա 'ի քեզ , զի հեղութիւնն է քան  
ըզնա դերաբուն .

Ըզհեռ գժնի, զոխ չարարուեստ տարա-  
 մերժեա դու 'ի քէն,  
 Զի քեզ յաւէտ և պատանիք և ծերք  
 Յունաց շուք դիցեն :  
 Զայս ծերունին, այլ բանքն եղեն արդ  
 մոռացօնք քոց մըտաց,  
 Գէթ դու զարդիս անդորրացեալ զոխն  
 ոգետանջ դիր 'ի բաց :  
 Թէ հեզանաս, ընծայս շքեղս Ագամեմ-  
 նոն քեզ ձօնէ,  
 Որ զայդոսիկ 'ի լուր քաջիդ ասեմ արդ  
 կարգ ըստ կարգէ :  
 Ի վրան քո աստ քեզ խոստանայ յըզէլ  
 Ատրիդ պատարագ,  
 Եռոտանիս եօթնեակ անհուրս, ոսկոյ  
 տաղանդըս տաննեակ .  
 Կոնք ջինջ քրտան, և առոյգանձն երկո-  
 տասան երիվար,  
 Մրցանակօք պըսակաւորք նըժոյգք վա-  
 զեալք 'ի պայքար .  
 Մարդ որ ունի որչափ ինչ այդ նըժոյգքդ  
 ածին մրցանակ,  
 Ոսկոյ կարօտ նա ոչ լիցի, երբէք և ոչ  
 անթոշակ :  
 Լեսբուհիս եօթն յոյժ հրաշագեղ, ճար-  
 տարս, ամբիծս տայ նըւէր,  
 Զորս նա ընտրեաց երբ դու զԼեսբոսն  
 ըզգեղաշէն վանեցեր .

Առ այսօսիկ և ըզԲրիսեան տայ զօրիորդ զոր եհան .

Այլ նա երգումն և ահագին քեզ երգնուցու յանդիման ,

Թէ չէ նորա մըտեալ առ նա , քաւ , չէ ելեալ յանկողին ,

Որպէս , արքայ , է սովորոյթ արանց կանանց ըստ կարգին :

Այժմէն պատրաստ լիցին , ասէ , ողջոյն այս ձօնք նըւիրաց ,

Մինչև զոստան մեծ Պրիամուն քանդել տացէ մեզ աստուած :

Մըտեալ քո անդ , նաւք քո զեղցին համակ սլըղինձ և յոսկի ,

Յորժամ հելէնքս ըզկտրպուան այր բաշխեսցուք ընկերի .

Յայնժամ ընտրեալ 'ի Տրոյիոյ առցես քըսան 'ի կանանց ,

Որք արգուհւոյն յետ հեղինեայ լիցեն գեղով գեղասպանի :

Եւ և փեսայ լիցիս նըմա յԱրգոս հասեալ 'ի յուռթի ,

Ովրեստեսին պատուոյն զուգորդ իւր գրգասուն միածնի :

Իստերք երեք կան փափկասունք իւր յարքունիս գեղաշէն ,

Քրիստթեմիս , Իփանասէ և ընդ սոսա Լաւդիկէն .

Զո՛յ յերեցունց դու առաւել ընտրես ան-  
 ձին կամակար ,  
 Զայն անվարձանք քեզ սիրուհի տարցիս  
 Պեղեայդ 'ի տաճար :  
 Պաշտատական տացէ ամբաւ նրմա 'ի ձօն  
 մեծադանձ ,  
 Որչափ ոք ցարդ իւր սիրայնոյ օրիորդին  
 ոչ ձօնեաց .  
 Քաղաքս յօժիտ տացէ նա քեզ բազմա-  
 ժողովս թիւ եօթնեակ ,  
 Ըզկարդամիւղ և խոտաւէտ շիրէն , զԵ-  
 նոսն ըզքաղաք ,  
 Փերաս ըզմեծն և զմարդաւէտ քաղաք  
 յուռթին զԱնթիա ,  
 Եւ զայգաւէտըն Պեդասոն և զգեղե-  
 ցիկն Եփիա .  
 Ծովահայեացք կան յաւազուտն 'ի ծագ  
 Պիւղեայ այս քաղաքք ,  
 Արք բնակաւորք են 'ի նոսա բազմախա-  
 շինք , բազմանդեայք .  
 Նոքա ըզքեզ պատարագօք աստուածօ-  
 րէն պատուեսցեն ,  
 Եւ հարկըս յոյրս անդ 'ի ներքոյ գաւա-  
 ղանիդ քեզ հարցեն :  
 Տայ զայդոսիկ , թէ հեզանաս . իսկ թէ  
 դարձեալ անհաշտ ես  
 Եւ 'ի սիրտ քո ատեաս զԱտրիդ և ըզնո-  
 րայսըն զըզուես ,

Գոնեա դու քաջ, Յունաց զօրուն ըզ-  
դութն յայտնեա սրտի քոյ,

Որք վշտատեաք շուք քեզ և փառս հար-  
ցեն իբրև աստուծոյ :

Ձի թէ այժմիկ վանեա զԵկատր, փառս  
յաճախես պանծալի

Երբ նա մոլեալ քեզ ժրպրհեսցի արծա-  
նանալ 'ի դիմի .

'Նա աւանիկ ոչ զոք ասէ անձին զուգորդ  
'ի Յունաց,

Որչափ որեար աստ նաւարկեալք հասին  
'ի տար աշխարհաց " :

“Պարտ է և ինձ անսրատրըւակ, կրօկ-  
նեաց անդէն Աքիլէս,

Պարտ է կնքել քեզ, ո՛վ մազդեզն ամեն  
արուեստդ Ոգիւսէս,

Ձինչ էս խորհումս, և զինչ իցեն ելք  
խորհրդոց իմ սրտի,

Ձի մի շատ ինչ կարկաչիցէք յունկն իմ  
աստի և անտի :

Եւ արդ ասեմ. ատեամ ըզմարդ դրանց  
զըժոխոց հաւասար,

Որ զայլ խօսի և զայլ նենդաւ 'ի սիրան  
ունի ծածկաբար :

Բայց էս զարդիս բան ասացից, որ ինձ  
թըլի թէ քաջ է .

Ձիս ոչ Արիդ զիս ոչ այլ ոք յԱքայ-  
եցւոց չամոքէ :

Աղէ զն՛նչ վարձք իցեն քաջին , որ ցանգ  
կըռուի 'ի մարտի .

Ո՞չ նոյն վիճակ է յետնելոյն և նոյն վի-  
ճակ մրցողի .

Չուգապատիւ է կորովին և որ յուլայ  
վատաբար ,

Չուգաշիրիմ է այր անգործ և որ շատ  
է քրտնահար :

Չառաւելայ ես որ զանձն իմ ներքոյ  
արկի տանջանաց ,

Եւ ցանգ զոգին ես 'ի կըշիւ եդի 'ի մար-  
տըս քաջաց :

Որպէս թուչուն ճարակաբեր ձագուցիւ-  
րոց անփետուր

Չորսըն բերէ , և մոռանայ զանձին իւրոյ  
կերակուր ,

Այսպէս անբուն ես շատ դիշեր շատ օր  
մարտեայ մարտ արեանց ,

Ընդ ապաժոյժ եկի մրցեալ վասըն դո-  
ցուն ամուսնաց :

Նաւամարտիկ յատակեցի երկոտասան  
ես քաղաք ,

Եւ մետասան շէնս արգաւանդ առ Տրոյ-  
իով , հետևակ :

Կապուտ չքնաղ յայնց քաղաքաց ամբաւ  
հանի կարասի ,

Եւ Արթիդեայ ըզբովանդակն 'ի դոգն աւ-  
ուեալ կուտէի :

Նա կայր յետուտ 'ի կողմանէ արագ  
 նաւացն առ ընթեր,  
 Խոռն մի բաժին հանէր անտի և շատ ան-  
 ձին իւր սլահէր :  
 Պարգևս և այլ տայր արքայից տայր և  
 աւագ որերոյն ,  
 Միայն զիմ ձիրն եհան յինէն , նոցայն  
 ցայսօր կան սղջոյն :  
 Բաշի իւր հանեալ զհատոր ոգւոյս ունի  
 նա զիմն ամուսին ,  
 Թող առ դովաւ ընկողմանեալ վայելս  
 առցէ 'ի սրտին :  
 Հիմ այս խօշիւն , աղէ ասա , Տրովադա-  
 ցւոց և Յունաց ,  
 Է՞ր աղագաւ Ագամեմնոն խուժան զօ-  
 րուս զայս խմբեաց .  
 Ո՞չ 'ի սլատճառս վարսագեղոյն կան հե-  
 ղինեայ և կրուովն ,  
 Ազէ Ատրիդք 'ի մէջ մարդկան սիրեն մի-  
 այն զամուսին .  
 Ո՞չ աւանիկ և ամենայն այր իմաստուն  
 այր բարի  
 Զիւրըն սիրէ տարփմամբ սրտի , 'ի նա  
 երթայ և յանգչի .  
 Որպէս և զիմն ես սիրէի անձկով 'ի սերտ  
 'ի սրտէ ,  
 Թէպէտ գերի անկաւ նա ինձ աւար յի-  
 մոյն նիզակէ :

Արդ զի հանեալ զիմ ձիրն յինէն նենդ  
ինձ լարեաց աւադիկ ,

Մի՛ փորձեսցէ , զիս չամոքէ . ծանեայ ըզ-  
նա ես քաջիկ :

Այլ ո՛վ Ոգիւս , նա հողոնեալ ընդ ար-  
քայից և ընդ քեզ ,

Խորհուրդ կալցի զի՞որդ արդեօք նաւք  
մի լիցին բոցակէզ :

Արդէն ինքնին դա առանց իմ շատ ճրգ-  
նեցաւ և գործեաց ,

Պատուար կառոյց և առ նովաւ խրրամ  
չափեաց և փորեաց :

Այո խրրամ լայն , մեծ պեղէ և շեր-  
տափակ ցից վարսէ ,

Բայց ըզհեկտոր վիրագ հուժկուն սան-  
ձակոծել ոչ բաւէ :

Իսկ յորժամ ես մարա մըղէի յԱքայե-  
ցւոցն 'ի բանակ ,

Նա 'ի բացեայ 'ի պարըսպաց ոչ ելանէր  
նահատակ :

Մօտէր միայն մինչ 'ի կաղնին առ դուրս  
Իսկեան քաջամուր .

Կաց մի անդամ և յիմ Թափոյն ճողոպրե-  
ցաւ մազապուր :

Արդ զի կրուուել կամիմ ես ոչ ընդ դիւց-  
ազինն հեկտորայ ,

Չօն անմահից յազեմ վաղիւ , յազեմ մե-  
ծին և Դիայ .

Լ ը ն ու մ ը զ ն աւ ա ք ար շ է մ 'ի խորս 'ի ծ ու լ  
 ա փ ան ց ն 'ի բ ա ց է ,  
 Դ ու թ է կ ամ ի ս , կ ան ց 'ի զ ը ն ի ն , կ ամ թ է  
 փ ոյ թ ի ն չ ք ե զ ի ց է :  
 Ն աւ ք ն ի մ ը ն դ այ գ ն 'ի ձ ը կ ն ա բ եր Հ ե լ լ է ս  
 պ ո ն տ ի ն 'ի վ եր ա յ  
 Հ ա տ ց է ն զ ա լ ի ս , և թ ի ա ք ար շ ք ժ ի ը ք ա մ  
 բ ար ձ ց ի ն 'ի ն ո ս ա :  
 Թ է ի ն ձ Ա ը ք ա յ ն եր կ ր ա ս ա ս ա ն ն աւ ա ը  
 կ ու թ ի լ ն յ ա ջ ո ղ տ ա յ ,  
 Յ եր ր ո ղ աւ ու ըր է ս յ ար գ աւ ա ն դ ն ո ղ ջ ա մ ք  
 հ ա ս ի ց 'ի Փ ի թ է ա :  
 Զ ի մ գ ո յ ս ա մ բ աւ թ ո ղ ի ան դ է ն և ա ս տ  
 է կ ի 'ի չ ար ժ ա մ .  
 Մ ը թ է ր ս ո ս կ ը ոյ և շ առ ա գ ո յ ն ան դ ու ա տ  
 պ ը ղ ի ն ձ է ս բ առ ն ա մ ,  
 Եր կ ա թ փ ա յ լ ու ն . ը ն դ ա յ ս տ ս ի կ գ ե ղ ա գ ո  
 տ ի կ ան ան ի  
 Ա ը ն ու մ ը ս տ կ ամ ս , ո ղ չ ա փ և ի ն ձ վ ի  
 ճ ա կ է ց ա ն 'ի բ ա ժ ն ի .  
 Մ ի ա յ ն ի մ ձ ի ր ն ի ն ձ պ ա կ ա ս է , զ որ ի ն չ  
 շ ն որ հ է ա ց Ա տ ր ի դ է ս  
 Եւ զ որ ան դ ը է ն կ ա ս տ է ա ց յ ի ն է ն թ շ ն ա  
 մ ան է ա լ մ ե ծ ա պ է ս :  
 Զ որ պ ա տ ու ի ր է մ ս , ո ղ ջ պ ա տ մ ե ց է ք 'ի  
 լ ու ըր ն որ ա յ ն ա կ ան ջ ա ց ,  
 Ա յ լ ա կ ն յ ա յ ս ն ի , զ ի ս ր ա ն է ս ց ի ն և ա յ լ ք  
 յ ար ան ց 'ի Յ ու լ ն ա ց :

Թերևս և զայլ ոք յԱքայեանց դաւա-  
ճանել տակաւին  
Դա յոյս ունի, այրն անսպասկառ յա-  
ւերժացեալ լըբենին .  
Թէպէտ շուն է, ոչ ժլտեսցի իմ երե-  
սաց երևել,  
Ընդ այդ մարդոյդ, քաւ, ես չունիմ ինչ  
մի խորհել կամ գործել :  
Ինձ նենդ լարեաց, թշնամանօք ելից զիս  
նա և զրկեաց,  
Մի այլ բանիւք մի յուսասցի դաւ ինձ  
գործել խաբանաց :  
Շատ է նրմա . թող դա լուռ լուռ կոր-  
ծան անկցի և տասպաստ,  
Քանզի նորա զուշ և զուրուշ բարձ 'ի  
գլխոյն Արամազդ :  
Տուրքն ատելիք, տըւողն անկած . թէ-  
պէտ տասնիցս ինձ տացէ  
Կամ քըսանիցս, որչափ ունի և որչափ  
այլ կուտեսցէ,  
Կամ թէ որչափ ինչ կարասի բառնան  
տանին յՈրբոմէն,  
Եւ կամ որչափ գանձեալք 'ի տունս կան  
յԵգիպտեան 'ի Թեբէն 122,  
Ուր դրուիք հարիւր . ընդ մէն մի դուռն  
անդ երկերիւր թիւ որեար  
հրոսակք 'ի դուրս խաղան կառօք խա-  
ղան հեծեալք յերիվար :

Կամ թէ այնչափ տացէ ինձ նա որչափ  
աւաղ և փոշի ,

Ձիս չամոքէ մինչև ողջոյն վնասուն վը-  
րէժ տուժեացի :

Քաւ ինձ , ես ոչ փեսայանամ չառ-  
նում ըզկոյսն Աարիդեան ,

Քաւ , թէ և նա ոսկեղինիկն ընդ գեղ  
մրցի Ասողըկան .

Կամ թէ ճարտար մատամբքն իցէ զու-  
գորդ խաժակն Աթենայ ,

Քաւ , Աքիլլէս և ոչ այնպէս լիցի նը-  
մա 'ի փեսայ .

Թող այրընտիր յԱքայեցւոց զայլ ոք  
անձին ճահեացէ .

Որ բարձակից Աարէոսեանց արքայա-  
սլանձ սիգասցէ :

Թէ 'նդ հովանեաւ դից սրահսլանեալ  
'ի տուն դառնամ ողջանդամ ,

Ինքնին Պեղոս իմ ծերունին հարսըն տա-  
ցէ ինձ յայնժամ :

Են են իսկ շտոք յԱքայուհեաց յերկիր  
Փիթեայ յԵլլադա

Կոյսք աւագաց , ոյց և քաղաքք հարըս-  
տութիւնք են նոցա .

Ձորն և կամիմ 'ի դոցանէ , առնեմ ըն-  
կեր իմ սիրոյն .

Անդ գեղեցիկ զիս մոլուժեամբ ձրգէ ո-  
գիս քաջամոյն :

Ի ճահ ածեալ ինձ լրծակից օրինաւոր  
ամուսին ,

Վայելչանամ յորչափ ինչ գոյս Պեղոս  
գանձեաց ծերունին :

Չարժէ զիմ կեանս որ յԵղիօնն 'ի մար-  
դաշատ կուտեալ գանձ

Յաւուրց նախնեաց , երբ կայր խաղաղ  
մինչ չև դիմեալ անդ Յունաց :

Եւ ոչ որչափ գանձ սարագրէ մեհեանն  
հարուստ մարմարեայն

'Նետահարին Ապողոնի 'ի յառապարս 'ի  
Պիւթեան :

Թէ յոյր խաշինք ըզբռամք ածին և թէ  
անդեայք անասունք ,

Թ' եռոտանիք և թէ դարձեալ ձիոց խար-  
տեալ կառափունք .

Այլ չըմբըռնի հոգի մարդոյ և ոչ դառ-  
նայ միւս անգամ .

Ոչ սարանի , երբ նա ըստ ցանգն եւ ա-  
տամանց մի անգամ :

Ձի արծաթոտն ինձ զայս թեախս մայրն  
իմ ասաց դիցունհին ,

Թէ կրկնակի օրհաս մահու բարձեալ բե-  
րեմ ես յանձին :

Թէ աստ մընամ անդուլ կըռուեալ ընդ  
Տրոյացւոց քաղաքի ,

Դարձին իմոյ հատեալ է յոյս , այլ  
փառքս անմահ եղիցի :

Իսկ թէ 'ի տուն դառնամ անդրէն յիմ  
հայրենին բազմատենչ ,

Թէպէտ անշուք, կեցից յամայր արա-  
գամահ ոչ եղէց :

Այլ ես յորդոր նա և այլոց կարգամ 'ի  
տուն նաւարկել ,

Ձի զհոյակապըն զԵղիոն այլ ոչ բաւէք  
դուք վանել :

Ձի և Դիայ անդ աջն ասեղ հովանացաւ  
անվեհեր ,

Եւ Տրոյացիք խրախուսեցին 'ի մեծապէս  
քաջալեր :

Օ'ն արդ գնացեալք դուք աղդարարք  
աւագանւոյդ հելլենաց ,

հրեշտակութեամբ տուք և խորհուրդ ,  
զի այդ է գործ ծերունեաց ,

Յատեան նորա հոլոնելով, այլ քաջ խոր-  
հուրդ խորհեացին ,

Ձի արդ փրկել ըզնաւատորմ որով և  
Յոյնք փրկեացին .

Ձի զոր նըւագ զայս խորհեցան իբրև  
խորհուրդ խոհական ,

Ձէ լաւ դոցա մինչ տակաւին ծանրա-  
ցասումն ես քուքամ :

Փիւնիկ կացցէ . աստ հանգիցէ նաւել 'ի  
տուն հայրենին

Վաղիւ ընդ իս . բայց թէ կամի , զի բռնա-  
դատ ոչ տանիմ " :

Չայնն Աքիլէայ ափ 'ի բերան արար  
 զաւագան հելէնաց ,  
 Յապուշ հարան զի յոյժ սաստիկ դիւց-  
 ազն ըզբանն յարդարեաց :  
 Հասլա սսպետն առ նա Փիւնիկ բերան  
 բանայր ծերունին ,  
 Բայց հատկըլեալ լայր և դողայր վասըն  
 նաւաց հանդիսին .  
 « Թէ քո անշուշտ է հաստատեալ , ա-  
 սէր , քաջազն Աքիլէս  
 Դառնալ 'ի տուն , և ըզնաւացն հուր  
 մահագոյժ ոչ սանձես ,  
 Պնդիս անզեղջ ցոր վայր սրտնեալ ես  
 ոխութեամբ դըժընդակ ,  
 Զիսորդ ինձ աստ , որդեակ սիրուն , կալ  
 առանց քո միայնակ :  
 Զիս ծերունին հայր քո Պեղոս առեալ  
 յայնժամ եդ ընդ քեզ ,  
 Երբ տարադէմ 'ի Փիթիոյ յըլեաց ըզ-  
 քեզ յԱտրիդէս :  
 Մանուկ գոլով քո 'ի մրցանս անփորձ  
 խօշիւնս 'ի մարտից ,  
 Անփորձ դարձեալ և փառաւոր համբա-  
 լատենչ ատենից .  
 Ոյր աղագաւ եդ զիս մարզէլ ըզքեզ 'ի  
 յայս սսպարէս ,  
 Լինել բանից քեզ վարժապետ , նոյն և  
 յարդեանցն 'ի հանդէս :

Քաւ ինձ որդեակ, զատչիլ 'ի քէն, թէ և  
աստուած խոստասցի

Ըզծերու թիւնս գերծուլ, և զիս առոյգ  
հաստել սլատանի .

Որպէս յորժամ թողի նախկին վայր չք-  
նազաց զԵլագա ,

Եւ յՈրմենեան Ամինգորին հօրս յանի-  
ծից ես փախեայ :

Քանզի ցասեաւ ինձ 'ի սլատճառս գե-  
ղագիսակ իւր հարձին ,

Սիրեաց ըզնա և ըզմայրն իմ զիւրըն զը-  
զուեաց զամուսին :

Մայրն իմ փարեալ ցանգ զիմ ծընգօք  
գիտել ըզհարձն ողոքէ ,

Զի ես կանխեալ և հարձն յայնժամ ըզ-  
ծերունին զըզուեսցէ :

Լըւայ ձայնին, 'ի բան տարայ . հայրն իմ  
ըզգործն երբ ըզգաց ,

Սըրտմըտեցաւ և դառնապէս անէծս 'ի  
գլուխ իմ կուտեաց ,

Զահեղ ճիւղան Երիննիւսեան կար-  
գաց գլխոյս 'ի սատան ,

Մի 'ի վերայ գգուել ծընգաց յինէն զա-  
ւակ սիրական :

Լըւան աստուածքն և հայրական դառն  
անիծից տան լըրումն ,

Անդընդայինն այն Արամազդ և Պերսե-  
փոնն ապառում 123 .

Չըհանդուրժեալ ռիանայի յոգի ըզնա  
հարկանել,

Այլ հանգոյց զիս ոմն յանմահից, զոխն  
ապաժոյժ զիմ արգել:

Յուշ ինձ զառակ ամ զամբոխին, յուշ  
ըզլուտանս ըզմարդկան,

Զի մի ՚ի Յոյնս ես առակեալ անուա-  
նեցայց հայրասպան:

Խորհուրդ կալայ, զի և սիրտ իմ հեղ-  
ձամբղձուկ էր ողջոյն,

Ասեմ, հայր իմ ցասմամբ տապի. ոչ այլ  
մընամ ես ՚ի տուն:

Անդ ընտանիք և տոհմայինք զինև ողջոյն  
բակ առեալ

Ողոքաւորք մեծապապատք ինձ սաղրէին  
՚ի տան կալ.

Հատ յոյր խաչինս՝ և եղջերաբոյս կրճղա-  
կաւոր զըւարակ

Առին զենին, և շատ խողեան առոյգ  
ճարպով սարարակ.

Խորտիկք անոյշք խորովածոյն ՚ի բոց  
կային հեփեստեան,

Եւ ծերունւոյն ՚ի սափորոց շատ անա-  
պակք քամեցան:

Գիշերս իննեակ շուրջանակի զինև ան-  
կեալ ննջէին,

Բայց և վասն իմ փոխանակաւ պահկե-  
րուԹիւն տքնէին:

Անշէջ կայր հուրն , մին 'ի դահլիճ յամ  
 րածածուկ 'ի գաւթի ,  
 Մին 'ի սրահակ վառէր սեմոցն իմ սե-  
 նեկին առաջի :

Երբ տասներորդն 'ի մեր վերայ գիշեր  
 մի հաս խաւարին ,  
 Յայնժամ ըզդուրսն ըզքաջակուռ խոր-  
 տակեցի ըզյարկին .

Վազեալ 'ի դուրս և հեշտաբար ոստեայ  
 գաւթին ընդ պատուար ,  
 Ի պահնորդաց և յաղախնեայց ելի փա-  
 խեայ գաղտաբար :

Չորայ թափառ յուղի անկեալ լայնա-  
 սահմանն յԵլլադա ,  
 Առ Պեղէոս եկի արքայն 'ի խաչնաւէտն  
 'ի Փիթեա .

Կա հայրաբար զիս ժողովեաց սիրեաց  
 նստոյց 'ի յարկին ,  
 Բազմահարուստ իւր ծերութեան իբրև  
 զորդի միածին :

Չիս ընչաւէտ գործեաց Պեղոս , շատ  
 ժողովուրդ ինձ յանձնեաց ,  
 Ի ծագ Փիթեայ ես բնակաւոր թագ-  
 կապեցի Դողոպեաց :

Ըզքեզ Աքիլ , ո՛ր դիւցազգեաց , յայդ  
 ախ սիրով սընուցի ,  
 Որ դու ընդ այլս հաց չառնուիր և ոչ 'ի  
 քում 'ի յարկի ,

Մինչ չև քեզ ցանգ իմ ծերունւոյս այս  
 ծունդք եղեալ բազմական ,

Եւ կեր մանրեալ քեզ ջամբէի , նա և գի-  
 նի 'ի բերան .

Բազում անգամ առ իմ լանջօք թացեր  
 դու զիմ սպառնուճան ,

Յըմպել գինւոյն թորթորէիր 'ի տիս դը-  
 ժուար մանկութեան :

Այսպէս շատ ինչ 'ի քո սպառնառս համ  
 բերեցի 'ի ժամուն ,

Ընդ միտ ածեալ եթէ յինէն զաւակ աս-  
 տուածք ինձ չետուն ,

Ինձ յորդէգիրս առի ըզքեզ , ո՛ր Աքիլէս  
 գիւցազգեաց ,

Ասեմ , օր մի զիս յարկածից դու փրկես-  
 ցես 'ի չարեաց :

Զողի անսանձ , աղէ ո՛վ քաջ , տարա-  
 մերժեա դու 'ի քէն ,

Սիրտ ապառուժ քաւ քեզ ունել . նա  
 դէք ինքնին համբոյրք են .

Դէք վեհք ուժով և լաւութեամբ , վեհք  
 և փառօք քան ըզմեզ ,

Համայն այնպէս նոքա զոհիւք և ջերմ  
 հայցմամբք լինին հեզ .

Նոյն և 'ի ձօնս և 'ի ճենճերս մարդիկ  
 ըզգիս հաշտ գործեն ,

Եթէ երբէք ընդդէմ նոցա օրինազանցք  
 ըմպահկեն :

Ձի և Աղերսք դատերք Ռիայ կաղք, շիւք  
և դէմք խորշոմեալ,

Դարման խնդրեն տանել Ադեայ ըզհետ  
նորա ընթացեալ .

Իսկ է Ադէդ հարուստ քաջոտն է և հուժ  
կու մեծապէս 124 ,

Եւ քաջարշաւ անցեալ զնոքօք վազէ ող  
ջոյն ասպարէս .

Վընաս ածեալ կանացածնաց զերկիր  
սլատէ զամենայն ,

Իսկ այդ Աղերսք ըզհետ նորա վազէն  
տանել ըզդարման :

Որ ոք գալուստ ըզՌատերացդ հիւրամե  
ծար ընդունի ,

Շահ մեծապէս առնու և դիք լինին նմա  
լըսելի .

Իսկ որ անաստ մերժէ զնոսա, գնացեալ  
նոքա յԱրամազդ ,

Բողոք բառնան, զի զեան յԱդեայ կրեա  
ցեն նոքա մեծասաստ :

Ձայդ շուք և դու, ո՛ Աքիլէս, հա՛ր մազ  
դեզանց դատերաց ,

Շուք ակնածու, որ և զմեծաց սիրտ ա  
մոքէ քաջազանց :

Թէ ձօն չըտայր խոստումս և այլ ձօնից  
չառնէր Ատրիդէս ,

Այլ կընճացեալ 'ի սէդ սրտին յաւեր  
ժանայր 'ի հանդէս ,

Բա՛ չըտայի . քեզ յորդորակ անոխակալ  
հեզուլթեան ,

Եւ զօրավիգ կալ Արգոսեանց , որ են  
յոգիս ապաստան .

Բայց արդ և շատ տայ և տացէ , և արս  
յղեաց . քեզ աւագ ,

Արք . քաջընտիրք ողորբաւորք և քոյ սիրոյդ  
նըսպատակք :

Մի՛ անարգեր զողորբ դոցա , մի զքայլս  
ոտից աւագաց .

Բա՛ յամառելդ 'ի . քում ցասման այսպանե-  
լի չէր յառաջ :

Լըւեալ իսկ եմք , թէ փառք այն էր նախ  
նի դառուց դիւցազանց ,

Զի ամոքեալք ձօնս առնուին թէպէտ  
մըղձկեալք ոգեւտանջ :

Յիշեմ ես արդ ոչ գործ արդի գործ  
սպատահեալ վաղընջուց ,

Եւ սատամեցից , որպէս և էն , բարեկամաց  
իմ դարուս :

Կուրետացիք 'ւ Ետողացիք 'ի վէգ ելեալ  
'ի մարտին ,

Ըզկաղիւղոն ըզքաղաքաւ միմեանց օր-  
հաս կարգային .

Ետողացիք կըռուին սահել զիւրեանց  
ոստան գերապանծ ,

Կուրետացիք գոռք մըցէին քանդել ըզ-  
նա 'ի հիմանց .

Ձի Ետողեանց ըզարեցաւ մեծ ոսկե-  
գահն Արտեմիս,

Քանզի Ենոս ըզբարեբեր կալոյն նրմա  
չէտ նորիս .

Ձայլս յանմահից մինչ նա յարգէր հա-  
րիւրեզամբ հէտ ընդ հէտ ,

Միայն մեծին չէտ Արտեմեայ, կամ մո-  
ւացաւ կամ ուշ չեդ .

Սակայն յանցեաւ . և սրբամըտեալ մեծ  
նետահար Դիցուհին ,

Ի կաղաղէն գրդեաց 'ի դուրս կինճ մի  
ժանեղ ահագին .

Նա շատ մնասեաց կալոյն Ենեայ ծաղ-  
կանց անկոց մրգաբեր ,

Շատ ծառս և յաղթ ամբարձուղէչս ար-  
մատաքի տասալէր :

Մեղէագրոս Ենեայ որդին ըզնա 'ի մահ  
տարածեաց ,

Ի քաղաքաց խմբեալ որսորդս և բոյլս ա-  
ծեալ բարակաց .

Ձի որերով սակաւամիւ չէր մարթ յաղ-  
թեւ գազանին .

Էր անարդիւ . նա շատ մարդիկ ամբարձ  
'ի հուր խարուկին :

Այլ Արտեմիս սակըս կաշոյն այն թա-  
ւամազ վարազուն

Կըռիւ զարթոյց 'ի մէջ նոցա , յուղեաց  
և զկադ խալամոյն :

Յորվայր 'ի մարտ Մեղհագրոս գողայր  
արին քաջաբար ,

Կուրետացիք , թէսկէս և շատք , ոչ մօտէ-  
ին 'ի սլատուար :

Բայց Մեղագրեայ յորդեաց յայնժամ  
յոգին ցաամանն անչէջ բոց ,

Որ և ըզմիտս գրաւել գիտէ նա և կարի  
զիմաստնոց .

Ձի նա ընդ մօր իւր Ալթէայ գրդեալ  
ողուլ զայրագին ,

Չոքաւ յանգչէր յիւրն ամուսին Կղէո-  
սպատրէ գեղանին :

Ի՛ր օրիորդ սա Մարպիսայ այն սիգա-  
ճեմ Եմինեան

Եւ Իգոսին , որ յիւր դարուն էր սա  
հուժկուն յազգ մարդկան ,

Մինչև ընդդէմ Ապողոնի մեծ արքային  
ժրտեցաւ

Լարել զաղեղն այն նազաքայլ յաւերժ-  
հարսին աղագաւ .

Եւ որ յառաջ Կղէոսպատրէ , զանունն  
առեալ փոխեցին ,

Եւ մականուամբ հայրն իւր և մայր Աղ-  
կիոմէ կարգացին .

Ձի գերարտօսը իբր Աղկիոն մայր իւր  
հեծէր և ողբայր ,

Երբ քաջաղեղն ըզնա Փեբոս յափըշտա-  
կեաց և էառ :

Արդ Մեղադրոսն ստէր անդործ վառեալ  
ցամանն 'ի բոցոյ ,

Մըղձկեալ յոգին և դառնացեալ վասն  
անիծից մօր իւրոյ .

Ձի սա եղբօրն 'ի մահ՛ ցաւեալ , անիծա-  
կուռ մաղթանօք

Հայցէր 'ի դից , և խելաշուրջ ծեծէր  
զերկիր դաստակօք .

Ձի շխան մահուն հայցէր կարգայր և  
զՊերսեփոն զապառում ,

Ի գուճս անկեալ արտօսր հեղոյր մահ՛  
զաւակին տալ իւրում :

Գառն անիծից մօրն լուաւ յԵրեբոսէն  
Երիննէս ,

Սիրոն ապառում և անամոք խաւարար  
գեղն այն հըրէշ :

Բայց Ետողեանց գոյժ բարձրանայ ,  
բրգունք քանդին քաղաքին ,

Եւ ծերունիքն յողոք անկեալ Մեղադրո-  
սի մաղթէին .

Առաքեցան առ նա և քուրմք ողոքա-  
ւորք այրնտիր

Յառնել օգնել , և մեծապէս խոստանայ-  
ին նրմա ձիր .

Ձիր 'ի սահման Վաղիւղոնին տացեն նը-  
մա յուռթի վայր ,

Եւ զարգաւանդն ինքն ընտրեսցէ 'ի բաժ  
յխուն արտավար .

Ըզկէս բաժնին հանցեն նրմա վայր գինե  
բեր 'ի յայգիս ,

Կէան արտորայք 'ի դաշտ ազատ արօրա  
գիր յարմրախ :

Իսկ ծերն Ենոս ելեալ առ սեամս բար  
ձրաձեղուն սենեկին ,

Մաղթէր բախէր ըզփակ ըզդուրս 'ի  
գուճս անկեալ առ որդին :

Շատ մաղթեցին և քորքն և մայրն , իսկ  
նա պնդեալ հրաժարէր .

Ըզնոյն մաղթեն որք համահարզքն էին  
սիրունք և ընկեր :

Ոչ և այնպէս ամոքեցաւ թէպէտ և  
դուրք բախէին ,

Եւ Կուրետեանք ելեալ 'ի բուրգս հըր  
ձիգ յոստան լինէին :

Յայնժամ բողոք առ Մելագրոս հարեալ  
ողբովք ամուսինն ,

Եւ տայր համար զամբաւ չարեացն յառ  
նուլ մեծի քաղաքին .

Արք դիտապատ կան յասպաժոյժ , քա  
ղաքն յաճիւն փոխարկի ,

Ի գերուծիւն վարի մանկտին և ժրոա  
գլուխ կանանի :

Ընդոստուցեալ գոռող ոգին 'ի լուր գու  
ժին վարանէր ,

Յարեաւ վաղեաց և սպառազէն զրահիւք  
անձին պաշտպանէր :

Չորաւ վանեաց, ըստ իւր քրմաց զետո  
ղացւոցն օրհաս չար,

Բայց ձիրս արդոյս չետուն նրմա. և մըր-  
ցեցաւ նա ընդ վայր :

Արդ դու, որդեակ, օրինակիդ մի ինչ ըզ-  
հեո եկեսցես .

Քաւ քեզ Այս չար. շուք չէ անձինդ երբ  
նաւք լինին բոցակէզ .

Արի այժմէն և առ ընկալ ըզսարդե-  
ւացդ ըզդումար ,

Եւ Աքայեանք փրկեալք 'ի քէն շուք  
քեզ հարցեն դիւցաբար :

Իսկ թէ ձօնիցն ունչս արարեալ, մարտ  
ըստ կամիդ մըղեսցես ,

Շուք ոչ առցես զուգասպատիւ թէպէտ  
մարտին յաղթեսցես ) :

Աւեաց Փիւնիկ, և Աքիլէս ձայն զայս  
արագ ետ անդէն .

« Փիւնիկ դիւցազն, ինձ այդ շքքոյդ ան-  
շուշտ, հայր իմ, պէտք ոչ են .

Դիոս, որ զիս ունի 'ի նաւս, ինձ ան-  
պատիր շուք տացէ ,

Յորչափ իմ ծունգք են արագունք և  
ցորչափ լանջն իմ շնչէ :

Ես քեզ այլ ինչ ասեմ զարդիս, և դու  
յանձին հաստատեա .

Մի յողք կոծոյդ մի զիս խռովեր շընորհս  
աւնեւ Ատրիդեայ :

Չէ քեզ արժան սիրել ըզնա և սիրողիս  
գուլ դըժնի .

Որ զիս գըճճեաց, ըզնա ընդ իս և քեզ  
գըճճել է բարի :

Ընդ իս դու, հայր, թագ կապեսցես,  
փառքն իմ լիցի կէս 'ի կէս .

Դու կաց ընդ իս, հրեշտակութիւն դո-  
քա տարցին փութապէս :

Հանգիր դու աստ և դիւր արա քեզ 'ի  
փափուկ 'ի մահճէն ,

Ի տուն դառնալ խորհիմք ընդ այգն և  
կամ յամել մեզ աստէն » :

Լսաց, յոնիւքն ակնարկութիւն Պատ-  
րոկղէսի ետ լըռին ,

Հօր Փիւնիկեայ իւր ծերունւոյն գիրգ  
արկանել անկողին :

Սովաւ նա ազդ առնէր այլոց փութալ  
'ի չու անկանել ,

Մինչև անդուստ Տեղամոնեանն էառ  
դիւցազն 'ի խօսել .

« Աղէ, Ոգիւս դիւցազն ուշիմ, անկցուք  
արագ մէք 'ի չու ,

Ի զուր խօսիմք մէք յայսպիսեաց , ոչ լի-  
ցին բանք մեր ազդու :

Մէք լուր փութով տարցուք Յունաց  
թէպէտ և լուր անբարի ,

Զարդիս ատեան նստի դոցա և մեզ ին-  
քնին ակն ունի :

Բայց սէգ ոգի, այն անամոք, բուծէ 'ի  
լանջն Աքիլէս .

Գըձձէ զընկերս, մեր շքադիր սիրոյն  
չառնէ դա երես :

Ա՛յ ապառուժ, այր ոք եղբօրն 'ի սպա  
նութեան կամ որդւոյն

Առնու ըզգինն . և որ հատոյցն, 'ի քաղա  
քին կայ 'ի նոյն .

Իսկ որ ըզգինն առ ընկալաւ, սրտին զայ  
րուցք հեզանան .

Այլ սիրտ անհաշտ ետուն քեզ դիք վա  
սըն միոյ աղջըկան :

Ահա փոխան քեզ եօթըն կոյսք չքնաղք  
գեղով և ընտիր ,

Եւ այլ ինչ շատ քեզ ձօնեսցուք . ճն  
մի անգամ հեզացիր :

Քեզ յարկակիցք եմք 'ի հելլենս, դու  
զքոյդ պատուեա ըզմարդակ ,

Որ մէք 'ի Յոյնս սլանծամք յաւէա սիրոյդ  
լինել նըսպատակ " :

«Պէտ ամբօխից Այաս դիւցազն, ան  
դէն կրկնեաց Աքիլէս ,

Ո՞ ժխտեսցէ, թէ զայդ ողջիկ բարբառե  
ցար ուղղապէս .

Այլ բոց յանչէջ տապի սիրտ իմ ցորչափ  
յիշեմ զԱտրիդէս ,

Որ զիս 'ի Յոյնս իբր անաշխարհ անարդ  
գըձձեաց մեծապէս :

Գնացէք և բան զայս պատմեցէք . ես  
մարտ արեանց ոչ մըղեմ,

Մինչև Հեկտոր Պրիամոսեանն ոչ գոռայ-  
ցէ ինձ ընդդէմ:

Թէ հուր և սուր նաւաց վրանաց Միւր-  
միգոնեանց նա սպառնայ,

Ես յիմ վրանէն և ՚ի նաւէն ըզթափ վա-  
նեմ ըզնորա 125 »:

Ասաց, այր այր բաժակ երկունկն ա-  
ռին ՚ի ձօն նըւիրաց,

Եւ յարուցեալ գարձան ՚ի նաւս . էր  
Ոգիւսէս նախընթաց:

Բայց համհարզիցն և աղախնեայց հրա-  
ման կարգայր Պատրոկղէս,

Զի Փիւնիկեայ թանձր և փափուկ մահիճ  
արկցեն փութապէս:

Ժիր անկողնարկքն ըստ հրամանին ար-  
կին նրմա գառնէնի,

Եւ դողար և գիրգ ածին կըտաւ, նոյն և  
պատառ ծիրանի:

Ընկողմնեցաւ անդ ծերունին, այգուն  
մընայր լուսաբեր .

Մուտ ՚ի վըրանն և Աքիլէս ՚ի ներքսա-  
գոյնն և հանգչէր .

Անդ և աղջիկն ընկողմնեցաւ զոր նա  
էած ՚ի Լեսբեայ,

Գեղայան էր սա Դիոմեդէ գուսարը գո-  
լով Փորբասեայ:

Ընդ Պատրոկղէայ մուտ և Իփիա դեղա-  
կամարն ամուսին,

Զոր ետ Աքիլը յորժամ զԻսկիւռ էառ  
զոստանն Ենոսին :

Մինչ այս մինչ այն, հասին հրեշտակք  
'ի վրան Ատրիդ արքայի,

Եւ յոսնիմատն աւագքն Յունաց կացին  
աստի և անտի .

Մեծարեցին յոսկի նըւագ, խոյզ և խըն-  
դիր առնէին .

Եւ փուլթապէս Ագամեմնոն հարցունմ  
առնէր առաջին .

«Աղէ դու վէհդ, ասա Ոգիւս, դու մե-  
ծապէս փառք Յունաց,

Կամի՞ արդեօք նա զբազմածախ սանձել  
ըզհուրն 'ի նաւաց .

Կամ թէ արդեօք նա յողըն կայ բազմա-  
տագնասլ 'ի ժամուն . »

Որայ՞ դարձեալ և տեղի տայ գոռոզ ո-  
գւոյն աննըկուն » : *հէյդ*

Ի՞նչ, վէհափառդ, անդէն կրցեաց համ-  
բերատարն Ոգիւսէս,

Ի՞նչ գերափառդ Ագամեմնոն արքայ  
քաջաց Ատրիդէս,

Նա քան հանել զոխն 'ի սրտէն, գամ  
քան ըզգամ բոցանայ .

Ողջոյն ըզքեզ, ողջոյն զընծայսդ այժմէն  
յընչաց քերէ դա :

Ազդեաւ առնէ ընդ Աքայեանց քեզ հո-  
ւոնել 'ի յատեան ,

Ըզնաւատորմ 'իւ ձեզ փրկել և ըզՅու-  
նացն ըզխուժան :

Նա և այգուն զիւրոյ չըւոյն ձայն որոտաց  
նա յահուր ,

Առնուլ վարել 'ի ծով ըզնաւս բազմա-  
քաշտիս և ամուր :

Առ այս խրախոյս տայ և այլոց 'ի տուն  
նաւել հայրենին .

Չիք ձեզ , ասէ , բարձուն Տրոյեայ գործ  
սլըսակել ըզմարտին .

Վէհն Արամազդ կարկառ նըմա զաջ հո-  
վանին քաջալեր ,

Եւ ձայն տըւեալ ժողովըրդոց խրախու-  
սեցին անվէհեր .

Նա զայս ասաց . և են վըկայք արք որ  
ըզհետ իմ չոքան ,

Այս մեծն Այաս և այս քարողքն ա-  
մուք ուշիմք երկոքեան .

Ետ և հրաման կալ Փիւնիկեայ նաւել  
'ի տուն հայրենի

Վաղիւ ընդ իւր . բայց թէ կամի , զի  
բռնագատ ոչ տանի " :

Ասաց Ոգիւս . ափ 'ի բերան կացին ա-  
ւադքն հէլլենաց ,

Յապուշ հարան զի յոյժ սաստիկ Աքիւլ  
ըզբան իւր կնքեաց :

Լըռին այնպէս յերկար նըլադ յողիս  
հարան դառնապէս,

Մինչև ուրեմն անդուստ ձայն զայս ետ  
քաջարին Դոմեդէս :

«Ո՛վ թէ, արքայ Ագամեմոնն, Աքիլլէսին  
գոռութեան

Յողոք երբէք չէր քո անկեալ և ձօն տը  
ւեալ անպայման :

Ե՛ր իսկ 'ի բնէ նա սօս և սէգ. սոնքա  
ցուցեր առաւել :

Աղէ թողցուք, զորն և կամի, կամ կալ  
աստէն կամ չըւել :

Մարտ մըղեսցէ, թող ըստ քըմաց կամ  
երբ աստուած դրդեսցէ :

Բայց մէք զարդիս, ինչ զոր ասեմ, ունկըն  
դիցուք 'ի սրտէ :

Սիրտ հաստատեալ հացիւ գինեաւ 'ի մե  
ծապէս զօրավիդ,

Դուք 'ի հանգիստ փոխեցարո՛ւք ըզքունն  
առնուլ ըզքաղցրիկ :

Այդ վարդամատն յորժամ ծագէ խրա  
խոյս կարդա 'ի բանակ,

Հանդէպ նաւաց տո՛ւր զայրուձին, լեր  
դու արքայդ նահատակ » :

Ասաց Դոմեդ. աւագորեարն ըզբան ա  
րւոյն կընքեցին

Եւ հրաշացան ընդ վէհ բարբառ քաջա  
կորով ասպետին :

Սալր այր ապա ձօնեալ նըւերս 'ի վրանս  
իւրեանց մեկնեցան ,  
Ընկողմնեցան և ըզպարգևն առին քընոյն  
քաղցրութեան :



THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY  
540 EAST 57TH STREET  
CHICAGO, ILL. 60637  
TEL. 773-936-3700


# ԵՂԻՍԵՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ժ •

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ագամեմնոն 'ի տագնապ խորհրդոցն խիթայ 'ի գիշերախառն յարձակմանէ Տրոյացւոց. զարթուցանէ զգօրավարս բանակին. խորհուրդ առնու ընդ նոսա յղել զոք լրտես 'ի բանակ Տրոյացւոց, գիտել զթշնամեաց: Դիոմեդէս և Ոգիւսէս ընծային յայն ձեռնարկ: Անդուստ և Հեկտոր գիտել ինչ զՅոււնաց յետ հարուածելոյն նոցա, խնդրէ զոք 'ի լրտես գիշերային և գտանէ զԴոդոն: Դոդոն հանգիւպեալ գիշերի լրտեսացն Յոււնաց, ահաբեկի. և հարցեալ յՈգիւսեայ, յայտնէ նմա մի առ մի զՏրոյացւոցն իրս և զնիղակակցաց նոցա: Սպանանի 'ի Դիոմեդեայ: Լրտեսք Յոււնաց տեղեկացեալք 'ի Դոդոնէ, յառաջացեալ միին մինչև 'ի վաշտս Թրակացւոց, և գտեալ զնոսա խոր 'ի քուն, առնեն կոտորած: Հանգամանք մահուն Ռեսոսի արքային Թրակաց: Այլ մոակ Տրոյացւոց 'ի գոյժ մահու արքային: Դիոմեդէս և Ոգիւսէս տիրացեալ նժուգացն հոյակապից Ռեսոսի դառնան ողջամբ առ Յոյնս:

'Նոյն գիշեր է տակաւին 'ի Հագներգուլթեանս: Տեսարանն գիշերային է 'ի մէջ երկուց բանակաց:



# ԵՊԻԼԵՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ժ.

ԸՅՍՊԵՍ ՅՈՒՆաց աւագորեար նաւա-  
տորմին առ ընթեր  
Քուն առնուին անգորրահան անգ զա-  
մենայն ըզգիշեր .  
ԱԼ Ատրեսեանն Ագամեմոնայ յար-  
տեանանց մեծ հովուին  
Քուն քաղցրութեան հատաւ 'ի բուն ,  
չատ ինչ յուղէր 'ի յոգին :  
Որպէս յորժամ շանթէ Հերայ վարսա-  
գեղին մեծ փեսայն ,  
Եւ ամսահար կարկուտ թափէ կամ  
չաղբ անձրև անսահման ,

Կամ ձիւնաբերս, որով անդոց սպիտա-  
կափառ է գետին,

Կամ թէ ուրեք զահեղ բերան բանայ  
զարեանց ըզմարտին,

Այսպէս արքայն անդ խիտ առ խիտ յո-  
գւոց հանեալ թառաչէր,

Երիկամուկքն ասիւ սարսեալ 'ի խոր սըր-  
տին տագնապէր:

Իբրև դառնայր և ըզՏրոյեանց յակն ար-  
կանէր ըզխուժան,

Յապուշ հարեալ ընդ շատ խարոյկ Տրոյ-  
եայ վառեալ յանդիման.

Անդուստ տաւղաց ձայն սըրընգաց լըսէր  
խընծիլք խառնաձայն,

Դառնայր ապա հայէր 'ի նաւս 'ի լուռ  
բանակն Աքայեան:

Ի վեր յերկին առ Արամազդ փունջըս  
հերաց կարճովին

Խըզէր զգլխոյն, և խոր յոգւոց սիրտըն  
գելոյր քաջազին:

Յայնժամ 'ի միտս իւր հաստատեաց իբ-  
րև խորհուրդ քաջութեան,

Յառնել գընալ առ այրն աւագ Նեստոր  
ասպետ Նեղոսեան.

Անդ ընդ ծերոյն հանճարիմաց նիւթել  
խորհուրդ առանձին,

Որ յարկածից աստահալած լիցի Յու-  
նաց բանակին:

Ի վեր յարեալ և սատմուճան շուրջա-  
նակի արկ լանջաց ,

Եւ մաքրափայլ յոտսըն կօշիկ ըզգեղեցի-  
կըն կապեաց :

Ջառիւծեհին մեծ և զաշխէտ պարա-  
գրապէս արկ անձին ,

Էր այն հրափայլ պըճըղնաւոր . և տէգ  
կալաւ 'ի բըռին :

Րզդողանի և Մենեղաւ հարեալ համ-  
բուն 'ի յոգին ,

Ոչ նինջ անկաւ արուանանց ոչ քուն  
աչաց դիւցաղին .

Դողայր, գուցէ որ յիւր պատճառս Յոյնք  
ծով հասին քաջապէս ,

Տապաստ անկցին 'ի Տրսյիա մարտին մը-  
տեալ 'ի հանդէս :

Ըզյաղթ ուսոյն արկ առաջին խայռա-  
խարիւ ընձենի ,

Տէգ առ 'ի բուն և սաղաւարտ 'ի գլուխ  
եգաւ պըղընձի :

Խաղայր այնպէս զարթուցանել ըզմեծ  
արքայն և զեղբայր ,

Ում ակն ածեալ Արգոսացիք շուք ձօ-  
նէին դիւցաբար :

Եգիտ ըզնա , զի զէն և զարգ առնոյր 'ի  
խելըս նաւուն ,

Ում և գալուստ հարազատին էր ըզձա-  
կերտ 'ի ժամուն :

- «Առ ի՞նչ այդպէս, բարբառեցաւ Մե-  
 նեղաւոս առաջին,  
 Առ ի՞նչ ճեպել քեզ, ո՛վ արդոյդ, զէն  
 զարդ առնուլ առանձին .  
 Արդեօք ըզմի 'ի համհարզից խնդրէ՞ս  
 Տրոյեանց 'ի լրտես .  
 Այլ յոյժ խիթամ . ոք դիմագրաւ ոչ  
 քաջացի յայն հանդէս .  
 Ի խոր գիշեր առ թշնամիս դէտ ո՞ գնաս  
 ցէ միայնակ,  
 Բայց թէ անշուշտ այր ոք սրտեայ յանձն  
 ապաստան նահատակ » :
- «Ս՛եզ արդ պէտք են, ո՛վ Մենեղաւ,  
 կրկնեաց արքայն պատասխան,  
 Պէտք են զարդիս և ինձ և քեզ աղուէ-  
 սաբար խորհրդեան .  
 Որով այժմէն փրկիչ լիցուք նաւատոր-  
 մին և մարդկան,  
 Զի աւանիկ խորհուրդք մտաց Արամազ-  
 դայ շրջեցան :
- Նա Հեկտորին արդ մեծապէս հայի 'ի  
 ձօն նըւիրաց .  
 Յարդ ոչ տեսի ցարդ ոչ լուայ, թէ ոք  
 երբէք մեզ սատմեաց,  
 Եթէ օր մի այնչափ նախաձիր, որչափ Հեկ-  
 տոր, մարդ գործեաց .  
 Ոչ դիցուհոյ գոլով դա ճետ և ոչ 'ի դից  
 զաւակաց :

Նախաճիրս ամբաւ զայդ գիւցազինն ածցեն  
 Հեւլենք 'ի յուշի

Դարուց 'ի դարս , զի շատ աղէտ առթեաց  
 Յուսաց բանակի :

Բայց դու 'ի նաւս երթ փութապէս ,  
 ձայնեա առ մեզ զԻդոմէն ;

Չայնեա զԱյաս . ես առ Նեստոր փու-  
 թամ արդ յիմ խորանէն .

Խրախոյս ծերոյն տամ գալ ընդ իս 'ի  
 վաշտն 'ի սուրբ պահկերաց ,

Ինչ մի թերևս անդ ծերունին հրաման  
 կարգէ այնց քաջաց .

Լուիցեն նրմա , զի իւր որդին պետ պահ-  
 կերաց կարգեցաւ ,

Նոյն Մերիոնն Իդոմենեան , որոց այն  
 գործ յանձնեցաւ ” :

Եսաց արքայն , կրկնեաց առ նա Մենե-  
 ղաւոս քաջարին ,

“ Այլ զինչ բանիւդ ինձ ազդ առնես  
 կամ զինչ հրաման արքային .

Կացից մնացից ես առ դոսա մինչև գայ-  
 ցես դու առ մեզ ,

Կամ թէ ըզբոյն տըւեալ պատգամ , դար-  
 ձայց անդրէն ես առ բեզ ” :

“ Կացցես դու անդ , ասէր արքայն , մի  
 մէք թափառք նըշաւակ

Մոլորեացուք , իբրու շատ են անցք սո-  
 ղոտայք 'ի բանակ :

- Չայն տուր , զարթո , կարդա նոցա զանունն իւրեանց հայրենի ,
- Յանուն զարմին շուք հար նոցա , մի սոն քասցիս 'ի յոգի :
- Ընդ ասլաժոյժ ընդ ասլաւառ գալ երկոցուն մեզ սարտ է ,
- Զի մեծ զըմբաղ նիւթեաց մեզ Զկա անդուստ մեր մօրն յարգանդէ » :
- Լսաց արքայն , յղեաց զեղբայրն և հրահանգեաց քաջապէս ,
- Ինքն առ Նեստոր մեծ նահապետն յարեալ գընայր փութապէս :
- Եգիտ ըզնա իւր սևորակ հանդէպ նաւուն 'ի վրանին ,
- Գունակ գունակ զէնքն առ ընթեր և ինքն 'ի գիրգ անկողին :
- Անդ կայր ասպարն , և ճաճանչեղն իւր սաղաւարտ , տէգք կրկին ,
- Անդ կայր եդեալ և գեղեցիկ բազմատիպար իւր գօտին .
- Նովալ 'ի մարտ գօտևորէր ժիր ծերունին աննրման ,
- Զօրավարէր և զալևոյթն անտես առնէր ծերութեան :
- Յարեալ 'ի վեր , յեցեալ յարմուկն աւբարձ գրչուիս 'ի մահճաց ,
- Ետես հանդէպ իւր զեկաւորն անդէն նրմա զայս եհարց .

“ Ո՛վ ես , այր դու , որ ընդ բանակ շըր-  
ջիս այդպէս 'ի մըթան ,  
Եւ առ նաւուք գաս միայնակ երբ այլ  
մարդիկ 'ի քուն կան :

Գիշերապահ և կամ ըզմի 'ի համհարզնց  
դու խնդրես ,

Խօսեաց , մի լուռ յիս մերձենար . զի՞նչ  
պէտք իրաց իցեն քեզ ” :

“ Ո՛վ Նեստորէ , ձայն Ատրիդէս արքայն  
անդէն զայս կրկնեաց ,

Ո՛վ ծեր արգոյդ ասպետ աւագ , դու մե-  
ծապէս փառք Յունաց .

Ատրիդէն եմ ես , զոր Արամազդ յաղէտ  
ամբաւ թակարթեաց ,

Եւ թակարթէ ցորվայր քայլեմ ցորվայր  
չընչեմ 'ի լանջաց .

Քուն քաղցր յաչացս հատաւ 'ի բուն ,  
վասն այնորիկ թափառիմ ,

Յանձուկն Յունաց և յայս 'ի մարտ տա-  
գնապէցան խորհուրդք իմ .

Ահիւ մեծաւ ես սարանիմ շաղեալ իբ-  
րու յարագազ ,

Անձն իմ յողգողգ վասն Աքայեանց ես  
դեղևիմ հանապազ .

Սիրտ իմ վազէ , խնդրէ 'ի դուրս այժմէն  
ոսանուլ 'ի կրծոց ,

Դողան սարսէն իմ քաջաբուն այս հաս-  
տարանք անդամոց :

Արդ թէ խորհիւ ինչ հնարիմաց, զի և  
ըզքեզ քուն չէառ,

Արև 'ի վեր իջցուք այժմիկ մէք սահ-  
նորդացն 'ի ճամբար :

Տեսցուք գուցէ սարտասեցան խոնջք և  
վաստակք 'ի մարմին,

Կամ թէ քընով են ծանրացեալք և տըք-  
նաբար սահ չունին :

Ահա բանակ մեր թշնամեաց մօտ մեզ  
նստի յանդիման,

Եւ ո՞ գիտէ յանկարծ 'ի մարտ գուամարեա-  
ցին գիշերայն :

“**Մ**տրիդ ըզքեզ, Նեստոր ասպետ կար-  
դաց նրմա քաջալեր,

Մի տագնապիր գու քաջ արանց, և մի  
այդպէս զանգիտեր :

Տեսցես մօտոյ, ոչ զամենայն իղձ հեկ-  
տորայ և զիմաստ,

Ոյց մի անգամ դա ակն ունի, լցցէ ուշիմն  
Արամազդ :

Նա և հեկտոր բազմատագնապ ընդ  
քիրան հարցի մեծապէս,

Թէ զողին իւր հեղձամըղձուկ հեզացուս-  
ցէ Աքիլէս :

Ես մըտադիւր գամ քո ըզհետ, բայց և  
այլոց ձայն տացուք,

Զահեղատէգն ըզՂոմեդէս և զՈդիւսէս  
զարթուացուք :

Նոյն և զԱյասն արագոտնեայ և ըզՓիւղեան կորովի .

Նա և այժմէն ոք ճեպեսցէ ձայնել 'ի մեր ժողովի ,

ԶԱյասն ըզմիւս գիւցանըման և զԴրոմէն .  
քաջ զարբայն ,

Իբրև նոցուն նաւացն հանդէս շատ ինչ 'ի մէնջ հեռի կան :

Այլ ես թէպէտ Մենեղաւեայ սիրով ըզշուք հարկանեմ ,

Բայց և այնպէս կշտամբեցից . թէ և ցասնու , ոչ լըռեմ :

Հիմ դա ննջէ , և քեզ միայն թողու ըզքիրան և վաստակ .

Պարտ էր նրմա յողոք մատչել ողջ որերոյն մեր աւագ .

Ահա զարդիս հարկ յանհրաժեշտ նեղէ ըզմեզ այս արկած " .

Լըւաւ արբայն , և ծերունւոյն անդէն կրկնէր անդրադարձ .

“Սէ զայլ նըւագ քեզ , ծերունիդ , ազդեւ նըմա սագրեցի ,

Զի շատ անգամ ձեռն ըզմիջով դա վաստակել չըկամի .

Անշուշտ , ոչ թէ յուլանալով կամ յանխորհուրդ ինչ մըտաց ,

Այլ յիս է դա ակընկաւոյց և ուշ դընէ իմ շաւղաց :

Դա նախ քան զիս յարեալ սյսօր կան-  
խեաց առ իս փուլթապէս ,

Ես հրավիրակ եղի ըզնա ոյց յարքայից  
դու խնդրես :

Արի գնասցուք գըտցուք ըզքաջս հան-  
դէս գըրաց պահկերաց ,

Զի անգանօր ես ազդեցի խմբէլ գնդին  
աւագաց ” :

“ Յոյն այր ուրեմն , ասաց Նեստոր , ոչ  
անսաստէ ոչ սրտնի ,

Երբ դա այնպէս թէ յորդորակ թէ ձայն  
կարդայ հրամանի ” :

Բաց , ՚ի նոյն և ըզլանջօքն ըզպատմու-  
ճանն հանգրիճեաց ,

Եւ մաքրափայլ յոտսըն կօշիկ ըզգեղե-  
ցիկըն կապեաց .

Առեալ ապա և ճարմանդէր զիւր պարե-  
գօտ ծիրանի ,

Կրկնատակեան մեծ պարեգօտ աղուա-  
մազիւք ծաղկալի :

Առ ՚ի ձեռին և յաղթ գեղարդն ՚ի սայր  
սըրեալ պըղընձին ,

Պատենագէն Յունաց ՚ի նաւս յարեալ գը-  
նայր առաջին :

Եկն առ Ոգիւս , և ձայն բարձեալ մեծ  
ճերունին ժիրաժիր ,

Զարթուցանէր զայրն ՚ի հանճար Արա-  
մազդայն զուգակիր :

Չայն ծերունւոյն արագ արագ յունկըն  
 ազդեաց Ոգիւսին ,  
 Վազէաց արտաքս եւ 'ի վրանէն , զայս  
 անդրադարձ տայր ձայնին .  
 « Առ ի՞նչ այդպէս աստ ընդ բանակ դուք  
 միայնակ թափառիք ,  
 Յաղճամըղջեան մուծ գիշերիս ո՞ր դրդե-  
 ցին մեծ կարիք » :  
 « Մի՛ Լայերտեանդ , ասէր Նեստոր , մի  
 դու ուշիմ խորագգաց ,  
 Մի՛ ցասնուցուս , քանզի ամբաւ աղէս  
 ըզմեզ սաշարեաց ,  
 Արի՛ ընդ մեզ , զի և զայլ ոք 'ի մեր քա-  
 ջաց զարթուցուք ,  
 Խորհել խորհուրդ , փախչել արդեօք թէ  
 մարտ կրկին մըղեսցուք » :  
 Նա զայս ասաց , և բազմիմաստն եմուս  
 'ի ներքս Ոգիւսէս ,  
 Զասպար զուսոյն առ զերմինազարդն ,  
 եւ ընդ նոսա փուծապէս :  
 Առ Դոմեգէս եկեալ դիւցազն , գըտին  
 առ դուրս խորանին  
 Զինու զարդու , և ըզնովաւ նիզակակիցք  
 ննջէին .  
 Անկեալք այնպէս բարձ ըզգըլխով զաս-  
 պարն ունին քաջազունք ,  
 Եւ շէշտ ուղղորդք 'ի սայր 'ի սուր վար-  
 սեալ կային գեղարդունք .

Վառեալ պըղինձն իբրև փայլակն Արա-  
մազդեան 'ի ճաճանչ

Ձիգ ցողանայր, մինչ դեռ անկեալ այրըն  
ննջէր քաջալանջ .

Էր անկողին գեանախըշտեայ վայրագա-  
սուն մորթ եզին ,

Բայց և պայծառ գորգ ընդ գլխով կայր  
տարածեալ դիւցազին :

Ըզնա Նեստորըն Գերեհեան զարթու-  
ցանել մերձ եկաց ,

Մեղմով այնպէս մեծ ծերունին խրթեաց  
ոտիւքն և կարդաց .

“ Զարթիր Տիւղեանդ , զն՞ զողջ գիշեր  
քաղցրս քընոյն ըզճաղիկ

Քաղեսս ողջոյն , և ո՞չ լսես զխորդ մերձ  
կան Տրոյացիք .

Դոքա բանակ հարեալ նստին 'ի բլուր  
դաշտին , որ մօտ կայ .

Ա՛հ՝ առ նաւուք քերեհ դոքա , անջրպետն  
է դուզնաքեայ ” :

Եւ յն ինչ լուաւ , և ճեպ ընդ ճեպ Դիո  
մեդէս 'ի քընոյն

Յարեաւ զուարթունն , արագաթև ձայն  
զայս կարդայր ծերունւոյն :

“ Բա՛բէ , դու ծեր վաստակաբէկ , երբէք  
քրտանց դուլ չառնես ,

Մի՛թէ և շտոք յորդուոց Յունաց առոյ-  
գագոյնք չե՞ն 'ի մեզ .

Թող ըզպաշտօնդ հարցեն դոքա ձայն  
տալ աւագ որերոյն ,

Թող պատանիք շուրջ վազեսցեն • բա՛բէ ,  
անխոնջ ծերունւոյն ” :

“ Այո , ո՛վ .բաջ , Նեստոր առ նա ձայն  
ծերունին արձակէր ,

Այո համբուն , ո՛ բարեկամ , զայդ դու  
արդար ասացեր •

Են են որդիք իմ ժիրաժիրք , են ինձ բա-  
զում և որեան ,

Ումէք արդեօք ՚ի դոցանէն էր արքայից  
տալ ըզձայն •

Այլ ՚ի պահուս անհընարին Ա.բայեցիք  
տազնապին ,

Ահա ըզցայգս առ հասարակ ՚ի սայրըն  
կան սուսերին •

Արդ մօտալուտ կամ չար օրհաս կամ  
քաղցր արև մեզ մընայ ,

Բայց դու գընա զարթո զԱյասն և .բաջ  
զորդին ըզՊիւղեայ •

Առոյգդ ՚ի տիս ճեպ տուր ոտից , թէ  
ծերունւոյս գութ ածես ” :

Լըւաւ Գոմեդ , զառիւծենին զուսոյն  
էարկ փութապէս ,

Էր մեծ հրափայլ սրճըղնաւոր • կալաւ ՚ի  
բունն և զաշտեայն ,

Չոքաւ զարթոյց զաւագորեարն , առեալ  
ածէր ընդ ինքեան :

Գրան առ սրահնորդս , և հասարակ զիշ-  
 խանսն անքուն գլտանեն ,  
 Կային այնպէս ողջ զըւարթունք 'ի զարդ-  
 վառեալ և 'ի զէն :  
 Որպէս սրահներ ազգըդ դամբուանց տըք-  
 նին 'ի հօտըս խաշանց ,  
 Լըւեալք զի գայ գազան վայրագ գիմեալ  
 ընդ թաւըս լերանց ,  
 Գոռիւն մարդկան վանէ զգազանն նոյն  
 և հաջիւն բարակաց ,  
 Աննիրհէլք մընան նոքա , քունն հատանի  
 'ի յաջաց ,  
 Սապէս նոցուն յարտեանանց 'ի սպառ-  
 հատեալ անոյշ քուն  
 Անդ տքնաբար սրահ ունէին յայն արհա-  
 լիրս գիշերոյն .  
 Յանդ 'ի բանակ Տրովադացւոց ահրնկա-  
 ոոյցք շականջեն ,  
 Գուցէ յանկարծ փաղանդք նոցա հրոսակ  
 տըւեալ խուժեացեն :  
 Տես ծերունին և ցնծացաւ , բարբառե-  
 ցաւ քաջալեր ,  
 Եւ յանուանէն ձայն զայս քաջաց արա-  
 դաթև արձակէր .  
 « Այդպէս զուարթունք , որդեակք սի-  
 րունք , մի ոք քընով ծանրասցի .  
 Պահկերք անդուք , զի մի առակ Տրոյ-  
 եանց լիցուք խուժանի » :

Լսաց , և անց ծերն ընդ խորամն և ընդ  
ծերոյն միաբան

Արքայքն անցին Արգոսացւոց , որ յայն  
խորհուրդ կոչեցան :

Չոքաւ ըզհետ և Մերիոն և քաջորդին  
Նեստորի ,

Զի և սոքա խորհրդակիցք հրաւիրեցան  
յատենի :

Անցեալք ընդ խոր պարկէն փոսոյն 'ի  
վայր մի զերծ բազմեցան ,

Ուր անջրպետ սահմանափակ էր դիա-  
կանց թանձրութեան .

Անտի դարձաւ հեկտոր արին 'ի հարուա-  
ծոյն հելլենաց ,

Յորժամ մըթին պահ գիշերոյն առ հա-  
սարակ զոդ պատեաց :

Յատեան նստան առին խորհուրդ և այր  
զրուցէր ընկերին ,

Մինչև ըսկիզբն արար Նեստոր և զայս  
կնքեաց յակրմբին .

« Ո՞րք 'ի ձէնջ , ո՞ բարեկամք , յանձնա-  
պաստան 'ի յոգի ,

Որ միջամուխ 'ի բուն բանակ Տրոյեանց  
քաջաց ժլտեսցի :

Լիցի թերևս ունեւ նրմա զոք վերջոս-  
նեալ 'ի զօրաց ,

Կամ թէ հնարի լուր պիտեան որսալ նո-  
ցուն 'ի գաղտնեաց .

Ձիւնչ ինչ զրուցեն. կամի՞ն արդեօք կալ  
 'ի բացեայ 'ի նաւաց ,  
 Կամ թէ վանեալ զԱ.բայեցիս անդրէն  
 յոստանն առնել դարձ :  
 Թէ զայդ լուեալ դարձցի ողջամբ , տար-  
 ցի նա մեծ մրցանակ ,  
 Եւ ընդ արիւուլ գերաշխարհիկ փառաց  
 լիցի նա ժառանգ :  
 Որչափ աստէն աւսգորեար իցեն իշխանք  
 մեր նաւաց ,  
 Մաքի մի սեաւ տացէ այր այր նրմա գա-  
 ռամբն ըստընդիաց :  
 Պարգևական մրցանակիս այլ ձօնք ան-  
 շուշտ զուգորդ չեն ,  
 Եւ ցանդ յընթրիս և 'ի կոչունս չըքով  
 նրմա բարձ տացեն " :  
**Լ** ըւան ըզբանն , և մրտախոհք առ հա-  
 սարակ լուռ կացին ,  
 Մինչև ուրեմն ետ ձայն Գոմեդ բարբա-  
 ռեցաւ կորովին .  
 « Ոգիս սրտեայ , ու՛րհե՞ստորէ , ինձ արդ-  
 կարդայ քաջալեր ,  
 Յառնել Տրոյեանցն 'ի բուն բանակ գոլ  
 միջամուխ անվէհեր :  
 Իսկ թէ և այլ դք 'ի քաջաց ընկերեսցէ  
 ինձ զարդիս ,  
 Գամ քան ըզգամ յանձնապաստան ես  
 բոցանամ 'ի հոգիս :

Զի թէ երկուք իբրև ամուլք գնասցեն 'ի  
մի ճանապարհ ,

Մին կանխեսցէ և ընկերին խորհուրդ  
տացէ փրկարար .

Իսկ մին միայն թէպէտ խորհուրդ ինչ  
առանձին խորհեսցի ,

Չէ անվէհեր , այլ միտք նորա նոյն և ու  
գին դեղևի " :

Ասաց , և շատք Դիոմեդեայ յառնել ըզ-  
հետ յօժարին ,

Այսպէն արիք և Մերիոն , յաւէտ որդի  
Նեստորին .

Անդ խրախուսէր և քաջատէգ Մենեղա-  
ւոս Ատրեսեան ,

Խրախոյս եբարձ և Ողիւսէս մըլսել Տրոյ-  
եանց 'ի խուժան .

Ի սիրտ քաջիս միշտ գեղեցիկ խորհուրդք  
արեկք յուղէին .

Մինչև անդուստ Ագամեմնոն ձայն ետ  
արքայն ատենին .

« Դիոմեդէս , ոգւոյս հատոր , աղէ Տիւ-  
դեանդ քաջազէն ,

Ուղւոյդ ընկեր զոր և կամիս , ընտրեա  
անձին դու քեզէն :

Շատք աւագիկ խրախուսեցին , ըզլաւն  
ընտրեա զոր գիտես ,

Մի յետ թիկանց թողուր զարին , և մի  
երբէք ակն ածցես .

Մի՛ չուք հարեալ դու յընտրուածեանդ  
առցես քեզ զոք անարի ,

Կամ թէ զարմին պատկառ կացեալ կամ  
թէ շքոյն արքունի ” :

Օ՛յայս նա ասաց , զի զանգիտէր վասըն  
խարտեալ Մենեղեայ ,

Այլ քաջարին Դիոմեդէս անդէն կրրկ  
նեաց առ նոսա .

« Եթէ ընկեր , ինձ հրամայէք , ինքնին  
ընտրել յայս հանդէս ,

Բա՛բէ , զիսորդ ինձ մոռացօնք լիցի դիւց-  
ազն Ոգիւսէս .

Որոյ ոգիքն ընդ քիրտն ամբառ նահատա-  
կին հանապազ ,

Եւ զոր ինքնին յոյժ գրդաբար սիրէ  
Պալլաս Աթենաս .

Թէ ուղեկից ըզգա առնեմ , բա՛ մեզ և  
հուր բոցավառ .

Չազդէ ՚ի բուն , վազեմք ՚ի բաց . այնչափ  
գորա է հանճար ” :

« Չեն ինձ , Դիոմեդ , ձայն Ոգիւսէս համ-  
բերատարն ետ անդէն ,

Քա՛ւ , չեն ինձ պէտք ոչ գովեստի ոչ  
սլարսաւի առ ՚ի քէն :

Դու հէլլենաց ՚ի մէջ խօսիս , որ այդ  
բանից չեն անդէտ .

Արի՛ գնասցուք , սրանայ գիշեր , այգըն  
մօտի մէտ ՚ի մէտ .

- Ահա աստեղք հոլովեցան և գիշեր շատ  
 կարճատեաց ,  
 Ըստ պահ երկու անց նա յառաջ և պահ  
 երրորդ մեզ մընաց ” :  
**Օ** այս խօսեցան և վառեցան զինու զար-  
 դու սրսկալի ,  
 Եւ Թրասիւմեդ կարկառ յայնժամ սուր  
 Դոմեդեայ երկայրի .  
 Քանզի զսուսերն եթող Դոմեդ մօտ 'ի  
 հանդէսն նաւաց .  
 Ետ և ասպար , և սաղաւարտ 'ի գլուխ  
 նորա յարմարեաց .  
 Էր գլխանոցն յարջառենուոյ վերջք և  
 ցըցունք չէր ծայրին ,  
 Պահպան գլխոյ էր պատանեաց , գագաթ  
 նադաշ կոչէին :  
 Իսկ Մերիոն կապարճ աղեղն ետ և սու-  
 սեր Ոգիւսեայ ,  
 Եւ դիւցազինն պահ գագաթման եդ գլխա-  
 նոց քեմըխտեայ .  
 Էր հաստապինդ բազում փոկովք նա  
 պաշտպանեալ 'ի ներքոյ ,  
 Եւ կարգ ժանեաց ըսպիտակաց աստի  
 անտի արտաքոյ .  
 Գործած չքնաղ կարգն էր ժանեաց ժա-  
 նեղ կընձին վայրենի ,  
 Եւ 'ի միջի գլխանոցին էր յարմարեալ  
 խոյր կաճի .

Ձայս գլխանոց գաղտ յՈրմենեան Ամին .  
տորէ յԵղոնա

Էառ: Ատուիկ ըզքաջամուրն ըզտուն խո  
րեալ ըզնորա .

Ի Աբանդիա ետ նա ըզնոյն Ամիիգամին  
Կիւթերեան ,

Իսկ Մողոսի ըզնոյն դարձեալ ետ 'ի հիւ  
րոյթ Ամիիգամ .

Մողոս տանել Մերիոնեայ եթող իւ  
րում զաւակին ,

Եւ հուսկ ապա զՈղիւսեսեայ ըզգլուխ  
ծածկեաց ըզքաջին :

Իբրև այսպէս զինու զարդու վառեալք  
անցին 'ի հանդէս ,

Ձաւագանին թողեալ անդէն յուղի ան  
կան փութապէս :

Ընկեր ուղւոյն յդեաց Պալաս յաջմէ  
թուչուն զերովզին 126 .

Մութ գիշերոյն ծածկեր յաչաց , ըզձայն  
միայն լրսէին :

Խնդաց Ողիւս ընդ ձայն թուչնոյն , և ա  
ղօթէր առ Պալաս ,

« Ասպարաղէնն Արամաղդայ լուր ինձ  
ծընունդ Աթենաս .

Գուցանդ 'ի վիշտս իմ հովանի . արդ էս  
'ի քէն գաղտաբար .

Քայլ չըշարժեմ . ինձ այժմ յաւէտ խը  
նամ ածցես սիրաբար :

Ի հոյակապ մեր նաւատորմ, ո՛վ տէր,  
 տացես դարձ ողջիկ  
 Նախճիր գործեալ, որ Տրոյացւոց հան-  
 դերձեսցէ ցաւ սաստիկ ” :

**Ա**յա երկրորդ և Դոմեդէս զայս աղօ-  
 թեաց ՚ի ժամուն .

«Արդ լո՛ւր և ինձ արամազդեանըդ Օրի-  
 որդ աննրկուն .

Ա՛ր ինձ պաշտպան, որպէս երբեմն, հօրն  
 իմ Տիւդեայ դիւցազդեաց  
 Երբ ՚ի Թեբէ ատեանն Յունաց հրեշտակ  
 ըզնա առաքեաց :

Նա մերձ յԱսոս զըսպառազէնս Աքայ-  
 եցւոց լըքանէր,  
 Եւ առ Կադմեանս արձակեցաւ աղու  
 բանիւք ՚ի բանբեր :

Իսկ ՚ի դարձին քեւ, Դիցանոյշ, նախճիրս  
 գործեաց մեծապանծ,  
 Երբ դու նրմա սիրապատար հովանացար  
 ՚ի բարձանց :

Նոյն և այսօր զիս ընկալցի աջ քո պաշտ-  
 պան մեծազօր,  
 Եւ ես փոխան քեզ ՚ի նըւէր երինջ յա-  
 զեմ տարևոր .

Երինջ տրամուղ լայնաճակատ զոր չև ՚ի  
 լուծ մարդ ձրգեաց .

Զայն քեզ յազեալ, ոսկի համակ շուրջ  
 բոլորեմ եղջերաց ” :

Չայս մաղթեցին և Աթենաս չեկաց ան-  
լուր 'ի ձայնին .

Մաղթեալք այնպէս Կուսին մեծի ընդ  
մութ գիշեր խաղային ,

Իբրև ամուք վեստ առիւծունք խաղան  
ընդ կոյտ դիականց ,

Ընդ կոտորած , ընդ մէջ զինուց , ընդ ա-  
պաժոյժ լիճ՝ արեանց :

Ոչ և քաջաց Տրովագացոց եթող Հեկ-  
տոր կալ 'ի քուն ,

Այլ միաբան զաւագանին 'ի մի խմբեաց  
'ի ժամուն .

Հրաւեր կարգայր զօրավարաց միահա-  
մուռ և պետաց .

Բոլորեցան նոքա յատեան , անդ քաջ  
խորհուրդ զայս նիւթեաց :

« Ո՞վ ինձ , ասէր , յանձին կալցի գործ մեծ  
հանել 'ի կատար ,

Ում գարձ լիցի փոխարինին մեծապարգև  
'ի վըճար .

Կառք գեղեցիկ , սէգ բարձրավիզ զոյգ  
նրժուգաց տամ նրմա ,

Որ 'ի նրժոյգս Յունաց ողջոյն չնաշխար-  
հիկք են դոքա .

Առ այս և որ յայն քաջացի , շուք մեծ  
անձին յորգեսցէ ,

Թէ մերձ նաւաց լրտես գաղտնի գնա-  
ցեալ ուշով զննեսցէ .

Արդեօք նոքա որպէս յառաջն, ե՞ն պա-  
հակերք անդադար,  
Եթէ արդեօք մեր հրոսակէն անկան լը-  
քան վատաբար .

Խորհի՛ն թերևս և շըշընջան առնուլ փա-  
խուստ նըշաւակ,  
Եւ ջըլինին գիշերապահք խոնջք լինե-  
լով և վաստակ ” :

Բայց հեկտոր, և լըուլթիւն գրաւեաց  
ողջոյն զայն ատեան,  
Մինչև որդին վէհ Քարողին յարեաւ  
Դողոն Եւմեդեան .

Էր սա ժառանգ շատ պըղընձոյ նա և ու-  
կոյ քանքարաց,  
Տիպ պատկերին իւր անգեղեայ, բայց էր  
ոսիւք ճեպընթաց .

Քերց երամոյն 'ի մէջ հնգից ուստըր գո-  
լով միայնակ,  
Որ և յայնժամ ձայն ատենին կարդաց  
իբրև նահատակ .

“Ձիս, ո՛վ հեկտոր, սիրտ անվէհեր արդ-  
խրախուսէ մեծապէս  
Յառնել այժմէն 'ի նաւատորմն Յունաց  
գընալ 'ի լրտես .

Ինձ գաւազան ամբարձ, երգուիր, թէ  
ըզնրժոյգս ինձ ձօնես,  
Նա և ըզկառս պըղընձակուռ յոր ամ-  
բառնայ Ա.բիլլէս :

Ես քեզ լատես ոչ վայրապար դէտ ըստ  
ըզձին քոյ լինիմ,

Ես միջամուխ մինչև 'ի բուն ժըտիմ նո-  
ցա բանակին,

Մինչև 'ի նաւն Ագամեմնեայ ուր դասք  
թերևս աւագաց

Խորհուրդ խորհին, փախչէ՞լ արդեօք թէ  
մարտ մըղէլ ըզքաջաց ʔ :

Ասաց Դողոն, երդուաւ Հեկտոր ամ-  
բարձ նրմա գաւազան,

«Ամպրոտայինն, ասէր, Հերայ վըկայ լի-  
ցի մեզ փեսայն .

Մի ոք Տրոյեանց բարձեալ բերցի 'ի  
նըժուգացն Ա.քիլէայ,

Այլ օն և օն յաւէժարար դու ճոխաս-  
ցիս 'ի դոսա ʔ :

Ասաց երդուաւ, սակայն ընդ օդ . դըր-  
դեաց 'ի գործ խակութեան .

Նա ճեպ զուսոյն արկաւ ըզզէն ըզլայնա-  
լիճ՝ աղեղան .

Ըզգայլենի ըզգորչ գայլոյն էառ զան-  
ձամբ սաամուճան,

Եդ գլխանոց աքիսենի, ըզսայրասուրն  
առ զաշտեայն :

Խաղայր 'ի նաւս 'ի բանակէն ուր գառ-  
նալոց չէր կրկին .

Վահ, եղկէլին չունէր անդրէն զըրոյց բե-  
րէլ Հեկտորին :

Թողեալ այնպէս զայրուծիոյն և ըզզօ-  
րուն ըզխուժան ,

Արագն ոտիւք ճեպէր Դողոն . ըզգաց  
Ոգիւս ոտնաձայն :

Դարձաւ գիւցազն առ Դոմեդէս և ահ  
ընդ ահ բարբառի ,

« Այս այր , Դոմեդ , 'ի բանակէն 'ի մեր 'ի  
կողմն հետևի :

Բա՛ ոչ գիտեմ , արդեօք լրտէս մերոց  
նաւաց հանգիսին ,

Կամ թէ թերևս աստ զանկէլոց գայ կո-  
ղոպտել ըզմարմին .

Բայց մէք ըզգա թողցուք տակաւ խաղալ  
յառաջ 'ի բացեայ ,

Եւ ձեռն յանկարծ արկցուք 'ի դա յար-  
ձակելով 'ի վերայ .

Թէ դա ըզմեօք վաղեալ անցցէ , դու  
տէգ ամբարձ գեղարդան ,

Նաւացն 'ի կոյս վանեա ըզնա զի մի  
զերծցի նա յոստան » :

**Օ** այս խօսեցան , և զարտուղեալք առ  
գիականքք կրծկեցան .

Եհաս Դողոն անց անխորհուրդ արագ  
'ի յոտս ասլաստան :

Անց հեռացաւ , որչափ արտ մի ամուք  
ջորեացըն վարեն ,

Որ քան զեզինս արօրաձիգք 'ի խոր ահօս  
սլատառեն :

Ճեպ տան յայնժամ և յարձակին. նա  
 ձայն լուեալ առ ըզկայ,  
 Կարծեաց դեսպանն 'ի Հեկտորէ ընդ  
 կրուկ դարձին գայ առ նա :  
 Հեռի կային ասպարիսաւ տէգընկէցին  
 կամ նըլազ .  
 Թշնամիք են, ծանեաւ Դողոն ճեպ տայր  
 ոտիցն հանապազ :  
 Սոքա դիմեալք արշաւակի ըզհետ նորա  
 պնդեցան  
 Իբրև կրկին սրբաժանիք բարակք հըմուտք  
 որսական,  
 Ուրք զեղջերու կամ նապաստակ 'ի Թաւ  
 մայրիս անդադար  
 Պնդին վանեն, նա յառաջոյ վագէ մայէ  
 շընչասպառ,  
 Հանգոյն Ոգիւս քաղաքաւերն և Դոմե  
 դէս քաջարին  
 Տրոյեանց զօրուէն տարասահման ցանգ  
 ըզԴողոն վանէին :  
 Սինչ այս մինչ այն, նա փախչելով  
 մերձ առ պահնորդսն եհաս,  
 Յայնժամ յարին Դիոմեդէս խրախոյս  
 յորդեաց Աթենաս .  
 Գուցէ յոյն ոք կանուխ տիգեալ, լիցի  
 յերկրորդ սա կարգին .  
 Փուլթաց Դոմեդ ամբարձ նիզակ ձայն  
 զայս գուաց Դողոնին .

« Կամ կ'աց, այր դու, կամ տէգ հա-  
րեալ տապաստ ըզքեզ արկանեմ .

Գիտեմ, 'ի թափն իմ արդնընկէց ան-  
շուշտ չապրիս յօրհասէն » .

Ասաց, տիգեաց և կամաւոր նա 'ի կըշ-  
ուոյն սըխալեաց ,

Քերեաց զաշտէն առ աջ ուսսոյն յերկիր  
ըզէշտըն վարսեաց :

Սասանեցաւ առ ըզտեղի, դողայր Դո-  
ղոն պապաչէր ,

Դողայր 'ի նոյն և զատամուհնսն 'ի բերա-  
նին կափկափէր .

Դէմքն 'ի դալուկն հարան յահէն . ան-  
դէն թասեալ քաջն հասին ,

Բըռնահարեալ կալան ըզձեռս, նա ձայն  
կարդայր լալագին :

« Դընոց գընեմ զիս առյապայն, ողջ կա-  
լարուք զիս, մաղթէր .

Են մեր պըղինձ են մեր ոսկի երկաթ  
գործեալ շատ մըթեր .

Ոգւոյս փրկանք հայրն իմ ձեզ, քաջք,  
ձօն ձօնեսցէ անսահման ,

Երբ լուր առնու թէ ես 'ի նաւս կամ  
հէլէնաց ողջանդամ :

« Քաջալերեաց, խրախոյս նըմա ուշիմն  
Ոգիւս արձակեաց ,

Քաջ լեր, այր դու, գեռ օրահաս չէ մօ-  
տալուտ քոց կենաց .

Բայց դու աղէ, ասա ճշգրիտ ճառեա  
ինձ արդ անկեղծիկ,

Առ ի՞նչ 'ի նաւս 'ի բանակէդ ուղղեալ  
է քո միայնիկ .

Ի խոր գիշեր զի՞նչ բան է քո, երբ այլ  
մարդիկ 'ի քունն կան .

Թերևս այդպէս դու թաքթաքուր դաս 'ի  
կապուտ գիական :

Արդեօք ըզքեզ հեկտոր յըլեաց լրտես  
նաւացս հանդիսի,

Կամ ինքնակամ ելեր, այր դու, ասա  
թափառեւ 'ի դաշտի " :

Արկնեաց Գողոն, և 'ի ներքոյ բաբախէ  
ին ծունգք նորա .

«Յամբաւ աղէտ ես զառաճեալ թակար  
թեցայ յեկտորայ .

Նա զԱքիլեայ չքնաղ ըղկառս բաղմա  
քանդակն 'ի սրղինձ,

Նոյն ըզնրժոյգան օդապարիկ խոստումն  
արար ձօնեւ ինձ :

Ընդ մոլթ գիշեր զիս արձակեաց, ճեպ  
ետ ոտիցս անդադար

Ի թշնամիս դու միջամուխ և լրտեսեւ  
գաղտաբար .

Արդեօք նոքա որպէս յառաջ, ե՞ն պա  
հակերք մինչ 'ի սպառ .

Կամ թէ արդեօք մեր հրոսակէն անկայք  
լըքայք վատաբար .

Խորհիք թերևս և շըշնջայք փախուստ  
առնուլ նըշաւակ,

Եւ ոչ նստիք գիշերապահ.ք խոնջ ձեր  
գողով և վաստակ ʔ :

« Վա՛շ .քեզ, այր դու, կրկնեաց առ նա ՚ի  
նոյն ժըմտէր Ոգիւսէս,

Վա՛շ, իղձ եղեր վե՛հ նըժուգացն յոր  
ամբառնայ Ա.քիլէս .

Կանացածին չեւ ՚ի նոսա, չետ ըզնոսա  
և սանձից .

Միայն Ա.քիլ վարէ զնոսա զոր մայր ծը-  
նաւ յանմահից :

Բայց աղէ դու ինձ անպատիր և զայն  
պատմեա անվեհեր .

Ի գալ.քո աստ դու ըզ՛հեկտոր ըզգօրա-  
վարն ո՛ւր թողեր .

Ո՛ւր կան նորա կազմածք զինուցն, ո՛ւր  
և նըժոյգք դադարեն,

Զիա՛րդ և այլ սլահկերու թիւնք, և Տրոյ-  
ացիք ո՛ւր ննջեն .

Զի՛նչ միտք նոցա . խորհի՛ն թերևս նա-  
ւատորմին սլահ ունեւ

Կամ թէ վանեալք զԱ.քայեցիս, յոս-  
տանն անգրէն դարձ առնեւ ʔ :

Ի ըլաւ Դողոն, և բան առ բան կրկնէր  
որդին Եւմեդեան .

« Ես անպատիր և ճչգրրտիւ պատմեմ.քեզ  
զայդ ամենայն :

Հեկտոր ուրոյն 'ի խուժանէն ընդ խո-  
հական ակրմբին

Ատեան խմբեալ, կայ Եղոսին մերձ առ  
դամբան դիւցազին,

Իսկ պահակերք, զոր դու դիւցազն ինձ  
հարցանես 'ի կարգի,

Պահկերու-թիւն չեք առանձին չեք և պահ-  
նորդ բանակի .

Աւլ որչափ ինչ զարմք Տրոյիոյ կան 'ի  
հարկի պաշտաման,

Նոքա առքնին այր ընկերին պահկերու-  
թեան ձայն կարդան .

Իսկ տարաշխարհ նիզակակցաց զի չեք  
մանուկ, կանանի,

Ինքեանք 'ի քուն Տրոյեանց թողին ու-  
ջոյն ըզպահ գիշերի ” :

Արկնեաց Ոգիւս . « Արդեօք Տրոյեանք  
խաճն ընդ նոսա 'ի քուն կան

կամ թէ ուրոյն, ասա այր դու, զի գի-  
տացից զամենայն ” :

« Ես քեզ ճշգրիտ, Դողոն անգրէն Եւ-  
մեգոսեանն ետ կրկնեաց,

Ես ճշգրտիւ և զայգոսիկ ոճով պատմեմ  
քեզ, ո՛վ քաջ .

Կորաղեղանց խուժեք Պէոնեանց և Կա-  
րեանց կան առ ծովուն,

Անդ Լեղեգեանք են և Կաւկոնք և Պե-  
ղասգեանք քաջաբուն :

Բանակեցաւ մերձ առ Թիւմբրէ բանակ  
 Լիւկեանց, գոռ Միւսից,  
 Կոյն ասպաղէն վաշտք Փռիւգացոց և  
 քաջաձի Մէոնից:

Այլ մի առ մի զն՝ հարցանես. թէ 'ի զօր  
 մեր փափաքիք

Գոչ միջամուխ, կան վերջապահք այն  
 ինչ եկեալ Թրակացիք:

Արքայն Ռեսոս որդին Յոնեայ անդ ընդ  
 նոսա դադարի,

Տեսի զնորա չքնաղ նըժոյգս առոյգա-  
 բարձս անարի.

Սպիտակափայլք են քան ըզձիւն, արագ  
 հողմոց են նըման,

Եւ կառք նորա յոսկի յարծաթ համակ  
 գործած աննըման.

Կազմած զինուց նորա ոսկի հաստահա-  
 ղուստ հրաշալի,

Մահկանացուաց չեն անկաւորք, են ան-  
 մահից արժանի:

Այլ աղէ, քաջք, առէք զիս արդ նաւա-  
 տորմին ձեր գերի,

Եւ կամ պրկեալ անլոյծ սարեօք թողէք  
 զիս աստ 'ի դաշտի:

Մինչև այսրէն դարձեալք ողջամբ ըզ-  
 փորձ բանիցն առջիք զիմ,

Ճըշգրիտ արդեօք ետու զըրոյց եթէ սուտ  
 ինչ բարբառիմ:

“**Թ**է և ճշգրիտ, տիգօք աչաց Դոմեդ-  
 գոռաց ձայն անդուստ,  
 Մի դու Դողոն մի խնդասցես, քեզ յիմ  
 բազկէն չիք փախուստ :  
 Զի թէ զարդիս առնումք փրկանս կամ  
 թէ թողումք մեք ըզքեզ,  
 Անշուշտ առ մեզ դարձցիս կրկին, կամ  
 'ի մարտիկ կամ լրտես .  
 Իսկ թէ այժմէն դու յիմ բազկէն աստ  
 դիտասլաստ անկանիս,  
 Գիտեա՛, այր դու, երբէք Յունաց վիշտ  
 վրտանդի ոչ լիցիս ” :  
 Զօփայր Դողոն և թանձր ափովն ա-  
 ռեալ քաջին ըզկրզակ  
 Գըգուէր մաղթէր, անդուստ Դոմեդ  
 մսեաց 'ի փողն ըզգաշնակ :  
 Մխեալ այնպէս կտրեաց 'ի բաց ըզլար  
 ներդիցն ըզկրկին,  
 Խօսուն գըլուին հիքացելոյն թաւալե-  
 ցաւ ընդ փոշին :  
 Ըզգլխանոցն աքիսենի առին նորա 'ի գըլ-  
 խոյն,  
 Ըզգայլենին և տէգ ղերկայնն 'ի նոյն զա-  
 ղեղն հաստաբուն :  
 Զայն Աթենայ աւարառուին ձօնեալ  
 Ոգիւս 'ի նըւէր,  
 Առեալ 'ի ձեռն ամբարձ 'ի վեր, աղօթե-  
 լով զայս ասէր .

« Կախկին յանմահս ըզբեզ կարգամք ,  
 խնդա ո՛վ Կոյսդ յայս աւար ,  
 Արդ ՚ի Թրակաց այրուձիոյն ճամբարն  
 ըզմեզ ա՛ռ և տար » :

Ասաց , ըզձօնան ՚ի վեր բարձեալ եդ զայն  
 ՚ի ծայր մոշային ,  
 Եւ նըշանակ երևելի եդ հաստատեաց ՚ի  
 վայրին .

Խուրձ մի կապեաց նա յեղեգանց և մո-  
 շային թաւ յոստոց ,  
 Զի մի ՚ի դարձն ընդ մուժ գիշեր զար-  
 տուղեսցին ՚ի հետոց :

Սաղան գրնան ընդ կոյտ զինուցն ընդ  
 ապաժոյժ ընդ արիւն ,  
 Արագ արագ եկին հասին ՚ի Թրակացւոց  
 վաշտ զօրուն :

Ննջեն խոնջեալքն , և զէնք չքնաղք երեք-  
 կարգեանք ՚ի գետին  
 Կան առ ընթեր , առ մէն մի կառս ամուք  
 ձիոց դարէին .

Ի միջակին ննջեր Ռեսոս , նըժոյգքն ա-  
 րագք աննըման  
 Կան մերձ նըմա , ՚ի ծայր կառացն էին  
 կապեալք յերասան :

Ողիւս նախկին զայն յակն արկեալ և  
 ցուցանէր Դոմեդին .

« Դա ինքն է այրն , ո՛ր Դոմեդէս , դոքա  
 նըժոյգքն արքային .

Զայդ մեզ Դողոն կանուխ պատմեաց,  
զոր մէք արկաք դիտապաստ .

Այլ աղէ դու, ժամ է ո՛վ քաջ, զոյժ քո  
ահեղ ցոյց և աստ .

Ի զէն 'ի զարդ վառեալ է քո, մի յու  
լանար 'ի մարտին ,

Կամ ը՛յծ ըզձիս կամ սուր հարուած,  
ես նըժուգացն հոգ տանիմ ʔ :

Լյն ինչ խրախոյս նա զայս կարդայր,  
և 'ի վերուստ Աթենաս

Ծաւին այն վեհն հովանացեալ 'ի Դու  
մեզէս ոյժ յորդեաց :

Յաջ և յահեակ տայր կոտորած և բարձ  
րացաւ ձայն գուժին ,

Մաշէր երկաթն և 'ի բոսոր արեանց  
գունէր ըզգետին :

Որպէս 'ի հօտ անպատըսպար առիւծ  
դիմեալ գիշախանձ ,

Մըռնչեւրով ապականէ զհօրանս այժից  
և իսաշանց ,

Այսպէս 'ի խումբ յայն Թրակացեոց  
Դոմեզն անկեալ կորովին ,

Ոչ գըլացաւ, մինչ արկ տապաստ երկու  
տասան 'ի գետին :

Ոչ և անգործ կայր Ոգիւսէս, այլ խո  
րագէտն ուշ ունէր

Ազնեկաւոյց . թէ զոք Դոմեզ հարոյր 'ի  
սուր 'ի սուսեր ,

Առեալ անդէն նա զոտանէն քարչեր  
մաքրէր ճանապարհ ,  
Հողայր կանուխ զի գիսապանծ նրժոյգքն  
անցցեն հեշտաբար ,  
Գուցէ արդեօք սըմբակահարք 'ի դիա-  
կանց անկէլոց  
Հարթնուն նոքա , արեանց մարտին դեռ  
ոչ գոլով վարժք և փորձ :  
Յայնժամ Դոմեդ և 'ի Ռեսոս յարքայն  
նոցա սուր շողաց  
Յերեքտասանն , ըզքաղցր արևն հատեալ  
նորա 'ի յաչաց :  
Թասայր Ռեսոս , զի Աթենաս գուժեաց  
նըմա զայն գիշեր .  
Քանզի զԴոմեդ վերոյ գըլխոյն արձա-  
նացեալ յերազէր :  
Բայց ըզնրժոյգսն օդապարիկ լուծեալ  
անդէն Ոդիւսէս ,  
Կապեալ յիրեարս երասանօք 'ի դուրս  
եհան փութապէս :  
Չաղեղն առեալ խարազանէր , զի զխա-  
րազանն ոչ յիշեաց  
Առնուլ ընդ իւր ըզքեղեցիկն 'ի հրաշա-  
կերոս յայն կառաց :  
Սուլեաց ապա Դիոմեդեայ ակնարկե-  
լով գիւցազին ,  
Այլ գեղևէր նա մըտախորհ և յայլ նախ-  
ճիրս ահագին ,

Կամ ըզքեղւոյն ձրգեւ ըզկառան և կամ  
տանեւ վերամբարձ

Ուր զէնք կային գունակ գունակ, կամ  
այլ թրակաց տալ հարուած :

**Ս**ինչ զայս խորհուրդ Դիոմեդէս յուզ-  
էր 'ի միտս առանձին,

Անդուստ Պաշլաս արձանացեալ բարբա-  
ռեցաւ քաջազին .

«Արի դարձիր 'ի խումբ նաւաց, Տիւրեայ  
վէհին քաջ զաւակ,

Փուլթա մի կար, գուցէ ճեպիս դու 'ի  
փախուստ նըշաւակ,

Գուցէ Տրոյեանց ոք յոխերիմ ձայն տայ  
'ի դից երամոյն » .

Նա ազգ արար և սա ճըշգրիտ ծանեաւ  
ըզձայն Դիցուհւոյն :

Եւ յերիվարս և խարազան զաղէղն ունէր  
Ողիւսէս .

Սրանան նըժոյգքն հանդէս նաւաց, բայց  
Ապողոն կայր լտես :

Երբ զԱթենաս Դիոմեդեայ ետես խա-  
ղալ նա ըզհետ,

Սըրտմըտեցաւ և Տրոյացւոց մուտ 'ի ճամ-  
բարն ետ ընդ ետ .

Չարթոյց զԽալպոք ըզՌեսոսին զեղբոր-  
որդին քաջարի,

Սա'էր թրակաց խորհրդականն . յարեաւ  
անդէն 'ի մահճի .

Ետես ըզվայրն ամայացեալ 'ի նրժու-  
գացն աննըման ,

Ետես մարմինս գիականացեալ զի կայտ-  
ուային 'ի յարեան ,

Գուժեաց սաստիկ և յանուանէն կար-  
դայր զընկեր սիրելին ,

Գոյժ անպայման ազմըկեցաւ և 'ի Տրոյ-  
եանց բանակին :

Խուռն ընթացան 'ի մեծ նախճիրն , տե-  
սին զաղէան ավշեցան

Ձիարդ նոքա զահեղ ըզգործն ատակեցին  
և դարձան :

Սոքա հասին ուր զԵկտորին տապաստ  
արկին ըզլրտես ,

Անդ զերիվարսն օգաչուս առկայացոյց  
Ոգիւսէս .

Իջեալ 'ի վայր Դիոմեդէս և զարիւնոտ  
զիւր աւարս

Ի ձեռս եդեալ Ոգիւսեսին , պարսեաց  
անդրէն յերիվարս :

Մարակ 'ի կուշտ ջընեալ նրժոյգքն աս-  
պարիսեալ փութապէս ,

Գոգցես նոքա իղճ լինէին սրանալ նա-  
ւացն 'ի հանդէս :

Չայն ետ Նեստոր ինքն առաջին լը-  
ւեալ զգոփիւն սրմբակաց ,

« Վա՛շ , բարեկամք հրամանատարք և զօ-  
րավարք Արգոսեանց ,

Սըտեմ արդեօք թէ ճշմարտեմ, ոչ այլ  
ժուժամ 'ի հոգիս,

Դուփիւն ձիոց արագոտանց հընչեաց արդ  
յիմ լըսելիս .

Ո՛վ թէ Ողիւս և Դոմեդէս քաջաղն այն  
մեր կորովին

Նըժոյգս առ մեզ օդապարիկս 'ի Տրոյա  
ցւոց ածէին :

Այլ իմ ահիւ միտք տադնապին, թէ այն  
հըզօրքն հելլենաց

Մի սաշարեալք վըտանդեացին 'ի հրո  
սակէն թշնամեաց " :

Լայն ինչ ծերոյն բանքն 'ի բերան, և  
նահատակքն հասանեն .

Իջին 'ի վայր 'ի նըժուգաց, սոքա խընծ  
ղիւք ժողովին :

Աջ տատանեալք ողջոյն կարգան, բա  
նըս զըուցեն աղուական,

Եւ առաջին Նեստոր հարցումն առնէր  
ասպետ Գերենեան .

« Աղէ ինձ մեծդ, ասա, Ողիւս, շուք  
հելլենաց և սրարծանք .

Դուք զայդ նըժոյգս զիմորդ կալայք . մը  
խեալք Տրոյեանց 'ի փաղանդ .

Կամ թէ 'ի ձօն ձեզ ընդ առաջ էմ ըզ  
դոսս ոք 'ի դից .

Հիացեալ եմ. դոքա արփւոյն յոյժ են  
նըման նըշուլից :

Ես ցանդ շուրջ դամ, ցանդ միջամուխ  
եմ Տրոյացւոց 'ի խուժան,   
Ժրտիմ մրցել թէպէտ զարդիս եմ ա-  
լւոր զօրական.

Այլ ոչ տեսի նրժոյգս այսգոյն և ոչ  
յիշեմ թէ ծանեայ.

Ձեզ ոմն աստուած ընդառաջեալ ան-  
շուշտ ձօնեաց ըզդոսս.

Ձի երկոքեանդ էք փարելիք ամպրո-  
պայնոյն Որմըզդայ,

Նոյն և վեհին ասպարազէն կուսին խաժ-  
ակն Աթենայ ː

Ո՛վ Նեստորէ, կրկնեաց նրմա բազ-  
մախորհուրդն Ոգիւսէս,

Ո՛վ ծերունիդ, որ դու բնաւից փառք  
ես Յունաց մեծապէս.

Դիւրեաւ աստուած, եթէ կամէր, և  
վեհագոյն նրժուգաց

Ձօն մեզ ձօնէր, իբրու աստուածք են  
զօրութեամբ դերազանց.

Բայց այդ նրժոյգք, զոր հարցանես, այն  
ինչ եկին 'ի Թրակեայ,

Եւ Թրակացւոց զարքայն տապաստ արկ  
սուրն արւոյս Դոմեդեայ.

Երկոտասան աւագ ընկերս հար դա 'ի  
սուր 'ի սուսեր,

Երէքտասան, զոր մերձ նաւաց տապաստ  
արկաք, լրտեսն էր.

Ըզնա 'ի դէտ և խուզարկու մերոյն լի-  
նել բանակի

Յըղեաց Հեկտոր և Տրոյացւոց աւագո-  
րեարն ատենի ։

Լսաց , անցոյց խնդամըտեալ վեհ զե-  
րիվարսն ընդ պարկէն ,

Ըզհետ ամբոխն Աքայեցւոց տօն ցնծու-  
թեան կատարեն :

Մինչև հասին 'ի Դոմեդեայ գեղեցկա-  
շէնն 'ի խորան ,

Եւ ամրապինդ երասանօք կապեն ըզձիան  
յասպաստան ,

Անդ ուր նրժոյգքն արագոտինք Դիոմե-  
դեայ քաջազին

Դարեալ կային և ըզցորեանն անուշա-  
համ ուտէին :

Բայց Ողիւսէս 'ի Դողոնին յարիւնա-  
զանգ աւարաց

Առեալ և եդ 'ի խելս նաւուն , զոհ Ա-  
թենայ պատուիրեաց :

Ինքեանք ասպա մըտեալ 'ի ծով , զաղտըն  
ջընջեն քրանահոծ

Զաղտ ըզկողից և ըզսրունից , 'ի նոյն  
սրբեն պարանոց .

Մաքրեալք այնպէս յալիս ծովուն ըզ-  
քիրան ամբաւ 'ի մարմնոյն

Հաստատեցան , անդրէն աշխոյժք զը-  
ւարթացան և ոգւոյն .

Իջեալք 'ի սուրբ 'ի լոգարանս լուացեալ  
գտան ջինջ համբուն,

Օծան ապա և յանուշակ 'ի յիւղ սա-  
րարտ ձիթենւոյն :

Նստան յընթրիս և Աթենայ 'ի լիալիբ  
բաժակէն

Չօն ըզգինւոյն անուշարար ձօն գոհու-  
թեան նըւիրեն :





# ԵՂԵՆԻՍ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԱ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հեռն դառնութեան ձայն տայ 'ի մարտ: Ագամեմնոն զինավառի: Չէնք նորա ահեղք և երևելի: Հեկտոր ճակատի մարտն առ Ժամանակ մի ոչ սահմանի: Ագամեմնոնի նահատակութիւնք: Վերաւորի 'ի բազուկն: Նահատակութիւնք Հեկտորի: Դիոմեդէս և Ողիւսէս դիմագրաւին նմա: Դիոմեդէս նետահարի 'ի Պարիսայ: Ողիւսէս միայնացեալ տագնապի: Չբանակ Յունաց վարատէ Հեկտոր: Դիմակալութիւն և 'ի նոյն քաջապէս վերջոտնել Այասայ: Մաքսոն նետահարի 'ի Պարիսայ: Աքիլլէս 'ի բարձուէ նաւուն 'ի զինն կացեալ մարտին, յղէ զՊատրոկլէս գիտել զՄաքսոնէ: Նեստոր սլաամէ Պատրոկլէայ զողորմ վիճակ զբանակին Յունաց, աղաչէ փորձ փորձել յամոքել զԱքիլլէս 'ի մարտ, կամ ինքնին զինուք Աքիլլէայ մտանել 'ի կուր: Պատրոկլէս 'ի դարձին հանգիսի Եւրիւսիւղեայ վերաւորելոյ, և ածեալ զնա 'ի խորան իւր դարմանէ: Եւ վեհագոյն քան զինքն փայլէ հոմերոս 'ի հագներգութեանս յայսմիկ:

Հագներգութեան սկիզբն է ընդ արշալոյսն քսաներորդի ութերորդի աւուրն:



## ԵՂՒԸԿԸՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ժ Ա .

ԱՅԻՆ 'ի մահճէն'ի կողմանէ յառնէր վե-  
հին Տիթովնի ,

Եւ անմահից և մահացուաց լոյս վերբե-  
րէր արփենի :

Բայց Արամազդ Հեռ դառնութեան  
դուժեաց Յունաց բանակին ,

Որ ըզխազմին հրէշ նըշան բարձեալ բե-  
րէր 'ի ձեռին 127 :

Կաց 'ի վերայ Ողիւսեսեան ասագնակէտ  
սեաւ նաւուն .

Էր լաստափայտն 'ի միջակին ձայն տալ  
կողմանցն երկոցուն

Մինչ 'ի խորանս մեծն Այասայ, մինչ  
'ի խորանս Աքիլեայ .

Քարշեալք ըզնաւնն յանձնապաստանք  
'ի թլա վերջինս կան սոքա :

Անդուստ խրախոյս ետ Դիցուհին ձայն  
բարձրագոչ ահագին ,

Ազգեաց կորով 'ի սիրտ Յունաց անդու  
կըռուել 'ի դաշտին .

Խօշիւնն անդէն ահեղ մարտի գրտաւնո  
ցուն փարելի ,

Քան նաւարշաւք դառնալ յաշխարհն  
համբաւատենչ հայրենի :

Տապա Ատրիդ ձայն տայր Յունաց 'ի  
զէն վառել մահաբեր ,

Եւ ինքն անցեալ համակ զանձամբ հրա  
չէկ պըղինձ արկանէր .

Նախկին սրունից շուրջանակի ետ սըռնա  
պանս գեղեցիկ ,

Եւ յերիւրեալ զայն պնդասկէս ճար  
մանդք ունին արծաթիք .

Ապա երկրորդ ըզվարապան զէն արկա  
նէր պատենաց ,

Զոր անդ ուրեմն հիւրամեծար Վինիւր  
նրմա պարգևեաց .

Զի յԵղիոն չըւոյն Յունաց ձայնք 'ի Վիս  
րոս հնչեցին ,

Եւ տայր Վինիւր զայն վարապան ձիր  
հեշտընկալ արքային :

Վարապանին ծիրքըն տանեակք էին 'ի  
 թուխ պողպատէ ,  
 Երկոտասանք էին յոսկւոյ , էին քըսանքն  
 յանագէ .

Վիշապք երեք կապոյտերանգք սարու-  
 նակեալք առ ուլան ,  
 Աստի անտի ձըգեալ կային երկնից նը-  
 ման աղեղան .

Ձոր անդ 'ի յամալրս վերնական ձըգեաց  
 տարած Ձըրուանեանն ,  
 Եդ յօդախօս մարդկան ազգի զայն հրա-  
 շատիս 'ի նըլան :

Արկսուր զուսովք . պալարքն ոսկիք փայ-  
 լատակեն սուսերի ,  
 Իսկ արծաթի կախեր պատեան 'ի փոկս  
 օծեալս 'ի յոսկի :

Ասպար ճապուկ , սքանչեւարուեստ , առ-  
 րածածուկ , գեղանի  
 Արկ 'ի բազուկն , ուր շըջանակք էին տա-  
 նեակք սըղընձի :

Քըսան թըլուկ կմբէք անդէն էին սպի-  
 տակք յանագէ ,  
 Ի միջակին էր մի միայն 'ի գոյն 'ի թուխ  
 պողպատէ :

Գէմք 'ի վերայ դըժոխակնեայ ահագնա-  
 կերս Գորգոնին  
 Քանդակ բոլոր , և ըզնովաւ հոյն 'ւ Ար-  
 հաւիրք դարէին :

Իսկ և անդուստ 'ի յասպարէնքեմուխտ  
կախէր արծաթի,

Եւ 'ի վերայ կապոյտերանգ տիպ բոլո-  
րէր վիշապի .

Գլուխք երեք շաղապատեալք էին ան-  
դէն գազանին ,

Ի մի միայն պարանոցէն երեքն 'ի բուն  
ընձիւղին :

Եդ սաղաւարտ բազմակիտուած քառա-  
վերջեան գիսապանծ ,

Եւ տատանէր ահեղակերպ ցրցունք վե-  
րին կատարաց :

Աշտեայս կրկին առ հաստամուրս և պը-  
ղընձիս 'ի սուր սայր ,

Եւ բացածիգ փայլ պըղընձոյն ցոլէր յեր-  
կնիցըն կամար :

Տորդան կարգաց մեծն Աթենաս , խրա-  
խոյս եբարձ և Հերա ,

Շուք մեծ հարեալ վեհ արքային բազմա-  
հարուստ Միւկենեայ :

Այր այր ապա հանդիսացեալ կառապե-  
տաց պատուիրէ ,

Սանձել ըզձիսն առ պարկենիւ կարգ  
գեղեցիկ ըստ կարգէ :

Անդ և հետեաց ըստուարագունդք զի-  
նու զարդու տան հորդան ,

Եւ անպատում խօշիւնք զօրուն վաղ քաջ  
այգուն բարձրացան :

Նախ հետևակքն առ խորամոլն 'ի կարգ  
անցեալ ճակատին ,

Տակաւ ասպա ըզհետ նոցա շարժէր խա  
ղայր այրուձին :

Ահեղ շըշուկ Ամարոսայինն անդ խան  
ձեցոյց իբրև բոց ,

Եւ յեթերաց արիւնազանգ անձրև տե  
ղաց խիտ և հոծ :

Գոյժ էր մահու . զի կառափունս շատ  
քաջազանց որերոյն

Նա 'ի Դըժոխս խնդրէր ամալ թափ գա  
հալէժ 'ի ժամուն :

Իսկ և Տրոյեանք բանակ հարեալ 'ի բըւ  
րակին կարգեցան ,

Շուրջ բակ առեալ ըզմեծն Հեկտոր ,  
զառաքինին Պողիւդամ .

Նոյն զԵնէաս , ում դիւցաբար շուք 'ի  
զօրուն գընէին ,

Եւ զԱնտնորեանս , ըզՊողիւբոս և զԱն  
տենոր բառացին ,

Նոյն զԱկամաս ըզպատանին , որ անմա  
հիցն էր նըման .

Այլ նահատակ շողայր Հեկտոր բոլորա  
ծիրն 'ի վահան :

Որպէս յամպոցըն լուսաափիւ աստղըն  
ծագէ մահաբեր ,

Է զի ծագէ է զի ծածկի յամպըն մը  
տեալ և 'ի ստուեր ,

Հանգոյն Հեկոոր նահատակաց մերթ  
յանդիման բոցանայր ,

Մերթ և հրաման տըւեալ դարէր վեր-  
ջապահացն 'ի ճամբար .

Համակ վառեալ զինու զարդու հրաշէկ  
ճաճանչ հատանէր ,

Իբրև փայլակն ասպարազէն Արամազ-  
դայն շանթաբեր :

Որպէս մըշակքն հանգրիճեալք 'ի  
հունձս արտոց ընչեղին

Գերանդազէնք զակօսն հընձեալք և գան  
միմեանց հանգիսիսն ,

Գաղիշք որայք բարդ բարդ անկեալ  
կան ցորենոց և գարեաց ,

Նոյն 'ի խառնուրդ կողմանց կրկին գու-  
ժեաց ամբաւ կոտորած :

Թիկնադարձոյց չէր վատ արանց բազմա-  
շըշուկն 'ի մարտի ,

Այլ 'ի բազուկ զուգակըշիւք սլատահե-  
ցան քաջք քաջի :

Գիմեալք յիրեարս և գօչէին իբրև գայ-  
լոցըն վոհմակ ,

Եւ 'ի զընին բազմակական Հեռըն խնդայր  
միայնակ .

Ի դիս միայն սա խառնեցաւ ընդ ասլա-  
ժոյժըս արեանց ,

Այլք յաստուածոց միահամուռ հրա-  
ժեշտ տըւեալք կան 'ի բաց .

Այր այր անդորր յիւրեանց յարկին գնա-  
ցեալ առին բազմական ,

Ուր տունք նոցա գեղեցկաշէնք 'ի գահա-  
լանդս Ողիւմպեան .

Ընդ Ջրուանեանն ամպրոպային առ-  
հասարակ խեռային ,

Իբրու խնդրէր նա յաղթական շուք Տրոյ-  
ացւոց տալ ազգին :

Սակայն նոցուն քրթմընջանաց երես  
անգամ նա չառնէր ,

Ուրոյն այնպէս առեալ բազմոց խայտայր  
չըքովն իբրև տէր :

Նաւաց Յունաց և Տրոյացւոց կայր ոս-  
տանին 'ի զընին ,

Ուր սուր շողայ , ոյք հարկանեն , և ոյք  
տապաստ անկանին :

Եւ յգ տակաւին էր , և գալով գայր օրն  
աճէր լուսազգեաց ,

Եւ երկուստէք զօր անկանէր 'ի տեղ  
տիգաց և վըքնաց :

Երբ մայրևոր ճաշ սպտորաստէ իւր 'ի  
հովիտս 'ի լերին ,

Յորժամ շատ ինչ ըստուարածառս բա-  
զուկքն հատեալ սարտասին ,

Եւ յորժամ նա խոնջ քրտնահար փայ-  
տակուտիւն յափրանայ ,

Եւ անուշակ տենչ կերակրոյն յորովայ-  
նին քաղց կարգայ ,

Յայնժամ փաղանգս հերձուն հելենք  
արիացեալք ՚ի հանդէս,

Եւ վաշտք վաշտուց խրախոյս բարձեալ  
տան քաջալեր մեծապէս :

Եւ նահատակ Ագամեմնոն, Բենոր ա-  
նուն զարբայն հար,

Տապաստ ապա զընկեր նորուն արկ զԻ-  
ղէոս կառավար .

Սա ՚ի կառաց վազեաց ՚ի վայր արձանա-  
նալ ախոյեան

Գայր շէշտակի . անդուստ Ատրիդ թափ  
՚ի ճակատն հար զաշտեայն .

Տէգն անարգել մուտ ՚ի սլրսակն, և յոսկր  
եմուտ թափանցանց,

Ողջ աղարտեալ զուղեղ նորա և վերա-  
գին մահ գուժեաց :

Մերկեալ ըզլանջսն ՚ի սլատենէն և մերկ  
այնպէս նըշաւակ

Ելէք եթող անդ ըզնոսա Ագամեմնոն նա-  
հատակ .

Խաղաց ապա կրկին որդւոց Պրիամոսին  
տալ օրհաս ,

Մին աղջկորդի մին հարազատ , անուանքն  
Իսոս , Անտիփաս :

Ի մի ՚ի կառս էին երկուքն . էր աղջկոր-  
դին կառավար ,

Վէհն Անտիփաս կայր ախոյեան մարտ  
յարդարէր քաջաբար :

Զորս Ա.բիլէս յՌդեայ դըժուարս էր  
զի յարօտըս խնշանց

Կալաւ պրկեաց դաւար ողորմք, ելոյծ 'ի  
դին փրկանաց .

Իսկ այժմ արքայն Ագամեմոնն զապրեալս  
յայնժամ յօրհասէն ,

Ըզմին ըստեանց վերոյ 'ի լանջն հար  
սայրասուր 'ի յաշտէն .

Սուսեր մըխեաց յունկն Անտիփայ և 'ի  
կառաց տապալեաց ,

Եւ հապ ընդ ճեպ 'ի դեղէցիկ զինուց  
նոցա կողոպտեաց :

Ճանօթք էին , զի զերկոսեանն տեսեալ  
իսկ էր Ատրիդէս ,

Յորժամ յՌդեայ անդ 'ի բանակն էած ա-  
րագն Ա.բիլէս :

Որպէս 'ի յորջ արագ եղին առիւծ մը-  
տեալ ահագին ,

Մատաղ զորթուցն ահեղ ժանեօքն հեշ-  
տեաւ քաղէ դիրդ զոգին ,

Մայրն առ ընթեր անձեռնհաս հէգ զա-  
ւակաց զօրավիդ

Աղէկիզեալ կայ 'ի զընին 'ի դող հարեալ  
'ի սաստիկ ,

Զոոս արձակեալ և խուճապի ընդ թա-  
ւաթուփսն 'ի մայրին ,

Եւ հատկըլի ընդ քիրտն հարեալ յահէ  
հըզօր գազանին ,

'Նոյնպէս յայնժամ թափել ըզհէգան որ  
 'ի Տրոյեանց ոչ քաւեաց,  
 Նա և ինքեանք խուճապեցան թիկնա-  
 դարձոյցք 'ի Յունաց :  
**Պ**իմեաց անդուստ 'ի Պիսանդրոս և յիս-  
 պողոք կորովին ,  
 Հայր էր սոցուն Անտիմաքոս երեսաւորն  
 'ի մնրտին :  
**Ս**ա առ ոսկի յԱղեքսանդրէ և հոյակապ  
 ձիրս յընծայ ,  
 Եւ զհեղինէն չեթող յըղել խարտիշա-  
 գեղ Մենեղեայ :  
**Ս**լացաւ Ատրիդ յորդիս սորա և ընդ բը-  
 ոամբ նրւաճեաց ,  
 Էին երկուքն 'ի մի 'ի կառս վարիչք ա-  
 րադ նըժուգաց .  
**Չ**եռաց նոցա զերծան յանկարծ երա-  
 սանակք հրաշազան ,  
 Տագնապեցան 'ի յարկածէն և յափշու-  
 թիւն կրթեցան :  
**Շ**եշտ 'ի նոսա դիմեաց Ատրիդ որպէս ա-  
 ուիւծ 'ի դաշտէն ,  
 Նոքա 'ի կառս անկեալ 'ի ծունկս և ըզմա-  
 տունս տատանեն ,  
 « Ողջ կալ ըզմեզ , քաջդ Ատրիդէս , և  
 առ փրկանս արժանի ,  
 Ընտիր ընտիր ամբաւ են կահք յԱնտի-  
 մաքեան տաճարի .

Պըղինձ, ոսկի և երկաթոյ հրաշակեր-  
տուածք գանձեալ կան,

Անդուստ հայր մեր ընդ մեր ոգւոց քեզ  
տայ փրկանք անսահման .

Տացէ անշուշտ, լուեալ թէ ողջ կամք 'ի  
Յունաց բանակին » .

Այսպէս լալեօք ձայն արքային ողորաւոր  
կարգային :

Բայց յարքայէն բան անհամբոյր բար-  
բառ լուան ձախողակ .

« Ո՞չ դուք, ասէր, քաջամարտիկն Ան-  
տիմաքեայ էք զաւակք .

Էր զի եկեալ Մենեղաւոս յակումբ Տրոյ-  
եանց ատենին ,

Հրեշտակու թեամբ լինել բանբեր ընդ  
Ոգիւսեայ դիւցազին ,

Անդ մահ նոցա սադրէր հայր ձեր, զի  
մի դարձցին ողջանդամ .

Արդ ըզհօր ձեր լուծջիք ըզվրէժ դուք  
զանօրէն խեռութեան » :

Ասաց, վարսեաց Պիսանդրոսին 'ի լանջ  
ըզտէգն ահագին ,

Եւ 'ի կառաց տապալեցոյց արկ դի-  
տապաստ 'ի գետին :

Սասանեցաւ Իպպողոբոս 'ի վայր վա-  
զեաց փութապէս ,

Ճեպ ետ անդուստ և առ ետեղ եհար  
ըզնա Ատրիդէս .

Կըտրեաց ըզձեռան և ըզգըլուին հատեալ  
 'ի սուր 'ի սուսեր

Առ և գըլեաց, իբրև անկան 'ի մէջ զօրուն  
 հոլովէր :

Թող ըզնոսա, անց ուր ծըփան ըստուա-  
 րագունդք փաղանգաց :

Անդ խառնեցաւ, հորդան ըզհետ խաղան  
 Յունաց գունդք քաջաց :

Անդ հետևակք ըզվատ հետիան 'ի շտապ  
 հարուն տագնապի,

Եւ այրուծին վարաւանդիւք ահէր վա-  
 նէր զայրուծի :

Հողն 'ի ներքոյ 'ի մեծ դաշտին մըրըրկե-  
 ցաւ 'ի փոշեաց,

Եւ ամպանայր 'ի սէգ ձիոցն 'ի դոփմա-  
 նէն սըմբակաց :

Նահատակեալ Ադամեմնոն մահունս ան-  
 դուլ 'ի մարտին,

Խաղայր վանէր և բարձրագոչ խրախոյս  
 կարգայր բանակին :

Զորօրինակ հուր լափլիզօղ անկեալ թա-  
 ւուտն 'ի յանտառ,

Մըրըրիկ սկառէ յոր կոյս ըզնա օգքըն վա-  
 ըն հողմավար,

Ի նոյն բոցոյն ծառք տապալին և ամբ-  
 ոստեան խանձին տունկք,

Նոյն յԱտրիգեայ փախըստէիցն անկանէ-  
 ին կառափունք :

Շատ երիվարք սօսք բաշապանծք ասպա-  
 ըրիզեալք 'ի խըռան ,  
 Ի գիւլ առեալ տարուբերէն թափուր ըզ-  
 կառան և ունայն .  
 Իզձ լինէին իւրեանց նախկին կառավար-  
 չացրն քաջաց ,  
 Որ գէշ անկեալք , քան ամուսնացն էին  
 սիրունք անգեղաց :  
 Յահեղ խօշիւն զերծ Արամազդ կացոյց  
 զԵկտոր 'ի յարեանց ,  
 Ձերծ 'ի փոշոյն , զերծ յամբօխէն , 'ի  
 հարուածոց , 'ի փըքնաց :  
 Չայն տայր Յունաց , վանէր Ատրիդ  
 մինչ 'ի դամբան Գարդանեան  
 հընոյն Եղեայ , ուր գան Տրոյեանք ըզ-  
 ձան մխիլ 'ի յոստան .  
 Խըռնին ներքոյ ժանա թըզէնւոյն , բայց  
 Ատրիդէս դուլ չառնէր ,  
 Գոչէր ահեղ և յաղթ ըզձեռան ընդ ա-  
 պաժոյժ շաղախէր :  
 Իբրև հասին յԻսկեան 'ի դուրս , մերձ  
 առ կաղնեալ խըռնեցան ,  
 Սպասեալք կային միահամուռ նիզակա-  
 կցաց դալըստեան :  
 Իսկ կէսքն ընդ դաշտն ահաբեկեալք իբ-  
 րու զանդեայս խուճապին ,  
 Յորժամ առիւծ վարատական ընդ մուլթ  
 գոչէ գիշերին ,

Ում յանդէոց առ դուրս հասեալ կայ  
 օրահաս չարաչար,  
 Սէդ առիւծուն յահեղ ժանեաց ապրել  
 նրմա չլք հրնար .  
 Նախ առաջին մըռընչելով զուրն բեկէ  
 յաղթ զեզին,  
 Ապա յարին մըռըզգայլեալ լափէ և զողջ  
 փորոտին,  
 Հանգոյն Ատրիդ Տրոյեանց ըշտապ ա-  
 ծէր 'ի քաջ 'ի բազկէ,  
 Ձըգէր տապաստ ըզվէրջոտնեալն, զայլն  
 'ի փախուստ խուճապէ .  
 Ըզկէսս յորսայս ըզկէսս 'ի շեպ թափ  
 'ի կառաց տանալէր,  
 Եւ մոլեգին վառեալ յաշտէն, յայս կոյս  
 յայն կոյս վարատէր :  
 Լայն ինչ յոտանըն մերձեցաւ և 'ի սա-  
 տուար բարձրութեան,  
 Յերկնից յայնժամ սլացաւ ասեղ հայրն  
 աստուծոց և մարդկան :  
 Եկն և նստաւ յարտեանին Իգեայ լերին  
 բիւրակնեայ,  
 Եւ հրաբորբոք ասեղահրաշ շանթն 'ի  
 ձեռին կայր նորա :  
 Անդ զոսկեթևն հրեշտակ հիրիկ կարդաց  
 'ի ձայն արքունեան,  
 «Արի սլացեր, արագդ հիրիկ, զայս Եկ-  
 տորայ տուր սպառգամ .»

Յորվայր զարբայն յակն արկանէ նա ա  
խոյեան զԱտրիդէս ,

Մահունս ածել քաջ որերոյն նախճիրս  
գործել սոսկապէս ,

Յայն վայր 'ի զատ կացցէ Հեկտոր , այ  
լոց խրախոյս կարգասցէ ,

Նոքա ընդ Յոյնս թող գոռասցին մի դը  
լասցին 'ի մարտէ :

Իսկ երբ Ատրիդ ելցէ 'ի կառս կամ տէգ  
առեալ և կամ նետ ,

Կորով յայնժամ տամ Եկտորայ մահունս  
գործել ահափետ .

Հարցէ 'ի սուր և վանեացէ մինչև նաւացն  
յանդիման ,

Մտցէ արեգն և պատեացէ մութ արհա  
ւիրքն աստուածեան » :

**Լ**սաց , Հիրիկ հողմոտն արագ աճապա  
րեաց 'ի պաշտօնն ,

Յիդեայ լերանց թևապարեալ էջ սրբա  
զանն յԵղիոն .

Գիտ առ կառօքն իւր հաստամուր ըզ  
քաջն Հեկտոր Պրիամեան ,

Մատեաւ առ նա բարբառեցաւ հողմոտն  
Հիրիկ ետ պատգամ .

« Ո՛վ Պրիամեան քաջազն Հեկտոր , դից  
հանճարոյն 'ի կըշուի ,

Հայրն Արամազդ եդ զիս հրեշտակ , ը՛ւր  
ըզպատգամն արքունի .

Յորվայր զարբայն դու ախոյեան յակն  
արկանես զԱտրիդէս ,

Մահունս ամեւ քաջ որերոյն նախաճիրս  
գործել սոսկապէս ,

Յայնվայր 'ի զատ կաց 'ի մարտէդ այլոց  
խրախոյս փողեսցես .

Նոքա ընդ Յոյնս թող խառնեսցին մարտ  
մղղեսցեն քաջապէս .

Իսկ երբ Ատրիդ ելցէ 'ի կառս 'ի տէգ  
հարեալ կամ 'ի նետ ,

Յայնժամ քաջիդ ոյժ յաւելցէ մահունս  
գործել ահափետ .

Հարցես 'ի սուր և վանեսցես մինչև նա  
ւացն յանդիման ,

Եւ արեգակն 'ի մայր մտեալ խաւարն  
հասցէ աստուածեան ր :

Ետ ըզպատգամն և օղասպար թրուեալ  
հիրիկն և դընաց ,

Հեկտոր յայնժամ զինու զարդու վաղեաց  
յերկիր 'ի կառաց :

Խաղայր զօրունս նա կարգ 'ի կարգ , տէ  
գըս ճօճէր սայրասուր ,

Մարտ ահագին զարթոյց նոցա և բորբո  
քեաց իբրև հուր :

Դարձան ընդ կրուկ արձանացան Աքայե  
ցոց ախոյեան ,

Անդուստ և Յոյնք իւրեանց վաշտուք  
հաստահարուսոք կազմեցան :

Շքութիւնդն հատաւ . հարան ընդդէմ . եւ  
Ատրիդէս քաջարանց .

Եւ նահատակ անձկով տարփայր դիմա-  
գրաւել քաջազանց :

Ինձ արդ Մուսայք , դուք պատմեցէք ,  
տանց Ողիւմպեան բնակաւոր ,

Ո՞վ առաջին Ագամեմնեայ եւ ախոյեան  
փառաւոր .

Եթէ արդեօք 'ի Տրոյացւոց ոք նահատակ  
'ի քաջաց ,

Կամ թէ սրտեայ ոք 'ի նոցուն 'ի հոյա-  
կապ սատարաց :

Իփիդամոս Անտենորեան հըզօրն և յաղթ  
վիթխարին ,

Այն որ սընաւ 'ի Թրակիա խաչնահա-  
րուստ 'ի բերրին .

Հաւ մայրենին յիւր ապարանս ըզնա սը-  
նոյց ըստընդիաց ,

Սա էր Կիսէս որ ըզթէան ծընաւ զկայ-  
տառն 'ի դիմոց .

Իբրև յարբուհս հաս Իփիդամ 'ի քաջա-  
ռոյգ հասակին ,

Պահեաց առ իւր և պատանւոյն ած զօ-  
րիորդն իւր 'ի կին :

Նորեկ փեպայ յառագաստէն խաղայր 'ի  
փառս Հելէնաց ,

Եւ ըզնորա խաղայր ըզհետ երկոտասան  
կարգ նաւաց .

Ըզտուամբ նաւաց թող 'ի Պերկոսպ, յուզի  
անկաւ հետևակ,

Եկն յԵզինն և Ատրիդեայ արձանացաւ  
նահատակ :

Իբրև մօտեալ քաջ ընդ քաջի միմեանց  
հարան 'ի դիմի,

Ձըգեաց Ատրիդ, ել 'ի դերևս տէգն հաս-  
տաբետ նիզակի :

Հար Իփիդամ սայր 'ի գօտին առ 'ի ներ-  
քոյ սլատենին,

Հար և մըխէր սալաստանեալ 'ի զօրու-  
թիւն յաղթ բաղկին .

Տէգըն շեշտեալ չեհաս խոցել բազմա-  
քանդակն ըզկամար,

Սայր խորամուկն եգիտ զարծաթ և բը-  
թեցաւ զերթ կապար .

Ըզտէգն յայնժամ բըռնահարեալ Ագա-  
մեմնոն արքային,

Ձըգեալ թափով քարչէր առ ինքն իբրև  
առիւծ մոլեգին .

Ի վերագին կորզեալ ձեռաց ըզտէգ նորա  
մահաբեր,

Ձըգեաց սուսեր հար ըզծոծրակն և դի-  
տասալաստ արկանէր :

Այսպէս տասալաստ Իփիդամոս ըզբռն  
ննջեաց երկաթի,

Այն որ անձկով խնդրէր լինել քաղաքա-  
ցեաց հովանի .

Աւանդ, անբաժ յառոյգ հարսնէն յերկիր  
անկաւ տարադէմ,

Թէպէտ օճան շատ ետ հարսին, սլառուղ  
չետես 'ի կուսէն .

Առ ձեռն հարիւր ետ զըւարակս, ապա  
հազար խոստացաւ

Զայծից, օգեաց . քանզի յարօտս էին նո-  
րա հօտ անբաւ :

Յաղթօղն յայնժամ Ագամեմնոն մերկեաց  
ողջոյն զախոյեան,

Զքնաղ ըզգէնան առեալ բերէր յԱքայե-  
ցւոցն 'ի խուժան :

Ընդուստ կոտն զայն յակն էարկ Անտե-  
նորեանն անդրանիկ,

Յաւ դառնութեան գրաւեաց ողջոյն  
զայրն հոյակապ և մարտիկ .

Աչք ճընշեցին ըզգերարտօսը հարազա-  
տին 'ի մահուան,

Ճեպ ետ յետուստ Ագամեմեայ տիգաւ  
եմուտ 'ի դարան .

Ընդ մէջ բազկին ընդ արմըկամբ ախոյե-  
նին տէգ վարսեաց,

Սայրըն հրափայլ կուռ գեղարդանն էանց  
'ի Թափ և խոցեաց :

Սասանեցաւ Ագամեմնոն, այլ դուռ չա-  
րար 'ի խօշիւն,

Թափ 'ի կոտն ետ և 'ի բուռն ունէր  
զաշտէն հողմասուռն :

Անդուստ Կոոն զԻփիդամեայ հարազա-  
տին համահայր

Առ զոտանէն քարչէր ճեպով, քաջաց  
քաջաց ձայն կարգայր :

Մինչ այս մինչ այն, տէգ 'ի Կոոն ընդ  
ասպարաւ կրմբաւոր

հար Ատրիդէս և արկ ըզնա տասպաստ  
յերկիր կորակոր .

Ըզգլուխ նորա հատ 'ի վերայ Իփիդա-  
մեայ կրսերոյն ,

Անտենորեանքն հարեալք իջին 'ի տուն  
յաւերժ գիշերոյն :

Բայց վերաւորն Ագամեմոնն գոռայր ար-  
քայն և վանէր

Գեղարդն 'ի ձեռն , և բռնալիր խարակ  
բառնայր և սուսեր .

Ճաղկէր արիւն ջերմ 'ի վերէն, կայր դեռ  
արին քաջամուր .

Վէր ցամաքեալ, եկաց արիւնն . հարաւ 'ի  
ցաւ սայրասուր :

Որպէս յերկունս կին ըմբռնեալ ցաւով  
'ի սուր 'ի նետից ,

Զոր Իլթուհիքըն մանկաբարձք ձրգեն  
յիւրեանց կասպարճից .

Եւ են նոքա դըստերք հերայ սատարք  
երկանց դառնութեան 128 ,

'նոյն սայրասուր ցաւոց երկունք յԱգա-  
մեմեայ սիրտն հարան :

Ի վեր 'ի կառս վազեալ անդէն կառս  
վարին տայր պատուէր

Ճեպ տալ 'ի նաւս , զի անպայման սիր  
տըն նորա նըւաղէր .

Ոչ ինչ բեկաւ . նա բարձրագոչ խրախոյս  
Յուճաց արձակէր ,

« Օ'ն բարեկամք , պետք Արդոսեանց ,  
առէք և տո՛ւք քաջալէր .

Դուք արդ մարտին զահէղ շըշուկ 'ի բաց  
տարայք 'ի նաւաց ,

Զի զօրն ողջոյն աստ ինձ կըռուել չեա  
Արամազդ խորազգաց » :

Ասաց արքայն , և վարչաւորն ետ ճեպ  
ձիոցն օգապար ,

Թըռիչս առնուն նըժոյգքն արագք նա  
ւատորմին 'ի դադար :

Փըրփուրն 'ի լանջ ծըփայր ձիոց , ներքոյ  
փոշուոյն ամպ ծածկէր .

Սրավար տարեալ հանեն մարտէն ըզխոց  
արքայն վըշտըմբեր :

Ղշտանակեալ այն ինչ 'ի կառս ետես  
հեկտոր զԱրիդէս ,

Լիւկեանց Տրոյեանց բարձրաբարբառ  
խրախուսական տայր հանդէս .

« Տրոյեանք , Լիւկեանք և Դարդանեանք  
ընթերամարտք 'ի խազմի ,

Լիք արք , ո՛վ քօջք , և յիշատակ ուժոյդ  
ածէք կորովի .

Տեղի ետ քաջն . և Ջրուանեանն ինձ  
փառք ձօնէ մեծաշուք ,

Դուք շէշտ 'ի Յոյնս սալասրմբակ ճեպ  
տուք ձիոցդ աննրկունք .

Ընդդէմ քաջաց ըզմրցանակ տարայք փա-  
ռաց հանդիսի » .

Ասաց Հեկտոր , յայր այր քաջիկ կորով  
ազգեաց 'ի յոգի :

Որպէս որսորդ առեալ ըզխումբ սպիտակ  
ժանեաց բարակաց ,

Դրդէ ընդդէմ գոռ առիւծուն և կամ  
կընճից վայրենեաց ,

Նրման 'ի Յոյնս հրոսեաց ըզգօրն Հեկտոր  
վիրադ Պրիամեան ,

Ինքն առաջին արէսանման ել բանակին  
ախոյեան :

Յամբաւ չբշուկ գոռայր հանգոյն ահե-  
ղագոչ մըրըրկի ,

Որ 'ի խոնարհ աստ փոթորկեալ ըզծով  
յուզէ ծիրանի :

Օ՛ր առաջին կամ զո՛ վերջին Պրիամո-  
սեանն արկ տապաստ

Հեկտոր արին , ում մեծապէս շուք տայր  
յայնժամ Արամազդ .

Հար զՈսկիտէս և զԱւտոնոս և զԱսսէոս  
առաջին ,

ԶԱգէղ , զՈսիեղտ և ըզԴոզոպ ըզԿիղիւ-  
տեայ հար զորդին .

Զեսիւմ, զՈրոն, հար և զԻփփոն զայրն  
մարտիկ քաջաբուն .

Զայս զօրաւարս հար ըզՅունաց, շատ և  
որեան 'ի զօրուն :

Որպէս զեփիւռ սատէ զամպրոսս զարա-  
գաթև հարաւին ,

Եւ ամպաշուփ տարուբերեալ անգունդք  
խորոց մըրըսկին ,

Անդ վէտ 'ի վէտ կուտակելով ալիք զա-  
լեօք ամբառնան ,

Եւ ծովածուփ հողմոյն շնչմամբ փր-  
փուրքն 'ի վեր կան դիզան ,

Սապէս հեկտոր անդ բազմակոյտ շատ  
կառափունս թաւալէր ,

Նախճիրս գործէր փոթորկելով օրահա-  
սին գուժաբեր :

Անշուշտ յայնժամ խուճապք 'ի նաւս  
Յոյնք մատնէին օրհասին ,

Թէ ոչ Ոգիւս խրախոյս ձայնէր առ Դո-  
մեդէս քաջարին :

“Օ ի է, ո՛վ քաջ, ո՛ւր են բազուկքդ,  
էկ դու կո՛ց ինձ առ ընթեր .

Թէ արդ հեկտոր կալցի ըզնաւս, ո՛չ մեծ  
կորանք իցեն մեր ” :

“Ես զոտս 'ի բոյս հարեալ մըցիմ, արին  
ձայն ետ Ոգիւսեայ ,

Ես դիմադրաւ նահատակիմ, բայց յոյս  
է իմ դուզնաքեայ :

Ո՞չ ահա վեհն Ամպախաղաց 'ի կողմն ե-  
ղեալ Հեկտորեանց ,

Քան մեզ ինքնին , զյաղթողական նոցա  
շնորհէ շուք փառաց ր :

Ասաց , 'ի նոյն և 'ի Թիւմբրէս յըստինս  
ահեակ տէգ կըշուէր ,

Հար կարեմէր և 'ի կառացն անդէն ըզ-  
նա տապալէր :

Հար և Ոգիւս ըզՄողիոն վեհ զանձնա-  
պահ արքային .

Թողին զնոսա , երբ 'ի մարտէն յաւերժ  
անգործ կացուցին :

Դիմեալք 'ի զօրն հարին խըռով , որպէս  
յորժամ կինճք երկու

Ի յորսական դիմեն բարակս 'ի Թափ ա-  
հեղ և հուժկու :

Իբրև այսպէս ընդդէմ Տրոյեանց դար-  
ձան այս քաջք անվեհեր ,

Եւ փախըստեայքն 'ի Հեկտորայ առին  
կրկին քաջալեր .

Յարեան յայնժամ բնաւից հուժկուքն  
առեալ ըզկառս և խուժան ,

Մըտին 'ի մարտ ամուք որդւոց Մերոսո-  
սին Պերկոսեան .

Սա այս Մերոս կը իղձ ներհուն և գու-  
շակաց գերազանց ,

Թոյլ չէտ որդւոց իւր ճակատել , 'ի մարտ  
մըխիլ մարդախանձ :

Նոքա անժոյժք , ծնողին իւրեանց ան-  
սաստեցին պատգամին ,

Քանզի զնոսա օրհանն անդարձ ձրգէր 'ի  
մահ խաւարին :

Տիգահարեալ քաղեաց նոցուն ըզուննն  
և զէն Դոմեդէս ,

Մինչ անդ զԽարոք և զԽալպողամ մահու  
մատնէր Ոգիւսէս :

Բայց 'ի յԻգեայ գահաւանդից կայր 'ի  
զընին Ջըրուանեան ,

Մարտին նոցա կըշիւ գործէր . նոքա մի-  
մեանց մահ գուժան :

Դոմեդ արին զԱգաստրոփոս 'ի սայր ե-  
հար նիզակին .

Սա էր գիւցազն այն Պէոնեան . խոցեաց  
ըզնա առ զըստին .

Չէին նրմա մօտ երիվարք ճողոպրեւոյ 'ի  
մահուան ,

Եւ մեծապէս ըստըջացաւ վրիպեալ յիւ-  
րում խորհրդեան .

Չիոց զամուսն իւր պաշտօնեայն անդ  
յանձանձէր 'ի բացի ,

Քաջ նահատակն հետի կըռուէր , մինչև  
անկաւ 'ի մարտի :

Անգուստ սրակնեայ հայեր հեկտոր ող-  
ջոյն ընդ կարգ բանակին ,

Գոչեաց դիմեաց հանդէպ նոցա , փա-  
զանգքն ըզհետ խաղացին :

Գէտակն 'ի նա ամբարձ Դոմեդ, երկ-  
կամուկք սարսեցին .

Բայց և այնպէս դարձաւ յՈղիւս բար-  
բառեցաւ կորովին .

“**Մ**յդ արհաւիրք այդ խօշ Հեկտոր 'ի  
մեզ դիմէ շեշտակի ,

Այլ մի , ո՛վ քաջ , մի կորասցուք , արձա-  
նասցուք առաջի ” :

Ասաց , ճօճեաց զերկայն աշտէն կրչիւ  
'ի գլուխն և եհար ,

Եւ դիպեցոյց ըզթափ տիգին սաղաւար-  
տին 'ի կատար .

Ընկրկեցաւ 'ի պղղընձոյն սայր նիզակին  
պղղընձի ,

Ոչ վարսեցաւ և ոչ գրծեաց ըզմորթ գըւ-  
խոյն գեղանի .

Եռավերջեան , սրըրնգաձևն , եռապա-  
տիկն արկ խափան ,

Զոր քաջաղեղն ետ Ապողոն նրմա 'ի զէն  
պահապան .

Սարսեաց Հեկտոր , վերջոտնեցաւ ճե-  
պով հարուստ ասպարէս ,

Մուտ 'ի խրուան եկաց անդէն անկեալ 'ի  
գուճս հիքապէս .

Կըքեալ այնպէս և յաղթ բըռամբն ունէր  
ըզհողն ասպաստան ,

Մինչև ըստուերք մուլթ գիշերոյն զաջօք  
նորա պատեցան :

Ի այց Դոմեդէս վարազացեալ ել ՚ի խըն-  
դիր աշտէին ,

Յուզէր ՚ի մէջ նահատակացն ուր վար-  
սեցաւ ՚ի գետին :

Ոգին յԵկտոր արծարծելով ՚ի կառս  
ոստեալ նա անդէն ,

Եմուտ ՚ի զօրն և ապրեցաւ յաղջամրջեան  
օրհասէն :

Այլ տէգ ՚ի բուռն ահեղաձայն գիմեաց  
Դոմեդ միւս անգամ ,

« Դու շուն Տրոյեան , զերծար դարձեալ  
՚ի մահուանէդ ողջանգամ :

Քեզ աւադիկ քեզ մօտալուտ կայր օրա-  
հաս ցաւագին ,

Այլ մազապուր արդ Ապոլոնն թափեաց  
ըզքեզ վերըստին .

Դու ՚ի շկահիւն շրջեալ նետից , ուխտիւ  
առ նա պաղատիս .

Այլ ես հարից զանդրէն կքրեալդ , թ' է  
ոմն աստուած և ընդ իս :

Խաղամ զարդիս , կըշուեմ ըզտէգ ո՞ դք  
ինձ գայ յանդիման » ,

Ասաց , հարուած ետ ըզմահուն քաջա-  
տիգին Պէոնեան :

Դէտ կայր Պարիս վարսագեղոյն առև-  
անդողն հեղինեայ ,

Ըզլայնալիճ աղեղն ՚ի ձիգ լարեաց քա-  
ջին Դոմեդեայ .

Կըծկեալ յետուստ կաց արձանին հրա-  
շակերտեալ դամբանին ,

Դամբան նախնոյն նահապետի էր Դար-  
դանեան Եղոսին .

Կապտէր Դոմեդ զԱգաստրոփեայ ըզլան-  
ջապանն երփնազարդ ,

Կապտէր 'ի նոյն զասպարն յուսոյն և զա-  
հագին սաղաւարտ .

Ընդ գիրկն յայնժամ եմուտ Պարիս ընդ  
լայնալիճ աղեղան ,

Ոստոյց ըզնեան 'ւ 'ի սըտղանէ չարձակե-  
ցաւ ընդուհայն .

Կըշիւ 'ի Թափ ըզգարշապարն ոտին նո-  
րա հար զաջոյ ,

Եւ Թափանցանց սայր սըլաքին վարսէր 'ի  
հողն 'ի ներքոյ :

Քըբքիջ բարձեալ խայտաց Պարիս 'ի  
դուրս վաղեալ դարանէն ,

Ձայն մեծապանծ բարբառեցաւ նա ցըն-  
ծալից 'ի սրտէն .

« Հարար Դոմեդ . և ոչ ընդ օդ արձակե-  
ցաւ Թափ նետիս ,

Ո՛վ, Թէ զոգիդ քաղէր 'ի քէն Թափանց  
ընդ քո ախոնդիս .

Զի և Տրոյեանք ոգի առեալ դլային յիւ-  
րեանց զըմբաղէն ,

Սարսեալքն 'ի քէն որպէս սարսին այժ-  
քըն պապչեակք յառիւծէն » :

Օ արհուրեցաւ ոչ ինչ Դոմեդ . անդէն  
արին ձայն կրկնեաց .

« Կնամո՛ղ վարար , անկաժաղեղն , ո՛վ խո  
պոսեօք գեղապանձ .

Թէ ինձ արձակ ճակատէիր զինու զար  
դու , ո՛վ Պարիս ,

Ոչ քոց նեախց պատկանդարան ոչ և ա  
ղեղն ազդէր յիս .

Արդ զուր պանծաս թէ զիմ զոտին դու  
գըծեցեր գարշապար ,

Յընչաց քերեմ իբրու որ կին կամ խակ  
մանուկ զիս եհար .

Չի անաւագ կընամարդոյն թափըն ձե  
ռին փըքնահար

Չէ մահացու , նա իբր ընդ օդ ձիգն է  
համբուն ապիկար .

Բայց ձիգ իմոյ հարուստ բազկին թէպէտ  
խուն մի գըծեսցէ ,

Է սայրասուր թափ սըլաքիս և զօրահասն  
արագէ .

Կին հարեւոյն յիմ նիզակէն զայտսըն ցը  
տէ լալագին ,

Եւ որբացեալ ամայանայ մատաղերամ  
մանկըտին .

Գէշ անկեալ ինքն և 'ի կարմիր գունէ  
զերկիր յարենէն ,

Եւ քան կանանց , բակ ըզնովաւ , տարմք  
անգեղացըն ճախրեն » :

Լըռեաց Դոմեդ, և քաջն Ողիւս 'ի հան-  
 դիպոյ եկն եկաց,  
 Դոմեդ յետոյ նստեալ նորա ըզսայրն յո-  
 տից իւր քարշեաց .  
 Ողջ ընդ իրանն գրաւեաց զարին դառն  
 ցաւոց երաշխեալ,  
 Վազեաց 'ի կառս, ձայնեալ անդէն կա-  
 ռավարին տայր ըզճեալ :  
 Սրանան նըժոյգքն 'ի կոյս նաւաց, զի  
 սիրտ քաջին նըւաղեաց .  
 Միայնացաւ անդ Ողիւսէս, չունէր զոք  
 մերձ 'ի Յունաց .  
 Առ հասարակ վարատեցան 'ի դող հա-  
 րեալ ահագին,  
 Եւ դառնացեալ մընչէր Ողիւսն համբե-  
 րատար 'ի յոգին :  
 « Եղո՛ւկ եմ ես, տագնապ է ինձ, չար է  
 փախչելն իբրև վատ,  
 Չար մեծապէս թէ ըմբռնիմ գիմագրա-  
 ւեալ ես 'ի զատ .  
 Ահա ըզՅոյնս եհար Գիոս . այլ զի՞ ծը-  
 փան խորհուրդք իմ .  
 Գիտեմ իսկ քաջ, զի 'ի մարտէն ցանգ  
 վերջոտնի անարին .  
 Իսկ այր ուղմիկ նահատակեալ իբր ա-  
 խոյեան անարգել,  
 Արձանանայ կամ 'ի հարուլ կամ գիտա-  
 պատտ անկանել » :

- Օ՛րփայր Ոգիւս . անդուստ Տրոյեանց  
 ասպարազէնք դաս 'ի դաս ,  
 Պատ ըզնովաւ ինքեանք զինքեանց 'ի մէջ  
 առին պատուհաս .
- Որպէս բարակք և քաջ որեան ըզկինճ  
 պատեն վայրենին ,  
 Որ բոհբոխեալ խուժէ մոլին թողեալ  
 զանտառ իւր-խորին .
- Նա զըսպիտակ սրբէ ժանիս ըզծամա  
 ծուռ ծամելեաց ,  
 Եւ ահագին սաստիկ կրրճիւն ըսի ներ-  
 քուստ ատամանց .
- Հուրջ գան գիմեալք , թէպէտ գազանն  
 տայ արհաւիրս սաստկապէս ,  
 Այսպէս Տրոյեանց գունդք գողային  
 պատեալ ըզքաջն Ոգիւսէս :
- Դիմեաց Ոգիւս խոցեաց նախկին զառա-  
 քինին Դոպիտէն ,  
 Վերոյ ուսոյն եհար ըզքաջն 'ի սայրա-  
 սուր 'ի յաշտէն .
- Ապա զԵննոմ և ըզթոռն նա դիտապաստ  
 տարածեաց ,  
 Հար թաւագլոր ըզՔերսիդամ զի վայր  
 վազեալն 'ի կառաց .
- Տիգեաց զաշտէն առ 'ի ներքոյ մեծ կրմ  
 բաւոր ասպարին ,  
 Նա 'ի փոշին յորսայս տապալ բրոնասա-  
 րեաց ըզգետին .

Թող ըզնոսա և՛ ի Բարոպ յԽապասիսեան  
չէշտեաց սայր ,

Սա Սովկոսին պերճ՝ քաջազին բուն հա-  
րազատ էր եղբայր :

Պիմեաց ՚ի յօգն հարազատին քաջն  
Սովկոս դիւցաբար ,

Արձանացաւ մօտ Ոգիւսեայ և անվէհեր  
էտ բարբառ .

« Ի նենդ , ՚ի քիրտն , անխոնջ դու անձն ,  
ո՛վ Ոգիւսէս շահատակ ,

Վա՛ջ , թէ այսօր զԽապասիսեանց կրկին  
տարցիս մըրցանակ .

Կամ զինազերծ զերկուս ըզքաջս արկցես  
տապաստ դու ՚ի հող ,

Կամ դու յինէն տիգեալ այսօր իջցես ՚ի  
Թոխ և ՚ի բոխ » :

Ասաց , կըշիւ ձրգեաց զաշտէն բոլորա-  
ծիրն ՚ի վահան ,

Եւ ընդ ասարն ընդ լուսափայլ Թափ  
անց աշտէն սաստկուԹեան .

Սըլաք տիգին հարբստեցաւ ՚ի բազմա-  
րուեստ լանջապան ,

Աւ կեղևեաց զՈգիսեսին ըզմորթ կողին  
զամենայն :

Հովանացաւ , արգել Պալաս մըխեւլ յըն-  
դերբս քաջին .

Ծանեաւ Ոգիւս , չէր մահացու Թափ հա-  
րուածոյ նիզակին .

Ընկրրկեցաւ և առ Սովկոս ձայն զայս  
արին բարբառէր ,

« Այ հէգ արանց , քեզ աւագիկ տէգ իմ  
գուժայ մահաբեր .

Այո ինձ խոչ արկեր ընդ ոտն ընդդէմ  
Տրոյեանց 'ի մարտին ,

Այլ գու այսօր յինէն տասպաստ օրհաս  
գըտցես խաւարին .

Դու արդ նրկուն դիաթաւալ 'ի տէգ ի  
մոյն նիզակի ,

Ինձ շուք տացես և դըժոխոց Բարապա  
նին ըզհոգի » :

Եսաց , հապճեպ Սովկոս ընդ կրուկ  
փախչէր իբրև անաւագ ,

Կըշուեաց Ոգիւս ձրգեաց զաշտէն վար  
սեաց նորուն 'ի քամակ .

Ընդ մէջ ուսոց թափ ընդ տախտակ ան  
ցոյց կըրծոց վիրագին ,

Դուփեաց անկաւ . դիւցազն Ոգիւս 'ի  
հենգն էարկ դառնապին .

« Սովկոս զածած գու Իսպասեայ քա  
ջաձիոյն կորովի ,

Օրհաս մահուդ կանխեաց , այր գու , չեք  
ապրանաց քեզ տեղի .

Այ հէգ արանց , ոչ հայրընքո և ոչ մայր  
քո սիրաբուն

Ըզքոյ աչկունքըդ թալացեալ ոչ փակես  
ցեն 'ի մահուն .

Այլ գիշախանձ թռչունքն 'ի քէն զայն  
'ի վայրի խըլեսցեն ,

Եւ հողանի վարազաթևա ըզքե բախեալք  
Ճախրեսցեն .

Այլ երբ յորհասն անփախչելի մահուն  
առցէ զիս շըշուկ ,

Յուղարկաւորք ինձ դիահանս հելենք  
տացեն դիւցազունք ։

Ասաց , 'ի նոյն ըզՍովկոսին յաղթ միջա-  
մուխ տէգն 'ի խոր

Քարչեաց 'ի դուրս առ 'ի մորթոյն և յաս-  
պարէն կրմբաւոր .

Քարչեալ այնպէս արիւն բըխեաց , գրա-  
ւեաց զոգին ցաւ սաստիկ .

Տեսեալ զարիւն զՈգիւսեսին խրախոյս  
բարձին Տրոյացիք .

Նորդան տըւեալ միահամուռ սլատեն 'ի  
վայր և 'ի վեր ,

'Նա վերջոտնեալ ձայն բարձրագոչ նիզա-  
կակցաց արձակէր .

Գոչեաց երիցս որչափ գոչէ մարդ հաս-  
տամուր 'ի գըլխոյն ,

Անդուստ երիցս և Մենեղաւ լըւաւ նորա  
ըզգոչիւն ։

Դարձաւ անդէն և Այասայ նիզակա-  
կցին ձայն կարդաց .

“ Արի՛ արքայդ Տեղամոնեան , զի՛ կաս  
դու քաջ մաղդեզանց .

Գոչիւնն հնչէ յիմ լըսելիս համբերատարն  
Ողիւսեայ ,

Չայն տագնապի իբրու 'ի նեղն որ միայ-  
նակ անկեալ կայ .

Խօշք Տրոյացւոց պատեալ ըզքաջն 'ի  
մարտ նեղէն 'ի սաստիկ ,

Օն 'ի թիկունս հասցուք նըմա տալ ըստ  
պարտեաց զօրավիգ .

Մի ընկճեսցի 'ի Տրոյացւոց մենազինեալն  
'ի մարտի ,

Եւ մեծապէս անձուկ նորա Աքայեցւոց  
ցաւեսցի ) :

Լսաց , յարեալ ըզհետ նորա այրն խա-  
ղայր դիւցազգեաց ,

Գլտին զՈղիւս պատեալ զարին 'ի Տրոյա-  
ցւոց փաղանգաց .

Որպէս յուլազք արենախանձք դարեալք  
լերանցն 'ի բարձու

Գան պաշարեն ըզվերաւորն ըզքազմոս-  
տեանն եղջերու ,

Աղեղնահար լեալ յորսորդէն թեթև  
ոտիւքն ըշտապի ,

Փախչի ցորվայր ջերմ է արիւնն և ծունկք  
նորա կան յուժի ,

Մինչև վատի 'ի սուր փըքնէն անկեալ 'ի  
թաւըս մայրեաց ,

Եւ 'ի լերանց խուժեալք 'ի նա դօշէն յու-  
վազք գիշախանձ .

Այլ թէ 'ստ բաղդին անդուստ առիւծ  
 ասէղազոր դիմեալ գայ ,

Խուճապ փախուստ առնուն յովազք , ա-  
 ռիւծն որսոյն տիրանայ •

Այսպէս Տրոյեանց ընտիր ընտիրք 'նա-  
 հատակեալք յասպարէս ,

Զայրըն մարտիկ և բազմագէտ շուրջ պա-  
 տեցին զՈղիւսէս •

Դիւցազն յաշտէն խրախոյս առեալ շար-  
 ժէր վանէր զօրահաս ,

Շարժէր կըռուէր մինչ առ ընթեր երե-  
 ւեցաւ մեծն Այաս ,

Բարձեալ վահան իբր աշտարակ հանդէս  
 եկաց դիւցազին •

Շքրտեան Տրոյեանք և ահաբեկք յայս  
 կոյս յայն կոյս խուճապին :

Ըզձեռանէն առեալ նորա Մենեղաւոս  
 սիրաբար ,

Յանդորր եհան մինչ ըզնըժոյգան ա-  
 ռեալ ածցէ կառավար :

Դիմեաց Այաս հար ըզՏորկղոս ըզՊրե-  
 ամեան զալջկորդին ,

հար ըզՊանդոկ , զՊիւռաս , զՊիւղարոս ,  
 ըզՂիւսանդրոս 'ի կարգին •

Զորօրինակ ձըմերայնոյն յԱրամազդեան  
 սահանաց

Գետ ուղիսօրէն ասէղասաստ թափի 'ի  
 դիւրս 'ի լերանց ,

Ի չոր կաղնեաց վարէ ամբաւ , խըլէ սո-  
 ճի նա յոլով ,  
 Խառնախըռու հանէ բազում տանի ա-  
 մայ մինչ 'ի ծով ,  
 Այսպէս հորդան տըւեալ Այաս ասե-  
 ղազօրն 'ի դաշտի ,  
 Խըռով հարեալ առ հասարակ ձըգէր տա-  
 սլաստ զայր և ձի :  
 Հեկտոր յահեակ թև ճակատուն չէր  
 արկածին իրազգած ,  
 Նա մարտ մըղէր անդ առ ամամբ Իսկա-  
 մանդրեան հոսանաց .  
 Քաջաց անդէն շատ կառամիունք անկա-  
 նէին թաւալգլոր ,  
 Ի գոռ սաստիկ անդ Իդոմէն նեղէր և  
 մեծըն Նեստոր .  
 Հեկտոր յայն թև վարազացեալ նախճիրս  
 գործէր ասագին ,  
 Վանէր ըզվաշտըս պատանեաց 'ի կառս  
 'ի տէգ նիզակին .  
 Համայն և ոչ քաջք Հելլենաց վերջոտ-  
 նէին յայն նախճիրս ,  
 Թէ չէր և անդ լեալ խոչ ընդ ոտն առև-  
 անգողըն Պարիս .  
 Սա քաջ զարբայն ըզՄաքառովն ետ վերջ-  
 ոտնեւ 'ի մարտէ ,  
 Խոցեալ զաջոյ ուս գիւցաղին յեռասայ-  
 րեան 'ի փըքնէ :

Ի ձախողակ յայն արկածէն մարտիկք  
Յոռնաց սարսեցան ,

Գուցէ կըռուոյն ելք անյաջող թողցէ  
տասաւաստ անդ զարքայն :

Պարձաւ արագ Իդոմենէս ձայն ետ Նե-  
ղեան ծերունւոյն ,

«Նեստոր Նեղեան , արի դու շուք Հելլե-  
նացւոց գերաբուն .

Աղէ , ո՛վ քաջ , ելեալ 'ի կառս ըզՄաքա-  
ոյն անձ ընդ քեզ ,

Ի խումբ նաւաց նըժոյգքն ըզնա թուուս-  
ցեն ողջամբ փութապէս .

Զի այր բըժիշկ բազմաց այլոց զուգակը-  
շիւ է կենաց ,

Նետ մահացու քարշէ ճարտար սըփուէ  
ամոք դեղ վիրաց » :

Լըւաւ Նեստոր և ամբարձեալ անդէն  
'ի կառս ծերունւոյն ,

Նստոյց առ իւր զԱսկղեպիսեան բըժիշկ  
ճարտար և ներհուն .

Մտրակ 'ի կուշտ նըժոյգքն հըլուք ար-  
շաւասոյրք 'ի դաշտին

Նաւատորմին թուչել հանդէպ գողցես  
անձուկ բերէին :

Բայց Կեբրիոն զըննեալ անդուստ ըզ-  
Տրոյացւոց խուճապել ,

Մեծն Հեկտորայ քաջն համահարզ իրա-  
խուսական ձայն ազդէր .

« Մէք աստ, հեկտոր, Յունաց ընդդէմ  
մարտ յարդարեալ ահագին,  
Յամբաւ շըշուկ կամք ճակատեալ 'ի թև  
զօրուն 'ի վերջին .

Բայց այլ Տրոյեանք և այրուծին անդ  
վեր 'ի վայր յուղեցան

Ուր Տեղամոնն Այաս կըռուի. զըննեմ ես  
զայն ախոյեան ,

Քանզի այն խօշն ասպար զուսովք բար-  
ձեալ տանի վիթխարի .

Օ՛ն անդ և մէք կառամարտիկք արշաւես-  
ցուք շէշտակի .

Անդ ուր հետիք և այրուծի շըշուկ յա-  
հեղ խառնեցան ,

Եւ ասպաժոյժք խաղան արեանց , գո-  
ւիւն հնչէ անսպաման » :

Ասաց գանեաց ըզսէգ նըժոյգան 'ի սրա-  
հընչող խարազան ,

Առեալք ըզգանն և սրավարեն կրկին զօ-  
րուն 'ի խուժան .

Սըմբակակոխ առնեն ըզկոյտ ըզգիականց,  
զասպարաց ,

Եւ 'ի ներքոյ թանայր առանցք յասպ-  
ժուժից 'ի յարեանց .

Արիւնազանդք աղարտեցան աթոռակին  
և սլրասիք ,

Անիւքն 'ի գիւլ շիթ ցայտէին և նըժուգա-  
ցըն սմբակք :

Շանթեաց հեկտոր, պուղեաց զամբոխ, մուտ խառնամուխ 'ի խրուան, Շըռինդ սաստիկ փոթորկեցոյց յանկարծ 'ի զօրն Աքայեան .

Եւ ոչ վայր մի նա դըրացաւ 'ի տէգ իւրոյ նիզակին ,

Մըրրիկ զարթոյց գնդաց գնդաց շըջան առեալ 'ի դաշտին .

Վանէր 'ի տէգ և 'ի սուսեր, վանէր քարամբք վիմարդեան ,

Խորչէր միայն ունեւ զԱյաս Տեղամոնեանն ախոյեան :

Բայց բարձրագահն ահեաց Գիոս զԱյաս վիրագն անվէհեր .

Պակեաւ արին, զեօթքեմըխտեան վահան զթիկամբքն արկանէր .

Դառնայր ահիւ, շուրջ զակն յածէր իբրու գազան 'ի դաշտէ ,

Եւ նըհանջէր զոտըն տակաւ փոխեալ տակաւ յոտանէ :

Որպէս յանդեայց 'ի պառակէն զառիւծ խարտեաշ ամէհի

Վոհմակք գամփուանց և դասք հովուաց աստի վանեն և անտի ,

Վայրիկ մի թոյլ ոչ տան նըմա լավիւզ ծախել ճարպ զեզանց ,

Ըզջայգն ողջոյն տքնին այնպէս . առիւծ սովի գիշախանձ .

Թափ խոյանայ , բայց 'ի նանիր , քանզի  
տարափ սըլաքաց

Տեղայ ամբաւ շէշտեալ 'ի նա 'ի կորովեա-  
ցըն բազկաց ,

Անդ և խանձողք և ջահք վառեալք ընդ-  
դէմ 'նորա արձակին ,

Յորոց սաստիկ դողայ դազանն , թէպէտ  
և յոյժ զայրագին ,

Անհրնարեալ վաղ քաջ այգուն նա վերջ  
ոանի հուսկ ապա ,

Եւ թախծագին թողեալ ըզդաշան անդ-  
րէն յանտառ բայանայ .

Հանգոյն Այաս թախծեալ ոգւով 'ի  
Տրոյացւոց նահանջէր ,

Մըղձկեալ 'ի սիրտ զի վասն Յուսաց նա-  
ւատորմին զանգիտէր :

**Օ**րորինակ յաղթ յաւանակ մտեալ  
չըջի յարտորայս ,

Եւ վաստակեալ մանկտին 'ի նա շատ խոր-  
տակեն խարազանս ,

Աստ անդ մըխի նա դանդաղեալ և զբարդ  
հրնձոցն աղարտէ ,

Թէպէտ անդուլ հարուն մանկունքն , ե-  
րեսս գանին նա չառնէ ,

Չի մանկական է ոյժ 'նոցա , չաղդէն 'նո-  
րայն 'ի քամակ ,

Հազիւ յանգոցն վարեն արտաքս ցըյագ-  
կերեալ ըզճարակ ,

Սապէս յայնժամ ըզմեծն Այաս ըզտի-  
տանեան վիթխարին

Տրոյեանք և քաջ նիզակակիցքն ըզհետ  
մըտեալ վանէին .

Ընդ յաղթ ասպարն ըզնա 'ի տէգ հար-  
կանէին նիզակաց ,

Այլ զոյժն ահեղ յիշեալ հըսկայն առ-  
նէր երբէք դարձադարձ .

Դառնայր դիմէր և ըզՏրոյեանց ըզլէ-  
գէոնան ընկըրկէր ,

Ի նոյն դարձեալ տակաւ առ Յոյնս փա-  
խըստական վերջոտնէր .

Բնաւից ընդդէմ մարտ եգ եկաց նաւա-  
տորմին պահապան ,

Այնպէս ընդ մէջ կրկին ազգաց արձա-  
նացաւ ախոյեան :

Բայց և աշտէք որք տեղային 'ի յարդն-  
ընկէց կորովեաց ,

Կէսք միջամուխք ընդ ասպարին մէջ վար-  
սեցան թափանցանց .

Շատք անժամանք մինչ չև գըծեալ մորթ  
զըսպիտակ դիւցազին ,

Քաղցք և ծարաւք քաջին արեան անկա-  
նէին 'ի գետին :

Արնկառոյց Եւրիպիւլոս Եւեմոնեանն  
հոյակապ

Ետես անդուստ նեղեալ զԱյաս 'ի սը-  
լաքացն 'ի տարափ ,

Հաս առ ընթեր արձանացաւ ձրգեաց  
 հրափայլ նա զաշտեայն,  
 Խոցեաց 'ի մահ զԱպիստոն զարքայն ըզ-  
 քաջ ըզՓաւսեան .

Ընդ առագաստ սրտին 'ի լեարդն եհար ,  
 լուծան ծուռիկք արւոյն ,

Յարձակեցաւ Եւրիպիւղոս կաստել ըզ-  
 զէնան 'ի յուսոյն :

Ընդուստ գէտակն 'ի վեր ամբարձ Ա  
 ղէքսանդրոս դաւաճան ,

Տես ըզկաստել զԱպիստոնին յոգւոց պար-  
 զել սպաստան ,

Նեա գրրկալիր հար յԵւրիպիւղ յազ-  
 դերն աջոյ հարըստեաց ,

Խորտակեցաւ բուն սըլաքին . տանջէր ցա-  
 լով երանաց :

Խուսեաց ահիւ յորահասէն վերջոտնե-  
 ցաւ 'ի խրուան ,

Նիզակակցացն յոգն Այասայ խրախոյս  
 կարդայր բարձրաձայն .

«Հայա , մարտիկք առաքինիք , օր փրկու-  
 թեան է ահա ,

Դարձէք , ո՛վ քաջք , արձանացէք վանել  
 զօրհասն յԱյասայ .

Օր մահագոյժ . ըզքաջն ահա նետից  
 տարափք ծածկեցին .

Խիթամ անշուշտ թէ չսպրեսցի բազմա-  
 տագնապ 'ի կըռուին .

Խուճի արարեալ շուրջ պատեցէք Սյաա  
ըզմեր քաջարանց ” .

Չայս տայր խրախոյս Եւրիպիւղոս վի-  
րաւորեալն 'ի փրքնաց :

Հորդան ետուն հասին , զասպարսն ար-  
կին զուսովքն առ 'ի վայր ,

Եւ տիգաբունս բարձին 'ի վեր . անգուստ  
Սյաա գիմեալ գայր :

Գարձոյց անգրէն զահեղ ըզգէմնն հա-  
սեալ յիւրոցն 'ի ճամբար .

Սյապէս յայնժամ խօշիւն մարտին իբրև  
'ի հուր բոցանայր :

Բայց քրանահար՛՛ն եղեան ճայիկէն յան  
գորր հանին ըզՆեստոր ,

Բարձեալք 'ի նոյն ըզՄաքաոն բրժիշկ  
զարքայն վիրաւոր :

Գիւցազն Աքիլ յահագնակէտ նաւուն  
իւրոյ 'ի խեղաց

Ետես ծանեալ . կայր 'ի զընին գերաշխա-  
րան մրցանաց :

Չայն համհարզին իւր Պատրոկղեայ ան-  
գուստ կարգաց փուլթապէս ,

Լըւաւ ըզճայնն 'ի խորանէն ել նա ար-  
տաքս իբր Արէս .

Ի յայն ժամէն գուժեաց օրհաս Պատրոկ-  
ղեսի արկածին .

Ել և եկաց քաջ Մենեստեանն բարբառե-  
ցաւ առաջին .

“**Օ** իա, Աքիլէս, հիմ ձայնեցեր, զինչ  
քեզ յինէն պէտք իցեն” :

“**Ո՛վ** Մենետեանդ, անդէն դիւցազն Ա  
քիլ կըրցեաց ՚ի նաւէն .

**Ո՛վ** Մենետեանդ քաջամոյն սրտին իմոյ  
նազելի ,

Անշուշտ այսօր Աքայեցին զիմովք ծըն-  
դովք փարեացի .

Տագնապ վերջին առ ըզնոսա , արդ գըձ-  
ձեացին կոր ՚ի կոր ,

Բայց դու արի՛ , իմ Պատրոկղէ , գնացեալ  
հարցցես առ Նեստոր .

**Ո՞րք է** այրն այն վերաւոր զոր ած ար-  
տաքս ՚ի մարտէն ,

Յետոյք նորա Մաքաոյնին օն և օն յոյժ  
նրման են .

**Այլ** ես ճըշգրիտ ըզտիպ գիմաց ոչ զըն-  
նեցի դիւցազին ,

Քանզի նըժոյգքն ՚ի հանդիպոյ սրա-  
ցեալ [Թըռեան և անցին” :

Նեղակակցին իւր սիրայնոյ լըւաւ ձայնին  
Պատրոկղէս ,

Յարեաւ ՚ի նաւս և ՚ի խորանս յուղի ան-  
կաւ փուլթապէս :

**Ընդուստ** նոքա կառավարեալք հասին  
՚ի վրան Նեստորին ,

Յանդորր ելեալք և ՚ի կառաց իջին ՚ի վայր  
երկոքին .

- Լոյծ ըզճայիկս ըզծերունւոյն Եւրիւմե-  
 դոն սպաշտօնեայն ,  
 Նոքա գիւրեւ քրտան շապկաց կացին ծո-  
 վուն առ աման .  
 Սըղոխք օգոյն որ 'ի ծովէն շնչեաց նոցա  
 զովագին ,  
 Մըտեալք ապա ընդ խորանաւ բազմոց  
 առին յակրմբին .  
 Անդ օշարակ գեղադիսակն Եկամիդէն  
 հանդերձեաց .  
 Ըզսա ած ծերն 'ի Տենեդեայ , զոր Ա-  
 քիլէս կործանեաց .  
 Սա ժիրաժիր դուստր էր վեհին Արսի-  
 նոսին քաջամոյն ,  
 Ըզսա ծերոյն ետուն հեւլենք զի էր մը-  
 տօք ուշմագոյն :  
 Նախ զառաջեաւ բազմականին սեղան  
 բերեալ ըսպաս արկ ,  
 Սեղան չքնաղ և սրբամիայլ ոտք սեղա-  
 նոյն կապուտակ .  
 Առեալ ապա և 'ի միջի ըզպըզընձեայն  
 եգ ամսէ .  
 Սոխ 129 կայր յամսէն , որ այս ըսպաս  
 գինւոյն արբման սատարէ .  
 Մեղըր դալար ած և 'ի նոյն նաշիհ ա-  
 լէր սրբազան ,  
 Եբեր ապա եգ առ ընթեր և գեղեցիկ  
 դաշխուրան .

Զայն ծերունին աժ 'ի տանէն ոսկեպա-  
 լար զարդարուն ,  
 Եւ կանթք ունկանց դաշխուրանին քա-  
 ռեակ թըւով են 'ի բուն .  
 Առ մի մի ունկն անդ արածէր զոյդ ոս-  
 կեղէն աղաւնեաց ,  
 Եւ ունջք ներքոյ դաշխուրանին էին կըր-  
 կին յատակաց .  
 Հազիւ ոք զայն 'ի սեղանոյն տարուբե-  
 րէր լիուլի ,  
 Իսկ անաշխատ բառնայր ինքնին Նեստո-  
 ըիոս ծերունի :  
 Յայս դաշխուրան Եկամիդէն դիցանու-  
 շից հանգունակ ,  
 Ի Պրամնիեան առեալ գինւոյն խառ-  
 նեաց նոցա ըզբաժակ 130 :  
 Առեալ ապա խարտոց պըղինձ խար-  
 տեաց զայծուն ըզպանիր ,  
 Եւ 'ի վերայ ըզձիւնափայլն ածէր ալիւր  
 ցան և ցիր .  
 Առ զօշարակըն զոր խառնեաց մատոյց  
 յարբումն ակըմբին ,  
 Արբին նոքա և ըզհրատապ ծարաւն իւ-  
 բեանց շիջուցին :  
 Զրուցեալք ապա այր ընդ ընկեր զուար-  
 թանային մեծապէս ,  
 Մինչև եհաս և խորանին առ դուրս եկաց  
 Պատրոկղէս :

ԵտեսՆեստոր և ՚ի փայլուն յարեալ գա  
հէն յանդիման ,

Ըզճեռանէն առեալ եմոյծ և մեծարէր  
բազմական .

Անդուստ բարբառ ետ Պատրոկղէս հրա  
ժեշտ տըւեալ սիրաբար ,

“ Բազմոց չառնում , ո՛վ ծեր դիւցազն ,  
հրաւէր այժմիկ մի կարդար .

Արդոյ է այրն և բարկացայտ որ հարցա  
նել յըզեաց զիս .

Խնդրէ գիտել զոր վերաւոր առեալ բե  
րեր դու զարդիս :

Արդ ճանաչեմ . դա Մաքաոն դա Ասկ  
ղեպեանն է արքայ ,

Արդ ես հրեշտակ դառնամ և զրոյց  
խնդրոյն տանիմ Ա. քիլէայ .

Գիտես իսկ քաջ , վեհ ծերունեաց , քանի  
է դա սոսկալի ,

Քանի արագ և անմեղին դա մեղ դընէ և  
սրտնի ” :

“ Իմ գուժ այնչափ , Նեստոր ասպետ  
կրկնեաց անդէն փուժապէս ,

Հիմ վասն Յունաց հոգայ այժմիկ այդ  
քաջարիդ Ա. քիլէս ,

Գիտել եթէ քանիք ոմանք արդ շէշտա  
հարք խոցեցան ,

Եւ ոչ գիտէ , կոծք քանի՞ ծն ՚ի բանակին  
գուժեցան .

Ընտիր ընտիրքն ահա 'ի նաւս անկեալ  
կան խոցք վիրաւոր .

Կայ նետահար մեր կորովին Դիոմեդէս  
քաջազօր .

Հարաւ Ոգիւս այն քաջատէգն . հարաւ  
Ատրիդ 'ի փըքնոյ .

Աղէզնահար Եւրիպիւղոս տանջի յազ-  
դերն իւր աջոյ :

Իսկ և ըզսա այն ինչ հանի ես 'ի մարտէն  
գոռութեան .

Հարաւ և սա 'ի սուր նետից 'ի լայնալճ'  
աղէզան :

Բայց Աքիլլէսդ այդ կորովի ահեղազօր  
քաջ արանց .

Դորա աղիք ոչ գալարին աւրն չածէ Ա  
քայեանց :

Մընայ թերևս զի առ ափամբ նաւա-  
տորմին մեր հանդէս ,

Մինչ յանհընարս մըտցեն հէլլէնք , յա-  
ճիւն գարձցի բոցակէզ .

Իսկ մէք միմեանց մօտ խիտ առ խիտ անկ-  
ցուք տապաստ և նըկուհք .

Ո՛հ , իմ չիք ոյժ , որպէս երբեմն անդառնքս  
էին քաջառոյդ :

Ո՛վ , թէ յաշխոյժ 'ի տխն էի . ո՛ւր այն  
կորովն իմ բազկաց

Որպէս յորժամ 'ի մէջ Եղեանց և 'ի մէջ  
մեր կագ յուզեաց .

Զի վարեցին ըզմեր անդեայս , աւար հարի ես փոխան .

Հարի զԽումոն բնակեալն յԵղեղ զայր քաջարին զԽարոբեան .

Սա ախոյեան իւր անդէոց հարեալ յիմոց սըլաքաց

Անկաւ տապաստ . խուճապեցան փախեան նորա դասք հովուաց :

Իսկ մէք յայնժամ շատ ինչ կապուտ աւարեցաք 'ի դաշտին ,

Ածաք յիսուն ջոկ զարջառոյն նոյնչափ և հօտ ըզխաշին .

Գոյնչափ խոզիցն էր երամակ նոյնչափ հօրանք մեծ այծեաց ,

Եւ ձիք աշխէտք հարիւր յիսուն , ողջոյն կոյան էր մատակաց .

Շատից մտրուկք կային ներքոյ . վարեալ ածաք գիշերայն .

Զաւարն ողջոյն բերաք յոստանն մուծաք 'ի Պիւղ Նեղոսեան :

Ետես Նեղոսն իմ ծերունին խնդաց 'ի սիրտ և յոգի ,

Իբրու շատից տէր աւարաց մարտիկս եղէ պատանի :

Այլ քաջ ընդ այգն առաւօտուն ձայնք մունետկաց բարձրացան ,

Գալ ժողովէլ որ մի անգամ անդ 'ի Եղեղ տուժեցան :

Աւագք Պիղեանց խմբեալք, 'ւ Եղեանք  
անդ պարտապանք լեալ բազմաց,  
Բաշխեմք զաւարն մեք վշտատեսքս և նը-  
ւազեալքս 'ի կարեաց:

Ձի յամս անցեալս դիմեալ 'ի մեզ բուռն  
Հերակէս ճոխաբար,

Վանեաց ըզմեզ և մեր մարտկաց անկան  
տապաստ լաւորեար.

Ձի մեք էաք 'սեղէոսին երկոտասան քաջ  
զաւակ,

Մնացի միայն և այլքն ողջոյն տապաստ  
անկան նըշաւակ:

Վասն այն 'ի մեզ յաւակնեցան Եղեանք  
զրահեալք 'ի մարտին,

Ի վեր վազեալ թշնամանօք զեան մեծա-  
պէս նիւթեցին:

Ի յայս պատճառ ջոկ զանդէոց կալաւ  
անձին ծերունին,

Հօտ մեծ խաշանց երեքարիւր և ըզհո-  
վիւսն առանձին:

Ձի շատ պարտէր նըմա Եղիդ, իբրու նը-  
ժոյգք թիւ քառեակ

Նըժոյգք ծերոյն հանդերձ կառօք շատ  
բերէին մրցանակ:

Գնացեալ 'ի խաղ Ղոմսլիական եռոտա-  
նւոյն ազագաւ,

Եւ ըզնըժոյգսն Աւգիս արքայն անձին  
պահեաց և կալաւ.

Թափուր այնպէս ըզկառավարն յետս  
 արձակեաց թախծագին ,  
 Ընդ բանս ընդ գործս Աւգիասայ սըրտ-  
 մըտեցաւ ծերունին .

Շատ ինչ կապուտ գրաւեաց անձին , և  
 զայն 'ի բաշխ յաւարէ  
 Ետ խուժանին , զի 'ի մասնէն մի ոք ան-  
 բաժ մընասցէ :

Մինչ այս մինչ այն , մէք այս բանից ուշի  
 կալեալ նըստատակ  
 Եւ սար առեալ ըզքաղաքաւ դից յաւեր-  
 ժից յազէաք ,

Յերիւր աւուր Եզեանք ողջոյն և այրու-  
 ձին խըմբեցան ,  
 Եւ ընդ նոսա Մողեան մանկունքն ան-  
 փորձք 'ի մարտ զինեցան :

Ե 'ի բըլըի անդ 'ի դըժուարս քաղաք ա-  
 նուն թրիւէսսա ,  
 Վերոյ Ալփեայ 'ի ծագ վերջին 'ի յաւա-  
 զուտըն Պիւղեայ :

Նոքա քաղաք զայս յատակէլ շուրջ սլատ  
 առեալ փակեցին ,  
 Հորդան տըւեալք առ հասարակ վայր  
 գրաւեցին ըզգաշտին :

Չայն տալ զինուց , մեզ յՈղիւմպեայ  
 սրացաւ Պալասս գիշերայն ,  
 Եւ հեշտ եղև խմբէլ 'ի Պիւղ զարդէն վա-  
 ուեալն ըզխուժան .

Թոյլ ինձ Նեղոս չեա զինուորիւ, յինէն  
զնրժոյգս իւր ծածկեաց ,

Զի դեռ անփորձ զիս համարէր 'ի գործ  
մարտին մրցանաց .

Այլ ես 'ի մէջ մեր ասպետաց , թէպէտ  
գոլով հետեակ ,

Պայծառացայ զի Աթենաս եդ զիս մար-  
տիկ նահատակ :

Է՛ գեա Մինոս որ ընթացեալ հոսէ 'ի  
ծով մերձ յԱրին ,

Անդ այրուձին մընայր այգուն , հետիքն  
հորդան խուժէին :

Վառեալք 'ի զէն 'ի գեա Ալփեայ յօր  
ժամանեմք հասարակ ,

Անդ մեծազօր Արամազդայ զոհ գեղեցիկ  
յազեցաք .

Պոսիդոնին ցուլ փողոտեմք , ցուլ մի  
յազեմք Ալփեայ ,

Իսկ անարատ երինջ յանդեայց զոհեմք  
խաժակն Աթենայ :

Ընթրիս առեալք 'ի բանակին մեք երա-  
խան երախան

Զինու զարդու ընկողմանեալք գետոյն  
ննջեմք առ ափան .

Դիմեն Եղեանք , ճգնին զոստանն քան-  
դեւ տասպալ ընդ երկիր ,

Բայց և շըռինդն հարաւ նոցա բուռն Ա-  
րեսին մեծ նախճիր .

- Զի արևակն յորժամ ծագեաց և աշխարհի ըոյս եհաս ,
- Մեք 'ի մարտին խառնուրդն ասեղ զՈրմիզդ կարդամք , զԱթենաս :
- Նայա կրուսին Պիւղեանք Եղեանք . զարին Մուղոսն ես հարի .
- Ըզքաջ նըժոյգս հանի զնորա . սա էր փեսայ արքայի .
- Ունէր ըզդուսոր Աւգիասայ զերէց խարտեաշ զԱգմեդէ ,
- Զոյժ զարմատոց գիտէր , որչափ արգանդ հողոյն բուծանէ :
- Շահատակեալ ես զայն արին տապատարկի տիգահար ,
- Ելի 'ի կառան և խառնեցայ նահատակացն ընդ որեար :
- Զահի հարեալ բեկան Եղեանք խուճապեցան և փախեան ,
- Տեսեալ տապատ զասպահապետն ըզքաջն իւրեանց ախոյեան :
- Այլ ես նըման մուժ մըրըրկին գիմեալ կալայ յիսուն կառս ,
- Մէն մի կառաց կրկին մարտիկք յինէն տիգեալք կան յորսայս :
- Հարկանէի և զԱկտորեանս Մողեան ման , կունս ըզկրկին ,
- Թէ չէր նոցա վեհ Պոսիդոն մէգ քօղ արկեալ 'ի մարտին :

Շուք մեծապէս եդ մեզ Դիոս , զի հե-  
տամուտք տարածիդ

Դաշտ հատանեմք լի ասպարօք , և զէնս  
կապտեմք գեղեցիկ :

Հարեալ վանեմք ձիավարեալք մինչ 'ի  
յուռթին Բուպրասէ ,

Ի վէմն Ուէն և մինչ յԱլէս , զոր և կոչեն  
Կողովնէ :

Անտի Պալաս դարձոյց ըզզօրն . անդ  
զայրն հարի ես վերջին .

Ի Բուպրասեայ դարձեալք 'ի Պիւղ ձիա-  
վարեն խնդագին :

Շընորհս ունին 'ի դիս Զեսայ , և 'ի  
մարդիկ Նեստորայ .

Այսպէս 'ի մէջ արանց մարտկաց երբեմն  
և ես քաջացայ :

Բայց զԱքիլէան ուժոյն վայելս առցէ  
միայն Աքիլէս ,

Եւ երբ տապաստ անկցին Հելէնք լաց-  
ցէ յայնժամ դառնապէս .

Ո՛վ նազելի , զոր Մենեսոս քեզ պա-  
տուիրեաց դու յուշ ած ,

Յաւուր յորում 'ի Փիթիոյ ըզքեզ յԱտ-  
րիդ արձակեաց .

Զի մէք յայնժամ գողով 'ի տանն ես և  
Ոգիւս բարեբուն ,

Զոր պատուիրեաց , ականջալուր լըւաք  
անդէն զայն ողջոյն .

Եկեալ էաք մէք Պեղոսին 'ի յապարանսն  
արքունի ,

Բազմաժողովն յԱքայիոյ զօր գումարել  
բանակի .

Մէք անդ 'ի տանն ըզՄենետոս գրտաք  
դիւցազն և ըզքեզ ,

Եւ անդանօր քո առ ընթեր տեսաք ինք-  
նին զԱքիլէս .

Իսկ ծերունին Պեղոս ասպետ զիսորս  
պարարորս զեզին

Այրէր 'ի զոհ Ամարոպայնոյն 'ի ներքս 'ի  
խոր 'ի գաւթին ,

Հրակէզ 'ի զոհն հրաշէկ գինւոյն հեղոյր  
զոսկին ըզբաժակ .

Մինչ դուք 'ի սպաս կայիք մըսոյն , 'ի նա-  
խադրունս մէք հասաք :

Յապուշ հարաւ վազեաց Աքիլ առեալ  
զաջոյն մոյծ ըզմեզ ,

Եդ բազմական ետ և հիւրոյթ հիւրամե-  
ծար 'ի հանդէս :

Իբրև վայելքն առին վախճան 'ի հացկե-  
րոյթ , յրմսելի ,

Ես առաջին խաղալ 'ի մարտ ձեզ քաջա-  
լեր կարդացի :

Խրախուսեցիք . և ծերունիքն ետուն բա-  
զում քաջալեր .

Եւ նախ Պեղոսըն ալևոր իւրն Աքիլէայ  
պատուիրէր .

Ցանգ նահատակ լեր, ո՛վ որդեակ, բնա-  
ւից լէր դու գերազանց .

Անդուստ և քեզ ծերն Ակտորեան Մե-  
նետիոս զայս ասաց .

Զարմիւ Ա. քիւլ վեհ է, որդեակ, իսկ  
դու տիօք քան ըզնա .

Նա քեզ յաղթէ կորովութեամբ, դու  
բան ուշիմ տո՛ւր նրմա .

Հրահանգ նրմին ազգեա ՚ի խրատ, քեզ  
նա անսայ ՚ի ժամուն :

Զայս քեզ պատուէր ետ ծերունին, դու  
մոռացար զայն ՚ի բուն :

Այլ աղէ, քաջ, նա և զարդիս ձայն տուր  
արւոյն Ա. քիւլեայ .

Փորձ մի փորձեա, գուցէ բանիւդ ոգին  
գորա հեզանայ .

Բա՛ ո՞ գիտէ թէ աստուծով սիրտըն նո-  
րա չամոքի .

Քաղցր է խորհուրդ ազգարարող բարե-  
կամին նազելի :

Ապ՛ եթէ նա խիթայ յոգին ՚ի պատգա-  
մէ իմեմնէ ,

Կամ թէ ինչ մի յԱրամազդայ մայր իւր  
արգոյն ազգեալ է ,

Ըզքեզ, ո՛վ քաջ, գէթ յըղեսցէ և Միւր-  
միդեանք գոռասցին ,

Եւ դու թերևս արփիասցիս Ա. քայեցւոց  
լոյս ազգին .

Քեզ 'ի կրուովն տացէ տանել զարդ  
զիւր չքնաղ և ըզզէն ,

Տրոյեանք 'ի քեզ ըզնա կարծեալք տեղի  
տացեն 'ի մարտէն :

Մեր վշտատես որդիքն Յունաց ոգի առ-  
ցեն 'ի մարտի .

Փոքր ինչ իցէ պարտասելոյն ոգի առնուլ  
և վայր մի :

Իսկ դուք առոյգքդ 'ի մեր նաւաց և 'ի  
վրանաց հեշտաբար

Ըզխոնջ վիրագան հալածեսջիք յոստանն  
իւրեանց տարմաբար 131 » :

Եսաց Նեստոր , և բոց վառեաց 'ի լանջ  
քաջին Պատրոկղեայ .

Յարեաւ փուլթայր 'ի նաւատորմն Էա-  
կիդեանն Աքիլէայ :

Այն ինչ եհաս 'ի նաւախումքն Ողիսեսի  
դիւցազին ,

Ուր և ատեանք ուր և օրէնք ուր և  
կանգուն դից բազին ,

Անդ ընդ առաջ Եւրիպիւղոս ել Եւմո-  
նեան քաջազն այր ,

Որ կաղ 'ի կաղ դայր 'ի մարտէն յազգեր  
իւրում նետահար .

Յուսոյն 'ի վայր և 'ի դըլսոյն կայլակքը-  
տանցն էր անհուն ,

Յորդ 'ի վիրէն արիւն վիժէր , բայց էր  
աշխոյժ աննրկուն :

Տեսեալ այնպէս Պատրովդեսի, քաջին ա-  
ղիք դաւարին .

Յողոց եհան և արտասուեաց, գուժեաց  
անդէն ցաւագին :

“ Ո՛հ , հիքացեալ սետք զօրավարք Ա-  
քայեցոց արք աւագք .

Բա՛բէ , օտարք 'ի սիրելեաց , տարաշխար-  
հիկք նըշաւակք ,

Ա՞յսպէս ուրեմն , աւանդ բախտին , շունք  
Տրոյիոյ գիշխանն՝

Մըռըգայլեալ լափլիզեսցեն ըզճարս  
մարմնոց դիւցազանց .

Այլ աղէ , քաջ , բաւե՛ն հելենք ընդդէմ  
վիրագն հեկտորայ

Կամ թէ անկցի՛ն 'ի տէգ քաջին , աղէ  
դիւցազն , ինձ ասա ” :

“ ] ո՛ւր արդ , մազդեզըն Պատրովդէ ,  
ձայն Եւրիպիւղ ետ անդէն ,

Այլ զօրավիգ չիք հելենաց , բայց թէ  
նաւայն ասպաւէն .

Զի լաւորեարն յոյն բանակին , աւանդ , 'ի  
նաւս անկեալ կան

Խոցք 'ի Տրոյեանց , ոյց և ոգիքն հաղ  
քան ըզհաղ բոցանան .

Բայց զիս , ո՛վ քաջ , փրկեալ զարդիս 'ի  
նաւն ածցես քաջամուր ,

Կորդեալ ըզնետն յիմ ազդերէն լւա  
զարիւնն 'ի գաղջ ջուր .

Ամբ բուժիչ ըսպեղանի առ և սրփուեա  
'ի վերայ ,

Յոր և ասեն ըզքեզ քաջիկ վարժեալ եր-  
բեմն յԱքիլէայ .

Ձոր հրահանգեաց յուշկապարիկն ար-  
դարասէրն այն Քիրոն .

Յիս դու , ո՛վ քաջ , չեն աստ բըժիշկք ոչ  
Պողալիր ոչ Մաքոն .

Մին խոց , կարծեմ , կայ 'ի վրանին և  
պէտս ունի բըժըշկի ,

Եւ մին Տրոյեանց 'ի ճակատուն ընդ օր-  
հասին իւր կըռուի " :

**Յ**ողոց յայնժամ հան Պատրոկղէս .  
« Ո՛ր աղէտիցս այս վախճան .

Բա՛րէ , դիւցազն Եւրիպիւղէ , տագնասպ  
է ինձ անպայման .

Ես արդ հրեշտակ քաջն Աքիլէայ ճե-  
պիմ տանել անդրադարձ ,

Ձոր պատուիրեաց Նեստորիոս վէհ պա-  
հասանն Հեղենաց .

Սակայն այժմիկ քա՛ւ թէ լըքից ըզքեզ 'ի  
ցաւ դառնութեան " .

Ասաց և գիրկ ածեալ նրմա եմոյժ զար-  
քայն 'ի խորան :

Ետես ծառայն , բազմոց նրմա զարջառե-  
նին արկ անդէն .

Եւ տարածեալ ըզսուր փըքինն հատ կըռ-  
րոցաւ յազգերէն .

Առ զապաժոյժն և զապաւառն 'ի ջուր  
լըւաց 'ի ջերմին ,

Դիւրիչ ցաւոց արկ դառն արմատ ճըն-  
շեալ զաւիշն 'ի ձեռին :

Արագ այնպէս ապաքինեալ կարճեաց  
ըզցաւ զամենայն ,

Եւ վերքն 'ի նոյն ըսպիացան եկաց հո-  
սումն և արեան :





# ԵՂԵՆԵՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԲ •

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Պատճառք սրտմտութեանն Պոսիդոնի  
և Ապոլոնի ընդդէմ պատուարին Յու-  
նաց : Յոյնք վանին մինչև 'ի պատնէշս  
իւրեանց : Հեկտոր ըստ խորհրդոյն Պու-  
ղիւղամասայ հրամայէ զորուն լքանել  
զկառս . և 'ի գունդս հինգ խմբեալ հե-  
տևակս , պատրաստի անցանել ընդ խը-  
րամն : Ասիոս ընդդէմ հրամանին ժը-  
տեալ կառարշաւ անցանել , վանի 'ի Պո-  
ղիւպիւղեայ : Տրոյացիք 'ի պահուն պակ-  
նուն 'ի տեսիլ արծուոյ վերաւորելոյ 'ի  
վիշապէ , զոր ունէր մագլցի : Պուղիւղա-  
մաս 'ի ձախողակ հմայս հանեալ զտեսիլ  
զայն , խորհուրդ տայ Հեկտորի դառնալ  
յետս : Պատասխանի Հեկտորայ արիա-  
կան և վեհանձն : Առիւ ընդ պատուարին  
և պաշտպանութիւն անհնարին : Սար-  
պեդոն գրգուէ 'ի պսակաց պատուարին ,  
և բանայ խրամատ : Գիմակալութիւն  
Այասայ : Հեկտոր որձաքար վիմաւ խոր-  
տակէ զգուրս և խուժէ 'ի ներքս : Յոյնք  
վանին մինչև 'ի նաւս :



## ԵՂՒԼԱԿՆ

ՀԱԳՆ ԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԲ .

ԲՈՒԺԵՐ գիւցազն 'ի խորանին զԵւրի-  
պիւղոս վիրաւոր ,

Մինչ դեռ խաղմին Տրոյեանց Յունաց խօ-  
շիւնն հնչէր ահաւոր :

Անդ ոչ պարկէն փոսոյն բաւեաց զօ-  
րուն ընդդէմ յաղթական ,

Ոչ լայն պատուարն որ բարձրացաւ նա-  
ւացն Յունաց մահարձան :

Փոս փորեցին , այլ դից չետուն հարիւր-  
եզնեանն ըզպայծառ ,

Եւ պատեցին պահել ըզնաւս , զամբաւ  
կապուտն և զաւար :

Ի գլուխ հանին . բայց դիքն անմահք 'ի  
 նոյն գլտան գրժկամակ ,  
 Ուստի և գործն յակաստանի չեկաց հա-  
 րուստ ժամանակ :  
 Յորչափ Հեկտորն ասեղագոռ կըռուէր  
 և կայր կենդանի ,  
 Եւ դիւցազինն ոինն Աքիլլէայ յաւերժա-  
 նայր 'ի սրտի ,  
 Յորչափ ոստան կայր 'ի յոտին մեծ ար-  
 քային Պրիամոնն ,  
 Յայնվայր Յունաց և ասագինն եկաց սպ-  
 տուարն 'ի կանգոնն :  
 Իսկ երբ Տրոյեանց քաջ նահատակքն ան-  
 կան 'ի տէգ և 'ի սուր ,  
 Շատք և Յունաց կէսք դիտապատ և  
 կէսք զերծան անձնապուր ,  
 Երբ և յամին տասներորդի մեծ Եղիոնն  
 յատակի ,  
 Եւ նաւագնացք դարձան Հելլենք յաշ-  
 խարհ իւրեանց հայրենի ,  
 Յայնժամ Փերոս և Պոսիդոն զաւեր կըն-  
 քեն սպտուարին ,  
 Սանձեն ըզգետս որ թափ 'ի ծով յԻ-  
 դեայ լերանց արձակին .  
 Եւ են այս գետք Եպտապորոս , Ռեսոս ,  
 Կարէս և Ռոդիս ,  
 Եւ Գրենիկոս , վէհ Սկամանգրոս և Ե-  
 սեպոս , Սիմոիս .

Ուր շատ ասպարք շատ սաղաւարտք յա-  
լըս նորա գըլեցան ,  
Ուր թաւալգլոր և ճեռք արանց կիսաս-  
տուածոց սուղեցան :  
Մեծն Ապողոն ողջ զայս գետոցն ա-  
ռեալ դարձոյց ըզբերան ,  
Թափ 'ի պատուարն յորդ հոսանացն ա-  
ւուրս իննեակ ետ հորդան .  
Անդ և Դիայ բացան սահանք տեղատա-  
րափ և անդուլ ,  
Զի ողողեալ խարխուլ պատուարն արագ  
լիցի ծովակուլ :  
Երկրասասանըն Պոսիդոն խեթահարեալ  
էր արդէն ,  
Ինքն առաջնորդ կաց կործանմանն յաղթ  
'ի բըռին եռարձէն .  
Խուժան ալեաց ետ ամէհեաց , հիմունք  
լուծան պատուարին ,  
Հիմունք վիմօք և պահանգօք զոր Յոյնք  
քրտնեալք խորեցին :  
Մինչ յԵլլեսպոնտն երեքալեան ըզվայրն  
ողջոյն յատակեր ,  
Քանդեալ ըզգործն , անդրէն աւազ մե-  
ծին պատեաց ծովեզեր :  
Ըզգետս ապա առ և դարձոյց յիւրեանց  
բընիկ 'ի տաշտին ,  
Ուր յառաջմէ 'ի գարն իւրեանց ջուրք  
գեղահոսք խաղային :

**Օ** այս 'ի յապայս էր գործելոց վեհ Պո-  
 սիդոնն և Փեբոս,  
 Այլ էր յայնժամ զյաղթ պատուարաւ  
 շըշուկ ամբաւ և հրահոս :  
 Պահանգք բըրգանց թափ ընդհարեալք  
 ահեղ կափմամբ սարսեցան .  
 Յոյնք վերըստին գանահարեալք յԱրա-  
 մազգեան խարազան ,  
 Փակին 'ի նաւս . զի յԵկտորեան սակեան  
 յաշտէն մահաբեր ,  
 Որ ցանգ իբրև մըրըիկ գուժեալ , որպէս  
 յառաջ , փոթորկէր :  
 Զորօրինակ երբ բարակաց և յորսորդաց  
 'ի միջի  
 Վարազ հուժկու շըջանակեալ և կամ  
 առիւծ ամեհի ,  
 Սէգ և խիզախ ըզանթընկէց աստ անդ  
 զաչաց տէգն յածէ ,  
 Թէպէտ կանգուն իբրև պատուար շուրջ  
 զախոյեանս ականէ ,  
 Թէպէտ սըլաքք 'ի քաջ բազկաց կուռ և  
 անդուլ արձակին ,  
 Բայց և այնպէս սիրտն աննըկուն , ոչինչ  
 պակնու կորովին ,  
 Մահ նա գուժայ , խեթի հայի շէշտ  
 խոյանալ յախոյեան ,  
 Եւ ուր յանկարծ նա սըլանայ , արք և բա-  
 րակք տեղի տան ,

Նրման Հեկտոր պատեալ ընդ զօրն , ահ  
տայր վազել ընդ խրրամ ,  
Բայց երիվարքըն բոցավառք ոչ ժլտեցին  
տալ հորդան .

Եկին կացին 'ի ծայր Թըմբոյն խրխըն-  
ջային ուժգնակի ,

Ջահանդէին զի լայնափոս պարկէն տե-  
սին առաջի .

Ոչ ըզնովաւ վազն անվէհեր , ոչ անցա-  
նեւն էր հեշտին ,

Ատի անտի էին ողջոյն վախք դահավէժք  
ահագին .

Իսկ 'ի վերոյ լայն և ամուր էր սայրա-  
սուր շերտափակ ,

Ջոր խիտ առ խիտ անդ վարսեցին ընդ-  
դէմ Տրոյեանց ամբարտակ :

Ի գիւ զանիւս տանել կառաց չէին նը-  
ժոյգք բաւական ,

Այլ 'ի գործ յայն նահատակել գունդք  
հետևակք վառեցան :

Յարեաւ յայնժամ Պուղիւդամաս կար-  
դաց զԵկտոր քաջարի ,

« Աղէ , Հեկտոր և սէտք Տրոյեանց և  
դուք համհարզք նիզակի ,

Անմտանամք մէք ընդ խրրամն երիվա-  
րաց տալ հորդան .

Գող անանց է . են անդ սուր շերտք մերձ  
պատուարին ամրութեան .

Այրուձիոյն չիք ինչ հընար անդր իջա-  
նել առ 'ի մարտ .

Անձուկ է վայրն . նոքա անշուշտ վէր ըն-  
կալցին տարապարտ :

Թէ Ամպրոպեանն Ա.քայեցւոց ըզժամ  
նիւթէ զօրհասին ,

Եւ զօրավիդ յաւերժանայ կալ Տրոյա-  
ցւոց բանակին ,

Իդձ լինէի , ո՛վ , թէ այժմէն արդիւնա-  
նայր բանն 'ի բուն ,

Եւ տարաշխարհք աստ Յոյնք տապաստ  
անկանէին անանուն :

Բայց թէ յանկարծ ճակատ կարգեալ  
առ 'ի նաւաց խուժեացեն ,

Տաղնապ յայնժամ կալցի ըզմեզ յանել  
'ի խորն 'ի պարկէն .

Յայնժամ քաջ իսկ և 'ի Տրոյեանց ոչ ոք  
դարձցի ողջանդամ

Զերծ 'ի Յունաց 'ի հրոսակէն , դոյժ ար-  
կանել 'ի յոստան :

Հնապ իմոյն լըւեալ ձայնի առէք դուք  
արդ. քաջալեր ,

Թող կառավարքն աստ զերիվարս խրա-  
մոյն կալցին առ ընթեր .

Իսկ մեք վառեալք զինու զարդու խըմբիմք  
ըզհետ Հեկտորայ .

Բեկցին Հելլենք , թէ մահ դոցա ան-  
շուշտ առ դուրս հասեալ կայ 37 :

**Լ**ըլաւ Հեկտոր քաջ խորհրդոյն Պու-  
 ղիւդամայ գուշակին ,  
 Եւ ետ ընդ ետ ինքն 'ի կառաց սպարսեաց  
 զինուքն 'ի գետին .  
**Ի**նոյն Տրոյեանցն և ասպազէնք ձայն ամ-  
 բարձեալ հասարակ ,  
**Մ**ի ըզմիով վազէն 'ի վայր տեսեալ զիւ-  
 ղեանց նահատակ :  
**Ա**յր այր վարչին տայր զերիւլարս կար-  
 գել խրամոյն առ աման ,  
 Եւ նահատակքն ընդ զօրսւլարս 'ի գուն-  
 դըս հինգ բաշխեցան :  
**Գ**ունդն առաջին խաղաց ըզհետ ասէ-  
 ղազօրն Հեկտորայ ,  
 Քաջ Պուղիւդամ նիզակակից հարազա-  
 տին ընթանայ .  
**Գ**ունդ յողնաթիւ գունդ կորովեաց էր  
 այս բնակից այրընտիր ,  
 Նահատակէր սլատուար քանդել լեալ  
 ընդ նաւաց մարտադիր .  
**Ը**զհետ խաղայր նոցա երրորդ քաջ կա-  
 ռավար Վեբրիոն ,  
 Հեկտոր քան զսա զայլ ոք խոնարհ կար-  
 գեաց կառացն 'ի սլաշտօն :  
**Ը**զգունդ երկրորդ ածէր Պարիս և Ա-  
 գենոր 'ւ Աղկաթոս .  
**Պ**ետք երրորդին են Պրիամեանք Դեփոք  
 քաջազն 'ւ Եղենոս .

Ընդ որս դիւցազն և Ասիոս խաղաց եր-  
 րորդ զօրավար ,  
 Գայր յԱրիսբայ այս Իւրտակեան քաջն  
 Ասիոս վեհափառ .  
 Անդուստ գետոյն 'ի Սեղզենեայ զայս  
 քաջ մարտիկ զօրապետ  
 Բարձեալ բերին զոյգք նրժուգաց ձիք  
 վիթխարիք և աշխէտ :  
 Պետ չորրորդին էր Անքիսեայ վեհ քա-  
 ջրդին Ենէաս ,  
 Ի նոյն մարտիկք Անտենորեանքն Աբբի-  
 զոքոս 'ւ Ակամաս :  
 Մեծ Սարպեդոնն ած էր ըզգուհոն հոյա-  
 կապիցն համհարզից ,  
 Եւ առ ընտրեաց իւր ըզԳլաւկոս և զԱ-  
 տերոպ մարտակից .  
 Զամուլըն զայն գիտէր ճարտար իբր այր-  
 ընտիր 'ի քաջաց ,  
 Քաջք յետ նորա , քանզի բնաւից էր ինքն  
 ուժով գերազանց :  
 Արգեալք այնպէս ամրածածուկք քե-  
 մըխտասպատ ասպարաւ ,  
 Գունդք հընդէքին հրոսեալք 'ի Յոյնս դը-  
 ուոյթ տային գիմագրաւ :  
 Թէ 'նդդէմ նոցա կըբրեսցին Յոյնք ,  
 զայն և բընաւ չերազեն .  
 Այլ թէ նաւաց իւրեանց 'ի գոգս նոքա  
 շտասպաւ խուժեսցեն :

Բայց անդ Տրոյեանք նա և համհարզբ  
տարաշխարհիկք համաբուն

Կամահատարք հնազանդեցան Պուղիւ-  
դամեան խորհրդոյն .

Մին Ասիոս յողըն կացեալ Թողուլ ըզ-  
ձինն ընդ վարչին ,

Կառարշաւեալ դիմէր խիզախն 'ի կոյս  
նաւաց առանձին .

Անմիտ . չունէր անդուստ կրկին այն ճո-  
խասպանծ կառավար

Սէգ նըժուգօքըն ողջանդամ գառնալ  
յԵղիոն հողմահար .

'Նախավախձան պաշարեցաւ նա յօրա-  
հաս դըժուարին ,

Քաջ Դեւկաղեանն Իդոմենեայ հարեալ  
'ի տէգ նիզակին .

Ձի ժըտեցաւ գոլ միջամուխ նաւացն  
յահեակ 'ի մարդէն ,

Ընդ որ հեւէնք կառօք ձիովք խուճա-  
պէին 'ի դաշտէն .

Սրավար առ դուրսն ուղղեաց ըզկառս  
իբրև արի նահատակ ,

Ոչ աղիս դըրանց եգիտ անդէն և ոչ եր-  
կայն պարզունակ .

Ձայն արք վառեալք բաց պահէին գոլ  
փախըստեայց ապաւէն ,

Թէ ոք յիւրեանց 'ի նաւատորմ ըտա-  
պէսցի 'ի մարտէն :

- Անդր Ասիոս շահատակեալ ձիավարեաց  
չեշտակի,  
Քաջահրնչեալ խուժանն ըզհետ խաղայր  
իւրեանց իշխանի .  
Բա՛, ասէին, հելէնք ընդդէմ կըքրել  
այլ չեն բաւական ,  
Նա խուճապեալք անդ այր զարամբ 'ի  
նաւս անկցին ասպատան :  
Մնմիտք . գըտին գրանդեաց հանդէպ  
ամուս արանց քաջազանց ,  
Խօք կորովք ճետք զօրութեան յահեղ  
մարտիկ Ղապիթեանց .  
Մին քաջ զաւակ Պիրիթոսին էր Պող  
պիտէս վիթխարի ,  
Մին Լէոնտէս համանմանեալ մարդա  
խանձին Արեօի :  
Այս քաջք կրկին կային հանդէպ գրան  
դեաց բարձանց մահարձան ,  
Իբրու կաղնիք հաստահարուտք բարձու  
լերին յարտեան ,  
Որք ընդ գետնով խոր կանդաղեալք  
յաղթ և 'ի ձիգ արմատոց ,  
Յաւէժ ամօք կանդնին ընդդէմ ջաղբ ան  
ձրեաց և հողմոց ,  
Նրման ամուլքս հարուստ բաղկօք յանձն  
ասպատան ախոյեան ,  
Քան թիկնադարձք , մնային մեծին Ասի  
ոսի յարձակման :

**Ընդուստ Տրոյեանք 'ի վեր բարձեալ**  
 զարջառենին չոր ասպար,  
 Կոփիւն հարեալ հրոսակ տային շէշտ  
 քաջամուրն 'ի պատուար .  
**Շուրջ զԱսիոս պատեն զարքայն և զՈ-**  
 բէստէս և զՅամէն,  
 Եւ զԱկամաս զԱսիականն և ըղծոոն,  
 զԵնոմէն :  
**Իսկ Ղապիթեայք յիւրեանց մարզէն 'ի**  
 ներքս Յունաց կորովեաց  
 Խրախոյս կարդան կալ և կըռուէլ տալ  
 զօրավիգըն նաւաց :  
**Այլ ըզգըռոյթ տեսեալ զՏրոյեանց առ**  
 'ի պատուար տալ հրոսակ ,  
 Եւ զի Յունաց շրշուկ անբաւ և մեծ գու-  
 ժեաց աղաղակ ,  
 Հապա 'ի դուրս շանթեն Ղապիթք հան-  
 դէպ դրանդեաց 'ի պայքար  
 Ահեղազօրք , վայրագասուն յաղթ վա-  
 րազուց հաւասար .  
**Որք զորսորդաց և զբարակաց տրոփիւն**  
 լըւեալ 'ի լերին ,  
 Թափ խոյանան շուրջանակի վանեն մո-  
 լէքն ըզմայրին ,  
**Տունկ տապալեն արմատաքի կըրձիւն**  
 ժանեաց արձակեն ,  
**Մինչև տապաստ ոք ըզնոսա հարցէ 'ի**  
 նետ կամ յաշտէն ,

Նոյնօրինակ հրաշէկ պրղինձ 'ի լանջապան  
Ղապիթեայց

Թափով հարեալ, շաջիւն հնչէր 'ի յար-  
ձակել սըլաքաց :

Սարտ ամեհիքն յոյժ գոռային յիւ-  
րեանց կորովն անվէհեր ,

Նոյն ապաստանք 'ի տեղ քարանց , որ 'ի  
վերուստ թօթափէր .

Վիրդ բռնաքար հոսեն հելլենք 'ի հաս-  
տամուրն 'ի բրդանց ,

Ի զօրավիգ նաւատորմին և խորանացն և  
անձանց :

Թափին քարինքն համանմանեալ ձիւնա-  
բերին բըքալիր ,

Զոր այս մըրրիկ ամպրոպայոյզ հոծեալ  
տեղայ 'ի յերկիր :

Անդ և դարձեալ էր տեսանել անհուն  
աշտէ և փըքին ,

Որ 'ի Յունաց որ 'ի Տրոյեանց տեղայր  
ձեռաց խուժանին :

Կռռ գլխանոցք յերկանաքար վիմաց  
հարեալք 'ի բարձանց ,

Նոյն և ասպարք մեծ կըմբաւորք գանգիւն  
հնչեն արհաւրաց :

Բըբարձն յայնժամ մեծն Ասիոս ծեծէր  
մըղձկեալ 'ի յոգին ,

Եւ վերակնեալ յոգւոց եհան բարբա-  
ռեցաւ զայրագին .

« Եւ քեզ 'ի բուն , հայր Արամազդ ,  
խաբանք եղեն սիրելի .

Կարծէի ոչ , թէ Յոյնք հարցին մեր կորու-  
վոյն 'ի դիմի .

Բայց արդ գոքա պիսակ բոռից և կամ  
մեղուաց իբրև սար ,

Որ ժիրաժիրք տուն բնակուլթեան գոր-  
ծեն յուղւոջ առապար ,

Երբէք զիւրեանց զանձաւախորս բարձի-  
թողի ոչ առնեն ,

Նա որսորդաց ցանգ պահ ունին և վասն  
որդւոց մարտ մըղեն ,

Հանգոյն սոքա ոչ ընկրկին , թէպէտ եր-  
կուք են միայն ,

Աստէն կառեալք կամ մահ ժըտին և  
կամ խնդրեն կապարան » :

Զայս Ասիոս . այլ ոչ այնպէս զԱմարո-  
պայինն ամոքեաց ,

Որ Հեկտորայ խնդրէր միայն ձօնել յայն-  
ժամ շուք փառաց :

Բայց անդ և կէսք 'ի կէս 'ի դրունս մարտ  
կըռուէին գոռուլթեան .

Այլ ես մարթուն չեմ իբր աստուած ,  
ոճով պատմել զամենայն :

Քանզի զպատուարն ողջոյն պատեաց  
հուր իմն ահեղ աստուածեան ,

Յոյնք աղեկէզք տագնապէին նաւատոր-  
մին կալ պաշտպան :

Դեք երկնաւորք Յունաց համհարզքն  
հարան յողիս թախծագին .

Հապա արեքն այն Ղապիթեայք փայլակ-  
նացան 'ի վայրին .

Արձանացաւ Պողիւպիտէս Պիրիթո-  
սեանն աննըման ,

Ընդ սաղաւարտ սըղընձաքունն 'ի Դա-  
մասոս հար զաշտեան .

Կուռ սըղընձի գլխանոցին չըհանդուր-  
ժեալ 'ի հարուած ,

Սայրըն թափանց զոսկրըն ջախեալ զու-  
ղեղն ողջոյն աղարտեաց :

Այսպէս տապաստ արկ զախոյեանն , որ  
կայր կըռուէր ահագին .

Ապա զՈրմէն և ըզՊիւղոն արկ դիթաւալ  
'ի կըռուին :

Նոյն Լէոնտէս Անտիմաքեան ճետն Ա-  
րեսին քաջափառ

Կըռուեաց զաշտէն յԻսպպոմաքոս , հար դի-  
պեցոյց 'ի կամար .

Ձըգեաց 'ի նոյն վաղակաւոր սլացաւ  
ընդ մէջ խուժանի ,

Հար զԱնտիփոս նախ առաջին և նա յոր-  
սայս տապալի .

Հար ըզՄեհոն և զՅամենոս և զՈրես-  
տէս քաջարին .

Ըզմին միւսոյն անդ 'ի վերայ արկ թաւալ  
գլոր 'ի գետին :

**Ս**ինչ այս մինչ այն այս կորովիք հրաշեկ  
 զինուոցն յաւար կան ,  
 Անդուստ և գունդ Պուղիւգամայ և Հեկ-  
 տորայ տան հորդան .  
 Գունդ պատանեաց ըստուարագունդ և  
 նահատակք կորովիք ,  
 Եւ անձկայրեացք սլատուար քանդեւ ,  
 նաւատորմին գոլ հրրձիգ :  
 Խնդամըտեալք եկին վազեւ ըզխըրամով  
 լայնութեան ,  
 Այլ մըտայոյզք յանկարծեւին 'ի տարա-  
 կոյս սանձեցան :  
 Տաւ յերևան գայր 'ի հմայից բարձրա-  
 թըռիչ մեծ արծուի ,  
 Կաց 'ի վերոյ և ըզխուժանն սանձէր 'ի  
 կողմն ասեկի .  
 Բարձեալ մագլօք բերէր վիշապ արիւ-  
 նաներկ ասագին  
 Խայտաճամուկ , և կենդանի կայտուայր  
 շանթէր տակաւին .  
 Չէր պարտասեալ , գուլ չեա մարտին ,  
 յետրս դարձաւ շեշտակի ,  
 Ընդ լանջն ընդ փողն եհար զարծուին  
 որ զինքն ունէր մագլօցի .  
 Հասպճեպ թըռչունն ելիք ըզնա թող  
 անկանել 'ի գետին ,  
 Չըհանդուրժեաց , զ' 'ի վիշապէն ցաւք  
 կարեւիւրք պատեցին .

- Նա 'ի բարձանց զահեղ կայտիուն արկ  
բանակին 'ի միջոց .
- Ինքըն ճախրեաց , կրուինչ բարձեալ սլա-  
ցաւ 'ի Թեա 'ի հողմոց .
- Ըզհրէշ ահեղ զԱրամազդայ խայտա-  
խարին ըզվիշապ
- Տեսին Տրոյեանք 'ի մէջ անկեալ , շրտեան  
'ի մեծ 'ի տագնապ ,
- Ըրձանացաւ Պուղիւգամաս ձայն ետ  
քաջին Հեկտորի ,
- « Դու ինձ , Հեկտոր , միշտ բան պարսես  
կշտամբանաց յատենի .
- Թէպէտ և քեզ խորհուրդք ուշիմք յի-  
նէն երբէք ազդեսցին ,
- Զի չէ արժան քաղաքացւոյն մատըն լինել  
ճմարտին .
- Ոչ յատենին հրապարակի ոչ 'ի մարտի  
ճակատուն ,
- Զ' իշխանուԹիւնդ գամ քան ըզգամ քեզ  
յորդեսցէ աճեցուն :
- Արդ քեզ , ուլ քաջ , զայն բարբառիմ ,  
զոր ողջախոհ էս կարծեմ ,
- Մի կրուուեսցուք մէք ընդ Յունացնաւա-  
տորմին 'ի մարզէն :
- Զի դէպքն անշուշտ ճշգրտեսցին յան-  
ցանել մեր ընդ խրրամ ,
- Զի հաւահմայքն յանցս ահեկեայց եկին  
Տրոյեանց յերևան .

Յահեկակողմն ըզգօր սանձեաց հոլաթե-  
ւեան մեծ արծուի ,

Բարձեալ մագլօք վիշապ ասեղ արիւնա-  
ներկ կենդանի .

Բայց լիք ըզնա մինչ չև 'ի բոյնն հասեալ  
'ի յիւր նըպատակ ,

Ոչ ժամանեաց տանել և տալ զայն իւր  
ձագուցն 'ի ճարակ :

Այսպէս և մէք հարեալ ըզՅոյնս , վա-  
նեալ ըզգուրս և սլատուար ,

Բայց և այնպէս անփառունակք դարձ-  
ցուք ընդ նոյն ճանապարհ .

Մէք շատ որեար 'ի Տրոյացւոց թող-  
ցուք աստէն դիտասլաստ ,

Երբ Յոյնք մոլեալք 'ի պահ նաւաց մարտ  
մըղեսցեն մեծասաստ :

Կիւս ամենայն , իղձ ամենայն , պատաս-  
խանի քեզ զայս տայ ,

Եւ որ հոգւովն է հրաշագէտ , և ում  
աշխարհ հաւատայ " :

Տիգօք աչաց ասեղն Հեկոոր անդէն կըր-  
կնեաց պտտասխան .

“ Այդ ըղձութիւնքդ , ո՛վ Պուղիւղամ ,  
բընաւ ինձ ոչ քաղցրացան :

Քեզ այլ ինչ լաւ մարթ էր խորհել .  
Իսկ թէ սընդիս տակաւին ,

Եւ ճշգրտիւ զայդ բարբառիս , բա՛ դիքն  
'ի քէն զուշ բարձին :

Հրաման տաս ինձ, զամսրոպայնոյն բան  
մոռանալ Դիոսի,

Բան զոր անշուշտ ինձ խոստացաւ և զոր  
կնքեաց ակնարկի .

Հրամես դարձեալ հոլաթևեան հաւուց  
առնել ինձ երես,

Որոց թըռիչք շարժեն զիս ոչ, զորս և  
յընչաց քերեմ ես .

Թո՞ղ յայգըն կոյս թռիցեն նոքա կամ  
յարևելս 'ի յաջմէ,

Թո՞ղ ընդ բալուտն աղջամըջին ընդ ա-  
րևմուտս 'ի ձախմէ .

Մէք հնազանդեալք Արամազդայ եմք  
քաջատես խորհրդոյն,

Որ թագ կապէ կանացածնաց և անմա-  
հից երամոյն :

Մի միայն քաջ հաւահըմայք վասն հայ-  
րենեաց մարտ դնել .

Այլ զի՞ է քեզ 'ի յարհաւրաց սլատերազ-  
մին զարհուրել .

Զի թէ և ողջ մէք առ նաւուք տապաստ  
անկցուք 'ի մարտիս,

Դու վասըն քո օրահասիդ բն զանդիտել  
ոչ պարտիս .

Զես դիմագրաւ երբէք 'ի սիրաւ և չես  
դարձեալ այր մարտիկ .

Որով կարծեմ, դու 'ի կըռուոյդ հրա-  
ժեշտ տացես միայնիկ :

Թէ զայդ առնես, կամ թէ այլոց հրա-  
պոյր տացես վատութեան,

Արագ արագ տապաստ անկցիս 'ի տէգ  
խմոյն գեղարդան » :

Լսաց 'ի նոյն ահեղազօրն և փայլակեալ  
անց յառաջ,

Փաղանդքն ըզհետ գանգէն գոռիւնս իբ-  
րև ճայթմունս ամարոպաց :

Մըրսիկ հողմոյ յիդեան լերանց զարթոյց  
Դիոս շանթահար,

Եւ շէշտակի թափէր 'ի նաւս զամբ ըզ-  
փոշոյն հողմավար :

Սիրտ ըզՅունաց եբեկ 'ի սպառ, տայր  
հեկտորեանց շուք փառաց,

Գամ քան ըզգամ կորովացան 'ի յայն նը-  
շան բարեզգեաց :

Ճիգրն թափեն խոռել զպատուար կոր-  
զեն սլրսակս ըզբըրգանց .

Խախտին մարակոցք . ըզմոյթս առնեն նը-  
գախարխար 'ի հիմանց,

Չորս և կանուխ 'ի դուրս ցըցուեալ  
հեւլենք յերկիր հաստեցին,

Ձի յամբութիւն աշտարակաց մեծ հաս-  
տարանք լինիցին :

Խախտեալ այնպէս ակն ունէին քաջ  
խրամատել ըզպատուար .

Բայց և յայնժամ Ա. քայեցիք ջնկըրկե-  
ցան վատաբար :

Պահ մարտկոցաց քեմըխտապատ զարջա-  
աւնիս շուրջ ածին ,

Եւ նետաձիգ խոցոտէին զորս 'ի ներքոյ  
պատուարին :

**Խ**որխոյս անդուստ արձանացեալք կար-  
դան Այասք 'ի բրդանց ,

Յայս կոյս յայն կոյս պարայածեալք կո-  
րով շընչեն հելենաց .

Էր զոր աղու շարժեն բանիւք , էր զոր  
սաստիկ կշամբեն ,

Զոր մի անգամ դիտեն վատեալ թիկնա-  
դարձոյց 'ի մարտէն .

«Աղէ , համհարզք որ առաջինք և որ մի-  
ջինք , որք վերջին ,

Զի և մարտիկք ոչ ամենայն են հաւա-  
սարք 'ի կրուսին .

Դէս ժամանակ բնաւից է արդ նահա-  
տակիլ ձեռն 'ի գործ .

Արիք , ո՛վ քաջք , զի էք բանիդ և դուք  
ինքնին քաջափորձ .

Մի ոք ահեալ առ 'ի բոհմանց 'ի նաւս  
ընդ կրուկ մի դարձցի .

Յանգ դիմագրաւք , ցանգ և խրախոյս  
այր կարգասցէ ընկերի .

Այսպէս Դիոս հովանացեալ կայծակ-  
նահարն Ողիւմպեան ,

Յանգորր ելցուք մէք ըզնոսա հալածելով  
մինչ յոստան » :

Օրինակ զայս նահատակեալ այս ախոյ-  
 եանք քաջք կրկին,  
 Չայն կարդացին յԱքայեցիս բոց վառե-  
 ցին ըզմարտին :  
 Որպէս տարափ ձիւնաբերին 'ի ձմերայ-  
 նոյն յեղանակ,  
 Երբ եւ Դիոս ձիւնեւ մարդկան, զամս-  
 րոսս առեալ օժընդակ,  
 Յորժամ նա քուն ածեալ հողմոց և  
 կուռ տեղայ անդադար,  
 Եւ զարտեանս ըզբարձրայօն լերանց ծած-  
 կէ և կատար,  
 Քօղածածուկ առնէ ըզմարդ լուտասա-  
 բեր ըզգաշտաց,  
 Ողջոյն և զանդ յոյր սերմանեօքն յաջաց  
 առնու մըշակաց,  
 Տեղայ 'ի ծովն և յալևոր, 'ի դոգս նորա  
 և յափունք,  
 Թէպէտ և անդ 'ի ծովի ալեացն անհետ  
 լիցին ձրմերունք,  
 Բայց այլն ամէն ձիւնախաղաղ ծածկի  
 սպիտակ 'ի պատկեր,  
 Երբ ճոխաբար յԱրամազդայ օգբըն յու-  
 զին բըբաբեր,  
 Նոյնօրինակ անտառախիտ վիրգք 'ի կող-  
 մանց հոսէին,  
 Աստի զբանակ ծածկեն Տրոյեանց, ան-  
 տի 'ի Յոյնս Թօթափին :

Գոյժ ահագին մըրըրկելով գուժեաց  
ողջոյն ընդ պատուար ,

Այլ ոչ ըզդուրս ոչ զգրունափակս Հեկ-  
տոր ջախել զօրանայր ,

Մինչև զորդին ըզՍարպեդոն Դիոս 'ի  
Յոյնս ոչ դրդեաց ,

Եւ իբր առիւծ զարթոյց ընդգէմ գա-  
լարեղջիւր պաճարաց :

Ընդէն զասպարն առ գեղեցիկ բոլո-  
րածիր պահ անձին ,

Զոր պըղընձի թիթեղնապատ գործեաց  
ճարտար այր դարբին ,

Եդ 'ի ներքոյ բազմակուղի քեմուխա ա-  
մուր և կարեաց ,

Եւ ձող ոսկի ողջ միահետ շըջանակաւ  
բոլորեաց :

Առեալ զանջօք զայն հըսկային , կրկին  
ճօճէր տիգաբուն ,

Եւ մեծաքայլ խաղայր յառաջ իբրև ա-  
ռիւծ լեռնասուն .

Որ սովատանջ անկերակուր մնացեալ  
բազում ժամանակ ,

Անգառագիղ գիմէ 'ի խաշն 'ի ներքս  
յամուրն 'ի պառակ .

Թէպէտ անդէն շուրջ բակ առեալ  
զանդէորդաց գիտէ գունդ ,

Որ պահ գամփուամբք ունին խաշին և  
տէգ բառնան և մըկունդ ,

Ոչ և այնպէս նա հանդարտէ վանիլ ար-  
տաքս 'ի դաւթէ ,

Մինչ չև 'ի ներքս անդ խոյացեալ որս 'ի  
խաշնէն ըմբռնէ ,

Կամ ըմբռնէ և կամ ինքնին անդ են-  
թադրի նըշաւակ ,

Խոց վերաւոր հարեալ կանուխ կորովա-  
ձիգն 'ի սըւաք ,

Նըման դիւցազն այն Սարպեգոն 'ի հուր  
վառեալ մեծաբոց

Սըացաւ ընդդէմ մեծ սատուարին , ճըդ-  
նէր քանդել ըզմարտիոց :

Պարձաւ արագ և ընդ Գլաւկոս Իս-  
պողոքեան ձայն կարդաց ,

« Աղէ Գլաւկէ , հիմ 'ի Լիւկիա մեզ շուք  
հարուն մեծապանծ .

Շուք ըզբարձից , ըզգահամանց , շուք և  
դեղուն բաժակի ,

Եւ հրաշացեալք իբրև սատուածք մէք  
ձօն ունիմք տէրունի .

Հիմ և Քսանթեան մէք առ ափամբ գե-  
տին ունիմք 'ի ստացուած ,

Գետին յուռթի , մեծ , տընկախիտ , զանդ  
քաջաբեր արմըտեաց .

Արժան ուրեմն է մեզ , Լիւկեանց հան-  
դիսանալ նահատակ ,

Եւ խառնամուխք 'ի բոց մարտին նետից  
լինել նըպատակ .

Չի և ըզմէնջ բարբառեացին մեր Լիւկա,  
 ցեք քաջազէն  
 Թէ մեր արքայքն ոչինչ անկաճք Լիւկէա  
 ցւոց թագ կապեն .  
 Ուտեն ըզյոյրս, քամեն զանոյշ մեղրա-  
 ճաշակ ըզգինին,  
 Բայց և հուժկուք 'ի մէջ Լիւկեանց են  
 առաջինք 'ի մարտին :  
 Եթէ արդեօք, ո՛ր բարեկամ, մէք յայս  
 մարտէն խուսելով  
 Էր մեզ յաւէժ անմահ մընալ անձերա-  
 կան այս մարմնով,  
 Բա՛ իմ երբէք չէր զիմագրաւ նահա-  
 տակեալ յայս հանդէս,  
 Չէր և երբէք յայս փառաւոր դրդեալ  
 'ի մարտ և ըզքեզ .  
 Բայց զի անշուշտ առ դուրս ահա կան  
 մեր մահուն բիւրք պատճառ,  
 Յորոց հրաժեշտ տալ մահացուաց և  
 խուսափել չեք հընար,  
 Արի՛, ո՛վ քաջ, կամ մէք այսօր ումէք  
 ըզփառս առթեսցուք,  
 Եւ կամ թէ մեզ ոք 'ի քաջաց փառք ձօ-  
 նեսցէ մեծաշուք 132 » :  
 Անսաց Գլաւկոս խրախոյս առեալ ար-  
 ձանացաւ ախոյեան,  
 Հասպա Լիւկեանց ամոլք քաջաց մեծ  
 խուժանին տան հորդան :

Ետես անդուստ Մենեսթէոս, պակեաւ  
 Պիտեայ քաջորդին .  
 Հրոսակ 'ի բուրդ տային նորա զօրհասն  
 ածել ահագին .  
 Դէտակն 'ի վեր նա ամբառնայր շուրջ  
 'ի բրդուռնս Աքայեանց,  
 Սատար խնդրէր զոք զօրավար վաճել  
 զաղէտն ընկերաց .  
 Յանկարծ դիտեաց ըզգոռ զԱյասս անդ  
 աննահանջս 'ի մարտէն,  
 Եւ ըզՏեւկրոս մօտ առ նոսա այն ինչ  
 ելեալ 'ի վրանէն :  
 Չայն բարձրագոչ կարդայր Մենեսթ  
 բայց չէր անդուստ լըսելի,  
 Զի մեծ շըշուկ հատաւ յայնժամ զերկ  
 նիւք քերէր ձայն մարտի .  
 Կոփիւն յահեղ բախին վահանք և գըլ  
 խանոցք գիսապանծ,  
 Հրոսակ յորդէր միահամուռ, գուրք գար  
 գափին 'ի դրանդեաց .  
 Լիւկեան խուժանն ըզգուրս փչրեալ և  
 միջամուխ նըկըրտէր .  
 Մենեսթ 'ի շտապ առ ըզԹոոս ճեպէր  
 յԱյասս 'ի բանբեր .  
 «Մըբի գու, քաջ, հրաւէր կարդա մեր  
 Այասիցն, ո՛վ Թոէ,  
 Երկուքն 'ի բուն աստ ճեպեսցին, այս  
 'ի ժամուս յոյժ լաւ է .

Տագնապ վերջին գուժեաց ահա . խու-  
ժեն Ղիւկեանց աստ իշխանք ,

Իշխանք որ ցանդ ցուցան 'ի մարտ խի-  
զախք և գոռք աննրմանք :

Իսկ թէ տագնապ կայ և քաջացն բազ-  
մաշըշուկ 'ի խազմին ,

Գէթ միայնակ գայցէ Այաս Տեղամո-  
նեան կորովին .

Գիպողաձիգն անցցէ յառաջ աղեղնա-  
ւորն և Տեւկրոս » .

Լըւաւ թոռս աճապարեաց քաջագօտին  
այն քարոզ :

Անց ընդ պատուարն , արձանացաւ մօտ  
Այասից ձայն կարգաց .

« Այսպք ո՛վ քաջք , վեհ զօրավարք պա-  
տենազէն Հեղենաց .

Մենեսթ մազդեղն 'ի տագնապի հրա-  
ւեր ձեզ տայ վայրիկ մի ,

Զերկուսդ 'ի բուն յօգըն կարգայ . ան-  
շուշտ այս լաւ եղիցի .

Տագնապ վերջին գուժեաց ահա . խու-  
ժեն Ղիւկեանց անդ իշխանք ,

Իշխանք որ ցանդ խիզախք 'ի մարտ ցու-  
ցան և քաջք աննրմանք :

Այ' եթէ շտապ կայցէ և ձեզ բազմա-  
տագնապ 'ի խազմին ,

Գէթ միայնակ գայցէ Այաս Տեղամո-  
նեան կորովին ,

Ի նոյն և քաջ աղեղնաձիգն անցցէ Տեւ-  
կրոս միահետ » .

Լըւաւ զայն մեծ Տեղամոհեանն , աճա-  
սլարեաց ետ ընդ ետ :

Բարբառեցաւ արագաթիւ ձայն ետ որ-  
դւոյն Ոխլեայն .

« Այսս , և քաջ Լիւկոմեակ , դուք աստ  
կացէք միաբան .

Չայն խրախուսի տո՛ւք հէլլենաց , մարտ  
քաջաբար յարդարել ,

Խաղամ ես անդր և դիմագրաւ 'ի մարտ  
խառնիմ անարգել .

Արագ այսրէն դառնամ կրկին շահա-  
տակեալ յայն հանդէս » .

Ասաց 'ի նոյն քաջ նահատակն ուղւոյ լի-  
նէր փութապէս :

Յարեաւ անդէն ընդ դիւցազին Տեւկրոս  
եղբայրն համահայր ,

Ըզայնալիճսն Տեւկրոսին բարձ Պան-  
տիոն և գընայր :

Իբրև 'ի բուրգն եկին նոքա Մենեսթո-  
սին քաջափառ ,

Աճապարեալ քաջ համահարգք մըտին 'ի  
ներքս 'ի սլատուար :

Անդուստ և ճեպ Լիւկէացւոց տան զօ-  
րավարք նահատակք ,

Մութ մըրրկին խուժեալ նըման ելին բըր-  
գանցն 'ի սըսակ :

Քաջք ընդ քաջաց սլատահեցին , շրշուկ  
հարաւ ասագին ,

Ձայր մի Այաս Տեղամոնեանն արկ դի-  
տապաստ առաջին .

Քաջ համահարզ Սարպեդոնին էր սա  
սրբոեայն Եպիկղէս ,

Վէմ յարաստոյ վէմ յանարդիլ Եհար ըզ-  
նա դառնապէս .

Վէմն այն խրթնի 'ի ներքսակողմն 'ի սլա-  
տուարին անկեալ կայր ,

Առ սլրսակաւըն մարտկոցին 'ի բարձրա-  
բերձն 'ի կատար .

Կրկին ձեռօք զայն հեշտաբար մարդ ոչ  
բառնայր մեր դարուն ,

Թէպէտ տիօք առուգացեալ և անդամօք  
քաջաբուն .

Իսկ մեծն Այաս Թեթևակի զայն վեր-  
առեալ արձակեաց ,

Ըզքառավերջն հար սաղաւարտ զոսկերս  
գլխոյն ջախջախեաց :

Անդ Եպիկղէս հանդունատիպ ծովա-  
սուզակ լողորդի

Անկաւ 'ի բարձր աշտարակէն , անդէն  
փչեաց և զողի :

Արշուեաց Տեւկրոս զ'ի վեր վազեալն հար  
ըզԳլաւկոս 'ի բրբգէն ,

Ի մերկ բազկին փըքնահարեալ գաղա-  
րեցոյց 'ի մարտէն .

Գլաւկոս ընդ կրուկ 'ի պարըսպէ 'ի վայր  
վազեաց դաղտաբար ,

Զի խոց ըզնա տեսեալ Հելլենք մի ձա-  
ղեսցեն չարաչար :

Գընայր Գլաւկոս , տես Սարպեդոն հա-  
րաւ սաստիկ 'ի յողին ,

Ամբոխեցաւ , ոչ և այնպէս դուլ և դա-  
դար ետ մարտին :

Ի Թեստորեան Աղլեմոնին հար տէգ 'ի  
լանջն և քարշեաց .

Նա ընդ տիգին անկաւ յորսայս , պըղինձ  
զինուռն ձայն հնչեաց :

Բայց Սարպեդոն 'ի պսակ բըրգան նը-  
պատակեալ կորովին ,

Բըռնահարեաց և ողջ կորզեալ ձըգեաց  
ըզհետ քաջ բազկին :

Պատուարն յայնժամ խրամատեցաւ շա-  
տից եբաց լայն ուղի ,

Վարազացան Տեղամոնեանք հարան նը-  
մա 'ի դիմի :

Նետեաց Տեւկրոս առ լանջն 'ի փոկն  
ամրածածուկ ասպարի ,

Զօրհանն յորդւոյն վանեաց Դիոս զն  
առ նաւուք մի անկցի .

Ճեպ և Այաս ետ և յասպարն 'ի բուն  
վարսեաց ըզնիզակ ,

Եւ ահագին սասանեցոյց շահատակեալն  
ըզվերագ .

- Վայր մի տեղի ետ Սարսուհուն այլ ոչ  
 'ի սպառ վերջոտներ ,  
 Քանզի ըզուք տանել մարտին յուսայր  
 յոգին անվեհեր :
- Դարձաւ դիւցազն և խրախուսի քաջաց  
 Լիւկեանց ձայն կարգայր ,  
 « Բա՛րէ Լիւկեանք , հրոսեալ թափոյդ զի՛  
 դուլ ետուք վատաբար :
- Դըժընդակ է ինձ միայնոյս , թէպէտ ո՛  
 դիքս են հրավառ ,  
 Պատուար քանդել ըզքաջամուրն հոր-  
 դել 'ի նաւս ճանապարհ :
- Աղէ , ո՛վ քաջք , ինձ ձեռնն տուք նիղա-  
 կակիցք 'ի կըռուի .
- Ոյժ միացեալ շատ ներգործէ և գործն  
 հեշտին վըճարի » :
- Լըւան Լիւկեանք և ակն ածեալ կըշ-  
 տամբանաց արքային ,  
 Հորդան ետուն և խուռներամ շուրջ  
 ըզնովաւ բակ առին :
- Բայց և 'ի ներքս 'ի պատուարին ոյժ տան  
 հելէնք փաղանգաց ,  
 Եւ բորբոքէր դըժոխըմբեր մրցանքն յեր-  
 կուց 'ի կողմանց :
- Ոչ Լիւկացիք ընդ խըրամատն հրոսել 'ի  
 նաւս ժըտէին ,  
 Ոչ Յոյնք վանել բաւեն նետիւք ըզտի-  
 րացեալս պատուարին :

Այլ որպէս տեարք երկուք գեանոյ  
 սահմանակիցք լեալ միմեանց,  
 Ըզձողաչափն 'ի ձեռս առեալ պայքար  
 յուզեն սահմանաց,  
 Յափ մի հողոյն կան և գըժտին զի բաշխն  
 իցէ հաւասար,  
 'Նման յորմոյն անդ 'ի պըսական էր կագ  
 նոցուն և պայքար:  
 Ի լանջ մարտկաց կոփեալ ասպարք ար-  
 ջառամորթք ջաղխեցան,  
 Եւ վահանակքն փոքրոգիք բախիւն ա-  
 ռեալք փըշրեցան:  
 Հատք 'ի մարմին գոն վիրաւորք յերկաթ  
 հատու գըժընդակ,  
 Թիկնադարձոյցք մերկք նըշաւակք ա-  
 ռեալք ըզվէրն 'ի քամակ.  
 Հատք և թափանց շէշտ ընդ ասպար տա-  
 պաստ անկան անյարիր,  
 Եւ ողջ բըրգունք և մահարձանք անդ  
 գունեցան 'ի կարմիր.  
 Արեանց Տրոյեանց և հելլենաց գնային  
 առուքն ասպաժոյժ,  
 Եւ ոչ այնպէս քաջաց Յունաց ընկըրկե-  
 լոցն հնչեաց գոյժ:  
 Ան 'ի կըշուի. որպէս յելիկ կին ժըրա-  
 գլուխ քաջամոյն  
 Զասուին 'ի ձեռս և ըզկըշիւն առեալ  
 ըզմէտ և կըշուոյն,

Ի վեր քարչէ և ճըզգըրտիւ զուգէ ըզ-  
[Թաթ նըժարաց

Վարձ ըզքրտանցն օրասլահիկ տալ կե-  
րակուր զաւակաց ,

Սոյնպէս յայնժամ զուգակըշիւ մարտըն  
մընայր ահաւոր ,

Մինչև Դիոս յերևանի եհան փառօք ըզ-  
հեկտոր :

Սա ըզպատուարն Աքայեցոց դիմեալ  
գրաւեաց առաջին ,

Անդուստ Տրոյեանց քաջահընչող ձայնիւ  
գոչէր ահագին :

« Հրոսեալք , ո՛վ քաջք , դուք զայդ պա-  
տուար տապալեցէք ընդ գետին ,

Հապա և հուր արկէք նաւաց զաստուա-  
ծասաստ խարուկին » :

Լըւան Տրոյեանք և խրախուսեալք  
խուռն 'ի պատուար տան հրոսակ ,

Ի վեր վազեն ընդ մահարձանս 'ի ձեռն  
առեալ սուր նիզակ :

Սլացաւ հեկտոր , կալաւ վէմ մի անկեալ  
գրանդեաց առաջի

Առ և եբարձ , վէմն էր սրածայր , վէմ  
ապառաժ , անարի .

Չայն ոչ հեշտին և արք երկու յարանց  
որ մեզ կենակից ,

Թէպէտ արք քաջք , առնուն յերկրէ  
բառնան վերայ 'ի սայլց .

Իսկ զայն Հեկտոր քաջ միայնակ եբարձ  
հեշտեալ և ճօճեաց ,

Զի և նրմա վեհ Չրրուանեան զայն փոք-  
րոգի առադրեաց :

Որպէս հովիւ գեղմն ըզխոյին բարձեալ  
ձեռամբն ահեկի ,

Թեթևակի տանի զկըշիուն որ գոգ նրմա  
ոչ ծանրի ,

Նոյնպէս Հեկտոր բարձեալ ըզվէմն ընդ-  
դէմ խաղայր տախտակաց ,

Տախտակք սերտեալք ամրապահեստք են  
երկբացիկ յալթ դրանդեաց .

Իսկ 'ի ներքուստ լրծակք ամուք կային  
կրկին պարզունակ ,

Եւ հաստամուր պնդեալ էին 'ի մի միայն  
փակաղակ :

Մատեալ Հեկտոր արձանացաւ . ըզկայ  
էառ վայրիկ մի ,

Անդ քաջապինդ ոտնակառեալ հա-  
րուած գործել կըշուակի ,

Կըշուեալ այնպէս թափ ուժգնութեան  
'ի միջակին հար բախեաց ,

Դըղըրդեցոյց և ըզկրկին ծըննիսն ոստոյց  
ջախջախեաց :

Անկաւ 'ի ներքս վէմն արաստոյ և էջ  
նստաւ անարին ,

Դրանդեաց դրանց շուրջանակի գար-  
գափ հնչեաց ահագին .

Ոչ սարգունակք ոչ դրունափակք ընդ-  
դէմ կացին բռնութեան ,

Շանթեաց խարակն և կուռ տախտակք  
բեկորս 'ի բիւր շերտեցան :

Ի ներքս Հեկտոր փոթորկեցաւ մութ  
մըրրակին համանման ,

Հուր բոց ցայտէր ողջ զերանաւն ամրա-  
ծածուկ պրզընձեայն .

Տէգ ըզկրկին ճօճեալ 'ի բուռն ասէղա-  
հրաշ սոսկալի ,

Անդ ոչ ոք այլ բաց յաստուծոյ ժու-  
ժայր քաջին առաջի ,

Փայլակնաձև յորժամ վազեաց ընդ դուրս  
'ի ներքս անվէհեր ,

Եւ բոցատիպ յաչաց իւրոց շանթ կայծա-  
կանց թօթափէր :

Դարձաւ առ զօրն ասէղագոչ հրամա-  
նական ձայն կարդաց ,

« Հասկա 'ի վեր ընդ մահարձանս հրոսակ  
տացեն գունդք Տրոյեանց » :

Ի ձայն քաջին արագ արագ կէսք վազե-  
ցին ընդ պատուար ,

Ի ներքս ընդ դուրս ընդ խրամատեալս  
կէսք խուժեցին սարմաբար :

Խուճապեցան , փախեան Հելլենք նա-  
ւատորմին 'ի հանդէս ,

Եւ դոյժ ամբաւ աղաղակին շրշուկ էհար  
մեծասկէս :

ኮሊኒኦ ቅበኑ ቅጥኑ ነቶ



## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ի զօրավիզն դիւցազնական քերթուածոյն կարդայ Հոմերոս զԴիցուհին, այս է՝ զՈգին բանաստեղծութեան: Եւ զոր մի անգամ արար քերթողահայրս, այն եղև սպա կանոն անխոտոր ամենայն բանաստեղծից, որ յետ նորա: Եւ երգէ Հոմերոս ոչ զորոյական սլատերազմ, որպէս կարծեցին բազումք, այլ տիրապէս զՈխուծիւնն Աքիլլեայ զիւրոյ դիւցազնն. որպէս և ինքնին իսկ մատնանիշ առնէ անդէն վսեմական սկզբնաւորութեամբն, Μηνην ἄεϊδες, Θεά, ... Ἀχιλλῆος. « Զոխուծիւնն երգեա, ո՛ր Դիցանոյշ, զԱքիլլեայ »: Ոխուծիւն անողոքելի, յորմէ զհետ եկին անհնարին մահունք ՚ի Յոյնս ՚ի տրոյական սլատերազմին. որով և անդրստին ՚ի նախագրանց անտի փայլեցուցանէ իմաստունն Հոմեր զբարոյական զիւր հրահանգն, եթէ քանի՞օն չար իցէ ռխակալուծիւնն, որ այնչափ արեանց սլատճառք եկաց. մինչև նմին իսկ Աքիլլեայ տալ անէծս կուտել ՚ի վերայ ռխութեան յետ մահու սիրելոյն իւրոյ Պատրոկղեայ: Եւ յաջողեալ է հայն ՚ի թարգ.

մանուածիւն յունական բառին Μηνης, որ է տիրապէս Ոխ, և ոչ Բարկուածիւն. յոր մէ վրիպեալ Լատինաց և Իտալացոց ոչ յաջողին ճշգրտել, և հարկին թարգմանել սոսկ Ira, Բարկուածիւն, կամ Ira permanente, Բարկուածիւն տևական: Եւ այսպէս ապա օրինական զայն ուսուցանէ Հոմեր, եթէ բանաստեղծուածիւն՝ մանաւանդ Դիւցազնականն՝ կարգեալ է ՚ի հրահանգել զուարճացուցանելով: Որպէս և անդէն իսկ ՚ի վեցերորդ տողին հրահանգէ ՚ի մեծ յայն հիմն բարոյական սկզբանց, եթէ ՚ի կամացն Աստուծոյ են ամենայն սատահեալքն յաշխարհի: Մինչ զի դիւցազնական տաղիւքն դիտել Հոմերի ոչ այնչափ ՚ի զուարճացուցանել զխուժան ազգին իւրոյ, որչափ ՚ի կրթել: Որպէս վկայէ Խորենացին յասելն, « Մեծն և հուշակաւոր Հոմերոս այնչափ իմն յորացեալ գիտուածեամբ, մինչև կարի քաջ առաքինաբար կանոնս գնելով և օրէնս՝ ուսոյց լսողաց հաւանուածիւն բերել մարդկայինս ազինն առ արարչական զօրութիւնն »: Պիտ: Քանզի « Դիւցազնական քերթուածեան, ասէ Տասիէ, պարտ է լի և զեղուն լինել կրօնասէր և բարոյական սկզբամբք, որպէս Հոմերին »: Շատ է, եթէ ունիցի Հոմեր զուշադիր ընթերցանելիս: Քանզի և նրբահայեաց և վսեմ է ՚ի տեսուածիւնսն և ՚ի սարգաբար սատամեալն, կամ ինքնին կամ յայլոցն բերանոյ սատամէ այո, բայց զայլ ինչ դիտէ ՚ի սատմե-

լինն . որպէս և որ խորաթափանց եղև  
 'ի Հոմերոս , նոյն մերս Քերթողահայր  
 Խորենեան , վճիռ կնքեաց զոր ոչ ոք  
 ցարդ 'ի հին և 'ի նոր քննչացն Հոմերի,  
 վճիռ մեծ՝ սակայն և ճշմարիտ . « Ի վեր-  
 ջէ եկեալքն , ասէ , և ոչ լսող անգամ ար-  
 ժանաւորապէս կարացին լինեւքերթու-  
 թեանցն Հոմերի » . Պիտոյից : Մինչ զի  
 որ մի անգամ ընթերցանութեամբ կար-  
 ծեաց իմանալ զնա , չև ևս է իմացեալ :  
 Եւ կոչի այս քերթուած Հոմերի Եղիա-  
 կան , յանուանէ Եղիոնի մայրաքաղաքին  
 Տրոյիոյ : Եւ Եղիական , քան Իղիական ,  
 վասն առաւել քաղցրահնչութեանն 'ի  
 հայ լեզու , կոչեցաւ 'ի նախնեաց մերոց ,  
 Խորեն . Ա . 32 : 33 . Կաթուղ . և որք  
 յետ նոցա :

Իսկ Հաֆներգութիւն կոչեցան քեր-  
 թուածք Հոմերի . զի  $P' \alpha \psi \omega \delta \iota \alpha$ , ըստ հա-  
 սարակ կարծեաց է 'ի ձայնիցս ,  $P' \acute{\alpha} \pi \tau \omega$ ,  
 Կարել , կարկատել , և  $\Omega ' \delta \eta$ , Երգ . իբր  
 ասել Կարկատերգութիւն , կամ հիւ-  
 սուած տաղից : Քանզի 'ի սկզբան 'ի մա-  
 սունս սփռեալ քերթութեանցն Հոմերի  
 և ապա 'ի մի մարմին ամփոփեալ երգե-  
 ցան . յորմէ և այլ քերթողական չափաբե-  
 ղութիւնք յորջորջեցան Կարկատերգու-  
 թիւն : Այս է ասելն Գր . Մագիստրոսի ,  
 « Ոգեալ է Հադներգութիւն 'ի հագնե-  
 լոյ կարկատուն բանս » : Իսկ այլք համա-  
 ընդ զբարգութիւն յունական ձայնին , 'ի  
 բառէն  $P' \acute{\alpha} \beta \delta \omicron \varsigma$ , Գաւազան . իբր լինել

Գաւազաններգութիւն . քանզի ըստ Եսի-  
քոսի՝ սովորութիւն էր առ հինսն սկիզբն  
առեալ ՚ի հոմերականէն զայլոց ևս քեր-  
թուածս , մրտենի կամ սարգենի կամ ՚ի  
հագնեաց ոստս և մահակս կամ գաւա-  
զանս ՚ի ձեռին ունելով , այնպէս երգել :  
Այս է գարձեալ ասելն նորին Մագիս-  
տրոսի . « Որպէս ՚ի սարգենի մահակէ  
պար գոլով երգէին զհոմերական քեր-  
թուածսն » : Ուստի և ՚ի հագնեացն կո-  
չեցաւ հագներգութիւն :

2 . Մինիէ- կոչի Ապողոն յանուանէ  
տեղւոյն , ուր պաշտօն առնոյր : Կամ թէ  
՚ի յունականէն Σμίνδος , որ նշանակէ  
Մուկն : Քանզի սլատմեն՝ եթէ ՚ի հա-  
րուածիլ Յունաց երբեմն յանհամար բազ-  
մութենէ մկանց՝ ըստ նախագուշակու-  
թեանն Ապողոնի , ՚ի յիշատակ արկածիս  
կանգնեցին ՚ի Տենեգոս և ՚ի Խրիւսա քա-  
ղաքի տաճար Ապողոնի , և եդին մուկն  
մի առ ոտիւք նորա , և կոչեցաւ նա այ-  
նուհետև Մմինթեւս , իբրու դիք մկանց :

3 . Հոմերոս նախ զՋորիս կամ զգրաս-  
տրս , զի Ο'υρεւς զերկոսին ևս նշանա-  
կէ , և զուրնս հարկանէ սրածութեամբ .  
քանզի որպէս ասէ Սպոնդանոս , այս կեն-  
դանիք արագագոյնս վարակին ՚ի Ժանտ-  
ախտէ : Եւ զի կանխեալ պատուհասն  
յանբան կենդանիս զգաստացուցէ զբա-  
նաւորս զերծանել ՚ի պատուհասէն ան-  
դանդաղ ասպաշխարութեամբ :

4 . Իր կարծիք առ հինս հեթանոսաց ,

ունել աստուածոց յաչս իւրեանց անկա-  
կից նշոյլ լուսոյ, որով գային 'ի ծանօ-  
թութիւն :

5. Զհռչակաւոր զասպարն Արամազ-  
դայ Հոմերոս կոչէ 'Αγγίς, այս է' Այ-  
ծենի : Այսպէս կոչեցաւ ասպարն Արա-  
մազդայ, քանզի ամրածածկեալ էր այ-  
ծենեաւ, կամ մորթով այծուն, որ կո-  
չէր Ամաղթէա : Այս այծ ըստ դիցաբանից  
կաթամբ անոյց զԱրամազդ : Որպէս և  
ինքնին զԱրամազդ 'Αγγίοχος կոչէ Հոմեր  
'ի քերթուածս իւր . այս է' Այծենու-  
նակ . իբր ունակ այծենի ասպարին : Է-  
զի զնշանակեալն գնեմք, և է զի զտա-  
ռադարձեալն Եգեան :

6. Երկուս լեզուս զանազանէ Հոմերոս  
նա և 'ի յետագայս ուրեք ուրեք՝ զաս-  
տուածոց և զմարդկան : Հետաքնին մեկ-  
նիչք Հոմերի, զաստուածոց լեզուն իմա-  
նան զյոյժ վաղնջուց արանցն Յունաստա-  
նի, ըստ որում զՊեղասգեանցն՝ զառա-  
ջին բնակչաց Յունաց աշխարհին, նա և  
զԵգիպտացւոցն և զՓիւնիկեցւոց, զորս  
արժան համարէին Յոյնք կոչել աստուա-  
ծըս . զի առաջինք կացին քաղաքականս  
յարգարել զսուժադուժ Յոյնսն : Եւ ա-  
սէն սկիզբն առեալ զայս զանազանու-  
թիւն լեզուաց յԵգիպտացւոց անտի, որ  
երրակի բաժանէին զլեզուս ըստ երրեակ  
դարուց, աստուածոց, դիւցազանց և  
մարդկան, որ զմիմեանս սայազատեցին  
յաշխարհի 'ի թագաւորութեան : Որ ըստ

Ճշմարտութեան՝ առեալ յԵբրայեցւոց՝  
առաջինն է դարն նախաստեղծից և որ-  
դւոցն Սեթայ, զորս Որդիս Աստուծոյ  
կոչէ Մովսէս. զոր հեթանոսք Դար ոսկե-  
ղէն կոչեցին: Երկրորդն է՝ դարն հսկայ-  
ից, որպէս ասէ, « Եւ հսկայք էին ՚ի վե-  
րայ երկրի, որք յաւիտենից արք անուա-  
նիք »: Իսկ վերջինն է՝ դարն հասարակ  
մարդկան յետ բաժանման լեզուացն ՚ի  
Բաբելոն և սփռելոյ ազգաց:

Իսկ էր հսկայն այն Եգէոն հարիւրա-  
ձեռնեայն՝ որդի Պոսիդոնի: Հին լու-  
ծումն Հոմերի այսպէս ունի վասն հսկայ-  
իս. « Քանզի էր նա ուժաւոր անհնարին,  
և կորովի քան զամենայն բնակեալսն ՚ի  
Տարտարոսն խաւարչաին »:

7. Ովկիանոսն է հարաւային, որպէս  
ասէ Ստրաբոն: Իսկ Անարաս կոչէ Հոմե-  
րոս զԵթովպացիս ՚ի սլաւաճառս արգա-  
րակորով գոլոյն և անմեղութեանն և ան-  
կեղծ բարոյիցն: Եւ առ նոսա առաքէ  
Հոմեր զԱրամազդ, զի ըստ Դիոգորի Սի-  
կիլիացոյ ունէին նոքա քաղաք նուի-  
րեալ Արամազդայ՝ անուն Դիոսուպօլիս,  
Արամազդայ քաղաք: Հանդերձ այսու,  
և զոր առաջինն ՚ի հայ սլաւմութենէն  
լուիցենն արեւմտեայք, բազում ժամանա-  
կագիրք ըստ Խոր. Ա. Ծ. Եթովպացի  
ասեն զԱրամազդ:

Իսկ Պէյան. յն. Παϊόν, է մասնաւոր  
անուն երգոյն ՚ի սլաւիւ Ապոլոնի, այլ և  
այլ ստուգաբանեալ:

\* Սքանչացեալ են այս եռատողք Հոմերի . որ և ետուն , ասէ Մակրոբիոս , գերահռչակ անգրիագործին Փիգիայ հրաշակերտել զառնապատկերն Ողիմպեանն Արամազդայ : Ի սոյն ակնարկէ և ասելն 'ի Պամ . Աղէքսանդրի յերես 45 . յորում ունիմք 'ի նախնեաց և զթարգմանութիւն եռատողիցս . « Պարմենիոնայ ճարտարապետի , ասէ , տայր Աղէքսանդրոս պատկերս պղնձի կազմել . որ բերէր յինքեան զհոմերական տաղիցն , որպէս ասաց ըսքանչելի երգիչն այն Հոմերոս ,

Եւ կապուտակային յոնօքն ակնարկեաց  
Զրուանեանն ,

Եւ սքանչելի աստուածային վարսքն  
Հարժեցան յանմահ գլխոյ թագաւորին .

Եւ մեծապէս շարժեալ տատանեցաւ  
Ողիմպոս » :

Եւ են եռատողքս 'ի Հոմերոս բառառ բառ այսպիսի .

« Ասաց և կապոյտ յոնիւքն ակնարկեաց  
Կռոնոսեանն .

Իսկ ամբոսեան վարսքն սարսեցան  
արբային

Ի վերայ անմահ գլխոյն . և զմեծն գրդրդեաց զՈղիմպոս » :

Ուր ինչ մի գեղեցիկս յոյժ խորհրդածէ Ռօլէն , եթէ զպերձ՝ զայս եռատողան Հոմերի երեք մեծամեծ քերթողք հռովմայեցիք այր այր յիւրեանս բաժանեցին : Վիրգիլիոս էառ յինքն զակնարկութիւն Արամազդայ միայն , ասելով .

Adnuit, et totum tremefecit Olympum.

Ենէակ . Թ . և յ :

Ովիդիոս զտառանէլ վարսիցն, ասելով .  
Terrificam capitis concussit terque  
quaterque

Cæsariem, cumqua terras, mare, side-  
ra movit. Գիրք Ա :

Իսկ Ովրատիոս զյօնան Արամաղդայ,  
այսպէս .

Reges in ipsos imperium est Jovis,  
Cuncta supercilio moventis. Գիրք Գ :

Իսկ նոր թարգմանիչք արևմտեայք 'ի  
վէգ ելէալ են ընդ միմեանս 'ի ճշգրիտ  
թարգմանու թեան հռչակաւոր եռատո-  
ղիցս : Օրինակի աղադաւ բառ առ բառ  
զմիոյն միայն Ռոշֆորին դիցուք յարձակն .

« Զայս ասաց , և շարժեաց զիւր յօնան  
ահեղս ,

Իւր հերքն տատանեալք 'ի գանգուրս  
անթուելիս

Յցուին տակաւ տակաւ 'ի վերայ ճա-  
ռագայթեալ ճակատուն իւրոյ .

Նա գլորդէ զՈղիւմպոս , և գողացուցա-  
նէ զգիս » :

Եթէ և գեղեցիկ իցէ , սակայն հոմե-  
րեան չէ . զսոյնօրինակ գողցես իմն և  
զայլոցն չափաբան և յանգաւոր թարգ-  
մանչացն հոմերի բազում ուրեք :

Իսկ բարոյական և քաղաքական հրա-  
հանգն 'ի հագն . Ա . ամփոփի յառաձս .

Առանց Աստուծոյ ոչինչ սլատահէ յաշ-  
խարհի . Երես 3 :

Երկպառակուծիւն աւագաց ազգին ,  
մահաբեր է բովանդակ ազգին . 4 :

Անպատուութեան պաշտօնէիցն Աս-  
տուծոյ վրէժխնդիր է ինքն Աստուած . 7 :

Պարտ է սանձել զբարկուծիւն , թէ-  
պէտ և 'ի վերջինսն բորբոքեալ . 19 :

Որ Աստուծոյ հնազանդի , ևս առա-  
ւել Աստուած հնազանդի նմա . 20 :

Առածս այս Հոմերի յառաջ բերեալ է  
'ի Խորենացոյն 'ի գիրս Պիտոյից :

8 . Արփոսասպան Նո-իբակ , է ինքն Հեր-  
մէս , որ սպան զհարիւրաչեայն զԱրփոս  
ըստ առասպելին : Եւ նուիրակ կոչի , զի  
պատգամաբեր է Արամազդայ , որ ետ  
Հերմեսի զգերահռչակ զայս գաւազան ,  
որ ապա առ Քերոնիւացիս 'ի պաշտօն ա-  
ռաւ ըստ Պաւսանեայ . զի « Քուրմն , ա-  
սէ , առ նոսա ընտրեալ ամի ամի , խնամ-  
ունի պահել զգաւազան զայս 'ի տան իւ-  
րում . ուր զօր ամենայն նուէրս մատու-  
ցանեն նմա և զամենայն ազգ կերակրոց  
և զքաղցրաւենեաց » :

Այլ քանի մի տողիւք 'ի վեր յաղագս  
նմանաբերութեան մեղուացն Հոմերի նը-  
շանակելով , որպէս կարգաւ առաջին է  
Եղիականին , ասեն քննիչք , այնպէս և  
գերազանց 'ի ճշգրտութեան : Հոմերոս ,  
ասէ Փօփ , քան զամենայն քերթողս 'ի վեր  
է 'ի գեղեցկութեան և 'ի ճշգրտութեան  
նմանութեանց : Կարի նուազունք են , ա-  
սէ , 'ի նմանութեանց առ Վիրգիլեայ մե-  
ծի որ չիցեն առեալ 'ի Հոմերէ . և ան-

դանօր՝ ասէ՛ փայլէ Վիրգիլիոս առաւել,  
ուրանօր քաջիկ զնմանուծիւն բերէ ըզ-  
վարդապետին :

9. Իկարէան ծոց, է՛ ՚ի ծովուն կարիոյ :  
Յոյնք կարծեն զանուանակոչուծիւնս  
յառասպելեացն Իկարոսի . այլ հաւանա-  
կանագոյն ասէ Չէզարօթթի զկարծիան  
Պոչարայ, որ զայս անուն յառաջ ածէ ՚ի  
Փիւնիկեցւոց բառէն, որ նշանակէ Ձըկ-  
նաւէտ :

10. Զէփիոսն հոմերեան ոչ է քաղց-  
րասիւզն գարնայնոյ, որով վարին ար-  
գի բանաստեղծք : Ի Յոնիա ՚ի հայրենիս  
հոմերի բուռն է այս հողմ և մրրկաբեր .  
չնչէ ՚ի լերանցն Թրակիոյ ՚ի ծովն Եգեան,  
և անձրևաբեր լինի և կամ ձիւնաբեր :

11. Հոմերոս կոչէ Δία, Աստուա-  
ծային, զմեծամեծս զամենայն և զերևե-  
լիս և զանսովորս . ըստ որում և առ Եբ-  
րայեցիս մայրք և լերինք բարձունք և  
այլն, կոչին Աստուածայինք :

12. Ակնարկէ Թերսիտէս ՚ի Բրիսա-  
նոյն, զոր եհան Ագամեմնոն յԱ. քիլեայ :  
Բայց զայս լեզուագար ատենաբանու-  
ծիւն Թերսիտեայ յոյժ ճարտար ասեն  
քննիչք . ըստ որում և զկենդանագիր  
զայն զկաղին և զանգեղոյն : Անմարթ է  
մեզ, ասէ Խոչֆոր, ըստ բաւականին զար-  
մանալ ընդ վսեմուծիւն և ընդ ճշգրու-  
տուծիւն քերթողական գրչին հոմերի :

13. Ճօշան կամ սլատեան ՚ի կտաւոյ  
վարէին միայն աղեղնաւորք, որպիսի ոք

էր Այասն Ուլեան : Այլ այս Յուցակ  
 Հոմերի՝ իբրու վաղնջուց տեղագրութիւն  
 Յունաստանի՝ ՚ի յարգի է յոյժ առ մա-  
 տենագիրս, և ճշգրտեալ է առ մեծի աշ-  
 խարհագրին Ստրաբոնի :

14. Ի շուք հրաշակերտ գիւցազին իւ-  
 րոյ Աքիլլեայ փոխէ անդէն Հոմեր զս-  
 վորական եղանակ բանին . իբրև կիսա-  
 մասնեայ գործելով զկոչումն Մուսային :

15. Պենիոս բնախօս ՚ի Գիրսն Դ . 8  
 յիշատակէ զայս , յառաջ բերեալ զվկայ-  
 ութիւն Հոմերի . և մեկնաբանէ զՏիտա-  
 րիսոնն , զոր ինքն այլով անուամբ կոչէ  
 Եւրոտոս . « Պենիոն գետ , ասէ , առնուլ  
 առնու զԵւրոտոս գետ , սակայն յինքն  
 չընդունի զնա . այլ վայրիկ մի գեգերի ՚ի  
 նմա՝ յերեսս ծածանելով նորա ըստ օրի-  
 նակի ձիթոյ՝ որպէս ասաց Հոմեր , և ան-  
 դէն ՚ի բաց արձակէ զնա . քանզի չառնու  
 յանձն զջուրսն զայն զպատուհասակո-  
 ծրս և զանիծաբերսն յիւրն խառնել ՚ի  
 վտակսն արծաթիս » : Իսկ թէ ընդէր ա-  
 նիծաբերք իցեն ջուրքն , զի է , ասէ Հո-  
 մեր ՚ի յաջորդ տողդ , Տիտարիսոնն վտակ  
 Ստիւգեան ջրոյն :

16. ՅԱրկադիա ՚ի ծայրից բարձրա-  
 բերձ լերին հոսէ անսպառ ջուր , զոր  
 Յոյնք կոչեն ջուր Ստիւգեայ : Այս ջուր  
 անցեալ ընդ սլարեխս անկանի ՚ի գետն  
 Կրատիս . մահաթոյն է . և չէ բաւական  
 տանել զնա ոչ ասպակի ոչ բիւրեղ ոչ խե-  
 ցի ոչ մարմարեայ , այլ խորտակին ՚ի նմա-

նէ : Եւ լուծանէ այս ջուր զերկաթ ,  
 զպղինձ , զկասպար , զանագ , զսաթ , զար-  
 ծաթ և զոսկի . միայն եղունգն սմբակաց  
 ձիոց սպարտէ զնա : Ասեն՝ եթէ Աղէք-  
 սանդր մակեդոնացի դեղեցաւ 'ի ջրոյ աս-  
 տի խառնելոյ ընդ գինի : Երդումն յայս  
 ջուր էր ահաբեկ յոյժ աստուածոց և  
 մարդկան : Հեսիոգոս հայր դիցաբանու-  
 թեան Յունաց մանրամասին ճառէ վասն  
 Ստիւգեայ . « Անդ , ասէ , ( 'ի դժոխս )  
 գտանի և աղբիւրն Ստիւգեայ , դուստր  
 անդրանկածին Ովկիանուն , արհաւիրք  
 աստուածոց անմահից » . և այլն :

17 . Տի-՛՛՛՛՛՛ կամ Տի-՛՛է : Հսկայ անհը-  
 նարին վիթխարի անգեղ 'ի ճեռէն Տի-  
 տանեանց . որ ամբարտաւանութեամբ  
 ապստամբեալ և կռուեալ ընդդէմ երկ-  
 նից , հրատոջոր անձրեօք պատուհասե-  
 ցաւ ինքն և երկիր իւր 'ի յԱրիմեանս ,  
 ուր ասեն գոլ զգերեզմաննորա : Զահեղ  
 նկարագիր նորա ունի Եսքիւղէս բանաս-  
 տեղծ : Իսկ վասն Արիմեանց կամ Ար-  
 մեանց սահմանին , զոր ասէ Հոմեր , տագ-  
 նապին մեկնիչք . յետ բազում զննու-  
 թեանց յայն հաստատին , եթէ Հոմեր  
 գողցես ամենայն հնութեանց տեղեակ և  
 ընդ բազում աւանդութիւնս և մատենա-  
 գրութիւնս նախնագունից քան զինքն՝  
 մանաւանդ Եգիպտացւոց և Եբրայեցւոց  
 անցեալ 'ի հետազնին ճանապարհորդու-  
 թիւնս իւր , բանիւն ակնարկէ 'ի հրայ-  
 րեաց պատուհասն աստուածասաստ 'ի

հինգ քաղաքսն Պաղեստինոյ, 'ի Սողոմ<sup>ա</sup> այլովքն հանդերձ. որպէս և ասէ « Յասեաւ Դիոս շանթաբեր » : Եւ Արամեան կամ Արիմեան կոչէ զԱսորւոց երկիրն . որպէս և գիրք և Յովսեփոս և Ստրաբոն և այլք առ հասարակ երկիր Արամայ կոչեն : Հանդերձ այսու Ստրաբոն հետաքրնին աշխարհագիր ասէ , եթէ Եղիականին հոմերի յայս հատուած անմիջապէս յետ ասելոյն « Ի սահմանին Արիմեանց » , ընթերցեալ է ինքն և այլ տող մի հոմերի օրինակ զայս . « Ի ծառախիտ վայրին յարգաւանդ երկրին Իգայ » : Եւ զի ոչ գտանեն ուրեք աշխարհագիրք Իգայ անուամբ այլ երկիր ծառախիտ արգաւանդ , և 'ի նմա հանգիպեալ զաստուածասաստ հրայրեացսն՝ զոր ասէ հոմեր . և զի՝ և ըստ վկայելոյ գրոյն , յուռթի էր երկիրն Սողոմայւոց , աներկբայ ունին զԻգայն հոմերի՝ փոխանակ Յուգայ : Եւ հետաքնին ճանապարհորդն Վուտ կնքէ՝ եթէ որ գնայ տեսանել յԱսորիս զգաշտավայրն զՍողոմայ և զԳոմորայ , չմարթի 'ի յուշ չքերել զտողսն հոմերի . « Զլափել ողջոյն երկրին 'ի հրոյ , և զհեծել հողոյն 'ի ներքոյ . իբրու եթէ ցասեաւ Դիոս շանթաբեր » :

18 . Պողիպէս , կրսերագոյնն յորդիս Պրիամու , որ յառման Տրոյիոյ սպանաւ 'ի Պիւռոսէ յորդւոյն Աքիլեայ : Վիրգիլիոս կարի ողբալի նկարէ զմահ սորա :

19 . Եսիպ ծեր , հայր մեծին Անտենո

րայ իշխանին Տրոյացւոց :

20. Ձայս բլուր այլուր կոչէ Հոմեր՝ Գեղաբլուր կամ Պերճ՝ բլուր: Ըստ Ստրաբոնի էր տասն ասպարիսաւ հեռի ՚ի քաղաքէն Տրոյիոյ, և տարածէր հնգիւ:

21. Ձզանազանութիւն լեզուաց զաստուածոց և զմարդկան տէս ՚ի Ծան . 6:

Իսկ ՂՄԻ-բէնէ ասէն լինել մի յԱմազոնից անտի, ընդգէմ որոց մարտեգ Պրիամոս: Դիողորոս Սիկիլիացի ասէ տեսալ ՚ի Փուիւգիա զգերեզման Միւրինեայ և զնիզակակցաց նորա:

Եւ Արագուն կոչէ Հոմեր զԱմազոնն, իբրու արագավազ էր ՚ի ձիավարել:

Այլ ՚ի վախճան Բ. Հագն. որչափ ճոխացաւ Հոմեր ՚ի ցուցակ իւրոց զօրավարացն և իւրոյ աշխարհին, այնչափ և ճշգեաց զՏրոյացւոցն և զնիզակակցաց նոցա, որք եկին յօգնութիւն Պրիամու. զորս կոչէ « Արք այլալեզուք և այլաբարբառք »: Յորս փափաքելի էր մեզ գտանել ՚ի Հոմեր յանուանէ և զմերն Ձարմայր նահապետ՝ զորմէ Խոր. Ա. 32. եթէ « Որք ՚ի Հոմերոսէ պատմին, թէ այն արդեօք, որ վասն Եղիականի պատերազմին պատմի առ Տեւտամաւ . . . և մեր Ձարմայր . . սակաւուք ընդ Եթովպացի զօրուն օգնական Պուիամու: Եւ անդ ՚ի քաջացն Հելլենացւոց վիրաւորեալ մեռանի, այլ կամիմ յԱքիլլեայ, և մի յայլ ումէքէ ՚ի քաջացն »:

Իսկ զքաղաքագիտութեան հրահանգն

ի Բ . Հագն . ունի Հոմեր յառածս .

Առն իշխանի խորհրդականի չէ սարտ  
ննջէլ զգիշերն ողջոյն . 55 : Ունիմք զայս  
առած և ՚ի Խոր . ՚ի գիրս Պիտոյից և յայլ  
ևս գիրս . նա և ՚ի խօսս Սիրաքայ ՚ի նորա  
տիպ Աստուածաշնչի . «Ոչ է սարտ , ասէ ,  
առն խորհրդականի զամենայն գիշերն  
ննջէլ , որոյ իշխանութիւն և սէտք յան  
ձին է » :

Պարտ է թագաւորի խորհրդակցու  
թեամբ վարէլ յիշխանութեան . 57 :

Անգասին յԱստուծոյ ունին թագա  
ւորք զգաւազան իշխանութեանն . 61 :

Որք ենն յԱստուծոյ կարգեալ են . 69 :

Ոչ է բարւոք բազմիշխանութիւն , մի  
իշխան եղիցի . 68 : Ունի զայս Առած և  
Խորենացին ՚ի Պիտոյիցն գիրս :

22 . Ձիւղ-ին Հոմեր կոչէ Πυγμαίος ,  
Կանգնաւոր . ունող զչափ կանգնոյ միոյ :  
Ձթզկաց բազում ինչ առասպելախառն  
պատմեցին , այլ գոյութիւն նոցա ոչ է  
գլխովն առասպելք : Հինք առ հասարակ  
հաւանեալ են , պատմագիրք և աշխար  
հագիրք յոյնք և լատինք , և Արիստոտէլ  
ինքնին , « Որ ինչ զթզկացն պատմի , ա  
սէ , չեն առասպելք , այլ ճշմարտու  
թիւն » : Եւ Խոր . յաշխարհագր . « Լի  
նի և թզուկ մօտ յՈվկիանոս : Կղզի մի է  
հանգէպ Արեաց ՚ի Հնդկաց ծովուն , յո  
րում թզուկք լինին երեքթզեան հասա  
կաւ (այն է՝ Փիղմէոսն Հոմերի , կան  
գուն՝ չափ երից թզաց) . որք և սատե

րազմին ընդ խորդուց հաւուց՝ վասն ճարակելոյ նոցա զանդաստանս թղկաց” : Եւ նորք հետաքնինք ընդունին զգոյութիւն նոցա , այլ ասէն ըստ մասին բանաստեղծեալ ՚ի քերթողաց . քանզի գրտանին , ասէն , ժողովուրդք յայլ և այլ կողմանս աշխարհի , մանաւանդ յԱփրիկէ և յԵթովպիա առաւել , նուազեալ ՚ի չափ հասակի քան զկարճագոյնս ՚ի մարդկանէ :

Եւ այսպիսի թղուկք և գաճաճք գրտանին բազմօք յարքունիս արևելից , ածեալք , որպէս ասէն , առաւելապէս ՚ի սահմանացն Եթովպիոյ :

23 . Փոխանակ ասելոյ , Տրոյացիք քարկոծ առնէին զքեզ : Այս կշտամբողական հրապարակախօսութիւն հեկտորի ճարտար յայտյանդիմանութիւնէ գիւցազնական առաքինութեանց նորա . որովք ՚ի դէմս հարկանէ իգացելոյ եղբօրն նա և զխոստպիսն և զկիթառն նորա : Այս կիթառ Պարիսի՝ ըստ Պլուտարքեայ՝ պահեալ կայր առ Տրոյացիս : Ի չուէլ Ազեքսանդրի մեծի ՚ի Տրոյիա յայցելութիւն քերթութեանցն հոմերի , անդանօր միոմն ՚ի Տրոյացւոց ՚ի կամէն ցուցանել նմա զայն , դժկամակեալ Մակեդոնացին չէառ յանձն տեսանել զայն , ասելով “ Անիմ առ իս զկիթառն Աքիլլեայ ” :

Իսկ բարոյականն հոմերի ՚ի Գ . Հագն . ամփոփի յառածս .

Լաւ է մարդոյ բնաւ իսկ չճնանիլ ,

քան կեալ յանցաւորութեամբ . 120 :

Ընդ ծերոյ տէս զգործ քո . զի որ ետես զանցեալն , տեսանէ և զսպագայն . 131 . 135 :

Ի խորհուրդ պատանեաց չէ պարտ վտասէլ , զի դեռ անփորձք են . 131 :

Գոյ հատուցումն յանցաւորութեանց յետ մահուն . 144 :

24 . "Ηβη, Դիցուհի պատանեկութեան և զարգուն հասակի . ուստի և մատուցուածութեամբ նեկտարին առոյգացուցիչ կենաց :

25 . Քանզի յԱզակոմենէ քաղաք Բիւովտիոյ առանձին մեհենաւ պատուէր Աթենաս :

26 . Հերա կամ Հէր , ըստ հայրամս օրոյի , դշտոյ աստուածոց . կոչի Արգուհի կամ Արգոսուհի , իբրև պաշտեալ յԱրգոս յառանձին տաճարի :

27 . Եղանակ սաստիկ կշտամբանաց առ նախնիս . ըստ որում և 'ի Յովբ ժԹ . « Ո՛րբարեկամք . . . մարմնովք իմովք չեցէք յագեալ » :

28 . Ըստ հին լուծման Հոմերի , Աստեղբդ այդուիկ իմանին գիսաւորք . իբրու սքանչելահրաշք են և ասէղք , և խուժանին տագնապեցուցիչ նշանք :

29 . Լաստոկոս , որդի է մեծի իշխանին Տրոյացոց Անտենորի :

30 . Պանդարոս , որդի Աիկայոնեայ , ազեղնաձիգ քաջ Լիւկիացի : Լիւկիացիք վտասահամբաւեալք էին իբրու ուխտա-

նենգ . ուստի և յԱթենասայ ընտրի նա  
'ի գործն :

31. Լուսածին . յն . Δουκηνου . Ոմանք  
ածանցեն 'ի բառէն Δύκος, Գայլ . իբրու  
գայլածին լինել Ապողոնի՝ ըստ առաւ-  
պելին . այլ անհմտաբար : Այլք թարգ-  
մանեն Լի-իածին , 'ի Լիւկիա ծնեալ ,  
որ չունի տեղի վասն Ապողոնի ծնելոյ 'ի  
Դեղոս : Ճշգրիտն է Մակրոբիտսին , որ  
ասէ՝ եթէ նախնի Յոյնք զարշալոյսն զկա-  
րապետն Արեու , որ է Ապողոն , կոչէին  
Լիւքի , ըստ որում է և բարդեալք 'Αμφι-  
λυκή νύξ, Երջալոյս գիշեր , այս է՝ յա-  
ռաջեալն քան զարշալոյս . ուստի և Ապո-  
ղոն , որ և Արև , կոչէր Լի-+իլէնիս , Ծը-  
նեալ յարշալուոյ :

32 . Երկոքին եղջիւրքն միանգամայն  
վեշտասան թղաց՝ ըստ Փոփի . իսկ այլոց՝  
մի մի 'ի նոցանէն վեշտասան թղաց : Վը-  
կայէ Եւստոթէոս , զի առ իւրովք Ժա-  
մանակօք տեսան 'ի Դեղոս եղջիւրք եր-  
կայնագոյնք քան զայդոսիկ :

33 . 'Αγέλαη . Մակգիր Աթենասայ .  
Աւարող . այլ նշանակութիւնն է՝ Առաջ  
նորդ մարտի : Իսկ նմանաբերութիւնն  
ճանճի սքանչացեալ է առ քննիչս և ճըշ-  
գրրուեալ ըստ ամենայն մասանց , ըստ  
խնամոց մօրն 'ի տղայն իւր , ըստ որում Ա-  
թենասայն 'ի Մենեղաւոս անմեղ , ըստ  
փանաբուլթեան կենդանւոյն , որպիսիք ու-  
մանք են առ աստուած մեծամեծ կարծե-  
ցեալքն առ մարդիկ . այլովքն հանդերձ :

34. Բնակիչք Լիւդիոյ, Մէոնեայ և  
 Կարիոյ քաջարուեստք էին ՚ի գունեւէլ յոր-  
 դան կարմիր :

35. Սովորական Կրիտիք չոմերի թե-  
 րահատար տեսու թեամբ ստգտանեն զչ ո-  
 մեր վասն երկայնու թեան նմանաբերու-  
 թեանս : Որոց ընդդէմ ասէ չուետիոս ,  
 եթէ չէ սարտ զմերս արեւմտեան ախոր-  
 ժակ՝ կանոն ընդհանրական կարգել այ-  
 լոց ազանց : Զնոյն և Ռոշֆոր և Փոսի . որ  
 և յաւելու՝ եթէ չոմեր ՚ի գունեւէլ անդ-  
 յորդան կարմիր և այլն , դիտէ զայն ինչ՝  
 եթէ արիւն և վէրքաջի զորականին սատ-  
 մուճան փառաց է նմա . և ՚ի սոյն իմաստ  
 հրահանգէ զընթերցանելսն :

36. Ὑψίστος . Կրկնակի է բարդու-  
 թիւն բառին . մի՛ Գերագահ , և միւս ևս՝  
 Գերակշիւ . իբրու գերագոյն կշռող գոր-  
 ծոց մարդկան , որպիսի առ հեթանոսս  
 Արամազդ :

37. Πολυδέψιος . ըստ ձայնին՝ Բազմա-  
 ծարաւելի : Բազումք բազմօրինակ , ասէ  
 Ժիպէս , սխալեցան ՚ի մեկնու թեան հո-  
 մերեան բառին . իբրու եթէ անջրդի ու-  
 ըեմն լեալ իցէ յառաջագոյն Արգոս : Եւ  
 այլք ևս դարձեալ այլազգ իմացան ըզ-  
 բառն . սակայն ճշգրտեալն ըստ հմտա-  
 գունից այն է՝ լինել Արգոսի քաղաք մե-  
 ծապէս ծարաւեալ , այս է՝ տենչացեալ :

38. Որպէս ՚ի դիւցազնականին , նոյն-  
 պէս և յողբերգականին աստ և առաւե-  
 լապէս ՚ի վերջին հագներգութիւնսն ,

վարժապետ վեհագոյն համարի հոմերոս:

39. Ծծել զարիւն վիրացն՝ և այնպէս  
ասպաքինել զխոցն՝ սովորութիւն է ցարդ-  
արևելեան ազգացն:

40. Այս Քիրոնն ՚ի Կենտաւրոսացն  
զարմէ՛ էր մի ՚ի գերագունից իմաստնոց  
առ ժամանակօք նախնի դիւցազանց: Էր  
միանգամայն և երաժիշտ և բժիշկ և տրն-  
կաբան և աստեղաբաշխ, և ունէր զգի-  
տութիւն զօրութեան խոտոց և արմա-  
տոց: Դիւցազունք եղէն սորա աշակերտք  
հերակլէս և Յասոփն և Աքիլլէս: Ասէն՝  
եթէ մեռաւ Քիրոն ընդ խաբս վիրաւո-  
րեալ ՚ի հերակլէայ: Դասեցաւ ընդ համ-  
աստեղութիւնան, այն է՝ Ալէղնաւորն:

41. Փոնաց նշաւի. Γομώρος, ըստ ձայ-  
նին՝ Նեոավիճակ. որ վիճակեալ և սահ-  
մանեալ է նեոահար մեռանել:

42. Γερούσιος οἶνος, ըստ ձայնին՝ Ծե-  
րական գինի, կամ ծերունեաց վայելուցն.  
ըստ նշանակութեանն՝ հին և անոյշ գինի:

43. Առ հինան նշան մեծի պատուոյ հա-  
մարեալ էր առաջի դնել հիւրոցն բաժին  
մեծ ՚ի կերակրոցն, և յազատութեան  
թողուլ ըմպել ըստ կամի: Հնագոյն ևս  
քան զժամանակն հոմերի ունիմք զայս  
՚ի գիրս Ծննդոց ԽԳ. 34:

44. Այս նմանաբերութիւն կարի նը-  
կարագրական և սքանչելի յոյժ արուես-  
տակեալ է ըստ քննչաց՝ ՚ի բնագրին նա և  
՚ի քերականական կազմութեան և ՚ի չա-  
փաբերութեան:

45. Վասն Նեստորի ծերունւոյն Պիւղացւոց արքայի տէս 'ի Հագն. Ա և Բ :

46. Քաջայայտ է հմտութիւնն Հոմերի՝ հանդերձ այլովք բազմօք՝ նա և 'ի զինուորականին: Չայս դասաւորութիւնն հոմերեան 'ի մարտի 'ի գործ արկ Աննիբաղ 'ի սատերազմին Չամեայ, որպէս յիշէ Պողիւբիոս: Նոյնպէս և Պիւռոս հրահանգեալ 'ի Հոմերէ: Նոյնպէս և Յուլիանոս կայսր մեծապէս հրաշացեալն ընդ Հոմեր: Առաջին վարժապետ զինուորական արուեստին առ Յոյնս՝ Ճանաչէ Եղիանոս զՀոմեր:

47. Չայս տող Հոմերի բազմիմաստ 'ի վեցեակ միտս թարգմանեն քննիչք: Մերն է ըստ լաւագոյն ընտրութեանն Երնեստի և Մոնդիի և Չէզարոթեայ և Ռոշֆորի:

48. Երէ-Բազու, զօրավար Արկադացւոց: Տէս 'ի Հագն. Է:

49. Յոգիտ աղ-էսայեւ. Κερδαλέοφρων, ըստ ձայնին՝ Ալուէսամիտ: Պարսաքարէ զՈղիւսէս, զայր խորագիտագոյնն 'ի Յոյնս:

50. Դո-ր+ սպամանց. Ἐρχος ὀδόντων, Պատուար ատամանց: Հրահանգէ Հոմեր զանխորհուրդսն 'ի խօսել՝ խրատեալ ինքնին 'ի բնութենէն, որ դուռն ամուր զըրթանց և զչարս ատամանց եդ յառաջոյ լեզուին:

51. Մալթեզ. Διογενης, Դիոսածին: Մազգեզն՝ կրճատութեամբ բարգեալ, իբրու Որմզայ կամ Արամազդայ ազն և ծնունդ:

52. Հրահանգէ Հոմեր և զԹագաւորս  
ինքնին հատուցանել նա և հաւատակաց ա-  
նիրաւելոցն 'ի նոցանէ յինչ և իցէ դէպս :

53. Աբագաբէ . Πτερόεις, Թեւաւոր :  
Սովորական մակդիր Հոմերի վասն արա-  
գաբարբառ լեզուի :

54. Աստուրջ Տարաբի , Γέφυρα πολέμοιο .  
Ոճ խօսից առ Յոյնս . իբրու ասել , զի  
դու խնդրես գտանել անցս իմն առ 'ի  
խուսել 'ի մարտէն :

55. Հրահանգէ Հոմեր լուռութեամբ  
առ կշտամբանս պատուել զառաջնորդս :

56. Աստանօր զկայ առնու այս հռչա-  
կաւոր շրջագայութիւն Ագամեմնեայ  
մինչ չև սկսեալ մարտին . և 'ի սոյն իմաստ  
զինուորական դիտէ յորդորել Հոմեր ըզ-  
գօրավարս :

57. Այս բանք են վասն պատերազ-  
մին Եպիգոնեանց : Կապանէոս 'ի մարտի  
անդ կայծակնահար եղև վասն ամբարըշ-  
տութեան իւրոյ : Տիւգէս վասն ան-  
գուռթ օրինակին՝ զոր ետ , զի ատամնացի  
կեղեքեաց զգլուխ Մենաղիպպոսի թըշ-  
նամուոյն : Այս է ասելն

« Իսկ մեր նախնիք անկան տապաստ  
խակախորհուրդք և ժըպիրհք » :

58. Այս առաջին մարտ պատերազմի  
յԵղիականին առ քննիչս է անզուգական  
ըստ վսեմութեանն , ըստ ասէղութեան  
դիցն խառնելոց 'ի մարտ երկուստեք ,  
ըստ քերթողաբար անձնաւորեալ կրիցն  
որ գրգուեն զմարտն , և՛ որ այլ ևս : Ան-

Ճնաւորեալքն 'ի Հոմերէ են Հոյն, Δε-  
 μός . Արհա-իր+, Φόβος . և Հէռ, 'Ερις :

59 . Ձայս տող վսեմական նկարու ա-  
 ուեալ վիրգիլիոս սքանչելապէս օրինակէ  
 'ի Համբասն անճնաւորեալ 'ի նմանէ .  
 « Շըրջի և գընայ, ոտք իւր 'ի գետին ,

Գլուխ իւր ծածկի 'ի յամբըս վերին » .  
 Ենէակ . Գ : « Բայց ո՛ւրանօր է , ասէ Ռոշ-  
 Փոր , ո՛ւրանօր է այն զգացումն արհաւ-  
 րաց՝ զոր տալաւորէ 'ի մեզ Հէռն , յա-  
 ուաջ նկուն առ երկրաւ քերեալ , և ա-  
 սլա առ երկնիւք վիթխարացեալ » : Ա-  
 հեղ նկարագրուածեամբ Հեռին և Անմիա-  
 բանութեան սարտուցանէ իմաստունն  
 Հոմեր 'ի կրից անտի զընթերցանելինն .  
 չէ պարտ , կամի ասել , արհամարհել 'ի  
 սկզբան զփոքրկուծեամբ նոցա , զի ասլա  
 մեծամեծս աճեն մինչև յերկին և մա-  
 հունս գործեն՝ միշտ առ մեզ մնալով ոտից  
 նոցա , զի 'ի մէնջ առին սկիզբն և զմեզ  
 ընդ աթուր հարկանեն :

60 . Այս հատուած վսեմական՝ ըստ  
 Հոմերեան սովորութեան՝ նովին շա-  
 րագրութեամբ կրկնի և 'ի հետևեալ հագ-  
 ներգութիւնս :

61 . Անտիղոբոս քաջորդի մեծի ծե-  
 րունւոյն Նեստորի . որում խորհրդով  
 ասէ Փոփ , ընծայէ զփառս սկզբնաւորու-  
 թեան մարտին :

62 . Հիսն կառայ . Ἀρματοπηγός , Կա-  
 ուագործ :

63 . Մասնաւոր գիտողութեան ար-

Ժանի ասէն քննիչք՝ զքնքուշ նմանաբե-  
րութիւն առոյգ կաղամախի բուսելոյ՝ ՚ի  
խաղ լճին, օրինակեալ ՚ի մատաղ սլատա-  
նին Սիմոնիսի ծնեալ յափն գետոյն՝ որ-  
պէս ասաց :

64. Պերգամէ, անուն գղեկին Տրոյիոյ :  
Յետինք յունաց զանուն զայս հասարակ  
եղին ամենայն գղեկաց աշխարհին իւ-  
րեանց :

65. Սովորութիւն է Հոմերի միշտ ար-  
տայայտիչ իմն ածականաւ վարել զգոյա-  
կան, որպէս և աստանօր մակդիր երկա-  
թոյ կարգէ Ταμείχρωσ, Մարմնահատ :

66. Քանի՛ ճարտարութիւն է Հոմե-  
րի, ասէն քննիչք, ՚ի յուշ բերել ընթեր-  
ցանելեացն զգիւցազն իւր զԱքիլէս ըզ-  
մոռացեալն թերևս, և այն մեծապէս  
ազդողաբանութեամբ. զի անգործու-  
թեամբն և եթ նորա քաջալերէ Ապոլոն  
զիւրն Տրոյացիս :

67. Տրիդոնեան. Τριτογένεια, Գլխա-  
ծին : Τριτώ բառ Բիովտացւոց նշանա-  
կէ՝ Գլուխ : Մակդիր Աթենասայ, իբ-  
րու ծնեալ ՚ի գլխոյն և յուղղոյն Արա-  
մազդայ :

68. Հրաշալի է առ քննիչս և բազմա-  
գունակ եղանակ մահացուցանելոյ Հո-  
մերի զմարտիկս իւր այլ և այլ զինուք  
յայլ և այլ մասունս մարմնոյ, ՚ի ճա-  
կատն, ՚ի կողն, ՚ի լանջան, յատինան աջոյ,  
ընդ երանսն, ՚ի քունն, յաջոյ սրունսն,  
՚ի կոյս կրնկանն, ՚ի փորն, ՚ի թոքա-

ուաջսն, 'ի դանձակն, և այլն. և զամենայն զարգարէ գիմակ գիմակ հանգամանօք, նա և անդամազննական ճշգրտութեամբ նշանակելով զմկանունն, զմահառիթ խոցուածս զմասանց կենդանեաց և զմարդոյ, որպէս է տեսանել 'ի յաջորդ հագներգութիւնս :

69 . Ոչ զանց առնէ Հոմեր ըստ պատեհին նշանակել և զսովորութիւնս ժողովրդոց ըստ բազմահարուստ գիտութեանն. որպէս և աստ զԹրակացիսն կոչելով 'Αχροκόμος, Գիսաւորեալ 'ի դագաթն :

70 . Այս չորրորդ հագներգութիւն Հոմերի եռանգաբորբոք և կենդանաախպ տեղի ետ առակին, ասել. եթէ « Քառորդ հագներգութիւն Հոմերի այնչափ իմն շնչէ ոգի կենդանական, մինչև ապաքինել 'ի քառօրեայ տենդէ » :

71 . Ի վախճանի արիւնայեղց մարտից սովորաբար պատմագիրք յախտակցութիւն և յողբ շարժեալ զսելինն՝ Թուլացուցանեն զոգիս, նկարագրելով զարհաւիրս մարտին. ներհակաբար Հոմերոս ճարտարութեամբ արուեստին ձեռն 'ի ձեռն հովանաւորութեամբ Աթենասայ չըջեցուցեալ զմարդ ընդ գիակոյտ անկելոցն, վառէ 'ի քաջալեր զինուորութեան նմանող լինել քաջ նահատակաց :

Իսկ քաղաքական հրահանգ Հոմերի 'ի Դ. հագներգութիւնն ամփոփի յառածս, շէ սպարտ ամենայն խորհրդոյ վաղվա-

ղակի ունին մատուցանել . 169 :

Վէրք զօրականին 'ի մարտի փառք են նմա . 172 :

Ուխտազանցութիւն երբէք չարձակի անսպառուհաս . 173 . 181 :

Պարտ է զօրավարին 'ի ծածուկ սահել զսրտաբեկութիւնն 'ի քաջալեր զօրուն . 175 :

72. Զասպին աշնայնոյ 'ի Ե . հագներ գութեան 205 , իմանան մեկնիչք զՇնիկ աստղն : Վիրգիլիոս զնմանութիւն զայս քաջապէս 'ի վար առնու վասն իւրոյ Ենէասայ . Ենէակ . Ժ :

73 . Թոյլ տայ Աթենաս Գիոմեդեայ վերաւորել զԱստղիկ : Այլաբանութիւն հոմերի հրահանգիչ կռուել միշտ ընդդէմ անժուժկալութեան , որ է՝ Աստղիկ :

74 . Գանի-Պեդէս . Որդի Տրոյլեայ յաւիրշտակեալ Արամազդայ 'ի կերպարանս արծուոյ վասն շնորհաշուք սատկերին 'ի լինել մատուակ աստուածոց : Վիրգիլիոս հրաշալի նկարագրէ զյաւիրշտակութիւն զայս , յորսալ Գանիւմեդեայ զեղջերուս 'ի Թաւս լերին Իգայ . Ենէակ . Ե :

75 . Զմեծաբանն Պանգարոս լեզուահատութեամբ սպառուհասէ խորագգացն հոմերոս :

76 . Իհր , այն է Աւիշ , սեպհական անուն հիւթոյ ելէլոյ 'ի վերաւոր մարմնոց աստուածոց : Այլ ընդ այսոսիկ տողս հոմերի մեծապէս գայթակղեալ կան ըստ զենին Պիւթագորաս , Պլատոն , Լոնգի-

նոս, Կիկերոն, և այլն : Արխատոտէլ 'ի չքմեղս հանէ զհոմեր 'ի պատճառս հռչակեալ համբաւոյն և կարծեաց զդից, զոր կալան դիւցաբանք հնագոյնք քան զնա : Սակայն հոմերոս զայսօրինակ խայտառակութեամբ դից եթէ աստանօր և եթէ այլուր բազում անգամ, հաստատէ զխորհրդաժողովուն զայն, եթէ ոչինչ հաւատայր նա յաստուածութիւն դիցն, և ճանաչէր միայն զնա, զոր 'ի մեծամեծ նախախնամութիւնս կոչէ ինքն եզակի ձայնիւ  $\Theta\epsilon\acute{o}\varsigma$ . քանզի և զնորուն իսկ զԱրամազդայ զգլխաւորին զանգոսնելի կիրան առակէ յորդագոյնս : Իսկ Կալլիսթենէս իմաստասէր յայս տող հոմերի յուշ բերեալ զԷբորն՝ 'ի տեսանել վիրաւոր զԱղեքսանդր մակեդոնացի, հեղնէր առմարդեւոյնս նորա, «Տեսանէք դուք աւազիկ, ասէ, զի այդ բխեալք ոչ Էբոր է աստուծոյ, այլ արիւն մարդոյ » :

77. Գեղեցիկս ակնարկէ 'ի խաբանս և յառևանգումն հեղինեայ :

78. Πότνι Έγνώ, է աստուածուհի պատերազմի : Լատինք կոչեն Bellona.

79. Եբէ կամ հէբէ. Դիցուհի պաշտօնեայ դիցուհեաց մեծաց : Տէս և 'ի Ծան. 24 :

80. Գորգոնէ, է գլուխն Մեդուսայ : Էր սա ըստ դիւցաբանից շնորհաշուք ալջիկ. և 'ի պատուհաս գոռոզութեանն վարսք գլխոյն փոխեցան յօձս : Պերսէոս էհատ զգլուխ նորա. և զայն գլուխ ա-

հեղ Աթենաս առեալ յարմարեաց 'ի  
կումբ վահանի իւրոյ :

81. Եւստի կոչէ զեղանակս տարւոյն ,  
որ բանան և փակեն մարդկան զերկին ,  
փարատելով զամպս և դումարելով : Ըզ-  
ժաման և զգրունս երկնից զՀոմերի վա-  
րեն քերթողք . ըստ որում և Միլտոն ,  
Երգ . 2 :

82. Սփէնփոր . Այր գերահռչակ 'ի նախ  
նումն մեծագոչ բարբառոյն : Յառակս  
եղև առ Յոյնս . « Իբրու զՍտենտոր գո-  
չեաց » :

83. Զյեղյեղուկ բնութիւն զմարտից  
խմաստնաբար ճշգրտաբանէ Հոմեր , զնա  
ինքն զաստուածն մարտից այպանելով :

84. Որչափ 'ի խորս իջանէ ոք , ասէ  
Եւստատէոս , այնչափ դժուարատեսա-  
նելի է : Յառակս եղև առ Յոյնս , փոխա-  
նակ ասելոյ՝ անտեսացաւ կամ անծանօթ  
եղև , ասել . « Զսաղաւարտն եդ 'ի գլուխ  
զիջխանին դժոխոց » : Զառակս 'ի վար  
առնու Պղատոն 'ի գիրս իւր , և Արխատո-  
փանէս 'ի Կատակերգ . Արքանեանք :

85. Ο'υρανώων, Երկնաւորաց : Են  
նոյն իսկ Տիտանք կամ Տիտանեանք , որ  
մարտ եդեալ կռուեցան ընդ Արամազ-  
դայ և սարտեցան : Զմարտ զայս քաջիկ  
նկարէ Հեսիոգոս : Ակնարկի այս մարտ՝  
ըստ հին աւանդիցն՝ յասպտամբութիւն  
հրեշտակաց յԱստուծոյ . զորմէ այլք :

86. Պէոն . Բժիշկ աստուածոց :

87. Ողջոյն 'ի Ե . Հագն . այլաբանու-

Թիւն հրահանգիչ է Հոմերի 'ի բարոյա-  
կանն: Եւ յայն մանաւանդ, եթէ պարտ  
է կքրել ընդդէմ անժուժկալուծեան,  
այն ինքն է՝ Աստղիկ. և ընդդէմ գազա-  
նաբարոյ կրիցն, այն է՝ Արէս: Եւ թէ՛ ե-  
րազահան արուեստին անսալ չէ արժան:

88. Պատմութիւն բովանդակ Լիւ-  
կուրգեայ այլաբանական է 'ի մշակու-  
թիւն այգեաց, զոր նշանակէ 'Իփօֆիստոս,  
այն է՝ Բաքոս աստուած գինւոյ:

89. Նմանաբերութիւն տերևոց առ  
կեանս մարդկան յաճախեալ է և 'ի Գիրս-  
այլ որ զարմանալին է, այս տողք Հոմերի  
գոգցես նովին շարագասութեամբ գտա-  
նին և 'ի Սիրաք ԺԳ. 19. այսպէս.  
« Որպէս զտերև 'ի վերայ վարսաւոր ծա-  
ռոց է որ թօթափի և է որ բուսանի,  
նոյնպէս և մարդիկ, է որ ծնանի և է որ  
մեռանի »:

90. Եփեմ, հին անուն Կորնթոսի:  
Կորնթացիք պարծէին ունել իւրեանց  
քաղաքակից զպասն Գլաւկոսի: Առ Թէո-  
կրիտոսի պանծան Սիրակուսացւոց կա-  
նայք և ասեն. « Ծնունդք եմք Կորնթոսի  
իբրև զԲելերոփոն »: Իսկ Սիսիւփոս այն-  
չափ իմաստուն և խորագէտ եղև, մինչև  
յառակս լինել զնմանէ, եթէ « Կապեաց  
նա զմահ » . քանզի ընդ ամենայն մարդոյ  
մեծապէս խաղաղութեամբ և աջալըջու-  
թեամբ վարեցաւ յամենայն 'ի կեանս իւր:

91. Ի յաջորդ պատմութենէն ցուցա-  
նի անարատութիւն և առաքինութիւն

Բեւեւերոփոնին : Եւ գտանեն 'ի նմա զմեծապէս նմանութիւնս պատմութեան ըզՅովսէփայ նահապետին՝ որ 'ի Գիրս :

92 . Վասն վաղնջուցնչանագծացս այսոցիկ բազում ինչ ճառեն քննիչք : Այլ քաջայայտ իսկ այս տողք Հոմերի մեծապէս յիշատակարան են հնութեան գրոյ առ Յոյնս : Իսկ 'ի տողից աստի յառակս եղև ասել վասն նոցա՝ որ յանգէտս առեալ տանին անձամբ զսահման վճռոյ մահուն իւրեանց , եթէ « Ունին զԲեւեւերոփոնեայ նամակն » :

93 . Վարդապայն քաղ . Χίμαιρα , Այծ ծնեալ ձմերանի . դարձեալ՝ և Հրէշալի կենդանի ահաւոր . գլուխն առիւծու , մէջն այծի , տուան վիշապի : Այս Քիմեռ սպանեալ 'ի Բեւեւերոփոնեայ բազմորինակ քննութեան տեղի ետ առ մատենագիրս : Սողիւմացիք , ընդ որոց կռուեցաւ Բեւեւերոփոն , ունէին՝ ըստ Պլուտարքեայ՝ զօրավարս երիս . առաջինն՝ կոչէր 'ի լեզու Փիւնիկեցւոց Առիւծ , որ նշանակէր առ նոսա՝ Առիւծ . երկրորդն՝ Առաւ , այս է՝ Այծ . երրորդն՝ Տրոսիէն , այս է՝ Գլուխ վիշապի . որոց յազմեալ Բեւեւերոփոն , ասացաւ սպանանել զՔիմեռ : Իսկ այլք ասեն 'ի Ղիւկիա Քիմեռանուամբ լեառն բարձր հրաբուլիս , որպէս ասաց Հոմեր . 'ի ծայրին բունեալ կային առիւծունք , և առ սարոտոնն օձք մեծամեծք . և Բեւեւերոփոն մաքրեալ ըզՂիւկիա 'ի մարդոց չարաց և աւազակաց

այլաբանելոց 'ի գաղանս յայնոսիկ, ասացաւ սպանանել զՔիմեռ :

94. Սողի-ճադի, Հին ժողովուրդ փոքուն Ասիոյ : Ի նմանութենէ ձայնիցս Սողիւմ և Սաղիմ մատենագիրք ոմանք հինք և նորք վայրասպար շփութեն ընդ միմեանս . ըստ որում և զարմանալի է ասելն Տակիտոսի, Clara alii tradunt Judæorum initia, Solymos, carminibus Homeri celebratam gentem, conditæ urbi Hierosolymæ nomen e suo fecisse .

95. Վասն Ամազոնիցն՝ այս է՝ քաջամարտիկ կանանց գոյութեան բազում ճառս և մատեանս կոտորեն հմուտք . յորս առաւելասպէս Ֆրերէ և Փաւ մատենագիրք : Յիշեաց հոմեր զԱմազոնս և 'ի Գ . Հագներգ . երես 137 : Հինք ողջոյն սկսեալ 'ի հոմերէ ընկալան զԱմազոնս . ընկալան և արդիք թօթափեալ յառասպելաց . ( տես 'ի Պտմ . Աղեքսանդրի 154 = 167 . ) մանաւանդ յետ գտանելոյ զնոսա և յԱմերիկա : Այլ Աճադի, էթէ իցէ բառ յն . Ἀμαζόνες, է Անտիոնք : Բայց չունի տեղի յունականութիւն բառիս յօդեալ 'ի յետնոց գրամատիկոսացն Յունաց . ըստ նմանէն՝ և հիւսուածոյն կտրելոյ կամ խարելոյ կանանցն այնոցիկ զստինան, և այլն : Այլ Սկիւթացի կանանցս յարանուանութիւն ըստ արդիքաջիկ զննութեանն Ֆրերեայ, նա և նորուն իսկ հոմերի՝ որ ստորև, է 'ի սկիւթացի բառիցս է՛ կամ Ա՛, որ նշանակէ առ նո .

աա Կին . և Զաինէ , որ նշանակէ Քաջ ,  
 իբրու ասել՝ Կին քաջ կամ Քաջակին :  
 Այս է և բազմահմուտն Հոմերի 'ի Գ .  
 Հագն . 137, առ ընթերբառիս 'Αμάζονες,  
 կարգել 'Αντιάσεις, իբրև թարգմանու  
 թիւն սկիւթացի բառին Ամազինէ . զի  
 Անդիանիէ է Կանայք այրանմանք :

96 . Անկանեւն Բելլերոփոնեայ յաչաց  
 աստուածոց յայտ առնէ զձախողակ ելն  
 'ի մահու զաւակացն , զոր ասորև ասէ  
 Հոմեր՝ զի ոչինչ յանցանք աւանդին  
 վասն նորա . ուստի և միայնիկ և թախ  
 ծագին շրջի ընդ դաշտ հաշելով զսիրտ  
 իւր , զոր ըստ Եգիպտացւոցն ոճոյ , որ  
 պէս ասէ քաջահմուտն Եապլոնսքի , ար  
 տայայտէ Հոմեր յասելն , Ուտելով զսիրտն  
 կամ զոգին . Ο'ν θυμόν κατεδών . Կենդա  
 նի է նկար խոր թախծութեան և սևա  
 մաղձութեանն Բելլերոփոնի , զոր տայ  
 Հոմեր . մինչև Կիկերոնի բառ առ բառ  
 զերկոսին տողսն չափաբանել այսպէս .

Qui miser in campis mœrens errabat  
 Aleis,

Ipse suum cor edens, hominum vesti  
 gia vitans .

Եւ յառակս եղև առ նախնիս զբարս  
 սևամաղձայինս կոչել Անա Բելլերոփոնեան :

97 . Ստրաբոն ասէ 'ի գաւառին Սո  
 ղիւմեանց տեսանել զձորն անուանեալ  
 Բելլերոփոնեան , նա և զգերեզման որդ  
 ւոյն Իսանդրոսի :

98 . Այս ոճ բանի , խոցիլ 'ի նետիցն

Արտեմեայ, նշանակէ առ Յոյնս, յանկարծամահ լինել:

99. Փոփ համարի զՀեկտոր ջրմալու լինել իբրև զՍամիսոն:

100. Սիդոնի և Տիւրոսի հարստու թիւնք արուեստից 'ի ձեռագործս՝ հռչակեալ են և 'ի Գիրս:

101. Չայս թափօր տիկնայց և զմաղթանս նոցա առ Աթենաս, տայ Աիրգիլիոս տիկնայց լատինաց 'ի մօտել Ենէասայ 'ի քաղաքն. Ենէակ. ԺԱ:

102. Աստի-անաս. ըստ այժմեան առման բառիս է՝ Քաղաքի արքայ. այլ ըստ հոմերեան առման՝ Քաղաքի պաշտպան:

103. Հինք առ գերեզմանօք մեռելոց տնկէին ծառս անպտղաբերս, որպէս կնճնիս, և այլն, իբրև ճահաւորս մահու:

104. Ի-պէր, էր աղբիւր յԱրգոս: Մեասէ, աղբիւր 'ի Թեսսաղիա:

105. Բովանդակ այս քերթած սրտեռանդն խօսակցութեան Հեկտորի և Անդրոմաքեայ, և անձկայրեաց մեկնիլ նոցա 'ի միմեանց, և այլն, առ հասարակ սքանչացեալ է ըստ ամենայն մասանցն:

106. Ի գերասպանի նմանաբերութեան երիվարի մի զմիով ելևելս արարին քերթողք նմանող լինել Հոմերի, Եննիոս հինքերթող, Աիրգիլիոս, Թասսոյ, Մեթասթազիոյ, և այլք: Հանձարիմացն Մատթէի՝ ասէ Չեզարոթ՝ ճշգրտիւ կըշռադատեալ զքերթողսն 'ի նմանութեանս գերագասէ զՀոմեր քան զամենեսեան:

Բայց և իրաւամբք յաւելու Մատթէի ,  
 եթէ ոչ Մեթասթազիոյ , ոչ Թասսոյ , ոչ  
 Եննիոս , ոչ Վերգիլիոս և ոչ Հոմերոս ինք-  
 նին , երբէք 'ի կշիռ գան ընդ վսեմական  
 նկարագրի Յովբեան երիվարի . ԼԹ . 19 :

107 . Ունել զմէջ նիզակին , նշան էր առ  
 հինս դադարելոյ մարտի :

108 . Հաւահմայք զօրացեալ յոյժ էին  
 առ Յոյնս : Աթենասայ և Փերոսի իբրև  
 պատգամաբերք ազդարարք էին անգեղք ,  
 որպէս արծուին Արամազդայ : Ասան ու-  
 ըոյ և ըստ նմանութեան անգեղաց ասէ  
 Հոմեր զվերանստելնոցա 'ի կաղնուղն :

109 . Այս է Եղիոնի . կոչի քաղաք  
 Լաւմեդոնի , որ հայր եկաց Պրիամու :

Իսկ բարոյականն 'ի Հագն . է . ունի  
 զառաժս .

Յիմար է որ ընդ քաջագունին 'ի վէգ  
 ելանէ . 325 :

Գրժողաց դաշին չիք երբէք յաջողիլ  
 'ի մարտի . 343 :

Պարտ է կենդանեաց շուք և խնամ ա-  
 ծել մեռելոց . 347 :

110 . Բի-բահնէայ . Πολυπίδαξ , Բազմ-  
 աղբիւր : Իսկ Մայր Գազանայ ասէ , այս-  
 ինքն' Գազանուտ : Իսկ Գարգառն կամ  
 Գարգառոս էր վերջին արտեան լերին Ի-  
 դայ . և ցժսմանակն Սորաբոնի պահէր  
 զնոյն անուն :

111 . Յայս պատկեր գերապանծ կըշ-  
 աորդութեանն Հոմերի Եսթիւղէս ողբ-  
 երգութիւն իմն հրաշալի գրեաց և մա-

կազրեաց Մυχοσασία, Հողեկշուութիւն :  
Ունի զայս կշուորդութիւն և մեծն Վեր-  
գիւ ընդ Տուրնոս և ընդ դիւցազն իւր Ե-  
նէաս . Ենէակ . ԺԲ :

112 . Անուանք են չորից նժուգացն  
Հեկտորի . առաջինն նշանակէ Խար-  
տեաշ, երկրորդն Արագոտն, երրորդն  
Աշխէտ, չորրորդն Լուսափայլ : Տայ և  
Վերգիւ Մեսենտիոսի խօսել ընդ ձիոյ :

113 . Երկու քաղաքք են յԱքայիա .  
յորս էր մեհեան և սլատկեր Պոսիդոնի :

114 . Յուցանել զծիրանի նշանակ էր  
համախմբելոյ զօրուն . ըստ որում և առ  
Հռովմայեցիս :

115 . Գաճիւ, է շունն ահագինն առ-  
կայացեալ առ դրան դժոխոց, անուա-  
նեալ Կերեբոս : Իսկ Երեբոս է Դժոխք :

116 . Տէս 'ի Ծան . 16 :

117 . Տէս 'ի Ծան . 81 : Նոյնաբան  
կրկնութիւնք սովորականք Հոմերի և այլ-  
ուր, ներելիք ըստ ոճոյ յոյժ վաղնջուց  
մատենագրաց :

118 . Զայս ճնաշխարհիկ նկար գի-  
շերոյ չիք գտանել, ասեն քննիչք, զուգա-  
հաւասար յայլս 'ի քերթողաց : Իսկ խըն-  
դամտեալ հովիւն 'ի զնին սքանչելի արա-  
րածոցն Աստուծոյ է ինքնին Հոմերոս :

119 . Սթենեղոս քաջ նիզակակից և կա-  
ռավար Դիոմեդեայ դիւցազին :

120 . Այսպէս 'ի Հոմեր յեզակի Ա-  
բո-ծոյ . նմանատիպ յոյժ ոճոյ Գրոց,  
« Մի թէ առանց Աստուծոյ եկեալիցեմք

աստ » . Ես . 36 . և այլուր ևս :

121 . Աննարկէ Հոմեր ընդ քողովբանին հրահանգէլ 'ի ձեռն Նեստորի զԱգամեմնոն 'ի հաշտութիւն ընդ Աքիլէայ՝ զոր զրկեացն . վճիռ 'ի մէջ բերելով կորովի և լակոնացի յերիս բառս նշանաւորս, 'Αφρήτωρ, 'Αδέμιοτος, 'Ανέστιος, ընդ որոց սեղմեալ ուժգնութիւնն հրաշացեալ արևմտեայք անբացատրելի այնչափ կարճութեամբ ասեն 'ի լեզուս իւրեանց . և արդարև Կիկերոն 'ի Փիլիպպեանս ԺԲ . կամելով թարգմանել զայս բազմիմաստ տողն Հոմերի, այսպէս հարկեցաւ շրջաբանել . Nam nec privatos focos, nec publicas leges videtur, nec libertatis jura cara habere quem discordiæ, quem cædes civium, quem bellum civile delectat .

122 . Որո՞վէն, գաւառ 'ի Բիովտիա ամենահարուստ յոսկի և 'ի կարասի : Իսկ Թեբէ, զոր Եգիպտացիք կոչեն Դիոպոլիս, էր քաղաք յԵգիպտոս՝ անզուգական յաշխարհի ճոխ և մեծակառոյց, հարիւր քառասուն ասպարիսաց շրջապատիւ, հարիւրադռնեան : Նա և ցայսօր տեսանին աւերակք նորա : Ոսկի և արծաթ և փրղոսկր և ականք պատուականք նորա յաւարի առան 'ի Պարսից յայրէլ Կամբիսեսեայ զմէհեանս Եգիպտոսի :

123 . Պերսեթոնէ, Թագուհի դժոխոց : Զանուն Արամազդայ տային հինք նա և աստուծոյն դժոխոց, նոյնպէս և աստու-

ծոյն ծովու՝ որպէս Եսթիւղէս . զայն յայտ արարեալ, ասէ Տասիէ, եթէ մի է տէր տիեզերաց : Եւ յայս հրահանգ հին անդրիագործք եռակնեայ կոփէին զԱրամազդ : Այսպիսի անդրի ունէր Պրիամոս 'ի սլաւասանն, զոր Յոյնք տարան յաշխարհն իւրեանց :

124 . Անճնաւորին 'ի Քերթողէ նա և Աղերսք կամ Աղօթք, և Անիրաւութիւն : "Ατη, Τυφελ + Τίσι, ասին Աղօթք, իբրև զև Աստուած ազդէ աղօթել : Կալս կոչէ, իբրու զողոքաւորս խոնարհեալս անձամբք : Աիւ ասէ, իբրու յարտասուս հարեալս : Խորշոփաւս կոչէ, իբրև թախժեալս և բեկեալս և մաշեալս սրտիւ : Իսկ Ադէ, որ է Անիրաւութիւն, յանճնապատան է և խրոխտ և խիզախ :

125 . Այս ատենախօսութիւնք չորք Ողիւսեայ և Աքիլլեայ և Փիւնիկեայ և Այասայ, անզուգականք համարին և քաջարուեստք 'ի Հոմերէ . և որպէս Կուինտիլիանոս ասէ, ճշգրիտ գաղափարք են ճարտարասանութեան :

Իսկ քաղաքական հրահանգ Հոմերի 'ի Հագներգութեան Թ. ամփոփի յառաժս :

Յատենի խորհրդոյ ազատութիւն է անաչառ և համարձակ խօսել մեծի և փոքու . 401 :

Յաստուծոյ են իրաւունք թագաւորաց . 402 . 406 :

Ընդ անմարդիս համարեալ է, որ սիրէ զմարտ ընտանի . 403 :

Թագաւորի ոչ միայն սարտ է սատ-  
գամ ասել, այլ և լսել. 406 :

126. Ոչ տայ Հոմեր Աթենասայ յղել  
զԹուչուն իւր զբու, այլ զԵրովզիոն Թըու-  
չուն գիշերային միանգամայն և քաջոր-  
սակ, առ ՚ի նշանակել զկոտորածն զոր  
հանգերձեալ էին առնել յայնժամ գի-  
շերային լրտեպն Յունաց :

Եւ ունի Հոմեր ՚ի Ժ. Հագներգու-  
Թեան զհրահանգիչ առածս .

Չէ սարտ առն Թագաւորի արհամար-  
հել զիշխանօքն . 456 :

Լաւ են երկուք քան զմի . 467 :

Ի լուր գովեստի անձին սարտ է ան-  
գէն կարճել . 468 :

127. Հէ՞, "Eris, անձնաւորի ՚ի Քեր-  
Թողէն, և բարձեալ բերէ ՚ի ձեռին հրե-  
շանշան ինչ, զոր ասեն՝ կամ նիզակ, կամ  
նեա, կամ զրահ, կամ Թէ առաւել ևս՝  
զահեղ ասպարն Եգեան զԱրամազդայ,  
յորմէ առաքեցան :

128. ՍաստկուԹեան ցաւոց՝ ըստ Գը-  
րոց՝ մի միայն օրինակ ընարէ զերկունս  
ծննդականին : Իշիթի-ի՞, 'Eiλέδουα,  
զոր Լատինք կոչեն Lucina, Աստուա-  
ծուհի ծննդոց : Առեալ լինի փոխանակ  
ծննդեան և երկանց . և անձնաւորեալ  
երկունքն կոչին դստերք Հերայ . զի Հե-  
րա է գիցուհի ամուսնուԹեանց :

Այլ զոր ՚ի նախընթաց երեսն եգ Հո-  
մեր մահագրահան աշտէի, 'Ανεμοτραφίς  
կամ 'Ανεμοτρεφής, այս է՝ Հողմասուն,

Բնագիննուծիւն է հետաքնին . քանզի հողմունք յար 'ի շարժման պահելով և ըստ նմանէն կորովացուցանելով զբունս ծառոց , յորոց են տիգաբունք , ասին սնուցանել զնոսա : Եւ մեր իսկ գիւղականք՝ ասէ Չեզարոծ՝ ունին 'ի խօսս իւրեանց առակս 'ի հաստատուծիւն հոմերեան արտայայտուծեանն :

129 . Սոխք 'ի Յունաստան և առաւել 'ի կղզիս Արշիպեղագեան , ասէ Սբոնտանոս , չեն կծուահամք , այլ քաղցր . և հոտով չեն անախորժք , իբրու զմերսն :

130 . Զգինի զայս Պրամիէան գասէ Եղիանոս 'ի գերահռչակ գինիս Յունաստանի . բայց Պրամիէան անուան չէ 'ի գաւառէն , այլ 'ի տեսակէ գինւոյն . և մնայ յերկար ժամանակ և է զօրաւոր և ազնիւ յոյժ :

131 . Հոմերոս 'ի բերան ծերունեաց , որպէս և աստ Նեստորայ և վերագոյնգ Փիւնիկեայ , ըստ բուսոյ բարուց նոցա՝ թէպէտ և ճարտարաբանէ բայց և երկայնաբանէ , և զանցեալն ախորժաբար մանրամասին տայ նոցա յուշ ածել : Եւ այս իսկ է նկարչուծիւն ճարտար հոմերի , որում զուգահաւասար ոչ ոք գտաւ նմանել բնուծեան յամենայնի :

132 . Ընդ վսեմուծիւն իմաստիցն հոմերի 'ի բանս Սարպեգոնի՝ սքանչացեալ մատենագիրք ականաւորք , մի զմիով ելեւելս առնեն 'ի նմանուծեան . ըստ որում Դեմոսթենէս 'ի ճառն յաղագս Պսա-

կի: Թէոպոմպոս, զոր յառաջ բերէ Կղէ-  
մէս աղէքսանդրացի 'ի Յաճախապա-  
տունն Զ: Կիկերոն 'ի Փիլիպ. Ա: Եւ  
Սոկրատէս ընդդէմ Կրիտոնի, որ խոր-  
հուրդ տայր նմա փախստեամբ անձնա-  
պուր լինել 'ի մահուանէ:

Եւ ունի Հոմեր 'ի ԺԱ. և 'ի ԺԲ. Հագն  
երգութեան հրահանգ քաղաքական ամ-  
փոփեալ յառաժս.

Չէ պարտ զօրականին երբէք վերջոտ-  
նել 'ի մարտէ, այլ կամ մեռուցանել և  
կամ մեռանել. 524:

Կեանք առն բժշկի զուգակշիռ է կե-  
նաց բազում մարդկան. 532:

Պարտ է քաղաքացւոյն և ընդդէմ հա-  
ճոյից իշխանին ասել զճշմարիտն 'ի փր-  
կութիւն քաղաքին. 574:

Հաւահմայից չէ պարտ անսալ. 576:

Պարտ է ընտրել զմահ փառաւոր քան  
զկեանս վատութեան. 582:



ՎՐԻՊԱԿՔ	ՈՒՂՂԵԱԼՔ	Էջ
Պեղէագրոս Երեքթեան	Մեղէագրոս Երեքթեան	102 170